ՀՀ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

ԵՐԿԵՐ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ԵՐԵՎԱՆ 2002

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ն 661

Տպագրվում է ՀՀ
Կառավարության որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝
Հրանտ Ավետիսյան (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս), *Վլադիմիր Ղազախեցյան* (պատմ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, պատասխանատու խմբագիր), *Արամ Սիմոնյան* (պատմ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր), *Ամատունի Վիրաբյան* (պատմ. գիտությունների դոկտոր)

Կազմողներ՝
Արմեն Բաղալյան (պատմ. գիտությունների թեկնածու), *Համլետ Գևորգյան* (պատմ. գիտությունների թեկնածու), *Մուշեղ Լալայան, Ավագ Հարությունյան, Արմենակ Մանուկյան* (պատմ. գիտությունների դոկտոր), *Սոնյա Միրզոյան* (պատմ. գիտությունների թեկնածու)

Նժդեհ Գարեգին
Ն 661 Երկեր: Երկու հատորով.- Հատոր 1 /Խմբ. խորհուրդ՝ Ավետիսյան Հ., Ղազախեցյան Վ., Սիմոնյան Ա., Վիրաբյան Ա. .- Եր.: ՀՀ Արխիվային գործի գործակալություն, 2002, 530 էջ:

Գ.Նժդեհի «Երկեր»-ի առաջին հատորում ամփոփված են նրա գաղափարախոսական, հրապարակախոսական և իմաստասիրական բնույթի աշխատությունները և հոդվածները, որոնք ներկայացնում են Նժդեհ հայրենասերին, իմաստասերին ու հայ ժողովրդի հերոսական ոգին արժևորողին:

Հատորում մեկտեղված երկերն ունեն կարևոր արդիական և դաստիարակչական նշանակություն:

Սույն հրատարակությունը հայ իրականության մեջ Գ.Նժդեհի երկերի մինչ այժմ եղած առավել ամբողջական ժողովածուն է:

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 99930-78-11-5

© ՀՀ Արխիվային գործի գործակալություն, 2002

ԱՌԱՋԱԲԱՆ

Սույն երկհատորյակը, որը հրատարակվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, ընդգրկում է հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ, զորավար ու փիլիսոփա Գարեգին Տեր-Հարությունյանի՝ Նժդեհի հարուստ գրավոր ժառանգության հիմնական մասը: Նա այն հայ գործիչներից է, ովքեր հավերժ մտել են պատմության մեջ՝ ժողովրդին ու Հայաստան հայրենիքին մատուցած մեծագույն ծառայությունների համար: Բավական է, թեկուզ, հիշատակել նրա ղեկավարած Զանգեզուրի հերոսական ինքնապաշտպանությունը, որի շնորհիվ հայոց պատմական երկրամասը այսօր գտնվում է Հայաստանի կազմում:

Նժդեհը (Գարեգին Տեր-Հարությունյան) ծնվել է Երևանի նահանգի Նախիջևանի գավառի Կզնուտ գյուղում 1886թ.(իր վկայությամբ), քահանայի ընտանիքում: Սովորել է գյուղի ծխական դպրոցում, Թիֆլիսի ռուսա-կան գիմնազիայում, երկու տարի ուսանել Պետերբուրգի համալսարա-նի իրավաբանական բաժնում: Զինվորական կրթություն է ստացել Սոֆիայի (Բուլղարիա) պետական ռազմական ուսումնարանում:

Պատանի տարիքից նվիրվել է ազգային-ազատագրական և կուսակցական պայքարին: 1907թ. անդամագրվել է ՀՅԴ-ին:

Հեղափոխական-ազատագրական պայքարի մկրտություն է ստացել Պարսկաստանում, որտեղից 1908թ. գրած նամակներից մեկում առաջին անգամ հանդիպում է Գարեգին Տեր-Հարությունյանի Նժդեհ (պանդուխտ, օտարական) մականունը: Հայերը, Եփրեմ Խանի գլխավորությամբ, գործուն մասնակցություն են ունեցել շահական իշխանության դեմ Պարսկաստանի ժողովրդական-սահմանադրական շարժմանը: Ռազմական գործի մեջ հմտացել է 1912-1913թթ. Թուրքիայի դեմ բալկանյան ժողովուրդների մղած պատերազմում, երբ նա ղեկավարում էր Հայկական կամավորական վաշտի գործողությունները: Հայկական կամավորական ջոկատը ստեղծվել էր Անդրանիկի և Նժդեհի ջանքերով:

Առաջին աշխարհամարտում եղել է հայկական երկրորդ կամավորական ջոկատի փոխհրամանատար, 1915-1916թթ. աչքի ընկնելով մի շարք կռիվներում ու արշավանքներում (Գյալարաշ, Բերկրիղալա, Շեյխղարա, Շատախ, Մոկս, Սպարկետ և այլն): 1915թ. մայիսին Վանի ժամանակավոր ազատագրման մասնակիցներից է:

Գ.Նժդեհի հրամանատարական ունակությունները հատկապես դրսևորվեցին 1918թ. մայիսին տեղի ունեցած Ղարաքիլիսայի ճակատամարտում, երբ ոգեշունչ ելույթով դիմելով մարտիկներին, նրանց գրոհի տարավ ռազմաճակատի ձախ թևում, ջախջախիչ պարտության մատնելով թուրքերին:

1919թ. աշնանը Գ.Նժդեհը նշանակվել է պետական պաշտոնում՝ որպես գավառապետ: Սակայն շուտով ստանում է նոր կուսակցական-պետական առաջադրանք: Նրան վստահվում է Կապարգողթի (Կապան, Արևիք, Գողթան) շրջանի պաշտպանության հրամանատար, ուր նա մեկնեց 1919թ. կեսերին: Նժդեհը փաստորեն դարձավ ամբողջ Զանգեզուրի (Սյունիքի) ինքնապաշտպանության կազմակերպիչ ու ղեկավար, ցուցաբերելով զորավարական տաղանդ և պետական գործչի բարձր կարողություններ: Նա շարունակեց ու զարգացրեց իր նախորդների՝ Անդրանիկի և Արսեն Շահմազյանի սկսած գործը ռազմաքաղաքական բարդ ու ծանր պայմաններում:

Զանգեզուրը, իր աշխարհագրական դիրքով, Ղարաբաղը և Նախիջևանը կապելով միմյանց, կարող էր ապահովել հայկական այդ տարածքների նկատմամբ Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը: Իսկ Ադրբեջանը, Զանգեզուրին տիրելու դեպքում, Նախիջևանի վրայով ուղղակի ցամաքային կապ կունենար Թուրքիայի հետ և կստանար համաթուրքական ծավալապաշտական ծրագրերի իրականացման հնարավորություն: Միաժամանակ Հայաստանը չորս կողմից կընկներ թուրքական երկրների շրջափակման մեջ:

Զանգեզուրի ժողովուրդը մահու և կենաց պայքարի կանգնեց մուսավաթական Ադրբեջանի, որին օգնում էր Թուրքիան, նվաճողական ծրագիրը խափանելու համար: Մուսավաթական Ադրբեջանի քաղաքականությունը անփոփոխ ժառանգեց Խորհրդային Ադրբեջանը, թիկունքում ունենալով Խորհրդային Ռուսաստանի, նրա 11-րդ կարմիր բանակի օժանդակությունը: Գ.Նժդեհի կազմակերպած հերոսական պաշտպանությունը ձախողեց թշնամու ձգտումները: Համեմատաբար փոքրաթիվ ուժերով նա կարողացավ ջախջախիչ հարվածներ հասցնել խորհրդային միացյալ ուժերին, նրանց պատճառելով մեծ կորուստներ: Հայաստանի խորհրդայնացումից հետո Զանգեզուր-Սյունիքի ինքնապաշտպանության համար ստեղծվեց նոր իրադրություն: Նժդեհը խորհրդային կողմի՝ զինաթափման և երկրամասի խորհրդայնացման առաջարկությանը հակադրում էր իր պահանջները, որպիսիք բխում էին հայ ժողովրդի ազգային շահերից: Խուսափելով քաղաքացիական պատերազմի բորբոքումից և համոզված լինելով, որ Զանգեզուրը կմիացվի Հայաստանին, Նժդեհը 1921թ. կեսերին դադարեցրեց պայքարը և հեռացավ արտասահման: Նույն թվականին Թավրիզում Նժդեհի դեմ

կազմակերպվեց կուսակցական դատ, որտեղ նրա գործունեությունը համարվեց Լեռնահայաստանի (Զանգեզուրի) արագ անկման պատճառ: Այդ և այլ մեղադրանքներով Նժդեհը հեռացվեց ՀՀԴ շարքերից, որը, սակայն, չհաստատվեց կուսակցության հերթական ընդհանուր ժողովի (համագումարի) կողմից: Թավրիզի դատավարությունը ավելորդ շռայլություն էր մի մարդու նկատմամբ, որն արժանի էր միայն փառքի ու պատվի:

Ըստ էության Նժդեհը փրկեց Զանգեզուրը և ապահովեց նրա միացումը Հայաստանին: Ճիշտ է, Խորհրդային Հայաստանը Նժդեհի իդեալը չէր, այնուամենայնիվ ի վերջո իրականություն դարձավ նրա երազած ազատ և անկախ Հայաստանը, որպիսին է այսօրվա Հայաստանի Հանրապետությունը, Լեռնահայաստանով հանդերձ:

1922թ. Գարեգին Նժդեհը մեկնեց Բուլղարիա՝ մշտական բնակության: 1923-1930-ական թվականներին զբաղվել է գիտական աշխատանքով և հրապարակախոսությամբ, խմբագրել թերթեր, տպագրել մի շարք աշխատություններ, ինչպես նաև կատարել կուսակցական աշխատանք: Ընտրվել է ՀՀԴ Բալկանյան Կենտրոնական կոմիտեի անդամ: 1933-1934 թվականներին կուսակցական առաջադրանքով գտնվել է ԱՄՆ-ում և կազմակերպել «Ցեղակրոն ուղտեր», որոնք դաշնակցական երիտասարդական կազմակերպություններ էին: Նժդեհը կարևոր խնդիր էր համարում Ամերիկայի հայ երիտասարդության դաստիարակությունը ազգային-հայրենասիրական ոգով, որին (երիտասարդությանը) սպառնում էր հեռացումը ազգային խնդիրներից: 1934թ. հունիսին, Նժդեհի նախաձեռնությամբ, կայացավ ԱՄՆ-ի «Ցեղակրոն ուղտերի» առաջին, միավորիչ համագումարը: «Ցեղակրոն ուղտերի» բաժանմունքներ ստեղծվեցին նաև մի շարք այլ երկրներում ու քաղաքներում: 1941թ. այդ կազմակերպությունը վերանվանվեց «Ամերիկայի հայ երիտասարդաց դաշնակցություն»: Անվանափոխությունը կապված էր գերմանա-ֆաշիստական ցեղապաշտությունից սահմանազատվելու անհրաժեշտության հետ:

Կուսակցության գործունեության մարտավարության հարցերի կապակցությամբ տարիների ընթացքում տարաձայնություններ էին ծագել և սրվել Նժդեհի որոշ գործիչների միջև: Դրանք հաղթահարելու և կողմերին հաշտեցնելու փորձերը վերջացան անհաջողությամբ, իսկ արդյունքում Նժդեհը դուրս մնաց ՀՀԴ-ից (1938թ.): Դա, սակայն, չխանգարեց, որ երբ սկսվի երկրորդ աշխարհամարտը, Նժդեհը դիմի կուսակցության ղեկավարությանը, առաջարկելով իր ծառայությունը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի և դրան նախորդող տարիներին հայերի ոչ արիական ժողովուրդ լինելու մասին ֆաշիստական քարոզչության աշխատանքը յուրահատուկ խնդիրներ դրեցին ՀՀԴ-ի և մասնավորապես եվրոպական երկրների կազմակերպությունն-

ների ու գործիչների առաջ: Այս առնչությամբ Նժդեհը և այլ ազգային գործիչներ (Արտաշես Աբեղյան, Դրո և ուրիշներ) գործակցեցին գերմանական իշխանությունների հետ: Նպատակը հայության պաշտպանությունն էր ֆաշիստական վտանգից: Նժդեհն անձամբ հույս ուներ, թե Գերմանիան կարող է պատերազմել Թուրքիայի դեմ, և իր հավաքագրած հայերին կարելի կլինի օգտագործել այդ ուղղությամբ: 1942-1943թթ. Նժդեհը նաև Հայկական ազգային խորհրդի կազմում էր, վերջինիս «Ազատ Հայաստան» պաշտոնաթերթի փոխխմբագիրը: 1943թ., երբ ակնհայտ դարձավ Գերմանիայի պարտության անխուսափելիությունը, Նժդեհը հետ քաշվեց համագործակցությունից և վերադարձավ Բուլղարիա:

1944թ. հոկտեմբերին Սոֆիայում Նժդեհը ձերբակալվում է ԽՍՀՄ «Սմերշ» հակահետախուզական մարմնի կողմից: Խորհրդային իշխանության նախկին ու ներկա ուժեղ թշնամիներից մեկը գտնվում էր այդ իշխանության ձեռքում: Տասնմեկ տարի Նժդեհն անցկացրեց Մոսկվայի, Վլադիմիրի, Երևանի, Տաշքենտի, ապա նորից Վլադիմիրի բանտերում, անհիմն դատապարտվեց (1948թ.) 25 տարվա ազատազրկման և իր մահկանացուն կնքեց 1955թ. Վլադիմիրի բանտում:

Նույնիսկ բանտային պայմաններում Նժդեհը փորձում էր համագործակցել խորհրդային իշխանության հետ՝ Հայաստանի և հայ ժողովրդի շահերին ծառայելու համար: Նա ծրագրեր է առաջարկում Թուրքիայի դեմ ԽՍՀՄ հնարավոր պատերազմում, որը սպասվում էր հաղթանակից անմիջապես հետո, գործողությունների և իր անձնական մասնակցության վերաբերյալ:

1992թ. Նժդեհի դատական գործը վերանայվեց, և նա լիովին արդարացվեց: «Առաջադրված մեղադրանքներում, - ասված է արդարացման կապակցությամբ կազմած եզրակացությունում, - Նժդեհը, նույն ինքը Գարեգին Եղիշի Տեր-Հարությունյանը, իրեն մեղավոր չի ճանաչել՝ պատասխանելով, որ ինքը հանցագործություններ չի կատարել, այլ իր ամբողջ կյանքը նվիրել է հայ ժողովրդի ազատագրմանը: Իր ղեկավարությամբ Զանգեզուրում մղած ռազմական գործողությունները նա համարում էր անկախ Հայաստանի Հանրապետության համար մղվող ազգային-ազատագրական պայքար: Արտասահմանյան երկրներում նրա ստեղծած կազմակերպությունների նպատակն էր Թուրքիայի և Խորհրդային Ադրբեջանի կողմից զավթած հայկական հողերի ազատագրումը և միացումը անկախ Հայկական պետությանը»:

Դեռևս խորհրդային իշխանության տարիներին Նժդեհի աճյունը գաղտնի բերվեց Հայաստան և հետագայում հողին հանձնվեց Եղեգնաձորի շրջանի Սպիտակավորի վանքի բակում, իսկ մինչև այդ աճյունի մի նշխար տեղ գտավ Նժդեհի համար շատ հարազատ Խուստուփ

լեռան լանջին: Նժդեհն ընդմիշտ իր ժողովրդի հետ է, որին նա նվիրեց իր ամբողջ գիտակցական կյանքը:

Գ.Նժդեհը թողել է գրավոր հարուստ ժառանգություն: Դրա զգալի մասը հրապարակվել է նրա կենդանության օրոք, մյուսները հայտնաբերվել և տպագրվել են հետագայում: Նժդեհագետները շարունակում են որոնումները արխիվներում և կորած ստեղծագործությունների հետքերով:

Գ.Նժդեհի գրավոր ժառանգությունը պայմանականորեն կարելի է խմբավորել հետևյալ կարգով. գիտական աշխատություններ, հուշեր-հոդվածներ, հրամաններ և կոչեր-դիմումներ, նամակներ: Մեծ խումբ են կազմում հատկապես գիտական աշխատությունները, որոնք հիմնականում պատմագիտական և փիլիսոփայական բնույթի են: Կարելի է դասակարգել նաև ըստ բովանդակության: Այդ դեպքում կունենանք մարտական գործողություններ, գիտական ուսումնասիրություններ, կուսակցական գործունեություն և այլն:

Գ.Նժդեհի գրավոր ժառանգության մի խումբ վերաբերում է Լեռնահայաստանի (Զանգեզուր-Սյունիք) 1919-1921թթ. պաշտպանության էպոպեային: Այստեղ գործ ունենք առաջին հերթին հրամանների, կոչերի, նամակների, դիմումների և այլ կարգի վավերագրերի (սկզբնաղբյուրների) հետ: 1919-1920թթ. փաստաթղթերի մի փոքր խումբ հրատա-րակվել է տակավին 1921թ. Գորիսում «Խուստուպյան կանչեր» վերնագրով գրքույկում: Իրադարձություններից մի քանի տարի անց Նժդեհը դրանց անդրադարձավ հուշերի ձևով: Նշված սկզբնաղբյուրների զգալի խմբաքանակ անցյալում տպագրվել է երկու գրքում. Վարդան Գէորգեան, Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), Պուքրեշ, 1921 (վերատպություն՝ Երևան, 1991): Ավո, Նժդեհ, Պեյրութ, 1968 (երկրորդ հրատարակություն՝ 1989):

1923-1925թթ. «Հայրենիք» ամսագրում (Բոստոն) Լեռնահայաստանի հերոսը հանդես եկավ ընդարձակ հուշ-հոդվածաշարերով: Ամսագրի խմբագրությանն ուղղած նամակներից մեկում հեղինակը դրանք բնութագրում է «հուշեր» (այդպես էլ է իրականում): Այդ հոդվածների խորագրերն են՝ «Ինչու պայքարեց Լեռնահայաստանը», «Լեռնահայաստանի գոյամարտը», «Հայ-բոլշևիկյան կռիվները», «Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից» և «Ազատ Սյունիք»:

Այս խմբին առնչվում են այն նյութերը, որոնք հանդես եկան Թավրիզի 1921թ. կուսակցական դատավարության առիթով: Նժդեհը երկու դիմում-բացատրագիր է ներկայացրել ՀՀԴ բարձրագույն դատական ատյանին, որոնցում հեղինակը հանգամանորեն լուսաբանում է Լեռնահայաստանի իրադարձությունների ընթացքը, այն հանգամանքները, որոնք ի վերջո ստիպեցին իրեն դադարեցնել դիմադրությունը և տեղի տալ խորհրդային իշխանությանը՝ Զանգեզուրի Հայաստանին

միանալով հանդերձ և հենց այդ պայմանով: Տվյալ բացատրագրերը սույն հրատարակության մեջ տպագրվում են ըստ ՀՀԴ Բոստոնի (ԱՄՆ) կենտրոնական արխիվում պահվող ձեռագիր օրինակի (պատճենի), խուսափելու համար անցյալում դրանց տպագրության աղավաղումների կրկնությունից:

Մի այլ խումբ են ներկայացնում 1920-1930-ական թվականներին տպագրված գիտական բնույթի աշխատությունները. «Էջեր իմ օրագրէն», Կահիրե, 1924, «Որդիների պայքարը հայերի դեմ», Սալոնիկ, 1927, «Բաց նամակներ հայ մտավորականության», Բեյրութ, 1929, «Իմ պատասխանը», Սոֆիա, 1937, «Ցեղի ոգու շարժը», Սոֆիա, 1939:

Սրանք բազմաբովանդակ ուսումնասիրություններ են, որոնք քննարկում են Հայոց նոր և նորագույն ժամանակաշրջանի կենսական հարցեր, հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած պատմական շրջադարձային երևույթներ: Աշխատությունների միջով կարմիր թելի նման անցնում է հեղինակի մտահոգությունները հայ ժողովրդի, Հայաստանի ճակատագրի նկատմամբ: Նժդեհը կարևոր դեր է հատկացնում մտավորականության և ամբողջ ժողովրդի գաղափարական դաստիարակությանը, նրա բարոյական ոգու ամրապնդմանը: Բարձր հայրենասիրությամբ էր բացատրում պատմական այնպիսի երևույթները, ինչպիսիք են, օրինակ, Ավարայրը կամ 1918թ. մայիսյան հերոսամարտերը: Այլ ձևակերպումով՝ բարոյական բարձր հատկությունները դիտում է «ցեղակրոնություն», հատուկ «ազգ» որակին: Եվ, հակառակը, խիստ քննադատության է ենթարկում Կարսի հանձնումը, որ կատարվեց առանց դիմադրության: Նման բան կարող է թույլ տալ միայն «ժողովուրդը», որակական տարբերություն դնելով դրա և «ազգ» հասկացությունների միջև:

Նժդեհը վերլուծական անդրադարձ է կատարել Հայաստանի Հանրապետության հռչակման և նրա ճակատագրում թուրք-բոլշևիկյան կործանարար դերի հիմնահարցերին: Նորից վերադարձել է Լեռնահայաստանի պարտության պատճառներին և բազմաթիվ այլ հարցերի: Աշխատությունների հանգամանալի ուսումնասիրությունն ընթերցողին մղում է մտորումների մեր անցյալ ու այսօրվա կյանքի շատ ու շատ կողմերի շուրջը, եզրակացությունների հիմք տալիս:

Գիտական աշխատությունների մի այլ խումբ է, այն էլ բավական հարուստ, իմաստասիրական (փիլիսոփայական) բովանդակությամբ գործերը: Ուշագրավ է, որ դրանք սեղմ, ֆրագմենտար ոճի են և վկայում են հայ իրականության մեջ հեղինակի տվյալ բնագավառում բացառիկ դերակատարության մասին: Այդ ստեղծագործություններում ևս Նժդեհը քննարկում է զուտ ազգային խնդիրներ, որոնք հեղինակին զբաղեցրին նրա ամբողջ կյանքում՝ ինչպես մտավոր, այնպես էլ գործնական:

Գ.Նժդեհը ստեղծագործել է նաև խորհրդային բանտում անցկացրած տարիներին: Այդ գործերի ծնունդը հիմնականում առնչվում է հետաքննության պահանջների հետ և իրենց վրա կրում են բանտային պայմանների ազդեցությունն ու կնիքը, ուստի, անկախ բնույթից ու բովանդակությունից, դրանք այստեղ ներկայացվում են համատեղ:

Ներկա երկհատորյակը Գ.Նժդեհի գրավոր ժառանգության լիակատար հրատարակությունը չէ: Ցավալի սահմանափակության պատճառով հատորներից դուրս են թողնվել ոչ քիչ թվով աշխատություններ ու փաստաթղթեր: Այնուամենայնիվ, ներկա հրատարակությունն ընդգրկում է Գ.Նժդեհի գրավոր ժառանգության առավելագույնը, քան երբևիցե իրականացվել է:

Առաջին հատորն ընդգրկում է տեսական գործերը, իսկ երկրորդը՝ մյուս ստեղծագործություններն ու վավերագրերը:

Գ.Նժդեհի աշխատությունները ընթերցող լայն շրջաններին ավելի մատչելի դարձնելու նպատակով ներկայացված են արդի ուղղագրությամբ:

Փաստաթղթերի հնագրագիտական նախապատրաստումը իրականացվել է գործող կանոններին համապատասխան: Նամակները, գրությունները, կոչերը, հրամանները մասամբ ունեն խմբագրական վերնագիր և տարեթիվ: Կազմողների կողմից որոշված տարեթվերը ներկայացված են քառակուսի փակագծերի մեջ:

Յուրաքանչյուր փաստաթղթից հետո բացատրագրերում նշվում է արխիվային հիմքը, բնագիր կամ պատճեն լինելը, տեքստի վերարտադրման եղանակը, թարգմանության դեպքում՝ բնագրի լեզուն:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՆԹԵՈՆԸ[1]

ԽՈԿՈՒՄ ԷՐ ԱՐԱՐԻՉԸ

Փառապսակ Խեչոյին[2]

Իզուր սպասեց երկնքի դարպասների մոտ պահակով հրեշտակը՝ չերևաց տիեզերքի Արարիչը: Այդ օրը, ինչպես ամեն առավոտ, Նա չմոտեցավ երկնքի դռներին՝ նորազարթ երկրի աղոթքը լսելու:

Եվ առաջին անգամ օրը բացվեց առանց արշալույսի, որովհետև այդ օրը Աստված չժպտաց մեր երկրին:

Այդ ժամին իր գահի մոտ միայնակ խոկում էր Արարիչը... և տխուր էր Նա, տխուր, ինչպես լռությունը Արաբիայի ավազուտ անապատների:

- Նոր աշխարհների ծնունդն է երկնում մեր Տերը,-երկյուղածությամբ շշնջում էին Արարիչին շրջապատող քերովբեները... և մռայլ էին նրանք, ինչպես երկնքից արտաքսված իրենց երբեմնի ապստամբ ընկերը:

- Եվ ինձ թվում էր,- խորհրդավոր լռության մեջ լսվեց Արարիչի ձայնը,- ինձ թվում էր, որ դեպ Հավիտենականությունը դիմող վայրկյանների ու հազարամյակների անվերջ քարավանները միշտ բեռնավորված են եղել արարածներիս նրբահյուս օրհներգներով...

Որ ե՛վ մարդ, ե՛վ սողուն, ե՛վ թռչուն, ե՛վ թռչուն, որ ամեն մի արարած ամեն ժամ գոհություն շնչել ու իմ անունն է օրհնել... Սակայն, Նա անթաղ մեռելներից, թշվառի արցունքից, անմեղի արյունից՝ ստեղծածս երկրի անեծքից ու անկատարելությունից խոսեց...

Լռեց Արարիչը:

Ու նորից խորացան Նրա ճակտի ակոսները ու տխրությունը թանձր ստվերի պես ծածկեց Նրա դեմքը:

- Չէ՛,- բարկությամբ բացականչեց Արարիչը,- թե՛, իմ ստեղծածը չի կարող կատարյալ չլինել. ինձ մոտ բերեք, ուզում եմ մեկ էլ լսել Նրան...

Քիչ անց, քերովբեների հետ տիրոջ առաջ ծառացավ մարդը, որը նոր էր թողել մեր հանցավոր աշխարհը:

- Ո՛վ մարդ.,- նորեն հնչեց Արարիչի ձայնը,- խոսելով աշխարհի անկատարելությունից՝ չմեղանչեցի՞ր դու:

Պատասխանի տեղ երկնքի նոր հյուրը միայն ժպտաց դառնորեն ու հեռացավ:

Խոկում էր Արարիչը:

Եվ տխուր էր Նա, ավելի տխուր, քան հազարամյակներ առաջ, երբ միայնակ ու անկայան շրջում էր ջրերի ու քաոսի վրա ...

Փառապսակ Քեռուն[3]

Знаете ли как величественно восходит солнце?
-так умирает герой.

Ամեն ինչ, ամեն ինչ նրա մեջ մատնում էր Հերոսին:

Տաք կարեկցություն դեպի իրավազուրկն ու թույլը, ֆանատիկ սեր դեպի իր ցեղն ու նրա գուրգուրած ազատությունը, բիբլիական անշահասիրություն ու համեստություն, վտանգի ու մահվան բացարձակ անգիտացում, ռազմական անսահման էնտուզիազմ. ահա Հերոսը, ահա Քեռին:

Երբ հնչեցին պատերազմական փողերն ու ցնծաց Մարսը՝ հազարավոր սրերի հետ մերկացավ և նրա սուրը...

Չգիտեմ ու ինչո՞վ՝ նա իր ցեղին արև ու անմահություն նվիրելու համար բարձրացրեց սուրը...

Ու այնուհետև, քանի-քանի անգամ, Հռոմի հպարտ որդուց ավելի, հպարտորեն կարողացավ ասել՝

«Եկա, տեսա, հաղթեցի»...

Քանի-քանի անգամ, քանի ռազմադաշտերից նա մեզ հղեց հպարտ Կեսարի երեք բառը...

Քանի անգամ նա՝ հայ ցեղի վերածնության գաղափարի այդ աստվածաշունչ Հսկան, հեգնեց վտանգը, անգիտացավ, ժխտեց մահը, հանդգնեց, հաղթեց, մինչև որ պատերազմների քմահաճ աստվածը դավաճանեց նրան:

* * *

Չկա Քեռին...

Լռեց կովկասյան զորաճակատի անպարտելի ու անզուգական Ռազմիկը...

Բայց դեռ երկար, շատ երկար սեգ Արտոսն ու Նեմրութը, որոնք վկա եղան հայ դյուցազնի սխրագործություններին, կպատմեն անցվորին.

- Ուրագանի պես մեր փեշերով Քեռին անցավ ու սրբեց տարավ թշնամուն...

Չկար ալևոր Առյուծը...

Բայց դեռ երկար, շատ երկար նրա մռնչյունը պիտի արձագանքի Հայաստանի ու Իրանի ռազմադաշտերում...

ՔԵՌՈՒ ԱՆՈՒՆՆ ԷԼ ԷՐ ՀԱՂԹՈՒՄ

Թշնամու գերադաս ու թարմ ուժերը համառորեն գրոհում էին, խորտակում ու խորտակվում, ետ քաշվում՝ կարգի բերելով իրենց ցիր ու ցան շարքերը և նորեն ու նորեն հարձակվում:

Հաղթության քմահաճ Աստվածը լքել էր մեզ, թշնամու կողմն անցել:

Մեր շարքերում տատանում կար և մտադրություն՝ թողնելու մեր գրավված դիրքերը, երբ սրարշավ մեր զորաշղթաներին մոտեցավ զորահրամանատարի թիկնապահը ու հաղորդեց Քեռու օգնության հասնելու լուրը:

- Հառաջ, զինվորներ, մեզ հետ է Քեռին,- գոռացին վաշտապետները...

- Հառա՜ջ,- արձագանքեց զորաշղթան և, որպես երկաթե պատնեշ, շարժվեց առաջ:

Քիչ անց, դեռ Քեռին չհասած, թշնամու խրամատները գերեզմանների վերածվեցին: Պարտված էր թշնամին: Քեռու անունն էր հաղթողը...

ՔԵՌՈՒ ՎՐԱՆԸ

- Դեռ կանգուն է Քեռու վրանը,- ասում էին կոզակները և առանձին վստահությամբ ավելացնում,- նշանակում է դրությունը այնքան էլ անհույս չէ...

Թշնամու խաղերը հին ու փորձված Ռազմիկին խաբել չէին կարող:

Նա գիտեր, որ թշնամու հաճախակի անվճռական հարձակումները ոչ այլ ինչ են, եթե ոչ ռազմադավեր: Ուստի, շատ անգամ, երբ հարևան զորամասերը և վերջիններիս հրամանատարները իրարանցման մեջ էին լինում, Քեռին խաղաղ ծխում էր՝ իր վրանի դռանը նստած:

ՍՐՏԱՌՈՒՉ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Սակավախոս էր Քեռին, ու այդ առթիվ նրա զինվորները կատակով ասում էին. «Քեռին խոսում է ուրբաթ ուրբաթ, վատերին ծեծում շաբաթ օրերը, հաղթում ամեն օր»:

Լռասեր էր Քեռին, սակայն ավելի սակավախոս ու թախծոտ դառավ բոլորից պաշտված Խեչոյի մահից հետո:

- Նայում եմ Գրգուռին,- ասաց մի անգամ Քեռին Ախթամարում,- նայում եմ և մտածում, թե ինչպե՞ս է բարձր սարի փեշերին ընկած Խեչոն, և թե առանց ինձ ինչպե՞ս է դադարել գերեզմանում... Մենք չափազանց ուժեղ էինք սիրում միմյանց, որ կարողանայինք անջատ ապրել ու մեռնել:

* * *

Օրեր անցան: Ու մի օր, Ռևանդուզի ճակատամարտում, Խեչոյի մեծ ստվերը ալևոր առյուծին առաջնորդեց դե՛պ հաղթություն՝ դե՛պ հայկական փառատաճարը, որի մեջ ապրում էր ինքը...

ԻՄ ՄԱՐԳԱՐԵՆ

Փառապսակ Զավարյանին[4]

Ecce homo!-Սիա՛ մարդը

Զոհաբերի՛ր...

Զոհաբերի՛ր անվերջ, առանց մնացորդի:

Սովորի՛ր և սիրի՛ր զոհաբերել ու տանջվել՝ բավականության լուսափայլ ժպիտը երեսիդ... և դու կմոտենաս Աստծուն, դու կդառնաս մարդ-Աստված...

Այսպես է պատգամում իմ մարգարեն իր հրեղեն խոսքը...

Մոռացի՛ր քեզ...

Հանուն թշվառների՝ մոռացի՛ր քեզ, երբ հազար հազարներին սև ցավն է ընկերանում, բռնակալ կարիքը նեղում...

Ուրախ քրքջալու ժամին մի՛ մոռանա, որ դառնորեն լացողներ կան...

Սիրի՛ր թշվառին, ծառայի՛ր սրան. թող քո ցավը՝ թշվառի ցավը, քո Աստվածը թշվառի Աստվածը լինի...

Այսպես է պատգամում իմ մարգարեն իր ազատ խոսքը:

Եղի՛ր հպարտ...

Գոյությունդ քարշ տալու համար մի՛ սողա, մի՛ ստորանա և մի՛ ստի՛ր...Ստել՝ նշանակում է հայհոյել ճշմարիտը, ուրանալ՝ նշանակում է դադարել մարդ լինելուց...

Եղի՛ր ազատ...

Գիտակից ստրուկի և հանցագործի մեջ չկա տարբերություն: Խոնարհի՛ր ճակատդ միայն իդեալիդ առաջ, միայն իդեալիդ ազատ գերին եղիր...

Եղի՛ր բացարձակ...

Եվ ո՛չ մի զիջում: Հանցանք է զիջելը: Զիջել՝ նշանակում է թույլ լինել, ամոթալի պարտություն կրել...

Այսպես է պատգամում իմ մարգարեն իր աստվածաշունչ խոսքը, և հոգիս՝ նրա հրեղեն պատգամներին գերի, վեհորեն իր թևերն է պարզում...

ՏԱՊԱՆԱԳԻՐ

Շուշաններ, շուշաններ
Բերեք լիաբուռն...

Փառապսակ Հրանտին

Անցո՛րդ, նա սիրված էր՝ էն հպարտ արծիվ ռազմիկը...

Հեռու մարդաբնակ վայրերից, բնության խորհրդավոր փսփսոցին ունկնդիր՝ նա սիրում էր ժամերով մի թփիկ երազել. երազել մենակ...

Նա սիրում էր մորմոքը լալկան առվակի, և հառաչը հեծկլտող ու վայող քարափների...

Նա, անցորդ, այս գեղատխուր հողաթմբի տակ հող դարձած պատանին, սիրում էր և լեռները՝ ազատության է արծվանիստ գահերը, որոնց ամպոտ կատարներին հաճախ իր հպարտ ճակատին Արևի առաջին համբույրն էր ընդունում...

Ահ, նա սիրում էր, ե՛վ արշալույսը պուրպուր, ե՛վ վերջալույսը տխուր, ե՛վ երգն անխոս ոսկեշող աստղերի...

Դու լալի՞ս ես, անցո՛րդ...

Փառապսակ Աշուղին

- Յո՞ երթաս

- Հռոմ՝ նորեն խաչվելու

...«Այնտեղ, Մասսի էն ստորոտում կա մի երկիր, ուր դարեր է, ինչ օրենքի ու Արդարության տեղ գործում են երկաթն ու յաթաղանը, ուր դարեր է, ինչ հայ ցեղի յոթն անգամ խաչված Մասսի օրը սևով է սկսվում, գողգոթայով վերջանում»...

Այսպես սկսեց Նա իր պատմությունը Տաճկահայաստանի մասին, Արաքսի ափին ընկած գյուղերից մեկում...

Ու այն օրեն «Մասսի էն ստորոտը» վառեց իմ երևակայությունը, իրեն քաշեց սիրտը, իր հողին, իր անունին կապեց իմ էությունը...

Ու այն օրից՝ շատերի պես ես էլ ուխտեցի էն չարաբախտ ժողովրդի օր ու արևին մեռնել...

* * *

«Աշխա՜րհը. օ՜հ, այդ անսիրտ մայրը, որի լի ստինքները միայն կարող հզորները կծծեն...

Աշխարհը, ուր մերկն ու սոված, ուր ճակատագրի խորթ ու զրկված որդիները տեղ չունեն, փայ չունեն»...

Այսպես վերջացրեց իր խոսքը աշխարհի անարդարության՝ անարդար կարգերի ու օրենքների մասին...

Ու այնուհետև մարդկությունը կերակրող, աշխարհը հարստացնող իրավազուրկ բանվորն ու գյուղացին դարձան իմ աստվածությունը, իսկ Աշուղի քարոզած սոցիալիզմը՝ իմ ավետարանը...

* * *

Առաքյալ, բառիս ամենավսեմ իմաստով՝ հեղափոխական առաքյալ էր Աշուղը:

Չկա, Գուբանի երկնքի տակ, Արաքսի ափերում չկա մի գյուղ, ուր լսված չլիներ Աշուղի ձայնը:

Ու միշտ էլ՝ բիբլիական առաքյալների պես պարզ, ու միշտ էլ՝ ոտքով շրջելիս:

Ու այդ սև շրջանում, երբ անեզր Ռուսաստանի միակ զարդերը կազմում էին ժողովուրդների երևակայությունն ահաբեկող դժոխատիպ բանտերն ու զնդանները, կախաղաններն ու կառափնարանները, երբ ցարի խավարի թագավորության մեջ ազատ ու բարձր խոսքի տեղ ավելի ազատորեն բարձրանում ու իջնում էր ոստիկանական մտրակը:

Այն մղձավանջային շրջանում, երբ շատերն էին փախչում Հռոմից ու հանդուգն քչերին ուղղում իրենց «Յո՞ երթաս»-ը՝ Աշուղը, վերջին անգամ, հեղափոխության կարմիր ավետարանը գրկած, մտավ Հռոմ ու... խաչվեց...

Փա՜ռք....

ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ

Մի պտղունց խունկ՝
շրջիկ Զավենի հիշատակին

Գիշեր է...

Լուսնի ոսկեշող ցոլքերի տակ, գլուխս վշտացած հրեշտակի պես գերեզմանաքարերից մեկին դրած, լռության խորհրդավոր փսփսոցն եմ լսում.

- Տեսնո՞ւմ ես,- փսփսում է լռությունը միստիկ,- տեսնո՞ւմ ես այն գեղատխուր հողաթումբը...Ա՜հ, նրա տակ, էն հողի տակ հող դարձողը երազում էր Չարի ու ավարի գահերն ավերել, աշխարհը երջանկացնել էր ուզում... Երազում էր ու երջանիկ էր Նա, երբ լսվեց ֆալաքի չար քրքիջը՝ շարժվեց մանգաղը մահաբեր ու սպանեց երազն ու երազողին...

* * *

Այսպես, լեզու առած, փսփսում է լռությունը միստիկ, ու հոգիս խեղդող թախծի գիշերն ավելի սե՜վ, ավելի ճնշող է դառնում...

Եվ ուզում եմ ճչալ ու փախչել ես...

Փախչել աշխարհից, ֆալաքի ձեռքից...

Փախչել հեռո՜ւ, շատ հեռու...

Փախչել՝ դուրս գալ աշխարհից...

ԱՐՇԻՎ ԼԱԹՈՆ

Ճակատագրի պես կույր ու անողոք էր
Նրա հարվածը, որը չէր հապաղում իջնել այնտեղ,
ուր գործել էին սկսում քուրդ բեգերի կիրքն ու ախորժակը:

«Քեզ, արքաների մեջ՝ միայն քեզ, գահերի մեջ՝ միայն քո գահը, լեռների էն սեգ ու անհաս բաշերը սիրեցի ես»...

Այս խոսքերը շշնջացին Արծիվ Լաթոյի բոցավառ շրթունքները, երբ մի օր, դեռ պատանի, հայրենի դաշտերից Նրա հայացքը տիտան Արնոսի կատարին սավառնող սև արծիվը գերեց...

Ու հուզված ու մտախոհ՝ Նա վերադարձավ տուն, պատից խլեց հոր հրացանը, համբուրեց, համբուրեց մեկ էլ, համբուրեց յոթն անգամ, գրկեց ու... լուսաբացին ջահել Ռշտունցին էլ չկա՜ր գյուղում...

* * *

Օրեր անցան:

Արնոսի կատարից Լաթոն իր արծվային թևերը տարածեց Ռշտունիքի վրա, ու այն օրից մեղմացավ ավարն ու ավերը, նվազեց արյունն ու արցունքն այդ երկրում...

* * *

Պատերազմ էր:

Ռուսական զորքերը հասել էին Վան, կամավորները՝ Մոկս:

Իր որդիների արյունով յոթն անգամ սրբացած հայու երկիրը ընդմիշտ ազատված էր համարվում, երբ պատերազմների աստվածը, թե՜ ցարի դիվանագիտությունը դավճանեց մեզ...

Սկսվեց ռուս զորքերի Հայաստանն ավերող ու ամայացնող անփառունակ նահանջը...

Լաթոն՝ Արնոսի հպարտ արծիվը, չուզեց, չկարողացավ բաժանվել իր սիրած լեռներից ու մնաց...

Մնաց մենակ, մենակ՝ ամայացած երկրի մեջ ու մենավորի անսահման հուսահատությամբ կանչեց.

- Ո՞ւր ես, ցեղդ իմ, ո՞ւր...

Եվ երբ որբացած երկրի դար ու դաշտերը, որպես տխուր արձագանք, կրկնեցին. «Ո՞ւր ես», հուսահատ ու վրիժավառ հայորդին, որպես լեռան կատարից պոկված հսկա ժայռ, նետվեց դեպի առաջացող թշնամին ու... ընկավ:

Փա՜ռք...

ՀԱՅ ԽԱՉԱԿԻՐԸ

Մահն էլ է սիրում գեղեցիկը
Փառապսակ Միհրանին

Ինձ ասացին՝ էլ չկա Միհրանը, և ես տխուր ժպտացի միայն, ինչպես մի օր ժպտաց Մահը, երբ հայ խաչակիրը խթանեց իր ջահել նժույգին և շշնջաց.

- Տար ինձ, դեպի Միջագետքի ավազուտ անապատները թռցրու ինձ, ուր կիզիչ արևի տակ իմ ցեղի տխուր մասն է մարտիրոսանում...

* * *

Ինձ գուժեցին՝ էլ չկա Միհրանը, և ասացի ես.

- Թող այդպես լինի, թող միհրանաբար, դյուցազնորեն ընկնեն նորերն ու նորերը, եթե ազատագրյալ մեր Հայրենիքում դեռ կա մի բուռ հող, որը ներկված չէ արյունով...

Ինձ ասացին՝ էլ չկա Միհրանը, և ասացի ես.

- Չեն լինի բոլոր խիզախները ու հանդուգները, որոնք գիտեն հեգնել մահը, անգիտանալ վտանգը, որոնք լավագույնն են լավերի մեջ, որոնց սիրում է և Մահը...

ԷՋԵՐ ԻՄ ՕՐԱԳՐԵՆ[5]

«Ժողովո՛ւրդ, ասա՛ ինձ քո իդեալն
և ես ասեմ քո ապագան»:

ՄՈՆԹԵՆ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ես ճշմարտություններ գիտեմ, որոնցից մեկն ասում է՝ ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդությանը: Նայելով քեզ, հա՛յ երիտասարդություն, վարդագույն լավատեսությամբ չեմ լցվում ես:

Երեկ դու ավելի հուսատու էիր, քան այսօր: Իսկ մեր վաղը, մեր ապագան կախված է մեր ներկայից:

Վաղը ազգովին պիտի հնձենք այն, ինչ որ սերմանում ենք այսօր, երբ դու նվազ խոստմնալից ես, երբ քո մեջ, շնորհիվ մեր օրերի նյութապաշտական ոգու և համատարած հուսալքության, թուլացել է պաշտամունքը երկու աստվածությունների՝ հայրենի ժողովուրդի և երկրի, քո շարքերում, գիտես այդ, օրեցոր աճում է հոգնածների, ուղեկորույսների և դարպընթաց եղածների թիվը: Քո մի մասի մտքի ու սրտի սնունդը, ավա՜ղ, չի կազմում «առյուծոսկրի ուղնուծուծը»:

Տկարանալով բարոյապես, դու մեր մեջ թուլացնում ես մեր ժողովրդի լավագույն ապագայի հույսը:

Ահա թե ինչո՞ւ ուզեցի մտերմաբար մի քիչ խոսել քեզ հետ, ուզեցի օրագրիս մի քանի անարվեստ էջերով-ծնունդը իմ խորհրդածությունների-ստիպել քե՛զ ևս մտածելու մեր վաղվա մասին:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Մի զինվոր սպանում է Արքիմեդին»:
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ժողովուրդների պատմությունն այլ բան չէ, քան իրենց գոյամարտի, իրենց հաղթության և պարտությունների պատմությունը:

Պատերազմներն են օրօրել մարդկության մանկությունը և ո՛չ խաղաղությունը, որը բնական վիճակ չի եղել, այլ՝ պատերազմների կարճատև դադար միայն:

Աշխարհը կառավարում է հակամարտության օրենքը: «Մի զինվոր սպանում է Արքիմեդին»:

Հաղթում է ուժեղը և ո՛չ արդարը:

Վա՜յ թույլերին:

* * *

Բոլոր ժողովուրդները, լուսավորյալ թե վայրենի, ձգտում են արևի տակ հարմար և կայուն մի տեղ գրավել:

Նրանք զենքի են դիմում երբեմն ռազմասիրությունից, երբեմն մրցակցությունից, երբեմն կույր ատելությունից մղված:

Պատերազմում են, երբ պետք է նորանոր շուկաներ ձեռք բերել, ծովերի տեր դառնալ, երբ պետք է ինքնապաշտպանվել կամ ապահովել այս կամ այն երկրի անկախությունը:

Քիչ անգամ չեն նրանց իրար դեմ հանում նաև ամենաանբնական և չնչին պատճառները, օրինակ՝ իրենց միապետների դինաստիական շահերը, նրանց հիվանդոտ փառասիրությունը, կրոնների և բարության մասին ունեցած ըմբռնումների տարբերությունը, և այլն:

Պատերազմի համար են աշխատում եվրոպական իմպերիալիզմը, անգլիական ծովատիրությունը, ամերիկյան դոլարապաշտությունը, համիսլամականությունը, դեղին վտանգը, պանիսլամիզմը և այլն:

Պատերազմ է անվերջ, և եթե երբեմն ժողովուրդները կռվադաշտում չեն, ապա նրանք զորանոցներում են, ուր խելահեղորեն պատրաստվում են նորանոր բախումների համար:

* * *

Չեզոքության են դիմում թույլերը միայն, հաճախ բաժանելով պարտվածների ճակատագիրը: Էապես չկան չեզոքներ: Եթե երկուսն այսօր բարեկամ են - նշանակում է թե նրանք զինակցել են մի երրորդի դեմ:

Ամեն մի պատերազմ երկու նորերի պատճառ է դառնում, որովհետև չափված կողմերից ոչ ոք իրեն վերջնականապես պարտված կամ հաղթական համարում:

Եվ միշտ էլ պարտված կողմը դեռ իր նահանջի ճանապարհին մշակում է իր փոխվրեժի ծրագիրը:

* * *

Մեկը հարձակվում է, մյուսը՝ պաշտպանվում. այդ երկուսից ո՞րն է մեղավոր:

- Եվ ո՛չ մեկը, իրավունք ունեն երկուսն էլ, պատերազմն արդար է երկուսի համար էլ,- ասում է ֆրանսացին:

- Ես սիրում եմ թղթախաղում տանողին, ինչպես և կռվում հաղթողին,- ասում է անգլիացին:

- Եթե մեզ համար օգտակար է, ուրեմն և կարելի է,- ասում է գերմանացին:

- Կա՛մ բոլորի բարեկամը, կա՛մ բոլորի թշնամին,- ասում է ամերիկացին: Եվ որովհետև հնարավոր չէ բոլորի բարեկամը լինել, նա գործնականում մնում է բոլորի թշնամին:

* * *

Պատերազմի դեմ մարգարեական խանդով ու զայրույթով խոսել են մարդկության ամենաընտիր ներկայացուցիչները, բայց և այնպես նա շարունակում է պահել իր գոյությունը, հեգնելով իմաստասերների ճշմարիտ խոսքը, սրանց ոսկի երազը:

«Գազանների խնջույք», «ազգամիջյան սպանդ», «խելագար իրարակերություն», «մարդկությունը կրծող սև վերք», «օրինականացած կողոպուտ», և այլն. - ահա՛ պատերազմն իր թշնամիների համար:

«Չէ՛,- ասել է անմահ Հյուգոն,- կյանքը չի կարող աշխատել մահվան համար: Սպանությունը մնում է սպանություն, միևնույն է թե ի՞նչ ես կրում՝ ոճրագործի գլխա՞րկ, թե՞ ֆրանսիական կայսեր թագը»:

«Չէ՛, թե՛, նրանք բնավ կիսաաստվածներ չեն, նրանք մարդ էլ չեն»,- աշխարհակալների մասին ասել է Ֆենելոնը:

«Լուսավոր ազգերը նման են որսկան շների: Մի անբարոյական բնազդ գրգռում է նրանց ոչնչացնելու իրար, առանց օգուտի և իմաստի»,- ասում է Անատոլ Ֆրանսը:

«Նա,- ասել է Լակտենցին,- որն սպանել է միայն մեկին, դատապարտված է որպես հանցագործ: Բայց մորթեցե՛ք հազար հոգի, արյունով հեղեղե՛ք երկիրը, դիակներով վարակե՛ք գետերը և ձեզ տեղ կտան Օլիմպի վրա...»:

Պատերազմն ունեցել է և ունի իր պաշտպանները, որոնց համար այդ մշտական չարիքը իր բնախոսական և բարոյական արդարացումն ունի:

- «Առանց պատերազմների աշխարհը կվերածվի մի նյութապաշտական ճահճի», - ասում են սրանք:

- «Պատերազմը - դա լավերի հաղթանակն է»:

- «Առանց պատերազմների աշխարհը կնկնի մի վտանգավոր քնախտի մեջ»:

- «Անբարոյականանում են անմարտունակ ազգերը», և այլն:

Սրանք ժխտում են պատերազմների պատահական բնույթը, համարելով վերջինը որոշ ճակատագրական օրենքների ծնունդ, որպես մարդկային բարեշրջման բուռն և խոշոր արտահայտություններից մեկը:

* * *

Քսան երկար ու ծիգ դարեր են անցել Գողգոթայից մինչև մեր օրերը, և, ավա՜ղ, խաղաղության, եղբայրության ու սիրո Ուսուցչի աստվածաշունչ խոսքը շարունակում է մնալ որպես «ձայն բարբառոյ յանապատի»:

Երկու հակամարտ ուժերի արնոտ պատմությունը - սրի և սիրո խոսքի պայքարը - երկու ուժեր, որոնցից մեկը երազում է վերացնել սահմանները երկրների և ժողովուրդների միջից, իսկ մյուսը համառում է հաստատ պահել այդ սահմանները, ասել է և ազգամիջյան թշնամանքը՝ իր գոյությունը հավերժացնելու համար: Եվ դեռ իշխում է վերջինը, դեռ ուժեղ ու հաղթական է վերջինը ու հույս չկա թե մեր դարում սուրը կվերածվի արորի:

«Խաղաղությո՞ւն ես ուզում՝ պատրաստվիր կռվի» - ա՛յս է մնում օրվա հրամայականը:

Եվ՝ կարծեք խաբուսիկ խաղաղությունից սարսափած՝ բոլորը, բոլորը պատրաստվում են, զինվում:

Եվ ոչ ոք ապահով չէ, որ վաղը աշխարհի վրայով վերստին չի անցնի պատերազմի գունատ ճիվաղը՝ արնոտ սուրը ձեռքին:

II
ՄԵՐ ԱՊԱԳԱՆ ՎՏԱՆԳՎԱԾ

«Թուլությունն ստեղծված է սնոցանելու ուժը»:

Պիտի ապրի՛ և հայ ժողովուրդը: Պիտի ապրի՛, որովհետև այդպե՛ս է ուզում ինքը:

Բայց ի՞նչպես, ինչի՞ շնորհիվ, ի՞նչ տվյալներով, գրավակա՞նը:

Չգիտեմ, մեր ժողովուրդը գիտակցո՞ւմ է թե երբեք իր գլխովին կորչելու վտանգն այնքան մեծ չի եղել, ինչպես այսօր:

Գիտակցո՞ւմ է թե անցյալում իր վիճակը, իր ֆիզիկական գոյության ապահովության տեսակետից ավելի նվազ մտահոգիչ է եղել, քան այսօր:

Մինչև իր ազատագրական ընդվզումները օտար լծերի տակ, մի տեղ որպես պարզ ստրուկ, մի այլ տեղ՝ հավատարիմ հպատակ և ամեն տեղ՝ իր քրտինքով տիրող տարրը կերակրող-նա հանդուրժելի էր իշխող ժողովուրդների կողմից: Սակայն այսօր նա այն չէ, ինչ որ էր երկու-երեք տասնյակ տարի առաջ: Նրա հոգեբանության հետ փոխվել է և իր վիճակը:

Թրքահայկական նահանգներն այժմ անհայաբնակ են, ինչպես մեծ գերեզմաններ: Արարատյան դաշտի մի մասն է այժմ հայի հայրենիքը, ընկած մահմեդական երկրների ճանապարհի վրա մի կամուրջ՝ Արևմուտքի և Արևելքի մահմեդականության համար:

Այժմ նրա աշխարհագրական դիրքը ավելի մտահոգիչ է, քան իր քաղաքական ճակատագիրը:

* * *

Հանրածանոթ իրողություն է, որ ռուսական տիրապետությունից ազատվելու ցանկությամբ թաթար Ադրբեջանն երազել է և պիտի երազի մի օր տաճիկներին տեսնելու Անդրկովկասում:

Ծանոթ իրողություն է և այն, որ Տաճկաստանը փորձել է և պիտի փորձի մի օր Ադրբեջանի և Դաղստանի իսլամությունը, ինչպես և Անդրկովկասի բնական ամրությունները դարձնելու պատնեշ Ռուսաստանի դեմ:

Ասել է՝ մեզ, մեր ժողովրդին վիճակված է մի օր կենաց ու մահու կռիվ մղելու համիսլամ երկրների՝ մեր վրայով իրար միանալու ձգտման դեմ:

Դժվարի՛ն պայքար:

* * *

Բացե՛ք քարտեզը և ձեր տեսողությունը սևեռե՛ք այն փոքրիկ տարածության վրա, որը կազմում է այսօրվա Հայաստանը՝ Արարատյան դաշտի մի մասը և Սյունյաց երկիրը:

Աչքի անցկացրե՛ք այն գիծը, որը նրա արդի սահմաններն է կազմում: Տաճիկները Իգդիրում՝ էջմիածնի պատերի տակ: Թաթարը Շարուրում՝ Երևանի պատերի տակ: Նույնը Նախիջևան-Օրդուբադում՝ դարանամուտ՝ Սյունիքի թիկունքում: Արևելքից էլ՝ Ադրբեջանը: Տեսնո՞ւմ եք. դա այլ բան չէ, քան մի երկաթե օղակ հայ երկրի շուրջը:

* * *

Կա՝ մեր երկրի և ժողովրդի ինքնապաշտպանությունը դժվարացնող և մի այլ պարագա:

Դիմե՛ք քարտեզին, նա կպարզի ձեզ և այդ դժբախտ պարագան: Վտանգի դեպքում թշնամին ժամերի ընթացքում կբաժանի Ալեքսանդրապոլը Երևանից, իսկ վերջինը՝ Սյունիքից: Քարտեզը ցույց կտա և հետևյալը. Արաքսի ափով Ադրբեջանին միանալու համար մահմեդականությանը հարկավոր է 2-3 ժամ:

Նույնը մի այլ գծով՝ Սիսիանի վրայով, կարող է միանալ Ադրբեջանին գրեթե նույնքան ժամանակի ընթացքում: Նույնը ժամերի ընթացքում կարող է անել և Կապանի վրայով: Սեղմ ասած՝ Արևելքի և Արևմուտքի մահմեդականությունը ժամերի ընթացքում առնվազն յոթը

տեղով կարող է զատել իրարից հայկական գավառակները և միանալ, իհարկե, հայ ժողովրդի վրայով:

* * *

Եթե Հայաստանի աշխարհագրական դժբախտ դիրքի և նրա փոքրիկ ծավալի հետ հաշվի առնեք նաև մեր ժողովրդի քանակը, նրա հատվածականությունը, նրա քաղաքական իդեալը, նրա և իր իսլամ հարևանների փոխհարաբերության առանձնահատկությունը, ձեզ համար իր բովանդակ սպառնալիությամբ կպարզվի մեր ժողովրդի վտանգված ապագան:

Ծանոթ վիճակի մեջ հայ ժողովուրդը իր արդի հոգեկան կառուցվածքով կարող է իր գոյությունը հրաշքով պահել: Այդ դրության մեջ վտանգված է նրա ապագան: Բայց և այնպես նա ուզում է ապրել որպես ազգ և պիտի ապրի:

Բայց ինչպե՞ս, ի՞նչ տվյալներով: Չկորչելու համար մեր դարը և մեր աշխարհագրական դիրքն ու ծանոթ դժբախտ պայմանները, որոնց մեջ ապրում է մեր ժողովուրդը, պահանջում են լինել ուժեղ, էլի՛ ուժեղ և մի՛շտ ուժեղ:

Ապրե՞լ ենք ուզում՝ լինենք ուժեղ ազգովին:

Լինենք ուժեղ, ուժեղ ազգովին. ահա՛ հրամայականը:

Լինենք ուժեղ այնքան, որ մեր անպարտելիությունը ոչինչ դարձնի մեզ ծանոթ այն բոլոր դժբախտ պայմանները, որոնք դժվարացնում են մեր ցեղի ինքնապաշտպանության գործը:

Թվական, էթնիկ, ընդհանրապես նյութական տեսակետից մեր ժողովուրդը, հասկանալի պատճառներով, երբեք չի կարող ուժեղ լինել իր հարևաններից: Սակայն ուժը միայն նյութական ազդակները չեն, այլ և մի ժողովրդի առաքինությունները:

Կա հոգեբանական գերադասությունը, կա բարոյական ուժը- աշխարհի պես հին, բայց միշտ էլ թարմ և հրաշագործ, որին տիրապետող ազգը քիչ անգամ է գլուխ ծռել իրենից նյութապես տասնապատիկ ուժեղ թշնամու առաջ:

Բարոյակա՛ն ուժն է գոտեպնդում փոքր ժողովուրդներին ու բանակներին անհավասար կռվում. նա՛ է դեպի հաջողություն ու հաղթանակ առաջնորդում թվապես թույլերին՝ մեծամեծ հակառակորդների դեմ: Նա՛ եղել է և այսօր է միակ ապավենը մեզ նման փոքր ժողովուրդների:

Եվ այսօր, մեր դրության մեջ, միայն նա՛ - բարոյական ուժը, կարող է ապրեցնել մեզ: Ուրեմն, ճանաչենք նա որպես մի ընդհանուր Աստվածություն, լինենք ուժեղ - արևի տակ մեր տեղն ու գոյության իրավունքը պահելու համար:

III
ՀԱՅՐԵՆԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ

«Ո՛չ, ախոռը, ուր անասունները կ'ուտեն և կպառկեն՝ հայրենիք չէ»:
ԼԱՄԸՆԵ

Հայրենասիրությո՛ւն- մարդկային առաքինությունների թագն ու պսակն է դա: Մարդկային բարոյական հատկությունները իր մեջ միացնող այդ գերագույն առաքինությունն է ազգերի գոյության անհրաժեշտ պայմանը և անսպառ աղբյուրը նրանց ուժի և մեծության: Նա այնքան ջերմ է մի ժողովրդի մեջ, որքան փոքր է այդ ժողովուրդը և որքան ամբարիշտ են նրա հարևանները: Եթե այդպես չէ ամենուրեք, այդպես պիտի լինի:

* * *

Այդ նվիրական զգացումը զարգանում է աստիճանաբար:

Սկզբում՝ բնազդական, զարգանալով՝ նա դառնում է իմացական՝ ոգիանում է նա:

Առաջին դեպքում անհատը թելադրվում է, մղվում մի բնազդային զգացումից, երկրորդ դեպքում՝ նա գիտակցորե՛ն կատարող է մի պարտականություն:

Նա զարգանում է ժողովուրդների ինքնագիտակցության և արժանապատվության զգացումի հետ, ընկնում՝ նրանց նյութակրոնության, շռայլության, սեղմ ասած՝ նրանց բարքերի ապականության հետ, մեծապես արագացնելով նրանց անկումը:

Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, ընկնում՝ նրանց պակասի պատճառով:

* * *

Մեր ժողովուրդն առանց հայրենասիրության այն է, ինչ որ մի մարմին՝ առանց հոգու:

Դա մայրն է - իր նման փրկարար - մի շարք առաքինությունների՝ գաղափարականության, անձնվիրության, արիության:

Դա պատերազմող բարոյական ամրությունն է, կախարդական զրահը, անվրեպ զենքը:

Հայրենասիրությամբ հարուստ ժողովուրդը դեպքերի խաղալիքը չէ, այլ՝ նրանց հրամայողը:

Այդպիսին սովորական «նավաբեկություններ»-ի ժամանակ չի զինաթափվում բարոյապես: Վստահ իր բարոյական ուժերին, նա շատ

շուտ է ուղղում իր մեջքը՝ վերագրավում իր նախկին դիրքերը, դրությունը:

Հայրենասիրության հետ բարձրանում են ազգերը, ընկնում՝ նրա հետ: Փոքր ազգերը պարտադրորեն ավելի հայրենասեր պիտի լինեն, քան մեծերը, մենք՝ ավելի՛ քան բոլորը:

Հայրենապա՛շտ պիտի լինենք մենք:

IV
ՎՏԱՆԳԱՎՈՐ ՄՈԼՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հակաճառությունները ճշմարտության համար այն են, ինչ որ ստվերը պատկերների համար»:

Ոչի՛նչ չի ունեցել աշխարհը, որ իր որոշ թշնամիները չունենան:

Անստվեր, անբիծ, անթերի միաժամանակ բոլորի կողմից չի համարվել և ո՛չ մի սկզբունք, ո՛չ մի սրբություն, ո՛չ մի արժեք:

Քննադատելի են համարվել աստվածներն ու աստվածությունները անգամ: Նույն ճակատագիրն է ունեցել և հայրենասիրությունը: Եվ լավ է, որ այդպես է աշխարհը, այլապես իրենց բովանդակ արժեքով երևան պիտի չգային շատ բաներ, որոնցով կարժեքավորվի, կիմաստնանա, կվեհանա կյանքը:

* * *

Տգիտություն, եսականություն և աշխարհաքաղաքա-ցիություն - ահա երեքը հայրենասիրության անհաշտ թշնամիներից:

Առաջինի մասին պիտի չխոսեմ:

Կույրը մեղավոր չէ, որ չի տեսնում:

Մտավոր կուրություն է տգիտությունը:

Զզվելի է եսասերը: Նա թշնամի է իր նմաններին, իր հասարակության, մարդկության: Նա ստանում է՝ առանց տալու: Նա անիշխանական է, որովհետև իրավունքներ ունի՝ առանց պարտականությունների: Նա գող է, տգրուկ, որովհետև ապրում է ուրիշների հաշվին: Իր հանցավոր եսի մեջ փակված, ինչպես խխունջն իր պատյանի մեջ, նա արհամարհում է և հեգնում այն ամենը, ինչ որ հենց այժմ անձնապես չի շահեցնում, չի պարարտացնում:

Ուր շահ, ուր լավ՝ այնտեղ հայրենիք:

Սա՛ է նրա շնական նշանաբանը:

Այլ պիտի լիներ աշխարհը, եթե գոյություն չունենար այդ մարդատիպ հրեշը՝ եսասերը: Դա՛ է առաջին դասալիքը, դա՛ է վախկոտը, փոքրոգին ու խաբեբան: Դա՛ է բարձրացնում անձնական կաշվի արժեքը, դա՛ է պսակազրկում սրբությունները, իդեալները, հայրենիքը:

Դա հաճախ փորձում է իր հոգու այլանդակությունները քողարկել այս կամ այն մոլոր տեսությամբ, այս կամ այն ուռուցիկ և գեղեցիկ խոսքով: Բայց, ի զո՜ւր աշխատանք. նրա կյանքը, նրա բարոյական վարքագիծը գալիս է մատնելու հրեշը մարդու պատկերով: Եթե մի երկրի ղեկն ու ղեկավարությունն ունենայի ձեռքիս, բոլոր եսասերներին, առնվազն, կգրկեի այդ երկրի հողից ու ջրից օգտվելու իրա-վունքից: Որքան շատ են սրանք մի ժողովրդի մեջ, այնքան անապահով է նրա ապագան: Չկա՛, մի հասարակության համար չկա՝ ավելի մեծ չարիք՝ քան սրանց տխուր գոյությունը: Սրանց մասին է Շարլ Վագները ասել՝ «Մա՛րդ, դու ավելի քիչ արժես, քան այն շունը, որը նետվում է դեպի գողը, առանց վախենալու նրա հարվածներից»:

* * *

Հայրենիքի և հայրենասիրության թշնամին աշխարհաքաղաքացին է՝ կոսմոպոլիտը:

Սրա հայրենիքը, իր հայտարարությամբ, համայն աշխարհն է, ազգը՝ համայն մարդկությունը: Չկա՛ն ազգեր, կա մարդկությունը,- ասում է այդ միամիտ երազատեսը և հայացքն ուղղում դեպի անորոշ հեռուները:

Պիտի սիրել,- ասում է սա. պիտի սիրել բոլոր մարդկանց՝ առանց ցեղի, գույնի, կուլտուրայի խտրության: Այո, պիտի սիրել, պիտի կարեկցել, ավելին՝ պիտի օգնության փութալ իր նմաններին: Սերը դեպի մեր նմանները եղել է և կմնա կրոնների և հեղափոխությունների հռչակած առաքինություններից գերագույնը: Պիտի ապրի մարդասիրությունը: Բայց մի՞թե մեր դեպի մարդկությունն ունեցած սերը ազատում է մեզ և մե՛ր ժողովուրդը սիրելուց, հայրենասեր լինելուց:

Մերը պիտի չսիրե՞լ, որովհետև պետք է սիրել և օտարի՞նը: Մի մասը պիտի չսիրե՞լ, որովհետև սիրում ենք ամբողջությո՞ւնը: Անհեթեթություն չէ՞ դա: Իսկ եթե բոլորն էլ, ի դժբախտություն աշխարհի, իրենց աշխարհաքաղաքացի հայտարարեին, այսինքն դադարեին իրենց ազգը սիրելուց, իրենց ազգային պարտականությունները կատարելուց - կշահե՞ր մարդկությունը: Եվ ինչո՞ւ միայն մե՛ր ազգը չսիրել, ինչո՞ւ միայն մերի՛ն չօգնել, չէ՞ որ դա էլ մի մասն է կազմում մարդկային ցեղի: Անհեթեթ վարդապետություն, որը պլատոնական սեր քարոզելով դեպի մարդկությունը, քար անտարբերություն է հանձնարարում դեպի մարդկությունը կազմող ազգերը: Չէ՛, լրջորեն կաղում է այդ մոլոր վարդապետությունը. նրան պակասում են տրամաբանությունը և բարոյականությունը:

Հեռո՛ւ մեզնից այդ մոլորությունը:

Բացարձակապես հաշտելի են հայրենասիրությունն ու մարդասիրությունը: Բարեկամներ են սրանք և ոչ թշնամիներ: Միայն ազգասե՛րը կարող է սիրել և մարդկությունը:

Աշխարհաքաղաքացին իրապես սիրում է- եթե սիրում է - ոչ այս, ոչ այն, այլ մի մեծ քիմերա, մի ոչնչություն: Ծառայելով իր ազգին, հայրենասերը անուղղակի կերպով ծառայում է և մարդկության: Նույնը չի կարելի ասել աշխար-հաքաղաքացու մասին: Մարդկությունն իրենից չի ներկայացնում մի կազմակերպված միություն, ինչպիսին է ազգը, որպեսզի նրա նկատմամբ կարողանանք որոշել մեր անելիքը, մեր պարտականությունները: Մեզնից որոշ և կոնկրետ զոհողություններ պահանջում է ազգը, որը և մեզ բարոյապես կապում է մարդկության հետ, հարաբերության դնում նրա հետ:

Սեղմ ասած, աշխարհաքաղաքացին իրապես ոչ ոքի հանդեպ իրեն պարտական չի համարում: Ահա՛ թե ինչո՛վ իրականում նա մոտենում է ավելի եսասերին քան այլասերին: Իսկ եթե եսասեր չէ, ապա ցնորապաշտ է, որի սերը դեպի մարդկությունը պլատոնական է, անարժեք:

* * *

Աշխարհաքաղաքացիների մի մասը միամիտ ցնորապաշտներ են, զուրկ իրականության զգացումից, մյուս մասը՝ պարտականության փոքրոգի դասալիքներ, որոնք զանազան սոփեստություններով քողարկում են իրենց դավաճանությունը մարդկային առաքինություններից ամենագերագույնի-հայրենասիրության հանդեպ: Սրանց աշխարհաքաղաքացիությունը այլ բան չէ, բայց եթե բացասումն բոլոր տեսակի պարտականության:

«Օգտակար անդամը ազգերի դաշնակցության մեջ նա է, որն ամենաուժեղ կերպով է թափանցված ազգայնականության գաղափարներով»,- ասում է Ռուզվելտը:

«Հակահայրենասիրության տեսությունը,- ասում է եվրոպացի մի գրող,- միշտ էլ հանդիսանում է որպես մարդկային ստորության տեսությունը»:

V
ՄԵՐ ՄԱՄՈՒԼԸ

Թերթեր ունենք, որոնք ավելի օգտակար պիտի լինեին հայ ժողովրդին, եթե բնավ լույս չտեսնեին:

Ժողովուրդը դաստիարակելու գործում մեծագույն դերը մամուլինն է: Սակայն, շատ չնչին դեր է կատարում այն մամուլը, որը հանդի-

սանում է իր ժողովրդի մտաբարոյականի հայելին միայն ու ուրիշ ոչինչ: Քիչ արժեք ունեն այն թերթերը, որոնք հասարակությանը հրամցնում են նրա սեփական մտա-բարոյական կյանքի պատկերը միայն: Առօրյա անհամ անցքերի ու դեպքերի նկարագրությունը հրապարակախոսություն չէ: Խոսքի լուսանկարչություն պիտի չլինի մամուլը: Մերը, որոշ բացառությամբ, շարունակում է մասնագիտանալ ժխտական քննադատության մեջ, արձագանքը հանդիսանալու կա՛մ մեր առօրյա իդեազուրկ կյանքի, կա՛մ կողմնապահ պաշտպանը իր նեղ կուսակցական տեսակետների և շահերի:

* * *

Թերթեր ունենք, որոնք ավելի օգտակար պիտի լինեին հայ ժողովրդին, եթե բնավ լույս չտեսնեին:

Թերթեր ունենք, որոնց, ինչպես եղինջին, չի կարելի ձեռք տալ՝ առանց խայթվելու: Մաղձ, հիմարական ծաղր, շուկայիկ հիշոցներ, քաշքշուկ, սևացում, զրախոսություն - ահա՛ մեր «խայթող» թերթերի հրապարակախոսությունը: Երբ պակասում են լուրջ ապացույցներ, սրանք «մաքրասիրաբար» դիմում են իրենց այլանդակ փաստաբերության, լցնելով իրենց էջերը ոճական նման մարգարիտներով - «սրիկա», «առավ-փախավ», «քառանկյուն գլուխ», «բարոյական ոչնչություն», «խայտառակության դրոշ», և այլն:

Այդ թերթերի բովանդակության չափ և ավելի զզվելի է իրենց բազարի լեզուն: Սրանց համար գոյություն չունի հրապարակախոսական էթիկան: Սրանց համար չէ գրի և գրչի մաքրությունը: Չգիտեմ, այդ թերթերի խմբագիրները գիտե՞ն թե խոսքը - դա մարդուս բարոյական շունչն է, թե ինչ որ մտքերն՝ այն էլ խոսքերը, և որ խոսքը մատնում է մեր ներքին մարդը:

* * *

Միշտ էլ երբ ձեռքս եմ առնում որոշ թերթեր, ակամայից հիշում եմ «թերթերի իրար ոչնչացումը» խորհրդանշող մի ծաղրանկար՝«օձերի կռիվը» խորագրությամբ:

Ոչնչացնելով իրանց շուրջը եղածներին, մնացած երկու օձերը ուտում են իրար և կռվադաշտում մնում է... երկու պոչ միայն...

* * *

Ժողովրդի հավաքական սիրտը, նրա ինքնագիտակցությունը մշակելու փոխարեն, նրա մի մասը թշնամացնել մյուսի հետ, նրա մի մասի անունից հայհոյել մյուսին, հարձակվել մյուսի վրա-դա առնվազն հրեշություն է, դա ասել է՝ հեշտացնել մեր գիշատիչ հարևանների գործը, դա ասել է՝ նորանոր աղետների համար նախապատրաստել հայրենի ժողովուրդը:

Դա ազգովին ինքնաոչնչացում է, անձնասպանություն:

Թողնե՛նք փոքրիկ եսերի և փառասիրությունների ամոթալի և վտանգավոր կռիվը՝ կռվադաշտում մի օր «երկու պոչ» չթողնելու համար:

«Օրինակը, թող որ համր, ամենակարող ուսուցիչներից մեկն է աշխարհի»:

Քիչ խոսք, շատ օրինակ՝ ժողովրդասիրության, պարտաճանաչության, անձնվիրության: Առանց վեհ և հրահանգիչ օրինակների՝ չկա դաստիարակություն:

Թող գիտակցեն այդ հայ մամուլը վարողները և մեծապես օգտվեն անցյալի բարոյա-գաղափարական հարստությունից: Թող հաճախ նրանք բնութագրեն հայ ժողովր-դի ընտիր որդիներին, որոնք իրենց կյանքով թե մահով մի բան ավելացրել են ազգ կոչվելու մեր իրավունքին: Թող նրանք հաճախ պատմեն իրենց ընթերցողներին, թե ինչպես սիրեց հայրենիքն Ա-ն, թե ի՞նչպես ծառայեց իր ժողովրդին Բ-ն, թե ինչպես ընկավ իր ժողովրդի համար Գ-ն և այլն: Թող գիտակցեն հետևյալը.

- «Մարդկությունը հոգեպես աճում է, մեծանում է դեպի վեհն ու հազվագյուտն ունեցած իր հիացումի շնորհիվ միայն» (Նիցշե):

Թող մեր ցեղի հերոսականով ու մարտիրոսագրությամբ հաճախ հիացմունքի ժամեր տան իրենց ընթերցողներին:

Թող մտքով իրենց ընթերցողին հաճախ տեղափոխեն Երկիր, թող այցի տանեն նրան պատմական այն բոլոր վայրերին, որոնց հետ կապված է հայ ժողովրդի հմայքն ու փառքը: Թող ուխտի տանեն նրան այն նվիրական գերեզմաններին՝ մեր մեծ մեռելների հողաթմբերին, որոնք ավելի դաստիարակիչ են, քան մեր այսօրվա դպրոցը, բեմը, եկեղեցին:

«Մեծ սիրտ և ազնիվ զգացումներ» - ահա՛ թե ինչը ուժեղ կդարձնի մեր ժողովուրդը և ահա՛ թե ինչ պիտի տա մեր ժողովրդին հայ մամուլը:

Կարո՞ղ են այդ անել մեր թերթերը - հուսալի է մեր ապագան:

Չե՞ն կարող - թող դադարեն թուղթ սևացնելուց:

Ավելի պիտի հիանալ այն խմբագիրների լռությամբ, որոնք չեն ուզում միայն աղմուկ և «փոշի» բարձրացնել:

VI
ԿՈՒՍԱԿՑԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ

Կուսակցամոլը - դա թշնամին է իր ժողովրդի,
բարեկամը՝ իր ժողովրդի թշնամիների:

Չկա ավելի մեծ չարիք, ավելի մեծ աղետ ժողովրդի համար - մասնավորապես մեզ նման փոքրիկ ժողովրդի համար-քան կույր կու-

սակցամոլությունը: Այդ տարամերժ ոգիի համար չկան բացարձակ ճշմարտություններ, նրա համար չկա հասարակական շահ, պետական բարոյական: Նրա համար օտար է այն ամենը, ինչ որ իր կուսակցության կնիքը չի կրում: Ինչ որ իր կուսակցության ծնունդը չէ - անընդունելի է և անհանդուրժելի: Ծափահարելի է միայն այն, ինչ որ բխում է իր կուսակցությունից: Կուսակցականորեն կույր այդ դժբախտ արարածի համար երկու անգամ երկու հավասար է ամեն ինչի, միայն ոչ չորսի:

Նմանը և տեսնում է և չի տեսնում, և հասկանում է և չի հասկանում:

Սևամորթին ավելի հեշտ է ճերմակացնել, քան սրան ընդունել տալ ամենապարզ ճշմարտությունը, օրինակ՝ համոզել թե ամբողջությունը մեծ է, շատ է իր մի մասից:

Կուսակցամոլության չար ոգին աստիճանաբար մթագնում է սրանց բանականությունը, կլանում խիղճը, և, վերջ ի վերջո, իսպառ սպանելով այդ դժբախտի բարոյական կա-ողությունները, դարձնում է սրան բարոյական ապուշ:

Քաղաքական ստախոսություն, հայհոյանք, կեղծիք, բանսարկություն, դավեր - ահա՛ սրա «կուսակցաշեն գործունեությունը»:

Նա թունավորիչն է ազգային կյանքի: Նա թշնամանք, ատելություն, անհամբերություն է սերմանում միևնույն ժո-ղովրդին պատկանող անհատների և խմբակցությունների միջև:

Նա ստեղծում է ներքին ճակատներ, ջլատում ժողո-վրդի ուժերը: Նա հասարակության թշնամին է, բարեկամը իր ժողովրդի թշնամիների: Դա անեծքն է մեր կյանքի: Կուսակցամոլության թունալի ախտով բռնված ժողովրդի ներկան տխուր է, ապագան՝ անհուսալի:

Այդ ախտով հիվանդ ժողովուրդը միշտ էլ ներքուստ պառակտված է, միշտ էլ պատրաստի որս իր գիշատիչ հարևանների համար:

Կուսակցամոլություն, կուսակցական եսականություն, անհամբերություն - այս զզվելի ախտերը հետևանք են երկու բանի. առաջինը՝ հոգեկան աղքատ կուլտուրայի, երկրորդը՝ ազգային և հասարակական զգացումների տհասության:

Հոգեպես անառողջ է կուսակցամոլը: Ամեն ինչ կուսակցությանս համար - ահա՛ սրա հասարակական բարոյականը:

«Պետությունը՝ դա ես եմ»,-ահա՛ նրա պետական բարոյականը:

Սրա կուսակցական «զարգացումը», ասացինք, վերջ ի վերջո պսակվում է բարոյական ապշությամբ. տխո՜ւր վախճան, որին դեռ ձգտում են հազարավորները, որը, ի դժբախտություն հայ ժողովրդի, մեր որոշ կուսակցությունների կողմից դեռ համարվում է քաղաքական առաքինություն:

VII
ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ՄԵԾ ՄԵՌԵԼՆԵՐԻ

«Հիշե զանունք, որ գերեզմանին մեջ
ննջելու սուրն իրենց գլխուն ներքևը դրին:
Քաջաց բարձն է սուրը»:

Նահատակնե՜րը...

Այդ մեծ մեռելները ամենից քիչ իրենց և իրենց կուսակցության կպատկանեն, ամբողջն՝ իրենց ցեղին և պատ-մության:

Իրենց ընտրած ճանապարհի բերմամբ նրանք կ'աշխատեն ու կզոհաբերեն այս կամ այն կուսակցության դրոշի տակ, նահատակվելով՝ նրանք, կազգայնանան, կդառնան սրբազան սեփականությունը ողջ ազգի:

Չկան կուսակցական նահատակներ ու հերոսներ, կա ու կմնա ազգային մարտիրոսագրությունը և հերոսականը:

Սակայն այդպե՞ս է հասկացել մեր ժողովուրդը. ո՛չ, դժբախտաբար:

Հետևանքը: Մեր նկուն և ողբալի վիճակը:

Պատճառը: Կույր և բարբարոս կուսակցամոլությունը - մի զարհուրելի ախտ, որ պիտի թուլանա, որ ուժեղանանք ազգովին:

Այդ ուղղությամբ պիտի աշխատեն դպրոցը, մամուլը և ի՛նքը՝ ժողովուրդը:

* * *

- Իր ընտիր մեռելների պաշտամունքը չունեցող ժողովուրդը՝ ապերախտ ու բարբարոս, անարժան է անկախ հայրենիքի, որը միշտ էլ նահատակների սրբազան աճյունից կբարձրանա:

- Մի ժողովուրդ բարոյապես այնքան է ուժեղ, որքան ջերմ է նրա պաշտամունքը դեպի իր մեծ մեռելները:

- Իր նահատակների, իր անմահների դեմ մեղանչող ժողովուրդը մեծապես մեղանչում է իր ապագայի դեմ:

- Կրոններն այլ բան չեն, բայց եթե պաշտամունք մեծ մեռելների:

Անկրոն է դեպի իր նահատակներն անտարբեր ժողովուրդը, ասել է՝ և անհոգի, դատապարտված բարոյական փտության:

- Մի ժողովրդի հզորագույն զինակիցները պատերազմի ժամանակ նախ և առաջ իր մեծ մեռելներն են:

- Խեղճ է այն ժողովուրդն, որն իր պայքարի և խոյանքների ժամանակ չի զգում, թե իրեն աներևութաբար զորավիգում են իր մեծ մեռելները:

Չափվում են բանակները, ժողովուրդները, հաղթում՝ մեռելները:

- Իր անմահներից չօգտվող, ասել է՝ սրանց պաշտամունքը չունեցող ժողովրդի բովանդակ ուժը իր թվի, իր քանակի մեջ է միայն:

Յոթնիցս վա՜յ նման ժողովուրդին՝ անփառունակ մահ ու մոռացում - ահա՛ նրա փայն ու բաժինը աշխարհից:

VIII
ԴԱՍՏԻԱՐԱԿԻՉ ՏՈՆԵՐ

«Ամենափառավորը տեսարաններից - դա ժողովն է մի ժողովրդի»:

Իմ օտարազգի բարեկամներից մեկը մի օր հարցնում էր ինձ. «Մի՞թե հայերդ ազգային որևէ տոն չունեք: Հրեաների խանութները կարելի է հաճախ փակ տեսնել, իսկ հայերինը միշտ էլ բաց են»:

Նույն զարմանքը կարող է հայտնել և հույն, և ռոման և եվրոպացի մտավորականը:

Մեր ազգային տոները շարունակում են մնալ մեր Եկեղեցու սեփականությունը:

Հայ ժողովրդի նյութականապես ապահով և նյութականացած մասը իրեն ազգայնորեն և մարդկորեն պարտական չի զգում հարգելու իր ազգային տոները:

Այդ նվիրական օրերին հանդիսատեղիներում կարելի է տեսնել մեր ժողովրդի խոնարհ տարրերին միայն, իսկ նյութականացած բարեկեցիկը, հարուստը- չնչին բացառությունով - չի երևա այդ օրերին: Նա միջոցներ ունի, օտար երկնքի տակ ապրելու լայն հնարավորություն ունի նա:

Նրան պետք չէ հայրենասիրությունը: Կա՞ հայրենիք - լա՛վ, չկա՞ - ոչի՛նչ, առանց նրան էլ կարելի է ապրել:

* * *

Իսկ հայ կապիտալիստնե՞րը. արժե խոսել սրանց մասին: Չէ՞ որ սրանք ազգ չունեն, հայրենիք չեն ճանաչում: Չէ՞ որ սրանց սրբազան հայրենիքը շահաշատ շուկան և մեծածախս հաճոյավայրերն են: Սրանք դուրս են ապրում ազգերից ու մարդկությունից: Պարտականություններ չունեն սրանք: Մարդ չեն սրանք:

Ա՜հ, այդ «վատ սրտի ու լավ ստամոքսի» տերերը. իրենց նյութական բավականությունների համար միայն ապրող մարդատիպ անասուններ, որոնք օտարի համար աշխատող ազնիվ անասունի արժեքն իսկ չունեն: Տմա՛րդ արարածներ, որոնց մասին ասել է մի գրող. «Ձա՛րկ կրծքին, դատարկ ծայն կտա»:

* * *

«Կա մի կարգադրություն,- ասում է հռչակավոր Ռոբեսպիերը - որը պետք է համարել որպես էական մասը ընդհանուր դաստիարակության»: Խոսքս ժողովրդական տոների մասին է: Հավաքե՛ք մարդկանց և դուք նրանց կդարձնեք ավելի բարի: Հավաքված մարդիկ պիտի աշխատեն հաճոյանալ իրար, իսկ հաճոյանալ կարող են միայն գործերով, որոնք նրանց դարձնում են հարգանքի արժանի: Տվե՛ք նրանց միության մի ուժեղ մղում - բարոյական, քաղաքական - և սերը դեպի ազնիվ գործերը, բավականության հետ, կթափանցեն նրանց սրտերի մեջ... Ամենափառավորը տեսարաններից՝ դա ժողովն է մի մեծ ժողովրդի:

Տոները անկասկած կլինեն միաժամանակ և ամենահաճելի կապը եղբայրության և ամենաուժեղ միջոցը վերածնության:

Ունեցե՛ք ընդհանուր տոներ հանրապետության համար:

Ունեցե՛ք մասնավոր տոներ ամեն տեղի համար, որոնք պիտի վերականգնեն այն, ինչ որ եղել են, կործանել անցքերը:

Թող բոլորը ճգնեն արծարծել ազնիվ զգացումներ - հրապույրն ու զարդը մարդկային կյանքի-ազատասիրական ոգևորություն, հայրենասիրություն»...

IX
ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինքնապաշտպանություն - դա միակն է արվեստներից, որի թերությունները գրչի, վրձինի, մուրճի փոխարեն սրբագրում է թշնամու արնոտ սուրը:

Ինքն իրեն հարգող ժողովուրդը իր ինքնապաշտպանության հույսը դնում է նախ ի՛ր բազուկի, ի՛ր զենքի վրա:

Իր ուժերից զատ ամեն ինչի ապավինող ժողովուրդն արժանի չէ անկախ հայրենիք ունենալու, ազատ ապրելու:

Ահա՛ թե ինչու անկախության բարիքներից լիուլի օգտվելու իրավունքը ձեռք բերելու համար ժողովուրդները նախ հրամայողաբար ձեռք են բերում ինքնապաշտպանության բարդ արվեստը, որը պահանջում է լինել ուժեղ, էլի՛ ուժեղ և մի՛շտ ուժեղ:

Եղի՛ր այնքան ուժեղ, խրատում է պատմությունը, որ թշնամիդ չհանդգնի հարձակվելու:

Զգացնել տուր թշնամուդ, որ ամեն վայրկյան պատրաստ ես պատերազմելու, և նա կհրաժարվի զենքի ուժով քեզ անհանգստացնելու մտքից - ահա՛ սկիզբն ու վախճանը քաղաքական իմաստության:

Ինքնապաշտպանություն - դա միակն է արվեստներից, որի թերությունները գրչի, վրձինի, մուրճի փոխարեն սրբագրում է թշնամու արնոտ սուրը:

Ապահով չէ այն ժողովուրդը, որը կատարելապես չի տիրապետում այդ արվեստին:

«Մի զինվոր սպանում է Արքիմեդին»:

Ոչինչ չարժե բազմարվեստ ժողովուրդը, եթե նա անվարժ է, թույլ է այդ արվեստի մեջ:

Տխուր ապացույց ասածներիս - արևմտահայության մի մասի կրավորական ոչնչացումը:

Մի ժողովրդի՝ անկախ կյանքի բարիքներից հարատևորեն օգտվելու համար անհրաժեշտ է երկու բան, առաջինը՝ ինքնահարգանք, երկրորդը՝ ռազմունակություն:

* * *

Մեր պատմության մեջ մի բան միշտ էլ ինձ ցավով և ամոթով է լցրել: Դա մեր ժողովրդի մի մասի կրավորական նահատակությունն է: Հարյուր հազարավորները հեզաբար առաջնորդվել են դեպի ձորերն ու ծովափերը՝ ոչնչացվելու:

Արգահատելի է կրավորաբար նահատակվող ժողո-վուրդը: Նա տուժում է և բարոյապես: Նա իր նկատմամբ առաջացնում է արգահատանք և ոչ հարգանք: Նրա համար գուցեև ցավեն, բայց նրան չեն զինակցի: Թույլերը զինակից չեն ունենում: Անբարեկամ են մնում այն ժողովուրդները, որոնց մեջ մեծ թիվ են կազմում անհայրենասերները, անմարտունակները, անարիները - տարրեր, որոնց վտանգի ժամանակ միշտ էլ վիճակվում է աճեցնելու կրավորական զոհերի թիվը:

* * *

Մի ժողովրդի բարոյա-քաղաքական արժեքը մատնում է նրա ինքնապաշտպանությունը:

Նա այն է, ինչ որ են իր որդիները՝ կռվում, կռվադաշտում: Նրա մարտիկները գիտե՞ն հեգնել մահը - նա ուժեղ է և արժանի հարգանքի:

Նա կարող է ժամանակավորապես պարտվել, տեղի տալ, բայց չի կորչի: Նրա բարեկամությունը կփնտրեն բոլորը, նրան կզինակցեն բոլորը:

Անփառունա՞կ է նրա մարտիկների մահը - նա թույլ է, հարգանք չներշնչող, անբարեկամ, անզինակից և հաճախ՝ ողբերգորեն մենակ: Արիությունը, կայլայլի անմահ արտահայտությամբ, եղել և շարունակում է մնալ որպես «հավիտենական պարտականություն»: Այս բարձր հատկությունն է փրկում ազգերը ֆիզիկական և բարոյական անկումից: Արիությունը - դա այն արժեքն է, որով ժողովուրդները գնում են իրենց

անկախությունը: Ազատ և անկախ հայրենիք ունենալու, ազատ և անկախ ապրելու իրավունքն է արիությունը:

* * *

Ամեն մի կռվից հետո պարզվում է հետևյալը. սպանված՝ այսքան, վիրավոր՝ այսքան, անհայտ կորած՝ այսքան:

Անհայտ կորածները - դա վատասիրտ դասալիքներն են, թշնամու բարեկամները: Տարբերությունը սրանց և կրավորական զոհերի միջև այն է, որ սրանք մեռնում են միայն բարոյապես:

Ողբալի է այն ժողովուրդը, որն իր ինքնապաշտպանության կռիվներում կրավորաբար մեռածների - ֆիզիկապես, թե բարոյապես մեծ թիվ է տալիս:

Խղճալի՛ է նման ժողովուրդը, որի մեջ «անհայտ կորածները» վտանգի ժամանակ լեգեոն են կազմում:

Նման ժողովրդի ամեն մի պարտությունը դառնում է նրա Վատերլոն, նրա վերջնական պարտությունը:

Դա կարող է մի օր անհայտանալ, կորչել, տալով իր տեղը զորավորին, ռազմունակին, արիին:

* * *

Եթե քա՛ջ ես, ժողովո՛ւրդ, քեզ հետ են անգամ քո երկրին դեմ պատերազմական գործողություններ սկսած թշնամիներդ, քեզ հետ է նրանց համակրանքը: Ահա՛ ուժն ու արժեքը արիության, քաջության: Եթե քաջանուն ես, ժողո-վո՛ւրդ, քեզ հետ են շատերը, քեզ հետ են բոլորը:

«Մի օր մեզ պետք կգա»,- մտածում են քաջ ժողովրդի հարևանները և խախտելով իրենց չեզոքությունը, նետվում են կռվադաշտ նրա համար և նրա հետ կողք-կողքի կռվելու թշնամու դեմ:

Չքանալու դատապարտված անարի ժողովրդի հետ ոչ ոք չի կապում իր ճակատագիրը: Ոչ ոք թույլերի անխուսափելի պարտությունը բաժանելու հիմարությունը չունի: Ոչ ոք իր զենքի պատիվը վտանգի չի դնում մարդասիրաբար:

Ժողովուրդները և սրանց կառավարությունները մարդասեր չեն և չեն լինում: Եվ ոչ ոք իրավունք չունի պահանջելու սրանից՝ մեռնել մեռնողի հետ:

Ահա՛ թե ինչու ժողովուրդներն անկախ ապրելու համար պարտադրորեն նախ ցույց են տալիս, որ իրենց մեջ երկաթ կա, որ իրենց որդիները արիաբար մեռնել գիտեն, որ կրավորական զոհերը՝ գերեզմանում, իսկ դասալիքները՝ իրենց երկրում տեղ չունեն:

Աշխարհը ճանապարհ է տալիս ուժեղներին, որոնց առաջ խոչերն ու խոչընդոտները վերածվում են մարմարիոնե սանդուխքների դեպի առաջ ու վերև, դեպի հուսալի ապագան:

Լինենք ուժե՛ղ:

X
ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարի հանճարը բխում է իր հոգու վեհությունից:

Ասել ենք, թե ժողովուրդները իրենք են դարբինը իրենց ճակատագրի: Ավելի ճիշտ պիտի լիներ, եթե ասեինք - մի ժողովրդի ճակատագրի դարբինը նրա մտավորականությունն է:

Հանձին իրենց ժողովուրդների, իրապես չափվում են - սկզբունքային թե ռազմական բախումների ժամանակ - մտավորականությունները, ժողովուրդների ղեկավար տարրերը:

Միևնույն ժողովուրդը, բանակը՝ նայած իր ղեկավարներին, կարող է և հրաշագործություններ կատարել, և խայտառակորեն ծունկի գալ հակառակորդի առաջ:

Ուզում եմ ասել, թե մի բանակ, մի ժողովուրդ հոգեբանորեն այն է միայն, ինչ որ նրա հավաքական հոգու մեջ դրել են նրա ղեկավարները - դա այն է, ինչ որ իր ղեկա-վարներն են:

* * *

Ո՞վ է, սակայն, կատարյալ ղեկավարը:

Ո՛չ անշուշտ բոլոր սպաները, բոլոր «մեծերը», որոնք բանակի հետ շարժվում են դեպի կռվադաշտ:

Շատերը սպաներից այլ բան չեն, քան մի զույգ ուսադիր, մի աստիճան, մի տիտղոս: Իսկական առաջնորդը շատ անգամ չի նշանակվում, նա երևան է գալիս, երբ նրա կարիքն է զգացվում, նա հայտնվում է վտանգի ժամանակ:

Մեկը կարող է աստիճանով զորավար լինել, բայց ոչ՝ և առաջնորդ: Մի ուրիշը, կրելով պարզ հարյուրապետի ուսադիրները, կարող է կատարյալ առաջնորդ լինել:

Եթե չեն ծնվում, ապա՛ դառնո՛ւմ են առաջնորդներ:

* * *

Նա հաճախ սրտի և գործողության մարդ է, քան մտքի:

Դա՝ հակառակ նրանց, որոնք հաճախ լավագույն բանակները վերածում են հոտերի, գիտի հոտերը վերածել լավ բանակների:

Նա՝ առյուծների խումբը ղեկավարելու նշանակված ոչխարը թե, այլ՝ ոչխարների հոտը կառավարող առյուծը:

Նրա համար զինվորը, մարդը այն չէ, որ տեսնում ենք, մարմինը, թե մարդ նրա համար, այլ այն, որ կարող է լինել, այն որ ընդունակ է լինելու մարդը, այն, ինչ որ ինքն է ուզում, որ լինի իր զինվորը, իր առաջնորդության հանձնված մարդը:

Նրա համար երեք բարձր ճշմարտություններ ունի ժողովրդական ինքնապաշտպանությունը - հոգեբանականը՝ պետք է լինել արի, բարոյականը՝ պետք լինել անձնազոհ, քաղաքականը՝ պետք է լինել ինքնահարգ:

Ահա՛ թե ինչու կատարյալ առաջնորդը նախ հոգեբանորեն վերստեղծում է իր բանակը, տալով նրան իր հոգին:

Դա՝ ասել է միաժամանակ և դաստիարակ:

* * *

Եվ հոգեբան է նա:

Նա իր բանակի հոգու մոգական բանալին ունի: Նա գիտի, որ հավատ ներշնչել զինվորին, կնշանակի տասնապատկել նրա ուժերը:

Քիչ անգամ է նա դիմում զինվորների բանականության, բայց միշտ էլ՝ սրտին: Նա սիրտ է դնում իր ամեն մի խոսքի մեջ, ահա՛ թե ինչո՛վ եթե կտրեք նրա խոսքերը՝ նրանցից արյուն կկաթի: Նա գիտի, որ կռվի ժամանակ զինվորը ավելի բարոյական մենակությունից է վախենում, քան մահից, ահա՛ թե ինչո՛վ նա երևում է ամեն տեղ, հասնում ամենին, որպեսզի ոչ ոք - զինվոր, թե ղեկավար - իրեն մենակ չզգա, որ անխաթար պահի զորքերի ներքին բարոյական կապը, որ ամեն մեկին զգացնել տա, թե իր հետ է ամբողջ բանակը, ազգը, ցեղը և ի՛նքը՝ հաջողության Աստվածը: Նա գիտի և հետևյալը.

- Զինվորի համար կռվի ժամանակ դրոշակը, ազգը, հայրենի երկիրը և սրա սրբությունները խորհրդանշողը՝ դա իր առաջնորդն է. ահա՛ թե ինչո՛վ կատարյալ առաջնորդը միշտ էլ իր զորքերի հետ է, նրանց կողքին և նրանցից առաջ:

* * *

Թշնամիները - դեռ մարզադաշտում ու զորանոցում նա ներշնչում է իր զորքին - թշնամիները նման են շների, որքան որ վախեցար, այնքան կհարձակվեն:

Այսքան արհամարհոտ է նրա խոսքը:

Ո՞վ ասաց, որ միայն մենք, որ միայն մեր ազգն իրա-վունք չունի ապրելու. հառա՜ջ, ցույց տանք, որ ապրելու իրավունք և արժանիք ունենք,- այսպե՛ս է նրա խոսքը կռվադաշտում:

Ամեն մի կռվի վրա նա նայում է որպես «դրոշամարտ»ի վրա, որպես դրոշի համար մղվող կռվի, և լարում իր և իր բանակի բովանդակ կարողությունները:

Ամեն մի արնոտ բախում նրա համար մի նոր քննություն է, ուր իր ժողովուրդը մի ավելորդ անգամ ևս պիտի ապացուցի՝ թե արևի տակ տեղն իր ունենալու իրավունքն ունի:

* * *

Նա ասում է.

- Իր հողի վրա պարտվելը կրկնակի և աններելի պարտություն է: Իր երկրի սահմաններում պարտվող ժողո-վուրդն իրավունք չունի խոսելու անկախ հայրենիքի մասին:

Իր հողի վրա կռվող, ինքնապաշտպանվող ժողովուրդի հետ են իր մեծ մեռելները - մի ուժ, որի առաջ անզոր են բոլոր տեսակի ուժերը:

Նրա հետ է իր երկրի արևը, որի առաջ թշնամին «ձյունե մեծություն է միայն»:

Նրա սիրտը լցնում է իր դաշտերի շունչը, իր լեռների սեգությունը:

Նրան օրհնում է հայրենի երկինքը:

Հաղթությո՜ւն - աղոթում են կանայք ու կույսերը նրա համար:

Հաղթությո՜ւն - երգում են մանուկները:

Հաղթությո՜ւն - ողողանջում են զանգերը:

Բոլորը և ամեն ինչ կանչում է, ասում՝ «Քեզ հետ ենք, հառա՜ջ»: Ամեն ինչ և բոլորը կանչում և հրամայում են նրան՝ «Հաղթի՜ր մեզ համար»:

Եվ հաղթում է նա:

Այսպես, և գաղափարապաշտ է կատարյալ ղեկա-վարը:

* * *

Նա իր առաջնորդն ունի, որը, սակայն, ոչ աստիճանով իրենից բարձր զինվորական է և ոչ էլ երկրի իշխանությունը:

Աներևույթ է, բարոյական է նրան առաջնորդող ուժը:

Կառավարություն, բարձր հրամանատարություն, ձևական օրենք - այդ բոլորը շատ քիչ բան կարող են տալ նրան: Դիմադրություն - հնարավորության սահմաններում հաղթություն - եթե ձեզ տրված են նյութական գերադաս ուժեր: Այսքան համեստ են ձևական իշխանության և օրենքի պահանջները:

Կա ավելին:

Կառավարությունը, բարձր իշխանությունը, օրենսդիրը կարդարացնեն ձեր պարտությունը, եթե կարողացաք ձևականորեն արդարացնել ձեր հանցավոր քայլը:

Չէ՞ որ միշտ էլ «երկու բերանով» կարելի է «ապացուցել», որ պարտության օրը հացը ժամանակին չհասավ, թշնամին թվական գերազանցություն ուներ, մեր նահանջի ճանապարհը վտանգվելու վրա էր, և այլն.:

Եվ հասկանալի է դա:

Կառավարություն, բարձր հրամանատարություն, դատավորներ - սովորական մարդիկ են սրանք, որոնք վաղը միևնույն դրության մեջ կարող են ընկնել և իրենք:

Ահա՛ թե ինչո՛վ սրանցով և սրանց հրահանգներով առաջնորդվող ռազմավարը, եթե գերադաս ուժեր չունի, կարող է երբեմն դիպվածով մասնակի հաջողություն ունենալ, սակայն երբեք բախտ չի ունենա հաղորդագրելու ռազմադաշտերից՝ «Եկա, տեսա, հաղթեցի»:

Ահա՛ և, թե ինչո՛վ կատարյալ ղեկավարը երկրի ձևական իշխանությունից զատ միշտ էլ ունի նաև մի այլ իշխանություն-իր ժողովրդի մեծ մեռելների բարոյական իշխանությունը, որը հարյուրապատկելով նրա ուժերը, հարյուրապատիկ պահանջկոտ է և աններող:

* * *

Նրա համար միշտ էլ ճիշտ է հետևյալը. մի բանակ, որն իր մեջ հաղթել է մահվան վախը՝ անպարտելի է և ամենակարող:

Նա գիտի այդ ճշմարտությունը, ասել է՝ գիտի և հաղթելու գաղտնիքը:

Թշնամուց ավելի վտանգավոր է համարում իր բանակի շարքերում եղած վախկոտներին:

Վախը - դա միայն «սրտի հիմարություն», կամ «ջղերի խաղ» չէ: Դա անինքնակարողությունն է, անվստահություն դեպի իր և իր բանակի կարողությունները, դա հակառակորդի գերազանցության սպանիչ գիտակցությունն է:

Ահա՛ թե ինչո՛վ վախկոտի համար միշտ էլ ուժեղ է թշնամին, անգամ այն ժամանակ, երբ իր դեմ կռվողը իրենից թույլ է բոլոր տեսակետներից:

Վախկոտներն են արիացնում, ուժեղացնում թշնամուն: Սրանք են հեշտացնում թշնամու գործը: Սրանց երեսից են կորչում հայրենիքները:

Սրանք են իրական թշնամին:

Կռի՜վ նախ սրա՛նց դեմ:

Այսպես է հասկանում նա բանակի հոգեբանությունը:

* * *

Նա գիտի, որ չկա զինվոր, անգամ ամենաանարին, որն ընդունակ չլիներ կարող առաջնորդի ազդեցության տակ հերոսին վայել գործեր կատարելու:

Նա գիտի, որ չկա մարդ, որ ընդունակ չլիներ հոգեկան խոր հուզումների, խանդավառության, ինքնամոռացության - հոգեկան վիճակներ, երբ մարդու մեջ մեռնելու աստիճան թուլանում է կենդանական բնազդն ու վախը:

Եվ որովհետև համոզելու, ցնցելու, ներշնչելու արվեստն ունի, ահա, օրեր անց, նրա բանակը ծփում է վտանգն արհամարհող, մահն անգիտացող ռազմաշունչ տրամադրությամբ:

Նա հաղթել է այլևս, հաղթել իր բանակի անինքնակարողությանը, վախին:

Այժմ կարող է երևալ թշնամին՝ նա պատրաստ է:

* * *

Նա ռազմարվեստագետ է, և ոչ զինվորական արհեստավոր:

Նրա համար կռիվը արվեստագիտական ստեղծագործություն է և ոչ արհեստ: Իր ռազմավարությունը նա մշակում է պատերազմի էության մասին իր ըմբռնումի և իր երկրի տեղագրական պայմանների համաձայն: Եվ ոչ մի «զմռսված կանոն» ու ոչ մի մեռյալ շաբլոն: Վճռականություն և տարերայնություն - ահա՛ նրա ծարավ կռիվը: Գայլը խեղդել բնի մեջ - երբ հարձակվում է: Որևե համառ կետի վրա ուժաթափել թշնամուն և ապա անցնել հարձակողականի - ահա՛ նրա պաշտպանողականը: Ոչինչ չի անհանգստացնում նրան իր երկրում:

Ցո՞ւրտ է, ավելի լավ, թո՞ւյլ է թշնամին - հարձակվի՛ր: Անծրևո՞ւմ է, ավելի լավ, թո՞ւյլ է թշնամին - առաջացի՛ր: Բո՞ւք է, մառախո՞ւղ - ուրախացի՛ր որպես գայլը, և առա՞ջ: Իսկ երբ իջավ յոթնիցս օրհնված գիշերը - ցնծա՞, դու արդեն հաղթել ես: Դու չես կարող չհաղթել, որովհետև կռիվը տարվում է քո նվիրական հողի վրա, քո երկրի սահմաններում, ուր ամեն ինչ քեզ հետ է, ուր ամեն ոք և ամեն ինչ կանչում են՝ «քեզ հե՛տ ենք, առա՞ջ»:

* * *

Վերջապես, նա ընկերն է իր զինվորի: Զորքը եթե ոչ առաջին, ամենաուշը երկրորդ օրը բնազդաբար ճանաչում է իր առաջնորդներին: Նա շատ շուտ է տարբերում «մեծ»-ը «փքված»-ից: Նա հարգում է գիտակցական կարգապահությունը, բայց չի սիրում պաղ և անհոգի պաշտոնականությունը: Նա ուզում է, որ իր առաջնորդը լինի ավելի սրտի մարդ, և, ամենագլխավորը, նաև զինվոր: Եվ այդպիսին է կատարյալ առաջնորդը. նրան պաշտում են, բայց չեն վախենում նրանից և պիտի չվախենան:

Անբարոյացուցիչ է վախը: Կեղծ է այն ամենը, որ հիմնված է վախի վրա - կրոն, բարոյականություն, կարգապահություն, և այլն:

Նա «ներքին պահակն է» իր բանակի, նրա կենդանի խիղճը՝ միշտ արթուն ու հսկող:

Երևաց նա և ահա բոլորը թափվեցին նրա շուրջը - և այլևս ոչ ոք չի հոգնած, սոված, դառնացած: Կառավարելու մի հատիկ միջոց ունի նա՝ խոսքը՝ խիստ, բայց ընկերական, խոսքը՝ երբեմն որպես սանձ և միշտ էլ որպես խթան: Նա կառավարում է անձամբ, արհամարհելով ճանապարհը մատով ցույց տվող ղեկավարներին: Ներշնչված պատմությունից, նա իր զինվորներին և ղեկավար տարրերին փոխանցում է

իր ապրումներն ու գաղափարները: Խիստ է, բայց ոչ կոպիտ: Հպարտ է, բայց ոչ փառասեր: Պարզ է, չարքաշ, անշահասեր: Հաննիբալին հաղթող, Հռոմի կոնսուլներից հանիրավի աքսորված Սքարպիոնը՝ թե նա, որ մեռնելով աղքատության մեջ, կտակում է գրել իր գերեզմանաքարին վրա՝ «Ապերա՞խտ հայրենիք, դու տեր պիտի չլինես իմ ոսկորներին»:

Նա Հելլադայի մեծ ռազմավարներից Ֆոկիոնն է, որը, հանիրավի մահվան դատապարտված, թույնը խմելուց առաջ ասում է որդուն. «Հանձնարարում եմ քեզ ծառայել հայրենիքիդ սրտանց և հավատարմորեն, և, ամենագլխավորը՝ մոռանալ, որ իմ ծառայության համար նա ինձ վարձատրեց մահվամբ»:

Այսպես է կատարյալ ղեկավարը: Նա միաժամանակ և դաստիարակն է, և ռազմարվեստագետը, և կախարդը, և ընկերը - նա Աստվածն է իր բանակին:

XI
ԲԱՐՈՅԱՇՈՒՆՉ ՄԹՆՈԼՈՐՏ

Ազգերին, որպես իրենց ստվերը,
հետևում է իրենց արժանի բախտը:

Իր ճակատագրի դարբինն է ամեն մի ժողովուրդ: Վաղ թե ուշ, նա դառնում է այն, ինչ որ ուզում է լինել այսօր:

Այսօրվա նրա իդեալը-դա միաժամանակ և մարգարեացումն է, և խոստումն այն բանի, ինչ որ վերջ ի վերջո պիտի դառնա նա:

Անհատ, խմբակցություն, ժողովուրդ-հոգեբանորեն այլ բան չեն այդ բոլորը, քան իրենց իդեալի ստեղծագործությունը:

Մարդկային բոլոր ցեղերը բոլոր ժամանակներում ունեցել են մի որոշ իդեալ - որպես մի յուրատեսակ ոգի, որը, իմաստ և վեհություն հաղորդելով նրանց կյանքին՝, փրկել է նրանց բարոյական փտությունից:

* * *

Չկա՛ ավելի զարհուրելի բան, քան աննպատակ գոյությունը:

Հանցանք է դա, մահացու հանցանք:

Նպատակն է թելադրում գերագույն պարտականություններ. նա պահանջում է ճիգեր ու զոհողություններ, որոնց մեջ կոփվում են անհատի և ժողովրդի լավագույն առաքինությունները, որոնց կատարողը, Աքիլլեսի նիզակի նման, բուժում է իր հասցրած վերքերը:

Նպատակն է բարոյապես շարժում անհատներն ու ժողովուրդները: Նա փրկում է մահացու ճահճացումից և բարոյական անկումից:

Անհատի և ազգի գոյության արևն է նպատակը: Նա լուսավորում է և ջերմացնում մեր անցնելիք ճանապարհը: Նա համախմբում է մեր ուժերը, լարում մեր կամքերը, և անդիմադրելիորեն քաշում մեզ դեպի իրեն՝ դեպի հաղթանակ:

Դժվարին, բայց թագավորական է իդեալի ճանապարհը: Նրա ծայրին՝ դեպ իդեալի հեղեղ առաջացող ժողովրդին թագն է սպասում: Նրա ճանապարհով անցնողը դառնում է թագավոր-ժողովուրդ:

* * *

Գերագույն նպատակ ունի և մեր ժողովուրդը՝ միացյալ և անկախ հայրենիք:

Բայց շնորհիվ տիրող հասկացությունների, տեսակետների, ձգտումների քաոսի և սրա առաջացրած առօրյական աննպաստ հոգեբանության, նրա մի մասի մեջ սկսել է գունատվել այդ նպատակը: Նրա մեջ թուլանալ է սկսել ձգտումը դեպի նպատակը: Եվ նա, որ գոյության կռվում չկորչելու համար հրամայողաբար պիտի լիներ անխորտակելի ժայռ, իր աննպատակ գոյությամբ պիտի դառնա փոշե բլուր:

* * *

Խոզերն ու նյութապաշտները չեն սիրում կտրել իրենց հայացքը ցեխից:

Մենք, որ նյութակրոն խոզության մեջ անհատի և ժողովրդի բարոյական անձնասպանություն ենք տեսնում, ավելի հաճախ նայենք վերև և հեռուն:

Մարքսից գերադասենք Կարլը, Հեգելից՝ Էմերսոնը:

Լինե՛նք գաղափարապաշտ:

Նյութապաշտության առջևից ընթանում է զզվելի ֆիլիստերականությունը, իսկ այդ վերջինը նախապատրաստում է բարոյական անկումը անհատի, ազգի:

* * *

Փրկարար դեր պիտի կատարեին մեր թերթերն ու գրողները, եթե իրենց ընթերցողներին հաճախ հնարավորություն ընձեռնեին, մոռացության տալու անփառունակ և տխուր ներկան և ապրելու անցյալի փառքերով ու ապագայի հույսերով:

Հոգեպես մանրանում և ճահճանում են միայն ներկայով կլանված հասարակությունները: Կես կյանքով են ապրում այն ժողովուրդները, որոնք - հեռու անցյալի և ապագայի ազդեցություններից-իրենց կյանքին չեն խառնում իրենց անցյալի փառքերն ու ապագայի հույսերը: Այդպիսիները վտանգում են իրենց ապագան, փորում իրենց սեփական գերեզմանը:

* * *

Կա բարոյական մթնոլորտը, ուր, ինչպես և մեզ շրջապատող մթնոլորտում, տեղի են ունենում մակընթացություններ ու տեղատվություններ մտքերի, գաղափարների, զգացումների, որոնք շնչում է մարդս, յուրացնում և փոխանցում իր նմաններին:

Վսեմ ու ազնիվ գաղափարներով լցնենք այդ մթնոլորտը, գաղափարներ, որոնք սրբեին, մաքրեին մեր կյանքը, արի և առաքինի դարձնեին մեզ, մեծ և փառահեղ գործերի մղեին մեզ:

Գաղափարներ, որոնք հակաթույն լինեին բոլոր տեսակի անբարոյացուցիչ և քայքայեցուցիչ ազդեցությունների դեմ:

Գաղափարներ, որոնք փրկել ու փրկում են անհատներն ու ժողովուրդները բարոյական նեխությունից:

XII
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

«Տվե՛ք ինձ դաստիարակությունը և ես փոխեմ եվրոպացու դեմքը»:
ԼԱՅԲՆԻՑ

«Դաստիարակությունը կարող է մեզ տալ անհրաժեշտ հատկություններն այն ազգերի, որոնք չեն ուզում մեռնել»:

Այո՛, դաստիարակությունը, բայց ո՞չ այն, որն այսօր տրվում է մեր մատաղ սերնդին:

Ամեն ինչից մի քիչ, առանց որևէ գերիշխող գաղափարի:

Մի՛ քիչ հայերեն, մի քիչ տեղական լեզու և սովորական առարկաներ - այդ է գաղութային դպրոցի տվածը:

Կուսակցամիջյան անվերջ պայքար և ժխտական քննադատություն - ահա՛ մեր մամուլի դաստիարակչական գործը:

Անհատապաշտական ճռվողյուններ - սրանից, կարծեմ, ավելի բան, թե մեր օրվա գրականությունը:

Չկա, պակասում է բոլորին - դպրոցին, մամուլին, գրողին - այն աստվածաշունչ զգացումը, որն իր մեջ խտացնում է մարդկային բոլոր բարձր հատկությունները:

Չկա բարձր հայրենասիրությունը, հայրենապաշտությունը չկա...

* * *

Հայրենապաշտական դաստիարակություն- ահա՛ մեր փրկության խարիսխը:

Ահա՛ թե ինչու հայրենասիրության, թե՛ հայրենապաշտության-մարդկային առաքինությունների այդ աստ-վածային մոր - համար

պետք է ջահ բարձրացնել մեր հոգիների մեջ, մեր դպրոցներում, մեր ընտանեկան հարկի տակ, մեր գաղթականական վրանների տակ, ամեն տեղ, ուր կապրի, կշնչի հայ մարդը:

Ահա՛ թե ինչու պետք է երես դարձնել այն բոլոր վարդապետություններից, որոնք հաշտ չեն հայրենասիրության հետ:

Եվ ահա՛, թե ինչու պետք է կեղծ ու մոլար հայտարարել բոլոր կրոնները, բարոյականները, սկզբունքները, որոնք չեն դարբնում կուռ կամքեր, ուժեղ նկարագիրներ, արիներ, որոնց չգոյությունը ազգերին հաճախ է ստիպում դիմելու իրենց թշնամիների մեծահոգության:

* * *

«Այն օրը,- մի տեղ ասում է պատմաբան Միշելեն,- երբ Ֆրանսիան կհավաքի իր որդիներին իր շուրջը և նրանց կդասավանդի Ֆրանսիան, որպես դավանություն և կրոն, այն օրը նա վերստին իրեն կզգա կենսունակ և հաստատ, ինչպես երկրագունդը»:

Այո՛, հայրենիքը՝ ընդհանուր աստվածություն, հայրենասիրությունը՝ կրոն:

Հայրենասիրությունը - միայն ոչ որպես գեղեցիկ խոսք, այլ զգացում և գիտակցություն, ոչ որպես շրթունքի սեր, կամ իդեազուրկ խուժանավարի բարոյական մերկությունը ծածկող գեղեցիկ պատմուճան, այլ՝ պաշտամունք, կրոն:

Միայն այսպես, միայն այսպիսով մեր ժողովուրդը կարող կլինի հեգնել ժամանակն ու իր վտանգները:

Բարոյական մեծություններով և փառքի գործերով հարուստ է մեր պատմությունը:

Նա ունի փառահեղ էջեր՝ մեր Ոսկեդարը:

Եղիշեի և իր անմահ ժամանակակիցների դարը հերիք պիտի լիներ, եթե գունատված չլիներ մեր հիշողության մեջ - մեր ժողովրդի սրտի մեջ վառ պահելու հայրենասիրության բոցը:

Ավարայրը կմնա մարդկային պատմության ամենավեհափառ գործերից մեկը:

Իր հաղթական նահատակների աստվածային խիզախումներով ու դյուցազնական խոյանքներով նա ավելի վեհ է ու գեղեցիկ, քան մեր դարի ամենամեծ ճակատամարտները:

* * *

Անմահ էջեր ունի և մեր նորագույն պատմությունը:

Նոր և հերոսական Ավարայրներ շա՜տ և անմահ մեռելների մի ամբողջ պլեադա - նահատակներ, մեծ իրենց գործերով, հրահանգիչ իրենց բարձր նկարագրով.

Կա՛, կա՛ այդ բոլորը, կա՛ այն, որն իրավունք է տալիս մարդկային մի զանգվածի ազգ կոչվելու:

Բայց, չկա, ավա՜ղ, այդ բոլորի պաշտամունքը մեր հավաքական հոգու մեջ: Եվ միայն հայրենապաշտական դաստիարակությունն է, որ ուժեղ և անմեռ պիտի դարձնի մեր ժողովուրդը:

«Ցեղի հոգին միակ ուժն է, որի առաջ անզոր են բոլոր ուժերը»:

Դաստիարակենք մեր սերունդները հայրենապաշտորեն ու ցեղորեն՝ արևի տակ մեր տեղը չկորցնելու համար:

* * *

Այն պիտի չլինի մեր դպրոցը, ինչ որ է այսօր:

Շեշտված նպատակը, ջերմությունը, հոգին է պակասում մեր արդի դպրոցին:

Նա չէ, բայց պիտի լինի հայրենագիտության ամբիոն, տաճար:

Դեռ այնտեղ հայ մանուկը պիտի ճանաչի և սովորի սիրել հայրենի ժողովուրդն ու երկիրը:

Նա է, որ հայ մանուկի հոգու մեջ պիտի քամի մեր պատմության բովանդակ գեղեցկությունն ու վեհությունը:

* * *

Բավական չեն մութ և շփոթ տեղեկությունները հայրենի երկրի և ժողովրդի մասին:

Անպետք են այն դասագրքերը, ցամաք և անհոգի, որոնց մեջ հայրենիքի մասին խոսվում է ճիշտ այնպես, ինչպես նկարագրվում է Սահարայի անապատը կամ մի հեռավոր կղզի:

Կրոնական երկյուղածությամբ և անսահման քաղցրությամբ պիտի դասավանդվի հայրենագիտությունը:

Սրտի և մտքի կրակով պիտի խոսվի հայրենի երկրի մասին՝ հրահրելու վերջինի պաշտամունքը մանկական հոգիների մեջ:

Փաստերի հետ և խորհրդածություններ, որոնք հարստացնելով հիշողությունը, բեղմնավորեին նաև միտքը, ջերմացնեին նաև սրտերը:

* * *

«Կգա ժամանակ,- ասում է մեր դարի իմաստասերներից մեկը,- որ ամեն բանից առաջ կմտածեն դաստիարակության մասին»:

Մի մեծ քայլ անենք դեպի այդ ժամանակը:

Ընդունենք, որ նա եկել է - այո՛, նա եկել է արդեն մեզ համար - և ամեն բանից առաջ մտածենք հայրենապաշտական փրկարար դաստիարակության մասին:

Նման դաստիարակությամբ պատրաստենք մեր ապահով ապագան:

Եվ չմոռանանք, որ դպրոցն ու մամուլը փաստերից ավելի բարձր գաղափարներ պիտի տան:

Չմոռանանք, որ նյութապաշտությունը թույն է մեզ նման փոքր ժողովրդի համար:

Ասենք և մի այլ ճշմարտություն - ով հայրենապաշտ, ով գաղափարապաշտ երիտասարդություն ունի, նա էլ ապագա ունի:

Փրկությունը սրա մեջ է կամ և ոչ մի բանի, չմոռանանք և այդ:

ՈՐԴԻՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅՐԵՐԻ ԴԵՄ[6]

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Կուզեի որ իմ խոսքը՝ ուղղել քեզ, հա՛յ երիտասարդություն, կուզեի որ դա առաջին հաղորդության ազդեցությունն ունենար:

Կուզեի որ քեզ համար գրված խորհրդածության այս էջերն ընդունեիր, ինչպես ծարավ դաշտն է ընդունում:

Հոգեփոխել քե՛զ կուզեի ճշմարտության ուժով. փրկել քեզ և քո միջոցով, գաղութահայությունը կեղծիքի գերությունից:

Եթե դու չես - թող խոստովանեմ՝ գաղութներում միայն քեզ եմ հավատում - եթե չես, կամ պիտի չդառնաս ճանապարհը փրկության մեր ժողովրդի համար, նրա համար կմնա մի հատիկ ճամբա... դեպի գերեզմանատուն:

Եթե դու էլ պիտի նմանվես այն սերունդներին, որոնցից «մի բուռ հող» իսկ չի մնացել - օտարի լուծը և տառապանքը պիտի մնան քո ժողովրդի բաժինը: Որբ, գաղթական, հայ անունները պիտի շարունակեն մնալ որպես նույնանիշ բառեր: Եվ պիտի երկարի խաչելության հոգեվարքը և ուշանա հարությունը ցեղիդ:

Չէ՛, չէ՛, ես հավատում եմ քեզ, քո ներքին մարդուն և Հային: Հավատում եմ, որ դու հրամայողաբար պիտի դառնաս ուխտված և վրիժակ սերունդ - դյուցազնախառն սերունդը մեր, որի ջանքերով Հայաստան երկիրը պիտի դառնա Նոր Սպարտա՝ Արևելքի սրտի մեջ: Ես հավատում եմ քեզ և ահա՛ թե ինչո՞ւ եմ քեզ ուղղում իմ առաջին «Bon quart»[7]ը: Դա քառորդապահի իմ աղաղակն է, ուղղված քեզ - աղաղակը, կանչը նավաստիների, որ գիշերներն իրար կուղղեն ամեն քառորդ ժամ:

Bon quart ! Խռովահույզ է ծովը. խավարն անթափանց. վտա՛նգ, վտա՛նգ կա նավի համար:

Սակայն, նավազներն արթուն են, պատրաստ և սթափ: Նավը՝ ալեկոծ, բայց անսույզ, պիտի հասնի նավահանգիստ:

Այս խռով, խավար և նենգ ժամանակներում, երբ այնքան մեծ և իրական է վտանգը մեր ցեղի համար, քե՛զ, հայ երիտասարդություն, ես քե՛զ իմ անհանգստացուցիչ աղաղակն եմ ուղղում:

Bon quart !

1.
ԱՆԴՈՒՆԴԻ ԵԶԵՐՔԻՆ

Ազգերի կյանքը ժամանակաշրջաններ ունի, երբ որդիները հարկադրաբար իրենց հայրերի դաստիարակիչը կհանդիսանան:

Նման մի ժամանակաշրջան է ապրում օրվա հայությունը, ավելի ճիշտ՝ գաղութահայությունը: Երբեք, հա՛յ երիտասարդությունը, մեր ազգն ու ազգայնությունը այնքան լրջորեն վտանգված չեն եղել, որքան այսօր: Ինչպես և երբեք մեր ժողովուրդը այն աստիճան պառակտված ու տկարացած չի եղել, ինչպես այժմ: Քո ժողովուրդը բաց աչքերով աշխատում է իր մահացու թշնամիների համար. կատարում ամեն ինչ, որ գալիք աղետը թուրքական վտանգը, որ դամոկլյան սրի նման կախված է իր գլխին, որ վաղվա աղետը կլինի անչափելիորեն մեծ, անդիմագրավելի և անդարմանելի, որ դա կլինի «իններորդ ալիք»ը մեզ համար:

Մենք պառակտված ենք: Իսկ նման ժողովուրդը նվազ ուշադրություն է դարձնում արտաքին իրական, թե հավանական վտանգի վրա: Հայության հայացքն ուղղված է արտաքին թշնամուն, որ հարկադրված լինի չափավորելու կամ ի սպառ արգելելու ներքին տարակարծությունները: Երբ ազգերը այսօր կեռան հոգու, գիտության նորագույն զենքերի իրենց միտքն ու բազուկը կգինեն՝ ցեղամիջյան անողոք պայքարում հաղթանակելու կամ հաջողությամբ դիմագրավելու համար, հայությունը կշարունակի կորովաթափ լինել ներքին անփառունակ ճակատների վրա. նա կպատրաստվի վաղվա մահաբեր պարտության համար:

Մի ժողովուրդ, որի որոշ տարրերը, կարծեք արդեն հաշտվել են իրենց ցեղի գլխովին կորչելու մտքի հետ և կցուցադրեն մահվան դատապարտվածի հոգեբանություն: Սրանք արևելյան ճակատագրապաշտությամբ ամեն ինչ թողել են բախտի կամքին և անհանգստանալու պատճառ չունեն: Կան և այնպիսիները, որոնք կուզեն ե՛վ անկախ հայրենիք ունենալ, ե՛վ վաղը պարտված տեսնել արտաքին թշնամուն, բայց նախապատրաստվելու փոխարեն, կխոսեն ու կգրեն միայն: Եվ գրեթե բոլորն էլ կշարունակեն զարմանալ միամտորեն, թե ինչո՞վ աշխարհն անտարբեր կմնա մեր Գողգոթանի հանդեպ. թե ինչո՞վ մենք սպեղանու կսպասենք, բայց նորանոր վերքեր կստանանք:

Դժվար է, ընթերցո՛ղ, անկարելիության աստիճան դրժվար է ընդհանուր գծերով բնութագրել հոգեբանական այն հեղձուցիչ մթնոլորտը, որի մեջ շնչում է գաղութահայությունը:

Սպանի՜չ իրականություն, ուր գոյություն չունի մի հատիկ օրենք, կանոն իսկ, պարտադիր բոլորի, բոլորի համար. ուր որոշ տարրեր հանցապարտորեն ժխտում են և՛ ազգային սրբություններ, և՛ բարոյական արժեքներ. ուր կա առատորեն՝ թույն, մաղձ, գռեհկություն, կա դիմածռություն, ծաղրանք, չարարվեստ խծբծանք, ուր մարդիկ դառել են դառնախոս, նեղսիրտ, եսական, ուր տիրող հոգևոր մտափոխության պատճառով նոր հեղինակություններ չեն ստեղծվում և հները չեն հարգվում. ուր մտաբարոյական ընդհանուր աղաղաղության մեջ մարդիկ, կարծես դադարել են իրար հասկանալուց և ուր հնարավոր չէ գլուխ հանել որևէ ազգաշեն գործ. ուր կեղծիքն է կազմում որոշ քաղաքական հոսանքների բարոյական դրամագլուխը, ուր ամբողջ կազմակերպություններ ապրում են կեղծիքի և մտավոր կուրության մեջ՝ շրջելու անդունդի եզերքին:

Եվ այդ, և այդ ամենը այն ժամանակ, երբ թրքությունը տապարն է դրել մեր ցեղի գոյության ծառի արմատին: Աննպատակ և ուղեկորույս ժողովու՛րդ, որ կորցնելով իր ազգային իդեալը՝ վերածվել է «անհատների փոշու»: Գողգոթաների տե՛ր ժողովուրդ, որ չի սարսափում իր ողբերգանքի մեջ տկար և ծիծաղելի լինելուց:

Մի ժողովուրդ, որի որոշ տարրերի համար ազգային դատ չկա, արտաքին պայքար գոյություն չունի, տարրեր, որոնք այլևս ոչինչ չեն ուզում աշխարհից, բացի ժամանակավոր կերն ու հանգիստը. հանցավոր տարրեր, որոնք մեր դերը վերջացած են համարում մարդկության պատմության մեջ և անվրդով թեքվում՝ դեպի այլասերում և դանդաղ անհետացում:

Ահա՛ մոտավորապես այն սպանիչ մթնոլորտը, ստեղծված քո հայրերի կողմից-անուղղելի հայրեր, որոնք շարունակում են իրենց հին մեղքերն ու սխալները սնուցել նորերու, ազգ և ազգայնություն վտանգի մատնված հայրեր, որոնց վերադաստիարակիչը, դո՛ւ, հարկադրաբար դո՛ւ պիտի լինես, հա՛յ երիտասարդություն:

* * *

Դժբախտություն է, սակայն, երբ դաստիարակիչն ինքը ևս կարիք ունի դաստիարակության: Որպես հարազատ ծնունդը մեր տխուր միջավայրի՝ դու էլ, հա՛յ երիտասարդություն, հոգեբանորեն դո՛ւ էլ զերծ չես ստվերային կողմերից:

Վերադաստիարակչի վսեմ առաքելությունդ հաջողությամբ պսակելու համար, քեզ պետք է նախ ամոթով երես դարձնել այն անիմաստ կյանքից, որ քարշ կտան կեղծապաշտ հայրերդ, անասնացուցիչ կյանք, որ մարդը կդարձնի այն, որին՝ աշխարհածանոթ Տոլստոյի զգվանքը «հիմար միս» անունն է տվել:

Քե՛զ, նախ քե՛զ պետք է հոգեփոխվել, իսկ այդ անելու համար, դու, օրվա հայրերիդ երեսին պիտի շպրտես քո վճռական՝ ոչը և ապա հռչակես քո նոր ուխտը, թե հայրերիդ դատապարտելի ընթացքի պատճառով վտանգված մեր ցեղի ապագան փրկելու սրբազան մտա-

հոգությամբ, կվճռես այսուհետև ապրել միայն երկու բանի համար՝ Հայրենիքիդ և իր Անկախության համար: Այո՛, դու պիտի լինես ուխտվածների սերունդ և որպես այդպիսին, պիտի վերադաստիարակես քեզ և ապա դառնաս դաստիարակիչը հայրերիդ: Այլ կերպ, հայությունը կմնա մեկն այն դժբախտ ժողովուրդներից, որոնք գոյություն ունեն, բայց չեն ապրում, որոնք «աշխարհում են, բայց աշխարհից չեն»: Այլապես, քո ժողովուրդը իր տեղն արևի տակ աստիճանաբար պիտի զիջի իրեն շրջապատող այն գայլ ցեղերին, որոնց համար կյանքը լոկ առևտուր կամ լումայափոխություն չէ:

Քեզ պետք է հոգեփոխվել, իսկ դա նշանակում է, թե դու պիտի դառնաս հակապատկերը հայրերիդ: Նրանցից շատերը դեռ այն են, որոնց կխարազաներ Նազովրեցու խոսքը, - «ծույլ և նենգ ստրուկներ»: Շատերը նրանցից չուզեց իմանալ, թե ինչպե՛ս մեր ժողովրդի մի մասը պայքարեց հանուն ազատ և անկախ Հայրենիքի: Մեր անհավասար Ազատամարտի օրերին, երբ հայությունը աստիճանաբար կբարձրանար դարերի ստրկության ճահճից, և երբ մարդկության լավագույն ներկայացուցիչները հոգեպես կգինակցեին մեզ, նրանցից շատերը, անընտել՝ հանդգնելու և զոհաբերելու աստվածային արվեստին, խուսափեցին ազգային դատի խաչակիր զինվորը լինելու պատվից: Հեռուներից խոսեցին Հայաստանի մասին, առանց այդ յոթից սուրբ և հերոսական երկիրը ճանաչած լինելու: Հայհոյեցին հաճախ հեղափոխությանը և խզբզեցին նրա Աստվածաշունչ Նահատակներին, առանց հասկանալու թե «Աստվածությունը հայհոյվող չի՛ լինի»:

Հանրապետության օրոք չվերադարձան երկիր, որովհետև մեր նորազատ Հայրենիքում դեռ բավարար քանակությամբ նույնիսկ չոր հաց չկար: Կար, սակայն, արտաքին վտանգը, սև ամպի պես կախված էր հանրապետության գլխին: Շատերը դուրս մնացին Հայաստան երկրից, մնացին անտարբեր ու անկարեկից, բայց մեծապես օգտվեցին մեր ժողովրդի վարած գոռ ազատամարտի շնորհիվ մարդկության մեջ դեպի հայությունը առաջացած համակրանքից:

Բարոյապես չարաշահեցին և՝ անօրինակ մարտիրոսագրությունը, ե՛վ նորագույն հերոսականը մեր ժողովրդի: Ամենուրեք և մի՛շտ էլ, այդ տարրերը հայրենասիրության սրբազան կրակից օգտվեցին «իրենց ծխափողը վառելու կամ ապուրը տաքացնելու»: Այդպես էին երեկ. այդպես են և այսո՛ր:

Զուրկ աստվածության զգացումից՝ սրբություն չճանաչեցին նրանք և մնացին անհասանելիորեն հեռու՝ ճշմարիտ Հայ և մարդ կոչվելու իրավունքից: Կյանք վատնեցին առանց հոգեպես վառվելու և մի հատիկ կայծ վառելու իրենց շրջապատի մեջ: Իմաստասիրություն և բարոյականություն ունեցան - որոճող կենդանու, կեղծիքներ՝ որոնցով կշարունակեն դեռ իրենց տկարությունները ու կեղտերը արդարացնել:

Օտար ազգության մեջ, նյութական դիրքի տեր այդ տարրերը, զոհաբերության իրենց լիաբուռն բաժինն են բերել և կբերեն ընդհանուր գործին, մնալու հիացողն ու խնկարկողը իրենց ցեղի հերոսականի: Այդ տարրը, մեզանում, անընդունակ՝ հափշտակվելու վսեմ գաղափարներով՝ սովոր է մեծությունները դիտել անտարբերությամբ:

Ա՜հ, քո հայրերը ... նրանցից շատերը հոգու նպարավաճառ են մնում և ա՛յն դեպքում, երբ ապրում են աշխարհի մեծագույն և մեծածախք ոստաններում: Եվրոպական խոսքեր, ասիական արարքներ: Եղել է այդ տարրը և շարունակում է մնալ տկարը, անփառունակն ու ամոթալին մեր պատմության մեջ, - այն ամենը, որ հաճախ հեշտացրել է օտար տիրապետությունը Հայաստանում:

* * *

- Մեզ պետք չէ՛ Անկախ Հայաստան,- դեռ այսօր էլ աղմկում են քո հայրերից ոմանք:

- Անկախ Հայրենիքը անհրաժեշտ է հենց նրա համար, որ ձեզ՝ հոգու թզուկներիդ դարձնի կատարյալ մարդ և Հայ, արժանի Անկախության,- պատասխանում է Մայիսի Քսանութի շենքը իր ուսերին կրող ժողովուրդ - հսկան:

- Պետք չէ՛,- համառում են մտքի մանկաբարոյությամբ բռնվածները, առանց հասկանալու, թե անկախությունից զուրկ ժողովուրդները դատապարտված են մահվան, ծառայելու գերիշխան ազգերի համար որպես պարարտացուցիչ աղբ, ապա ծառ:

- Պե՛տք է, կարճ կտրում է ժողովուրդը:

* * *

Այսպես, բորբոքվում է ներքին կռիվը և մեր ցեղի տկար տարրերը դժվարանում են հասկանալ, թե «պետք թե » - ասել է՝ պետք թե, որ ապրի հայությունը:

Նրանք չեն ուզում հասկանալ, որ իրենց հաղթանակը պիտի լինի արտաքին թշնամու հաղթանակը:

Պե՛տք է՝ ասա դու, հա՛յ երիտասարդություն, ապա հասկացրու հայրերիդ, թե իրենց վերջնական պարտության մեջ է մեր ցեղի քաղաքական իդեալի հաղթանակը, թե իրենց պարտությունը պիտի դառնա պարտությունը այն բոլոր տարրերի - հավիտենապես ստրկահոգի, տկար, զենքընկեց- պարտվողականության այն ցավագար ոգու, որի նյութված վատության պատճառով դարերով օտարի լուծն ու ամոթն է եղել մեր ժողովրդի բաժինը:

Այո՛, պետք է: Կրկնի՛ր, մեկ է՛լ, հազար անգամ,- պե՜տք է, որովհետև Անկախ Հայրենիք ունենալը իրավունք լինելուց բացի և պարտականություն է: Որովհետև ցեղերի ուրույն հանճարը անկաշկանդորեն աճում է և ստեղծագործում միայն բացարձակ Անկախության մեջ:

Որովհետև միայն գերիշխանությամբ են ժողովուրդներն արդարացնում իրենց գոյության իրավունքը:

2.
ԿԵՂԾԻՔԻ ԳԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Տարիներ ի վեր հրապարակի վրա մի կեղծիք կա, մի հրեշային կեղծիք, որին կշարունակի խունկ ծխել հայրերիդ մի մասը, հա՛յ երիտասարդություն: Կեղծ դառնությամբ սրանք դեռ սգում են հեղափոխության զոհերի վրա: Փարսեցիորեն կուրծք են ծեծում, իմաստություն ծախում, երբեմն էլ արամազդյան կեցվածք ընդունելու, այդ դասալիքները երևան են գալիս դատավորի դերում և անիծում Անկախության գաղափարը:

Ա՜խ, տխմար հեղափոխականներ, միամիտների ականջին փսփսում են սրանք,- ի՞նչպես կարելի էր զոհեր տալ. ի՞նչպես կարելի էր չգիտենալ, թե ազատությունը տարվա եղանակների նման գալիս է ինքնին, առանց պայքարի և արյան. պտուղի պես,- պնդում է ծպտված ստրուկը,- պտուղի պես բան է ազատությունը, ընկնում է հենց որ հասունացավ:

Այս և այսպես են թշվառաբանում հայրերիցդ ոմանք, որոնք կեղծում են, թե չգիտեն որ ազգերը երկաթով ու արյունով են հարթել իրենց պատմական ճամբան, որ ազգերի բարորությունը ձեռք է բերվում արյունով ու արցունքով, որ ազգերի անցած ճամբաները շարունակում են ծածկված մնալ մարդկային գանգերով: «Հաղթությունը չի պտղաբերի, մինչև որ դաշտերը չոռոգվեն արյամբ»:

Արյան հեղեղներով են ներկված բոլոր հայրենիքները: Անհաշիվ է զոհերի թիվը, անչափելի՝ ժողովուրդների թափած արյունը հանուն անկախության: Այդ գիտեն մեր ցեղի տկար տարրերը, գիտեն, բայց կեղծիք կոչված հրեշի դեմ չմեղանչելու համար, դեռ կպնդեն, թե Հայոց աշխարհը կարող էր բացառություն կազմել ծանոթ երկաթե օրենքից - արյան տուրքից:

Եվ զայրացած են սրանք-երկրորդ կեղծիքը - զայրացած են, որ մեզ չի հաջուվել զինաթափելու այն մեծ ու փոքր ազգերը, որոնք սուր մերկացրին աշխարհի խաղաղության դեմ :

Սրանք կուզեին, որ չպայթեր համաշխարհային պատերազմը. կուզեին, որ ազգերի իրար անցնելուց հետո հայությունը մնար չեզոք. և կհավատան, թե թրքությունը, - դարերի գազանն ու խուժանը - պատերազմի օրերին կարող էր դառնալ մարդ և հայասեր!?... Չեզոքությո՛ւն... Համաշխարհային պատերազմի օրերին չեզոքություն պահանջելը հայ ժողովրդից, կնշանակեր մահացիորեն տգետ և վատ լինել, կնշանակեր

տարրական հասկացողություն չունենալ ստրկության մեջ հոգեվարող ժողովուրդների հոգեբանության մասին: Չեխը, Լեհը, Մակեդոնացին, Սերբը, Սիրիացին - քաղաքականապես անիրավված բոլոր ժողովուրդները կողմ դառան, դարերի իրենց երազը իրականացած տեսնելու համար:

Հոգեբանորեն ավելի քան հասկանալի շարժումներ էին՝ կամավորականը՝ ռուսահայ իրականության, լեգեոներականը՝ գաղութահայության մեջ:

- Արդյոք մեր բացարձակ չեզոքության դեպքում, եթե դա նույնիսկ հոգեբանորեն հնարավոր լիներ, թուրք կառավարությունը պիտի չտեղահանե՞ր հայությունը:

- Նա պիտի վարվեր մեզ հետ ճիշտ այնպես, ինչպես որ վարվեց:

- Ինչո՞ւ:

- Որովհետև Թուրքն ավելի դրական կարծիք ուներ և ունի հայ ցեղի մասին, քան մեր հայանուն ստրկամիտները, որոնք ազնվության վկայական տալու թրքությանը, վատությունն ունեն կարծելու, թե հայության մեջ այլևս մեռած է մարդն ու Հայը, թե հայությունը կարող էր և չհուզվել, չուրախանալ, թե ահա՛ կերևան եվրոպական գայլերը և իսլամ շունը կթողնի, կհեռանա հայկական նահանգներից, թե ահա կհայտնվեն քրիստոնյա զորքերը և հայությունը կթոթափի դարերի ստրկության լուծը:

Վատերը միայն վատ կարծիք ունեն մեր ժողովրդի մասին: Սրանց համար այնքան զուլումներից զարնված հայությունը փայտե ժողովուրդ է, անընդունակ նույնիսկ զգալու և երազելու լավ օրերի մասին:

Յոթնիցս տգետ և զզվելի՛ կարծիք...

Մեր բարյացակամ չեզոքության դեպքում իսկ- եթե դա, կրկնում եմ, նույնիսկ հնարավոր լիներ - թրքությունը պիտի վարվեր մեզ հետ ճիշտ այն ձևով, ինչպես որ վարվեց: Նա չէր կարող հավատալ մեր բարեկամությանը, քանի որ կար մոտիկ անցյալի խրատական պատմությունը: Հունաստան, Ռումանիա, Սերբիա, Բուլղարիա, Սեվ Լեռ, Բոսնիա, Հերցեգովինա - այդ բոլոր ժողովուրդները իրար հետևից, գարշանքով էին թոթափել թրքական լուծը: Հայը չէր կարող սև բացառություն կազմել: Որպեսզի Թուրքը վստահեր մեզ՝ հիշատակածս ազգերը ժամանակին չպետք է ծառացած լինեին թրքության դեմ: Կարո՞ղ էինք այնպես անել, որ մեր «սեվ աչքերի» համար այդ ժողովուրդները շարունակեին մնալ ստրուկ: Ո՛չ: Կարո՞ղ էինք այնպես անել, որ թրքությունը մոռանար մոտիկ անցյալի խրատական պատմությունը և հավատար մեզ: Ո՛չ: Ուրեմն, տեղի պիտի ունենար այն, ինչ որ տեղի ունեցավ:

* * *

Կա երրորդ կեղծիքը, որին «պաշտոն և ժամերգություն» է կատարում քո անդարձ, անապաշխարհ հայրերի որոշ մասը: Դա մեծ կեղծիքն է Կարսի մասին:

Չի եղել, հա՛յ երիտասարդ, ու չկա մի ժողովուրդ, որի պատմությունը միայն և միայն փայլուն հաղթանակներ արձանագրած լիներ: Ժամանակավոր պարտության դառն բաժակ դատարկել են բոլոր ժողովուրդները, ինչպես և աշխարհակալ Հռոմը: Երեկվա գոռ ու գոռոզ հաղթականը պարտվում է այսօր, առանց, սակայն, կորցնելու վաղվա հաղթանակի հույսը: Հարվածներ է, որ փոխանակում են ժողովուրդները, և վա՜յ նրան, որ միայն ստանում է առանց վերադարձնելու, առանց հակահարվածելու: Այդպիսին իր տեղն արևի տակ ընդմիշտ կազատեր նրանց համար, որոնք կյանքն ու պատերազմը նույնանիշ երևույթներ են համարում, որոնք խոսում են խաղաղության մասին, բայց չեն դադարում պատրաստվելու հարված տալու կամ իրենց տրվելիք հարվածը հետ մղելու համար:

Եվ սովորություն կա, գրչի ու գրքի տեր բոլոր ժողովուրդների մոտ իմաստուն սովորություն կա, պատերազմի հետ հաշվի նստել, պարզել իրենց հաջողության և պարտության պատճառները: Հաղթականը կուսումնասիրի իր հաղթանակի պատճառները՝ վաղը ևս հաղթանակելու համար, պարտվածը կանդրադառնա իր պարտության պատճառներին՝ վաղը նրանցից խուսափելու նպատակով: Համաշխարհային պատերազմին մասնակցություն բերած կողմերը վաղուց են պարզել ճշմարտությունն իրենց զենքի հաջողության ու ձախողման մասին, և զինված այդ ճշմարտությամբ, լռիկ ու մնջիկ պատրաստվում են վաղվա համար:

Մի տխուր բացառություն է կազմում աստվածապահ մեր ժողովուրդը միայն: Տարիներ են անցել Կարսի անկման օրից, տարիներ, և ... այդ բերդի շուրջը տեղի ունեցած ողբերգության մասին հրապարակում կա ամեն ինչ, միայն ոչ ճշմարտություն: Մի նշանախեց անգամ: Շատ բան գրվեց, ավելի շատ խոսվեց, և դեռ գրում են, խոսում Կարսի անկման պատճառների մասին, բայց ոչ ճշմարտությունը երևան հանելու մտահոգությամբ: Կարծիք հայտնեց մտավորականը, սրբոտը, դիվանագիտական մարզանքներով զբաղվողը, նպարավաճառը, սափրիչը. չմնաց արհեստ և արվեստ, որի ներկայացուցիչը լեզու չթրջեր Կարսի պատերի տակ հայ զենքի կրած անհաջողության պատճառների մասին: Բայց ոչ ոք ձեռնահասություն և արիություն չունեցավ մազաչափ անգամ մոտենալու ճշմարտությանը, ոչ ոք չուզեց և չկարողացավ տեսնել ճշմարտությունը:

- Հայաստանի կառավարության անհեռատեսության կպարտենք Կարսի անկումը. պատերազմը դիվանագիտորեն կազմակերպված չեր, - ասացին և ասում են ոմանք:

- Զինվորական նախարարի ապիկարողության երեսից ընկավ Կարսը, որովհետև զորք չկար, որովհետև եղածը զորք չեր:

- Կարսը թշնամուն հանձնեց բարձր հրամանակարողության անճարակությունը. զորք կար, բայց կռվեցնող չկար:

Սրանով չի սպառվում մեղադրականը: Շա՜տ են նրա կետերը և բազմապիսի:

Եվ ամեն մեկը՝ երևակայական այս կամ այն պատճառներին վերագրելու հայկական բերդի անփառունակ անկումը, հագավ դատավորի պատմուճանը և գոռեկորեն հայհոյեց, զրպարտեց, բամբասեց նրանց, որոնց ձևականորեն հանձնված էր Հայաստանի ծանոթ ամրության պաշտպանությունը: Եվ ամեն մեկը, որ տգիտություն և վատություն ունեցավ իրենից դուրս փնտրելու աղետի պատճառները՝ կրկնեց հիմարություններ միայն:

Հետևա՞նքը: Փողոցում և հոգիների մեջ ամեն ինչ - տգիտություն, միամտություն, կեղծիք, իսկ ճշմարտություն՝ բնավ:

Հետևե՛ք, ընթերցո՛ղ, կատարվող «քննադատություններին» և փութա - վճիռ դատաստաններին և պիտի մղվեք համոզվելու, թե հայրերիդ շարքերում կան ամեն գնով ծիծաղելի դառնալու մարմաջով բռնված մտավորականներ:

Ինչի՞, սակայն, վերագրել այդ տխուր երևույթը. արդյոք, միայն տգիտությա՞ն: Ճի՛շտ է, հասկանալի պատճառներով մեր ժողովրդի մի որոշ մասը - որ անհայրենասիրությունն ունեցավ հեռու մնալու ազգային պայքարից - ամենադույզն չափով իսկ հասկացողություն չունի պատերազմ կոչված բարդ երևույթի մասին: Բայց և այնպես օրվա դատապարտելի վարքագիծը չի կարելի բացատրել իր տգիտությամբ միայն:

Այդ տարրերի մեջ տգիտության հետ զինակցած է վատությունը: Երեք գլխավոր պատճառներ ունեն սրանք - գիտակցորեն խուսափելու ճշմարտությունից:

Սրանց կուսակցական շահը պահանջում է տևականացնել Կարսի անկման առաջին օրերին Հ.Հ. կառավարության դեմ ստեղծված հասկանալի դժգոհությունը: Այդ դժգոհությունը մի զենք է, որից՝ ազգային իշխանության հակառակորդները չեն ուզում զրկվել:

Այստեղ, ինչպես տեսնում եք, կա մտքի անազնվություն:

- Ընդունել ճշմարտությունը հանրապետական բանակի անհաջողության մասին, պարզել Կարսի անկման իսկական պատճառները - կնշանակի պատասխանատվության բաժին ընդունել: Ճշմարտությունն ընդունողը առաքինություն պիտի ունենար զբաղվելու ինքնաուղղու-

մով, վաղը իր աղետաբեր սխալներն ու պակասությունները չկրկնելու համար: Իսկ ինքնաուղղումը պահանջում է մտքի և հոգու ճիգեր, մի բան, որ այնքան էլ հաճելի չէ հոգեպես ծույլերի և նյութականացածների համար:

Այստեղ էլ տեսնում ենք բարոյականի պակասը:

- Ճշմարտությունից երես դարձնելու երրորդ պատճառը - դա իրենց դասալքությունն արդարացնելու հանցավոր միտումն է: Հեռատես պիտի համարվեին, եթե կարողանային լռել: Չկարողացան և մատնեցին իրենց: Իմաստությունը չէր, որ նրանց հեռու էր պահել ազատագրական պայքարից, այլ՝ փոքրոգությունը:

Հին ծանոթ դասալիքներն են դրանք, որ միշտ էլ փորձել են փիլիսոփայել ու արդարացնել իրենց փախուստը ազգային պարտականություններից:

* * *

- Հառաչող ազգերը, ստրուկ, անիրավված, իրենց տառապանքին վերջ տալու հույսով մի՛շտ էլ դիմել են հեղափոխության, որպես ծայրահեղ և հերոսական միջոցի, մասնավորապես Արևելքում: Այդ նույն միջոցին պիտի դիմեր և հայ ժողովուրդը:

Փա՜ռք իր խոյանքին, իր զոհերին և մայիսյան պատմական շարժուձևին:

- Համաշխարհային պատերազմի բերումով հայ տարրի տեղահանությունը օսմանյան սպայակույտի համար ռազմագիտական անհրաժեշտություն լինելուց բացի, աշխարհի հզորներից ծեծված ու թքված թուրք ցեղի գրգռված բարբարոսությանը հագուրդ տալու հոգեբանական մի միջոց էր, որին անվարան կերպով դիմեց թուրք կառավարությունը:

- Կարսի ամոթը Հ.Հանրապետական կառավարությանը չի միայն, այլ ողջ հայ ժողովրդին: Չափվում են, բախվում բանակները, բայց հաղթում կամ պարտվում են ազգերը, ցեղերը: Կարսի պատերի տակ պարտվողը հայ զինվորն ու զորավարը չէին միայն, այլ բովանդակ հայությունը, հայ ժողովրդի՝ իր ամբողջության մեջ անմարտունակ, անարի, անմշակ հոգին:

Ահա՛ ճշմարտությունը, հա՛յ երիտասարդ - սպանիչը կեղծիքի, ճշմարտությունը, որով զինված, դու աննահանջ կռվի պիտի դուրս գաս տգիտության ու վատության դեմ: Դու պիտի սպանես կեղծիք հրեշը, որ սպառնում է մեր ազգի նյութական և բարոյական գոյությանը: Վաղուց է ինչ այդ եռագլխանի հրեշը, հենված մեր հասարակական կյանքի գռեհկության, աստվածաբար պաշտվում է և իշխում մեր ժողովրդի որոշ տարրերի հոգու և մտքի վրա: Նա մեհյաններ ունի ցցված ամեն տեղ, ուր կսողա տկար, անարի, անանձ հայը: Նա անսուրբ բագիններ ունի,

որոնք դո՛ւ, Ավարայրի հերոս Երեցի սրբազան կատաղությամբ պիտի խորտակես: Վե՛րջ կեղծիքի թագավորությանը մեր կյանքում, որ բազմիցս փորել է հիմերը մեր ազգային գերիշխանության և կործանել մեզ: Թագավորող կեղծիքի երեսից, հալածական է ճշմարտությունը մեր իրականությունից: Չկա, ճշմարտություն չկա մեր կյանքում և դրա համար էլ այնքան անլույս ու անհույս է մեր կյանքը, դրա համար էլ այնքան տգեղ են մեր բարքերը, այնքան խոպան մեր հոգիները: Չկա ճշմարտություն, դրա համար էլ ներքին համերաշխությունը շարունակում է մնալ որպես սնամեջ խոսք, դրա համար էլ մտքի, զգացումի, ոգու աղքատությունն այնքա՜ն աղաղակող է մեր ազգային կյանքում: Չկա ճշմարտություն, և դրա համար էլ մեր ժողովուրդի մի մասը Մետերլինգյան կույրերի նման մոլորված է «տգիտության անտառում»:

Կա փիլիսոփայող եսականություն, ատելություն, նախանձ, փոքրոգություն, քաղաքական շաղակրատանք: Կա այն ամենը, որ դժոխքն իսկապես դժոխք է դարձնում: Կա այդ ամենը, որովհետև ճշմարտություն չկա: Կա կեղծիքը և ի ուրախություն թուրքերի շարունակվում է ներքին իրարակերությունը: Կա կեղծիքը, և հայությունը կշարունակի գրավաստակ լինել, - մի մասը շինարարելու, մյուսը՝ քանդելու:

Կեղծիքի մեջ կշնչեն, կապրեն շատերը - և ահա՛, հայությունն իր ամբողջության մեջ շարունակում է մնալ հոգեպես տկար, ասել է և անկարող ու անարժան անկախ հայրենիք ունենալու: Ճշմարտության թագավորությունը մեր կյանքում, իրական և անսասան պիտի դարձնի մեր ժողովրդի հաղթանակն արտաքին թշնամիների հանդեպ:

- Ճշմարտությունը - ա՜հ, երիտասարդ հայություն - դա աստվածային այն լույսն ու ջերմությունն է, որով կսնվի ու կհզորանա հոգին՝ անհատի և ժողովրդի:

Կեղծիքը կստրկացնի, ճշմարտությունը՝ կփրկի:

Վերջինն ուժ է, առաջինը՝ տկարություն:

Վախկոտն ու ստորը - ահա՛ կեղծիքի աշակերտները:

Ճշմարտությունը կդաստիարակի արին ու ազնիվը:

Պարտություն, ստրկություն, տառապանք - ահա՛ կեղծիքին հարկատու ժողովուրդների ճակատագիրը:

Ճշմարտությունն, ընդհակառակը, կհզորացնի ու կփրկի, դարձնելու ազգերին հաղթական:

Առաջինը տխուր ախտանիշն է հոգիների խանգարման:

Երկրորդը, կրկնենք իմաստունի հետ՝ ամենամեծ Աստվածությունն է, որ բնությունը հայտնաբերել է մարդկության համար և օժտել այն ամենամեծ ուժով:

Ճշմարտության մեջ ապրող անհատի և հավաքականության հիմքը դրված է լինում ժայռի, կեղծիքի մեջ խարխափողինը՝ ավազի վրա:

* * *

Չե՞ս զգում, երիտասարդ ընթերցող, թե ինչպես մահաշունչ կեղծիքից խորշակահար է լինում այն ամենը, ինչ որ գեղեցիկ, վսեմ, հերոսական է մեր կյանքում: Չե՞ս տեսնում, թե ինչպես մանրացել ու գռեհկացել են մեր ժողովրդի որո՛շ տարրերը: Թե որքան մեծ է ստորության ուժը մեր կյանքում: Չե՞ս զգում, արդյոք, թե խեղդվում ես շրջապատիդ մահաշունչ կեղծիքի մեջ: Կեղծիք՝ մահ ասել է, դանդաղ մահացում, իսկ մեզ պետք է ապրել որպես ժողովուրդ:

Տե՛ս, հայրերդ իրար ավելի են ատում, քան արտաքին թշնամուն: Եվ արդեն շատերի մեջ սկսել է խոսել ներումը դեպի թրքությունը: Նշան՝ ազգային նվաստության:

Տե՛ս, թե ի՞նչպես ծաղրելի կերպով ինքնաբավ են շատերը, քչով բավականացող, փառասիրությամբ ծույլ և սակավապետ:

Որքա՛ն անխռով են, մտահոգության ստվեր իսկ չի նկատվում սրանց մեջ՝ իրենց ժողովրդի ապագայի մասին: Կարծեք Թուվմաս Մուրի իդեալական կղզում ապրելիս լիներ հայությունը և ոչ թե մեր տխուր Արևելքում, շրջապատված բարբարոս և քրիստոնյավեր իսլամությամբ:

Կեղծավորնե՛րը ... Յոթ գրի մասին ավելի են աղմկում, քան հայ ժողովրդի վտանգված ապագայի:

Երբեք ջրի և հովի հոսանքին հակառակ չնայել. հավետ սպասել հաջող հովի ու մակընթացության - այս է այն «զգաստ քաղաքականությունը», որով կառաջնորդվեն և կուզեն առաջնորդել հայությունը:

Տե՛ս, թե ինչպի՞սի մոլեռանդությամբ նրանք ազգային գործիչների մեծագործությունները սառույցի, իսկ սխալները մարմարի վրա են քանդակում: Իսկ նրանց կեցվա՞ծքը, ծառայական՝ օտարի, ամբարտավան՝ հայ մարդու հանդեպ: Իսկ իրենց հոգևոր ծուլությունն ու չքավորությունը սքողելու զավեշտական ճիգե՞րը: Իսկ սրանց նյութակրոն վարդապետությո՞ւնը, որ մարդկային կյանքը համարելով մի օրվա ճամփորդություն՝ հորդորում է, - կե՛ր, խմի՛ր, խնդա՛, աշխարհի, ազգիդ ցավերը թողնելով ուրիշներին: Հետևա՞նքը: - Մի հոռենշան վիճակ, մտաբարոյական ընդհանուր քաոս, որի մեջ վաղուց է սկսվել եղծումն ու խաթարումը մեր ազգային հավաքական հոգու: Իսկ գիտենք, որ «մի ժողովրդի ուժը ավելի նվազ չափով է գտնվում իր բանակների՝ քան իր զգացումների ընդհանրության, քան ազգային հոգու մեջ: Ազգային հոգին Հռոմեացիներին դարձրեց աշխարհի տերը. կորցնելով այդ հոգին՝ կորավ Հռոմը»:

Հետևա՞նքը. - մի դրություն, որ սպառնում է մեզ մահվամբ:

* * *

Ի՞նչ, հայ երիտասարդություն, մեռելի ականջի՞ն է հնչում իմ խոսքը: Ո՛չ, ես հավատում եմ քո ներքին վերանորոգիչ ուժին, ինչպես և քո ջահել թևերի թափին:

Ես զգում եմ, թե ինչպես, զայրույթն ու ամոթը, միացավ՝ սրբազան ինքնադժգոհության այրում են քեզ: Ես տեսնում եմ, թե ինչպես սեղմվում է քո բռունցքը կեղծիք կոչված հրեշի դեմ: Դու դողում ես կատաղությունից և արդեն նախաճաշակում քաղցրությունը պայքարի, որի մեջ պիտի սպանվի կեղծիքը հսկան:

Ահա՛, դու զայրույթով հետ ես մղում անզիջող հայրերիդ հոգևոր խնամակալությունը և նրան պարտադրում քոնը:

Սկսում է պայքարը որդիների և հայրերի միջև: Ճշմարտության և կեղծիքի միջև: Կռիվը Դավիթի և Գողիաթի միջև!...

- «Ինձ թեթև գործ մի տվեք, ես ուզում եմ բարձրացնել այն հսկա լեռը և նետել ծովը»:

Ա՜հ, այդ՝ ձայնն է քո ազնիվ փառասիրության, հա՛յ երիտասարդություն, որի համար անկարելին հայկական բառ չէ:

- Պիտի պարտվի, պիտի մեռնի կեղծիքը մեր կյանքում, որ ապրի մեր ժողովուրդը:

- Ձա՛ն, այդ՝ քո ձայնն է, իդեալի ընդունակ երիտասարդություն, որ սիրում եմ լսել:

3.
ԿԵՂԾԻՔԸ ՋԻՆԱԹԱՓԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Ժողովուրդներն ավելի ուժեղ են, քան ժամանակավոր դժբախտությունը, կարիքը, բռնությունը:

Քո սկսած պայքարի մեջ, ուղղված՝ հայրերիդ դեմ, կզարնվի կեղծիքը: Ճշմարտությունը կտոնի իր հաղթանակը՝ վերագրավելու իր գահը մեր հասարակական և անհատական կյանքում: Նրա արևը կլուսավորի մեր հոգևոր կյանքը, փրկելու մեզ մտավոր կուրությունից: Կբացվեն աչքերը, և նրանք, որոնք բաց աչքերով կապրեին աշխարհում, բայց չէին տեսնի, - իրերը և երևույթները տեսնել ու հասկանալ կսկսեն իրենց ճշմարիտ լույսի մեջ: Շարժվել կսկսեն ճշմարտությամբ օծուն գրիչներ: Ստեղծագործ ոգևորության մի հեղեղ կանցնի հայ աշխարհի վրայով, աճեցնելու հոգիներն ու կամքերը: Հայ մարդը, ծանոթ՝ ինքնաճանաչության օրենքներին, կզարգացնի իր ներքին թաքուն ուժերը, իր ներքին մարդը, որի բաղդատմամբ ինքն այժմ թզուկ է միայն: Կհրապարակախոսեն վսեմ ու խանդավառ շրթունքներ, և երեկի, հակասություններով այնքան հարուստ մեր կյանքը կիմաստնանա բարոյական ճշմարտություններով: Խոսելուց առաջ ամեն ոք ոսկե կշռով նախ կկշռի իր խոսքը:

Մայրերը զգաստության և ուղղության կիրավիրեն ազգայնորեն տկարացածներին, դաստիարակելու իրենց զավակները, նախ հայրենիքի՝ համար:

Դպրոցը կդառնա ազգային ոգու և ուխտի դպրոց:

Մամուլը՝ լույս և ջերմություն սփռող:

Կինը՝ ընկերն ու օգնականը և ոչ աղախինը տղամարդի:

Ուսուցիչն ու աշակերտն ունենան իրենց ընդհանուր ուսուցիչը - լուսավոր ժողովրդասիրությունը, այսինքն, որ բավարարեր անհատի իմացականությունը, ջերմացներ սիրտը, զորացներ հույսը: Վսեմ ժողովրդասիրություն, որից հայությունը կարողանար ստեղծել մի հրաշագործ ուժ:

Հայը կունենա ավելի բարձր ըմբռնում կյանքի մասին:

Պարտականության գիտակցությունը կհետևի մարդկանց՝ որպես խստապահանջ Աստվածություն:

Գոյություն կունենա մրցումի մի հատիկ ձեվ միայն - բարոյական մրցում: Մարդիկ կպերճախոսեն գործով միայն, հայրենասիրական և առաքինի:

Քննադատության լավագույն ու արդար ձևը կհամարվի քննադատելիից ավելի բարձր ու օգտակար լինելը:

Բարեկեցիկ տարրերը ևս, գիտակցում են, թե պետք է նախ մարդ և Հայ լինել և ոչ թե հարուստ՝ կծգտեն իրենց երջանկությունը ապահովել իրենց ժողովրդի երջանկության հոգը տանելով: Ազնիվ փառասիրությունից մղված՝ Հայը կճգնի գերազանցել իր հարևանին արիությամբ, հայրենապաշտությամբ ու անձնվիրությամբ:

Կուսակցականի նշանաբանը կդառնա,- կուսակցությանս հետ, բայց ազգիս համար:

Նվիրո՜ւմ, ավելի՜ նվիրում,- կլինի մեռնողի վերջին խոսքը:

Երկյուղածորեն կպաշտվի աճյունը հայրենապաշտ մեռելների, նվիրական աճյուն, որ Հայրենիք կստեղծի:

Եվ որպես հետևանք ստեղծված այդ բարոյաշունչ մթնոլորտի, հայ մարտիկն իր կրծքի տակ կկրի գիտակցական մահը, ասել է և հաղթանակ արտաքին թշնամու հանդեպ, ապահովելու գոյությունը զորեղ, հարգված և երջանիկ Հայրենիքի:

* * *

Թոթափած կեղծիքի լուծը, հայությունն այժմ իր ամբողջության մեջ խորապես գիտակցում է մեր դարի և օրերի հրամայականը՝ հզորացի՛ր կամ մեռի՛ր: Այժմ նա չի թաքցընում, թե ինքը պարտվեց ու պատժվեց խստիվ, քանի որ չկարողացավ օգտվել իր ցեղի ոգու անսպառ ուժերից: Պատմության դառնադառն դասերից խրատված՝ նա գիտի այժմ, որ անիրավված ժողովուրդների արյունն ու արցունքը պիտի

չդադարի մինչև որ նրանք ինքնօգնությամբ ոտքի չկանգնեն, մինչև չիզորանան հոգով:

Նա չի հաշտվել անիրավվածի իր դրության հետ. հակառակ կնշանակեր գիտակցորեն ստորագրել իր մահվան դատավճիռը: Նա գիտի, որ ժողովուրդներն ավելի ուժեղ են, քան ժամանակավոր կարիքը, դժբախտությունը, բռնությունը: Եվ, ահա՛, գերմարդկային ճիգեր է կատարում հաղթահարելու իր տառապանքը և օրեցօր լցվում է ներքին ուրախությամբ և ուժով:

Նա գիտի, որ դեռ ազգերն ապրում են իրենց կազմակերպված եսականության շրջանը, որոնց «մարդասիրության» ապավինելը միամտություն լինելուց բացի և վտանգավոր է: Գիտակցած այդ ճշմարտությունը հայությունը վճռում է այլևս չմնալ որպես նյութական և բարոյական խաղալիք աշխարհի հզորների ձեռքին, և, ահա՝ գործի է դրել իր ցեղային հանճարը, որի ուժերը և կարողությունները հարմար առիթ կսպասեին զարթնելու և ծառայելու իրեն:

Նա խաղաղ է այժմ, բայց ուժեղ: Նա սիրում է խաղաղությունը, բայց պատրաստվում է կռվի, որովհետև գիտի որ ամեն ժամ, այս կամ այն պետությունը կարող է «բաց թողնել պատերազմի շները»: Նրա ճակատին այժմ, որպես արդար դատի տեր և մարտնչող ժողովրդի, կա և կփայլի կատարված պարտականությունների կնիքը: Կատարելով իր պարտականություններն իր հավաքական անձի նկատմամբ, նա աստիճանաբար ցրում է իր շրջապատի խավարն ու հոգեկան անհանգստությունը: Նա այլևս կեղծիքի մեջ ապրող դժբախտ ժողովուրդը չէ, որ իր ուժերի կեսից ավելին կսպառեր վախի և անհուսության մեջ: Ձինաթափ արած կեղծիքը՝ նա գիտի այժմ թե ի՞նչ է ուզում աշխարհից, և թե դեպի ո՞ւր է ուղղված իր հերոսական չուն:

Ճշմարտությունը բուժիչ ջրի նման սրբել, մաքրել է նրա աչքերը, պայծառացրել նրա հոգևոր տեսողությունը:

Այժմ նա տեր է ճշմարտությունների, որ սփոփել, հզորացնել և փրկել գիտե:

Այժմ նա գտնվում է փրկության իսկական ճամբին:

* * *

Այլևս ոչինչ չի կարող խախտել իր ժողովրդի գրանիտե հավատը: Այժմ ոչինչ չի կարող հուսալքել նրան, քանզի խորապես գիտակցում է, թե մի ժողովուրդի հայրենի հողը չի կարող ուրիշի մնայուն Հայրենիքը դառնալ: Նա գիտի, որ Մնայուն Արդարության Օրենքի ուժով բռնագրաված երկրամասերը միշտ էլ, վաղ, թե ուշ, անցնում են իրենց պատմական տերերի ձեռքը՝ պայմանով, որ այդ վերջինի մեջ ժամանակը տկարացրած չլինի սերը, կարոտն ու պաշտամունքը դեպի Հայրենի երկիրը:

* * *

Կա, հա՛յ երիտասարդություն, կա Մեծ Հայրենիքը, որ քոնը պիտի լինի վաղը:

Բայց ասա՛, օրվա քո հոգեկան կառուցվածքով պիտի կարողանա՞ս նրան տեր դառնալ ու մնալ: Խոստովանի՛ր, արժանի՞ ես նրան:

- Այո՛, եթե հոգեփոխվեցիր և հոգեփոխեցիր ժողովուրդդ:

4.
ՆԱԽ ՄԱՐԴ

Կյանքի խորհուրդը կայանում է հոգևոր և ոչ թե նյութական շինարարության մեջ:

Չի կարելի միաժամանակ վատ մարդ, բայց և այնպես լավ Հայ լինել: Անկարելի է անհատի համար, առանց կեղծիքի, անձնական կյանքում նյութակրոն, իսկ ազգային գործերում գաղափարապաշտ լինել: Նա, որ իրեն զգում է որպես «ժամանակավոր շունչ և կենդանություն առած մեքենա» չի կարող հասարակական ասպարեզում երևան գալ որպես կենդանի հոգեկանություն: Նա, որ որպես մարդ, իդեալականացնում է նյութն ու նրանից բխող բավականությունները, որ կյանքի նպատակը համարում է կրավորական հաճույքները - որպես Հայ չի կարող լինել անձնվեր, արի, հայրենապաշտ: Միևնույն մարդու մեջ չեն ապրի միաժամանակ ստրկամիտն ու ազատատենչը: Նա կա՛մ մեկն է, կա՛մ մյուսը: Սեղմ ասած՝ չի կարելի, որպես մարդ, կյանքում դավանել անձնական երջանկության վարդապետությունը, իսկ որպես գործիչ, առանց կեղծիքի, ընդունել Դոստոևսկուն, թե մարդկությունն ապրում է ոչ թե երջանկության, այլ անսահման կատարելագործման համար: Այո՛, չի կարելի անկատար մարդ, բայց կատարյալ Հայ լինել: Միայն մարդ կոչվելու արժանին կարող է արժանաբար Հայ կոչվել: Դա այբուբենական մի ճշմարտություն է, որ երկար իմաստասիրություն չի վերցնում:

* * *

Նախ մա՛րդ: Դա նշանակում է զգալ իր հոգու մեջ ներկայությունը որևէ բարձր բարոյական իդեալի: Դա նշանակում է իր էության մեջ զգալ անվերջ բոցավառումն այդ իդեալի սրբազան կրակի:

Իդեա՞լ և աննվաղ ձգտում դեպի այդ վերջինը, - ահա՛ թե ի՛նչն է մեզ իրավունք տալիս մարդ կոչվելու:

Կենդանի արև՞, որ այրվում է ներքուստ և լուսավորում ու ջերմացնում իր հոգևոր շրջապատը:

Այդ դեպքում միայն մարդս դադարում է մնալ այն տխուր արարածը, որի ճակտին ծանոթ բարոյագետի զայրույթը «կենդանի դիակ» անունն է դրոշմել:

* * *

Նազովրեցին կուսուցաներ, թե մարդուս մեջ ապրող հոգին ավելի արժի, քան ողջ աշխարհը:

Նույնը - գեղեցկագույն բանն այս աշխարհում նկարագիրն է, վսեմ ու ազնվական:

Իդեալ, իդեալապաշտություն - դա միակ միջոցն է, որի շնորհիվ տգեղ ու տկար հոգիներն ու նկարագրերը կգեղեցկանան, կբարձրանան, կփարթամանան:

«Երկու բան է լցնում իմ հոգին միշտ նոր հիացումով ու հարգանքով - աստղալից երկինքը՝ գլխիս վերև, բարոյական օրենքը՝ սրտիս մեջ»,- ասել է մեծ իմաստասերը:

Նույնը - «վարվիր այնպես, որ կարողանաս ասել ամեն մեկին՝ վարվիր ի՛նձ պես»:

Եղի՛ր իդեալիստ, երիտասա՛րդ ընթերցող, քանզի նյութապաշտը դառնում է մարդ - մեքենա, կոկորդ ու ստամոքս միայն. իսկ նմանը և ապրում է, և չի ապրում. իսկ նմանը ավելի անասուն է, քան մարդ: Եղի՛ր իդեալի ընդունակ, և բավական մի՛ համարիր իմացականությամբ զարգացումը, որ առանց սրտի կրթության, աշխարհի չարիքները մեղմացնելու փոխարեն, աճեցնում է հաճախ: Եղի՛ր ընդունակ ինքնանորոգումի ճամբով սատար հանդիսանալ հասարակության բարոյական վերանորոգումին, խորապես գիտակցելով, թե միակ մարդը, որին կարող ես բարձրացնել - դա ի՛նքդ ես: Սկսի՛ր քեզնից: Եվ իմաստունի հարցին, թե «ի՞նչ կուզեիր լինել կյանքում, հանուն ճշմարտության թույնի բաժակ դատարկելու դատապարտված Սոկրատե՞սը, թե՞ ճշմարտությունից դուրս ապրող խոզաբարո մի էակ», դու պատասխանիր - առաջի՛նը:

* * *

Ճշմարիտ է այն կարծիքը, թե մարդկությունը դառնացնող տառապանքների մեծագույն մասը հետևանք է իրերի և երևույթների սխալ գնահատումի:

Չե՞ս հիշում, ընթերցո՛ղ, այն ծանոթ պատկերը, որ երջանկությունը կխորհրդանշի: Կախարդական զորությամբ օժտված կանացի մի թևավոր էակ, մի բան ձեռքում, փախչում է՝ իրեն հետ վազեցնելու մարդկային ցեղը:

Փախչում է մտացածին ըղձանույշը և հազարներն ու հազարները խելահեղորեն վազում են իր հետևից: Հևում են, հառաչում և աղմկում - ի՞նձ է՛լ, ի՞նձ էլ... իսկ եղած էակը ժպտում է ու փախչում,

թողնելու իր հետևը դժբախտների, հուսախաբների,ձախողվածների անթիվ ու անհամար բանակը:

Եվ ահա՛, երևակայական ըղձանույշի ժպիտներին ու շնորհին չարժանացածների մի մասը, իր «դժբախտության» վերջ տալու համար դիմեց գնդակին, թոկին, դաշույնին, թույնին՝ անձնասպանության: Մի մասը իրեն հանձնեց արբեցողության և նման այլասերիչ մոլություններ: Մի այլ մասը գազազած, դառավ թունավորիչը և անեծքը հասարակական կյանքի:

Տղամարդը, որ կարող էր իր մեծագործություններով անմահանալ, հավերժացավ իր չարագործություններով:

Կինը, որ կարող էր առաքինության օրինակ ծառայել աշխարհին, դառավ փողոցի սեփականությունը:

Հետևա՞նքը: - Լիքն են բանտերը, հիմարանոցները, հիվանդանոցները:

Ինչո՞ւ, ինչո՞ւ այդպես: Ինչո՞ւ կտառապի մարդկային ցեղը: - Որովհետև միամիտ մարդը, իրենից, իր հոգուց դուրս փնտրեց և կփնտրի երջանկությունը: Որովհետև նյութականացած մարդը չճանաչեց ճշմարիտ երջանկությունը և իր կյանքը վերածեց դժոխքի:

* * *

Մշտատև անհանգստություն - ահա՛ այն սպանիչ տրամադրությունը, որ տիրում է արդի հասարակության և անհատի հոգում:

Մի բան պակասում է բոլորին, բոլորի՞ն:

Անորոշ ծանձրույթ, ջղայնություն, ինքնապատճառ թախիծ, - ահա՛ անհատի հանապազորյա կյանքը:

Հարուստն իրեն աղքատ է զգում իր հարստության մեջ, նյութապես երջանիկը՝ բարոյապես դժբախտ:

Կա, կա մի բան, որ թունավորում է մեր կարճատև ուրախության վայրկյանները, սպանում՝ ժպիտներ շրթունքների վրա, խլում՝ մեր քունը, մեր հոգեկան անդորրությունը և սարսափեցնում՝ անարև ծերության ու մահվան ուրվականներով:

Կա մի խորհրդավոր ձեռք, որ աներևութաբար թույն և արտոսր է կաթեցնում մեր շրթունքներին մոտեցող գինու և հաճույքի բաժակի մեջ:

Կա մի պատուհասող ուժ, մի ձեռք, որ դատում է մեզ, պատժում ամեն օր, ժամ, վայրկյան:

Ի՞նչ է նշանակում սա: Ո՞վ է, ի՞նչ է այդ խորհրդավոր ուժը:

- Դա մեր խիղճն է, ընթերցո՛ղ, մեր գիտակցությունը, թե բարի չենք, առաքինի չենք, հայրենասեր չենք. թե՝ կատարյալ Հայ և մարդ չենք:

* * *

Արտաքին երջանկությունը, որ խելագարորեն կփնտրեն այն բոլորը, որոնց կյանքի նպատակը հաճույքներն են և ոչ բարոյական պարտականությունների կատարողը - խաբուսիկ և խոզաբարո երջանկություն է, որ պետք չէ լինի առարկան քո ձգտումների: Դու պիտի չճանաչես երջանիկ լինելու մի այլ միջոց, քան ցեղիդ և նմաններիդ համար աշխատելն ու տառապելը:

Քո երջանկությունը - ծնունդ իմաստության - պիտի լինի հանուն ցեղային իդեալի զոհաբերվողների գերագույն երջանկությունը, քանզի մարդս տերն է միայն իր զոհաբերածի, և դա՝ է միայն նրա արժեքը, և ոչ թե այն կարողությունները, որոնցից, իրենից զատ, ոչ ոք է օգտվում:

Քեզնից դուրս չկա և պիտի չփնտրես երջանկություն:

Փնտրածդ երջանկատու ըղձանույշը ապրում է մի խորհրդավոր դղյակում, որ քո սիրտն է, բաժանելու հարևանությունը մաքուր խիղճ կոչված աստվածության:

Քո երջանկությունը պիտի լինի՝ ծառայել ժողովրդիդ երջանկության: Իսկ դա նշանակում է, թե քո սերունդը զզվանքով երես պիտի դարձնի իր օրվա կյանքից, որ նա պիտի թողնի փողոցն իր բազմապիսի հրապույրների: Նա պիտի հետ մղի այն բոլոր նյութակրոն և անասնացուցիչ վարդապետությունները, որոնք տկարացնում են մեզ, որպես Հայ և մարդ:

Իսկ դա նշանակում է, որ դու պիտի չնմանվես այն սերունդներին, որոնք կորչել են առանց ազգային օգտակարության, ինչպես խոռոչներում ընկած արևի ճառագայթը: Որոնք գոյություն են ունեցել, բայց չեն ապրել: Որոնք չեն թողել մի բան, որ ապրեր իրենցից հետո:

Դու բարոյապես ազատ չես դառնալու սերունդը անասնորեն երջանիկ դատարկապորտների, որովհետև և ոչ մի ժամանակ քո ժողովրդի գոյությունն այնքան լուրջ կերպով վտանգված չի եղել, որքան այսօր: Ինչպես և երբեք քո ժողովուրդը այնքան հրամայողաբար չի զգացել կարիքը մի ուխտված և հերոսական սերունդի:

Եղել են սերունդներ, որոնք իրենց կյանքը վատնել են խաբեական «կրկներևույթներ»ի կամ «թիթեռնիկներ»ի հետևից վազելու: Դու, սակայն, պիտի լինես անձնական երջանկությունը չճանաչող սերունդ: Ահա թե ինչո՛ւ եմ ասում քեզ,- վերցրո՛ւ խաչդ և հետևի՛ր ինձ: Այո՛, քո սերունդը պիտի լինի խաչակիր: Նա պիտի քաղի մեղքերն իր հայրերի՝ հանդիսանալով նրանց վերադաստիարակիչը: Իսկ այդպիսին դառնալու համար, պետք է որ քո ամեն մի օրը լինի «ճերմակ քարով նշանակելի օր». պետք է, որ քո կյանքը լինի բարոյական լրջություն, գրավչություն և առողջություն: Իսկ այդպիսին լինելու համար՝ ապրի՛ր չմեռնելու, մեռի՛ր ապրելու համար: Կյանքդ նվիրի՛ր բաների, որ չեն մեռնում:

Եղել են սերունդներ, որոնք ավելի ժամանակ են վատնել իրենց արտաքինը հարդարելու, քան իրենց մտքի և սրտի մշակույթի համար: Դու պիտի ապրես ժողովրդիդ համար, այլապես պիտի երկարի նրա հոգեվարքը և շատ պիտի ուշանա նրա քաղաքական հարությունը:

* * *

Հոգեպես ծույլերն են ստեղծել դժվարին ու անկարելի խոսքերը: Քույր ու եղբայր են չկամենալն ու չկարողանալը: Հազարամյոն ճամփորդությունը սկսվում է մի հատիկ քայլով: Չկա անկարելին, երբ կա զորեղ ու վճռական կամքը: Գիտցի՛ր, եղել են կամքի հսկաներ, որոնք առաջարկել են Ալեքսանդր Մակեդոնացուն՝ իր արծանը կերտել Աթոս լեռը տաշելով:

«Թագավորը նա՛ է, ով կարող է»:

Ես ուզում եմ, որ դու լինես թագավոր սերունդ:

Քանի դեռ գետափին ես - տկար ես: Անցա՞ր - կեսար ես:

Անցի՛ր, հա՛յ երիտասարդություն, անցի՛ր Ռուբիկոնը, որի հանդիպակաց ափին քեզ հաղթության դափնին է սպասում:

«Հաղթության ու պարտության միջև ամբողջ պետություններ կան»,- ասել է Բոնապարտը:

Քո վաղվա հաղթանակի և պարտության միջև հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը կա, հա՛յ երիտասարդություն:

Ահա՛ թե ինչու քեզ պետք է հաղթականի լուսապսակ ստեղծել քո ժողովրդի անվան ու ճակատի շուրջը:

Իսկ դրա համար քեզ պետք է լինել՝ ավելի քան Հայ և մարդ:

5.
ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՒԹՅՈՒՆ

Սահման չի տրված ինքնաճանաչ անհատի հոգեկան ուժերին:

Կուզեի, որ դո՛ւ, հա՛յ երիտասարդ, որ դու յուրացնեիր ինքնաճանաչությունը՝ որպես ուժի, հաղթանակի և բարձր երջանկության ամենակարճ և ամենաստույգ ճամբան:

Ծանի՛ր քեզ:

Գիտցի՛ր - ասում է դելֆյան այդ պատգամը, գիտցի՛ր, որ մարդս գաճաճ է իր ներքին հսկայի բաղդատմամբ:

Ծանի՛ր քեզ:

Կուզեի, որ իմաստասիրական այդ հրամայականը քանդակված լիներ մեր դպրոցական շենքերի ճակտին, ապա և մեր աշակերտության ուղեղի մեջ:

Այն ողորմելիորեն տկար էակը չէ, մարդը, որպիսին ճգնում է այն ներկայացնել նյութապաշտական կարճատես գիտությունը: Նա գրեթե ամենակարող է, երբ գիտակցում է, թե իր մեջ թաքուն ուժերի մի ամբողջ ծով կա, որից ազատորեն օգտվում է ինքնաճանաչ անհատը:

Դու ավելի ուժեղ ես, քան կարող ես երևակայել և զգալ քեզ:

Դու օժտված ես անսպառ հոգեկան ուժով, որոնց մեծագույն մասը անինքնաճանաչության պատճառով շարունակում է մնալ քնած վիճակի մեջ և անօգտագործելի:

Քեզ տրված ներքին ուժերի բերումով, դու գրեթե ամենակարող ես, հրաշագործ, եթե վստահելով քո ներքին մարդուն, նրա ուժերից օգտվես միայն բարձր նպատակների համար:

* * *

«Ձեր մեջ ապրում է մի աստվածություն, որի միակ փափագն է ծառայել ձեզ, որ սրտառուչ համբերությամբ սպասում է, որ կանչեք իրեն»: Հոգեբանական բացարձակ ճշմարտությամբ կշնչեն այդ ոսկե խոսքերը:

Սահման չի տրված ինքնաճանաչ անհատի հոգեկան ուժերին: Գիտենալ և կամենալ - նշանակում է կարողանալ:

Ինքնաճանաչ լինել - ասել է՝ կարող լինել ցանկացած վայրկյանի գործի դնել այն բոլոր ուժերը, որոնց տերն ես - իմաստություն, սեր, աշխատունակություն և այլն:

Ինքնաճանաչությամբ կարելի է դառնալ մագնիսական մի ամպ, որ չի խորտակվում և ո՛չ մի ուժից:

Անհուսորեն տգետները միայն չգիտեն այսօր, որ չօգտագործվող ուժերի մի հսկայական պահեստ է մարդս, որից դժբախտաբար կարողանում են օգտվել քչերը միայն:

Մեր ուժերի մեծագույն մասը շարունակում է մնալ թմրած վիճակի մեջ, երբ նրանց մասին գաղափար չունենք:

Բայց երբ ձգտել սկսեցինք որևէ բարձր նպատակի և նոր ուժերի կարիքն զգացինք - մեր մեջ անմիջապես զգում ենք ներկայությունը մեր թաքուն ուժերի:

Ո՞վ չի զգացել երբեմն իր մեջ կորովի հանկարծական ծովացում: Ո՞վ չի ունեցել երբեմն հանճարեղ ներշնչումներ, հայտնություն, պարզատեսություն:

Ո՞ւմ հաճախ չի թվացել, որ ինքը որոշ արտասովոր վայրկյաններում ընդունակ է զարգացնելու իր մեջ շատ ավելի մեծ ուժ, քան այն, որ զգում է իր մեջ սովորական վիճակում:

* * *

Մարդս այն է, ինչ որ կամ ինչպես որ մտածում է իր մասին: Անինքնաճանաչը, որ իրեն կենդանի մեքենա է համարում, և ոչ ավելին -

դատապարտված է ապրելու և գործելու իր տկար «ես»ի աղքատիկ միջոցներով: Նմանի համար չեն աշխարհ զարմացնող մեծագործությունները: Նմանը, անինքնաճանաչ և անընդունակ վերանորոգումի, կուրորեն մասնակցում է իր ամենօրյա թաղման: Աստիճանական անձնասպանություն է նմանի կյանքը:

Իսկ նա, որ գերագույն երջանկության հասնելու համար ձգտում է տիպար կատարելության, նա որ գիտի, թե բոլոր մարդիկ կատարելության կարելիություններ են - նա կասի ձեզ՝ ընդունեցի՞ր մի բանի անհրաժեշտությունը, նշանակում է, որ այդ բանը ոչ միայն կարելի է, այլև կիսով չափ արդեն կատարված:

Ուրեմն, եղի՛ր ինքնաճանաչ, երիտասա՛րդ բարեկամ, հավատա՛ թաքուն ուժերիդ, օգնության կանչի՛ր քո ներքին մարդուն, որ ավելի Աստված է, քան տկար արարած, որպեսզի աշխարհը չկարողանա սահման դնել քո հոգու ավյունի թափին, թռիչքին:

* * *

Եղի՛ր անկախ՝ հոգեպես:

Եվ ո՛չ մի տուրք այնպիսիների ազդեցության, որոնք ավելի բարի չեն, արի չեն, անձնվեր չեն քեզնից:

Հեռո՞ւ բանուկ ուղիներից:

Նրանցից՝ որոնք անընդունակ են խանդավառության: Աշխարհի առաջ հրով լծակն է խանդավառությունը: Եվ նրանցից՝ որոնք հաճախ են գործածում դժվար և անկարելի բառերը:

Աշխարհը և երևույթները մի՛ դիտիր ուրիշի աչքերով: Հիմարություն է թութակորեն կրկնել ուրիշի խոսքերը: Ավելի մեծ հիմարություն՝ կուրորեն բաժանել այլոց կարծիքը:

Մի՛ լինիր ուրիշի ստվերը, արձագանքը, եթե այդ ուրիշը անգա՛մ աշխարհածանոթ համբավ լինի:

Ստեղծագործո՛ղ և ո՛չ ընդօրինակող:

Անձնասպանություն է նմանվելը:

Ունեցիր քո՛նը - խոսք, խոսելու եղանակ: Եվ երբեք քեզ կատարյալ մի՛ համարիր, որ չդանդաղի վերելքդ: Կատարելության չես ձգտում, եթե մտահոգեպես նույնն ես այսօր, ինչ որ էիր երեկ:

Սիրի՛ր վեհը, գեղեցիկը և հերոսականը նույնիսկ թշնամիներիդ մեջ: Մի՛ նախանձիր, քանզի աշխարհը ոչինչ չունի, որ չունենար քո հոգին: Թուլություն է չարությունը: Մեզանում քչերն են ուժեղ: Դրա համար էլ չար են շատերը, չար, պարսավասեր, աններող: Մի՛ գարշիր հասարակությունից, բայց հաճախ գերադասիր իմաստուն մենությունը: Ասված է՝ «արծիվը թռչում է մենակ, ագռավները՝ խմբով»: Գոռոզությունը ուժ չէ, այլ՝ տկարություն: Մարդկանց մի՛ նայիր վերևից - դա հեղինակություն չէ՛: Տկարն է ձգտում հաճոյանալ ամբոխին, արժանանալ

փողոցի ուշադրությանը: Ասպետ եղիր նա՛խ անձիդ նկատմամբ: Դժվարանո՞ւմ ես հարգել քեզ - բարոյապես կորած ես արդեն: Զո՞ւրկ ես ինքնահարգանքի և ինքնատիրապետումի զորեղ զգացումներից - աշխարհն էլ ոչինչ չունի քեզ ուժեղ դարձնելու: Հեռո՛ւ ունայնամտությունից, գռեհկությունից և ունակությունից՝ եռյակ թշնամին բարձր նկարագրի: Մեռելություն է ունակությունը: Դու խոկմամբ և փորձով հարազատի՛ր ճշմարտությունները:

Հեռո՛ւ և հոգու ծույլերից, որոնք ճշմարտությունները, սկզբունքները և սրբությունները սրբապղծորեն կիջեցնեն մինչև իրենց տափակ հասկացողության աստիճանը: Դու բարձրացի՛ր, ձգտի՛ր հասնելու նրանց բարձրության, այլապես զուրկ պիտի մնաս հոգեկան մշակույթից:

* * *

Ինքնաճանաչությամբ մարդը դառնում է ներքնապես խաղաղ, ինքնավստահ և աներկյուղ:

Նրա կյանքի նավը, որ առաջ խաղալիք էր գոյության ալիքների ձեռքին, ստանում է հաստատ և անշեղ ընթացք:

Ծանի՛ր քեզ, հա՛յ երիտասարդ:

Քո մեջ մի գանձարկղ կա, անբավ ու անհաշիվ հարստությամբ, բայց դու չես օգտվում նրանից, որովհետև քեզ պակասում է այդ արկղի ոսկե բանալին - ինքնաճանաչությունը:

Ծանի՛ր քեզ ... Նույնացիր քո ներքին մարդու հետ, և դու պիտի զգաս քո մեջ ծովացումը հոգեկան նորանոր ուժերի. դու պիտի դառնաս ավելի քան զորեղ և ապա պիտի կարողանաս կապել բախտի անիվը և քարշ տալ ցանկացածդ ուղղությամբ:

* * *

Եղի՛ր պարզակյաց:

Բազում կարիքների տեր անհատներն ու ժողովուրդները կլանված են լինում ներկայով և մոռանում իրենց անցյալն ու ապագան: Ունայնամտանում և տկարանում են նմանները:

Դո՛ւ, հա՛յ երիտասարդություն, ուխտիդ բերումով, դու պիտի լինես ուժեղ՝ ամենակարողության աստիճան:

Իսկ ուժեղ և կարող դառնալու իմաստուն միջոցներից մեկն էլ պարզակյացությունն է:

Եղի՛ր պարզ, պարզակյաց, որպես Սպարտացի, քանզի որքան նվազ կարիքներ ունենաս, այնքան ավելի օգտակար կլինես ժողովրդիդ:

Կարիքներ կան, որոնց բավարարումը ստրկացնում է մեզ, դարձնելու մեզ գերի՝ մեր կրքերի և ցանկությանը: Իսկ չկա ավելի աղետալի բան, քան կրքերի և անիմաստ կարիքների լուծը: Կան ավելորդ

կարիքներ, զորս ապրեցնում, սնուցում ենք որպես մակաբույծներ, որոնց բավարարումը սպանում է մարդու հոգևոր ազատությունն ու կարողությունները: Հազար հիմարություններ փնտրողը միշտ էլ կունենա հազարումեկ կարիք: Իսկ նմանը չի կարող չզգալ իրեն դժբախտ ու տկար:

Նա, որի ամենօրյա մտահոգության առարկան իր հագուստի և կաշվի մեռյալ գեղեցկությունն է և ոչ թե սրտի և մտքի մշակումը - նա կմնա աղքատ հոգով, ասել է՝ և տկար: Նա, որ սովոր է ականջ տալ ունայնամիտ հասարակության և ոչ իր ներքին բարոյական օրենքի ձայնին,- դժբախտ է երիցս և տկար:

Նա, որ իր ժամանակն ու միջոցները վատնում է գեղեցկացնելու իր էության շրջանակը և ոչ պատկերը, արտաքին երևույթը և ոչ բովանդակությունը, նա, որ շարունակելով մնալ հիմարական արծագանքը սնոտիասեր ամբոխի, դժվարանում է իր հանապազորյա հացին չավելացնել և «կրկես»ը - նման բարոյապես թեթևամիտը դառնում է մեռյալ թիվ և ոչ ստեղծագործ անհատ իր ժողովրդի համար:

* * *

Վայելչասերների շրջանը - ահա՛ անբարոյականը ու անբարոյացուցիչը, թշնամին մաքրության ու պարզակյացության: Հեռո՛ւ այդ շրջանից, որ նեխություն կհոտի: Գիտես, Դիոգենեսն իրեն ավելի երջանիկ կզգար՝ քան իրեն այցի եկած աշխարհակալը:

Զգու՛շ հրապուրիչ երևույթներից: Դալարների տակ հաճախ մահաթույն օձ է թաքնված լինում: Թող քո հաճույքները լինեն մաքուր, ողջապահիկ, բարոյական: Կրքերն ու կարիքները ծառաներ պիտի լինեն և ոչ թե տեր ու բռնակալ: Եղի՛ր Սպարտացի, և բնավորությամբ անձնադյուր ու մեղմ երիտասարդներին համարիր անգո, նետված՝ էվրոտ գետը, ուր Սպարտան կթափեր իր հեզ և երկչոտ զավակները:

«Երբ երիտասարդները, սանձարձակ կյանքից հոգնած՝ քնքշորեն կքնեն փափուկ բարձերի վրա՝ հավատո՞ւմ եք, որ եթե գնանք արթնացնելու, որ ելնեն ու քշեն թշնամուն, հավատո՞ւմ եք, թե նրանք վեր կթռչեն տեղերից և իրենց մեջ կզգան ուժն ու կորովը այն դասական Աթենացիների, որոնք սովոր էին պառկել իրենց զենքերի կողքին, մերկ գետնի վրա, և գիտեին արհամարհել զգայական հաճույքները»:

Եթե վաղը, վերստին, արտաքին վտանգը պայթեց հայ ժողովրդի գլխին - դու վստա՞հ ես, որ հազարավորները քո շարքերից իրենց վահանն ու դրոշակը չեն խոնարհի թշնամու ոտների առջև:

Ես ազատ եմ խոստովանելու, թե հայ երիտասարդությունը եթե չհոգեփոխվեց,ապա մեր եռագույնի առջև ծունկի չի բերի թրքությանը:

Պարզակյացությամբ և մշտատև ջանասիրությամբ էին հզոր և անպարտ Հին Հելլադան, Սպարտան և Հռոմը: Զինվոր թե զորավար,

խաղաղության օրերին կմշակեին դաշտերը և առաջին ահակոչը լսելուն պես կթողնեին արորը ու կկապեին սուրը: Ցինցինատին գտան դաշտում, արորելիս, երբ կփնտրեին իրեն որպես զորագլուխ հռոմեական լեգեոնների: Բայց, երբ մի օր Հույնի և Հռոմեացու մեջ տկարացավ պարզակյացության ոգին, երբ այդ առնական և խրոխտ ժողովուրդները մեղկացան ճոխության և քնքշանքի մեջ՝ ընկան, կորան բարբարոսների կրունկի տակ:

Ահա թե ինչո՛վ քո սերունդը, հա՛յ երիտասարդ, պիտի լինի պարզակյաց, ազատ՝ կարիքների ու կրքերի լծից- ուժե՛ղ լինելու համար:

6.
ՊԱՏՃԱՌ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔ

Ամրացի՛ր վսեմ մտածումների մեջ:

Մի՛ լինիր ստվերը, արծագանքը, նմանությունը ուրիշների, որ հարկադրված չլինես ծիծաղելիորեն կրելու այլոց գաղափարներն ու տեսակետները, ինչպես կրում ես ուրիշի ձեռքով պատրաստված զգեստներդ: Ամենաէականը,՝ որպեսզի արթնանան հոգուդ հեքիաթային ուժերը և ծառայեն քեզ:

Այդ մասին խոսել եմ քեզ: Ավելացնեմ, թե բավական չէ դեռ սեփական խոկում ու խորհրդածություններ ունենալը: Պետք է, որ այդ վերջինները լինեն մաքուր, վեհ, արդար: Քանզի մեր նկարագիրն այլ բան չէ, եթե ոչ գումարը մեր մտածումների: Մեր արարքները ծնունդ են առնում և կազմակերպվում նախ մեր ուղեղի և հոգու մեջ: Անհատի և ազգի ճակատագիրը բնորոշվում և դարբնվում է այն մտածումներով, զորս այդ վերջինները երկարորեն սնուցել են իրեն մեջ:

Տկարություն, թե հզորություն, պարտություն, թե հաղթանակ, տառապանք, թե երջանկություն, - այդ բոլորի հեղինակը ինքը, անհատն է, ժողովո՛ւրդը, և ոչ սրանց թշնամիները, և ոչ դիպվածը:

Պատճառ ու հետևանք- միևնույն փոխհարաբերությունը ունեն ինչպես նյութական, այնպես էլ մտա-բարոյական աշխարհում: Ահա, թե ինչո՛ւ մեր պայքարը պարագաների և հետևանքների դեմ պիտի չլինի ուղղված, որ դուրս են մեզնից, այլ՝ պատճառների դեմ, որ մեր մեջ են:

Մտածումներից ծնունդ է առնում ցանկությունը, սրանից՝ ձգտումը. իսկ այդ վերջինը ունենում է իր այս կամ այն առարկան, որով և անհատը մատնում է իր մտածումների բնույթը:

Պարբերաբար ընդունած ներքին ներշնչումներից մենք մշակում ենք մեզ համար հատկություններ, պայմաններ, և որպես արդյունք այդ բոլորի - մեր ճակատագիրը:

* * *

Հսկի՛ր մտածումներիդ մաքրության ու վսեմության վրա: Հաճախ «քաղհանք»ի ենթարկիր մտքերդ, զտի՛ր:

Ամեն մտածում, հենց որ տեղ գրավեց գլխիդ մեջ, պիտի ձգտի արտահայտվել: Չար, ստոր, եսական մտածումները քեզ պիտի մղեն համապատասխան քայլեր առնելու: Արդար, անձնվեր, ասպետական մտածումներն, ընդհակառակը, քեզ պիտի դարձնեն հեղինակը ազնիվ գործերի:

Սովորի՛ր ղեկավարել ուղեղդ: Դժվար չէ դա, քանզի մարդս իշխանություն ունի իր մտածումների վրա:

«Մենք,- ասել է իմաստասերը,- մենք չենք կարող արգելել թռչուններին անցնելու մեր գլխի վրայով, բայց իշխանություն ունենք թույլ չտալու նրանց, որ իրենց բույնը շինեն մեր գլխի վրա»:

Այս ձևով վարվիր մտածումներիդ հետ: Թույլ մի տուր, որ վատերը իրենց բույնը հյուսեն ուղեղիդ մեջ:

Ամրացի՛ր վսեմ մտածումների մեջ - և դու կտիրես ներքին խաղաղության: Իսկ գիտե՞ս, որ որքան հոգեպես անդորր է մարդս, այնքան ուժեղ և ազդեցիկ է նա:

Քո կյանքի արտաքին պայմանները-ինչպես և քո ժողովրդի հարազատ ծնունդն են քո հոգեկան վիճակի, իսկ այդ վերջինը՝ քո մտածումների:

Արդարև, մեզնից ամեն մեկը, մի հոգեբանի պատկերավոր արտահայտությամբ, «հավաքում է քաղցր ու դառն պտուղները իր մտքի տնտեսության»:

Տանջանքն ու տխրությունը միշտ էլ հետևանք են վատառողջ մտքերի, որոնք ցույց են տալիս թե անհատը հաշտ ու համերաշխ չէ իր խղճի հետ:

Հեռո՛ւ, ուրեմն, այն ստոր մտածումներից, որոնք բյուրեղանում են որպես դատապարտելի սովորություններ և տանջող պայմաններ մեզ համար:

Հեռո՛ւ նվաստ ու երկչոտ խոհերից, որոնք սնուցում են մեր վարանոտ ու անվճռական հատկությունները, դարձնելով մեզ հոգևոր ստրուկ, միշտ ենթակա նվաստացումի և զրկանքների:

Միշտ վեհ, ազնիվ, արիական մտածումներ, որոնք բյուրեղանում են որպես ուրախություն, ներքին հանգիստ, քաղցրություն, դարձնելու մեր հոգին թարմ, պայծառ ու կորովի:

Երկաթը մաշվում է իր ծնած ժանգից: Մարդը տառապում է իր անկատարելությունից, որ արդյունք է իր անմաքուր, իր «ժանգոտ» մտածումների:

Մտածումը, նայած իր բնույթին, և սպանիչ է, և հարուցիչ, փրկիչ:

Հրաշագործ է մտքի ուժը: Դո՛ւ, երիտասարդ զրուցընկեր, դո՛ւ որ հրամայողաբար պիտի լինես ուժեղ, դու ևս ապավինիր վսեմ մտածումի փրկարար ուժին:

Եվ որովհետև ուխտիդ բերումով քեզ վիճակված է և ղեկավարի պատասխանատու դեր, սովորի՛ր իմաստնորեն ղեկավարել նա՛խ սեփական մտածումներդ ու ցանկություններդ:

7.
ԱՆԲԱՐՈՅԱՎԵՏ ԽՈՍՔԸ

Մարդն իր խոսքի մեջ դրսևորում է
իր հոգու բովանդակությունը:

Ոչինչ այնքան հեշտությամբ չի մատնում մեր ապրումները, մտածումները, մեր նկարագիրը, որքան խոսքը:

Դա միաժամանակ մեր բարոյական շունչն է:

Մեկին մտերմորեն ճանաչելու համար, հարկավոր է լսել նրա խոսքը, անշուշտ, երբ որ չի կեղծում:

Մի ընտանիք, մի հասարակություն, մի ժողովուրդ ճանաչելու համար պետք է լսել նրա մեջ հնչող խոսքը:

Երբ որ դա գործածվում է որպես քո մտածումների համար, եթե դա ավելի արտաքին բարեկրթության է ծառայում, քան բարոյականության, երբ որ դա լսվում է որպես ծաղր սրբության և սկզբունքների դեմ, երբ դա դառնում է ծառայական, օգտախնդիր ու թունավորիչ, և այդ ամենի պատճառով՝ տարտամ, դա նշան է բարոյական անկման ու ապականության:

Երբ մի ժողովրդի մեջ - ինչպես մեզանում - որոշ տարրեր ազատորեն ժխտում են և սրբություն, և սկզբունք, և Հայրենիք, առանց հասարակության ցասումը բորբոքելու իրենց դեմ, երբ մի ժողովրդի մեջ խոսքը ավելի գրգռում է, պառակտում, բաժանում, երբ դա կորցնում է լույսն ու ջերմությունը - դա նշան է, թե այդ ժողովուրդը նվաստացած է, ընկած՝ իր խոսքի հետ:

Այսպիսին է, չնչին բացառությամբ, գաղութահայ խոսքն այսօր:

Հետևա՞նքը: - Հավասար չափով՝ կեղծիքի ահավորություն և ճշմարտության թշվառություն մեր կյանքում:

Չարության թույն, կատաղության լորձունք և քացախ - ահա՛ թե ինչ են գործածում որոշ գրիչներ ու գրչակներ:

Էլ ոչինչ չի մնացել մեր գռեհկացած իրականության մեջ, որ հայհոյված չլիներ:

Պոռոտ, տգետ ու չար ճառասուններ!

Կարծեք, պետք է հայհոյել համոզելու կամ տարհամոզելու համար, զրպարտել, անվանարկել:

Կարծեք, անհրաժեշտ է դաստիարակելու համար խոսքը լինի բարձր և հայհոյալից, որ կարողանան ընթերցողին խաբել, թե իրենք արդար են, ուժեղ, հեղինակավոր:

Այնպես են խոսում և գրում մեր գաղութներում, որ կարծեք իրենք են տերը աշխարհի ողջ իմաստության և միակ տերերը Հայաստանի, որ շատ-շատերը գուցե և չեն էլ ճանաչում, նույնիսկ քարտեզի վրա:

- «Ես էլ աքացի տվի նրան, առյուծին: Թող ավանակի սմբակի ուժն էլ զգա ...»:

Այս է շատերի խոսքի իմաստը ու շեշտը՝ իրենց հակառակորդների մասին: Կատաղի՜ գրչամարտ: Գրում են, մրոտում անվերջ իրենց հակառակորդների մասին, առանց կարդացվելու նրանց կողմից, բայց և այնպես ոչ ոք չի հուսահատվում:

Տոլստոյի երրորդ որդին սկսել էր մամուլի մեջ քննադատել տոլստոյականությունը: Հայրը՝ դժգոհ որդու արարքից, գանգատվում է իր մի բարեկամին.

- Կատարվեց, ինչ որ պիտի կատարվեր: Լսեցի որդուս գրածների մասին և չկարողացա չկիտել հոնքերս: Սակայն, մի բան ուրախացնում է ինձ: Վեճը վարելու համար որդիս ստիպված պիտի լինի կարդալու իմ որոշ աշխատությունները և խորհրդածելու նրանց մասին: Այդ ինձ հուսադրում է, թե մի օր նա էլ կհասկանա ինձ...

Հայ գրիչ շարժողներն ունե՞ն այդ հույսը, թե իրենց հակառակորդները մի օր կհասկանան իրենց: Իհարկե՝ ոչ: Հասկանալու համար պետք է կարդալ հակառակորդի գրածները, մի բան, որ մեզանում չի արվում, իսկ չի արվում որովհետև ծաղրով, հայհոյանքներով խնկված հոդվածները գուցեև հաճույքով գրվում են, բայց ոչ կարդացվում:

Ընկած է հայ տպագրական խոսքը, որից ամեն մեկն օգտվում է իր ցանկության համաձայն:

Օրվա հայ խոսքը - երբեմն՝ մերկ սուսեր, երբեմն՝ բութ տապար, և միշտ էլ՝ անբարոյավետ:

Բանակռվողներին ցավագինորեն պակասում է տարրական բարեկրթություն, պարկեշտություն, արդարախոհություն:

Ընդդիմախոսողի մեջ ոչ ոք ազնվություն ու շիտակություն չի տեսնում:

Անխնա են, որպիսին չէին և վաղը չեն լինելու Թուրքի հանդեպ:

* * *

«Պտույտի ժամանակ հանդիպակաց բլուրի վրա նշմարեցի մի հրեշային պատկեր: Երբ մի քիչ մոտեցա, նկատեցի, որ դա մարդ է: Հասնելով նրան՝ տեսա, որ դա իմ եղբայրներից մեկն է»...

Որքա՜ն հարուստ հոգեբանություն և գեղեցկություն, եվրոպացի քարոզչի այդ անպաճույճ օրինակի մեջ:

Դադարում է մարդկանց միջև գոյություն ունեցող սառնությունը, երբ նրանք հաճախ են հանդիպում իրար: Տարակարծությունները տեղի են տալիս հասկացողության: Մեր կասկածը, հակակրանքը, թշնամանքը շարունակում են աճել, երբ դեռ հեռու են իրենց առարկայից: Ընդհակառակը, մեր այդ զգացումները ամեն անգամ աստիճանական շոգիացումներ են կրում, երբ մոտենում են իրենց առարկային:

«Իմ կարծածը, թե այդ պարոնը»,- հաճախ ասում ենք այն մարդկանց մասին, որոնցից անիմաստնաբար խուսափել էինք, որոնց թյուրիմացաբար չար էինք համարել: Իսկ մեզանում - Աստվա՜ծ իմ - մեր իրականությունն ավելի զարհուրելի է, քան երկու ցեղերի միջև բորբոքված պատերազմը: Պատերազմող կողմերի համար գոյություն ունեն զինադադարը, հաշտությունը, իսկ մեր կյանքում՝ անվերջ իրարակերություն:

Մենք չենք սիրում զինադադարը ներքին ճակատների վրա, որովհետև սովոր ենք ծունկի գալ արտաքին թշնամու առաջ:

Մենք չենք ներում իրար, որովհետև ստրուկին հատուկ հոգեբանությամբ ներում ենք արտաքին թշնամիներին:

«Ամեն օր տեսնում ենք, թե ինչպես մարդիկ, հանուն իրենց կուսակցության, կատարում են այն, որ չէին կատարի իրենց համար, եթե դրանով վտանգելու լինեին իրենց կյանքն իսկ»:

Ատելությունն ու ոխը, բոլորին, գրեթե բոլորին դարձրել են կրքից կուրացած և աչառու: Քչերն են այլևս խտիր դնում միջոցների մեջ, և ոչ ոք չի ուզում հասկանալ, թե կրքոտ վեճերի ժամանակ իսպառ մոռացվում է ճշմարտությունը, որ հայկական վեճը ընդհանրապես թշնամացնում է և ոչ թե համոզում:

Հետևա՞նքը: Կատարյալ բաբելոնյան աշտարակաշինություն, երբ այլևս մարդիկ իրար չեն հասկանում:

Հետևա՞նքը: Բարոյական մի մեծ դժբախտություն: Հասկանա՛նք, սակայն, որ դրանք դեռ դժբախտության ծաղիկներն են, պտուղները կվայելենք վաղը, մոտիկ ապագայում, երբ մեր երկրի գլխին կպայթի թրքական վտանգը, երբ կարիք կզգանք միակամ, կուռ և միահիդեալ ժողովրդի:

* * *

Խոսքը միաժամանակ մեր բարոյական պատկերն է. հասկանա՛նք այդ: Ունունդը մտքի՝ նա իր հերթին ազդում է մեր մտածումների վրա:

Օրինակ՝ չի կարելի ծաղրել սրբությունը և շարունակել երկյուղած լինել նրա նկատմամբ:

Չի կարելի քամահրել մեկին և շարունակել հարգալից լինել դեպի նրա անձը:

Մեր արտաբերած ամեն մի խոսք, ուրիշներից ավելի մեզ է ազդում:

Չի կարելի զազրախոս լինել և բարձր ու կիրթ նկարագիր ունենալ: Ինչպես և չի կարելի անբարոյական, բայց և սրբախոս լինել: Գռեհկաբանելով, մարդս խրախուսում է և սնուցանում իր ստոր մտածումները՝ ուժեղացնելով նրանց: Խուսափի՛ր վայրաբանությունից: Ազնվացրո՛ւ լեզուդ, խոսքդ, իսկ այդ անելու համար, նախ ազնվացրո՛ւ մտավոր կյանքդ:

Թույլ մի՛ տուր, որ «անկոչ հյուրերը» տեղ գրավեն ուղեղիդ մեջ: Մտածումների խստաբարոյություն, - ահա՛ թե ի՛նչ պիտի լինի քո մտավոր կյանքը: Եղա՞ր այդպիսին - դու կլինես վսեմախոհ, ուժեղ և գրավիչ:

Եղի՛ր ճշմարտության քարոզիչը, առավել՝ ճշմարտության ուսուցիչը մեր կյանքում:

Երկու դեպքում էլ՝ եղի՛ր առաքյալ և ոչ անաղ ու անհամ դպիր: Երկու դեպքում էլ՝ վսեմաբան: Քարոզիչը բազմություններ է փնտրում և նրանց ուղղում իր խոսքը: Ուսուցիչը՝ քչերին:

Առաջինին՝ զանգվածն է պետք, երկրորդին՝ աշակերտողներ, հետևորդներ: Ավելի՝ ուսուցի՛չ: Կեղծիքը զինաթափելուց հետո, եղի՛ր կարեկցող և ոչ դատավոր. կարեկցող ուսուցիչ և ոչ անսիրտ մերկացնող: Այդպիսի՛ն եղիր, որովհետև գրեթե անանձնական սխալանքների և հավաքական թերությունների արդյունք է մեր ժողովրդի ապրած անլուր աղետը: Ավելի բարվոք վիճակ չեն ունենում չկատարված պարտականության կնիքը իրենց ճակատին կրող ժողովուրդները: Քո ժողովուրդի մի մասը միայն որպես Հայ և մարդ կատարեց իր պարտականությունը և այսօր հավասարապես կտառապի՝ մյուս մասի տկարության և անպարտաճանաչության երեսից:

Մոտեցի՛ր բոլորին, բոլորի՛ն ուղղիր խոսքդ սիրո և համերաշխության: Եվ եթե քեզ հարցրին, թե ի՞նչ պետք է անել, որ այսուհետև մեր ժողովուրդը հեռու մնա նորանոր աղետներից - պատասխանիր աննման Դեմոսթենեսի խոսքերով՝ «ոչի՛նչ այն ամենից, ինչ որ անում եք»:

Երևա՛ բոլորին, կանչի՛ր, հորդորի՛ր բոլորին, որպես անհանգիստ հոգին վիրավոր Հայրենիքիդ:

Եվ թող գիտենան բոլորը, որ քեզ զբաղեցնողը ցեղիդ գոյությունն է, որ վտանգված է:

Ասա՛ ամեն մեկին, մեկ էլ, հազար անգամ կրկնիր բոլորին, մինչև որ հասկանան ու հարազատեն Ռընանի խոսքերի վսեմ իմաստը. «Հոգևոր եղբայրներ են մի ժողովրդի անդամները: Եվ որպեսզի համերաշխություն տիրի եղբայրների միջև, անհրաժեշտ է, որ ամեն մեկը որոշ բաներ մոռացության տա և մտահոգվի միայն ամենաէականով»:

Դարձի՛ր - ժամանակի պահանջն է դա - դարձի՛ր կենդանի արձագանքը ճակատագրի մարգարեի, որ վաղուց է քարոզում. «Ժողովուրդնե՛ր, պատրաստվեցե՛ք արյան օրվա համար: Պատրաստվեցե՛ք երկուտասան ժամվա համար: Ձիթենու յուղի փոխարեն պատրաստեցե՛ք արյուն և արցունք...»:

Պատրա՞ստ ես դու, ա՛յ ժողովուրդ:

* * *

Ես արդեն լսում եմ քո ձայնը, Հա՛յ երիտասարդ, քո խոսքը, որ ազդում է որպես ջահել գինի:

Ոգևորության հեղեղ են առաջացնում քո հայրենապաշտ շրթունքները:

Անցնում ես, որպես կենդանի մագնիս, որ անդիմադրելիորեն դեպի իրեն է ձգում իր անցած ճամբաների ցանցնված երկաթի փշրանքները - հոգիները:

Դու դառնում ես այն հրաբերան պերճախոսը, որ, դասական ժողովուրդների պատկերացմամբ, իր շրթունքներից դուրս եկած ոսկե շղթաներով իր հետևից քաշ կտար ունկնդիր բազմությունները:

Դու այդպիսին պիտի լինես, քանզի միտքն ու սիրտը թև ու թռիչք են առնում, երբ վեհ է իրենց առարկան, քանզի չի կարելի ողջ էությամբ նվիրված լինել մի վսեմ առաքելության - և չդառնալ ոսկեբերան:

8.
ԱՐԻԱԴԱՎԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Արիությո՛ւն, մեզ պետք է արիություն
այնպիսին, որը չափավորելու կարիքն զգայինք:

Արիությունն է ոստայնանկում ազգերի անկախության ու հզորության դրոշը: Անարիությունը՝ պատանքն ազգերի:

Այն օրից, ընթերցո՛ղ, երբ Հայը վախենալ սկսեց մահից, այն օրից օտարը թագավորեց Հայաստանում:

Ես տեսա մեր վարած ճակատամարտերում, տեսա ամենաընտիրը Հայի - մեռնելու մտքի հետ հաշտված, ամեն գնով հաղթելու վճռականությամբ դեպի թշնամին խոյացող հայ զինվորը: Ճանաչեցի ամենավատը հայի - վախկոտության հանցանքի մեջ բռնված անարին:

Առաջինը կմեռներ ապրեցնելու համար իր ազգն ու նրա զենքի հմայքը. երկրորդը կապրեր ամեն գնով՝ ապրեցնելու համար թշնամու փառքը:

Առաջինը ինձ համար ավելի բարձր էակ է, քան մարդ:

Երկրորդը՝ ավելի անասուն, քան Հայ և մարդ:

Եվ քանի կա այդ վերջինը - թրքությունը իր գոյության ապահովությունը պիտի փնտրի մեր ժողովրդի չգոյության մեջ:

* * *

Հանգիստ սրտով պիտի մեռնեմ, երիտասա՛րդ Հայ, թե քո սերնդի օրով հայորեն բառը, մեր ժողովրդի բարեկամների և թշնամիների կողմից գործածվի քաջորեն բառի իմաստով: Քանզի գիտեմ, թե քանի դեռ իր ամբողջության մեջ քաջ և քաջանուն չէ հայությունը, նրա համար անցած չէ դեռ աշխարհի քարտեզից ազգովին անհետանալու վտանգը:

Ժողովուրդ, պետություն, անհատ - սրանց իրավունք է տրվում ապրելու և ապրում են, երբ պատրաստ են ամեն վայրկյան ապացուցելու, թե գիտեն մահվամբ պաշտպանել իրենց գոյության իրավունքը: Այլապես, սրանք որպես ավելորդ տեղ գրավող իրեր, հարկադրվում են ազատելու իրենց տեղն արևի տակ:

* * *

- Մի՞թե,- Արաքսի ափին, պահախարույկի շուրջը կխոսակցեին հայ զորավարները,- մի՞թե անցյալ գիշեր չլսվեցավ գետնի տակեն մի խուլ որոտում , նման զինուց շառաչմանը:

Վայրագ տիտանն էր, որ կզարթներ ու կկանգներ ի վեր:

- Անտեղի է ասածդ: Իրեն մոտ կհանգչի հաղթական Հայկն ու ինքը սպաննողը: Եթե զարթնի Նեբրութ՝ Հայկը չեր ննջի... (Հուլիոս Պարիլի):

Քանի դեռ ամենահամեստ Հայն իսկ- տղամարդ թե կին - չի կարող այդ խրոխտ անձնապաստանությամբ անգիտանալ թրքական վտանգը, քանի դեռ «Քաջ, ահավոր և անողոքելին՝ Հայկը, իբրև կայծականց Աստված» չի արթնացել հայ մարդու մեջ - բախտին, այո՜, անարժանաբար, միայն բախտին կպարտենք մեր գոյությունը և ոչ մեր բազկին:

* * *

Պատժված անարիություն - ահա երկու բառ, որոնցով պիտի բնորոշել մեր արդի քաղաքական տխուր կացությունը:

Վաղվա մեր վիճակը կարելի պիտի լինի բնորոշել վարձատրված արիություն բառերով, եթե մինչև այդ վաղը, հայությունը հոգեփոխվելով դառնա արի և արիապաշտ:

Արիություն! Գրեթե ոչինչ արժեն մարդկային բոլոր դրական հատկությունները, եթե պակասում է արիությունը: Չկան ներգործող առաքինություններ առանց արիության:

Ճշմարիտ է իմաստուն խոսքը, թե «մեռյալ են նրանց գործերը, որոնք վախ ունեն մահից»:

Անհատ թե ժողովուրդ - սրանք չեն կարող ինքնիշխան տեր դառնալ իրենց կյանքին, ճակատագրին, մինչև որ չհաղթահարեն իրենց անասնական վախը և նրա պատճառները:

«Ես շատ թույլ էի»,- մի հրեա ասում է մյուսին: Այդ խոսքերը, ըստ Հայնեի, կարող են հանձնարարվել որպես moto[8], հրեության մասին գրվելիք պատմության:

Արդյո՜ք, այս երեք բառերի մեջ պետք չէ՞ փնտրել և հայության դարավոր տառապանքի իսկական պատճառը:

* * *

Անարին - դա խրտվիլակն է, որով կարելի է միայն ճնճղուկներից պաշտպանվել, բայց ոչ և անգղներից:

Անարի լինել և անկախ հայրենիք երազել - ծիծաղելի չէ՞ դա:

Անմտություն չէ՞ և՛ ոչխար լինել, և՛ գանգատվել գայլերից:

Դառար ոչխար՝ պատրաստ են գայլերը:

Արիությանն է աշխարհն ու անկախությունը, քանզի «արիներն են անցնում Աստծու ճանապարհով»:

Անկախ Հայրենիքը - որպես Ավետյաց Երկիր - տրվում է մեզ, անապատներում մեր վարած բախումներում արիանալուց հետո: Իսկ արի է նա, որ իր մեջ սպանել է իր կաշվի համար դողացող անասունը և գիտի զինաթափել վտանգն ու մահը, ծիծաղելու նրանց երեսին: Իսկ արի է նա, ու զինակցել է Ամենակարող Ոգու հետ:

Արին նա է, որ գիտի լրիվ կերպով արտահայտել իր մեջ ծփացող անծանոթ ծովը ուժերի:

Արի է ինքնաճանաչը, նա՛, որ ծիծաղում է թվի, նյութի, զենքի գերազանցության, ինչպես և գիտությունների վրա, և ճանաչում է մի հատիկ հոգեբանական արվեստ միայն - մեռնել, երբ պահանջում է պահը, ինչպես արևն է մեռնում:

Արիություն, որ իր մեջ կրում է իր վարձատրությունը - ներքին ուրախությունը՝ թե պիտի հաղթի, և արտաքին հաջողությունը՝ հաղթանակը:

Հայրենասիրությունը միշտ էլ հաղթել է, երբ իր զինակիցը արիությունն է եղել:

* * *

- Հռոմեացիք, պաշարված հին գաղիացիներից, քաշվում են բերդատաճարը Հռոմի և զզվանքով հետ մղում թշնամու առաջարկը, զենքը վայր դնել և հանձնվել:

Իսկ ծերակուտականները, որոնք չէին կարող զենքի դիմել, բայց չէին կարող և որևե կերպով չմասնակցել հայրենի երդիկների համար մղվող ճակատամարտին - հագնում են իրենց ամենաշքեղ զգեստները, դուրս գալիս մեծ հրապարակ, ուր դրված կմնային իրենց փղոսկրյա աթոռները, հանդիսավորապես կատարում իրենց վերջին աղոթքը և վերջ տալիս իրենց կյանքին... Առաքինական այդ օրինակով նրանք հաստատում են թշնամու դեմ ծառացած իրենց որդիներին, թե որքան քա՛ղցր էր մեռնել Հայրենիքի համար: Եվ հաղթում է Հռոմեական Արծիվը:

* * *

Լոզենգրադում է: Խռպոտ շեփորները, ռազմադաշտային թմբուկները և սուր սուլիչները գրոհի հրամանն են տալիս:

Ուռռա՜, առա՜ջ... Բուլղար գումարտակները շարժվում են առաջ: Գլխապետ Զաբրանսկին հրաման է ստացել սկսելու գրոհը:

Հրացանաձիգների մի վաշտի գլուխն անցած՝ նա խթանում է իր ձին, որ վայրկենաբար փռվում է գետնին, գլուխը ցրված՝ հրանոթով: Սպան ոտքի է թռչում, վերցնում սուրը, քաշում ատրճանակը և նետվում առաջ՝ իր զինվորներին հասնելու համար... և գնդացիրային մի համազարկից, փռվում գետին՝ ծեծված ծնոտով:

Նա նորից ոտքի վրա է արնաթաթախ, բայց դժվարանում է խոսել և հրամայել բերանացի, և ահա՛, որպես զորավար Marguerite-ը Floing-ի մոտ, նա նշանացի, մի հաղթական շարժուձևով ցույց է տալիս ամրությունը, որ պիտի գրավել:

Եվ նա նետվում է առաջ, թաշկինակով սեղմած իր զարհուրելի վերքը: Սուսերամերկ, անմատչելի ու վեհափառ՝ նա հասնում է... Նա առաջինը պիտի լինի, բայց ո՛չ... Մի գնդակ փշրում է նրա ծունկը և վերստին փռում գետնին: Սակայն, ահա, հենված մի զինվորի, նա նորից գրոհում է: Ընկնում է և այս անգամ, երբ հաղթական աղաղակները, վերջապես, ազդարարում են հաղթանակը բուլղար առյուծի...

Մի պատգարակի վրա, կազմված թրքական սվիններից, զինվորները իրենց հրամանատարին տեղափոխում են հիվանդանոց, կիսամեռ, բայց հաղթական:

* * *

Ռուս-ճապոնական պատերազմի սկզբի օրերն են: Պետք է փակել Պորտ Արթուրի մուտքը: Հարկավոր են հարյուրի չափ կամավորներ: Ներկայանում են երկու հազար հոգի: Կամավորները՝ փոքրիկ խմբակներով նստած շոգենավերը, թշնամու նավային և ծովափնյա մարտկոցների փոթորկային կրակի տակ պիտի հասնեն նավահանգիստ, մուտքի առջև պիտի խորտակեն իրենց նավերը և, եթե կարողացան, պիտի փորձեն վերադառնալ փոքրիկ նավակներով: Նավապետ Յաշիրան՝ «Ասամա» զրահավորի հրամանատարը, ճամբա դնելով այդ խիզախներին, որպես հրաժեշտի նշան, տալիս է նրանց խմելու արծաթե գավաթից և ասում. «Եթե ունենայի հարյուր որդի, պիտի ուղարկեի բոլորին էլ այդ վտանգավոր ձեռնարկի համար. եթե ունենայի մեկը, պիտի ուղարկեի և նրան:

«Ձեզ ուղարկում եմ դեպի ստույգ մահ և գիտեմ, որ պատրաստ եք մեռնելու: Այժմ վստահեք երկնքին ձեր կյանքը և դեպի գո՛րծ...»:

Ի՞նչ կա ավելի վեհափառ, քան ճապոնացի զինվորի այդ արհամարհանքը դեպի կյանքը և մահը!

Արիները, «Գայ է Նիպոն բանզայ» (Թող ապրի՛ մեծ Ճապոնիան) աղաղակներով, խորտակում են նավերը, խորտակում են նաև իրենց կյանքը, բայց ապահովում հայրենի զենքի հաջողությունը:

* * *

Բախտ ժպտա խիզախաց:

«Հողմերն ու ալիքները միշտ էլ զորավիգ են հանդիսանում համարձակ նավորդներին»: Ինչպես բնության գեղեցկությունը մի՛շտ էլ զգեստավորում է մարդկային մեծագործությունները - արիության գործերը:

Այն գիշերը, ասում է շվեյցարական ավանդությունը, երբ որ երեսուներեք հայրենասերները, հավաքված՝ Լիվցերն լճի ափին, կերդվեին մեռնել հայրենիքի ազատության համար, անսպասելիորեն քչքչալ սկսեցին երեք առվակներ, հակառակ որ ձմեռ էր և երկիրը ծածկված խոր ձյունով: Այդ առվակները մինչև օրս էլ կոչվում են սուրբ աղբյուրներ:

Երբ որ Արնոլդը, ուխտված շվեյցարական լեռնականներից մեկը, Ալպերի գագաթին, սառցակույտերի շուքի տակ գրկում է դեպի իրեն ուղղված ավստրիական սվինների մի ամբողջ խուրձ և խրում կրծքի մեջ, որպեսզի պատռի թշնամու շղթան իր ընկերների համար, այն ժամանակ այդ հերոսները իրավունք չունե՞ն իրենց գործի գեղեցկությանը միացնելու և շրջապատի գեղեցկությունը:

Ամենաանշուք իրերի շրջանում, ճշմարտության կամ հերոսության գործը, կարծեք անմիջապես դարձնում է երկինքն իր տաճարը, արևն՝ իր կերոնը... « Բնությունը մեկնում է իր ձեռքերը՝ գրկելու մարդը, բավական է, որ նրա մտածումները լինեն նույնքան վեհ, որքան իրենը»:

Երևակայում և օրհնում եմ քաջությունը հեթանոս Հայի, որպես տղամարդու բարձր հատկություն: Նախաքրիստոնեական հայության մոտ այն աստիճան զարգացած էին քաջությունն ու իր պաշտամունքը,

որ Վահագն Արքան, ժողովրդի կողմից արձանացած է հեթանոս երգերի մեջ, որպես գերբնական ծնունդ «երկնի, երկրի և ծիրանի ծովի»: Նախապատկերը քաջության, Աստվածացյալ Վահագն, որ իր անհուն քաջությամբ կքաղեր վիշապները Հայոց աշխարհից! Վիշապաքաղ Արքան Հայոց, որի պատկերը կպաշտվեր Տարոնի Վահեվանյան մեհյաններում:

Երևակայում եմ և ապրում գեղեցկությունը Ավարայրի և նրա հերոսների անմեռ գործի, երբ, ըստ Խորենացու, «ամեն մարդու անձն իր եկեղեցին է, նույն ինքը քահանա». երբ հայկական արիությունը կսրբացներ հայ ռազմիկն ու այն վայրերը, ուր կթափվեր նրա նվիրական արյունը:

* * *

Այսո՞ր...

Կասկածելի և անօգուտ եմ համարում անարի Հայի հայրենասիրությունը:

Արիություն - սա պիտի լինի քո սերունդի կրոնը, հա՛յ երիտասարդ: Արի և արիադավան, - այդպիսի՛ն պիտի լինի հայությունը, եթե ուզում է որպես ազգ ապրել և վա՛ղը: Հա՛յ երիտասարդություն, պիտի կարողանա՞ս, արտաքին վտանգի ժամանակ ձեռքդ խղճիդ գոչել. - ես քո կենդանի սուրն եմ, Հայրենի՛ք, որ քեզ հաղթություն պիտի բերի:

Պիտի չկարողանա՞ս, - իզո՞ւր ես ապրում:

Պիտի չարիանա՞ս, - վա՛յ քո ժողովրդին ...

9.
ՀԱՅՐԵՆԻՔ ԵՎ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Երբե՛ք և ոչ մի տեղ՝ առանց հոգևոր Հայրենիքի:

Քրքրի՛ ազգերի պատմությունը և երես առ երես պիտի հանդիպես հետևյալ ճշմարտության. ժողովուրդները նախ և առաջ իրենց ամենաընտիր որդիների արյունով կսրբեն իրենց երկիրը և ապա այդ սրբացած հողի վրա կբարձրացնեն շենքն իրենց անկախության:

Այո՛, նախ հերոսների և նահատակների գերեզմանատուն, ապա՝ ազատ և երջանիկ Հայրենիք:

Այլ կերպ չի ստեղծվել և ոչ մի հայրենիք, այլ կերպ չի ստեղծվելու և յոթնիցս սրբազան քո՛ Հայրենիքը:

* * *

Որո՞նք են լինելու վաղվա Հայաստանի սահմանները:

- Նրանք, որ պիտի գծեն հայ զինվորի արիությունն ու հայրենասիրությունը:

Ուիլսընն, բախտ, հայկական սվին - սրանցից միայն վերջինի գծած սահմանները կլինեն իրական և կայուն:

Ինչպիսի՞ Հայրենիք կունենանք վաղը:

- Ինչպիսին որ կառուցվում է այսօր մեր մտքի և հոգու մեջ:

Երբ որ մեր սիրտը և ուղեղը լցնողը ապառաժահիմն ու հաղթական հայրենիքի գաղափարն է՝ վաղվա Հայաստանը չի կարող ավազահիմն, ապազոր և դժբախտ լինել:

* * *

Ազգերն ունեցել են, ունեն ու պիտի ունենան իրենց արժանի ճակատագիրը: Արի և հայրենապաշտ, որ ասել է՝ հզոր,- ահա՛ անկախության արժանի ժողովուրդը:

Քեզնից զատ - խրատում է պատմությունը - ո՛չ ոք չի կարող բարեփոխել քո դրությունը:

Ինքնափրկություն - ահա՛ պատմության թելադրանքը:

Հայը հասկացա՞վ այդ - նա կանգնած կլինի փրկության անշեղ ճամբին:

Բայց կան, դեռ կան որոշ տարրեր մեզանում, միամիտ, «հիմա՛ր սրբության աստիճան», որ կարծում են, թե կարելի է և ազգ կոչվել, և քաղաքական մուրացիկ մնալ, թե կարելի է մուրալ անգամ պետականորեն անկախ ապրելու իրավունքը: Սրանք կուզեին, որ աշխարհի ուժեղները և շնորհ անեին իրենց, և պաշտպանեին այդ շնորհը արտաքին վտանգից: Սրանք դժբախտություն ունեն ուժեղ համարելու հայությունից զատ բոլորին, բոլոր ժողովուրդներին: Չեն հասկանում, թե հզորությունն ու տկարությունը հարաբերական հասկացողություններ են, թե ժողովուրդներից և ոչ մեկ առանձին բացարձակորեն ուժեղ չէ, ինչպես և ոչ մեկն է նույն ձևով ամենաթույլը: Գոյություն ունեցող զանազան դաշինքների դրությունը թվապես տկար ժողովուրդներից շատերին է դարձրել ուժեղ և ապահով: Տկարացնել ուժեղ հարևաներին և պաշտպանություն ցույց տալ տկարներին ի գին սրանց զենքի բարեկամության , ահա՛, հաճախ, պետության արտաքին քաղաքականությունը: Հեռատես ժողովրդի քաղաքականությունը իր գործունեության համար ընդգրկում է մի առաջնորդող նպատակ և, նրա համաձայն, որոշում իր հավանական թշնամին և զինակիցը - նպատակ, որի ուղղությամբ առաջանում է համառ ու վճռական քայլերով և, օգտվելով սեփական և զինակից ուժերից՝ չեզոքացնում է խոչ ու խոչընդոտներն իր ճամբին: Նա նախապատրաստում է բարեհաջող պայմաններ իր ռազմագիտության համար, երբ պետք է զենքի դիմել: Դաշինքների միջոցով նա ապահովում է այս կամ այն պետության զինակցությունը կամ չեզոքությունը, օգտագործում հասարակական կարծիքն իր դատի համար, երբ պետք է պատերազմել: Նա չի արհամարհում ամենատկար զինակցին անգամ, բայց միշտ էլ գերադասում է ուժեղը, այդպիսին համարե-

լու ոչ թե թվով մեծ ժողովուրդը, այլ նկարագրով, մշակույթով և ռազմունակությամբ գերազանցը:

Միևնույն նպատակի համար աշխատում են երբեմն մեկից ավելի սերունդներ: Հաջողությունը կախված է լինում պայքարը վարող ծայրահեղ հետևողականությունից և համառանքից:

Քաղաքականության մեջ պարտվում, ծախողվում են այն ժողովուրդները, որոնք չունեն որոշ և հստակ նպատակ, կամ երբ ունեցածը խստորեն ազգային չէ:

* * *

Պատերազմը - դա քաղաքականության շարունակությունն է և մի վճռական միջոց քաղաքականության համար: «Նա այնպես է զարգանում քաղաքականության մեջ, ինչպես երեխան՝ մոր արգանդի մեջ»:

Քաղաքականությունն է վարում աշխարհի և անհատ պետության բախտը, մեծապես հեշտացնելով վերջինների սրի գործը:

Ուզում եմ կրկնել, թե իմաստուն քաղաքականությունից մեծապես շահել են և շահում են թվապես, էթնիկ տեսակետով և աշխարհագրորեն տկար ժողովուրդները:

Ուրեմն, մեզ մնում է որոշ ուժ և արժեք ներկայացնել միջազգային փոխհարաբերությունների մեջ, ողբերգորեն մենակ և տկար չմնալու համար:

Այդ նպատակին պիտի ձգտի հայությունը, խորապես գիտակցելով, թե ազգերն այն են, ինչպես որ կզգան իրենց - եթե չեն՝ կդառնան վաղը. թե աղետալի է տկարության ինքնաներշնչումը, որից պիտի ազատվի մեր ժողովուրդը. այլապես նա կմնա անհուսորեն տկար, ինչպես որ զգում է իրեն, այլապես կմնա անհայրենիք, այսինքն՝ պարարտացուցիչ աղբ իրենից ուժեղ ժողովուրդների համար:

* * *

Հայրենի՛ք: Այդ հասկացողությունը պատկանում է ավելի բարոյական իրերի կարգին, քան նյութական:

Դա, հայրենի հողը լինելուց զատ, «որին նախախնամությունը շղթայել է մեր մարմինը ու հոգին», միությունն է նաև նրանց, որոնք ապրել են, որոնք կապրեն և որոնք պիտի ապրեն:

«Մեռելների ածյունն է ստեղծում Հայրենիքը»,- ասել է Լամարտինը:

«Ուր հայրեր՝ այնտեղ Հայրենիք»,- պատգամել է Նիցշեն:

«Դուք,- ասել է Ժորեսը,- դուք կապված եք այդ հողին այն ամենով, որ գոյություն է ունեցել ձեզանից առաջ, այն ամենով, որ ստեղծել է ձեզ, այն ամենով, որ դուք կստեղծեք, անցյալով և ապագայով, գերեզմանների անշարժությամբ և օրորոցների երգով»:

* * *

Հայրենի՛ք: Երկյուղած սեր և հարգանք դեպի մեր նախահայրերի հիշատակը, դեպի մեր կրոնը, որ ցեղի սիրտն է, դեպի մայրենի լեզուն, որ հայրենասիրության թթխմորն է, դեպի տոհմիկ գրականությունը և արվեստները, որ ցեղի մտքի և հոգու կյանքն են, ազգային պատմությունը, որ «ցեղի հոգին ամրացնելու ճիգերի պատմությունն է», իրար հաջորդող սերունդների հայրենի հողի վրա թափած քրտինքն ու արյունը, գեղջուկի հորովելն ու Տիգրան աշխարհակալի սուրը, դեպի Անիի ավերակներն ու Հայկի եռաթև աղեղը, դեպի մեր հեթանոս աստվածներն ու փառատաճարները, անսասան հավատը դեպի մեր մեծ հույսը... Գումարի՛ր, ընթերցո՛ղ, գումարի՛ր այդ բոլորը և կստացվի հոգևոր Հայրենիքը:

Նվաճելի է նյութական Հայրենիքը, հոգևորը՝ գրեթե ոչ:

Երբ կորցնելով իրենց անկախությունը, շատ անգամ՝ և հայրենի երկիրը, ժողովուրդները կշարունակեն իրենց հոգու մեջ ապրեցնել անյութեղեն, միստիկ Հայրենիքը - նրանց աշխարհագրական Հայրենիքը երկար չի մնա օտարների ձեռքին:

Երբ թրքությունն այսօր կաշվից դուրս է գալիս սրբելու մեր ցեղագրական հետքերն իսկ մեր պատմական Հայրենիքում, ես ծիծաղում եմ նրա անհատակ տգիտության վրա և հարց տալիս. - Պիտի կարողանա՞ս սպանել հայ ժողովրդի պատմական հիշողությունը: - Ո՛չ,- նրա փոխարեն պատասխանում է իրականությունը: Ասել է՝ իմ երկիրը ժամանակավորապես մնալով օտար լծի տակ, չի կարող դառնալ այդ օտարի Հայրենիքը, քանզի Արևելքի անուղղա խուժը, որ թրքություն է կոչվում, ոչինչ չունի տված այդ երկրին - ո՛չ մեծ մեռելներ, ո՛չ միտք, ո՛չ զգացում... այն ամենը, որ անյութեղեն Հայրենիք է ստեղծում:

* * *

Այո՛, մարդկային ուժերից վեր է մի ժողովրդի պատմությունն սպանել, մի ժողովրդի հոգևոր Հայրենիքը նվաճել: Սակայն, եթե նույնիսկ դա հնարավոր լիներ, արդյոք թույլատրելի՞ է դա: Ո՛չ, հազար անգամ ո՛չ: Որովհետև սպանել մի ժողովրդի ազգայնությունը, կնշանակի սպանել նրա ցեղային հանճարը, կնշանակի մարդկությունը զրկել քաղաքակրթական մի ստեղծագործ ազդակից, որպիսին կհանդիսանան ազգությունները: Աշխարհն ու իր խաղաղությունը ոչինչ կշահեն, եթե միայն մենք վայր դնենք սուրը, որ մերկացրել ենք հանուն մեր ազգային անկախության և ի պաշտպանություն մեր ցեղի առանձնահատուկ հանճարի: Չկա միահեղալ և միակամ մարդկություն: Կան ինքնանկախ ու ինքնիշխան ազգեր միայն- մի դրություն, որ պիտի շարունակվի մնալ նույնը և մեր՝ որպես ուրույն ազգություն չքանալուց հետո: Միջազգային մրցումներն ու բախումները պիտի շարունակվեն տեղի տված ազգության գերեզմանի վրա:

Մեր օրերում, երբ մեծագույն թագավորությունները բաժանում են ճակատագիրն «այն նավերի, որոնք չափից ավելի են բեռնված», երբ մեծ պետությունները դատապարտված են կորչելու, վերածվելու ազգային ուրույն միավորների, հայ համայնավարները, որոնք ճգնում են սպանել հայ ազգայնության գաղափարը, կամենալով, որ Հայաստան երկիրը բաժանված մնա Ռուսիայի և Թուրքիայի միջև, կատարում են միաժամանակ և հակաքաղաքակրթական մի քստմնելի դեր:

Իսկ մենք, դավանելով անկախ Հայրենիքի գաղափարը, պաշտպանում ենք քաղաքակրթական մի լուրջ ազդակ:

Ազգերի հանճարը ստեղծագործ, իսկ նրա արտահայտությունը հորդաբուխ է լինում միայն բացարձակ անկախության մթնոլորտում: Ա-հա՛ թե ինչու մարդկության ավելի օգտակար լինելու համար, ժողովուրդները պիտի լինեն ինքիշխանորեն ազատ և անկախ:

Անկախությունը, անկախ Հայրենիքը, ինչպես տեսնում ես, հա՛յ երիտասարդ, իրավունք լինելուց զատ և պարտականություն է, որից խուսափող ժողովուրդները կորցնում են իրենց բարոյական գոյության իրավունքը:

* * *

Չկան մեծ ու փոքր ազգեր: Կան հավասար իրավունքներով անդամները մարդկության ընտանիքի: Եվրոպական դիվանագիտության կեղծ լեզուն է ստեղծել «մեծ» և «փոքր» անունները: Ճշմարիտ մեծություն չի թվական գերազանցությունը: Փոքրիկ Հելլադան իշխում էր պարսից անծայրածիր թագավորության վրա: Այսօր էլ երկայնամազ Չինաստանը չի համարվում ազգերից մեծագույնը: Կարմիր լաթը երկրպագող սակավաթիվ հայերի համար գուցեև թրքությունը «մեծ» ազգ է, որին պիտի ծառայի «փոքրիկ» հայությունը. մեզ համար սակայն, Անիի փլատակների մեջ ավելի մեծություն կա, քան թուրք ցեղի խուժական հոգու մեջ:

* * *

Չինվորական եմ, չեմ սիրում երկարաբանել. - թող, ընթերցո՛ղ, թող մտքերս հայրենասիրության մասին, արտահայտեմ աֆորիզմների ձևով. -

- Վաղը պիտի անասնանան ու կործանվեն այն ժողովուրդները, որոնց որդիներն այսօր ուսումնասիրում են իրենց պատմությունը Մարքսից կամ Լենինից և ոչ իրենց նախահայրերից սկսած:

- Չկա՞ հայրենասիրություն - չկա հոգևոր Հայրենիք: Եղածը լոկ աշխարհագրական սահմաններ են, իսկ նմանը ավազահիմն է, դյուրակործան, անապագա:

- Չկա հրեշ, որ կարողանար գերազանցել անհայրենասերին, որ հոգեբանորեն անտարբեր է դեպի իր երկիրն ու ժողովուրդը:

- Անհայրենասեր ժողովուրդը, եթե այսօր չէ, անհայրենիք կդառնա վաղը:

- Սուրբ, հերոս, բարեգործ - սրանք կենդանի անհեթեթություններ են մեր կյանքում, եթե միաժամանակ հայրենասեր և արի չեն:

- Անհայրենասեր Հայ - այդ դժբախտը կնմանվի այն թագավորին, որի մասին պատմությունն ասում է հեգնանքով, - «միայն գահ բարձրացավ»:

- Ժողովուրդների մեջ մի ստոր տարր կա՝ անհայրենասերները:

- Անհայրենասեր ժողովուրդ, ասել է՝ անիդեալ և աննպատակ ժողովուրդ, որ իրենից կներկայացնի մի տրցակ, բայց ոչ թե մի մարմին, «անհատների փոշի», բայց ոչ գրանիտե ժայռ, որպիսին պիտի լինեն ժողովուրդները՝ միջազգային արնոտ փոթորիկներից պաշտպանվելու համար:

- Հերիք է, որ մի ժողովուրդ դառնա անհայրենասեր, որպեսզի համարվի պատրաստի որս և նրա երկիրը բաժանվի իր հարևանների միջև:

- Ապագան վտանգված ժողովուրդը, ինչպիսին է մերը, նորանոր աղետներից խուսափելու համար մի հատիկ միջոց ունի - բարձր հայրենասիրությունը, այնպիսին, որով քաղցրանում են մեր հավաքական, թե անձնական ցավերը:

- Հայրենասիրությունը ժողովուրդներին ներշնչում է առաքինություններ, որոնց շնորհիվ նրանք դառնում են և մնում ապահով և հարգված:

- Գինետնային հայրենասիրությունը, որ բավականին դավանողներ ունի մեր մեջ, այնքան էլ հեռու չէ անհայրենասիրությունից:

- Դատապարտելի է նաև պայմանական հայրենասիրությունը: Հայրենիքը պիտի սիրել անկախ իր քաղաքական ռեժիմից, ինչպես և անկախ մեր քաղաքական համոզումներից:

- Կան այնպիսիները, որոնք իբրև թե սիրում են Հայրենիքը, բայց որովհետև սիրում են և մարդկությունը, գործնականում մնում են անտարբեր, թե՝ դեպի մեկը և թե՝ դեպի մյուսը: Հակազգային ուժ են և՝ սրանք: Սխալվում են ազգային պարտականության դասալիքները՝ կեղծ ընկերվարականը, համայնավարը, անիշխանականը: Հայրենասեր լինել՝ չի նշանակում օտար ժողովուրդների թշնամին լինել: Դա նշանակում է, թե այդ օտարները կարող են մեր թշնամին դառնալ:

- Հզորանալու մի իմաստուն ճիգ է հայրենասիրությունը:

- Ինքնապաշտպանության բնազդից մղված՝ ժողովուրդները ուժի և կորովի նորանոր աղբյուրներ կփնտրեն, որովհետև գիտեն, որ «Աստվածներն իսկ անցան ուժեղի, հաղթողի կողմը»:

10.
ՉԱՐԱՐՎԵՍՏ ՏԱԿԱՆՔՆԵՐԸ

Ազգերն ամենից շատ տառապել են և կտառապեն իրենց տականքների երեսից:

Պատմության մեջ նախընթացը չունեցող մի ողբերգություն է խաղացվում Հայոց աշխարհում, մի արնոտ խաղ, որի գործող անձինք, որի դերակատարներն են բռնությունը, բռնության կենդանի գործիքները՝ հայ ժողովրդի տականքը, և բռնության զոհերը՝ ինքը, հայ ժողովուրդը:

Առաջին դերակատարին պետք է հարատևել իր ոճրառատ գոյությունը, և ահա՝ նա դիմել է աշխարհի պես հին, ծանոթ միջոցին. նա պաշտոնի ու ծառայության է հրավիրել հայորեն ու մարդկորեն ընկածներին, վարձելով սրանց չարարվեստ միտքը, կամքը, ցանկությունը:

Նոր գյուտ, թե այն բարոյազուրկ գործելակերպը, որին դիմել է հայությունը գիշատող կարմիր բռնությունը: Նա համարձակ կրկնությունն է դասական այն տմարդ միջոցների, որոնց հենված՝ արվեստապես հարատևել են անցյալի բոլոր տեսակի բռնակալությունները:

Երկրորդին՝ բռնության ծառաներին պետք է ապահովել իրենց հանապազորյա անսուրբ հացը:

Երրորդին՝ ապրելու համար պետք է անբռնադատորեն զարգանալու և ստեղծագործելու հնարավորություն:

Երեք կողմերն էլ ապրել են ուզում - և՛ բռնակալը, և՛ իր գործիքները, և՛ իր զոհերը:

Անխուսափելի պարտության սարսափով խելագար բռնակալությունը իր մոլեգնության հետ կրկնապատկում է ժողովուրդի չարչարանքները:

Չարչրկվող ժողովուրդն իր հերթին՝ վերջնական հաղթանակի անմեռ հույսերով սպառազեն, կրկնապատկում է իր համառությունը - հրաժարվում զինաթափվել հոգեբանորեն:

Ահա՛, այսպես, կյանքը Հայոց աշխարհում դառել է միահեծան իշխանություն Կարմիրների, երեսուն արծաթ՝ սրանց գործիքների, ամենոօրյա Գողգոթան՝ մեր ժողովուրդի համար:

* * *

Այլ պիտի լիներ ժողովուրդների պատմությունը, եթե գոյություն չունենային ընկածներն ու ընկածությունը մարդկային: Առանց սրանց, գոյություն պիտի չունենար բռնությունը, որ անզիջող վատերի սև գործերով է շնչել բոլոր դարերում:

Աներևակայելի է բռնությունը առանց իրեն ուժ տվող և իր գազանություններն արդարացնող չարագործների: Աներևակայելի է բռնավորը հոգեբանական մի այնպիսի մթնոլորտում, ուր չի ծախվում մարդը բարոյապես, ուր մարդը գայլ չէ իր նմանների համար:

Մարդկային ազգը տառապել է և կտառապի իր տականքների երեսից:

Իրենց տականքները - ահա՛ ազգերի իրական թշնամին:

Իրենց տականքները - ահա՛ ազգերի գոյությունը հաճախ և հաճախ դժոխքի վերածող ամենազորեղ ազդակը:

Ազգորեն ու մարդկորեն ընկածներն են կարելի դարձրել ապերասան բռնակալությունը Ներոնների, Ցեզար Բորջիաների, Համիդների և նմանների:

«Պիտի ուզենայի անգրագետ լինել»,- կբացականչեր մեկը Հռոմի թագավորներից՝ մի դժբախտի մահվան դատավճիռն ստորագրելիս: Դա Ներոնն էր, երբ դեռ աշակերտում էր Սենեկային:

Մի օր, սակայն, իմաստասեր խորհրդականի փոխարեն Ներոնին կշրջապատեն ընկածները, չարերը և... նա իր հրեշություններով կգերազանցի պատմության ծանոթ բոլոր բռնակալներին:

Այսպես է աշխարհը: Ժողովուրդները կշարունակեն տառապել իրենց տականքների երեսից: Դեռ ժողովուրդների կյանքը կշարունակի մնալ մի արնոտ ողբերգություն, որի գործող անձինք երեքն են - բռնությունը, սրա ծառաները և սրա զոհերը:

* * *

Միշտ էլ, երբ քաղաքական իրերի դժբախտ բերումով օտարն է իշխել Հայաստանում, համարձակ գլուխ է բարձրացրել մեր ժողովրդի տականքը՝ ազգորեն հերձվածը, հոգու ստրուկը, տկարը, մեղմ ասած՝ ազգային ինքնագիտակցության և ինքնահարգանքի զգացումից զուրկ ցանցառաթիվ տարրերը:

Այսօր կարմիր սատրապություն է Հայաստան երկիրը, և բռնությունը վերստին կյանքի և պաշտոնի է կոչել ծանոթ տարրերը: Այս անգամ, սակայն, ոչ թե երկրի սահմաններում, ուր այդ տարրերի թիվը - պատի՜վ երկրի հայության - աննշան է, գոյություն չունենալու աստիճան, այլ մեր գաղութներում: Տարաշխարհիկ հայության որոշ տարրերը, անցյալի իրենց պատմական փոքրոգությունը, իրենց դասալքությունը մեր վարած ազատագրական պայքարում՝ «խոսքով ու մոխրով» ապաշխարհելու և երկրի հայության հոգեպես չարչարակից լինելու փոխարեն, իրենց դավաճան ընթացքով չարչարել են տալիս նրան:

* * *

Հոգեբանական անդամահատություն - ահա՛ երկրում տեղի ունեցողը: Կարմիր հյուսիսից տրված հրամանի հիման վրա, բարոյական անդամահատության է ենթարկվում երկրի հայությունը, նրա հոգևոր էությունը: Բռնի փորձեր են կատարվում մեր ժողովրդի հավաքական սրտից կտրել, նետել իր բոլոր սրբությունները, ինչպես և մարդկային այն բոլոր առաքելությունները, որոնց շնորհիվ միայն ազգերը կապրեն իրենց, կստեղծագործեն մարդկության համար:

Զոհը կգալարվի ցավերի մեջ, մերթ աղերսելով, մերթ սեղմելով բռունցքը:

- Կտրի՛, պարո՛ն, կտրի՛, - ասում էր բոնապարտյան զինվորը իր վերքը մաքրող բժշկին, - մի քիչ էլ. և ահա՛ դուք կտեսնեք թագավորը:

- Կտրատե՛ք, քրքրե՛ք հոգիս, մի քիչ էլ - և դուք իմ էության խորքում կտեսնեք Մայիս Քսանութի հպարտ հեղինակին,- ասում է Երկրի հայությունը, իրեն հոգեբանորեն անդամահատության ենթարկողներին:

* * *

Շարունակվում է անդամահատությունը:

Մեկիկ, մեկիկ հայության սրտից և ուղեղից փորձում են հեռացնել այն ամենը, որի շնորհիվ միայն, որպես ազգ նա կարողացել է դարերով դիմագրավել իսլամ Արևելքի հայասպան փորձերին:

Ո՞ր մեկը, սակայն, Հայոց սրբություններից ո՞ր մեկն արմատախլել հայ հոգուց: Բոլորը: Բայց դա կնշանակեր դիակի վերածել, սպանել հայությունը:

- Մոռացի՛ր Մայիս Քսանութը,- գոչում են, սպառնում Երկրի հայության, գաղութի ապազգայնացած տականքները:

Աղմկում, հայհոյում, բռունցք են սեղմում հայորեն ընկածները, առանց հասկանալու, որ դա միևնույն է՝ թե ասեին Մասիս լեռանը - գնա՛, կորի՛ր տեղիցդ:

- Բոլշևիզմը սպանում է Հին Աստվածները, առանց նորերը տալու, իսկ ազգերը չեն ապրել և չեն կարող ապրել առանց Աստվածների,- պատասխանում է Երկրի դառնացած հայությունը:

- Մոռացի՛ր սրբություններդ, մեռելներդ, հերոսներդ, քանզի այդպես են կամենում հրեա Զինովևը և թուրք Քեմալը,- մոլեգնած կանչում են Կարմիրների գաղութային կապարճակիրները, առանց հասկանալու, որ իրենց «մոռացի՛ր»ը նշանակում է «մեռի՛ր»:

- «Տարաշխարհներում օտարացածի և այլասերվածի ծեր այլանդակ ապրումներով մի՝ չափեք իմ ազատապաշտ հոգին, լռե՛ք, եթե չեք կարող վահան ու պաշտպանություն ընծեռել ինձ, լռե՛ք և մի՝ խրախուսեք իմ դահիճների հոգեսպանության փորձը: Մի՝ գրգռեք Կարմիր գազանը»:

Հայության, մասնավորապես Երկրի հայության այդ հերոսական կեցվածքից կատաղած, ծանոթ «փողոցը» աղմկում է անլսելի. «Խա՛չ հան այդ ապստամբ ժողովուրդը, խա՛չ»:

* * *

Ամեն անգամ, երբ մտածում եմ այդ չարաբաստիկ հայ անունների մասին, պատկերացնում եմ այն տեսարանը, որ տեղի է ունեցել հրեական ամբոխի և Հրեաստանի փոխարքայի միջև:

Ամբոխը. - Եթե, - մատնանշելով Նազովրեցուն,- եթե ազատ արձակես սրան, կնշանակի Կեսարի բարեկամը չես:

Պիղատոսը. - Ձեր թագավորի՞ն խաչ հանել տամ:

Ամբոխը. - Մենք ուրիշ թագավոր չունենք Կեսարից զատ:

Պատմությունը. Ինչպիսի՜ խոստովանություն. հրեական շրթունքներից: Դա հանձնումն էր մի ժողովրդի ազատության ու պատմության: Պիղատոսը հաճույքով ընդունում է այդ հաստատումը և Նազովրեցուն հանձնում խաչելու:

* * *

Նույն տխուր տեսարանը և այսօր, մեզանում:

Նույն ամբոխը, դատավորը՝ նույն: Տարբեր է միայն զոհը գերագույն: Այսօրվանը Հիսուսը չէ, այլ՝ մեր Անկախության Գաղափարը: Նույն աստվածասպան ամբոխն է, մեր ցեղի վատասերված տականքը, որ օտարի միջոցով խաչել է տալիս այն ամենը, ինչ որ ազգային է: Նա կատարողն է հանձնումը մեր Ազատության ու Պատմության և շնականորեն հայտարարում.

- Մենք այլ թագավոր չունենք Կեսարից զատ:

* * *

Մի սրտառուչ համերաշխություն՝ ստելու, դաղելու, քծնելու մի չտեսնված մոլեռանդություն, համառանք և վճռականություն է տիրում մարդկորեն ընկած այդ ազգադավ արարածների շարքերում, որոնք ազգ ճանաչելու և սիրելու ո՛չ արժանիքն ունեն, ո՛չ էլ երջանկությունը, որոնք մի կտոր անսուրբ հացի և իրենց անասնական հանգստի համար միշտ էլ արտաքին թշնամու հետ են եղել: Իրար բերան թքած կարծեք լինեն բոլորը, բոլոր հակամայիսքսանութականները:

Մշակած ու սրբագործած մի գործելակերպ ունեն սրանք, որքան հանճարեղ, այնքան բարոյազուրկ:

- Իրենց դեմ ուղղված ամեն մի հարվածը, չարամիտ վարպետությամբ, ընդունել ուղղված խորհրդային իշխանության հասցեին, այդ վերջինը ավելի ևս գրգռելով Երկրի հայության դեմ:

Քննադատեցե՛ք, թքե՛ք, խարազանե՛ք այդ հոգեպես բորոտներին, և վաղը իրենց թերթերում կկարդաք, թե ձեր զայրույթի քննադատական խոսքը ուղղված է եղել Հայաստանի օրվա վարիչների հասցեին:

Ծաղրե՛ք, ծանակե՛ք, ծաղկե՛ք այդ հոգեպես խեղճ արարածներին և վաղը իրենց փողոցային թերթուկներում պիտի տեսնեք, որ ձեր զզվանքի խոսքը հայադավ նպատակով ընդունել են իրենց տերերի և ոչ իրենց հասցեին:

Փորձեք որևե տեղ, այս կամ այն առթիվ բանախոսել ամենաակադեմիական նյութի մասին, այդ հայանուն վատերը, անսպասելիորեն կնետվեն առաջ, հիստերիկ ճիչեր կարձակեն, ռեկլամային աղմուկ կհանեն, խուճապ կստեղծեն, որ ժամեր անց սկսեն իրենց թղթե հարձակողականը - թզուկների արշավանքը հսկաների դեմ - որ հայհոյեն, հայհոյեն մե՛կ էլ, մինչև յոթներորդ քրտինքը, մինչև որ ուժասպառ կլինեն, մինչև որ Երևանը կլսի այդ շնորհունակների դոնքիշոտության մասին:

Այս է, այսպիսին է մեր ցեղի տականքը, ներքին թշնամին - դրուժան, դավադիր, հակահայ գործնականում:

Իր անսուրբ հացը կամ քաղաքական սիրախաղը ծանոթ հոսանքի հետ ապահովելու համար, մի աննախընթաց մոլեռանդությամբ, նա գրգռում է խորհրդային իշխանությունը Երկրի ժողովրդի դեմ, իր չարագործությունը հակադաշնակցականություն համարելու, երբ կատարածը իրապես հակահայկականություն է:

Այսպես, հա՛յ երիտասարդ, երկրի սահմաններից դուրս որոշ տականքներ Հայաստանի ժողովրդի նկատմամբ կատարում են գրգռիչի դեր:

Քո անողոք դատաստանին հանձնելու սև արարքներն այդ տականքների, որոնք տմարդորեն թույն ու քացախ կավելացնեն մեր՝ քաղաքականապես դժբախտ ժողովրդին խմելու վիճակված դառնադառն բաժակին, զայրույթի և զզվանքի իմ խոսքը կուղղեմ ո՛չ թե բռնության, այլ իր հայակերպ գործիքներին:

11.
ԱՌՅՈՒԾԱԾԻՆ ՄԱՅՐԵՐ

Մայրերի ափի մեջ
պիտի փնտրել ազգերի ճակատագիրը:

Տկարության և կեղծիքի դեմ սկսածդ պայքարի մեջ մենակ չես դու, հա՛յ երիտասարդ: Դու պիտի ունենաս քո մեծ ու վճռական զինակիցը - հայ մայրը:

Ինչպիսի՜ աստվածային հաճույք մարտնչողի համար՝ լսել խրախուսիչ ձայնը հայրենակրոն մոր:

Ո՞վ չգիտի, թե ազգային տագնապների օրերին, երբ հայրենասիրորեն կբաբախի տառապող կնոջ սիրտը՝ կորած չէ դեռ ամեն հույս:

«Միշտ էլ հիշենք, - ասում է գաղիական պատմությունը, - հիշենք, թե մեր հայրենիքը ծնված է մի կնոջ ստինքից, նրա սիրուց և արցունքներից, այն արյունից, որ նա թափեց մեզ համար»:

* * *

Մոր ազդեցությունը - որպես դաստիարակչուհին և հոգևորիչը մարտնչող սերունդների - նրա հրաշագործ ազդեցությունը այն ժողովուրդների համար, ինչպիսին է մերը, կմնա միակ լծակը, որ պիտի բարձրացնի և մեր ազգային դատը, որի ծանրությունը այսօր սարսափեցնում է միայն անհայրենասերներին:

Բնությունը - ասված է - կնոջ ձեռքով կգրի տղամարդկանց սրտի մեջ:

Ահա, թե ինչո՛վ հայ կինը պիտի դառնա հայրենապաշտության տաճարի Վեստյան Կույսը, նշանակված անշեջ պահելու նրա սրբազան կրակը:

Հայուհին, որին կարելի է ճանաչել հազարավոր օտարուհիների մեջ այն կնիքով, որ նրա ճակտին դրել է ծիգ դարերի տառապանքը, որ կարող է փոխարինել խաչափայտի առջև իր աստվածանման որդու վերքերը սգացող Տիրամորը - հայ կինը ավելի հերոսուհի, քան թախծության մայր պիտի լինի: Նրա շրթունքներից պիտի չպակասեն ժանադարկյան բառերը՝ ուղղված մեր սերունդներին. «Եթե հոգնած եք, դադար առեք, բայց մի՛ լքեք կռվադաշտը, մի՜ դասալքե՛ք»:

Նա միայն պիտի չողբա վերքերն իր Հայրենիքի, այլև մեր սերունդներին անսահման սեր ու պաշտամունք պիտի ներշնչի դեպի այդ վերքերը:

Նա ավելի պիտի սիրի և հպարտանա, քան կարեկցի:

Նրա հայրենասիրությունը ևս- աստվածային կրակ, բոց ու ջերմություն-պիտի արթնացնի թմրած առյուծը իր ժողովրդի մեջ, պիտի բարձրացնի մեր առոտյա կյանքի թափը, պիտի քաղցրացնի ու հեշտացնի անձնազոհությունը: Ոգիացած հայրենասիրություն, որից ժողովուրդները ստեղծում են մի հրաշագործ ուժ, անհրաժեշտ՝ Հայրենիքների անկախության ու հզորության համար:

* * *

Հաճախ վիրավոր, բայց հոգեպես անպարտելի - միայն նման ժողովուրդներն են հաջողում պատմության մեջ:

Հաջողում են նրանք, որոնք ծանոթ չեն հուսահատություն կոչված տկարության: Իսկ չեն հուսահատվում ժողովուրդները, որովհետև մարդկության ընտանիքի բոլոր անդամները, մեր մտավորականության որոշ մասից զատ, գիտեն, որ մեկի հայրենի հողը չի կարող մյուսի համար մնայուն հայրենիք դառնալ, որ դա, Հավիտենական Արդարության Օրենքի ուժով, վաղ թե ուշ, վերադարձվում է իր տերերին, եթե այդ վերջինների մեջ չի նվազել սերը դեպի հարազատ երկրամասը:

Իսկ սեր և նվիրում դեպի Հայրենիքը, ներշնչում և սնուցում է հայրենասեր մայրը:

Ահա թե ինչո՛վ մեր իրականության մեջ՝ ՄԱՅՐ անունը պիտի դառնա ու մնա սրբազան մենաշնորհը միայն և միայն հայրենակրոն մայրերի, և ոչ թե բոլորի:

Իրենց որդիներով պիտի ճանաչել և գնահատել կանանց:

Անհայրենասեր ու անարի որդիների մայրը, անկախ՝ իր հասարակական դիրքից, մեր կյանքում պիտի չվայելի հարգանք:

Ամեն ինչ - սեր, խնամք, ակնածանք հայրենասեր մորը: Եվ ամեն ինչ հայրենասեր մորից - հերոս որդիներ, հաղթական դափնիներ, անկախ Հայրենիք:

Իդեալ մայրեր ունենանք՝ երջանիկ Հայրենիք ունենալու համար: Այլապես, քանի դեռ հայրենաշունչ մայրը կմնա որպես «բացակայող աստվածություն» հայ ընտանիքների համար, թուրքը պիտի շարունակի իր արնոտ խրախճանքը մեր սգվոր Հայրենիքում:

* * *

Կան ժողովուրդներ, որոնք դեռ հեռու են անկախության և քաղաքակրթության բարիքները վայելելու բախտից, որովհետև կնոջ ազդեցությունը տկար է նրանց մեջ:

Մի ժողովրդի բարքերը - գովելի, թե պարսավելի - կախում ունեն մայրերից:

Մայրը, միշտ էլ, իր հոգուց մի բան տեղափոխում է իր զավակների կրծքի տակ:

«Ոչ իմաստասերներ, ոչ էլ թագավորներ օգնության կանչենք Հայրենիքին, այլ մայրական ազդեցությունը միայն»:

Կկասկածեմ այն մոր հայրենասիրության մասին, որի զավակները հայրենասեր չեն:

Կողբամ հայրենասիրությունը այն ընտանիքների, որոնք հոգևոր Հայրենիքի մանրանկարը չեն:

Կգարշեմ այն բոլորի հայրենասիրությունից, որոնք դեռ թուրքերեն կխոսեն: Թրքախոս Հայ, հայրենասե՞ր! ... Ողորմելի, փափկամարմին, ծույլ հայրենասիրություն, որ իր մայրենի լեզուն յուրացնելու

ճիգն իսկ չի փորձում: Անհեթեթություն: Լա՛վ է համր, քան թրքախոս լինել:

- Սպարտան կհասցներ հայրենապաշտ և աներկյուղ մարտիկներ, որովհետև մայրերի ցանկությունն էր՝ նման սերունդ տալ Հայրենիքին:

«Կյանքի ընկեր ընտրենք կանայք, որոնց կաթը արյուն լիներ, որոնց ծնունդը՝ հերոս և վրիժակ». այսպես կերգեր հին Գաղիացին:

* * *

Հայ կինը:

Սրա միջոցով հոգեփոխենք հայ ընտանիքը: Այդ վերջինի միջոցով՝ հայությունը:

Սկսենք հայ կնոջից. աշխատենք անդուլ, մինչև որ սրա կաթը դառնա հայրենապաշտության սրբազան կաթը:

Հայրենապաշտորեն դաստիարակենք հայ կինը և նրան թողնենք մեր մատաղ սերնդի դաստիարակության գործը:

Հայ կնոջ միջոցով դարձի և զգաստության հրավիրենք գաղութահայության ազգայնորեն տկարացած տարրերը: Նրա պաշտպանության ու գուրգուրանքի հանձնենք մեր մայրենի լեզուն, եռագույնը, անկախության Մայիսը - սրբությունները մեր ցեղի:

Ապագան վտանգված մեր որբախնամ ժողովուրդը - մեկ էլ կրկնենք - չկորչելու համար, հրամայողաբար պիտի դառնա արիադավան և արիախնամ: Հայ կնոջից սպասենք հոգեբանական այդ հրաշքը:

Ունենանք առյուծածին մայրեր, որոնց արիական որդիները աղելորդ դարձնեին Հայաստանը պաշտպանու արվեստական ամրությունները:

12.
ՄԻ ՆԱԽԱԳԻԾ

Կամքեր ու հոգիներ թրծող աշխատանք է պետք,
որ պիտի ստեղծի վաղվա համար ազգովին
նախապատրաստվելու մեր հավաքական ճիգը:

Դժվար թե գտնվի դիտելու և տեսնելու ընդունակ մի հայ մարդ, որ չտեսներ Հայաստան երկրի վրա կախված մեծ և աղետալի գալիքի ստվերը:

Գիտենք, որ օրվա Թուրքիայի գոյության համար ավելի քան անհրաժեշտ է մեր ժողովրդի չգոյությունը: Գիտակցում ենք, թե հանուն իր հանցավոր գոյության, թրքությունը դաղել է և պիտի շարունակի դաղել մեր ամբողջական գոյության դեմ: Որ նա առիթ պիտի չփախցնի՝

ոչնչացնելու և Արարատյան դաշտում խճողված մի բուռ հայությունը, հայկական հարցը բացասական լուծումի հանգեցնելու համար: Այլևս միամիտ չենք կարծելու, թե մի փոքրիկ և անզոր Հայաստանի գոյությունը - որպես բուֆեր պետություն - անհրաժեշտ և ցանկալի է Տաճկաստանի համար, քանզի գիտենք, որ այդ վերջինի կողմից Հայաստանի անկախությունը ճանաչելը ժամանակավոր մի զիջում էր՝ արված հայության, մի բան, որ թելադրում էր մեր հակառակորդին պատմական վայրկյանը: Ժամ առաջ թրքական զորամասերը պիտի նետվեին Բաքու՝ դաշնակիցներին զրկելու այն անհրաժեշտ նյութերից, որոնք այնքան մեծ դեր խաղացին համաշխարհային պատերազմում: Այդ զիջումը պահանջում էին նաև զինակիցների ռազմագիտական և քաղաքական հաշիվները: Բաքվին տեր դառնալու համար թուրքական ուժերը պիտի ազատվեին հայկական ռազմաճակատներից. ահա՛ թե ինչի հետևանք էր տաճիկների կողմից մեզ արված ժամանակավոր և ակամա զիջումը:

Դաշնակիցների համար՝ պատերազմի անհաջող ելքի դեպքում, Տաճկաստանը, մեր տկար Անկախությունը ստորագրելու փոխարեն, պիտի չտատանվեր գրելու Անդրկուկասում փակված հայության տապանագիրը: Եվ մարդկության ծանոթ մասը - որ հաղթական լինելով հանդերձ թրքությանը ներեց հայության կեսի բնաջնջումը - իր պարտության դեպքում գուցեև շնականությունն ունենար ոչ միայն սեղմելու, այլև համբուրելու այն արնոտ ձեռքը, որ բռնամահ դարձրեց մեր ժողովրդի մի մասը:

Տաճկաստանը, չարաչար խրատված բալկանյան ժողովուրդների ընթացքից, խորապես համոզված է, որ Հայաստանը- ինչ աշխարհագրական սահմաններով էլ լինի դա- իրեն համար ցանկալի թումբ - պետության դերը չի կատարի:

Տաճկաստանին պետք է հայկական գերեզմանատուն և ոչ մի դեպքում կենդանի թումբ:

Վաղվա Ռուսիայի սարսափից խթանված՝ իրերի թելադրանքով նա վերստին պիտի նետվի Անդրկովկաս, օգտվելու երրորդ Ռուսիայի ժամանակավոր, բայց անխուսափելի խռովահույզ վիճակից: Նա պիտի առնի այդ քայլը, որովհետև նրա համար ավելի հեշտ է ռուսական վտանգից պաշտպանվել՝ հենված կովկասյան լեռնային զանգվածին և իսլամ զանգվածներին, քան Արարատյան դաշտում, ուր հայ տարրը, հասկանալի պատճառներով, ո՛չ կգինակցի Թուրքին, ոչ էլ կարող է հոգեբանորեն չեզոք մնալ նրա նկատմամբ: Պարզ է, ուրեմն, որ բացի քաղաքական ձգտումը, Թուրքիան ունի զուտ ռազմագիտական պատճառ, վաղն առաջանալու դեպի Հայաստան, կոխելու Երևանը և անցնելու հեռուները:

Այդ բոլորի հետ գիտենք և այն, որ կովկասյան իսլամ հանրապետության մեջ քեմալական ազդեցությունն ավելի մեծ է քան խորհրդային իշխանության. որ Անդրկովկասի ռազմագիտական բոլոր բանալիները այսօր գտնվում են Թուրքիայի ձեռքին - Նախիջևան, Ադրբեյջան, Դաղստան, շրջաններ, ուր, քեմալական սրի վաղվա հաջողության համար, անաղմուկ գործի է լծված համիսլամականների միտքն ու ձեռքը: Գիտենք այդ ամենը: Պարզ է մեզ համար և այն, որ գալիքն ավելի ահավոր պիտի լինի, քան այն, որ անցկացրինք 1918-ին: Թուրքպարսիկ մերձեցմամբ Հայաստանը պիտի կորցնի դեպի արտաքին աշխարհը բացվող իր փոքրիկ դռնակը: Վաղը մեզ սպասում է անհավասար և դռնփակ գոյամարտը:

Գիտենք այդ ամենը, տեսնում ենք, թե ի՛նչպես աստիճանաբար բարձրանում է թրքական տապարը՝ մեր ցեղի գոյության ծառի արմատին իջնելու համար:

Գիտենք այդ ամենը, անհանգիստ ենք, բայց ոչի՛նչ, ոչինչ չենք անում գալիք վտանգը ժամանակին զինաթափել կարողանալու համար:

* * *

Եթե դո՛ւ, հա՛յ երիտասարդություն, պիտի շարունակես ապրել փոքրիկ հարցերի, փոքրիկ գործերի և նույնքան փոքրիկ օգուտների սպանիչ մթնոլորտում, երբ կա մեր հավաքական գոյության սպառնացող մեծ վտանգը. եթե դու էլ - նման անցյալ սերունդների - պիտի շարունակես փորձել սովորական, փոքրիկ ճիգերով կամ արտաքին օգնության հույսերով լուծել մեր լինել - չլինելու ահավոր խնդիրը, գլխովին չկորչելու, ինչպես և մարդկության արգահատանքից միանգամ ընդմիշտ ազատվելու խնդիրը, դու արդարացրած չես լինի ո՛չ քեզ, ո՛չ էլ քո ժողովրդի հույսերը:

Եթե ցանկության դեպքում դու պիտի չկարողանաս լինել ավելին, քան այն ինչ որ ես - այդ դեպքում վա՜յ և քեզ, և քո ժողովրդին: Ստեղծված հոգեբանական մթնոլորտում հավատավորների և վրիժակների սերունդ դառնալու փոխարեն, դու նորանոր զոհեր կհասցնես թրքական յաթաղանի համար: Սպասողական դրությունը ժողովուրդների կյանքում ժամանակավոր զինադադար է էապես և ոչ թե զինաթափություն և non-agir[9], ինչպիսին է մերը: Ժողովուրդ, բանակ, կուսակցություն- սրանք երբեք այնքան ուժականական և լարված չեն լինում, որքան իրենց սպասողական վիճակում, երբ այդ հավաքականությունների մեջ կուտակված կարողական ուժերի մի մասը դառնում է կենդանի, ներգործոն, գիտակցական, որի ընթացքում հոգեպես աճում են, հզորանում այդ վերջինները:

Խորապես գիտակցված չի մեր անցյալը, ստեղծագործ չի մեր ներկան:

Դու տկար ես և անպատրաստ - ահա թե ինչո՛ւմն է քո ժողովրդի դժբախտությունը:

Դու այսօր այն չե՛ս, ինչպիսին որ պիտի դառնաս հրամայողաբար: Տկարությունը, միշտ էլ պատժվում է՝ վաղ թե ուշ: Եվ վաղը քո տկարության պատճառով, չարաչար պիտի պատժվի մեր ժողովուրդը: Չէ՛, չէ՛, դու իրավունք չունես տկար լինելու, գոտելույծ վիճակում՝ երբե՛ք, որովհետև քե՛զ պիտի վիճակվի վաղը վարելու հայության ճակատագիրը: Դու պիտի լինես հզոր՝ հրաշագործելու աստիճան, որպիսին դառնալու համար, իմաստությամբ օգտվել պիտի կարողանաս Գիտությունից և Դաստիարակությունից, որոնք շարունակում են մնալ վերջին խաղաթղթերը մեզ նման ապագան վտանգված ժողովուրդների համար:

Դու պիտի առաջնորդվես ցեղային բարոյականով, որ պահանջում է զարգացումը որոշ հոգեկան հատկությունների և արվեստագիտական կարողությունների՝ էապես անհրաժեշտ մեր ժողովրդի գոյության պահպանման համար:

Թողած ներքին անփառունակ ճակատները, որոնց վրա հայրերդ տարիներ իվեր ընդունայն կորովաթափ կլինեն, դու բովանդակ ուժերդ գործի պիտի դնես, գլուխ հանելով մեր ժողովրդի կատարյալ հոգեբանական և տեխնիկական սպառազինությունը:

* * *

Գիտեմ, ընթերցո՛ղ, երկարորեն ինձ լսելուց հետո, պիտի ուզեիր, որ քեզ տրվեր մի գործնական նախագիծ:

Ահա՛ դա, ընդհանուր գծերով, որ գործի և փառքի ընդարձակ դաշտ պիտի բանա քո սերունդի առջև:

* * *

1. - Վտանգը

Ավելի քան հավանական է, վաղ, թե ուշ, թուրքերի ներխուժումը Անդրկովկաս, որի դեպքում երկրի հայությունը դարձյալ պիտի ապավինի միայն և միայն իր ուժերին՝ չգաղթելու և չբնաջնջվելու համար: Ներխուժումը հնարավոր և հավանական է.

Ա) Ռուսիայի մեջ մեծամասնականների պարտության դեպքում:

Բ) Եվրոպական որոշ պետության կամ զինակցության կողմից Տաճկաստանը որպես գործիք Խորհրդային Ռուսիայի դեմ գործածվելու դեպքում:

Գ) Տաճկաստանի՝ իր արևելյան սահմանները ռազմագիտորեն ապահովելու փորձի դեպքում, որ ասել է՝ Երկրի հայության բնաջնջմամբ կամ տեղահանությամբ, թաթար Ադրբեյջանին միանալու և այլ հավանական դեպքերում:

2. - Վաղվա մտահոգությունը

Վաղ, թե ուշ, հայությանը պիտի տրվի տաճկահայկական հողերի մի մասը, որի պաշտպանությունը կազմակերպելու և վարելու համար մեր ժողովուրդը պիտի հենվի նույնպես, նախ իր սեփական ուժերին:

3. - Փոխվրեժի անհրաժեշտությունը

Սարսափի և պարտվողականության հոգեբանությունից սրբագրվելու համար - հետևանք՝ դարեր տևող օտար տիրապետությունը մեր հայրենիքում, և մասնավորապես, տաճիկների՝ Հայաստանում պարբերաբար սարքած կոտորածների և ունեցած զենքի հաջողության - հայությունը, մենակ, թե զինակցաբար, պիտի կազմակերպի իր փոխվրեժի պատմական գործը, հրամայականորեն պարտության պիտի մատնի Տաճկաստանը, որպեսզի հոգեփոխվի ու ապահովի իր ֆիզիկական և հոգևոր գոյությունը:

4. - Նախապատրաստություն

Տաճկական վտանգը, Արևելքի և արևմտյան իսլամների Հայաստանի վրայով իրար միանալու քաղաքական ձգտումը, հայության երկրամասային պահանջը Տաճկաստանից, մեր փոխվրեժի հոգեբանական անհրաժեշտությունը - այդ պատճառներից ամեն մեկն առանձին պահանջում է անհապաղ և լրջորեն նախապարաստվել վաղվա համար:

5. - Վաղվա պատերազմը

Դա, ըստ ամենայնի, պիտի լինի գերազանցորեն քիմիական:

Հոգեբանականից և տեխնիկականից զատ բոլոր տեսակի գերակշռությունները - թվական, քաղաքական, աշխարհագրական և այլն - պիտի դադարեն վաղը վճռական և բախտորոշ դեր կատարելուց: Վաղվա ճակատամարտերի բախտը պիտի վճռի մարդկային հնարագետ միտքը և ոչ կենդանի ուժը: Արվեստագիտության, տարրաբանության, էլեկտրոարվեստագիտության արագ և հրաշագործ առաջադիմության մեր օրերում, երբ այդ վերջինների օգտագործման կարելիությունները պատերազմում դառնում են անսպասելի, մահացու գործիքների և ռազմանյութերի հարաճուն ճոխացումն ու կատարելագործումը հնարավոր պիտի դարձնի մեզ նման տեխնիկապես տկար ժողովրդի գլխովին բնաջնջումը:

6. - Գերազանցելու միջոցներ

Թրքության ծանոթ առավելությունները կարելի է և պետք է արհամարհելի դարձնել մեր հոգեբանական և տեխնիկական գերազանցությամբ, որպիսին հնարավոր է պիտի ձեռք բերել՝

Ա) Մեր գոյության և բնաշխարհի առարկայական պայմաններին համապատասխանող դաստիարակությամբ: Վերադաստիարակությամբ պիտի սրբագրել մեր ժողովրդի հոգեբանությունը, դարձնելու

նրան իր ամբողջության մեջ ազգորեն ինքնագիտակից, կորովի և մարտունակ:

Բ) Եվ անհրաժեշտ մասնագիտություններով: Մեր տեխնիկական գերակշռությունը պիտի ապահովենք, հասցնելու վաղվա համար անհրաժեշտ քանակությամբ հրարվեստագետներ, մեքենագետներ, քիմիագետներ, ռազմագետներ, հանքագետներ, օդագնացներ, ինչպես և ռազմամթերքի, թունավոր գազերի, մահացու գործիքների արտադրության մասնագետներ:

7. - Վարիչ մարմին

Հայ զանգվածների վերադաստիարակության և անհրաժեշտ մասնագետներ հասցնելու գործը վարում է Ազգային Ինքնապաշտպանության Վարիչ Մարմինը, ընտրված՝ տեղական մարմինների կողմից:

8. – Տեղական մարմին

Ստեղծվում է ամեն մի հայաբնակ վայրում, նպատակ ունենալով՝

Ա) Ժողովրդականացնել ազգովին նախապատրաստվելու անհրաժեշտության գաղափարը:

Բ) Հսկել տեղի հայ տարրի վերադաստիարակության գործին:

Գ) Հովանավորել իր վայրի խոստումնալի և հայրենապաշտ պատանի - երիտասարդներին:

Դ) Ստեղծել նյութական միջոցներ:

9. - Զինվորական հանձնախումբ

Նշանակվում է վարիչ մարմնի կողմից, որի գործը պիտի լինի՝

Ա) Հայ և օտար ռազմագետների աջակցությամբ մշակել երկրի հայության քիմիական ինքնապաշտպանության ծրագիրը:

Բ) Եվրոպական և ամերիկյան քիմիարաններում, բարձր տեխնիկ դպրոցներում, զինվորական ակադեմիաներում, հրարվեստագիտական գործարաններում հասցնել անհրաժեշտ թվով մասնագետներ:

Գ) Իրազեկ լինել այն բոլոր ռազմարվեստային գյուտերին և նորույթներին, որոնցով հարաճուն կերպով հարստանում է եվրոպական և նոր աշխարհի զինվորական միտքը:

Դ) Զինվորականացնել բոլոր տեսակի պատանի-երիտասարդական միությունները:

Ե) Ստեղծել զինվորական գրականություն:

10. - Հրատարակչական հանձնախումբ

Ունենում է իր օրգանը, որով՝

Ա) Հայ միտքն զբաղեցնում է մեր ժողովրդի գոյության պաշտպանության խնդրով:

Բ) Պայքարում է պարտվողականության ոգով, անգրագիտության և օտարացումի դեմ:

11. - Ազգային ուխտի դպրոց

Անսահմանորեն անձնվեր, հայրենապաշտ և գաղափարական երիտասարդ գործիչներ հասցնելու համար, հաստատել ազգային ուխտի և ոգու դպրոց, որի կողմից՝ մեր ցեղի նյութական և բարոյական ինքնապաշտպանության գործը դասավանդվեր և հռչակվեր որպես նոր կրոն:

12. - Նյութական միջոցներ

Մեր ժողովրդի փրկության գործը վարելու համար անհրաժեշտ նյութական միջոցները պարտադրորեն հոգում է ինքը՝ հայությունը, հետևյալ ձևով.

Ամեն մի հայ մարդ, ազգային տուրքի անվան տակ, վճարում է գաղիական մի ֆրանկ: Ամեն հայ ընտանիք՝ այնքան ֆրանկ, որքան անդամ ունի:*

* * *

Անտառում նեղ ու դարձդարձիկ ճամբաների վրա երես առ երես իրար կհանդիպեն առյուծն ու վագրը:

Նրանք կանգ կառնեն, գետնին մխվածի պես, մարմինները կծկած ետևի երկու ճկուն ոտների վրա, պատրաստ ոստյունի:

Ճիրանները դուրս, մազերը փշաքաղ, բերանաբաց, ամեն մեկը կամենում է զարհուրելի ծամածռություններով ահաբեկել, սրտաթափ դարձնել հակառակորդին և խեղդել...

Անսահման զգուշությամբ, մեկ- միաժամանակ և մյուսը - իր մի ոտը շարժում է քիչ ետ:

Քիչ անց, անաղմուկ և կամաց, նույնն են կատարող մնացած ոտները: Եվ, գրեթե աննկատելի՝ հակառակորդի համար, միաժամանակ հեռանում են իրարից: Սակայն. միշտ երես առ երես, մինչև որ երկուստեք նահանջը նրանց միջի տարածությունը կդարձնի ավելի մեծ, քան պետք է մի հանկարծական և դավադիր ոստյունի համար:

---

* Չնչին տուրք, բայց հայրենասիրական, գիտակցական, փրկա-րար: Կաթիլն ընկնելով ծովը՝ դառնում է ծով: Նյութականը չի պակասելու: Օրվա հայությունը հազարիցս ավելի մեռյալ ծախսեր է կատարող, քան պետք պիտի լինի գծածս նախաշավղի սահ-մաններում կազմակերպել ու վարել իր գոյության պահպանման գործը: Միացրե՞ց Հայը իր չնչին նյութական զոհաբերության՝ գիտակցությունը և հայրենապաշտություն-ապահովված է նրա փրկության գործը: Նպատակադրվե՞ց՝ ցեղամիջյան պայքարում չկորչելու համար սպառազինվել հոգեբանորեն և արվեստագիտաբար-հայության կմնա հայացքը դարձնել դեպի վերև, տեսնելու համար հրեղեն նշանը-այն միջոցը, որով պիտի հաղթի դժվարություններին ու իր դարավոր թշնամուն:

Այլևս հակառակորդները դարձնում են իրենց թիկունքները, վերստանում իրենց բնական կեցվածքը. և, քաշվելով իրենց թագավորության սահմաններից ներս, կորչում են անտառի մեջ:

* * *

Նույնը, գրեթե նույն բանն է կատարվում և ազգերի կյանքում, երբ նրանք երես առ երես և սպառազեն հանդիպում են իրար, իրենց երկրի սահմանագլխին:

Վա՜յ նրան, ով տկարություն ցույց տվեց. մա՛ի է:

Վա՜յ նրան, ով անկարող եղավ անթարթափ ու շեշտակի նայելու հակառակորդի աչքի մեջ. մա՛ի է ստույգ:

Կորած է այն կողմը, որ անզոր է սարսափ ազդելու, ավելին՝ ավելի սարսափելի լինելու, քան հակառակորդը:

Հա՛յ երիտասարդությունը, վաղը, երբ թրքությունը փորձեց պղծել Հայրենիքիդ սահմանների սրբությունը, պիտի կարողանա՞ս ավելի սարսափելի լինել, քան թշնամին: Պիտի կարողանա՞ս վագրային կեցվածք ցուցադրել:

Պատասխանի՛ր, պիտի կարողանա՞ս...

13.
ԲԱԽՏՈՐՈՇ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Երբեք տեսնված չէ, որ ժողովուրդն ավելին չտար, քան կարող են պահանջել իր առաջնորդները:

Ժողովուրդներն այն են, ավելի ճիշտը՝ դառնում են այն, ինչպիսին որ համարվում են իրենց մտավորականության կողմից:

Մի ժողովուրդ, որ իր ղեկավար տարրերի կողմից համարվում է «փափկամարմին» կենդանիների տեսակից, երբեք չի լինի հաղթական ու հարգված: Տկար, քաղաքականապես մուրացիկ և դիպվածով գոյությունը քարշ տվող - ահա՛ նման ժողովուրդը:

Պարտվում է մի ժողովուրդ, հենց որ իրեն պարտված է զգում իր մտավորականությունը:

Կորած է այն ազգային դատը, որի ղեկավարները կորած են համարում այն: Պայքարում տեղի է տալիս այն կողմը, որի առաջնորդող տարրերն առաջինն են հուսահատվում:

Այո՛, հանձին ժողովուրդների, միշտ էլ չափվում են իրենց մտավորականությունները, հաղթում կամ պարտվում իրենց առաջնորդող տարրերը: Եվ չի պարտվում այն կողմը, որ չի ուզում պարտվել:

* * *

Պիտի չպարտվեր հայ ժողովուրդը և հոգեբանորեն, եթե նրա մտավորականության մի խոշոր մասը չնետվեր պարտվողական ոգու գիրկը: Դժբախտաբար, այսօր նա ոչ թե իրեն պարտված է զգում, այլև պարտվողական:

Նրա որոշ տարրերը մեր պարտության և բարոյալքումի օրերին ոչ թե չկարողացան բարոյական շանթարգել հանդիսանալ զանգվածների համար, այլև պարտվողականության քարոզիչներ և բարոյալքիչներ դառան: Զուրկ՝ ապագայի զգացումից, ինչպես և ազգային բարոյականից, նա առանց մի հատիկ իսկ հարված փոխանակելու փորձի, թշնամուն հանձնեց իր դիրքերը, որին այնքա՜ն մեծացրել էր տկարի իր երկչոտ երևակայությունը: Նա բառացիորեն բաժանեց ճակատագիրը ծանոթ առակի այն դժբախտ եղնիկի, որը օդի մեջ քամուց տարուբերվող փետուրից սարսափահար, նետվում է... ուղղակի որսորդի գիրկը:

Նա նմանվեց այն զորամասին, որ ոչխարների հոտի բարձրացրած փոշու ամպը թշնամի համարելով, փախչում է գլուխը կորցրած և ընկնում ... թշնամու ամրացրած բանակատեղին:

* * *

Ամենակարող է այն առաջնորդը, որ կարողանում է անպարտելիության հավատ ներշնչել իր ժողովրդին:

Ժողովրդասպան է նա, որ իր նկուն կեցվաղծքով տկարացնում է իր ժողովրդի ուժի և կարողության գիտակցությունը:

Վերջինին նմանվեց մեր մտավորականության մի մասը: Տեղի տվեց առանց մի հատիկ պատվի վերք ստանալու, նա փախավ և ոչ նահանջեց կռվադաշտից և իր դասալիքի հոգեբանությամբ բարոյալքեց թիկունքը:

«Վա՜տ է մեր ժողովուրդը, տգետ, անարի», - ամենուրեք հայտարարեց մեր սրտաթափ եղած մտավորականը:

«Նա չի կռվում, նա չկռվեց և ի՞նչպես կարող էր կռվել տաճիկ բանակի դեմ»,- գրեց ու տարփողեց ծանոթ մտավորականը:

«Լինենք համեստ և բավականանանք քչով, ո՞վ ասեց, որ անպայման պետք է անկախ լինել՝ ապրելու համար, ապրենք այնպես, ինչպես որ կուզեն թուրքն ու բոլշևիկը և ոչ թե այնպես, ինչպես որ հայ ժողովուրդն է ուզում» ահա՛ այսպես գրեց, խոսեց և դեռ չարախոսում է անմիտ պարտվողականը:

Տխուր, մեռորեն տխուր է պարտվողական մտավորականի պատկերը: Գլուխը կորցրած, նա այսօր ոչինչ չի խնայում վերջնական դարձնելու հայ ժողովրդի պարտությունը: Ազգային աստվածությունները մի ամամ ապուրի հետ փոխելուց հետո, նա այժմ իր վատությունը փիլիսոփայելով է զբաղված:

* * *

Այլազան են, ընթերցո՛ղ, պարտվողական հայ մտավորականի հոգևոր դիմադրությունները:

Մեկն այդ փաղանգից հոգևոր ստրկություն է քարոզում, հորդորելով հայությանը ապրել «խոնարհության հովտում» և էլ չերազել անկախության մասին:

Երկրորդը գտնում է, թե թուրքից լավը բոլշևիզմն է, որի կարմիր փորձարկության համար հայությունը հավատարմորեն պիտի նյութեր մատակարարի:

Երրորդը՝ կենդանի հողմացույց, և այս է, և այն:

Չորրորդը չգիտի, թե ինչ է ուզում, ամեն ինչ է և ոչինչ:

Հինգերորդը... Նույնն են բոլորն էլ՝ էությամբ՝ ստրկամիտ, տկար, պարտվողական:

Սրանք կուզեն ապրեցնել հայությունը որպես կենդանի ողորմելիություն, արտաքին ողորմություններով:

Խոսե՛ք հետները, լսե՛ք իրենց և պիտի հասկանաք սրանց խորշակահար հոգին, որ մատնում են իրենց ամեն մի խոսքի և շարժուձևի մեջ.

Սրանք ասում են, - եթե ամեն ինչ դեռ կորած չէ, եթե կարելի է և պետք է որևե բան անել հայ ժողովրդի ճակատագրի դաժանությունը մեղմելու համար, այդ պիտի արվի վաղվա սերունդների ձեռքով, և ոչ մեր, որովհետև այլևս չենք ուզում մեր կերն ու հանգիստը զոհաբերել:

Օ՜, այդ եսապաշտ ու անարի արարածները: Եթե սրանք հնարավորություն ունենային հայ ժողովրդի գոյությունը զրնգ դրամի վերածելու և տրամադրելու իրենց հոգեպես հաշմ և դյուրասեր սերունդին՝ այդ վերջինի հացն ու անդորրը ապահովելու համար, պիտի չնեղվեին ասելով՝ «մեզնից հետո թեկուզ ջրհեղեղ»:

* * *

Ուր մարդիկ խոստովանում են իրենց տկարությունը, բայց չեն ամաչում տկար լինելուց - հոգևոր ստրկություն է տիրում այնտեղ: Այդպիսին են մերոնք, մեր պարտվողականները, տկար, բայց տկարությունից չամաչող:

Հոգեպես կաթնեղբայր, իրար նման, որոնց մեջ կա, սակայն, ամենավտանգավորը: Դա ջատագովն է թրքական կողմնորոշման: Հոգեբանորեն հասկանալի է և այդ ամոթալի երևույթը հայ մտավորականության որոշ մասի մեջ: Վախը, սարսափը թշնամուց՝ սպանում է դեպ այդ թշնամին տածած մեր ատելությունը: Պիտի ներել թրքության և մոտենալ նրան,- ասում է այդ վերջինը,- քանզի մեզ ճակատագրված է նրա անմիջական դրկիցը լինել, տկար հարևանը:

Մտքի և հոգու ինչպիսի՜ աղքատություն:

Հեռատես դիվանագետ չէ խոսողը, այլ՝ ծանոթ պարտվողականը, որ չի ամաչում ծիծաղելի դառնալ իր ողբերգանքի մեջ:

Ներե՜լ նրան, որից ծեծվել ես, թքվել, անարգվել:

Ներե՜լ նրան, որին քեզնից ուժեղ ես զգացել և ծունկի եկել նրա առջև:

Ներե՜լ իր տիրոջը, իր բռնակալին, իրեն հաղթողին: Ինչպիսի՜ մահացու տգիտություն և բարոյական անկում:

Իսկ եթե թրքությունը, հա՛յ պարտվողական, կարիք չզգաց քո ներումի ստրկական արտահայտության և թքեց քո և քո ներումի երեսի՛ն: Իսկ եթե թրքությունն ասեց. «Սրի քաշելով հայության կեսը՝ ես արձանի ու պսակի արժանի գործ եմ կատարել իսլամի համար: Եվ եթե վաղը սուրս երկարեց քո մյուս կեսի վզին, քո ստրկական ներումը չի փրկի քեզ»:

Եթե այսպե՛ս խոսեց Արևելքի մարդատիպ բորենին:

Եթե լեզուն դրված լիներ միայն ճշմարտություններ ասելու համար՝ թրքությունը պիտի ասեր մեզ.

- Գիտեմ, որ իմ ներկայությունը Եվրոպայում շատ կարճ ժամանակի խնդիր է: Գիտեմ, որ այսուհետև առաջանալու մի հատիկ ճամբա ունեմ՝ ռուսահայության գերեզմանի վրայով դեպի Անդրկովկաս: Գիտեմ, զգում եմ և այն, որ հետ այսու իմ գործը պիտի լինի - ծեծվել եվրոպական ուժերից և ծեծել հայությունը, ծեծել ձեզ՝ վերջնականորեն պարտվածի սպանիչ հոգեբանությունից զերծ մնալու համար: Ավելացնեմ և այն, թե հաղթականի իրավունքն է՝ զրկել պարտվածին փոխվրեժի դիմելու, ինձ վնասելու հնարավորությունից:

Եթե դարավոր թշնամիդ այսպե՛ս խոսեց քեզ հետ: Եվ կարիք կա՞ խոսքի՝ թրքությունը ճանաչելու համար: Մի՞թե խոսուն և հասկանալի չէ նրա հայադավ լռությունը: Միջազգային բարոյակա՞նը: Բայց այդ երբվանի՞ց է, որ գոյություն ունի դա: Արևելքի խուժն ու ստրո՞ւկը, հակաբարոյական թուրքն ու հայ պարտվողակա՞նը հիմքը պիտի դնեն ցեղամիջյան բարոյականության: Վա՜յ և այդ բարոյականին, և հայության:

* * *

Երբեմն աշխարհի կարեկցությունը, երբեմն ծիծաղը շարժող մեր պարտվողականները կիսով չափ քաղած պիտի լինեին իրենց մեղքը, եթե հայությունը ծիծաղելի չդարձնեին իր խոր դժբախտության մեջ: Այո՛, ծիծաղելի է տկարի ներումը, ինչպես և նրա հաշտարար ոգին: Մարդկությունը, և ամենից առաջ թրքությունը, իրավացիորեն, մեր ներումն ու հաշտ ոգին պիտի վերագրի մեր նվաստության և ոչ մեր մեծահոգության: Տկարին իրավունք չի տրված մեծահոգի լինելու: Նա չի էլ կարող այդպիսին լինել: Մեր ներումը կշարժեր աշխարհի նողկանքը միայն: Ներելով, մենք հաստատած կլինեինք, թե մենք արժանի էինք

այն ամենին, ինչ որ ապրեցրեց մեզ թրքությունը: Ապացուցած կլինեինք և այն, թե իսկապես անկախության անարժան հավաքականություն ենք, գոհ՝ մեր վիճակից:

Ներելով, մենք մատնած կլինենք մի այլ բան, թե մահացիորեն տկար ենք, և թե այդպիսին էլ պիտի մնանք հավետ: Իսկ նմանը պիտի չհանդգնի անկախ Հայրենիքի մասին երազելու, ինչպիսի աշխարհագրական սահմաններով էլ որ լինի դա:

Ներե՞լ եք ուզում - հաղթե՛ք նախ:

Բայց թող չանհանգստանան մեր պարտվողականները: Մի օր հայությունը պիտի ների թրքության, բայց ոչ ծունկի եկած նրա առջև, պարտվելուց հետո, այլ նրան ծնկի բերած՝ ծեծելուց հետո:

Պիտի ներենք մի օր Արևելքի չարագործին, բայց նրան պարտության մատնելուց հետո:

Ասված է՝ «հաղթի՛ր և ապա անցիր պարտյալի կողմը»:

Մի հաղթություն - և մենք կներենք թրքության:

Կասկածո՞ւմ է մեր անորինակ մարդկայնության մասին հայ պարտվողականը: Թող լսի, ուրեմն, մեր հաղթական նահապետի խոսքը.

«Բայց Հայկ վեհանձն ու բարեպաշտ, կտա դիակին պատվավոր գերեզման բլուրի վրա: Իսկ Նեբրութի մեծազանգված մարմինը դիապատելու մեծաճոխ հանդերձանքն կտանեն այս լեռնակյաց հաղթական արծիվը, ուր հիմա Թորգոմի արքայական տան մոտ կննջի քուն հավիտենական ազատազգաց ոխերիմ թշնամին»:

Ճիշտ այսպես, հայկաբա՛ր պիտի վարվենք և մե՛նք թրքության մեռելոտիի հետ, նրա «մեծազանգված դիակի» հետ, երբ որ հաղթեց մեր սուրը:

Մենք չենք ջախջախի մեր սվինից վիրավոր թուրք զինվորի գանգը, որովհետև մերը չէ այն շնական վարդապետությունը, որ տարբերություն չի դնի չարի և բարու միջև:

Մենք չենք շնանա նրա գեղեցկուհիների հետ, չենք կրոնափոխի նրա որբերը, քանզի մերը չէ այն ցեղը, որի մեջ դարերով և դարերով շունը ավելի՛ ուժով է եղել քան մարդը:

Մենք մարդ, ավելի քան մարդ կլինենք թրքության հանդեպ, երբ մեր սուրը նրան ծունկի բերեց մեր առջև:

Իսկ մինչև այդ օրը, նա մեր գլուխը, իսկ մենք նրա գարշապարը պիտի փնտրենք: Որովհետև նա չի կարող մարդ լինել մեր նկատմամբ: Նա չի զղջա մեզ հասցրած անլուր չարիքների համար, իսկ մենք ներելու համար պիտի ճգնենք լինել նրանից ուժեղ:

Ա՜հ, գիտեմ, չկա աստվածորեն ավելի վսեմ և գեղեցիկ շարժուձև, քան մեր սրից ու գնդակից զարնված հակառակորդի վերքերը կապելը: Ինչպես չկա ավելի բարբարոս արարք, քան վիրավորներին նոր վերքեր հասցնելը:

Գիտե՜մ, գիտե՜մ, արժի ներել, իրեն ուժեղ զգալու համար: Գիտե՜մ, աստվածային արարք է ներումը, բայց ուժեղի, հաղթականի:

Ներե՞լ եք ուզում - արիացե՛ք, հզորացե՛ք, հաղթե՛ք նախ:

* * *

Ասում են՝ մեր տխուր Արևելքում նվաստությունը ծառայել է որպես ինքնապաշտպանության միջոց:

Հայ պարտվողականները այդ զազիր զենքից զատ այլ բան չեն գտել հանձնարարելու մեր ժողովրդին:

Չեն հասկանում կարծեք, որ նվաստություն - ասել է շպարված թուլություն, որ միշտ էլ - վաղ, թե ուշ - պատժվում է չարաչար:

Մեր միամիտները չեն հասկանում, որ նվաստությունը ժողովուրդների համար ավելին չէ, քան փտած եղեգն, որին կռթնել են հրավիրում հայությանը:

Նվաստություն, ներողամտություն, խոնարհություն. - սրանցով գուցե և կարելի լինի երկարել հիվանդությունը, բայց այս բարոյազուրկ միջոցները չեն փրկի նրան ո՛չ հիվանդությունից, ո՛չ էլ մահից:

Փրկություն չէ հոգեվարքի երկարումը: Ինչպես և ցավերի ժամանակավոր մեղմացումը, երբ հիվանդությունը պիտի շարունակի մնալ և սպառնալ մահվամբ:

Ցավերը վերացնելու համար՝ հիվանդությունը, պատճառներն են, որ պետք է բառնալ:

Թուլությունն է, որ պետք է խաչ հանվի:

Անիծված թուլությունը, որի պատճառով դարերով տառապանքի և ստորացումի դառն բաժակն է դատարկել մեր ժողովուրդը:

Գիտակցենք վերջապես, որ ժողովուրդների բախտավորության և անբախտության, հզորության և տկարության աղբյուրը գտնվում է իրենց մեջ: Հայ հոգուց դուրս չէ և հայ տառապանքի, անլուր քաղաքական զրկանքների աղբյուրը: Հարազատե՛նք այդ ճշմարտությունը, հա՛յ երիտասարդ, հասկանա՛նք՝ փրկվելու համար:

Բայց մի՞թե տկար ժողովուրդ է օրվա հայությունը: Մի՞թե նա կարող էր և տկար մնալ՝ իր կեսը թրքական վայրագության սրին հանձնելուց հետո: Մինչև մեր ցեղի մի մասի ողջակիզումը դեռ հոգեբանորեն հասկանալի էր մեր տկարությունը: Իսկ այսօր, երբ կա թրքության կողմից մի միլիոն հայության ոչնչացումի աղաղակող փաստը, իրեն այսօր էլ տկար զգալ - կնշանակի ապրելու անարժան լինել:

Չէ՛, թե՛, չի կարելի հազար և հազար զոհեր տալ և մնալ նույնը հոգեպես: Չի՛ կարելի հազար և հազար մեռելներ ունենալ և բարոյա-

կան անզորությամբ տառապել: Դա կնշանակեր մարդկային ցեղից չլինել:

Ա՜հ, մեռելների անչափելիորեն զարհուրելի ուժը:

Մի միլիոն անհանգիստ և վրեժխնդիր ուրվականներ - ահա՛ մեր ուժը, որի նմանը չի ունեցել աշխարհի ոչ մի ժողովուրդ:

Բայց-ամո՜թ մեզ-հայությունը չօգտվեց այդ ուժից, չօգտվեց, որովհետև շուտ, շատ շուտ մոռացավ իր մեռելները:

Աշխարհը կսպասեր, որ այն հրեշային չարչարանքներից, որոնց դատապարտեց մեզ «վայրագության, ծուլության և գողության միայն ընդունակ ցեղը», աշխարհը կսպասեր, որ, ահա՛, հայ մտավորականության շարքերից դուրս կգան ծայրահեղապաշտներ, անհաշտներ՝ գայլի հոգեբանությամբ. կսպասեր, որ ահա՛ հայ տառապանքը կծնի ուխտվածներ, դեմոնական տիպեր՝ սրբազան խենթությամբ: Կսպասվեր, որ այլևս հայությունը պիտի սովորի խոսել մարդկության հետ այնպես, ինչպես որ կարող էր և պե՛տք է խոսեր բազմաբյուր ուղղակեզների տեր ժողովուրդը: Բայց, ավա՜ղ, հայությունը, աննշան բացառությամբ, շարունակեց մնալ նույնը - տկար ու մուրացող:

Հայության ճակատագրի վարողները չիմացան խոսել աշխարհի հետ, որ բնազդական արհամարհանք ունի դեպի տկարն ու լալկանը:

Գերմարդկային ցավերից խելագարվածի լեզվով խոսելու փոխարեն, նա խոսեց կանացի քրիստոնեության լեզվով: Գերագույն վշտի մեջ կատղելու փոխարեն, նա մնաց միևնույն «բնականոն ջղեր»ի տեր ժողովուրդը: Նա չխոսեց բռնամահ եղած հայության կեսի լեզվով: Նա, որ կարող էր այնպես վարվել, որ թուրք պետության ներկայացուցիչները, Թուրքիայի սահմաններից դուրս չերևան. նա, որ կարող էր մի միլիոն չարչարամահ եղած Հայերի ուրվականներով, առանց բանակների և մարտանավերի - սարսափով պաշարել Թուրքիան, կտրելով նրա հարաբերությունները արտաքին աշխարհի հետ. նա, որ կարող էր ահաբեկել մարդկության խղճմտանքը վարող հրեշների երևակայությունը, որի վրեժխնդրական ամեն մի շարժուձևը հիացումով պիտի լցներ մարդկության սիրտը, նա ոչինչ չարեց իր գերագույն վշտից մղված:

Եվ աշխարհը հիացում ու սարսափ զգալու փոխարեն, զզվանք ու զայրույթ զգաց մեր նողկալի կանացիության հանդեպ:

Ինչո՞ւ այդպես: Ինչո՞վ բացատրել այդ տխուր երևույթը:

- Մեր կուլտուրականությամբ,- պիտի ածապարեն պատասխանել մեր պարտվողականները:

Կե՜ղծ և թքելի՛ կուլտուրականություն, որ կայանում է անհամ ոտանավորներ գրելու և մի քանի եվրոպական լեզուներ գործածելու կարողության մեջ:

Ծիծաղելի՜ կուլտուրականություն, որ մեր ժողովուրդը դարձրել է որբ և որբախնամ:

* * *

Զայրույթից չե՞ս դողում դու, հա՛յ երիտասարդություն, որ մի միլիոն արյունակիցներիդ ողջակիզումն իսկ չկարողացավ խռովել հայրերիդ մի մասի հոգևոր մրափը: Դու չե՞ս դողում սրբազան կատաղությունից, որ մեր ցեղի միտքն ու բազուկը, իրենց վրեժխնդրական մոլուցքի մեջ, սատանայի հետ իսկ զինակցելու փոխարեն, մնացին գերին քաղաքական տոլստոյականության:

Վրեժի ու քանդումի - աշխարհին ծանոթ և անծանոթ արվեստներին աշակերտելու փոխարեն, որ վաղը ի վիճակի լինի հրով և երկաթով պատժելու բարբարոսությամբ հիվանդ թրքությունը, քո սերունդն այսօր, իր հայրերի շնչով թրծված, հետևում է մի կտոր հաց ապահովող գիտությանը:

Սթափվի՛ր, հա՛յ մարդ, ուշքի՛ եկ, քանի դեռ ուշ չէ, այլապես՝ մարդկությունը, որ դեռ սպասում է քո սրբազան խենթության, մի օր, հուսախաբ, պիտի թքի մեր ժողովրդի անունին:

* * *

Մարդը, որ ստրկացած է պարտվողական հայի մեջ, պիտի մարդկայնանա:

Հայ մտավորականությունը իր ամբողջության մեջ պիտի ազատվի ստրկական և սարսափի հոգեբանությունից:

Պիտի արիանա նա:

Պետք է ազատվել և ոչ թե միայն ազատագրվել:

Մինչև որ հայ մարդը չզգա իր ուժի գերազանցությունը, չի ազատվի պարտվողական հոգեբանությունից, չի փրկվի նա:

Թրքական կողմնորոշում, ներում, հաշտություն - այդ ամենը կոչված են սնուցանելու մեր տկարությունը և նախապատրաստելու թուրք զենքի վաղվա հաղթանակը Հայաստանում:

* * *

Այսպես, մեր մտավորականության թևաբեկ մասը, իր առաջնորդության ապավինած ժողովուրդը վաղվա հաղթանակի համար նախապատրաստելու փոխարեն, կլանված է մի ամոթալի խնդրով.

- Օտար լուծերից ո՞րն է տանելին, ցանկալին, - ահա՛ հարցը, որով նա զբաղեցրել է հայությունը: Օտար տիրապետության դեմ անողոք պայքար կազմակերպելու և վարելու փոխարեն, նա առաջարկում է իր ժողովրդին ընտրել այս կամ այն օտար լուծը: Փոքրոգությո՜ւն, տգիտությո՜ւն, ստրկամտությո՜ւն:

Այդ հրեշները, միացած՝ հայ պարտվողականի մեջ, նրան մղել են ժողովրդասպանության:

Ժողովրդասպանություն, այո՛:

* * *

Ներսես Մեծը, լսելով Հայաստանի գլխին եկած դըժբախտությունների մասին, հունական օժանդակ զորքերով կմտնի Հայաստան:

Մերուժանը, հրամայելով բերդի պատերից կախ տալ հայ նախարարների կանանց, կթողնի Հայաստանի սահմանները և օգնություն կխնդրի Շապուհից: Կհասնեն պարսից զորքերը և դավաճանը կշարժվի Հայաստանի դեմ:

Կռիվը կսկսվի Ձիրավի տափարակի վրա... երբ Ներսես Մեծը կբարձրանա Նպատ լեռը, ձեռքերը կբարձրացնի դեպի երկինք և աղոթելով, կ'իջեցնի ձեռքերը, մինչև որ չեն հաղթի Հայերը:

Ահա՛ հաղթելու գաղտնիքը:

Ներսես Մեծը լեռան վրա! Ինչպիսի՜ վեհ պատկեր:

Ինչպիսի՜ վսեմական նյութ հանճարեղ վրձինի և մտահայեցության համար:

Իսկ առաջնորդի համար՝ սկիզբն ու վախճանը իմաստության:

Ռազմավարի համար՝ հաղթելու գաղտնիքը, կնշանակի աստվածային գաղտնիք, որ շարունակում է արձանացած մնալ մեր պատմության ոսկե էջերից մեկի վրա:

Մեծ Պարթևը լեռան վրա! Սիրում եմ ապրել ու վերապրել այդ կախարդիչ պատկերի գեղեցկությունն ու վեհությունը:

Նրա՝ իմ մեջ առաջացրած խոկումներից թելադրված, ես հաճախ մտովի կ'այցելեմ մեր հին ու նորագույն ռազմավայրերը, մեր պարտության և հաջողության պատճառներն ինձ համար պարզելու ցանկությամբ:

Եվ գտել եմ, որ այն բոլոր դեպքերում, երբ Ներսես Մեծի նման մեկը «բարձրացել է լեռը», երբ մեր ցեղը լարել է իր բովանդակ ուժերը և չի տկարացել հոգով, մինչև որ տեղի կտար թշնամին - մի՛շտ էլ հաղթության դիցուհին իր ոսկե մատներով պսակադրել է հայ զինվորի ճակատը:

Իսկ երբ չի գտնվել պարթևատիպ առաջնորդը, որ կարողանար լարված պահել ժողովրդի ուժերը, չթուլացնել ժողովրդի բազուկը, մինչև որ կտկարանար թշնամին, երբ պակասել է կատարյալ առաջնորդը, պարտությունն ու ամոթն են եղել հայ զորքի բաժինը:

* * *

Մի ժողովուրդ, որ եղել է և կարող է լինել ուժեղ, բայց իր մտավորականության մի մասի հոգևոր ծուլության բերումով շարունակում է մնալ տկար:

Եվ աշխարհը ասում է նրան, արիացի՛ր կամ մեռի՛ր:

Ոչ մի չար աստվածություն հավիտենական թուլության չի դատապարտել քեզ, հա՛յ պարտվողական:

Դու տկար ես, որովհետև քեզ պակասում է գիտակցությունը ուժեղ լինելու կարելիության:

Քեզ տկար ես զգում, որովհետև հոգու արիություն չես ունեցել թրքությունը տկար տեսնելու:

Ուժը չի պակասում քեզ, այլ՝ ուժեղ լինելու կամքը:

Պակասում է հայրենապաշտությունը, որ հզորացնել գիտի:

Քեզ պակասում է բարձր նպատակ և ոչ այն իրագործելու միջոցները:

Գարշի՛ր, գարշի՛ր թուլությունից - և պիտի ուզենաս լինել, և պիտի լինես ուժեղ:

Իսկ երբ քեզ հոգով ուժեղ զգացիր, պիտի տկարանա թրքությունը, որին և պարտության պիտի մատնես, ներելու համար:

* * *

Ապառաժ լեռան կռթնած չեն մեր մտավորականության և այն տարրերը, որոնք օրվա անելիքները թողել են՝ մասամբ գալիք սերունդներին, մասամբ էլ՝ եվրոպական դիվանագիտության:

Կարծեք, սրանք էլ դեռ համոզված չեն, թե եվրոպական մարդկության համար միշտ էլ գետին փռվածը, միշտ էլ ընկածն է մեղավոր:

Տկարը մեղավոր է, որ տկար է - ահա՛ դատավճիռը:

Իր պետության շա՛հը, - ահա՛ գերբարոյականը պետական գործիչների համար: Սրանց սիրտը- Նապոլեոնի արտահայտությամբ - գլխումն է լինում: Սրանց համար, նպատակը բարոյականացնում է այն բոլոր միջոցները, որոնք իրենց պետության ուժեղացման և բարեկեցության կծառայեն: Ազգային եսականության հզորացումը - սա՛ է տիրող իրապաշտ քաղաքականությունը:

Ահա՛ թե ինչու այս կամ այն պետության ճակատագիրը վարողները երբեմն իրենց թույլ են տալիս արարքներ, որ թույլ թևին տա որպես սոսկական մարդ: Արդ, թե ինչու պիտի հասկանալ, և ոչ թե դժգոհել և անիծել աշխարհը:

Ergo[10], միամտորեն չպահանջենք, որ աշխարհը լինի այն, ինչպես որ մենք ենք ուզում, այլ՝ ազգովին մենք դառնանք այն, ինչպիսին լինել դա՛ է թելադրում:

- Եղի՛ր ավելի բարձր էակ, քան մարդը:

Ի՞նչ, երիտասա՛րդ հայություն, պիտի դառնա՞ս մեր դյուցազնախառն սերունդը, պիտի կարողանա՞ս կատարել ժամանակի պահանջը ու փրկել՝ ապագան վտանգված մեր ժողովուրդը:

Ցանկության դեպքում՝ ԱՅՈ:

ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔ

Գերագույն հաճույք է ինձ համար՝ վերհիշել - թող հիշեցնեմ և քեզ, ընթերցո՛ղ , մի այլաբանական և իմաստալի պատկեր. Կարլ Հաուպտմանի[11] ծանոթ թատերգությունից:

Տարվա այն եղանակն է, երբ բոլորը ձգտում են դեպ լեռները: Անսպասելիորեն, «Հսկաների Լեռան» վրա պայթում է փոթորիկը: Մարդիկ ապաստան են գտնում փրկարար տանը: Այնտեղ երգ, երաժշտություն, հանգիստ կա: Դուրսը փոթորիկը կրկնապատկել է իր կատաղությունը: Երկնահաս կատարների վրա հայտնվում է արծվահայաց մի տղամարդ՝ ջահել, գլխաբաց, գանգրահեր: Նրա կողմից ընթանում է մի ամեհի զամբիկ՝ իր թեթևորեն թամբված և ապերասան ձին:

Մեկը՝ պատկերը ուժի, մյուսը՝ խելահեղ թռիչքի:

Մարդը կանգ է առնում ժայռերի վրա և խոսում ինքն իրեն: հատնվում է մի ուրիշը, սպառազեն հրեշտակի պատկերով: Առաջինը «Լեռների Պահակն» է, երկրորդը՝ համագերմանական Ազատության և Միության թևածող բանբերը: Նայի՛ր և տե՛ս,- ասում է այդ վերջինը և նշանացի ցույց տալիս ընկերոջը, բարձրացող փոթորկի ալիքները: Անհամար զինավառ զանգվածներ՝ ատելությամբ գնով և ոգևոր: Նրանք կուտակվում են Արևելքում, Հարավում, Արևմուտքում: Շարժվում են լեռներով, գետերով, ծովերով: Նրանց ոտքի տակ տրորվում է և երկինքը, օդը: Գալիս են գերման մշտաջահել հայրենիքի դեմ:

Ժամանա՛կն է, ահազանգի ժամը: Լեռների Պահակը պիտի արձակի իր ճիչը, նա հեռուները պիտի նետի իր աղաղակը.

- «Հայրենիքը վտանգի մե՞ջ է, արթնացե՞ք»...

Կանչը գնում է, հասնում հեռուները, բայց մնում անարձագանք:

- «Մեկ է՛լ»,- թելադրում է Ազատության Ոգին:

- «Հայրենիքը վտանգի մե՞ջ է, արթնացե՞ք»...

Թույլ արձագանք: Լռել են երգն ու երաժշտությունը փրկարար տանը, բայց ոչ ոք դեռ դուրս չի նետվել:

Անհանգիստ՝ Լեռների Պահակը նետվում է ձիու վրա և շեփորում զարհուրելի ուժը.

- «Հե՞յ, հայրենիքը վտանգի մեջ է, արթնացե՞ք, փրկե՞ք»...

Այժմ ոտքի վրա են բոլո՛ր, բոլո՛ր: Ամեն ոք աճապարում է դուրս և իզեն:

Այժմ ոտքի վրա է ողջ ցեղը և լսվում է նրա երգերից ամենագոռն ու էլեկտրացուցիչը:

* * *

Դու՛, հա՛յ երիտասարդություն, պիտի ուզեի, որ դու լինեիր «Լեռների Պահակ»ը մեր կյանքում:

Եվ պահապան հրեշտակը մեր Ազատության ու Միության:

Պիտի ուզեի, որ դու հաճախ ու հաճախ հայ աշխարհի ամբողջ տարածությամբ արձակեիր անհանգիստ աղաղակդ.

- Հէ՞յ, վտա՞նգ կա, թրքական վտանգը, սև ամպի պես կախված Հայաստանի գլխին, վտա՞նգ, որ միայն յոթնիցս կույրերը չեն տեսնում...

ԲԱՑ ՆԱՄԱԿՆԵՐ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ[12]

Քննադատել - հոգեպես տառապել է նշանակում:
Մեղքերն եմ ասում և ո՛չ մեղավորը:
Բուլղարական առած

Ա

Վերջին տասնամյակի դեպքերը - թրքահայոց կոտորածը, Հայաստանի ստեղծվելը, նրա կորուստը, ռուս-տաճկական նոր սահմանագծումը, սրա հետևանքով Մերձավոր Արևելքում մեզ համար առաջ եկած ծանր պայմանները, հայրենազուրկ հայության տագնապի վիճակն արևմտյան գաղութներում և այլն- մեզ դրին նոր իրողությունների առաջ:

Ցնցվեց մեր կյանքն իր էական բոլոր կողմերով: Հսկայական փոփոխություններ առաջ եկան, ուշագրավ երևույթներ: Եվ հանրածանոթ իրողություն է, որ այս դեպքերը զարգացան բոլորովին հակառակ՝ մեր տրամադրության՝ արտաքին իրողությունների թելադրությամբ: Մենք անզոր եղանք ուղղություն տալ նրանց: Այս նշանակում է թե ներքուստ մենք պատրաստ չէինք դեպքերի իմաստը հասկանալու, զանոնք մեր քաղաքական ձգտումներին համընթաց դարձնելու:

Մենք ունեինք հոգեբանական սարսափելի թերի, և բնական է, որ հետևանքը այլ բան չէր կարող լինել, քան այսօրվա անմխիթար կացությունը:

Սակայն կացությունը առանձնապես ողբերգական բնույթ է ստանում այն պատճառով, որ մինչ մի կողմից աղետներից ու փորձություններից հետո պատմության բերումով մեր ժողովուրդը հասունանում է, նրա մեջ անկախության գաղափարը ժողովրդականանալով դառնում է հոգեբանություն, մյուս կողմից նա տկարացել է, փոքրացել և Արևելքի պայմաններում մի ինքնուրույն պետություն ստեղծելու համար - թվական ուժի տեսակետից - դարձել է խնդրական:

Բնական է, որ հայոց պետության կորիզը պիտի կազմե Խորհրդային Հայաստանը իր 28,000 քառ. կիլոմետր տարածությամբ և մոտ մի միլիոն բնակչությամբ: Չլինեին մահմեդական Արևելքի յուրահատուկ պայմանները և իսլամ ժողովուրդի փոխհարաբերությունները, դարերի արյունոտ իրողություններով հոգեբանություն դարձած անհանդուրժողությունը, թուրք-թաթար ժողովուրդների քաղաքական ձգտումները, գուցե անկարելի չլիներ Խորհրդային Հայաստանի աստիճանական զարգացումը և ավելորդ՝ մեր մտահոգությունը:

Սակայն մի ակնարկ քարտեզի վրա կբավի հասկանալու այն, թե ինչ է սպասում մեզ:

Այդ փոքրիկ Հայաստանի ռազմագիտական բոլոր կարևոր կետերը խլված են: Նա պաշարված է մեր դարավոր թշնամու կողմից: Այդ պաշարումը դրված է այնպիսի հաշիվներու վրա, որոնք մի ակնհայտ իմաստ ունեն՝ հարմար պարագային նվազագույն զոհողություններով և ամենակարճ ժամանակամիջոցում բնաջնջել հայությունը:

Հայաստանը խոցելի է մի շարք տարբեր կետերից. ընդամենը մի քանի ժամվա ընթացքում այդ կետերով Թուրքիան կարող է կտրել, իրարից բաժանել հայկական գավառակները և միանալ Ադրբեջանին:

Թշնամին ունի մեզ բնաջնջելու վճիռ, մենք չունենք ինքնապաշտպանության ծրագիր և ինքնապաշտպանունակ զենք:

Սակայն տարիներն անցնում են և ոչ մի փորձ այդ ուղղությամբ:

Մի չափազանց ուշագրավ և ցավալի պարագա է սա: Այդ նշանակում է, թե մեր ժողովուրդը ոչ միայն պատերազմի և խաղաղության մասին սխալ ըմբռնում ունի, այլև անուղղելի է իր անփութության մեջ՝ դեպի սեփական գոյությունը, զուրկ խրատվելու և հրահանգվելու ընդունակությունից, անկարող ըմբռնելու մի տարրական ճշմարտություն, թե՝ խաղաղապաշտ և անարի ժողովուրդները պատերազմից անհամեմատորեն ավելի են տուժում:

Բարոյա-նյութական առաջընթաց - ասել է՝ ներուժ ինքնապաշտպանության: Առաջընթացի հրամայականն է ինքնապաշտպանությունը: Այլևս ոչ ոք չի հավատում- մեր ժողովրդից զատ- չի կարելի կանգնեցնել առաջընթացի հաղթական կառքը՝ գետինը փռված պարտվածների և թույլերի հառաչանքներով:

Այլևս ոչ ոքի համար գաղտնիք չի, թե պետությունները բնական հակառակորդներ են, որոնցից ամեն մեկը ձգտում է տարածվել, ուժեղանալ, շահել իր հարևանների հաշվին: Հարձակվում է, ով իրեն ուժեղ և պատրաստ է զգում հարձակվելու՝ լավագույն պաշտպանողականը համարելով նախահարձակողականը:

Հարձակվում է նա՝ ով, որ իր դիմացը թուլություն է տեսնում: Ամեն մի ժողովուրդ, երկաթե անհրաժեշտությունից մղված, նախապատրաստվում է, անում այն, ինչ որ անում են բոլորը:

Թույլը սարսափում է՝ չլինի թե կուլ գնա ուժեղին, իսկ ուժեղը արթուն հսկում է, որ իր հակառակորդը չգերազանցի իրեն:

Եվ խաղաղապաշտ ու անարի ժողովուրդները տկարանում են և դառնում որսը նրանց, որոնց ուժը աճում է և ծավալվում անդիմադրելիորեն:

Հասկանանք և հետևյալը.

Պայմանագրերն ապրում են այնքան ժամանակ, որքան ապրում են նրանց ծնունդ տվող պայմանները: Թրքո-բոլշևիկյան պայմանագրին կարող են ապավինել միայն նրանք, որոնց տգիտությունը ներելի չէ մեր դարում:

- Հանուն խաղաղության չեն կնքում պայմանագրերը, այլ հանուն պետության օրվա կենսական շահերի:

Պետությունները հաշվի են առնում միջազգային իրավունքը և հարգում իրենց ստորագրած պայմանագրերը քանի դեռ շահում են գոյություն ունեցող դրությունից. սակայն հենց որ մի այլ դրություն, հենց որ մի ուրիշի թղթե բարեկամությունը իրենց ավելի շահավետ թվաց նրանք թքում են պայմանագրերի վրա, լքում իրենց նախկին զինակիցներին և սպառնում աշխարհի խաղաղության:

Այս է իրերի առարկայական դրությունը, այս է իրական աշխարհը և ոչ այն, որի սխալ և խաբուսիկ պատկերացումով օրորվել և օրորվում է մեր զգացմունքային ազգը:

Բ

Մի աշխատասեր և նյութական ապագայի համար այնքան ծիրքերով օժտված ժողովուրդ, որ նյութական բարիքներ կուտակել և ամբարել գիտի տարվա բոլոր եղանակների համար, որ ծիծաղելի կհամարի, եթե մեկը ամռանը միայն արևի գեղեցկությամբ հիանա և չմտածի ձմռան մասին - զարմանալիորեն իդեալիստ է դեպի խաղաղությունը, աղոթում է նրա արևին և բնավ չի հավատում, թե պատերազմի ձմեռ կա:

Սակայն պատերազմը գալիս է հակառակ մեր ցանկության, որովհետև հակամարտության օրենքն է կառավարում աշխարհը:

Այս ճշմարտությունը չի ուզում հասկանալ մեր ժողովուրդը - դրա համար էլ խաղաղ տարիների քրտնաջան աշխատանքով կուտակած բարիքները պատերազմի օրերին տալիս է թշնամուն, իսկ ինքն իբրև մուրացկան ծանրանում է օտարների վրա:

Մենք կուզեինք, որ մեր ժողովուրդը ևս վերջապես ըմբռներ, թե խաղաղությունը ոչ թե հավերժական չէ, այլ ժամանակավոր զինադադար միայն:

Խաղաղությունը նույնիսկ նորմալ վիճակ չէ, խաղաղություն չկա մեր երկրագնդի վրա, չի կարող լինել և մարդկային պատմության մեջ:

Պատերազմը ժողովուրդների կյանքում անխուսափելի պահ է - դա չի մղվում սոսկ գիտակցական հաշիվների համար, դա մեկն է մարդկային հեղաշրջման (էվոլյուցիա) ամենաբուռն արտահայտություններից: Պատերազմը բնազդ է, - այդ է պատճառը, որ մարդիկ պատերազմում են համարյա ակամայից, դեմ գալով գիտակցության պահանջքներին, բարոյական օրենքներին, և հետևանքներին գիտակցաբար անդրադառնում հաշվեհարդարից, հաղթությունից կամ պարտությունից հետո:

Խաղաղությունը օրվա մարդկության համար ոչ այլ ինչ է, քան հոգնածություն:

Պարտված է այն ժողովուրդը, որը շուտ է հոգնում:

Պատերազմի է ձգտում նա, որ կազդուրված է:

Պատերազմը կազդուրվածի, առողջի ցանկությունն է, ինչպես որ խաղաղությունը թույլի բաղձանքն է, հոգնածի՝ երազը:

Անշուշտ, խաղաղությունը հոգնած ժողովուրդների համար բարիք կլիներ, եթե պատերազմից հաղթական դուրս եկածները խաղաղությունը չարաշահել չիմանային:

Խաղաղության չարաշահումն ավելի՝ է աղետավոր պարտված ժողովուրդի համար, քան նույնիսկ պատերազմը:

Պատմության մեջ քիչ են կոտորածային ոչնչացումների դեպքերը, մինչ հսկայական ժողովուրդներ աննպաստ խաղաղության մեջ, առանց արյունոտ հարվածների, անհետացել են դանդաղորեն:

Դանդաղ ոչնչացումի մի խաղաղություն է մեզ համար, ինչ այսօր իշխում է Մերձավոր Արևելքում:

Թշնամին հսկում է ոչ միայն գերեզմանացած Թրքահայաստանի,այլև Խորհրդային Հայաստանի խաղաղության վրա: Ամեն րոպե նա կարող է խանգարել այդ խաղաղությունը և եթե մինչև այժմ չփորձեց խանգարել - դա նշանակում է, թե այդպես ավելի նպաստավոր է իր քաղաքական նպատակների համար:

Բացի այդ դժբախտ պարագան, կան հոգեբանական և այլ կարգի պատճառներ, որոնք մեզ ավելի հոռետես են դարձրել դեպի մեր ժողովուրդի ապագան:

Նախ չափազանց նեղ և աղքատ է ներկա Հայաստանը:

Ինքնախաբեություն է հուսալ, թե կովկասյան յուրահատուկ պայմաններում, օտար ազդեցության ներքո, շրջապատված թշնամի ժողովուրդներով, հայությունը կուլտուրա-տնտեսապես բարգավաճի, քաղաքական ուժ դառնա՝ պետություն ստեղծի:

Ներկա Հայաստանը կազմում է հազիվ 1/12-ը մեր պատմական հայրենիքի: Դա հայրենիք չէ, այլ հայրենի անկյուն:

Այժմ իր սահմաններում նա չի կարող տեղ տալ ի սփյուռս աշխարհի ցաք ու ցրիվ եղած հայրենազուրկ հայության՝ գաղութահայության, որի թափառիկ վիճակն աղետավոր է երկու տեսակէտից. նախ որ նա ենթակա է ստույգ կորստյան, օրինակ՝ Թուրքիայում կոտորածի, այլ վայրերում՝ խաղաղ բնաջնջումի, ձուլումի:

Հայրենի անկյուն և թափառական ժողովուրդ: Մի ճակատագիր, որ երկմտության և տատանումի է մատնել մեր ժողովուրդը, այսինքն՝

ազգային հոռետեսության: Իսկ վայ այն ժողովուրդին, որ վարակված է այս հիվանդությամբ. այդպիսին կանգնած է գերեզմանի ափին:

Չսարսափե՞նք, բայց և առանց սին պատրանքների և ավելորդ նախապաշարումների ընդունենք այդ դառնադառն ճշմարտությունը - մեր ապագան վտանգված է:

Գ

Անիմաստ կլիներ այս ճշմարտությունն ընդունել, եթե դա մեզ միայն սարսափի պիտի մատնի և ոչ՝ ցնցի:

Ցնցումները ժողովուրդների կյանքում փրկության լրծ-ակներ են: Անբարոյական է և կորած մի ժողովուրդ, եթե գոյությունն ապահովելու համար անընդունակ է խոր ցնցումների:

Հոգեկան ցնցումների ընդունակ ժողովուրդները միայն կարող են վերանորոգվել: Աղետավոր չէ կորուստներ ունենալը, աղետավոր է զուր կորուստներ ունենալը, այսինքն՝ անցյալի դեպքերից խրատվել, փորձվել, սթափվել չիմանալը. պարզ՝ աղետավոր է վերագնահատումների անընդունակ լինելը:

Առանց վերագնահատումի՝ անիմաստ է որոնումը, իսկ առանց որոնումների՝ ոչ թե միայն ժողովուրդների միտքն է մեռնում, այլ և հենց իրենք՝ ժողովուրդները:

Վերագնահատումի պիտի ենթարկենք ոչ միայն դեպքերի առարկայական բնույթը, այլ մանավանդ մեր հոգևոր կյանքի ենթակայական տարրերը:

Պիտի որոնենք, փնտրենք, գտնենք մեր դժբախտության իրական պատճառները, ճանաչենք մեր իսկական վերքերը, ախտորոշանքի պիտի ենթարկենք մեր ժողովուրդի հոգին, որից հետո միայն խոսք կարող է լինել բուժումի մասին:

Իսկապես, ինչո՞վ պարտվեց և բարեկամներից լքվեց հայ ժողովուրդը:

Ո՞վ է մեղավոր, երկրի աշխարհագրական դի՞րքը, քրիստոնեական Եվրոպա՞ն. մահմեդական Ասիա՞ն, ճակատագի՞րը:

- Բոլորը՝ բացի մեզնից,- այսպես կտրամաբանի մեր անուղղա քաղքենիամտությունը:

Այս մտայնությո՞ւնը ... գանգատվում, դժգոհում է նա, անիծում է ճակատագիրը և կրկնում անվերջ, թե ընկած ենք աշխարհի մեծ ճամբաների վրա, թե աշխարհագրական ճամբաները վատ են:

Այստեղ կա մի խղճուկ ճշմարտություն, բայց դրա հանդեպ ի՞նչ հոյակապ առավելություններ: Չէ՞ որ մեր բարձրավանդակն անառիկ է, մեր լեռները՝ մեկ մեկ անխոցելի պատնեշներ: Անտեսել այս իրողությունը և ողբալ ճակատագիրը ոչ այլ ինչ է, քան թույլի, անարիի ինքնարդարացում: Թույլի ինքնարդարացում - տկարի հոգեբանություն: Այստեղ ոչ միայն նախապաշարում կա, այլև առաքինություն թերի:

Անարդար կլիներ հավատալ հիվանդներին, երբ սրանք գանգատվում են աշխարհից:

Աշխարհը պատկերացում է, իսկ պատկերումի աղբյուրը հոգին է: Հոգով հիվանդություն ունեն ժողովուրդները, երբ դժգոհում են իրենց հայրենիքից:

Գուցե իրոք աշխարհի ամենից անառիկ բարձրավանդակներից մեկի վրա բազմած ժողովուրդը անարժան է իր ճակատագրին, բայց ճակատագիրը՝ երբեք ապերախտ:

Լիներ հզոր՝ աշխարհի այդ հոյակապ կամուրջի վրա հրաշքներ կգործեր հայությունը: Տկար էր, տկարացած - դառած անարժան իր բնաշխարհին:

Հիվա՞նդ, դժբախտ ժողովուրդ, որ մինչև այժմ երկու առաքինություն է ունեցել՝ իր դժբախտությունները վերագրել արտաքին պատճառների և փրկությունը հուսալ արտաքին ուժերից:

Այստեղ է պատճառը մեր տարօրինակ հավատի և խանդավառության, երբ օտարը խոստումներ է կատարում, և նույնքան տարօրինակ հիասթափության և հուսալքումի, երբ նա դրժում է խոստումները:

Աղետալի ինքնաժխտում, որ մեզ հոգեբանորեն այնքան անարժեք է դարձրել, որ անգամ մեր դժբախտության մեջ մեղքի որոշ բաժին էլ մեզ տալը զլանում ենք: Մենք այնքան անարժեք ենք թվում մեզ, որ չենք կարծում, թե քաղաքական աշխարհում որևէ բանի պատճառ - անգամ դժբախտության - մենք կարող ենք լինել: Ամեն ինչ լինում է, գուցե մեզ համար, բայց մեզնից դուրս, անկախ մեզնից: Քաղաքական մի կույր պատեհապաշտություն, որ մթագնել է մեր բանականությունը անգամ մի կոպիտ, մի աղաղակող ճշմարտություն տեսնելու - այն է, թե մեր դժբախտությունների համար մեղավոր են ոչ թե բոլորը, բացի մեզնից, այլ նախ և առաջ մենք:

Դ

Տարօրինակ է - տրամաբանում է մեր քաղքենիամտությունը - մեր հավատքը դեպի Եվրոպան կույր զգացում էր, մեր ներողամտությունը դեպի թշնամին՝ քրիստոսային, բայց և այնպես մենք ջարդվեցինք ու լքվեցինք:

Ոչինչ չկա տարօրինակ, ջարդվեցինք և լքվեցինք, որովհետև Եվրոպացու հոգեբանությանը բոլորովին անծանոթ էինք:

Դեպի Եվրոպան մենք ունեինք մի քրիստոնեական զգացում և շնորհիվ մեր տարօրինակ խորհրդապաշտության - մեր ազգային հիվանդության - մեր սեփական տրամադրությունները դրել էինք Եվրոպացու հոգու մեջ և ամենախոր կերպով հավատացել, թե բոլոր քրիստոնյա ժողովուրդները նույն զգացումներն ունեն մեր հանդեպ, թե բոլոր պատերազմները մղվում են հանուն մեր փրկության:

Այս ինքնախաբեությունը մղեց մեզ քաղաքական մուրացկանության, և քանի որ մենք նաև թույլ էինք՝ անձնատուր եղանք լալկանության:

Մուրացկանություն և լալկանություն- մի ամբողջ ժամանակի հոգեբանություն, քաղաքական մեր միակ զենքը: Լալկանությունը, սակայն, ապացույց է հոգևոր տհասության կամ անարիության: Մուրացկանությունը զզվելի է ընդհանրապես: Մուրացկանին օգնում են ոչ միայն կարեկցանքից դրդված, այլև հաճախ զզվանքից:

Ավելի սարսափելի է քաղաքական մուրացկանությունը, քանի որ քաղաքականության մեջ կարեկցանք չկա, իսկ զզվանք՝ շատ քիչ:

Անորակելի է մուրացկանությունը քաղաքականության մեջ:

Աներես մուրացկանի եսականությունը բոլորովին բնական է համարում, որ մարդիկ, թեկուզ ամենից ընկածները, գթան իրենց:

Էլ ավելի աներես է մուրացկանը և պահանջկոտ, եթե նա միաժամանակ և հաշմանդամ է: Ահա մուրացկանի այս եսականությունը և հաշմանդամի պահանջկոտությունը դարձել են հոգեբանություն:

Հոգեբանական այս երկու կումերն Ավետարանի ներշնչմամբ ստացել են քաղաքական իմաստության, դիվանագիտական զենքի բնույթ:

Քրիստոնեական մի հոտի համար չքնաղ առաքինություն, սակայն միայն քրիստոնեական հոտի:

Այսօր մենք անիծում ենք քաղաքական բարերարներին, սակայն մոռանում, թե մուրացկանին և հաշմանդամին անկելանոց են տալիս և ոչ անկախ հայրենիք:

Երեկ այսպես էինք, երբ կրոնական հոտ էինք. այսօր հավակնություն ունինք մեզ քաղաքական ուժ համարելու, բայց չենք ազատագրվել հոտային հոգեբանությունից, որը թափանցել է քաղաքական հոսանքների մտայնության մեջ, որոնք դրա շնորհիվ անգիտակցաբար կառչել են կողմնորոշումների գաղափարին:

Ճիշտ է, նկատելի է մի քայլ առաջ - քրիստոնեական նախապաշարումից մինչև կողմնորոշում - սակայն այդ բոլորի մեջ կա մի խոստովանություն, այն է՝ թե մեր ժողովրդի որոշ տարրերը քաղաքական կյանքի համար թերևս պատրաստ չեն, խակ, անուժ, անարի և ապա՝ բոլորովին չազատագրված նախկին մտայնությունից:

Հայ քաղաքական մտքի դեգերումների մեջ սա մի երկրորդ շրջան է - մտքի կիսանկախ դառնալու շրջանը:

Այս շրջանը կարճ ժամանակում այնքան աղետավոր հետևանքներ ունեցավ և թվում է թե շարունակում է էլ ավելի մթագնել, արյունոտել մեր ճակատագիրը՝ պառակտելու, ներքուստ թուլացնելու մեր ժողովուրդը:

Այս հոսանքներն արդեն արտահայտություն են ստացել մեր կյանքում իբրև ռուսական կամ արևմտյան կողմնորոշման - խոսք կա անգամ Տաճկաստանի մասին - ծգտող քաղաքական խմբավորումներ, որոնց խելակորույս, ազգային տեսակետից անիմաստ բախումների հետևանքով մեծապես դյուրացրեց Հայաստանի անկումը և բաժանումը Ռուսիայի և Թուրքիայի միջև:

Սակայն այս մտայնության հետևանքը միայն քաղաքական կորուստ չէ: Ամենասարսափելին այն է, որ դա անվերջ պիտի ներշնչի մեր ժողովուրդին այն համոզումը, թե ինքը տկար է, կարոտ ուրիշների հովանավորության և այսպիսով կամազրկի, թուլացնի նրան անընդունակ դարձնի թեկուզ իր ինքնապաշտպանությունը սեփական ուժերով կազմակերպելու:

Անկախության հավակնություն ունեցող ժողովուրդները նախ պետք է այս մտայնությունից ազատվեն:

Ինքնուրույնությունից զուրկ ժողովուրդները չեն կարող պետություն ստեղծել: Պետությունը նախատեսում է ինքնուրույն քաղաքական միտք, պայքարելու ինքնակարողություն, կառավարելու նախածեռնություն, իսկ հաղթանակն այլ բան չէ, քան ինքնավստահ նախածեռնության պտուղը:

Եղան դեպքեր, երբ մեր այս կամ այն գավառը մենակ էր, բայց վճռական մենակի հոգեբանության շնորհիվ, հաջող կերպով տարավ իր ինքնապաշտպանության դժվարին պայքարը:

Եվ, ընդհակառակը, այն դեպքերում, երբ մեր քաղաքականությունը արտաքին ուժերի վրա հաշիվներ արեց - մենք պարտվեցինք չարաչար:

Պարտվեցինք, որովհետև այսպիսի հաշիվներով ղեկավարվողը զուրկ է վճռական մենակի հոգեբանությունից, այսինքն՝ հաղթելու ամեն հավանականությունից:

Քաղաքականությունն ընդհանրապես սարսափում է մենակությունից, իսկ կողմնորոշումների քաղաքականությունը այլ բան չէ, եթե ոչ մենակության սարսափը:

Համակվե՞լ է մի ժողովուրդ այս սարսափով - պարտված է, կորած:

Այստեղ է մեր դժբախտության մի այլ պատճառը. ընդունենք այս ճշմարտությունը ևս:

Մեր մի շարք հոսանքների օտարահակ տրամադրության, մեր ինքնակարողության պակասի և մեր մենակությունից սարսափելու պատճառով, մեր ժողովուրդը, որ այլ դեպքում պիտի կարողանար իր ինքնապաշտպանության գործը կազմակերպել հաջողաբար - դարձավ կամազուրկ մի ամբոխ ու պարտվեց:

Մեր պարտությունները հոգեբանական էին, պարտվեցինք ոչ թե նրա համար, որ թվապես ու տեխնիկաբապես թույլ էինք, տկար, այլ որովհետև այդպիսին էինք հոգեպես:

Մի օտարի հովանու տակ հայը եզակի և ռազմաշունչ կռվող է, իր սեփական դրոշի տակ՝ հաճախ անարի, պարտվողական:

Կարսում մենք ունեինք բնական ու արհեստական դիրքերի գերազանցություն, թվական առավելություն, ավելի լավ պարենավորում, բայց և այնպես պարտվեցինք, որովհետև չունեինք վճռական մենակի հոգեբանություն, ինքնուրույն կերպով որևէ բան անելու հավատ: Պարտվեցինք, որովհետև մենք միայն որպես ազգ, մասամբ գիտակցեցինք մեր պարտականությունը, մասամբ հասկացանք աշխարհի իրական պայմանները, փորձեցինք ոտքի կանգնիլ, բայց ոչ ամբողջովին և ոչ մեր ներքին ուժերի դրդումով:

Պարտվեցինք, որովհետև մեր ցեղի ոգու բովանդակ ուժերն օգտագործելու փոխարեն հովանավորներ փնտրեցինք:

Վաղը կկորչենք իսպառ - եթե մնացինք այս մտայնությամբ: Կփրկվենք, եթե ազատվեցինք նախապաշարումներից, եթե փորձեցինք ոտքի կանգնել, սակայն ոչ արտաքին դրդումով, օտարների ցանկությամբ, այլ մեր ներքին, բնական, անզուսպ մղումով:

Այսպիսով միայն կազատագրվի և կազատվի որևէ ժո-ղովուրդ:

Այդ ճանապարհին եթե եղան օժանդակիչ ուժեր, պիտի օգտագործենք որպես զինակից, բարեկամ:

Օգտագործել, և ոչ աղերսել - ըմբռնե՞ց հայն այս տարբերությունը - կանգնած է փրկության ուղիղ ճամբին:

Մինչև հիմա բարեգործներ և հովանավորներ ենք փնտրում - հիվանդ ենք, թույլ և տհաս մտահոգեպես:

Սրանից հետո զինակիցների մասին պիտի խոսենք, որովհետև հոգով առողջանալ, արիանալ ենք ուզում:

Զինակիցներ և ոչ բարերարներ - այդ նշանակում է, թե հայն արի է և ինքնապաշտպանվելու, պատերազմելու ընկեր է փնտրում: Քաջի իրավունքն է դա, նրա, որ վճռել է մենակ հաղթել և զինակցում է միայն ավելի հեշտ հաղթելու համար:

Արի՛ ժողովուրդ-սրա՛ն են միայն զինակցում, ձեռք մեկնում պետությունները: Հասկանանք այս ճշմարտությունը:

Փրկվելու համար պետք է նաև արիանալ, այսինքն՝ հաղթահարել սեփական սարսափը:

Սարսափից ազատագրված հոգին միայն ընդունակ է աշխարհն առարկայորեն տեսնել, պատկերացնել:

Երկյուղը միշտ էլ ճիվաղներ է ստեղծում՝ մտացածին հրեշներ:

Ժողովուրդները հաճախ մեռնում են հենց այս ճիվաղներից:

Քաղաքական գիտակցության թերին, անինքնակարողություն, սարսափի հոգեբանություն - ահա մեր եռագլխյան թշնամին:

Եվ մինչև որ չկարողանանք այս ներքին թշնամին սպանել, անկարելի է, որ արտաքին թշնամուց ազատվել կարողանանք:

Ասված է. «Մարդս մի բան է, որ պիտի հաղթահարվի»:

Այսպես. մինչև որ հայ մարդը չկարողանա ինքնինքը հաղթահարել - սպանել սարսափի անասունն իր մեջ, ներշնչվել նոր մտայնությամբ, հոգեփոխվել, կարծ՝ մինչև որ չդառնա արի և արիանուն ժողովուրդ՝ անհնար է, որ նա կարողանա ո՛չ միայն քաղաքականապես ազատվել, այլև ազգովին ոչնչանալու վտանգից խուսափել:

Արևելքում մեզ համար ստեղծված պայմանների մեջ կարող է ապրել արի և արիապաշտ հայությունը, բայց ոչ այսօրվանը:

Պատերազմների մեջ հաղթանակում է արին - այս նշանակում է՝ հաղթում է նա, ով սանձահարել է իր սեփական սարսափը, ու թշնամու հետ չափվելուց առաջ կառուցել է հաղթանակի շենքն իր հոգում:

Մեքենական կոպիտի ուժերի բախումը չէ պատերազմը, այլ՝ ժողովուրդների հոգեկան կարողության:

Դեռ ավելին՝ պատերազմը ժողովուրդների աստվածների գոտեմարտն է: Տեխնիկան՝ զենքն է, միջոցը, հոգին՝ պատերազմի դարբինը:

Զենքն անհրաժեշտ է - սակայն արի բազուկների մեջ:

Պայքարի պատրաստվող ժողովուրդները նախ սպառազինվում են հոգեբանորեն:

Անտեսվա՞ծ է այս պայմանը - անխուսափելի է պարտությունը և տեխնիկ միջոցների հանձնումը թշնամուն:

Հաղթելու համար պետք է սեփական պարտությունը հաղթահարել:

Հաղթահարել սեփական պարտությունը - նշանակում է ընդունակ լինել ինքնապաշտպանության, որը ուրիշ բան չէ, քան թշնամու պարտությունը:

* * *

Ինքնապաշտպանություն՝ ահա թե ինչ են թելադրում ժամանակն ու առաջընթացը:

Ինքնապաշտպանություն - ահա՛ մեր նոր կրոնը:

Ինքնապաշտպանություն- միակ միջոցը՝ որ թե՛ ժողովուրդների և թե՛ սրանց աստվածների գոյությունն է ապահովում:

Եսականություն չէ՛ բնավ, երբ մի ժողովուրդ իր ինքնապաշտպանությունը իր կրոնն է հայտարարում:

Ընդհակառակը, մի արյունոտ ողբերգություն է մղում ժողովուրդներին այս համոզման և ամենից արդար ժողովուրդները իրավունք ունեն այսպես վարվելու:

Ինքնապաշտպանությունը ոչ թե բնական իրավունք է յուրաքանչյուր ժողովուրդի, այլև պարտականություն դեպի մարդկությունը:

Ժողովուրդները ապրում են իրենց՝ ստեղծագործում մարդկության համար:

Ապրելու արժանի չէ միայն իրեն համար ապրողը:

Ժողովուրդներն ստեղծագործելու պարտականություն ունեն - հետևաբար և ապրելու իրավունք:

Մի ժողովուրդ, որ անընդունակ է ինքնապաշտպանության, նշանակում է զուրկ է այդ տարրական առաքինություններից,- առաքինություններ. որոնց չափանիշը ինքնապաշտպանության համար ցուցահանված ընդունակությունն է միայն: Զո՞ւրկ է մի ժողովուրդ ինքնապաշտպանության ընդունակությունից - նշանակում է նա զուրկ է ամեն առաքինությունից, զուրկ՝ գոյության բարոյական իրավունքից:

Երկար ժամանակ աղերսում էինք կյանքի, գույքի, պատվի ապահովություն - այնժամ ոչ միայն տկար էինք, այլև զուրկ առաքինությունից:

Ժողովուրդների կյանքը բռնավորների շնորհը չէ, նրանք չեն կարող ողորմությամբ ապրել և չպետք է ապրեն:

Մակաբույծ է մի ժողովուրդ, եթե իր ինքնապաշտպանության համար հենվում է միայն օտար ուժի շնորհին: Կյանքում մակաբույծն անբարոյական է, իսկ նմանը տեղ չունի պատմության մեջ:

Առանց զայրանալու ընդունենք և այս ճշմարտությունը:

Ինքնապաշտպանությունը մի պարգև չէ ուրիշից իրեն, այլ մի բան իրենից - իրեն, մի ազդեցություն ենթակայից - ենթակային:

Ինքնապաշտպանությունը մի ժողովուրդի գոյության ներքին ճիգն է: Մինչև հիմա այդ ճիգն արտահայտվեց որպես աղոթք, աղերսանք, մուրացկանություն - հետևանքը՝ հազար և հազար կրավորական զոհեր: Հիմա ճիգը մեր ներքին ուժի արտահայտությունը պիտի լինի:

Փտած են մեր հին զենքերը, եղծանված է հին մագաղաթը: Նոր ավետարանի խոսքը պիտի լսենք հիմա,- Ավետարանը Արիության:

Վահագնի հետ պիտի խոսենք հիմա - Աստվածը հին արիական հայության: Մի նոր գիրք պիտի դրվի մեր ժողովուրդի ձեռքը - Ավետարանը Արիների:

Արիություն - այս պիտի լինի մեր սերունդների կոչումը, քանզի այդ բարձր հատկությունն է փրկում ժողովուրդներին ֆիզիկական և բարոյական անկումներից, քանզի աստվածային միակ արժեքն է արիությունը, որով ժողովուրդները կգնեն իրենց անկախությունը և կապահովեն այն:

Արդ թե ինչո՞ւ արիության պատգամախոսները պիտի դառնան հայ մտավոր և հոգևոր կյանքի բոլոր ղեկավարները:

Ե՛վ դպրոց, և եկեղեցի, և քաղաքական կուսակցություններ, և մամուլ, և ապակուսակցական կազմակերպություններ - բոլորը, բոլորը պիտի համակվեն նոր մտայնությամբ, պիտի կրկնեն նոր ճշմարտություններ, կրկնեն անվերջ, անդադրում, մինչև որ արիական ինքնապաշտպանության գաղափարը դառնա ժողովրդական մտայնություն, ազնիվ կիրք, հոգեբանություն, մինչև որ հայությունը դառնա ինքնապաշտպանունակ:

Ե

Եկեղեցին:

Դա վերագնահատումի պիտի ենթարկի քրիստոնեական սիրո իր սխալ ըմբռնումը, որպեսզի դադարի թուլությունը առաքինություն համարել և սպանել մեր ժողովուրդի կամքը:

Սխալ է ըմբռնել դա քրիստոնեական սիրո խորհուրդը և դրա հետևանքով ամբողջ դարեր պատճառ դարձել մեր ժողովուրդի անօրինակ ողբերգության:

Սիրում է նա, ով ուժեղ է, ու հոգու առատություն ունի, ում ուժի բաժակը լցված է հորդելու, թափվելու աստիճան:

Արգասավոր թե՛ թույլի սերը:

Քծնանքն է թույլի ներումը:

Քրիստոսը սիրում էր, որովհետև ուժեղ էր. նա սիրում էր, որովհետև սիրելու և ներելու չափ հզոր էր:

Նրա անձնական կյանքը պիտի դառնա եկեղեցուն ուղեցույց:

Նրա մահվան խորհուրդը - հերոսական զոհաբերություն:

Նա զոհաբերեց, որովհետև գաղափարի հերոս էր:

Միայն արին, քաջը, միայն հերոսը կարող է զոհաբերել:

Անընդունակ է թույլը ինչպես սիրո, նույնպես և զոհաբերության:

Մի ժողովուրդ, որն ընդունակ չէ այս երկու առաքինության - դիպվածների կպարտի իր գոյությունը:

Քրիստոնյան նա՛ չէ, ով քրիստոնեական վարդապետության տարերքը սխալ է հասկացել, ընկել նախապաշարումների ցանցի մեջ և տկարացել կորչելու աստիճան, այլ նա, ում մեջ մի քիչ քրիստոսություն կա - մի կայծ ամենահզոր աստվածամարդու հոգուց:

Նա ամենակարողն էր, ամենահզոր - մենք առնվազն կարող և հզոր պիտի լինենք, որպեսզի կարողանանք սիրել և զոհաբերել:

Սխալվել, չարաչար սխալվել է մեր եկեղեցին՝ «տնանկ»ների և «սնանկ»ների բարոյականություն քարոզելով:

Սրանից հետո սիրո և զոհաբերության ընդունակ արի ժողովուրդի մասին պիտի խոսի, եթե ուզում է, որ քրիստոնեության հետքերը մնան Փոքր Ասիայում և Հայաստանում:

Ուժե՛ղ և արիակա՛ն ժողովուրդ, այնպիսին, որ ընդունակ լինի արհամարհել մահը՝ հանուն իր սեփական գոյության:

Այսպիսով կապրի ոչ միայն հայությունը, այլև Հայոց եկեղեցին:

Ինքնապաշտպանությունը հայ ժողովուրդի - ահա Հայ եկեղեցու նոր հավատամքը:

Չընդունե՞ց այս ճշմարտությունը, չքարոզե՞ց, չտարածե՞ց ամեն օր այս փրկարար գաղափարը, իր բոլոր միջոցներով չնպաստե՞ց մեր ինքնապաշտպանության գործին - կործանված է դա:

* * *

Մամուլը:

Նրա պարտականությունն է - խտացած ճշմարտություններ տալ ժողովուրդին:

Նպատակը այս ճշմարտություններով լուսավորել ժողովուրդին դեպի ապագան:

Չունի՞ մամուլն այս կոչումը՝ ավելորդ մակաբույծ է դա, և զուր տեղը ժողովուրդները կերակրում են այն իրենց հաշվին:

Դժբախտաբար, որոշ բացառությամբ, այսպիսին է մերը, հայկականը:

Լրագրություն և ո՛չ մամուլ - այս նշանակում է, թե մենք դեռևս տհաս ենք, թե չենք կարողանում մեր կյանքի ներքին կնճիռները գտնել, լուսաբանել դրանք և մեր միտքն զբաղեցնում ենք արտաքին եղելություններով, լուրերով:

Մեզ համար դեռ այն է հետաքրքիրը, ինչ մեզնից դուրս է կատարվում կամ միայն արտաքուստ առնչություն ունի մեզ հետ:

Այս մտայնությունը իշխել է մեր լրագրության մեջ համարյա իր սկզբնավորության օրից:

Փրկությունը դրսից է - այս բավական է, որ լրագրությունը խանդավառվի արտաքին բարենպաստ նշաններով, մի դիվանագետի կարեկից ժպիտով, մի անվանի եվրոպացու հայասեր արտահայտությունով, մի միսիոներական ընկերության հայանվեր ջանքերով, մի խաղաղասիրական վեհաժողովի հայանպաստ բանաձևով, մի պարլամենտական գործիչի զգացված ճառով ոևէ կոտորածից հետո, վերջապես այնպիսի բաներով, որոնք ժողովուրդների ինքնապաշտպանության և փրկության համար ոչ մի իրական նշանակություն չունեն:

Եվ այսպես ամբողջ տասնամյակնե՛ր ... և ոչ ոք չի զգացել, թե այդպիսով մեղսակից է դառնում հայկական ողբերգության՝ վրիպեցնելով ժողովուրդի ուշադրությունը իր փրկության միակ զենքից - ինքնապաշտպանությունից:

Եղել են լրագրային արտահայտություններ, հաճախ նույնիսկ ինքնապաշտպանության քարոզչություն, սակայն այդ բոլորը թերի, ոչ

զերծ արտաքին ուժերի հանդեպ ունեցած նախապաշարումներից, հետևաբար ոչ ամբողջովին ճշգրիտ, ոչ օգտակար:

Լրագրություն, որ տասնյակ տարիների ընթացքում չի կարողացել իր ժողովուրդի դժբախտության իսկական պատճառները մատնանշել, հազար և հազար զոհերից հետո մի ընդհանուր ճշմարտություն գտնել և ջանալ այդ ճշմարտությունը զանգվածների հոգեբանությունը դարձնել:

Լրագրություն, որի որոշ օրգանները արտաքին ուժերի հանդեպ ներող են, քծնող, խնկարկող, իսկ ներքուստ՝ պառակտիչ, անհանդուրժող և ամբարտավան:

Լրագրություն, որի որոշ օրգանները ղեկավարվում են փողոցի առաքինություններով կամ տարփողելով մեծ ժողովուրդների ուժն ու հմայքը, վատաբար արհամարհում են սեփականը:

Լրագրություն որ բորբոքում է թայֆայական կրքերը և ընդունակ չէ մի տարրական ճշմարտություն ընբռնելու. այն է, թե ժողովուրդի ինքնապաշտպանությունը մի գործ է, որի մեջ ամեն հոսանքի և ուղղության մարդիկ միակամ պիտի լինեն:

Լրագրություն, որ տարիների խանդավառությունից՝ դեպի օտար հույսերը, այսօր հիասթափված հայիոյում է աջ ու ձախ բոլոր ազգերին ու լեզուներին, և անընդունակ է ըմբռնելու, թե մեղավորը օտարները չէին. որ հայ ժողովուրդը չմղվեց, չդիմեց ինքնապաշտպանության և ջարդվեց:

Լրագրություն, որ ամեն օր աղաղակում է, թե հայությունը զոհ գնաց աշխարհակալ ժողովուրդների քաղաքականության, և անգիտակցաբար մխրճվել է դիվանագիտական կնճիռների մեջ, խոսում է կողմնորոշումների մասին դիվանագիտական ծիծաղելի մակերեսայնությամբ:

Այսպիսի լրագրությունը ավելորդ է հայ ժողովուրդին:

Ինչպես Հայ եկեղեցին, նույնպես և մեր մամուլը պիտի հոգեփոխվի:

Լրագիր մենք շատ ունենք, նույնիսկ ավելորդ, հիմա պետք է վերադաստիարակիչ հրապարակախոսություն:

- Հրապարակախոսություն, որ անսխալ կերպով ախտանշի մեր ցեղի հոգևորը և արմատական միջոցներ առաջարկի, որ վերագնահատումի ենթարկի մեր անցյալը և նոր ճշմարտություններ որոնի, որ լուսաբանի մեր ժողովուրդի կնճիռները, որ կռահի իր ժողովուրդին սպառնացող վտանգը և դառնա նրա հոգևոր սպառազինումի ահազանգը:

Մամուլ, վերջապես, որ ազատվի օտարահակ մտայնությունից և արիություն քարոզի, որ խոյակների փոխարեն հերոսական ժողովուրդի մասին խոսի և այդ այդպես, մինչև որ հայությունը խրոխ-

տաբար կանգնած իր բարձրավանդակի վրա, ապացուցի աշխարհին, թե ինքը արի է - տեր իր հայրենիքին և ճակատագրին:

Զ

Կուսակցությունները:

Հրամայողաբար պիտի հոգեփոխվեն նաև կուսակցությունները - սրանք՝ մասնավորապես: Մեր ներքին հակամարտությունները զինակցում են արտաքին թշնամուն՝ ընդդեմ մեր ժողովուրդին և երկրին:

Դժվար է հավատալ, թե կուսակցամիջյան այլանդակ պայքարի կատաղությունը բխում է միայն դեպի հարազատ ժողովուրդն ունեցած սիրուց - ժողովուրդ, որի փրկության մասին տարբեր ըմբռնում ունեն պայքարող կողմերը:

Մեր կուսակցության պայքարի միակ «մարտական միջոցը» պիտի լիներ բարոյական կշտամբումը և ո՛չ ավելին. ո՛չ սուտը, զրպարտությունը, իրողության խեղաթյուրումը, և նման բարոյազուրկ ու դատապարտելի դեմքերը:

Մանկորեն միամիտ են այն կուսակցությունները, որոնք ժխտելով բարոյականությունը քաղաքական պայքարի մեջ՝ կարծում են թե կարող կլինեն բարոյական մաքրություն պահել իրենց շարքերում:

Բարոյականի աղքատություն- ասել է բարոյական ուժերի աղքատություն:

Ժողովրդի մի մասի անունից հայհոյել մյուսին՝ հակառակորդին և տղայաբար ժխտել նրա գոյության իրավունքը - դեռ չի նշանակում դաստիարակել իր շարքերը:

Անիմաստ և զզվելի է քննադատությունը, եթե ստեղծագործություն չէ դա: Ով օրն ի բուն զբաղվում է իր հակառակորդի թերության քննադատությամբ - նա առնվազն զիջումներ է կատարում իր սեփական հոռությունների հետ:

Այդպիսին կարող է շահել, բայց շահած կլինի ի հաշիվ իր բարոյական առողջության: Այդպիսին կարող է և վնասել իր հակառակորդին, բայց ինքը ոչինչ կշահի:

Ստորությունը մնում է ստորություն անգամ այն դեպքում, երբ նա կատարվում է հանուն ամենանվիրական շահերի. դա նախ բարոյազրկում է և տկարացնում իրենից օգտվողին:

Անվերջ բարի խոսել իր կուսակցության և չար՝ այլոց մասին - և ծիծաղելի է, և՛անարդար:

Հոգեպես անառողջ է նմանը:

Խուժանավարել՝ չարաշահել զանգվածների մութ զգացումները և կույր ատելություն ստեղծել հակառակորդների հանդեպ - չի նշանակում գաղափարական պայքար վարել:

Այդպիսին ընկածության է մղում իր շարքերը. այդպիսին չարիք է և՛ իրեն, և՛ իր հակառակորդի, և՛ իր ժողովրդի համար:

Կույր ատելությամբ հիվանդ՝ մեր կուսակցություններից ոմանք մոռացել են հայ ժողովրդի ինքնապաշտպանության սրբազան գործը հանուն որի իբր թե կյանքի են կոչված:

Նրանք շարունակում են նեղսիրտ և իրարամերժ կռիվը՝ տկարանալու և տկարացնելու մեր ժողովուրդը, խաթարում նրա հավաքական հոգին՝ կատարում այն, ինչ որ պետք է արտաքին թշնամուն:

Եվ այդ ամենը միամտորեն կոչում են ժողովրդասիրություն, երբ էապես ժողովրդասպանություն է տեղի ունեցողը:

Այո, ժողովրդասպանություն:

* * *

Մտավոր կարճատեսություն է չհասկանալ, թե անվերջ ու անդադրում վերանորոգություն է կյանքը:

Հոգևոր անշարժություն - ասել է բարոյական մահ, մահացում:

Անտարբերություն, հոռատեսություն, բարոյական մահացում - ժողովուրդների անձնասպանության դանդաղ ձևեր են սրանք:

Վերանորոգվելու անընդունակ ժողովուրդները մեռնում են ամեն ժամ, ամեն վայրկյան:

Այո՛, հոգևարում են այն ժողովուրդները, որոնք հոգեպես ծույլ են ապրում, որոնք ղեկավարվում են պատահականությամբ, խճճված քաղաքական մոլորությունների և հոգեբանական սխալների մեջ:

Մեր կուսակցությունները կամ չեն հասկանում այդ, կամ ժամանակ չունեն հասկանալու:

Նրանց պակասում են ճշմարտություններ, որ փրկել գիտեն: Չկա, չի նկատվում մտքի ու ոգու լարում, իսկ ճշմարտությունները կարելի է հասկանալ միայն այդ լարումով:

Չկա ստեղծագործություն, չկա բարոյական ուժերի մթերում: Կա ընդհակառակը, կա հասկացողությունների քաոս և անիշխանություն, կա հոգեկան լճացում, կա բարոյական մակաբուծություն, - հոգեբանական մի աղետալի մթնոլորտ, որի մեջ չեն աճում, չեն փթթում բարոյական ուժեր:

Իսկ նման մթնոլորտում կդաստիարակվեն անարի, փոքրոգի և պարտվողական սերունդներ միայն- անարի ժողովուրդ, որի ուժերի մեծագույն մասը սպառվում է վախի և անհանգստության մեջ:

Կա օտարահակ կողմորոշումների գերագնահատում և սրանց խելագար հակամարտությունը՝ ծնունդ թույլերի հոգեբանության:

Կա անվճռականություն - ասել է թուլություն, որը ցույց տվող ազգը մեծապես արագացնում է և ուժեղացնում թշնամու հարվածը:

Կա այն ամենը, ինչ որ անհույս և վտանգված է դարձնում մեր ժողովրդի ապագան:

Մեղմ ասած՝ ստեղծվել է մի դրություն, որ մահվամբ է սպառնում մեր ժողովրդին:

է

Նա- անհատ թե հավաքականություն - որը բարոյապես կատարելագործվում է՝ ուղղակի թե անուղղակի կերպով նպաստում է իր շրջապատի բարոյական զարգացմանը:

Մեր կուսակցությունները՝ թողած բյուզանդական վեճերը և ամեն գնով իրար գետին զարկելու անմիտ ցանկությունը, թողած հակառակորդի թերության ամենօրյա ցուցադրությամբ իր սեփական այլանդակությունները քողարկելու սին ճիգերը,- թողած ամենը, հրամայողաբար պիտի զբաղվեն ինքնադաստիարակությամբ:

Անհատ, թե ժողովուրդ - սրանք միշտ էլ ավելի ուժեղ են քան կարիքը, քան վտանգը, քան թշնամին, - սրանք միշտ էլ կարող են գերազանցել իրենց, բարձրանալ իրենցից, եթե սրանց չի պակասում սեփական ուժերով ոտքի կանգնելու կամքը:

Բարձրանալով՝ հոգեպես բարձրացնել մեր ժողովուրդը, ինքնուղղումով սրբագրել ժողովրդի հոգին:

Գիտակցելով, թե ժողովուրդները չեն պարտվում եթե չեն ուզում պարտվել- գիտակցելով այդ ճշմարտությունը, մեր կուսակցությունները այն իրենց շարքերի միջոցով պիտի ներշնչեն մեր ժողովրդին՝ սրան հոգեպես գոտեպնդելու համար: Մեր կուսակցություններ-ը, սրանց միջոցով և՝ ժողովուրդը խորապես պիտի գիտակցեն.

- Քանի դեռ տրտնջում է, աղերսում, լալիս մի ժողովուրդ՝ պետք չէ օգնել նրան, քանզի այդպիսին կամովին հրաժարվում է իր գոյության իրավունքից:

- Չարժե և չի կարելի օգնել ընկածին, եթե նրան պակասում է ինքնօգնությամբ ոտքի կանգնելու կամքը:

- Ով չի աշխատում իր բովանդակ ուժերով՝ իրավունք չունի ուրիշներից օգնություն սպասելու:

- Սեփական ուժերով ինքնապաշտպանվելու անընդունակ ժողովուրդները պատժվում են մահվամբ:

- Իրավունքը ուժի հասկացողություն է և ոչ տրամաբանական, ինչպես և պայքարը հանուն իրավունքի - բարոյական հիմքը ժողովուրդների գոյության - անեծք թե, այլ օրհնություն:

Դատապարտված է մի ժողովուրդ, եթե նա իրավունքը զոհաբերում է իր հանցավոր հանգստին և ոչ ընդհակառակը:

- Թույլը մեղավոր է, որ թույլ է: Անբարոյականություն է թուլությունը՝ ստեղծված է սնուցանելու ուժը: Ժողովուրդները իրենց թուլության մեղքերը կքաղեն որպես պարտություն, ստրկություն, որպես անփառունակ գոյություն:

- Անպարտելի է այն ժողովուրդը, որ ղեկավարվում է ոգով, ձեռքով:

Այնտեղ, ուր կա ոգով, ասել է՝ բարոյական ուժերի ապացույցը - այնտեղ թվական գերազանցությունը, քարը, մետաղը, գրեթե կորցնում են իրենց նշանակությունը: Ոգու հետ զինակցողը բարոյական ուժերի հետ է զինակցում, որի միջոցներն աճում են անհավատալիության աստիճան, դառնում անսպառելի:

- Գլխավոր դերը ժողովուրդների պատմության մեջ խաղում են ո՛չ արտաքին պայմանները, ո՛չ քաղաքական կողմորոշումը, ո՛չ էլ դիպվածները, այլ՝ իրենց հոգեբանական նկարագիրը:

- Մի ժողովրդի գոյության արտաքին պայմանները հարազատորեն կապված են նրա ներքին հոգեկան դրության հետ: Ասել է՝ ամեն ժողովուրդ այնտեղ է, ուր նա հասել է իր բարոյական ուժերի մղումով:

Գիտակցելով այդ ամենը՝ մեր կուսակցությունները, մեր եկեղեցին, մեր դպրոցը, մամուլը պիտի հոգեփոխեն մեր ժողովուրդը:

Գիտակցելու, հարազատելու և գործադրելու այդ փրկարար ճշմարտությունները՝ մեր մտավորականությունը պիտի հաջողի վերադաստիարակությամբ, հոգեբանորեն բարձրացնել հայությունը, նրան պիտի հաջողի մեր ժողովրդի ոգու անպարտելիությամբ ապահովել նրա անպարտելիությունը - նրա ֆիզիկական և բարոյական գոյությունը:

* * *

Պետք է վերադաստիարակություն - իմաստուն դաստիարակություն է պետք՝ վերջին խաղաթուղթը ապագան վտանգված ժողովուրդների:

Դաստիարակությո՛ւն, որ հեղաշրջեր մինչայժմյան թույլի մեր հասկացողությունը իրավունքի և քաղաքական բարոյականի, քրիստոնեության, ուժի և թուլության, պատերազմի և խաղաղության մասին:

Դաստիարակությո՛ւն, որ ազգային հզոր զգացումով և արթուն գիտակցությամբ զիներ հայությունը, որ արիացներ և դառնար մայրը բարձր ժողովրդասիրության և գաղափարապաշտության, մղեր ընդհանուրի շահը միշտ էլ գերադասել անձնականից, թելադրեր անհատին ընդհանուրի երջանկության մեջ փնտրել իր անձնական երջանկությունը, մտատրամադրեր բոլորին, բոլորին՝ ավելի պարտականության տեր զգալ իրենց, քան իրավունքների, որ մղեր հայ մարդուն մեռնել ապրելու և ապրեցնելու և ոչ թե ապրել՝ մեռնելու համար, որ իրականացներ սոցիալական հնարավոր արդարությունը մեր ժողովրդի՝ մեջ - միակ պատճառը անարիների, ընչազուրկների և վատերի չգոյության, ասել է և հայրենիքների անպարտելիության:

Փրկարար դաստիարակություն, որ տար մեզ անհրաժեշտ առաքինություններն այն ժողովուրդների, որոնք արի են և վստահությամբ կնայեն իրենց ապագային, որ բարձրացներ մեզ մինչև գերագույն ըմբռնումն ու զգայնությունը, - հատկություններ, որոնք կհարյուրապատկեն ժողովուրդների բարոյական կորովը:

Դաստիարակություն, որ հոգեփոխեր և փրկեր մեր ժողովուրդը: Ահա՛ այս նոր դաստիարակության ստեղծագործ և փրկարար գործին է որ անվերապահորեն և վճռաբար պիտի լծվեն մեր կյանքի և պատմության ընթացքը շարժող բոլոր քաղաքականությունները՝ ազգային մի բարձր մարմինի հսկողության տակ, ընտրված բոլոր հոսանքներից:

Հրապարակ հանելով մեր ժողովրդի հոգևոր վերանորոգման անհրաժեշտության խնդիրը- կուզեի հավատալ, թե մեր մտավորականությունը հոգեպես անհանգիստ է մեր ժողովրդի ապագայի նկատմամբ, թե նա- մեր ունեցած ահավոր կորուստներից հետ, ժողովրդապանությանը համազոր կհամարի հնի շարունակությունը և երկաթե անհրաժեշտությունից մղված՝ առաքինություն կունենա անկուսակցականալ գո՛նե մեր ժողովրդի ինքնապաշտպանության խնդրում:

- Մեր պատմությունը հետ այսու աղետալի սխալների կրկնությունը պետք է չլինի, այլ՝ սրբագրությունը:

Էլ ոչի՛նչ այն ամենից, ինչ որ արվել է և արվում է արտաքին թշնամու գործը հեշտացնելու համար - սա պիտի լինի ինքնազգաստացումի և փրկության հրավիրող մեր օրվա աղաղակը:

Արվե՞ց այդ, վարվե՞ց այսպես մեր մտավորականությունը - վաղն ազգովին պիտի լինենք այն, ինչ որ ուզում ենք լինել:

Մարդկային աչքը դեռ չի տեսել այն մեծությունը, որին կարող են հասնել անհատներն ու ազգերը՝ իրենց հոգեկան ուժերի զարգացմամբ:

Վաղն այն ժողովուրդներինն է, որոնք գիտակցում և գործադրում են այս ճշմարտությունը:

Վաղը հաղթելու է նա, որը մինչ այդ վաղը իր հոգու մեջ կտանի հաղթանակը:

Հասկանա՛նք, հարազատե՛նք այս ճշմարտությունը և աշխատե՛նք վաղվա համար - եթե չենք ուզում կորչել որպես ազգ:

ՑԵՂԻ ՈԳՈՒ ՇԱՐԺԸ[13]

Ա. ԱՀԱՐՈՆՅԱՆ

Ի՞նչ արժե հանճարը, երբ նրան կպակասի մեծ սիրտը, երբ իր ողջ օլիմպիական մեծության մեջ նա անկարեկից է, անխռով, պաղ: Անարժեք է, թե՞ դա, երբ իր խոսքն իշխանություն չունի հոգիների վրա և չի նպաստի իր ժողովրդի հոգևոր ինքնակառուցմանը, երբ իր ցեղի ճակատագրի գերզգացողությունը չունի, և չի սնուցում իր ցեղի հավիտենականության ծգտումը:

Միևնույն է, թե՞, կա, թե չկա նմանը, երբ իր շրթունքներին ցեղի խոսքը թեև չգիտե վերադաստիարակել, արիացնել ու վարել զանգվածները. երբ անզոր է ինձ, ձեզ և հազարներին զինվորագրել տալ մի մեծ ու արդար դատի և կարիքի դեպքում, իր ժողովրդի ծոցեն շանթանման հերոսներ քամել:

Արդարև, ի՞նչ արժե հայ հանճարը, եթե նա հոգետոհմություն չունի իր ցեղի անցյալ առաջնորդների հետ, երբ չունի յոթնիցս երջանկալի գիտակցությունը, թե ինքը եղբայրն ու ցեղակիցն է Մեծն Տիգրանի և Ավարայրի անմահ Սպարապետի:

Ի՞նչ շահ նմանեն, թեկուզ նա մեծ արվեստագետ լինի և արդար հպարտանքով կարողանա ասել իր մասին. *Արվեստը՝ դա ես եմ:*

Արդյոք օրինաբե՞ր է դա, չգիտեմ. քաջ գիտեմ, սակայն, որ նմանը պիտի չդառնար Ահարոնյան՝ հոգևոր առաջնորդը, տրիբունը և մարգարեն իր ժողովրդի:

Ամեն անգամ, երբ մտածումս կդառնա հայ մեծագույն գրագետի շուրջը, կմղվեմ մտապատկերել մեծահանճար Միքել Անջելոն, որը կուրանալուց իսկ հետո, կշարունակեր ստեղծագործ քաղցրությամբ շոշափել իր մարմարիոնե կոճղը:

Ահարոնյանն էլ իր մարմարիոնն ունեցավ - մեր ցեղի ճակատագիրը: Մե՛ծ արվեստ և վիրավոր Հայրենիք: Այդ վերջինի վերքերն սպիացնելու զորություն պիտի ունենար առաջինը: Նա սպասավորեց երկուսին էլ, առաջինի միջոցով՝ երկրորդին: Մեկը, որպես միջոց-գրականությունը, մյուսը, որպես գերագույն նպատակ - ազգը: Նա սիրեց երկուսն էլ և եղածն աննախընթացորեն մեծ իր սիրո մեջ: Մեծ արվեստագետ և մեծ վշտակիր: Հայության այդ սիրաշատ հանճարը գիտցավ իրեն տրված աստվածային շնորհքը ծառայեցնել մեր ցեղի անհատականության թարմացումին, և ապա նրա վերածնունդի և ազատագրության սրբազան գործին: Եվ հենց սրանում է Ահարոնյանի մեծությունը որպես Հայ և Գրչի Մարդ:

* * *

Ամեն արվեստագետ ստեղծագործության իր ճամբան ունի, որի վրա նա - հաճախ իր առաջին իսկ քայլափոխերին - հանդիպում է աներևույթ մեկին, որին և դարձնում է իր անբաժան ուղեկիցը: Ներշնչող Ոգին է դա: Այդ ճամբի վրա մեկը հանդիպում է իր սեփական Եսին և դառնում երգիչն իր փոքրիկ կարոտների: Մյուսը հանդիպում է հաղթական երթին և ծնունդ տալիս սիրային իր երգերին: Երրորդը - դասալի՛ք գրվում, որը վիպական աշխարհ է փնտրում՝ մարդկային կյանքի անիծյալ հարցերից այնտեղ փախչելու համար: Անցողականից դեպի հավիտենականը տանող ճամբի վրա՝ Ահարոնյանը հանդիպեց իր Ցեղի Ոգուն, և նրա հետ իջավ *Արցունքի Հովիտը*, ուր նա ներքին հաղորդակցությամբ իր ճակատագիրը կապեց Հայության ճակատագրին և սիրեց այն մի նոր ու մեծ սիրո՛վ, հավերժ անսպառելի և կենարար սիրով:

Ու այնուհետև Հայ Մտածումի և Զգացումի բոլոր ճամբաների վրա նրան առաջնորդեց Ցեղի Ոգին:

Այսպես, նա հետ մղեց անձնակենտրոն իմաստասիրությունը, որը փոքրիկ պատասխաններ ունի մեծ հարցերի համար, նա խորշեց Հեգելից, որը անդորրապես կփիլիսոփայեր Ենայի մեջ, թնդանոթների բոմբյունների տակ, երբ իր շուրջը գերման հայրենիքը կկործանվեր: Նա դարձավ հայության Ֆիխտեն, որպեսզի հրեղեն խոսքով իր ժողովրդի սիրտը վառի ու սրբի: Ցեղը կռվի էր բռնված մահվան հետ, և Ահարոնյանը մի նոր հոգևոր ակորդ մտցրեց մեր կյանքի մեջ - սեր դեպի տիտանականը՝ պայքարի և զոհաբերության մեջ: Ժողովուրդը կպատրաստվեր *նոր ճակատագիր* կռել իրեն համար, և Ահարոնյանը չուշացավ հայ հոգեբանությանը պատվաստել հիացումը պայքարի և քաղցրությունը հաղթանակի: Նա մարգարեացավ գալիքը և երիցս զանգահարեց հայության վարած վերջին ճակատամարտների մասին: Նա երգեց մեր ցեղին հատուկ Վահագնյան քաջությունը և հայ ռազմիկները մշակեցին Արվեստից Արվեստը՝ ժպտադեմ մեռնելու հոգեբանական արվեստը: Նա բորբոքեց ինքնազորության ծարավը երկու սերունդների հոգում, և գիտցավ ներշնչել, թե Հայաստան Երկիրը միայն ցանկալի՝ որսավայր չէ իր գայլ հարևանների համար, ո՛չ էլ հարմար վայր միայն անփառունակ գերեզմաններ փորելու, այլ, որ դա հարմար է, նաև անկախության ու փառքի տաճարներ բարձրացնելու համար:

Արիադավան և արի ժողովուրդ. փոքրաթիվ ազգ - մե՛ծ հոգի: Այսպիսին նա ուզեց տեսնել հայությունը, այնպիսի՛ն, որ կարողանար սեփական ձեռքով վարել իր ճակատագրի՝ նավը, որն այլապես պիտի չկարողանար անվտանգ անցնել պատմության Աքիլա Քարիբդիսեն: Եվ այդ իսկ պատճառով, իր ցեղի կամքն աճեցնելու համար, նա քարոզեց ազգայնորեն բացարձակապես անհրաժեշտը: Նա գրել գիտցավ սրտերի և խղճմտանքների մեջ, և գերազանցորեն հոգենորոգ եղած նրա ցեղաշունչ խոսքը:

Նրա համար, գրականությունը, նախքան ամենայն, եղավ մարգարեացումների միջոց, ահայտության մթնշաղի միջից իր ցեղի ապագան նշմարելու մի գերագույն ճիգ: Գրականության մասին ունեցած այդ վսեմ ըմբռնումն էր, որ իր կյանքը վերածեց անվերջ հսկումների, որոնց ընթացքին Հայ Ճակատագրի հոգսը տանող արվեստագետը պիտի փորձեր երկյուղորեն բարձրացնել ապագան ներկայի աչքը ծածկող վարագույրը, և այսպիսով որոշ գաղտնիքներ կորզել ժամանակի ծոցից: Բա՛րձր գրականություն. որի մեջ ճշմարտորեն մեծ են միայն նրանք, որոնց հաջողվում է *ներքին կապի և հաղորդակցության մեջ դնել անհատը ցեղի հետ, և այդ վերջինները՝ հավիտենականության հետ*: Ճշմարի՛տ գրականություն, որի մեջ մեծ են միայն նրանք, որոնք իրենց տաղանդի զորությամբ հարկադրում են մտածումի քրտինքը թափել այնպիսի խնդիրների վրա, որոնց առջև ծիծաղելի են և ինքնաբավ գեղարվեստը, եվ գեղարվեստական հաճույքը: Ահարոնյանի և նմանների համար՝ ազգերի հոգևոր կյանքի պատասխանատուն գրականությունն է, նաև մղիչ ուժը ցեղի կյանքի: Դա զորավոր ազդակն է մարդկային ցեղի, թե բարոյական շինարարության և թե եղծության: Ահա թե ինչու որքան սուրբ է գրագետի կոչումը, այնքան էլ մեծ է նրա պատասխանատվությունը՝ ազգի և մարդկության առջև:

Ազգային գրականություն - դա մեր հոգևոր ծովն է, ուր գալիս թափվում են ցեղի ոգու վարար գետերը: Միաժամանակ, մեր նավն է դա, որ մեզ դուրս է բերում լուսավոր ազգայնականության ջրերից՝ դեպի համամարդկայնության օվկյանը, դեպի «տիեզերական թախիծ»-ի ջրերը, եթե կուզեք...

* * *

Մովսեսը երկընտրանքի առջև...

Ո՞ւր գնալ: Դեպի ժողովուրդը և նրա հետ դեպի Անապա՞տ, թե՞ մնալ Փարավոնի անդորրաղետ ապարանքում:

Մարգարեն,- ասում է Բիբլիան,- միացավ ժողովրդին և դիմեց դեպի Մեծ Տառապանքը:

Այնուհետև 40 տարի ժողովրդի հետ և անապատում:

Ահա՛ այդտեղ մարդս ապրում է մեկից ավելի կյանք և մեռնում մեկից ավելի մահով:

Ահարոնյանը մնաց միշտ էլ ժողովրդի ու նրա ճակատագրի հետ, և նրա մեջ արթնացրեց ցեղը, քանզի գիտեր հայոց աշխարհի իմաստունը, թե այնտեղ, *այն ճակատամարտերում, ուր ցեղը չի բերում իր մասնակցությունը, ժողովուրդների համար անխուսափելի են պարտությունն ու կորուստը*:

* * *

Ինքն, իր խոսքն է Ահարոնյանը:

Եվ որովհետև «զորությամբ բանի» պիտի ծառայեր իր ցեղին՝ նա դարձավ դարբինը Հայ զորավոր խոսքի, և այսօր ազատ է կրկնելու Ֆիզուլիի խոսքը իր մասին. «Ես վեհապետն եմ խոսքի թագավորության»:

Չկա, չգիտեմ, պիտի լինի՞ հայ գրող, որ այնքան հարազատ լիներ մեր ժողովրդին, որքան Ահարոնյանը, որի խոսքի համար անանախընթացորեն կարծ եղան դեպի հայ սիրտը տանող բոլոր ճամբաները: Եվ հասկանալի է դա: Չէ՞ որ նրա խոսքը ծնում է ցեղի ցավից և սնվում տառապանքի կաթով:

Հայ ոսկեբերանն է նա:

Նա խոսքեր ունի, որոնք և պուրպուրի բազմերանգություն ունեն:

Խոսքե՛ր, որպես վառվող կերոններ. խոսքե՛ր, որոնցից արյուն կկաթի, խոսքեր, որոնք կշնչեն, հոգի կտան: Երբ կխոսի Մասիսի և Արազի, հայ հողի և նրա վրա քրտնող շինականի մասին, նրա հայրենաշունչ երկի մեջ ընթերցողը հայրենի խնկավետ սարի ու դաշտերի բույրը կառնի և Հայաստանի սրտի տրոփյունը կզգա:

Երբ Հայրենիքի մասին է իր խոսքը՝ չի խոսի, այլ կխոսեցնի, և կմղվեք ընդունելու, թե կա մի գերագույն հեղինակություն - ցեղը - որ նրա շրթունքներով կխոսի: Կխոսի ցեղի մասին և կթվա, թե նրա ամեն մի հայացքը հարցնում է ձեզ. ի՞նչ, չզգացի՞ք ցեղի շունչը, որ ահա անցավ:

Մեծ տրիբուն, որի հոգին քաղել է այն ամենը, ինչ որ գեղեցիկ է, վսեմ ու հերոսական Հայոց պատմության մեջ. և այդ իսկ պատճառով, որքան ուժեղ է իր ցեղասիրությունը, այնքան կատաղի է իր բարոյական զայրույթը, որ, սակայն, իր սիրաշատ սրտից կբխի:

Նա խոսքի կայծակներ ունի և գիտի շանթել տկարն ու տգեղը, անփառն ու աննվերը, հակառակորդն ու թունավորիչը մեր ցեղի կյանքում:

Հանձինս դասական մարգարեների՝ նա նզովել գիտի, բայց իրեն հատուկ մեծ սիրով գիտի և դափնեպսակել:

Գիտի կանչել, - այն էլ ինչպե՛ս:

Մեր Երկրագնդի վրա, նրա նման, քչերն են կանչել:

Խոսքի կանչողական ուժը, միացավ կանչողի հերոսական պաթոսին, Ահարոնյանին պիտի դարձներ մեր Մացցինին[14], որն այսպես կկանչեր. «Ելե՛ք, ոտքի՛, ոտքի՛, ինչպես փոթորիկը ձեր կլիմայի, զարհուրելի և արագահաս»... «Կանչե՛ք մահը, և դա պիտի փախչի ձեզնից»:

Այսպես կանչեց նա տարիներով, և անասելիորեն տիրական եղավ մեծ Կանչողի հոգևոր իշխանությունը հայ սրտի ու մտածողության վրա:

Այո՛, փառքով մեռնողն իր փառքից, ամեն նահատակ իր սրբությունից, հերոսն իր սրբազան խոյանքից - այդ ամենը մի բան կպարտեն Ահարոնյանի խոսքի արբեցուցիչ ազդեցության:

Նա գրել գիտի խղճմտանքների մեջ և իր էջերը Լամոնեի խոսքի իմաստն ունեն. «Եթե չարչարվեք, ձեզ հետ կչարչարվեմ և ես. եթե ճակատամարտում եք, ձեր կողքին կկռվեմ և ես. անտեսանելի մի շունչ ձեզնից ինձ և ինձնից ձեզ կանցնի»:

* * *

Ահեղ է նրա խոսքը- որոտմունք ու փայլատակում, երբ դա հայության կեսի ֆիզիկական և մտավոր սպանիչներին է ուղղված:

Նույնն է դա, երբ նկարագրելով հայ ավեր գյուղն ու ավանը, կսպառնա կարծես. Չէ՛, օտարը չի կարող այդ անհանգիստ հողերի վրա իր տունը շինել: Մարգարեաշունչ է, երբ ճակատագրին կուղղի իր հարցը. Ի՞նչ, արարչագործության տարագի՞ր է Հայը. անհանգիստ հարց, որի պատասխանը օրվա և վաղվա մեր սերունդներից կսպասվի:

Մեծ լավատես է նա՝ հակառակ որ իր խոսքը Հայաստանի աստղազարդ բնության թախծությունն ունի: Նրա համար հայությունը դեռ ընդունակ է Հայկազյան արքայացեղի անօրինակ քաջության, Բագրատունիների աշխարհաշեն ոգուն և Մամիկոնյանների սրտառուչ արիասիրության - առաքինություններ, որոնց համադրությունը միայն կարելի պիտի դարձնի մեր ժողովրդի ինքնիշխան գոյությունը: Նրա համար, իր ուժերի մեծության դեռ անծանոթ Հերակլեսն է Հայությունը: Նա համոզված է, թե հայ մարդու «կավ»-ից կարելի է հոգևոր գլուխ գործոցներ կերտել:

Մեծ հավատավոր է:

Քրիստոնեական նահատակներից Վերոնսկին է նա, որ սպանվելիս կաղաղակեր միայն. «Հավատո՛ւմ եմ». որը դաշունահար և այլևս անկարող խոսելու, մատն իր արյան մեջ թաթախած կգրեր գետնի վրա. «Ես հավատում եմ»:

Այս հաղթական հավատով, ահա՛ նա, տասնամյակներ շարունակ, ուխտի, պայքարի ու կռվի տարավ հայ ընտրանին:

Եվ իր օրով և օրհնությամբ Հայ Հաննիբալը՝ ցեղի ընտրանին բերեց իր հավիտենագիր ուխտի- *Նոր ճակատագիր կռել Հայ Հայրենիքի համար.*

Եվ այդ սրբազան Ուխտին ի խնդիր՝ դեռ լսվում է նրա ձայնը- *հպատակություն ցեղին, քանզի դա է միակ ճշմարտությունը.*

Հնազանդություն ցեղին, առանց որի փտություն ու անցավորություն ենք ես, դու, բոլորս. Դեռ՝ որպես բարձր զանգակատներից իջնող ղողանջ, լսվում է մեծ տրիբունի կանչը. Թող, հա՛յ ժողովուրդ, թող քո Սրբազան Զայրույթի Գրքի մեջ գրված մնա թուրք անունը:

Զայրույթը, հավատա՛, միշտ էլ գտնում է իր զենքը: Ի՞նչ եմ ասում. դա գտնում է ավելի հատող և մեծ թվով զենքեր, քան պետք են Արդարության գործը տեսնելու համար:

Եվ հավատում է Հայը:

Ահա՛ այսպես սպասավորեց իր ցեղին Մեծ արվեստի անմահը, և այսօր ազատ է կրկնելու Միցկևիչի[15] խոսքերն իր մասին. «Ես և Հայրենիքս նույնն ենք»:

Համբո՛ւյր, ջերմ համբույր Հայ Հայրենիքին և իր մեծ վշտակրին, որի Արարատյան արևով օծուն ճակատն այնքա՛ն սիրով հանճարի ձեռքը շոշափեց:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՅՈ ՔԱՌԱՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Դարեր շարունակ փառքի ճանապարհից դուրս մղված մի ժողովրդի վերածնության ծիգերի խտացումն է Դաշնակցությունը: Նա ծնունդ առավ պատմական այնպիսի մի վայրկյանում, երբ անցյալի մեծ ոգևորումները դարձել էին հայ կյանքի հետ այլ ևս օրգանական կապ չունեցող քարացած հիշատակներ, երբ խավարելու աստիճան աղոտվել էին հայկական էության գունագեղ երանգները: Սեղմ ասած՝ երբ դեռ կշարունակվեր մեր ցեղի հոգևոր նահանջը, և այլևս ակներև էր նրա գլխովին ոչնչացումը:

Դաշնակցությունը հսկա մի փորձ էր՝ կանգնեցնելու հայության անկման անիվը. մի փորձ՝ ի մի ծուլելու հայ էության միմյանց լրացնող բևեռները՝ Սամիկոնյան ռազմունակությունը և Բագրատունյաց կուլտուրական ոգին: Նա մի վճռական ծիգ էր՝ համադրելու մեր ժողովրդի կամքն ու ստեղծագործ հանճարը. մի ծիգ կրոնական համայնքը, որին բռնության քմահաճույքով վերածված էր հայությունը, վերստին դարձնելու պետություն և պատմություն կերտող մի ազգ:

Այն օրից, երբ Մերձավոր Արևելքի կրկեսի վրա երևաց մոնղոլ թուրքը, մեր պատմության մեջ անպակաս դարձան պարբերական կոտորածը, բռնի մահմեդականացումն ու արտագաղթը: Եվ որովհետև տիրապետող ազգը սեփական մշակույթ չուներ, և նվաճված ազգերին ռայա էր համարում, նա տիրեց ոչ միայն նվաճվածի վեհապետական իրավունքներին, այլ և ժողովրդի կյանքին և ինչքին: Ասիայից մեր հայրենիքը խուժած բարբարոսը կձգտեր ոչ միայն դիմափոխել և դիմազրկել քաղաքակրթական արժեքներ ստեղծելու կարող ամեն ժողովուրդ, նա կմիտեր ո՛չ միայն ազգերի հոգին աղճատել և արմատախլել ամեն մշակույթ, նրա մահացու հարվածն ուղղված էր ո՛չ միայն իր նվաճած ցեղերի գոյության այս կամ այն ցեղի դեմ, այլ և նրանց ֆիզիկական գոյության արմատին իսկ: Նման միջավայրում և նման վտանգի հանդեպ մեր վերածնունդը անխուսափելիորեն պիտի ստանար բռնի հեղափոխության բնույթ:

Եվ սկսվեց հայոց ազատամարտը:

Այս անհավասար գուպարի մեջ հայությունը ցուցահանեց գծեր, որոնց մեջ արտացոլում են մեր ժամանակակից պատմության փառքն ու ողբերգանքը: Պատմության հանդիսավայրն իջան հերոսների ամբողջական համաստեղություններ, որոնք ըստ բանի և գործի, հոգենորոգ շեշտ մտցրին մեր գունատ կյանքում: Հսկայական էր հեղաշրջումը: Եթե մինչ այդ հայը կրավորականության մի տիպար էր, հիմա նա կյանքի էր կոչում ներգործոն հերոսականության դեմքեր:

Դաշնակցական հայդուկն ու իդեալիստ մտավորականը ո՛չ միայն պատմական երևույթներ էին Հայաստանում, այլև՝ հոգեբանական գաղափարատիպեր մի ամբողջ ժամանակաշրջանի համար: Սրանց անձնուրաց նվիրումը հազվադեպ է ժողովուրդների կյանքում: Բարոյական հսկաներ էին սրանք, որոնց գործը բավական է փառազարդելու նույնիսկ ամենամեծ ազգերի պատմությունը: Ա՛հ, քանիսները սրանցից մեր աշխարհի նազովրեցիներ հանդիսացան: Եվ ինչպես Նազովրեցու մեծությունը նրա մեջ չէ, որ պատմության մեջ մի քանի փաստեր թվեց, այլ՝ որ զգայապաշտ մարդկության նոր իդեալներ տված և մի այլ աշխարհի կարոտով հոգիները վառեց, այնպես էլ մեր նորագույն պատմության այս հերոսներն ու առաքյալները արժեք դարձան ո՛չ թե իրենց հաջող կամ անհաջող կռիվներով, այլ՝ նրանով, որ առաքինությունների մի նոր տախտակ դրին իրենց ժողովրդի առջև: Նրանց գործի մեծությունը ո՛չ թե փաստերի արձանագրությամբ պիտի արժեքավորվեր այլ՝ այն զորութենական բարոյականով, որ կբխի իրենց գործի էությունից:

Դաշնակցությունը մեր կյանքում, ո՛չ թե հասարակագիտական մի սոսկական երևույթ է, այլ՝ ամենից առաջ և ամենից ավելի՝ մի բարոյական հեղափոխություն: Արժեքների գնահատման նոր չափանիշ է Դաշնակցությունը, որով՝ և նոր արժեքներ ստեղծագործող: Առանց նվիրումի՝ չկա բարձր ստեղծագործություն, իսկ նվիրումի գաղափարը հայության համար հոգեբանություն դարձավ Դաշնակցության մարտիրոսագրության և հերոսականի շնորհիվ միայն: Այդ է պատճառը, որ *Դաշնակցությունը, իբր ներքին հոգեկան կարողություն,* չի խորտակվում անգամ արտաքին պարտությունների դեպքում. այդ է պատճառը նաև, որ անկախ պատմական դեպքերի դասավորումից, նա մնում է իր ստեղծագործ ապագային հավատացող իդեալիստ հայության հոգևոր

կորիզը: Հայության հոգեբարոյական այս հեղաշրջման մեջ է ահա՛ Դաշնակցության փառքը:

* * *

Դաշնակցությունը, սակայն, պիտի ունենար նաև իր ողբերգանքը: Չէ՞ որ ամեն հերոսական, ըստ էության, ծնունդ է մի ողբերգականի, ինչպես վերջինս հաճախ արդյունք է հերոսական մի տագնապի: Մերձավորին ծառայելու, նրա կյանքը հեղաշրջելու առաքելություն ունեցող հերոսականը չունի ավելի ծանր ողբերգություն, քան այն, որ բանաձևել է ավետարանիչը :

Երկար դարեր մեր պատմությունը չէր արձանագրել մի շրջան, ուր այնքան հերոսներ իրենց կյանքը երկյուղորեն պատարագեին իրենց ժողովրդի փրկության գործին. բայց չի եղել և մի շրջան, ուր հայության որոշ խաղերը այնքա՛ն ապերախտ գտնվեին սեփական ժողովրդի ազատագրական փոթորկումների հանդեպ: Այդ տարրերը, ճիշտ է, չսպանեցին Դաշնակցությունը, բայց հաճախ խաչեցին նրա գաղափարն ու գործը: Հին Իսրայելի մեջ մի չարություն կար, որ վերջ ի վերջո մեսիասպանության հանգեց: Հայության մեջ չարն ու բարին առեղծվածային մի քաոս էր, լի կարելիություններով, որ, սակայն, բևեռացումով խանգարում էր հայ զանգվածների միանպատակ կամեցումը և այն, իբր ամբողջություն օրորելու կրավորականության և ակտիվիզմի միջև, մղում էր չգիտակցված ինքնասպանության: Ընկերաբանորեն, այստեղ շոշափվում է մեր վերածնության խնդիրը, որ, ավա՜ղ, թերի մնաց, և որի հետևանքով մեր Գողգոթան եղավ անասելիորեն մեծ, իսկ մեր նվաճումը՝ համեստ: *Հայ հեղափոխության երեկվա տագնապը պայմանավորեց ո՛չ թե թշնամու անպարտելիությամբ, ինչպես այսօր էլ բարբաջում է հակադաշնակցական ստրկամտությունը, այլ՝ հայության հոգեբանական հաշտվողականությամբ:* Ի՞նչ ճակատագիր կարող էր ունենալ մի ժողովուրդ, որի զավակների մի մասը՝ սրտի իղձը բոլորանվեր ազատության կանթեղը լցրած կծենճերեր, իսկ մյուսը, ո՛չ թե միայն անընդունակ զոհաբերելու, այլև հաճախ, որպես թե ազգը խարույկից փրկելու միամտությամբ, ասպարեզ էր իջնում հրշեջի դերում՝ հայ հեղափոխության կրակը մարելու: Այդ եղերական կացության պատճառով, հայությունը ներքուստ տարանջատվեց երեք մասերի- գաղափարի ակտիվիստներ՝ իմա՛ հեղափոխականները, կրավորական ստրկականության ջատագովներ՝ հակահեղափոխականները, և կարելիություններով հղի, բայց դեռ այդ երկու բևեռների միջև երերվող հսկա բազմությունը: Ահա՛ կարևորագույնը պատճառներից, որ հայ հեղափոխությունը շատ դեպքերում մնաց անվճռական և պատմության ընծեռած նպաստավոր վայրկյանները չկարողացավ օգտագործել:

Այստեղ է ահա՛ մեր քաղաքական դժբախտության ենթակայական կողմը:

* * *

Այսօր, 40 տարի հետո, կանգնած ենք պատմության առաջ: Շատ դեպքեր եկան ու անցան հայոց աշխարհով, դեպքեր, որոնք, սակայն, հայությունը իբր ամբողջություն, դեռևս չկանգնեցրին իր փրկության ճանապարհին:

Դեռ այսօր էլ հայությունը մնում է պառակտված, այնինչ, չկորչելու համար, հրամայողաբար, նա պիտի դառնա մի և անբաժանելի հոգևոր օրգանիզմ:

Կան և պայքարի մեջ երկու կողմեր:

Մեկը՝ հոգեփոխված՝ իր հեռավոր անցյալի և երեկվա հերոսականի պաշտամունքն ունի: Մյուսը՝ հայ ստրկականության ավանդագահը, որ սեփական պատմության մեջ միայն ստրկություն և պարտություն է տեսնում:

Մեկը ձգտում է ինքնահզորացման և նվաճումների՝ հանուն ապագայի: Մյուսը երես է դարձրած անցյալից, չի հավատում ապագային, ցեղի հին փառքը նրան թվում է հեգնանք, իսկ հույսը՝ արկածախնդրություն:

Մեկը՝ վրեժի ծարավ ունի, սակայն, միայն իբր նախադրյալ իր ազգային գոյության և մշակույթի: Մյուսը՝ թեև թոթովում է մշակույթի մասին, բայց հայրենի հողի համար մի կաթիլ արյուն չունի:

Մեկը ճիգեր է թափում կենտրոնացնելու ցեղի ուժերը մեր հավաքական գոյության սպառնացող թշնամու դեմ, մյուսը՝ թշնամի մեր ազատագրական պայքարին, զոհաբերությունից խուսափելու մտահոգությամբ, ներքին ճակատ է ստեղծել, որի վրա տարիներ է ինչ ընդունայն ուժասպառվում է հայությունը:

Հերձասիրության հին դևը գործի վրա է և այսօր: Դա տարբեր անվան և ձևերի տակ - նույնիսկ Հայաստանից դուրս - շարունակում է օտարի հայասպան դերը, մեծապես դժվարացնելով մեր ինքնապաշտպանության գործը:

Տեսնել ու զգալ, թե ինչպես մտակույր հայը զենքեր է դարբնում իր հարազատ եղբոր դեմ՝ ընդհանուր թշնամու գործը հեշտացնելու համար - ա՜հ, այդ զարհուրելի ողբերգությունը դեռ այսօր էլ բաժինն է հայ հեղափոխականի:

Այդ պատճառով, դեռ այսօր էլ, հայության քաղաքական ճակատագրից ավելի՛ դառն է նրա ներքին ճակատագիրը:

Ահա՛, դեռևս հայության որոշ տարրերի այս չհաղթահարված ստրկամտության մեջ է Դաշնակցության ողբերգությունը:

Բայց ի՞նչ, զիջե՞լ հակադաշնակցական անարիության: Ո՛չ, ո՛չ, դա պիտի նշանակեր ազգասպանություն կատարել: Չէ՞ որ մեր կու-

սակցության հիմնադիրներն էլ, երբ առաջին անգամ ձեռք զարկեցին մեր ազատագրական գործին, խորապես կգիտակցեին, թե դարերի ստրկականությունը մեծապես տկարացրել է հայ զանգվածների ազգային գիտակցությունը: Սակայն, նրանք հավատացին մեր վերածնունդին, որ պիտի հոգեփոխեր մեր ժողովուրդը իր ամբողջության մեջ: Եվ եթե այսօր տխուր պատմությունը մեր ժողովրդի հոգում մի երկվություն է ստեղծել, բնա՛վ չի նշանակում, թե մենք պիտի լքենք մեզ վիճակված առաքելությունը՝ մեր հոգեբանությունը բովանդակ հայության հարազատել տալու: Դա չի նշանակում նաև, թե մենք կարող ենք մոռանալ, որ մեր ազգի ամեն մի հակառակորդ անծանոթ մի եղբայր է, որին հոգեփոխելու պարտականություն ունենք:

Հասարակական իդեալները հետապնդող ամեն անհատ կամ կազմակերպություն վերջ ի վերջո հանգում է ինքնաժխտման: Դաշնակցությունը ցայսօր ձգտել է ազգ դառնալ, այսինքն՝ հայությունը կազապարել ըստ իր էության: Ազգի մեջ ծուլվելու, ազգն իր մեջ ծուլելու մի փորձ է Դաշնակցությունը: Հանգել այս տենչալի նպատակին՝ նշանակում է վերանալ իբր կազմակերպություն և մարմնավորվել իբրև ազգություն:

Ահա՛, թե ինչո՛վ կուզեինք, որ իր քառասնամյակից հետո Դաշնակցությունը, իբրև իր ցեղի առաջապահը, ավելի մեծ թափով ու նվիրումով շարունակեր Հայոց Ազատամարտը ընդունելու, որ միայն ազատ և անկախ հայրենիքում հնարավոր է մեր ամբողջական ժողովրդի կատարյալ հոգեփոխությունը:

ԻՄ ԴԱՎԱՆԱՆՔԸ

Կխոսեմ մեր նորագիր ընկերների հետ և կզգամ, որ նրանք կխորհրդածեն.

- Գաղափարորեն կհորդորեմ այսօր: Հաղորդություն, սակայն, ի՞նչ է դրա խորհուրդը:

Հոգեփոխողի և հոգեխառնողի, Դաշնակցության ու նրա միջոցով՝ մեր ցեղի հետ:

Այո՛, ցեղահաղորդություն է այդ: Երբ դա կա, կնշանակի, թե մեր հոգին դարձած է ընդունակ ցեղապրումի:

- Նախ կխոստովանեմ ճշմարտությունը, քանզի, որքան մեծ է ճշմարտության անհաղորդների թիվը ժողովրդի մեջ, այնքան հաճախակի և սուր են պառակտումի դեպքերը նրա ծոցի մեջ:

Կընդունեմ, թե մեր նախորդները եթե ստրուկ չդառնային իրենց եղբայրամերժ եսականության, ապա մենք դարերով օտարի ստրուկը պիտի չլինեինք: Կընդունեմ, որ *հայության ծերացած մեծերը ավելի նպաստած են Հայաստանի կործանումին, քան պարբերաբար մեր երկիրը ներխուժող օտարների սուրը:* Սեղմ ասած՝ հայությունը այսօր էլ իր անհամերաշխ անցյալի մեղքերն է, որ կքաղի:

- Կգտնվեմ Դաշնակցության սեմեն ներս և ահա ինքս ինձ կզգամ Ցեղիս հետ սրբազան դաշինքի մեջ, և կընդունեմ, թե *ամեն մեկ ԵՍ հանցավոր ապստամբ է, ամեն մեկ Եսականություն՝ բարոյական մահափորձ է այն Մեծ Ամբողջին դեմ, որ ազգ կկոչենք:*

Կգիտակցեմ, թե բաժանվելով ցեղից, անհատը կմեռնի հոգեպես և ապա կհաշտվի իր ցեղի մահվան հետ:

- Դաշնակցական եմ և ահա՛ կընդունեմ, թե անհատից ու ընտանիքից, կուսակցությունից ու դասակարգից բա՛րձր կա և պիտի մնա ցեղը, միակ ճշմարտությունը, որի ծայնին չհնազանդվող ազգը կպատժվի առնվազն քաղաքական մահվամբ: Այդ սրբազան ձայնը, որ միայն հոգևոր խուլերը չեն լսում, կպատգամի մեզ՝ *թող ազգը կենտրոնացնի իր բովանդակ ուժերը և տրամադրի նրանք իր ինքնապաշտպանության գործին:*

Իսկ մինչ այդ, *և ոչ մեկ օր առանց նոր զենքը ճարճատելու թրքության դեմ:*

- Դաշնակցական եմ և ահա հայրենի երկիրս ու Հայությունը իմ շնչիցս մոտ են ինձ:

Եվ արդեն կզգամ, թե սովորական զգացումներից զատ ունեմ նաև Հայաստանի զգացումը, որ ինձ հետ ծնված թեր և զոր, սակայն, Դաշնակցությունը տվեց ինձ:

Հոգեխառնվե՛ցի Դաշնակցության հետ և ահա՛ ինձ կզգամ հպարտ ժառանգորդը այն Մեծ ժառանգության, որ ՄԱՅԻՍի 28 կանվանենք: Եվ չեմ նախանձում ինձանից նյութապես ավելի հարուստին ու բարեկեցիկին, բայց խորապես կցավեմ այն բոլորի համար որոնք ինձ հետ, իմ կողքին, Դաշնակցության դրոշի տակ չեն այսօր:

- Դաշնակցակա՛ն եմ: Այդ ասել է, թե այլևս եսաթափ եղած՝ *կառաջնորդվեմ ներցեղային բարոյականով,* որ պիտի սրբի իմ էությունը ստրկականության կեղտից և եսականության հին թթխմորից. այդ ասել է, թե *կընդունեմ գաղափարական համամայրության օրենքը, ըստ որի՝ իմ հետագա կյանքը պիտի լինի՝ ազգախոհ- նվիրում և անձանձրույթ ծառայություն իմ ցեղիս՝, կուսակցությանս միջոցով:*

- Կընդունեմ, թե Դաշնակցությունը հայտնությունն է հայության հավաքական հոգին, այն ինքնագիտակից գործիքը, որի միջոցով ցեղիս հոգին առաջ կվարի իր պատմական առաքելությունը:

- Անհատի աշխարհայացքը պիտի համապատասխանի իր ազգի և պետության նպատակներին. նրա երջանկությունը մեկ հատիկ արդարացում ունի՝ այն ծառայեցնել իր ցեղի երջանկությանը:

Խորապես կզգամ, թե իմ երջանկությունը ճիշտ այնտեղ է, որ ես կաշխատակցեմ Դաշնակցությանը, և որպեսզի իմ գործակցությունը

արգասավոր լինի, պարտքս կզգամ ինքնակատարելագործությամբ գերազանցել Հայության արտաքին թշնամիներին, իբրև մարտական, բարոյական և իմացական ուժ:

- Դաշնակցական եմ, և ահա՛ կ'աշխատեմ օր, ժամ, վայրկյան առաջ խոսքիս ջերմությամբ հալեցնել սառույցի այն լեռը, որ իրարից կբաժանի հայ կուսակցությունները:

Կընդունեմ, թե քաղաքական և դավանական ամեն մեկ խտրության վերջ պիտի գտնի այնտեղ, որտեղից կսկսի հասարակաց միաբանության անհրաժեշտության գաղափարը: Կընդունեմ նաև, թե *միանձնյա ներքին ամեն մի հակառակորդ անձանոթ ընկեր և եղբայր է, որ հոգեփոխելու պարտականություն ունեմ:* Նմաններին պետք է միայն հոգեբանորեն զինաթափել և ոչ թե գետնել, ոչնչացնել:

- Հայրենիքի շենքը պետք չէ բարձրացնել օտարատյացության ժայռի վրա, այո՛. բայց և այնպես *հայությունը, մինչև կատարածն աշխարհի պետք չէ ների թրքությանը: Եթե այդ արնապարտ ցեղից, որ կողոպտիչն ու սպանիչը հանդիսացավ անգեն հայության կեսին, եթե մի օր նրանից մի բուռ անսուրբ մոխիր մնա, այդ մերժելի մոխրին իսկ դատի պիտի կանչել, նրա հետ նույնիսկ դատաստանի չպիտի նստել:*

- Կընդունեմ ազգային զոհաբերության օրենքը, որի համաձայն զոհասեղանի վրա կրակը բնավ պիտի չմարի:

- Վերջապես, կդավանեմ Միացյալ և Անկախ Հայաստանը:

Յոթնիցս կսիրեմ Հայ ժողովրդին, որն ինձ համար կմնա իր ուժերի մեծության դեռ անձանոթ Հերակլեսը:

Հավատամ մեր ապագային: Կզգամ ու մտովին կողջունեմ Հայաստան Երկիրը, որ կար, որ երջանիկ էր ու մեծ, և որ այդպիսին պիտի լինի վաղը...

ՄԵՐ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԱՅԻՍԸ

1921ի գարունն էր, և դեռ եռագույնը կծածանվեր մեր Հայրենիքի լեռնային երկրամասի վրա:

Մայիս 28-ի լուսաբացին լեռներից երգ ու երաժշտությամբ դեպի Սյունյաց աշխարհի մայրաքաղաքն էին իջնում բուն Զանգեզուրի, Տաթևի և Դարաբասի շրջանների ժողովրդական վաշտերը և բազմահազար մի զանգված:

Մարտնչող հայությունը, Արարատի փեշերի կարոտ հոգու մեջ, այդ օրը իր զայրույթը պիտի հայտներ մարդկության խղճին:

Կեսօրվա մոտ, բոլշևիկյան կացինից ընկած Շիրինի[16], Խորենու[17], Սաքոյի[18], Աշոտի[19] և այլոց եղբայրական գերեզմանի շուրջը ստեղծվել էր սվիններ, սրերի և դրոշակների մի ամբողջ անտառ: Նվիրական հողաթմբի վրա, արևի տակ վեհորեն ու հպարտ

փայլում էին Սյունիքի սուրն ու խաչը՝ առաջինը որպես հաղթության, երկրորդը՝ տառապանքի խորհրդանշան:

Ջերմ խոսք կար.

Կար, դառնության և ուրախության արցունք:

Այդ օրը ես հասկացա, որ մի պետության բարոյական բովանդակ մեծությունը կամ ոչնչությունը կարելի է կարդալ նրա քաղաքացիներից մեկի դեմքի վրա:

Այդ օրը սյունեցու աչքերի մեջ կարելի էր տեսնել մեր ցեղի բովանդակ զորությունն ու թափը:

Այդ օրը հաղթական էր սյունեցին, քանզի ցեղի ոգին կշարժեր հայ վաշտերը, քանզի Սյունաց աշխարհում սպայից և զինվորից - հեղինակությունից և հնազանդությունից զատ կար մի Երրորդը՝ *Ցեղը, մարտնչող Հայրենիքներում ամենուրեք և ամեն վայրկյան, ազգային բացարձակ պարտականության անվան տակ, ցցվում է ռազմիկի առջև և ասում՝ «հնազանդվի՛ր ինձ, և պիտի հաղթե՛ս»:*

Ես այդ օրը տեսա Սյունիքը՝ իր ուժի, փառքի իր մեծության մեջ: Նա հպարտ էր, որովհետև պարտության էր մատնել Ադրբէջանը, ջարդել տաճիկ գնդերը, զինաթափել բոլշևիկյան 11-րդ զորաբանակը: Նա հպարտ էր, որովհետև հերոսական շարժուձևով հետ էր մղել դեպի հայ մտավորականությունը երկարող խորհրդային մահաբեր տապարը: Նա հպարտ էր, որովհետև իր մեջքը փրկության կամուրջ էր դարձրել նահանջող բյուրոց համար՝ դեպի Պարսկաստան:

Սակայն, սյունեցուն ծանոթ աչքն այդ օրը նրա դեմքի վրա իր պատմական գործերի գիտակցության հետ կկարդար նաև իր դրության ողբերգության գիտակցությունը:

Այդ օրը բոլորը, ղեկավար, թե զինվոր, տղամարդ, թե կին, ընդհանուր խանդավառության մեջ լուռ և անխոս մտածում էին. «Ի՞նչ լավ պիտի լիներ, եթե մեր ռազմամթերանոցներն դատարկ չլինեին: Մենք ազատության համար թշնամու հարյուրապատիկ մեծ ուժերի հետ չափվողներս հաց և փամփուշտ չունենք»:

Այո՛, շատ բաների հետ կռվողի համար, Սյունիքը չուներ նաև ամենաանհրաժեշտը՝ հաց և ռազմամթերք: Նա գիտակցում էր, որ սիրամարգի պես իր շքեղ թևերի տակ պիտի չկարողանա թաքցնել իր «սև ոտները», իր պահեստների դատարկությունը: Նա հպարտ էր, որովհետև հաղթել էր, բայց դառնացած էր, քանզի հնարավորություն չուներ օգտվելու իր հաղթություններից:

Իրերի այս ողբերգական վիճակում, մեր անկախությունը պիտի ապրեր երկու ամիս ևս, որից հետխորհրդային կարմիր լաթը, առանց հաղթանակի, չարափառորեն պիտի ծածանվեր և՛ Սյունեաց՝ աշխարհի վրա:

* * *

Քաղաքական փոթորիկներից քշված՝ մեր ազատության Մայիսը այսօր կտոնենք օտար ափերի վրա:

Տարագիր ենք, և դառնադառն մեր կյանքը- աքսորանքներից ամենածանրը ու անփառունակ- մի հատիկ արդարացում ունի՝ այն ծառայեցնել պարզելու համար մեր ժողովրդին վիճակված աղետների ներքին ու արտաքին պատճառները:

Այսօր հարկ է և պատշաճ փորձել, գոնե տարին մի անգամ, ըմբռնել և հարազատել հետևյալ ճշմարտությունները.

- *Պատմությունը որդիների մեջ հալածում և պատժում է հայրերի մեղքերը հին:*

Դարերի ստրկությամբ, անապատում տառապանքներով և անհաշիվ զոհերով քաղեց հայությունը և դեռ քաղում է մեղքերն իր առաջնորդների: Եվ դեռ պիտի քաղի, քանզի եսաթափ չի, եղել և օրվա հայը, որին վաղը պիտի վիճակվի հայության ճակատագիրը վարելու դժվարին դերը:

- Հայ ազգը, որը դարերն ի վեր քաղաքական տնանկությունը ավելի իր առաջնորդների փոխհարաբերությանց այլանդակությանը կպարտի, քան իր երկրի աշխարհագրական դիրքին և արտաքին թշնամիների նվաճողական ախորժակներին, կորցնելով ներքին ստեղծագործ միության և միաբանության անհրաժեշտության գաղափարը՝ կորցրեց իր անկախությունը, ապա և իր երկիրը:

Ավաղ, հին թթխմորից զերծ չե հայ հոգին և՛ այսօր: Բաժանասիրության դևն է դեռ առաջնորդում մեր ազգային առաջնորդներին:

- Մեր ներքին իրարակերության բերումով, միշտ պատրաստի որս մեր գայլ հարևանների համար, դեռ միամտորեն դժգոհում ենք աշխարհի դեմ, որը քանիցս գործով հասկացրեց մեզ, *թե ներքին պատճառներով իր ցեղի բովանդակ ուժերից օգտվելու անկարող ժողովուրդը բարոյապես ազատ չէ՝ արտաքին օգնություն ակնկալելու:*

Այսօր իսկ, երբ Հայաստանի վրա վերստին ընկած է ստվերը մեծ և ահավոր գալիքի, երբ մի մութ ամպ է կախված մեր ժողովրդի գոյության և իր ապագայի միջև, մեր պատմության այդ սպառնական շրջանում իսկ չենք ուզում հասկանալ, որ աշխարհում մի հատիկ ուժ գոյություն ունի միայն, որը հետ այսու պիտի լծել մեր հավաքական ինքնապաշտպանության կառքին՝ որպես ազգ հայորեն ապրել ու շինարարել կարողանալու համար: *Ներցեղային բարոյականն է* այդ հրաշագործ ուժը - ցեղակրոնությունը:

Այս եսամերժ բարոյականը- որով օծված մի նոր սերունդ միայն կարող է Մայիսի 28-ի պահակը հանդիսանալ - հրամայողաբար իր պահանջն է դնում մեր գաղափարախոսական և վարիչ մտավորականության՝ *օր առաջ երես դարձնել հին էվդեմոնիստական բարոյակա-*

նից, որը սնուցանելով մեր տկարությունները, դարերով մեր միջոցով մեր ցեղի թշնամիների հաջողությանը ծառայեց: Դա պահանջում է ապրել, մարտնչել ու առաջնորդվել ցեղորեն:

Դա պահանջում է մեր մտավորականությունից մեծագույն զոհողություն՝ *հանուն և ի զոհ մեր Անկախության Մայիսի, մորթել իր ԵՍը:*

Բերվե՞ց այդ զոհը՝, մեզ պիտի հաջողվի տալ աշխարհին, մեր անկախության իրավունքը, նաև սեփական ուժերով պաշտպանել կարողանալու ապացույցը:

Այլապես – չէ՛, չէ՛, չեմ խոսելու այն մասին, թե ինչ կարող է տեղի ունենալ Հայաստանի և Հայության հետ - այլապե՞ս... ընթերցո՛ղ, լրացրո՛ւ խոսքս...

ԵՌԱԳՈՒՅՆԸ ԿԱՐՄԻՐ ԼԱԹԻ ԴԵՄ

Սյունիքը կշարունակեր իր հիասքանչ և ծանր գոյամարտը, և այդ ո՛չ թե մեր ցեղի մի հատվածի գոյությունը փրկելու կամ Հայաստանի անարժան մասը մտնելու համար – կրկնակի նպատակ, որ իրագործված էր արդեն - այլ հանուն հայ մտավորականության, որը բոլշևիկյան գազանից մազապուրծ և հալածական՝ ապաստան էր գտել մեր լեռնաշխարհում:

Կարմիր բանակը, գտնելով Հայաստանն առանց մտավոր հայության, եկել ու բանակել էր Սյունիքի պատերի տակ:

Որսը փախցրած շան նման կատաղած, նա կանգ էր առել Սյունիքի սահմանների վրա՝ դունչը դեպի մեր դիրքերը դարձրած: Միայն նապաստակ որսալու սովոր թշնամին, անցյալի արնոտ փորձերից խրատված, գիտեր, որ Արաքսի սյունիքյան ափում հայ մտավորականությունը որսալու համար պետք էր նախ սպանել առյուծը, որը կապրի սյունեցու մեջ: Նա գիտեր, նա զգում էր այդ, և անուժ ցասմամբ ու անվերջ, նա հաչեցնում էր իր շները՝ իր բանակը Սյունիքի վրա: Այսքա՛նը միայն: Սովորական թերի փախցրած որսը: Ձախողված էր մտավոր հայության որսը թրքաբոլշևիկյան հրամանատարության համար, մեր ժողովրդի ընտիր տարրերի զանգվածային որսը, որի հաջողության դեպքում պիտի գլխատվեր հայությունը:

* * *

Վաղուց էր կայացված հայ մտավորականության մահվան դատավճիռը: Պիտի մեռնի՝ մտավո՛ր հայությունը՝ վճռել էին ընկերներ Էնվերն ու Ձինովևը, երբ կողջագուրվեին թաթար մայրաքաղաքում: Արևելյան համայնավարների անդրանիկ համագումարից[20] մի քանի օր անց, խորհրդային թերթերից *«Կարմիր Առաջապահ»*ը կհրապարակեր

հրեշների կողմից արված հայ մտավորականության դատավճիռը՝ «Դաշնակցությունը պիտի ոչնչացվի գլխովին»:

- Պիտի ապրի՛ հայ մտավորականությունը, որ ապրի և հայ ժողովուրդը,- իր հերթին վճռել էր Սյունիքը, և իր արծիվների հզոր թևերի պաշտպանության տակ առել Արարատյան բազմահազար տարագրությունը:

- Մեզ հանձնե՛ք հայ մտավորականությունը, վայր դրե՛ք ձեր զենքերը և այսպիսով փրկե՛ք ձեր գյուղերը, որոնք սրի և հրի պիտի մատնվեն, եթե չհարգվեց մեր վերջնագիրը:

- ԵԿ ԵՒ ԱՌ,- կպատասխաներ լեռնահայ գյուղացին, և կշարունակեր սև ամպի պես լեռներից կախված մնալ ռուս, թուրք, թաթար զորամասերի գլխին:

Թշնամին կսպառնար Երասխի ափերի վրա բեմադրել Շահ Աբբասի օրերը: Նա կաշվից դուրս կգար հայրենի ջրերի մեջ խեղդելու *հայ ժողովրդի ուղեղն ու սիրտը*, բայց կդժվարանար ասել իր բանակին. «Տա՛լ նրան»: Ապա, բոց ու կրակ արձակող վերջնագրերին կհաջորդեին պատվիրակությունները, բանբերները, թռուցիկները՝ միշտ էլ հոխորտ ու սաստելի:

Թշնամին կսպառնար, գրպանի մեջ սեղմելով բռունցքը: Թուրքն ու թաթարը կհաչեին իմ վաշտերի վրա - այսքա՛նը միայն:

- Երկնքից, չէ՛ շանթը,- թշնամու բոլոր հայտարարություններին կպատասխաներ Սյունիքը, և կշարունակեր վարել հայ մտավորականության փրկության գերագույն գործը:

* * *

Այսպես, Սյունիքի սահմանների վրա դեմ հանդիման ցցված կմնային մահվան բազուկը՝ զինված խորհրդային տապարով, և պողպատե թևը արծիվ Սյունիքի:

Դյուցազնական երկիրը շեշտ կնայեր թշնամու աչքերի մեջ, նրան սանձված պահելու իր պատերի տակ, որպեսզի կարմիր մահվան ճիրաններից մազապուրծ հազարները անխռով և անկորուստ անցնեին դեպի ապահով հորիզոններ:

Եվ անցավ, ու փրկվեց արարատյան մտավորականությունը, ուսանողությունը, սպայությունը:

Եվ այդ, այն ժամանակ, երբ Սով-արքան կիշխեր Լեռնահայաստանում, երբ ժողովրդի խոշոր մասի սնունդը կկազմեր իր դաշտերի բանջարեղենը միայն, երբ դիրքապահ վաշտերիս կպակսեր չոր հացն անգամ, երբ մեր պահեստներից մեկում կստացվեր հրանոթ փոխադրելու ուղարկված գյուղացու դիակը՝ ողբերգական զոհը աստվածային պարտաճանաչության:

Եվ այդ՝ այդպես աշխարհից կտրված մի երկրամասում, ուր կռվողներին կպակասեր ռազմամթերքը, կենդանի կապը արտաքին աշխարհի հետ, հույսը՝ դրսի օգնության,- այն ամենը, որի չգոյության դեպքում արդիական բանակները ժամեր դիմադրելու փոխարեն թշնամու անարգանքին են հանձնում իրենց դրոշակները: Այս դժնդակ կացության մեջ, երբ տեղի են տալիս կառավարություններն ու բանակները, *սյունեցին չլքեց իր վահանը և դրա շնորհիվ այսօր կապրի արարատյան մտավորականությունը:*

Ոչի՛նչ չուներ Սյունիքը, գրեթե ոչի՛նչ, կռիվ վարելու համար, բայց կար ստեղծված վիճակի լրջության, ինչպես և իրեն ընկած դերի բովանդակ գիտակցությունը, կար *ներցեղային բարոյականը՝* զենքերի զե՛նքը հրաշագործ:

Իմ վաշտերը չլքեցին իրենց վահանը, որովհետև մարդկային տկարության փոխարեն նրանց կվարեր ցեղի հրաշագործ ոգին: Նրանք խորապես կգիտակցեին, թե *Հայաստանն առանց իր աշխարհագրական ողնաշարին, ինչպիսին է Սյունաց աշխարհը, իսկ հայ ժողովուրդն առանց իր մտավորականության, չեն կարող գոյություն ունենալ:* Իմ զինվորը հստակորեն կգիտակցեր, թե հաշտվել Սյունիք ապաստանած տարագրության կորուստի հետ՝ կնշանակեր հաշտվել հայ ժողովրդի չգոյության հետ: Դրա համար էլ, նա, որպես համակ պարտաճանաչություն, մնաց պատնեշի վրա, երբ կվճռվեր հայ մտավորականության լինել-չլինելու խնդիրը:

Այդ գիտակցությունից ահա՛ կբխեր նրա հրաշագործ պարտաճանաչությունը, որի առջև անզոր գտնվեցին թուրք, թաթար և կարմիր հորդաները:

ՀԱՅ ԶԵՆՔԻ ՓԱՌՔՆ ՈՒ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Բարոյապես սնանկ է անհատը, երբ նրան պակասում է ազգային հպարտանքի զգացումը - ծնունդ՝, ազգային ինքնաճանաչության, որ իր սնունդը առնում է մեր պաշտամունքից դեպի այն ամենը, ինչ որ գեղեցիկ է, վսեմ և հերոսական Հայրենի Պատմության մեջ: Առանց այդ բարձր առաքինության, բարոյապես պակասավոր է անհատը, որպես մարդ և որպես անդամ հավաքականության: Այդ նվիրական զգացումը ինձ համար շարունակում է մնալ լուսավոր հայրենասիրության, ցեղային բարոյականի և երջանկության անսպառ աղբյուր: Դա՛ էր լեռնաշխարհում իմ ժողովրդական գնդերին թև ու թափ տվողը: Դա՛ է և այսօր,՝ իմ վտարանդի կյանքի դառնության միակ մեղմիչը:

Իմ օրն իր որոշ ժամն ունի, երբ մտածումս սիրաշատ մոր պես կդիտեցնի ազգային հպարտության իմ զգացումը:

Իր սրբազան պահն ունի իմ ամեն մի օրը, երբ մտովին անհուն կարոտով կսկսեմ իմ պրպտումները Հայոց Պատմությունը կերտող դարերի մեջ, քաղցրությամբ կոգեկոչեմ հայ զինվորին ու զորավարին, որոնք հոգեկան գեղեցկության, անդիմագրավելի արիության ու մեծագործ վեհության համբուրելի հետքերն են թողել Հայոց աշխարհում: Եվ կոգեխառնվեմ նրանց հետ, կվերապրեմ նրանց գոռ հաղթանակները և կարոտով կբաժանվեմ նրանցից, մի օր անց, նրանց ազնվացուցիչ ընկերությունը վերստին վայելելու ցանկությամբ: Այսպես կսնուցեմ ազգային հպարտանքի իմ զգացումը: Չտկարանալու համար՝ կկատարեմ իմ ամենօրյա խորհրդավոր զորահավաքը մեր պատմությունը զարդարող հոգիների, և կխոսեցնեմ ու կլսեմ նրանց:

Աստված իմ, որքան մեծ է արիների համաստեղությունը մեր պատմության երկնակամարի վրա: Եվ որքան շլացուցիչ է նրանց փայլը: Պսակավոր են, յոթնվերք են բոլորը, փառքի սպիներ ունեն բոլորը: Պարթև են, խայտակն, քաջագանգուր: Բիբերի մեջ շանթ ունեն, ցասում, դառնություն:

Եվ ասում են նրանք՝

- Չմնաց, աշխարհում գրեթե չմնաց ցեղ, որ մեր բազկի ուժը չզգար:

Պոռոտ Բաբելացին, Հռոմեացիները կաշառող, աղվեսաբարո Սասանները, Բյուզանդացիք նենգ, Արաբն ու Սկյութացին ընչաքաղց, Ալանները, Քուշանները, Կովկասյան լեռնականները ավարառու - այդ բոլորի և շատ ուրիշների հետ, անհամար անգամ հարվածներ ու վերքեր փոխանակեցինք: Եվ հաճախ հաղթեց մեր բազուկը:

Սակայն, քիչ անգամ մեր արիությունից լիուլի օգտվել կարողացած մեր ցեղը, քանզի կար ընտանի թշնամին, որի վատությանց կպարտի Հայոց աշխարհը իր դարերի քաղաքական խեղճությունը: Զինվորի և ռազմավարի մեր բազուկից ավելի օտարն օգտվեց, քան հարազատ երկիրը: Եվ դրա համար էլ մեր քաջության հռչակը տարածվեց շատ հեռուները՝ մինչև Ասորեստան, Հռոմ, Հրեաստան և լեռները Կվկասի: Տե՛ս, որքան շատ են մեր վերքերը՝ ստացված օտար հայրենիքների համար: Անպարտելի էր օտար բանակը, երբ նրա կողքին օտար զենքի հաջողության համար կկռվեր և Հայը, մանավանդ, երբ դա կառաջնորդվեր հայ զորավարի կողմից: Մասնավորապես Պարսիկն ու Բյուզանդացին չարաչար շահագործեցին հայ արիությունը: Այդ ազգերի անկայուն գահերի համար հայ արիությունը հաճախ հանդիսացավ որպես ուժեղ սյուն:

Մեզ զբաղեցնելով իրենց արտաքին թշնամիների դեմ, նրանք մեր արիությունը ծառայեցրին որպես անխորտակելի պատվար իրար դեմ: Պարսիկն իր փառքի կեսից ավելին մեզ, մեր արիությանը կպարտի: Խոշոր բաժին ունենք և հունական փառքի մեջ...

Այսպես, որքան հպարտ, այնքան տխուր է շեշտը զենքի իմ եղբայրների, զորս կոգեկոչեմ և կլսեմ ամեն օր:

* * *

Դատապարտելիորեն տկար է ժողովուրդը առանց ցեղագիտակցումի:

Առանց ցեղակրոնության՝ այլ բան չէ դա, եթե ոչ- կենդանի զգեստը ցեղի: Սակայն ժողովրդի մեջ արթնացա՞վ ցեղը՝ մարդկային հոգին սրբվում է բոլոր տեսակի արատներից ու տկարություններից. դա դառնում է համակ սեր ու նվիրում դեպի մերձավորը՝ միշտ պատրաստ մեռնելու այդ վերջինի համար: Այդ դեպքում, անհատը իր մերձավորի մեջ տեսնում է իր անձը՝ այլ պատկերի և անվան տակ:

Արթնացա՞վ ցեղը՝ ժողովուրդը կարելիություն է ստանում կուրծք տալու ամենամեծ վտանգներին և հաղթահարում ամենածանր փորձությունները, որովհետև այդ վիճակում նա իրենից ներկայացնում է մի հավաքական հոգի՝ ինքն իր մեջ ազատագրված, ամբողջացած ու հաղթական:

Երբ ցեղորեն կապրի ժողովուրդը՝ թշնամուց ստացած ամեն մի վերքի ու անարգանքի մրմուռը խորապես կզգա նրա յուրաքանչյուր անդամը:

Այսպե՛ս է ստեղծվում այն քաղաքական Սիրտը, որից ծնունդ են առնում սրտով զորավոր Վարդանները, Գայլ Վահանները, Մուշեղները:

Իսկ հայտնվեցի՞ն նմանները՝ այլևս ժողովուրդը դառնում է ցեղի բարկության գործիքը, այլևս ժողովուրդը բանակի մեջ իրար են հանդիպում և համբուրվում Ղևոնդ Երեցներն ու Մամիկոնյանները - հայ լուսակիրը, սուրբն ու հերոսը - որոնց ղեկավարությամբ՝ վտանգի բռնված ժողովուրդը իր ամեն մի հակահարվածի մեջ դնում է իր ցեղի մխացող կատաղության ամբողջ թափը:

Եվ հաղթանակում է:

Ասածիս Հայոց Պատմությունը վկա:

ԱՆԵՐԵՎՈՒՅԹ ԴԱՏԱՎՈՐԸ

Սյունիքը կչափվեր թուրք, թաթար և կարմիր հորդաների հետ: Կտրված էինք աշխարհից, պաշարված: Ռազմամթերք չկար, պակասում էր հացը:

Այդ գերազանցորեն ծանր օրերից մեկն էր: Շրջագայում էի ճակատից ճակատ, դիրքից դիրք՝, զորամասերս հոգեպես գոտեպնդելու համար:

Արևիկի հարավ-արևմտյան ռազմաճակատներից մեկում, Ալագյազի բարձունքների վրա, մոտեցավ ինձ հարյուրապետներից մեկը.

- Պարո՛ն սպարապետ, անկարելին կարելի դարձնելով մենք թշնամու հետ չափվեցինք մինչև օրս, չէ՞ք կարծում, թե այլևս անկարելի է դիմադրել:

Չուզեցի իսկույն ևեթ պատասխանել նահանջի մասին մտածող վաշտապետիս, որը կարծես դադարել էր գիտակցել, թե տեղի տալ այդ կետի վրա, կնշանակեր թույլ տալ թշնամուն Արևիկի հայության գերեզմանի վրայով միանալ թաթար Ադրբեջանին: Հրամայեցի կանչել բոլոր ղեկավարներին: Եկան:

Շատերն, առանց արտահայտվելու, մատնում էին իրենց անհանգստությունը մեր հետագա հաջող դիմադրության կարելիության մասին: *Նախ հոգեպես են պարտվում և՛ ղեկավար տարրերը:* Եվ թշնամու հաջողությունը սկսվում է հենց այն վայրկյանից, երբ իր դեմ կռվող բանակի հրամանատարության մեջ սկսվում է տկարանալ հաղթանակելու հավատը: Զորքը նման դեպքերում բնազդաբար զգում է, թե ինքն այլևս բարոյապես անտեր է, անգլուխ:

Հոգուս աչքերով տեսնում էի պարտությունը՝ կախված մեր գլխին: Մենք պարտված էինք արդեն. մնում էր, որ թշնամին արիություն ունենար հազար քայլ առաջանալու, որպեսզի մենք զիջենք մեր դիրքերը:

Երբեմն լսվում էր գնդակների չար երգը և խռովում գիշերվա լռությունը:

Նահանջելու տրամադիր վաշտապետս սպասում էր պատասխանի: Ես խորհրդածում էի: *Հերիք չէ ասել՝ հրամայում եմ կռվել, մեռնել:* Նման վայրկյաններում, անզոր են հրամանն ու սպառնալիքը: Փորձով գիտեի այդ և շարունակում էի դեռ մտմտալ: Խոհերս սկսել էին բյուրեղանալ. արդեն գիտեի ասելիքս և անելիքս, բայց և այնպես, շարունակում էի լուռ մնալ, երբ կորվաթափ վաշտապետս խզեց լռությունը.

- Ի՞նչ էք մտածում, պարո՛ն սպարապետ:

- Այն, հերոս վաշտապետս, որ դու, ինչպես տեսնում եմ, և մի քանի ուրիշները մոռացել եք հայոց պատմությունը, որը մեր կռիվներով չի՛ սկսվել և մեզնով չի՛ վերջանալու: Այս լեռների վրա կռիվներ են տեղի ունեցել մեզնից առաջ, տեղի պիտի ունենան և մեզնից հետո: Ասացե՛ք, ի՞նչ անուն կտայիք Դավիթ Բեկին, եթե մարդկային այս կամ այն տկարությունից մղված նա Սյունեաց աշխարհը հանձնած լիներ թուրք ու թաթար հորդաներին:

Մեզնից առաջ այս լեռների վրա կռվող հայը խորապես գիտակցել է, թե *Սյունիքը հանձնել թշնամուն՝ կնշանակի հայ երկրի բանալիները և հայ ժողովրդի բախտն ընդմիշտ հանձնել իր իսլամ հարևաններին:* Նույն փրկարար գիտակցությամբ, այս բարձրունքների վրա պետք է կռվի, մեռնի ու հաղթի և՛ վաղվա հայությունը: Ի՞նչ, միայն

ձե՞զ է պակասում այդ գիտակցությունը: Մոռացե՞լ եք, թե կա հայ ցեղի հավիտենագիր հրամանը՝ հաղթել կամ մեռնել:

- Ո՛չ, - եղավ վաշտապետներիս պատասխանը:

- Ես բնավ չեմ մտածում նահանջի մասին, որովհետև սովորություն ունեմ նման օրհասական վայրկյաններում դիմելու իմ խղճին՝ հարցնելու իմ ներքին դատավորին՝ ի՞նչպես են վարվել նման և ավելի ծանր վիճակում Վարդաններն ու Դավիթ Բեկերը.

- Մեռնել, բայց հաղթել:

- Ինչպե՞ս կուզեիք, որ վարվեին նման դեպքերում այն բոլոր ղեկավարները, որոնց ապագայում պիտի վիճակվի վարել մեր ցեղի ինքնապաշտպանության սրբազան գործը:

- Մեռնել, բայց չզիջել հայոց լեռնաշխարհը:

- Իմ ներքին դատավորի թելադրությամբ՝ միշտ էլ այսպես եմ պատասխանել, այսպես եմ պատասխանում ինձ և այժմ...

- Ես,- արդարանալ փորձեց վաշտապետս,- ես ուզեցի ասել, թե այլևս ռազմամթերք չունենք:

- Բայց ո՞վ ասեց, թե միայն առատ ռազմամթերքով են հաղթում: Շատ անգամ հաղթում է այն կողմը, որը նվազ է կրակում: Վախկոտն է հաճախակի աղմկում, մատնելով իր անարիությունը: Հրացանից, գնդացրից, թնդանոթից չէ՛, որ սարսափում է թշնամին, այլ քար լռությունից: Չկա ավելի ահաբեկիչ բան, քան լուռ առաջխաղացումը, մասնավորապես գիշեր ժամանակ, երբ քարը, թուփը, այն ամենը, որ կարող է զբաղեցնել մարդուս աչքն ու երևակայությունը, դառնում է գրոհող հակառակորդ: Լուռ առաջացող տասնյակը մի ամբողջ գունդ է, վաշտը՝ մի ամբողջ բանակ պաշտպանվողի համար: Գիշեր ժամանակ հարձակվողի զինակիցներն են՝ խավարը, լռությունը, ժայռերը: *Իսկ երբ նախահարձակվողը մենք ենք՝ այդ լեռների տերը՝ մեզ հետ են նաև այն բոլորի վրեժխնդիր ստվերները, որոնք մեզնից առաջ հեգնել են մահը և ընկել այդ սրբազան բարձրունքների վրա:* Իսկ երբ մենք ենք նախահարձակվողը՝ մեզ հետ է նաև մեր լեռների հզոր ոգին: Ուրե՛մն, ռազմամթերքի կարիքը չզգալու համար՝ մնանք հավատարիմ մեր օրհնված ռազմավարության տարերային ձևերին: Գիշերամա՛րտը թող լինի մեր բաժինը: Ուրե՛մն, *հարձակվե՛նք, ինչպես հարձակվում է մահը՝ լուռ և անակնկալ:*

- Հարձակվե՛նք,- միաբերան կրկնեցին վաշտապետներս, և հուսավառ՝ վերադարձան դեպի իրենց վաշտերը, դեպի կրակի գիծը:

Լուսաբացին, Ալագյազի բարձրունքներում թշնամին ծեծված ու գերված էր գրեթե առանց ռազմամթերքի:

Իմ զինվորը այդ օրը օրհնում էր ճակատագիրը, որ չեր հապաղել թշնամու ձեռքով մեզ առատ ռազմամթերք հասցնելու:

Այդ կռվում սյունեցին մի անգամ ևս զգաց, թե հաղթում է ա՛յն կողմը, որը վստահ է ո՛չ թե իր սպառազեն բռունցքի, այլ՝ իր ներազեն գերազանցությանը:

Որ ցեղի ոգու ձեռքով ղեկավարվող ժողովուրդը կարիք չունի երկար սրի:

Իր լեռների վրա սյունեցին այդ օրը հաստատեց, թե երկաթե զենքերի դեմ հե՛շտ է վահան գտնել, բայց ոչ և ոգու զենքերի, որպիսին են ցեղի զենքերը:

ՄԵՐ ԴՈՒՌՆ ԵՆ ԲԱԽՈՒՄ

Փախչում է մեր նորահաս սերունդը գաղութահայ կյանքի հոգևոր անապատից, և ծարավի՝ նա օազիս է փնտրում Դաշնակցության ծոցի մեջ:

Սրբազան զայրույթով նա փախչում է հայ կյանքի բոլոր տեսակի դպիրներից ու փարիսեցիներից - այն բոլորից, որոնք իրենց հավետ մեղմ բնավորության բերումով օտար ափերի վրա շարունակում են տկարություն ցուցադրել և արհամարհանք շահել, որոնք պատռած սրբազան եռագույնը, հոգով հեռացած են Հայության մեծ ընտանիքից. որոնց սրտի և տան մեջ տեղ չունեն հայրենիքն ու հայրենասիրությունը, որոնք երջանիկ տգիտությամբ, իբրև թե կուզեն տարագիր հայը հա՛յ պահել, բայց վատորեն կուրանան ցեղի Գողգոթան և նրա դատը արդարագույն. նա փախչում է այն բոլորից, որոնց անունը ու սև արարքները Հայոց Պատմության կողմից վաղը պիտի մատնանշվեն որպես ամոթը մեր օրերի:

- Ամենուրեք մեր դուռն է բախում երիտասարդությունը, որովհետև Դաշնակցության մեջ երիտասարդացուցիչ մի բան կա - Ցեղի հզոր շունչը, որովհետև, իր հոգեբանությամբ, ամեն մի երիտասարդ մի անանուն դաշնակցական է՝ բողբոջի մեջ. որովհետև Դաշնակցական ասել է՝ խանդավառ *իդեալիզմի մարդ*. իսկ այդպիսին մշտաջահել է հոգով: Այո՛, ամեն դաշնակցական իբրև իդեալի մարդ, երիտասարդ է ինչպես ամեն երիտասարդ՝ դաշնակցական:

- Մե՛զ է փնտրում երիտասարդությունը, որովհետև դաշնակցականություն ասել է՝ լրումը հայ կյանքի. որովհետև մեր շարքերում կյանքն ավելի՛ կյանք է, որովհետև մենք ապրել և ապրեցնել գիտենք բարձր կուսակցականության բովանդակ խորհրդավորությունն ու բերկրանքը:

Մեր շարքերից դուրս մեռյալ թիվ է կուսակցականը: Մեզ մոտ, ընդհակառակը, կուսակցականությունը ընդգրկում է անհատի ո՛ղջ կյանքը, բավարարելու նրա սիրտն ու իմացականությունը: Եվ հենց

այդ է պատճառը, որ մեր շարքերում անհատն, զգալով հեղափոխական գործի սրբությունը, դողում է իր կոչման վեհության առջև:

Մեզնից դուրս, կուսակցականը դաստիարակվում է ասիական թայֆայականության նեղ պատերի մեջ. նա չի մտածում իր սեփական գլխով. նրա համար, թե խղճմտանքի անկախությունը, պարզ երազականություն է նրա կյանքը: Դաշնակցությունը, ընդհակառակը, պահանջում է կիրթ վերաբերմունք և բարոյական ստեղծագործ հավատք: *Մեզ մոտ կառուցվում է ներքին մարդը՝ նո՛ր էությամբ.*

Մեզ մոտ, ղեկավարել, ասել է՝ ուսուցանել և ապա վարել խղճմտանքները: Սքոլաստիկներ չե՛նք, նաև նեղմիտ հատվածամոլ չենք: Մեր ընկերը միայն նա չէ, որ մտածում է մեզ պես, այլև նա, որ գործում է ի օգուտ մեր ժողովրդի, նա՛, որ մտածում է, զգում և գործում հայաբար:

- Ցեղային բարոյականով օծուն մեր շարքերում հայ բեռնակիրն ու մտավորականը եղբայրներ են համացեղ:

Ցեղակիցների՛դ մեջ,- ասում ենք մենք,- տե՛ս քեզ և արծագանքի նրանց ցավերին. դա ասել է՝ վերապրի՛ր ցեղիդ ողբերգությունը. ավելին՝ թող քո հաղորդությունը դառնա ցեղիդ ճակատագիրը, նաև քո մկրտությո՛ւնը: Դա ասել է՝ քո սիրտը պետք է *պատասխանի ժողովրդիդ ամեն մի սրտազարկին.*

- Երես դարձավ, ահա, դեպի մեզ է գալիս մեր ոգելից երիտասարդությունը, քանզի ցեղի խոսքն է մեր շրթունքներին, որ կզրնգա թրի պես. քանզի մեր գործը զոհողության շունչ ունի, մեր համոզմունքը՝ հրամայական մի զորություն, մեր անունը՝ մի սաստող հեղինակություն:

Երիտասարդին հատուկ է երջանկության ծգտումը, և ահա՝ *Դաշնակցության միջոցով նա հաղորդակցության է գալիս ցեղի հոգու հետ* ընդարձակելու իր հոգեկան հորիզոնը, իր մտածողության և զգացողության շրջանը: Իսկ դա ասել է ճշմարիտ երջանկություն:

Երիտասարդ հասակին հատուկ է լավագույնի ծգտումը. և ահա՝ նա նետվում է Դաշնակցության գիրկը, որովհետև այդ վերջինը *լավագույնն է*, իմաստը մեր նորագույն պատմության:

Երիտասարդին հատուկ է ինքնազորության ծարավը. իսկ ինքնազորանալ կարելի է միայն մեր շարքերում: Որովհետև Դաշնակցությունն, ասել է՝ անձնավորյալ լուսակրություն, նահատակություն և հերոսականություն:

Այդ տարիքին հատուկ է սերը պայքարի, և գիտի նա, որ ազգերն ապրում են քանի դեռ նրանց մեջ ապրում է երկու բան՝ պայքարի իմաստուն բնազդը և զոհաբերելու ներքին հոժարությունը, առաքինություններ, որոնց գերակշռորեն տեր է Դաշնակցությունը:

- Մեր դուռն են բախում այն ամենը, որոնք հայ հայրենիք են փնտրում «Մեր հայրենիքը» շրջունքներին, որոնց գոյությունը մի հատիկ խորհուրդ ունի՝ *հայրենիք, միակն ու անփոխարինելին, որի համար անհատն ու դասակարգը միջոցներ են միայն:*

Մեր դուռն է բախում երիտասարդ Հայությունը, որովհետև նրա համար երկու անհանգստացուցիչ հարցեր կան, որոնց պատասխանը միայն մեր շարքերից կարելի է լսել:

«Ի՞նչ, անպատի՞ժ պիտի մնա թուրքը»:

«Արդյոք իզո՞ւր պիտի անցնի մեր Գողգոթան»:

Չէ՛, չէ՛, մենք դեռ չենք մոռացել Թալյաթի շնական խոսքը՝ *«Աքսորավայրն է՝ ոչնչություն»:* Եվ այդ օրից սկսած, ավելի քան արդար է մեր թշնամանքը թրքության դեմ. այդ օրից դա մեր մեջ դառել է այն, ինչ որ էր Ջորդանո Բրունոյի ատելությունը հրեության հանդեպ: *Թո՛ւրքը, թո՛ւրքն էր «արժանի ոչնչացվելու իր աշխարհի գալուց առաջ»:*

- Մե՛զ է փնտրում երիտասարդությունը, քանզի նա գիտի, թե փոխվրեժը բնախոսա-հոգեբանական մի սուր պահանջ է վերապրելու ձգտող ժողովուրդների մոտ. նա գիտի, որ առանց *հետադարձության* կոչվող աստվածային *ակտ*ին, ազգերի հասցրած սերունդները լինում են հոգեպես տգեղ, ցավագար - ներքին մեծագույն վտանգը ցեղերի գոյության համար:

Մեր շարքերն են թափվում հայկական իրրիդենտիզմի կուսակիցները, որովհետև մենք սպասում ենք վրեժի դատաստանին, և հավատում, որ *մեր տառապանքից հայկական նոր փոթորիկը պիտի պայթի, և որ այդ վերջինից պիտի ծնվեն հսկաները հայ կամքի, վրեժխնդիրները՝ տիտա՛ն, զորավորները՝ մահացան գիտություններով սպառազեն:*

Մենք սպասում ենք. պիտի հայտնվի՝ Հայ *Գերմարդը* և մոխրացնի հայասպան սուրն ու սվինը թրքության ձեռքի մեջ, ապրեցնելու նրան սարսափը հայ վրիժակից: *Սարսափը դիվական*- դա՛ պետք է դառնա հանապազորյա պատիժը թալյաթ աղի ցեղին. դա՛, թուրքին, դա՛ պետք է դարձնի իր սեփական դահիճը ու զոհը միաժամանակ:

- Մե՛զ և Եռագույնն է փնտրում և երիտասարդությունը, որովհետև նա ուզում է, որ հանձին Դաշնակցության, Հայ արիությունը *ջահել առյուծով* խորհրդանշվի, երբ թրքականն այսօր այլաբանորեն գայլով կներկայացվի: Երկյուղածորեն նա Դաշնակցության հայրենաստեղծ ձեռքը ու Եռագույնն է համբուրում, քանզի վաղուց է ինչ մենք մեր նշանաբանն ենք դարձրել ծովակալ Մահուի խոսքը. *«Օգուտ չունի թշնամին կրունկից զարնել, զայն սրտե՛ն հարվածելու է»:*

- Այսպե՛ս, ամենուրեք մեր դուռն են բախում, քանզի հերկելով ջահել հոգիները՝ մենք սերմանում ենք ապագայի համար, և բազմահույս ենք, թե վաղը մեր նորահաս սերունդը պիտի կարողանա կրկնել հին թրակիացիների խոսքը իրենց ցեղի գոյության թշնամիներին.

- *Ազատ ապրելու և պատվով մեռնելու համար՝ մենք երիտասարդություն, սիրտ և երկաթ ունինք:*

ՑԵՂԻ՝ ՈԳՈՒ ՇԱՐԺԸ

Մեր ազատագրական շարժման ուժականությունը հետևանք է առավելապես խորորեն ապրված վիրավորանքի՝ ծնունդ առած մեր ժողովրդի նվաստ և ողբալի վիճակից:

«Մենք տուն մեզ համար չենք շինել.

Մենք հաց մեզ համար չենք ցանել-քաղել.

Մենք մեզ համար չենք ապրել».

Այսպես կողբերգեր մշեցի հայը, իր երգի մեջ դնելով իր վիճակի թշվառության ու նվաստության բովանդակ գիտակցությունը:

Իսկ վասպուրականցին կբողոքեր.

«Էն կատար ենք խոնարհել, որ ամեն մարդ մեզ բեռ կդնի. էս մա՞րդ է, թե անասուն, իսկի հարցփորձ անող չկա»...

Եվ որպես տխուր արձագանգ հայ աշխարհից բարձրացող այդ հեծեծանքին, մեր վերածնունդի շրջանի գրողների Սրվանձտյան կողբագրեր.

«Ի՞նչ կյանք է այս. երանի՞ մրջունին և արոս թռչունին. նա՝ իր կուտը կուշտ կուտի, սա՝ իր սիրական ամուսինը իր հետ կպահի: Երանի՞ սարյակին, որ իր ձագերը կծնի, և փետրիկներով նրանց կծվարի, իր բնությունը և լեզուն նրանց կուսուցանի և ազատ կթռցնի»...

Այսպես, իր անօրինական ցավերից և ամոթանքից լեզու ելած հայաստանցին իր հարցումը կուղղեր ճակատագրին. *ինչո՞ւ այսպես, և մինչև ե՞րբ:* Դա նշան էր, որ Հայն սկսել է գիտակցել, թե ինքը կհալածվի իր անցյալ մեծության համար, որ մեր ժողովրդի հոգում տեղի է ունեցել մի մեծ շարժ, որ հայության մեջ արթնացել է Ցե՛ղը՝ հին, ազնվական ու արի, և որ այդ վերջինի արգասավորիչ շնչի տակ տեղի է ունեցել մեր ժողովրդի հերոսական ինքնահոգացումը: Դա նշան էր, որ կա երկունքը, և որ շուտով հայ ժողովուրդը իր անպատում ցավից և ամոթալի վիճակի սպանիչ գիտակցությունից կյանքի պիտի կոչի իր ցեղաշունչ հսկաները՝ իր ազատագրական պայքարը վարել կարողանալու համար: Դա նշան էր, թե *ցեղն օգնության կփութա տառապանքի և նվաստության մեջ գալարվող ժողովրդին* օծելու և աշխարհ ուղարկելու մարգարեաշունչ Քրիստափորներ, Ռոստոմներ և Զավարյաններ - դարաշրջանային գործերի համար...

* * *

Վերածնության կկարոտեր մեր ժողովուրդը. ասել է՝ նա իր ամբողջության մեջ դեռ կառուցման լավ նյութ չէր՝ անկախության շենքի համար :

Ո՞վ, ուրեմն, պիտի հոգեփոխեր ժողովուրդը, զայն իր ճակատագրին գիտակից և անկախության արժանի դարձնելու համար, ո՞վ պիտի առաջնորդեր զանգվածները և վարեր անհավասար պայքարը: - Հենց ինքը,՝ ժողովրդի սրբազան ծոցից ծնունդ առած հեղափոխական առաջապահը: Ի՞նչպես:

- *Կանգնած այստեղ,*- կբարձրանար կովկասյան ժայռին զարնված Պրոմեթեի ձայնը,- *ես ստեղծում եմ մարդը ըստ իմ պատկերի և նմանության:*

Տարիներ է, ավելի քան չորս տասնամեակներ, ինչ *Դաշնակցությունը հանում Պրոմեթեի կշարունակի կերտել Նոր Հայը՝ ըստ իր պատկերի և նմանության:* Տարիներ է, ինչ Դաշնակցությունը, որպես Հայտնության Աստվածը, իր ձեռքի մեջ առած հայ ժողովրդի հոգին, նոր կաղապարի մեջ թափել կփորձի դա: Այսպե՛ս է: Անազատ ամեն մի ազգ իր վերա-ծնունդը ապրելու համար աշխարհ կբերի *Նոր մարդը* և իր հերթին կվերամարմնանա նրա մեջ. *նա կծնի ցեղաշունչ մարդը և նրա անձի և կյանքի մեջ կփնտրի իր հոգևոր սրբագրությունը:* Եվ այդ հոգևոր վերամարմնացումից հետո՛ է, որ ժողովուրդը կօժտվի պայքարի իմաստուն բնազդով և քաղցրորեն զոհաբերելու տրամադրությամբ:

Այդ հոգեփոխությունից հետո անհատն զգում է հոգեկան մի անճառելի բավականություն - և այդ ա՛յն վայրկյանից, երբ նրա մեջ զարթնում է *նոր գիտակցությունը, թե իր անձը պատկանում է ոչ իրեն, ոչ էլ իր կուսակցության, այլ՝ այդ վերջինի միջոցով՝ իր ցեղին:* Ամեն մի ճշմարիտ դաշնակցական ունի այդ քաղցրությունը, զոր զգալու համար հայ մարդը ո՛չ թե միայն պիտի մոտենա, այլև՝ պիտի հոգեխառնվի մեզ: Նրա մեջ տեղի պիտի տա իր առանձնության գիտակցությունը. նրա գիտակցությունը պիտի խառնվի մերինին, փլցնելու պատը, որ մինչև այդ կբաժաներ եղբայրը եղբորից: Հոգեխառնվելով մեզ՝ նա կսովորի ուրախանալ իր համացեղ մերձավորի ուրախություններով և ցավել նրա ցավերով: Հրաժարվելով իր մեկուսի կյանքից՝ նրա մեջ աստիճանաբար կխորանա ջերմ կարեկցանքը դեպի հայ մարդն ու հայ ժողովուրդը: Հոգեխառնվե՞ց մեզ՝ նա այլևս ինքն իրեն չի զգա մենակ և օտար համամայր զանգվածների մեջ: Նաև՛ ոչինչ չի տենչա եսականորեն, միայն իրեն համար, ինչպես կվարվեր մինչև իր հոգեփոխությունը՝ մինչև իր դաշնակցականանալը: Դարձա՞վ այդպիսին, ասել է՛ նա այլևս կորցրել է իր անձի առանձնականությունը և ընդունել, թե կա համամայրության օրենքը, որի դեմ չմեղանչելու համար պետք է ապրել մեծ և անմեռ ամբողջ - ցեղի կյանքով...

* * *

Հայ ժողովրդի որոշ խաղերի մեջ ցեղի ոգու շարժն էր սկսվել: *Հայությունը ոտքի կկանգներ ոչ օտարի սադրանքներով, ոչ, այլ՝ ցեղի դրդումով:* Ցեղը, հանձին Դաշնակցության, ժողովրդի ձեռքը կդներ մի պողպատյա մուրճ՝ իր ճակատագիրը կռել-կոփելու համար:

Կյանքի կոչելով Դաշնակցությունը, *ցեղը հոգևոր թևեր կհագցներ ժողովրդի էությանը,* որով նա իր ազատագրական թափն ու թռիչքը պիտի առներ:

Ցեղի ոգու շարժից կծնվեր Դաշնակցությունը՝ մեր ժողովրդի գոյամարտը վարելու համար: Հայ ճակատից ստրկության արատը սրբող ճակատամարտնե՛ր էին պետք, ասել է՝ պիտի կրկնվեր Ավարայրը, և ահա՛, հանձին Դաշնակցության, հայ ժողովրդի մեջ կերևար Վարդանանց Ոգին - երաշխիքը մեր ցեղի մշտնջենավորման: Եվ կարծագանքեր Հայոց աշխարհում ցեղաշունչ հսկաների ձայնը. *«Ես եմ ճամբան»* - քո նո՛ր բարոյականը:

Այլևս սկսվել էր *հայ հոգու գարունը:*

Ժողողրդին տրված էր ցեղի Տապանակ Ուխտին: Կար այլևս Դաշնակցությունը, որ պիտի արժեքավորեր հայ տառապանքը՝ նրա քաղաքականացման ճամբով. նա պիտի սրբագործեր գերեզմանը հայ մարդու մահվան գիտակցականացմամբ: Կար այլևս Մեծ Նպատակը, և որովհետև ժողովուրդները իրենց նպատակի հետ փոխում են իրենց էու-թյունը՝ Հայը պիտի դառնար այն, ինչ որ է այսօր - տե՛ր ինքնանված Հայրենիքի...

* * *

Մարդկային ցեղերի պատմությունը արձանագրած չէ մի հատիկ իրողություն, որ իր անարգությամբ զուգահեռվել կարողանար հայության դեմ ուղղված թրքո-բոլշևիկ զինակցության փաստի հետ: Առաջին անգամ լինելով, իրար ձեռք կերկարեին իրենց գաղափարաբանությամբ հակոտնյա երկու ուժեր՝ իսլամը և բոլշևիզմը:

Եվ այդ զինակցությունը պիտի ճակատ հարդարեր մարդկային ցեղերից ամենաանիրավվածի՝ հայ ժողովրդի դեմ:

Համաշխարհային հեղափոխության կրողը իր անսպառ ուժը և քաղաքական ազդեցությունը նեցուկ պիտի տար թուրք դահիճին՝ հայ զոհը վերջնականորեն գետնելու համար:

Եվ այդ բոլորից հետո, Հոկտեմբերյան հեղափոխության հերոսները մեծագույն շնականությունը պիտի ունենային, պատմությունը խարդախելու գնով, թե Կարմիր բանակը Հայաստան մտած թրքական արշավանքի առաջն առնելու համար: Ո՛չ, ո՛չ- կբողոքի պատմությունը- թուրք բանակը Հայաստան քաշեց Երրորդ Միջազգայնականը, և ոչ ընդհակառակը: Ավելին կա, թուրքն ու բոլշևիկը Հայաստան մտան միաժամանակ, զինակցորեն և աշխարհակալելու նպատակով:

Իր զզվելիության մեջ այնքա՛ն կատարյալ այդ սև զինակցության երեսից այսօր իրար զարնվող երկու աշխարհների – հինի և նորի – միջև իր գլուխը դնելու տեղ չունի հայ ժողովրդի կեսը: Եվ հենց այստեղից ծնունդ առավ մեր անօրինակ ողբերգությունը...

* * *

Սակայն, միայն արտաքին թշնամին չէ, որ սև թելերով հյուսել կփորձի մեր ցեղի ճակատագիրը: Կա և ներքինը, որ այսօր էլ ոչինչ չի խնայի զավեշտի վերածելու մեր ողբերգությունը: Ամեն անգամ, երբ կխորհրդածեմ այդ հայանուն չարագործի մասին, կմղվեմ պատկերացնելու Տրապիզոնը, ուր կոտորածի առաջին օրը, հայ արյունով գինովցած թուրք խուժանի ձեռքը կանցնի մի հայ մարդ, և կտրելով նրա մի ձեռքը՝ նրանով կզարնի անգեն զոհի երեսին: Հետո կտրելով մյուս ձեռքը, կհրամայի խաչ հանել, մինչդեռ ուրիշները հեգնորեն կհորդայսպես, թրքորեն կվարվի մեզ հետ և ներքին թշնամին: *Հակադաշնակցականը - դա կտրված ձեռքն է հայության, որով թշնամին կապտակի մեզ*: Այսօր դուրս ենք և հեռու թրքական յաթաղանի հասությունից, բայց և այնպես օտար հորիզոնների տակ ծվարած հայության մի մասը կշարունակի ապրել թուրքից մեզ փոխանցված արատների լծի տակ: Երիցս երջանիկ թուրքը կշարունակի մեր ժողովրդի մի մասին հոգով ստրուկ պահել և Թուրքիայից դուրս: Հայ ժողովրդի կտրված ձեռքով – իմա՛ հակադաշնակցական ձեռքով – թուրքը կշարունակի ապտակել ցեղաշունչ հայությունը: Ա՜հ, այդ մտակույր արարածը, որին մեր օրերը հակադաշնակցական անունով է խարանած, նա չի հասկանում թե *Դաշնակցությունը հայտնությունն է Անիներ ու Արտաշատներ ստեղծած և այնքա՛ն հերոսներ, լուսակիրներ ու սուրբեր ծնած մեր ցեղի, որն օրվա հայության միջոցով արևի տակ հրեղեն կարոտով և կամքով իր հին փառքերը կփնտրի: Ցեղի կողմից ձգված կամո՛ւրջն է Դաշնակցությունը, որով հայությունը կփորձի անցնել դեպի իր մեծ ու երջանիկ ապագան:*

Դաշնակցությունը - դա քաղցր ու նվիրական դաշնակցությունն է ցեղի և ժողովրդի միջև:

Դա ցեղի դրոշմն է՝ դրված ժամանակակից հայության էության վրա:

Դա հաղորդակցության կա՛պն է, որ ցեղը վերահաստատեց իր և մեր հոգիների միջև:

Ցեղի ուղղությունն է Դաշնակցությունը, որի միջոցով ցեղն իր պատասխանատվության ենթարկելով ժողովուրդը, այդ վերջինը իր գիտակցության, ուժի և արժեքի լրումին կմղի:

Ահա ա՛յդ չի հասկանում հակադաշնակցականը, և պիտի չհասկանա, թե հրաժարվելով մեր ազգային դատից, մենք կամովին

գահընկեց հայտարարած կլինենք հայ ժողովուրդը, ավելին՝ մենք հաստատած կլինենք, թե հայ ազգը թագի և ազատության արժանի չի եղել և անցյալի մեջ:

- Հին բուլղարները,- ասում է պատմությունը,- կսպանեին իրենց իմաստուններին, պատճառաբանելով, թե նրանք աստվածների՛ն են պետք: Ճիշտ այս ձևով, բուլղարաբար է վարվում հակադաշնակցականը հայ ժողովրդի այն տարրերի հանդեպ, որոնք իմաստությունն ու արիությունը կմարմնացնեն, սակայն, առանց պատճառաբանելու, թե *Դաշնակցության մահը թրքությանն է պետք*:

Հերիք չէ, որ այդ անարին երեկ մնաց պարզ դիտողի դերում, երբ մենք անհավասար պայքարի մեջ էինք թուրքի և մահվան հետ, այսօր էլ դեռ անասելիորեն սրբապղծիչ է նրա վերաբերմունքը: Այսօր էլ նա հաղորդ չէ ցեղի հոգուն: Այսօր էլ նրան գրգռում է մեր արդար թրքատյացությունը, ճիշտ այնպես, ինչպես կարմիր լաթը՝ եզան...

* * *

Բուլղար հեղափոխության առաքյալներից Տրանդաֆիլովը հայտնվելով ատակում*, հորդորում է ժողովրդին՝ զենք վերցնել Սուլթանի դեմ: Առ այդ՝ նա սեղանի վրա է նետում իր դաշույնը ու ատրճանակը, և սկսում երդման արարողությունը: - Ո՛չ, ո՛չ,- ընդդիմախոսում է ներկաներից Կավալակը,- բուլղարը մենակ չի կարող գլուխ դնել Սուլթանի հետ: Եվ հրաժարվում է երդվել: Բայց քիչ հետո, երբ առաքյալն սկսում է երդվեցնել ցանկացողներին, մեկի անզգուշությունից վայր է գլորվում դաշույնը և թաղվում առաքյալի ոտքի մեջ:

Տեսնելով արյունը, Կավալակը բացականչում է. «Այժմ պարզ է, որ արյուն պիտի թափվի», և բերելով իր երդումը՝ նա միանում է առաքյալին: Ահա՛ ցեղային փրկարար բարոյականը: Հակառակ իր համոզումին, թե իր ժողովուրդը մեն-մենակ պիտի չկարողանա չափվել հզոր Սուլթանի հետ, բուլղարը համբուրում է դաշույնը և ուխտադիր լինում՝ զենք բարձրացնել բռնության դեմ, քանզի «արյուն պիտի թափի»: Դա ասել է՝, թքել է անձնական համոզումը, որքան էլ, որ դա ան-կեղծ լինի, երբ անհավասար կռվի բռնված ժողովուրդը մեր օգնությանը կկարոտի: Երեկ ատակի բուլղարի բարոյականը չունեցավ հակադաշնակցական հայը, և այսօր իր հանցավոր չեզոքությունը արդարացնել կփորձի իր խղճալի համոզումով...

---

* amaka - գրոհ (ծանոթ. խմբ.):

* * *

Այդ հին դասալիքը կենդանի սրբեր չի ճանաչում և այժմ: Այսօր էլ նա կրկնում է հռոմեական պատմությունից ծանոթ Տարկովինոսի կնոջ քստմնելի արարքը:

Այդ կինը հարգանք չմատուցեց մինչև անգամ իր հոր դիակին:

Մի օր, երբ կառքով կանցներ աշխարհակալ Հռոմի փողոցներից մեկով, նրախորհրդարանի դռանը փռված տեսավ իր հոր դիակը: Կառքը վարող ստրուկը փորձեց կանգնեցնել ձիերը, բայց իր թիկունքում թնդաց թշվառական աղջկա ձայնը. «Քշի՛, կասեմ, քշի»: Եվ ձիերը սլացան առաջ, կոխկրտելով դիակը, և արյան կաթիլները թոցնելով աղջկա զգեստի վրա: Այդ սրբապիղծ արարքը տեսնելով, բարոյական կոպտությանը սովոր հռոմեացիներն իսկ զայրացան և այդ փողոցը անվանեցին «Vicus sceleratus» - գե՛շ, վատահամբա՛վ փողոց:

Այսօր հայ գաղթաշխարհի մի ծայրից մյուսը հակադաշնակցական լրբենի սաստն է լսվում՝ «քշ՛ կասեմ, քշի»: Քշի՛, ոչի՛նչ, եթե կառքիդ անիվները իրենց տակն առնեն Լոզանում[21] թուրք սրից զարնված հայկական դատն իսկ:

Քշի՛, եթե նույնիսկ թրքաբուլշևիկ զինակցությունից զարնված Մայիս Քսանութն է ճամփիդ վրա: Քշի՛ կասեմ...

Եվ սլանում է հակադաշնակցական կառքը՝ սմբակակոխ անելով և՛ Գաղափար, և՛ Եռագույն, և՛ մեծ մեռելներ - ազգային ամեն սրբություն: Այսպես, անպատիժ կերպով, ներքին թշնամին, ի նվաստություն մեր ժողովրդի, իր կառքն է քշում, և պիտի քշի, քանի դեռ Հայաստան երկրի վրա օտար լուծը կծանրանա: Vicus sceleratus!-վատահամբա՛վ փողոց- այս խոսքով կարտայայտեմ զայրույթս ամեն անգամ, երբ մեր հանրային կյանքը կդիտեմ:

Քշի՛, վատհոգի՛, քշի՛, բայց մի մոռանա, որ մի օր, երբ օտարը հեռացավ Հայաստանից, կառքդ զարնվելով ցեղապաշտ հայության կատաղության ժայռին, փշուր-փշուր պիտի լինի: Քշի՛...

- Նազովրեցին կլսեր իր ցեղակիցների ձայնը. նրանք կաղմկեին, պահանջելով՝ ազատել Բարաբբային ավազակ, և խաչ հանել Հիսուսին:

Ի՜նչ զարհուրելի ողբերգություն:

Ա՜հ, դու հավասար չափով հերոս ու նահատա՛կ կուսակցություն, ո՞ւր և օրվա ո՞ր ժամին չես լսում տիրադավ աղաղակը հակադաշնակցական ամբոխի: Այո՛, ամբո՛խ, անարգո՛ղ, վատթարացուցի՛չը հայ կյանքի, որի արարքների մասին մեր պատմության ամենատխուր էջի վրա գալող սերունդները միայն երեք բառ պիտի կարդան՝ *«Հուդան և իր համբույրը»*: Ամբո՛խ, որ կսպառնա զավեշտի վերածել մեր անօրինակ ողբերգությունը:

Եվ այդ ա՛յն ժամանակ, երբ *մարդկության համար այլևս չկա նահատակություն, կա պատժվող տկարություն միայն.* երբ այլևս *տկարից խլված է նահատակ անունը՝ որպես վերջին մխիթարություն.* Եվ այդ մե՛ր օրերում, երբ դեռ խաչի վրա է հայությունը, իսկ Գողգոթայի ստորոտում շնացող թրքության քրքիջն է լսվում: Երբ թուրքի հետ են անարժան ուղեկիցները՝ *գայլն ու ագռավը.* երբ Քեմալը՝ բախտահաս պատահական հաղթությամբ գինով, իր արնոտ ձեռքը ագռավի թևերին իջեցրած՝ Արաքսի ափից իր պղտոր հայացքով Արարատյան դաշտն է չափում, այն մի օր սև հողերի վերածելու երազով...

* * *

Հայ կյանքը, սակայն, ունի և մի այլ կողմը, ուր տեղի է ունենում *ցեղի ոգու նոր շարժը,* ուր հոգիների մեջ սկսել է հոսել թրքատյացությունը որպես հրեղեն հեղեղ, նույնքա՛ն զորավոր, որքան ցեղապաշտությունը մեր: Մեր կյանքի այդ բաժնում *հայ տառապանքն ու ամոթանքը միացած, նախապատրաստում են ծնունդը նոր Հայի.* Մեր տիտանական ցավից ծնունդ է առնում մի նոր կրոն – հպարտության կրոնը: *Իր սեփական տառապանքի մեջ մկրտված Հա՛յն է աշխարհ գալիս: Նա իջնում է ցեղի ոգու բարձունքներից՝ ցեղի խոսքը շրթունքներին.* Նա սեր է ավետարանում, սե՛ր, դեպի ինքնակառուցում, ինքնահաղթահարումի ճամբով: Եվ մահ է քարոզում, *մա՛հ հայ տկարությունը սնուցող բոլոր չաստվածներին՝ հին ու նոր.* Նա գալիս է վերականգնելու մեծությունը հայ անունի, որ այնքան հայհոյված է այսօր:

Չէ՛, այլևս չի կարելի այսպես ապրել, քանզի աննախընթացորեն սպանիչ է մեր նվաստությունը - ահա՛, այս ցնցող գիտակցությունից ծնունդ առա՛ծ *աշխարհ է գալիս ցեղային բարոյականով մյուռոնված Հայը.* Ն՛ա, որ ներուժ կերպով ապրած է մեր ժողովրդին վիճակված ողբերգությունն ու ամոթանքը. *Նո՛ր Հայը,* որի դրոշակից վաղը պիտի կախվի մեր ցեղի հաղթանակը: Այդ օրվա համար է ապրում և գործում դաշնակցականը:

Դեռ իր լինելիության մեջ է Դաշնակցությունը:

Նա դեռ չի՛ ասել իր վերջին խոսքը:

Ահա՛ թե ինչու եմ ասում՝ օրհնի՛ր ճակատագիրդ, որ Հայ ես ծնված, բայց որպեսզի օտար ափերի վրա Հայ մնաս, եղի՛ր Դաշնակցական:

ՆՈՐ ՀԱՅԸ
ՎԱՂՎԱ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Տվե՛ք ինձ ներցեղային բարոյականով առաջնորդվող մի հատիկ սերունդ, և ես ապահովեմ հայ ժողովրդի տեղն արևի տակ:

Առաջնորդը, որն իր ինչ և ինչպիսին լինելը մատնում է մասնավորապես մեծ վտանգների ժամանակ, ամեն ինչ է ժողովուրդների կյանքում՝ այբն ու ֆեն:

Նրա աջն է գծում ճակատագիրն ազգերի:

Նրա՛ն կպարտեն ցեղերն իրենց հրթիռային վերելքը, ինչպես և անկումը շռնդալի: Նա՛ է փառաց ի փառս և պարտությունից պարտություն առաջնորդում մարդկային այս կամ այն հավաքականությունը:

Նա՛ է անկյալ վիճակից բարձրացնում իր Հայրենիքը, ինչպես և վերջինի բանալիները վատորեն օտար դռնապաններին հանձնում:

Այո՛, ամեն ինչ է նա՝ ճակատագրողը, կենդանի ճակատագիրն իր ժողովրդի: Նրա հետ է սկսվում ժողովրդի փառքի, կամ տկարության շրջանը: Եվ եթե հաճախ ժողովուրդների մեծությունը վերջ է գտնում կատարյալ առաջնորդի մահվամբ, ավա՛ղ, նրանց դժբախտությունը չի վերջանում ձախողված առաջնորդի հետ: Դժբախտ է սխալ և անզորապես առաջնորդվող ժողովուրդը, որպիսին է մերը: Վա՜յ այն ժողովրդին, որի առաջնորդը կատարյալ չէ՝ ապագան բազում խաչեր ունի պահած նրա համար: Խե՛ղճ է ժողովուրդը, երբ նրա առաջնորդն ավելի փառասեր է, քան հանճարեղ, երբ նրա առաջնորդին պակասում է մշակույթը՝ սրտի և մտքի, երբ բռնված նախանձի չար դևով՝ նա տառապում է բարոյական դեղնությամբ, երբ նա դավանում է անձնական երջանկություն խոստացող այս կամ այն գահավիժող վարդապետությունը, երբ տկարություն ունի մեծ թվալու բանակի գործերի մեջ, և փոքրիկ հանդիսանալու մեծ գործերում: Երիցս խղճալի է ժողովուրդը, եթե նրա ռազմիկները խոր համոզմամբ չեն կրկնում, թե «ամենաանառիկ համարված բերդերն իսկ կառուցված են գրավվելու համար»:

Անեծք է առաջնորդի տգիտությունը, եսականությունը, նախանձը: Չի՛ եղել ավելի զարհուրելի թույն, քան վատ օրինակը առաջնորդի, որ միշտ էլ վարակիչ է: Ազդում է նրա ամեն մի խոսքը, շարժումը, ակնարկը: Երբ վատ է, վատթարագույն են դառնում այն բոլորը, որոնք դժբախտություն են ունեցել նրա առաջնորդության հանձնվելու:

Եսակա՞ն է՝ անասնանում են նրա հետ առնչվողները:

Ո՞ն՞ այլ է մտավորապես՝ հոգևոր հնավաճառներ են դառնում նրան շրջապատողները:

Անհայրենապա՞շտ է՝ հակահայրենիք հրեշներ են վխտում նրա շուրջը: Իսկ երբ անարի է՝ զզվելիորեն երկչոտ են դառնում նրա իշխանությունը վայելողները:

Այսքան, ահա՛, ճակատագրական է առաջնորդի դերը ժողովուրդների կյանքում:

* * *

Կա, սակայն, և կատարյալ առաջնորդը, այլապես անհասկանալի պիտի մնար ազգերի պատմության մեջ այն ամենը, ինչ որ վսեմ է, գեղեցիկ, հերոսական: Այո՛, եղել է և կա դա, այլապես անբացատրելի պիտի մնար որոշ ժողովուրդների նախանձելի վիճակը:

Նախ, ահա՛ նրա հոգևոր դիմաստվերը մի քանի խոշոր գծերով – նա՛խ կրողը և ուսուցիչն է նա ցեղային բարոյականի: Գործել՝ նրա համար նշանակում է փարատել իր շրջապատի մտավոր խավարը, թմրությունը, տկարությունները. դա նշանակում է՝ ոչինչ չթողել իր շուրջը անթերծ և խոտան, ծույլ և մեռյալ վիճակի մեջ:

Ուժեղ իմացականություն, մեծ սիրտ և բոլորանվեր ծառայություն - ահա՛ նա: Նրա մեջ եթե դեռ չի մեռել, ապա հոգևարում է Ես-ը: Պարզատես է, վշտակիր, հերոս: Հայտնվելով այս կամ այն միջավայրում՝ նա հոգեբանորեն փոխում է այդ վերջինը: Նրա ներկայությունը ազնվացնում է հոգիները, թևածում, գոտեպնդում:

Նրա շնորհիվ անկարելի համարվածը դառնում է դժվարին, դժվարինը՝ կարելի: Շքեղ երազները դառնում են նպատակ և երջանիկ իրականություն: Նրան հաջողվում է փոխել իր ժողովրդի հոգեբանությունը, ճակատագիրը, պատմությունը: Սահման չի դրված նրա սիրելու և զոհաբերելու կարողությանը: Նա ծիծաղել գիտի մարդկային մեռյալ օրենքների վրա: Սիրում է ամբոխը, բայց գիտի հետ մղել նրա օրենսդրությունը: Իմաստուն է, և գիտի որ «կան պատմական մոմենտներ, երբ ժողովրդին ծառայելու լավագույն ձևը հանդիսանում է նրա հայացքներին վճռապես հակադրելու մեջ»:

Կատարելության ճամբին գտնվելով հանդերձ, նա իր անկատարելության գիտակցությունն ունի, և այդ իսկ պատճառով կտառապի խորապես:

Լիկուրգոսն է դա, որի օրենքների համաձայն անհատը կդաստիարակվեր հասարակական նվիրումի և հաղաքական երջանկության համար: Դա Սնելմանն է, որի բարձր գաղափարների շնչով սրբված և ուժավորված երբեմնի աղքատ և արբեցող ժողովուրդը Սուոմիի ճահճուտները պիտի վերածեր ճերմակ շուշանների հայրենիքի - Ֆինլանդիայի՛:

Դա Գանդին է, աշխարհիկ սուրբը վերածնվող Հնդկաստանի, որը գրանիտի համոզում ունի, թե առաջնորդի գերագույն կամքը կարող է բարոյապես կերպարանափոխել անգամ կաստայական փակվածությամբ հիվանդ ժողովուրդը:

Դա նա՛ է, որ պիտի ծնի հայությունը, եթե չի ուզում մեռնել. նա հրամայողաբար պիտի հայտնվի մեր կյանքում, կատարելու փրկարար դերը Լիկուրգոսի, Սնելմանի, Գանդիի և նմանների:

* * *

Առաքյալի սիրտ, իմաստասերի գլուխ, ադամա՛նդ ճակատ - ահա՛ կատարյալ առաջնորդը: Նա չկա, և ամբոխացած ու պարտվողական է մեր ժողովուրդը: Նա չկա այսո՛ր, ու վաղը թշնամին Արարատյան դաշտում կարող է անարգել կերպով կատարել անշուք թաղումը հայության մնացորդի: Չկա կատարյալ առաջնորդը՝ և արտաքին վտանգը դառնում է ավելի ահավոր, և դրա համար էլ թշնամու հարվածը պիտի լինի աննախընթացորեն մահառիթ: Չկա նա, այլապես անհասկանալի պիտի մնար այսօրվա մեր անկերպարանք ու անմխիթար վիճակը: Չկա նա, և դրա համար էլ գաղութահայությունը՝ գետեր կազմած՝ կերթա թափվելու օտար ծովերը: Չկա, ուրախություն մեր ցեղի գոյության թշնամիների, չկա դեռ ցեղակրոն առաջնորդը: Չկա նա, կա՛, սակայն, սուր կարիքը նրա գոյության: Չկա, բայց պիտի գա նա, քանզի կա նրա գոյության աղաղակող պահանջը: Նա չկա, բայց պիտի գա, քանզի հայը չի ուզում մեռնել. պիտի գա, պիտի հայտնվի ՆՈՐ ՀԱՅԸ, որպես ազգային ղեկավար՝ զինվորականի, պետական մարդու և մշակութային գործիչի դերերում. նա կգա, կհայտնվի նոր էությամբ՝ զերծ հին թթխմորից:

Անձնական երջանկության վարդապետությունը - ահա՛ թշնամին մեր ցեղի հավաքական երջանկության:

Ցեղորե՛ն, ցեղի հավիտենականի, և նրա երջանկության համար - այդ նշանաբանով նա ծեռնոց կնետի մեր ցեղը մաշող հին բարոյազուրկ հասկացողություններին:

Էվդեմոնիզմը- բարի կենդանապաշտություն- ահա՛ անհատական երջանկության հրեշային դավանանքը՝ հոգևոր մայրը բոլոր տեսակի հակազգային և քանդիչ ուժերի:

Կանգնեցրե՛ք զինվորին - ո՞վ է դա, որ լքած վահանը, վատորեն փախչում է կռվադաշտից. զորավարին՝ որ նահանջի հրամանն է արձակել. հասարակական գործիչին՝ որ միայն հաց կուտի. կենսապաշտին՝ որի համար երջանկությունը լրումն է անհատական ցանկությունների. և ոչ թե կա կրողը ներցեղային պարտականությունների:

Կանգնեցրե՛ք այն բոլորին, որոնք ապրել գիտեն, առանց մտածումի ազնվության, որոնք իրենց անզորությունը ատելու քաջություն իսկ չունեն. որոնք քաղցր խաբկանքի մեջ կպահեն իրենց ժողովուրդը, և հակադարձ ալիքի հարվածից սարսափած՝ ոչինչ չեն ծեռնարկի իրենց ցեղի ապագայի համար. նրա՛նց որոնք գիտեն, թե իրենց ժողովրդի մեջ խորապես անարգված է մարդն ու հայը, բայց և այնպես գիշերները քնել գիտեն: Կանգնեցրե՛ք այդ բոլորին, բացե՛ք սրանց գանգն ու կուրծքը, և դուք սարսափով պիտի տեսնեք ավերածությունը եվդեմոնիզմ կոչված մոլոր վարդապետության թույնի: Բարոյապես անբանացնելով անհատը՝ այդ թունավոր ուսմունքը նրան թեքում է դեպի կեղծ աշխարհաքաղաքացիություն և ապա՝ դեպի ազգային դիմազրկություն: Դա եսապաշտ թշվառականներ է ստեղծում և ոչ առաքինի և անձնադիր քաղաքացիներ, ո՛չ հրաշունչ մարտիկներ:

Ա՜հ, այդ անարգ հասկացողությունը երջանկության մասին - դա՛ եղավ մեր երբեմնի արիասիրտ և հզոր ցեղը, սրտաթափողը: Խոզաբարո երջանկություն - հոգևոր խաթարիչը մեր սերունդների: Սրան կպարտի հայությունը անցյալի իր պարտությունները և օրվա իր պարտվողական ոգին:

Կա՛մ այդ անկումի վարդապետությունը, կա՛մ հայությունը: Պիտի մեռնի՛ մեկն ու մեկը սրանցից: Շարունակե՞ց ապրել դա մեր հավա-քական հոգու մեջ՝ պիտի կորչի հայությունը: Մեռա՞վ դա՝ պիտի վերապրի մեր ցեղը:

* * *

Վաղվա առաջնորդն իր հոգևոր սնունդը կառնի նա՛խ իր ցեղի, ապա Արևելքի հոգու աղբյուրներից:

Արևմուտքում էլ են սիրում Հայրենիքը, բայց այնպես, ինչպես շունը իր թաղն է սիրում:

Ցեղաշունչ Հայի, ինչպես և Ճապոնացու համար, ընդհակառակը, Հայրենիքը միայն սեփական երկրամաս չէ, ուր «ոսկի են արդյունաբերում և հունձք հավաքում», այլ՝ սրբազան երկիր, «ուր գտնվում է աճյունը նախահայրերի»:

Շատ է մեծ հակահայրենիքների թիվը Արևմուտքում, նո՛ւյնը և նոր աշխարհում:

Ճապոնացին, ընդհակառակը, ուր էլ որ լինի, ինչով էլ որ զբաղվի, միշտ էլ ենթարկվում է իր Հայրենիքի օրենքներին:

Այնտեղ, Արևմուտքում, ուժեղ է մեքենան, այստեղ՝ մարդը:

Եվրոպացին սարսափում է մահից և հաճախ դառնում հեղինակը անարգ գործերի:

Ճապոնացին ապրում է «երբ որ դա պետք է, մեռնում, երբ որ դա արդար է»: Ազգերի մեջ միայն ճապոնացին է ասել՝ «եթե խորապես գիտակցենք, որ սերը դեպի հայրենի երկիրն ու ժողովուրդը ավելի մոտ է կանգնած մեծ ու գեղեցիկ արևին, քան մեր հայրենիքի ամենաբարձր լեռները, այն ժամանակ մահը մեզ համար թռչունի փետուրից էլ թեթև կթվա»:

Արևմուտքում ակնբախ իրողություն է հասարակական դարվինականությունը՝ քողարկված իրերարակերությունը: Այստեղ գոյության կռիվը ի սպառ չի անասնացրել մարդուն:

Ճապոնիան ունի իր Բուշիդոն, մենք՝ մեր Վահագնը:

Նա արիապաշտ է, մենք՝ էինք: Նա ցեղապաշտ է, մենք պիտի դառնանք՝ չկորչելու համար:

Ահա, թե ինչու հայ առաջնորդը մի ձեռքն Արևմուտքում՝ այնտեղի ճարտար արվեստի նորույթները յուրացնելու, իր մյուս ձեռքում պիտի ունենա ցեղի բարոյական օրինագիրքը:

Այսպիսին պիտի լինի վաղվա առաջնորդը, որպեսզի նրա օրով արմատորեն հոգեփոխվի հայ մտավորականությունը, որպեսզի հայ գործիչը մերկանա իր եսից՝ անանձնականանալու աստիճան, որպեսզի հասարակական ծայրահեղությունը ընդգրկի գործչի բովանդակ կյանքը:

Ո՛չ մարդկային նախիրը բազմացնող կոտորակային անհատը, որ սեփական այո՛ և ո՛չ չունի, հոգի չունի, այլ՝ հայն ու մարդը՝ ամբողջական, ինքնուրույն ու զորեղ:

Ո՛չ կրավորաբար խորհրդածուն ու սոփեստը, այլ՝ մեծագործության ծարավի մշակը մշտաջան:

Ո՛չ աշխարհի իրերի և անցքերի վրա նյութապաշտ փիլիսոփայության աչքով նայող իրենից զզվելի էպիկուրյանը, որն իր բավականությանց զոհ է բերել կյանքի ողջ սրբությունը, ո՛չ, ո՛չ նմանը, այլ կյանքի լի բաժակը արհամարհել իմացող իդեալիստը՝ վսեմախոհ: Ո՛չ հոգու գռեհիկը, որ եսականորեն ըմբոստանում է սրբացուցիչ տառապանքի դեմ – ոսկեղենիկ շղթան, որ մեր հայացքը կապված կպահի՝ երկնքին, այլ՝ հոգու պահազատությամբ շեշտվածը, որ մտովի կհամբուրի այն խորհրդավոր ձեռքը, որն իր հաճույքների հորդող բաժակը կփշրի: Ո՛չ ելեվմտական խելքի տեր քաղաքական գործիչը, որ զգուշաբար պարագաները կկշռի ու կվերակշռի, ամեն բան թողնելով անորոշ ժամանակին, այլ՝ արի՛ն առաջահայաց, որ խիզախել գիտի:

Ո՛չ հոգևոր թզուկը, որ հաջողում է բարձրանալ հսկաների վրա՝ մի քիչ հեռուն տեսնելու համար, այլ՝ նա՛, որ գիտի նախատեսել անցքերը և ցանկալի ուղղություն տալ՝ նրանց, նա՛, որ փարոսորեն լուսավորել գիտի իր ժամանակաշրջանը՝ նոր ուղիներ բանալու իր ժողովրդի մտքի բանուկ ճամբաներից դուրս:

Ո՛չ այս կամ այն դասակարգի ջատագովը – հիմնավո՛րը Հայրենիքի, ոչ էլ ներկայով կլանված կարճահուշ ժողովրդասերը, այլ՝ ցեղամերձը, որն իր բոլոր խորհուրդները ցեղի՛ց կառնի:

Ո՛չ անձապաշտը՝ նվաստախոհ, վայնասողը՝ հոգեհաշմ, խուժանավարը՝ շոգմոգ, հերձվածը՝ որմնացան, ո՛չ էլ նեղահավատ ու բաժանասեր կուսակցական բանսարկուն, որը վատորեն այստեղ և այնտեղ կարգ ու կռիվ կսերմանի՝ իր հացն ու հանգիստն ապահովելու համար: Ո՛չ նմանները, ոչ էլ խորթաբարո վարդապետությամբ զանգվածները թունավորող լենինադավան հայրենասպանը, այլ՝ հայը ցեղազդեցիկ ու խորարթուն, նա՛, որ ունայն է հռչակել այն ամենը - արվեստ, գրականություն, իմաստասիրություն,- որոնք աճեցնելով մեր աշխարհաձանոթությունը, մեզ չեն դարձնի ավելի՛ հայ, և ավելի՛ զորեղ: Ո՛չ պարտվողականը - համակ վախ և եսականություն, որը իր ժողովրդի փրկությունը փոքրոգի մոռացման մեջ կփնտրի, այլ՝ նա՛, որ չի տենչա ավելի գերագույն ճակատագիր, քան ստեղծագործորեն հասունանալ հաղթական մահվան համար, նա՛, որի ուղեղի մեջ ամեն արևածագի հետ զրնգում է մի սրբազան մտածում՝ պիտի՛ պատժվի՛ թուրքը: Նա՛, որը ծանոթ մեր ցեղի հոգու լեզվին, կարող լիներ օրվա հայությանը վերադարձնել մեր հրաշունչ ցեղայնությունը, որ ժողովրդին հակադրեր ցեղը, որ կարողանար ժողովրդի տկարության դեմ հանել հոգևոր զորությունը մեր ցեղի, որ մեծ էր, և է՝ հանապազոր:

Այսպիսի՛ն պիտի լինի առաջնորդը, տառապող և իր վերջնական ազատագրությանը սպասող հայությունն:

Նմանը պիտի լինի դա, որ գալիս է՝ ցեղահաղորդ, ինքնաճանաչ և ինքնազոր:

Եվ նրա օրով կբորբոքվի պայքարը ՀՆԻ, որ չի ուզում մեռնել և ՆՈՐԻ միջև, որ ուզում է աշխարհ գալ: Սրբազան պայքարը Ես-ի և Մենք-ի միջև:

Եվ այդ պայքարից կծնվի ՆՈՐ ՀԱՅԸ: Հոգիներում էլ չի՛ մնա հին թթխմորի հետքն իսկ:

Կչքանա ապաշնորհ հասարակական վարձկանը՝ իր տեղը տալով վաստակավեր, հոգեռանդ և ցեղապահ մշակին:

Հայ մականը, սուրը և գրիչը կգտնվեն կարող և սրբամաքուր ձեռքերի մեջ:

Կզարթնի Ցեղը հայի մեջ և կսկսվի Հայ հոգու արդյունագործության և վերելքի փառաշատ շրջանը:

Եվ, որպես արդար հետևանք, առաջին անգամ լինելով՝ մարդկությունը խորապես կամաչի մեր հանդեպ ունեցած իր անիրավություններից:

Ա՜հ, Ցեղահայտնության երանելի օր, պիտի ուշանա՞ս, արդյո՛ք, հեռո՞ւ ես:

ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ - ՑԵՂԸ ԵՎ ԻՐ ՏԱԿԱՆՔԸ [22]

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ընթերցո՛ղ, օրերը՝, որ կապրենք, գրեթե աննախընթաց են հայոց պատմության բոլոր ժամանակների մեջ:

Մե՛զ վիճակվեց՝

- Վկա լինել մի մեծ վատության՝ մեր ժողովրդի մի մասի ամբարիշտ ուրացումին, և

- Ցմրուր դատարկել բաժակը ազգային մի մե՛ծ ամոթանքի:

Այն օրից, երբ լենինյան դաժան կատակերգությունը չեկայաչարչար[23] մեր հայրենիքում մի բուռ դերակատարներ գտավ, այն օրից հայոց սփյուռքի թատերաբեմի վրա վերստին երևաց հայ ուրացողի զազրատիպ դեմքը:

Այն օրից՝ օտար ափերի վրա ազգային իդեալով ապրող հայությանը պարտադրվեց մի անօրինակ պայքար,- պայքար՝ եռյակ ուժերի դեմ, պայքար՝ օտար այլասերիչ միջավայրի, արտաքին թշնամիների, և միաժամանակ, հայ ուրացողի դեմ՝ ներազգային ճակատի վրա:

Պայքա՛ր կա հայոց գաղթաշխարհում՝ օտար անապատներում փռված մեր մենավոր օազիսներում: Եվ, ավա՜ղ, այդ պայքարում, ի՜ուրախություն մեր ցեղի թշնամիների, մենք օտար հարվածներից ավելի՛ մեր թիկունքում եռացող հայ տականքի հարվածներից ենք նեղվում: Այո՛, տակա՛նք, որ իր կուրության մեջ՝ շարունակում է անասնորեն լծված մնալ թրքո-բոլշևիզմի ռազմակառքին:

Պայքա՛ր կա, որի մեջ կողմերից մեկը- ազգայնական հայությունը - աշխարհն ու երևույթները դիտում է իր ցեղի հավիտենականի բարձունքից, մյուսը՝ իր առօրեական վաղանցիկ հաշիվների անկյունից: Մեկն իր որոշ ճամբան և ազգային դատն ունի, մյուսը՝ անուղի է, աննպատակ: Մեկը կըռվում է իր նվիրական դրոշի, մյուսը՝ վարձկան է օտար զենքի տակ: Մեկը իր ցեղային լիարժեքության գիտակցությունն ունի, և իր ցեղին պարտադրված անարդար ճակատագրի դառնությունից է առնում պայքարի և զոհաբերության իր խանդը. մյուսը նվաստ՝ իր ընկածության գիտակցությունն ունի, և այդ վերջինից է ստանում վատության իր ուժը:

Ո՞վ, ներցեղային բարոյականով առաջնորդվող, ո՞ր հայը ցեղախառ խռովքը չի զգում, շունչը այս նոր, այս քաղաքական Ավարայրի:

Այսօր առավելապես Ամերիկան է այդ պայքարի թատերաբեմը:

Այդ պայքարի առաջին գծի վրա՝ հայաթշնամի ուժերի հետ արիաբար չափվող շարքերին եմ ծոնում էջերը. - մասնավորապես նորերին, այն հազարներին, որոնք վերջին երկու տարվա ընթացքում Դաշնակցականի, Ցեղակրոնի և Կարմիր Խաչուհու անվան տակ եկան միացան Եռագույնի բանակին:

Սոֆիա, 1935, Ապրիլ: Գ. ՆԺԴԵՀ

I
ՄԻՋԱՎԱՅՐԸ

«Պետք չէ իրականությունը անիծել, այլ՝ հասկանալ»:
ԿԱՅԶԵՐԼԻՆԳ

Լափող, կլանող է ամերիկյան միջավայրը:

Հսկա այդ խառնարանում հայությունը աշխարհագրորեն այնքան է ցրված և թվով այնքան կոտորակային է, որ նա իր միջավայրում կենտրոնանալու, որով քաղաքանապես զգալի ուժ ներկայացնելու կարելիություն չունի:

Ավելի ողբալի է, սակայն, հոգեբանական ցրվածությունը: Թվենք մի քանիսն այն գործոններից, որոնք առանձնապես նպաստում են դրան՝

ա) Ամերիկյան միսիոներական քարոզչությունը և դրա հետևանքով ազդու դարձած հարանվանական պաղությունը՝ երբեմն պսակված նեղհավատ անհանդուրժողությամբ.

բ) Հայաստանի նկատմամբ հեռավոր թիկունք լինելու պարագան, որ ընկերայնորեն բարեկեցիկ և հայորեն ուծանալու հակամետ տարրերի մեջ արտահայաստանյան տրամադրություններ է ստեղծել.

գ) Կրոնակրթական հաստատությանց նվազությունն, որի հետևանքով անհատները ազգային կուլտուրական արժեքների և հիմնարկությանց շուրջը հավաքվելու նվազ պատճառներ ունեն, որով՝ մեծ մասամբ զուրկ են մնում ընդհանրական շահերի գիտակցությունից.

դ) Հատկապես հայ միջնակարգ դպրոցների չգոյությունը, որ նոր սերունդը մղում է անգլիախոսության և ամերիկյան մշակութային արժեքներով ապրելու.

ե) Հակազգայնական քարոզչությունը, որ հատկապես վերջերս ոչինչ չի խնայում հոգեբանորեն ավելի՛ ևս կոտորակելու հայությունը:

Աշխարհագրական և հոգեբանական այս ցրվածության միանում են նաև նյութական աննպաստ պայմանները, որպիսիք են՝

- Տնտեսական տկարություն հայ միջակորեար դասի, որի հետևանքով ազգի մեծագույն մասը մնում է ճնշված օրվա հացի պայքարի մղձավանջի տակ և համակվում՝ ավելի գործ փնտրելու, քան թե

գործ ստեղծելու տրամադրությամբ, որով՝ էապես զրկվում է նախածեռնական ոգուց, ինչպես նաև անանձնական բարձր նպատակներով տևաբար ապրելու հնարավորությունից.

- Հայկական առևտրի ոչ-համագործակցական՝ անհատական նկարագիրը, որ զարգացնում է հոգևոր մենասիրություն և եսական շահապաշտություն.

- Հայկական դրամագլխի մեծակշիռ չլինելը և նրա ոչ-արդյունաբերական հակումը, որ դժվարացնելով գործարանային դրության ստեղծումը՝ անկարելի է դարձնում հայ մտավորականի, արհեստագետի, դրամատիրոջ և բանվորի ճիգերի համախմբումը - մի բան, որ կարող էր այնքա՜ն նպաստել ազգային կյանքի օրգանական կազմակերպման:

Այսպես, ամերիկահայությունը ցրված է մարդա-աշխարհագրորեն, ցրված՝ հոգեբանորեն, ցրված՝ տնտեսականորեն:

Նա օրգանիզմը չէ՛, այլ մասնատված օրգաններ. նա ամբողջականություն չէ, այլ տարանջատություն:

Այս ծանր պայմաններում, սակայն, կա՝ հայությունը հոգեբանորեն կենտրոնացնելու, նրան իբր հասարակություն կերպավորելու մի գործոն - ՀԱՅ ՀԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ: Կա՛ նաև, ինչպես տեսանք, ազգորեն կենտրոնախույս տարրերի ինքնակազմալուծման ձգտումը - ՀԱԿԱԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ:

Ամերիկահայությունը, ուրեմն, բաժանվում է երկու մասի - հայ հասարակություն դառնալու իդեալով առաջնորդվող ազգայնական հոսանք, և ցեղորեն դիմազուրկ, ապազգայնացած ու տարրալուծվելու հակամետ ցրվածություն: Եվ ուրիշ բան չէ ամերիկահայության այսօրվա պայքարը, եթե ոչ՝ այս երկու մտայնությանց սուր բախումը:

Հակոտնյա այս տրամադրությունները պատմահոգեբանորեն պայմանավորվում են նշանակալից այն փաստով, որ հայության մի մասը՝ Ամերիկայում արմատ ձգելով, այնտեղ գաղութ կազմելու նպատակով չի հեռացել երկրից, այլ եղել է պանդխտություն: Զոհ տաճկական հալածանքի՝ ամերիկահայ պանդուխտը անմիջական նպատակ ուներ դրամ շահել և երկրում մնացած տան օգնության հասնել, իբր ավելի հեռավոր նպատակ՝ սրտում փայփայելով երկիր վերադառնալու հույսը: Խռովքոտ այդ տարրի հոգում հայրենի հողի զգացումը դեռ այսօր էլ կենդանի է, որքան էլ «Դեպի Երկի՛ր» կանչը այժմ չի լսվում:

Դրա հանդեպ, մյուս մասը՝ հայրենիքը թողել է ընդմիշտ, գնացել է դրամ շահելու և նոր կյանք վայելելու նպատակով, որով հոգեբանորեն դարձել է անհայրենիք - ապահայրենական տարր: Այժմ էլ նա շարունակում է ո՛չ միայն հայրենակարոտ պանդուխտի հոգեխռովքից զուրկ մնալ, այլև ի սպառ մոռացության տալով հայոց աշխարհը, ճգնում է մոռանալ նաև իր գաղութային հանգամանքը, ծպտվել իբր

տեղացի, որքան էլ «ներգաղթ» նշանախոսքի համար ընդունակ է ահագին խանդավառություն կեղծել:

Հոգեբանությունների այս բևեռացումով պայմանավորված ամերիկահայության սուր պայքարը՝ իր խորքով մի մասերևույթն է այն ահարկու գուպարի, որ ամբողջ մի անցյալում կնքեց հայության ազգայնական և հակազգային տարրերի փոխհարաբերությունը, որքան էլ ամերիկացի մակերեսային դիտողին այդ թվում է արևելյան կրքերի ըմբշամարտության սովորական մի տեսարան:

Ասե՛նք, որ ամերիկացու բարոյականը դիմորոշվում է նրանով, որ նա ամեն պայքար համարում է կենսաբանորեն անհրաժեշտ և նրա իմաստը կգտնում է նրանում, որ կողմերից մեկն ու մեկը անպայմանորեն հաղթանակի: Ըստ նրա հայեցողության՝ մարդս կռվում է հաղթելու համար և նրա բնազդական համակրանքը մի՛շտ էլ հաղթանակի հետ է: Նա չի սիրում ողբերգությունը, սպորտսմենի հոգեբանություն ունի և դիտող է միայն: Կրկեսապաշտական այս ըմբռնումին հակադրվում է ցեղորեն հայ մարդու տառապապաշտ հոգեբանությունը, որի շնորհիվ հայը ամեն երևույթի մեջ բարոյական տարրն է փնտրում, ատում է անհիրավ ուժը, խոցվում է, երբ անարդարությունն է հաղթանակում և արցունքի հետ՝ իր սրտի արյունն է քամում, երբ արդարությունն է պարտվում:

Դրա հանդեպ, ցեղուրաց հայը՝ իբր հայկական հոգու բացասական կումի արտահայտիչ՝ իր երջանկությունը պայմանավորում է իր հոգևոր մեկուսիությամբ: Նա ո՛չ ամերիկացու կենսաբանորեն ուժապաշտ բարոյականն ունի, ո՛չ էլ տառապապաշտ հայի արդարասիրությունը: Չարության շտեմարան է նրա հոգին, նա սիրում է մեր կյանքում արդարությունը խաչված տեսնել և ցնծվում է, երբ ստորությունն է հաղթանակում: Անստեղծագործ է. զուրկ ներքին կրակից. անընդունակ՝ ինքնաբորբոքումի: Կարծեք Արարչությունը նրան պարգևա-տրած է միայն գործիք դառնալու կարողությամբ: Իբր ներքին չարություն նա սիրում է հրահրվել արտաքին թշնամուց: Այս է պատճառը, որ նա միշտ էլ զինակցում է մեր ցեղի դահիճներին:

Պայքա՛ր կա հայկական Ամերիկայում, և մեր ցեղի այս ներքին չարությունը - ցեղի այս չարարվեստ տականքը - վերստին գործիք է արտաքին թշնամու՝ այս անգամ թրքաբոլշևիզմի ձեռքին:

Հակադաշնակցական հայը հպարտ է, որ օտար, այլ միջավայրում բոլշևիկյան աստղի շնորհիվ ցեղորեն ազատ իր կերպարանքը որոշ փայլ է ստացել: Ազգայնական հայությունը, սակայն, ապրում է հայ ճակատագրի ծանր ողբերգությունը և ազգային ամոթանքի դառնությամբ չափվում է օտարից գոտեպնդված իր ցեղի տականքի հետ:

Մե՛ծ, հավիտենորեն մեծ արժեքներ են դրված այս բորբոքվող պայքարի մեջ - մեր ազգային ոգին, որ բոլշևիզմը մարել է ձգնում, և մեր դատը, որ քեմալական թուրքը սպանել է ուզում:

Եվ պայքարը տարվում է այդ մեծ արժեքները խորհրդանշող Եռագույնի շուրջը:

Պայքա՛ր, որի մեջ պարզվեց, որ մեր ժողովրդի մեջ դեռ կան օտարահակ տարրեր, որոնք մեզ հետ չէին երեկ, երբ ազգայնական հայությունը աստվածային խոյանքով ոչինչից Հայաստան ստեղծեց. մեզ հետ չեն այսօր, մեզ հետ չեն լինի և՛ վաղը: Եվ որ վաղը, երբ արտաքին վտանգը Հայաստանի դռները զարկեց, այդ անդրոշակ տարրերը մեծապես պիտի վտանգեն մեր քաղաքա-հոգեբանական թիկունքը:

Մե՛զ, ապա ուրեմն, մեզ կմնա կրկնապատկել մեր արթնությունը ամենավճռական դիրքավորմամբ:

Ինչո՞վ կվերջանա այդ պայքարը, որն այլևս վերածված է կատարյալ դրոշամարտի: Ո՞վ կզարնվի այս պայքարի մեջ և ո՞վ կհաղթանակի: Անտեղի՛ հարց, հակադաշնակցական դիրտից զատ ո՞վ չգիտի, որ երբ կռիվը դրոշակի շուրջն է, հաջողության աստվածուհին միշտ էլ պսակադրում է դրոշակակիրի ճակատը:

Դրոշամարտում մի՛շտ էլ դրոշակակիրն է հաղթում:

II
ՀԱԿԱԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հակադաշնակցական հոգևոր ցրվածության և քանդվածության տեսակետից ախտանշական է ռամկավարների «Ապագա» թերթի հետևյալ ելույթը.- «Եռագույնը մի թշնամական ցույց է այն երկիրների հանդեպ, ուր մենք կբնակվենք: Մենք այլ դրոշ չունենք, քան դրոշը այն պետությունների, ուր տեղադրված ենք իբր եկվոր կամ հպատակ»:

Ընթերցո՛ղ, այդ տողերի իմաստը պետք է բացատրել ո՛չ թե ռամկավարի հորանջող տգիտությամբ, նրա քաղաքական համրակությամբ, այլ իր հոգեբանությամբ:

Այս երկու խոսքի մեջ խտացված է հակադաշնակցական ողջ էությունը՝

Աննպատակություն.

Քաղաքականապես աննպատակ էակը, իրո՛ք որ քաղաքական խոհրդանիշի պետք չունի:

Նվաստության հոգեբանություն.

Հակադաշնակցականի պատկերումով՝ հայը հավասար արժեք չէ դրոշատեր ժողովուրդներին, որով՝ նա չի կարող քաղաքական ուրույն դատ և իդեալ ունենալ: Պատմությունը ճշտել է նրա դերն ու արժեքը և նրան պարտադրել երկակի աշխարհաքաղաքացիություն - տիեզարական հպատակությունն: Նա օտարահպատակ է, և այլ բան չի կարող լինել: Եվ այսպես ամենուրեք և հավիտյան:

Ցեղային անլիարժեքություն.

Դրոշատեր լինել՝ նշանակում է ցեղային բարձր ընդունակություններ և մշակութային արժեքներ հաղթականորեն արձանացնելու կամք ունենալ: Հակադաշնակցականի ըմբռնումով, սակայն, հայը չի կարող հաղթական կամք ունենալ, իսկ եթե ընդունակություններ և արժեքներ ունի՝ ապա դրանք պիտի զարգացնի և պահի աշխարհի կամքին հլու մնալու իմաստությամբ: Նրա համոզումով՝ հայը ցեղ չէ, այլ «ցեխ» (հիշել «ցեղակրոն» բառի պղծումը հակադաշնակցական ամբոխի կողմից, ըստ իր պատկերի - «ցեխակրոն») այսինքն մարդկային տականք: Տականքն, ի հարկե, միշտ էլ կմնա ոտքի կոխան:

Կեղծ բարեկրթություն.

Հակադաշնակցականի ըմբռնումով՝ համեստություն է ուրիշի երկրում ամեն տեսակի խաբեությամբ դրամ շահելը, բայց բարեհյուսության դեմ է Եռագույն բարձրացնելը, այսինքն՝ սեփական հայրենիքի վերանվաճման մասին մտածելը, որպեսզի հյուրընկալ ժողովուրդները ազատվեն մեր ոչ այնքան ցանկալի ներկայությունից:

Կեղծ կուլտուրականություն.

Հակադաշնակցականը հավատացած է, որ Եռագույնից հրաժարվելիս ազգերը պիտի ընդունեն, թե՝ կ՚որդեգրեն իրենց մշակույթը: Նա իրեն վերագրում է տիրող ազգերի մշակույթին նպաստող միջնորդի դեր, և հպարտանում դրանով: Նա չգիտի, սակայն, որ կուլտուրան, եթե ազգային չէ, կուլտուրա չէ, ինչպես ազգը, եթե կուլտուրական չէ, ազգ չէ:

Պարտվողականություն.

Սարսափից խուճապի մատնվածը լքում է իր հպարտանքը հիշեցնող ամեն բան. կորովաթափը ընդունակ է ո՛չ միայն իր դրոշը լքել, այլև սարսափում է նրա ծաղրանքից, որովհետև դրոշակով մարդս ասում է իր թշնամուն - «Ես այստեղ եմ»: Ցեղորեն սպառվածը, սակայն, անընդունակ է այդ անել, հենց այդ է պատճառը, որ հակադաշնակցականը վատորեն փախչում է Եռագույնից:

Վախի քարոզչություն.

Դրոշապաշտ հայության բոլոր ոգևորումները հակադաշնակցականին թվում են արկածախնդրություն: Թուրքի հետ չափվելու միտքը նա համարում է հիմարություն, այսինքն՝ ընդունում է, որ հայն անխուսափելիորեն պիտի պարտվի: Անարի է նա. իսկ նման ամբողջ իմաստությունը խտանում է մի՛ բառի մեջ - Վա՛խ: Իր հասկացած հայության ինքնապաշտպանության միակ միջոցը նա համարում է վախի քարոզչությունը, առանց գիտակցելու, թե դրանով հայությունը նախապատրաստում է նորանոր պարտությունների համար:

Քաղաքական անբարոյականություն.

Ամեն վախկոտ կենսաբանորեն անբարոյական է: Նմանի համար քաղաքական անբարոյականությունը բնական օրենք է: Հակադաշնակցականը գիտի թե՝ Եռագույնը նաև նահատակ Հայաստանի ուրվականն է, որից թուրքը չի կարող չանհանգստանալ: Վերջինին, սակայն, այս մղձավանջից ազատելու համար՝ ռամկավարը ոչ միայն Եռագույնի քաղաքական խորհուրդն է ծաղրում, այլև ճգնում է մոռացության տալ Հայաստանի նահատակության հիշողությունը՝ փորձելով հաչս մարդկության արդարացնել թուրքը:

Խռովարարություն.

Որպեսզի կարելի լինի թուրքը արդարացնել և նրա ոճիրները մոռացության տալ, հակադաշնակցականը փորձում է սրել ամբողջ քաղաքական աշխարհի և ազգայնական հայության հարաբերությունները: Ըստ նրա, «Եռագույնը թշնամական ցույց է» ոչ թե Հայաստանը հոշոտող թուրքի, այլև բոլոր «այն երկրների հանդեպ, ուր մենք կբնակվենք», այսինքն, օրինակ՝ Ամերիկայի, Բրազիլիայի, Արգենտինայի, Ռումինիայի, Զվիցերիայի և այլն.: Այս ձևով, նա երազում է ամբողջ աշխարհում հակահայ հալածանքներ տեսնել. այդ դեպքում, իհարկե, աշխարհի «ամենաարդար կարգերը» խորհրդային իշխանությանը կլինի, իսկ աշխարհի ամենաասպետական ազգը՝ թուրքը: Ի՞նչ նպատակ է հետապնդում այս ներքին խռովարարը՝ ինքն էլ չգիտի, բայց հստակ է մե՛կ բան - նրա բոլոր ելույթները ծառայում են հայը ներքուստ զինաթափելու թուրքատյաց հոգեբանությունից և աշխարհի ատելությունները մեր դեմ հրահրելով, մարդկությանը ներշնչել այն համոզումը, թե եռագույնապաշտ հայությունը համաշխարհային խռովարար է, որով՝ արդար էր, որ նա ջարդվեց և էլ ավելի արդար կլինի, եթե նա իսպառ ջնջվի:

Հատվածականություն.

Ժխտելով Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարականը խորհրդանշող Եռագույնը, հակադաշնակցականը մատնում է ցեղորեն կենտրոնախույս իր հոգեբանությունը: Վտարված հայ ցեղայնությունից՝ նա սարսափում է Եռագույնի միացուցիչ իդեալից - անկախ և ամբողջական հայության հեռանկարից: Պատմականորեն այս տիպը մի՛շտ էլ եղել է պառակտիչ, հատվածական ու այդպիսին է և՛ այսօր:

Դավաճանություն.

Անհայրենիք դարձած մի ժողովրդի համար չկա՛ ավելի բարձր և նվիրական նպատակ, քան իր հայրենիքի՝ իր հավիտենական սեփականության վերստացումը: Ուրանալով Եռագույնի խորհուրդը, հակադաշնակցականը բնականորեն հոգեկցում է ա՛յն տարրերին, որոնք դեմ են Հայաստանի վերականգնումի իդեալին, այսինքն՝ բաժանում է թշնամու տեսակետը մեր ցեղի ճակատագրի նկատմամբ: Իսկ ընդհանուր

տեսակետ ունենալ արտաքին թշնամու հետ՝ նշանակում է ներքին հակասության մեջ գտնվել իր ցեղի հետ: Այս հակասությունն է ահա ակնաղբյուրը բարոյական այն սոսկալի անկումի, որ կոչվում է դավաճանություն: Այո՛, ինչպես տեսնում եք, չի կարելի հակադաշնակցական լինել, առանց դավաճան լինելու:

Հակադաշնակցականության էությունը ընդհանուր կերպով բնորոշելուց հետո, հարկ է ավելի մանրամասնորեն հոգեգծել այդ ահավոր տականքի փոփոխականները, հատկապես ռամկավարը և բոլշևիկը: Հնչակյանները զանց ենք առնում, որովհետև նրանք կես այս են, կես այն, և ընդհանրապես «կես-կես» են իրենց քանակով և որակով:

III
ՌԱՄԿԱՎԱՐԸ

«Միթե այս ամբոխը իմ եղբարն է, Տե՛ր»:

Մարդկային ազգերին հատուկ է աշխարհն ու երևույթները հասկանալու ճիգը:

Նրանց հատուկ է, մասնավորապես, իրենց ծախողանքների և տառապանքների պատճառները հասկանալու ճիգը:

Մե՛ծ, անասելիորեն մեծ եղավ մերօրյա քաղաքական հայության վիճակված տառապանքը և ամոթանքը, մասնավորապես՝ այդ վերջինը:

Մեր դժբախտության պատճառներին գիտակ՝ մենք ավելի այդ պատճառների բնույթից ենք տառապում, քան մեզ պարտադրված անօրինակ անարդարությունից: Տառապողին, սակայն, հատուկ է նաև մի ա՛յլ ճիգ - գիտենալ, թե միևնույն պատճառներով մեկ ուրիշը մարդկային ցեղերից կամ մի այլ սերունդ իր ցեղից երբևիցե տառապե՞լ է իր չափ: Հա՛յը - իր գոյությունը փոթորկող երևույթները պատճառագիտորեն վերլուծող ազգայնական հայը պատասխանում է՝ Ո՛չ:

Ճիշտ է, չկան անտականք ազգեր, բայց հայ տականքը կմնա անմրցելի:

Գիտե՛նք, ներքին թշնամու հետ գործ ունեցել են մեր բոլոր սերունդները, բայց մեր օրերինը կմնա unicum[24], որի երեսից, որի ազգադավ արարքների պատճառած ամոթանքի մեջ մենք խաչվում ենք ամեն օր, ժամ, վայրկյան:

Ինչո՞ւ մեզ չի հասկանում ռամկավարը- հայ կյանքի այդ հավիտենական Չիչիկովը[25]:

Եկավ Հեղափոխությո՛ւնը - նա հայ հեղափոխականների լեզուն չհասկացավ:

Եկավ Ազատությունը - նա ազատ հայրենիքի լեզուն չհասկացավ:

Եկավ Լոզանը - նա հայ նորագույն ցավի և ամոթանքի լեզուն չհասկացավ:

Չհասկացավ, որովհետև նա զուրկ է սրբության, ողբերգականի և հերոսականության զգացումից:

Ինչո՞ւ է նա ժխտում մեր ազատագրական շարժման արժեքը:

Ինչո՞ւ է անիծում մեր ցեղի ամենասուրբ վկաներին - դաշնակցական նվիրումի հսկաներին, նրանց, որոնք «գերեզմանի մեջ ննջելով՝ սուրն իրենց գլխի տակ դրին», չէ՞ որ «քաջաց բարձն է սուրը»:

Ինչո՞ւ այսպես. - որովհետև այդ տիպը ցեղերի ճակատագրի հերոսականն ու ողբերգականն ըմբռնելու չափ սրտի խորություն, հոգու մեծություն չունի:

Ռամկավարը գաղափարի հակառակորդ չէ, այլ թշնամի: Պայքարում բարոյականը չի ընդունում: Վատությունն է իր միակ զենքը: Իր էության դեմ է բացճակատությունը: Աշխատում է բերդը ներսից գրավել, այսինքն հավատարիմ է այն մեթոդի տառին և ոգուն, որ պատմական մեր ամբողջ անցյալում եղել է հայ դավաճանության միակ զենքը: Իր քաղաքականության գլխավոր միջոցներն են - սևացում դաշնակցական ղեկավարների և շարքերը շոյող քսություն: Հակազգային ճակատում՝ ռամկավարն ավելի՛ գործ է տեսնում, քան բոլշևիկը, ինչպես և բոլշևիզմի համար նա ավելի՛ է աշխատում, քան իրենք՝ բոլշևիկները: Նա բարոյա-քաղաքական անընտրող է, նա ծեռք մեկնեց բոլշևիկին, դարձավ և համառում է մնալ կարմիր կոչնակի ժամկոչը մեր աշխարհում: Իր պրոպագանդի ձևերը գերազանցորեն բոլշևիկյան են - սևացրու և անցի՛ր: Նա էլ իր արշավախմբի առջևից տանում է որոշ սրբություններ - էջմիածինը, եկեղեցականը, խաչը, և վերջերս՝ նաև՝ իբր նորատիպ զենք - փողոց հանած իր «հարվածային կին»ը:

Ռամկավարի և բոլշևիկի հոգեկցության գաղտնիքը նրանում է, որ երկուսն էլ ցուցահանում են հոգեբանության նույնություն. նյութապաշտ՝ երկուսն էլ դասակարգային շահի կազմակերպություններ են: Երկուսն էլ անելիք չունեն հայ կյանքում. մեկն իր էությամբ հակազգային է, մյուսը՝ Հայաստանի խորհրդայնացմամբ՝ փակված է համարում հայ դատը: Ռամկավարը՝ հակադաշնակցական իր մոլուցքի մեջ՝ նվազ ատելի դարձրեց բոլշևիկը և կուրորեն դեռ աշխատում է իրեն ավելի զզվելի դարձնել, քան է՝ բոլշևիկը: Նա, մասնավորապես վերջին տարիները սկսել է հեգնորեն չակերտել հայկական բոլոր արժեքների սրբությունները: Նա զուրկ է մեծագործություններով հիանալու ընդունակությունից. նրա էությանը պատշաճում է ռուսական առածը. «սպասավորի համար չկա՛ հերոս»: Ռամկավարը - հայոց պատմության հասարակ սպասավորն է, որ հոգևոր մանրուքով է ապրում: Բոլշևիկի չարածը նա

արված է համարում, իսկ մեր կատարածն՝ ուրանում: Ծառայական հոգեբանություն ունի և զզվելիորեն հացկատակ է: Երբ բոլշևիկներն ասում են, թե՝ «ամենայն հայոց կառավարություն չեն», որ զզվում են «ազգ և ազգայնություն» գաղափարներից, ռամկավարը թութակում է, թե խորհրդային իշխանությունը ազգային իշխանություն է, որ նա մտահոգված է ազգի ճակատագրով և զբաղված է ազգահավաքությամբ: Սա արդեն սովորական զինակցություն չէ, այլ օրվա տիրողին ամեն գնով հաճոյանալու անազնիվ ճիգ: Օտարը հայության ազգային դատը ճանաչում է և պատկերում Դաշնակցության - իմա՛ մեր ազատագրական սերնդի - միջոցով, որն իր հերոսականով Հայաստան ստեղծեց. ռամկավարը, սակայն, ոչինչ է խնայում համոզելու օտարին, թե՝ հայոց ազատագրական ճիգն ու զոհողությունները եղած են անարժեք: Այդ տարրը ոչ միայն չի հանդուրժում հայկական տիրապետությունը, այլև զայրանում է նրա փաստից: Հոգեախտաբանական տեսակետից ուշագրավ է այն իրողությունը, որ մեր հանրապետության օրերին, մի հակադաշնակցական պատվիրակություն՝ հավաքված Վաշինգտոն, դիմում է Սպիտակ Տուն հետևյալ պահանջներով՝ - Հանրապետական Հայաստան և Եռագույն չեն ճանաչում. պատասխանատու չեն Հայաստանին տրված փոխատվության համար. կուզեն, որ դադարի ամեն աջակցություն Հայաստանին (իսկ այդ աջակցությունը սովահար որբերին տրված ալյուրն էր):

Տեսնում եք, որ նա սովորական դասալիք չէ. նա և՛ դասալքում է, և՛ թշնամանում: Ազգայնականությունը ճիգ է պահանջում, նա մասնակից չէ ազգային ճիգին և ուզում է, որ դա արդյունք չտա, իսկ երբ արդյունավորվում է մեր ճիգը, նա լցվում է ցեղի ահեղ դատաստանի երկյուղով և ծեծում օտարի դուռը: Սարսափը ազգային ճիգից, կենսաբանական բարոյականի պակասը մղում են նրան դիտավորյալ կերպով կողմ դառնալու հնարամտության - Դաշնակցությունը Հայաստան ստեղծեց, բայց ե՛ս էլ կամ, նա ժխտո՞ւմ է իմ գոյությունը, ես էլ նրա ստեղծած Հայաստանը չեմ ճանաչում...

Մեր պատմության մեջ հավիտենորեն բնաեղծված սրիկան է դա, որ հոգեբանորեն ոչ միայն օտարահակ է, այլև մնում է օտարահպատակ անգամ Հայաստանում: Հենց այս պատճառով էլ նրա ցայտուն տիպերը դառնում են դավաճան, ավելի անզորները՝ եթե գործի վրա են, երևան են բերում դիրքի մակաբուծություն և պաշտոնապղծություն: Նա չի նվիրվում, չի ստեղծագործում, այլ մնում է միայն օգտվող: Որպես ընկերային տարր, հեշտ ապրելու հակամետ, որով՝ հոգով միշտ էլ փերեզակ, նա կյանքում նախընտրում է շահաբեր աշխատանքը միայն, զարգացնում խաբեության արվեստը, կեղեքում է ու անուղղակի կերպով հասնում իր հակացեղային նպատակին - հաչս աշխարհին ատելի դարձնել հայությունը: Հովհաննես Քսակասերը - ահա՛ իր միակ

իդեալը: Ծայրահեղ նյութապաշտությունը՝ իր էության ամենացայտուն գիծը - նրան միշտ էլ համակված է պահում նյութական խորին մտահոգությամբ, և մղում անձնական շահի աստվածացման:

Ահա՛, հոգեբանական այս գծերի ընդհանրությունն է, որ զինակից է դարձրել ընկերային դիրքով հակոտնյա երկու տարրերը՝ բոլշևիկը և ռամկավարը - մեր ազգային դատի դեմ:

Մեր ցեղավար ըմբռնումով՝ մենք զոհաբերում ենք անցավորը հավիտենականին: Ռամկավարի հոգեբանությունը թույլ չի տալիս ենթակային մի բան զոհաբերել վաղվա համար: Հենց այդ է պատճառը, որ նա քաղաքականություն չունի և չի կարող ունենալ, որովհետև քաղաքականություն չի նշանակում ներկայի չարաշահություն, այլ առավելապես ապագայի մտահոգություն: Նա քաղաքական homunculus է: Մեկ իրավունք ունի դա, այն ինչ Տերը մի ժամանակ ասում էր լեհական ընչաքաղց քաղքենիության՝ - «Հարստացե՛ք»: Ռամկավարի ընչաքաղցությունը, սակայն, նրան դարձրել է նաև քաղաքական շահատակող: Արևմուտքում նա հաց է մուրում, իսկ բոլշևիկների հետ բարեկամություն կեղծում, որպեսզի քաղաքական կշիռ ստանա: Այսպիսով, երկուսն էլ հաշվեհարդարի են նստած մեր անցյալի հետ - մեկը ցեղահայհոյությամբ է զբաղված՝ բոլշևիկը, մյուսը՝ հոգևոր հնավաճառի իր հոգեբանությամբ, լղոճում է մեր ազգային արժեքները՝ ռամկավարը: Նա կեղծում է նաև մի այլ բան, որ իր հասկացողության սահմանից վեր է: Երբ մենք ճիգ ենք անում վառ պահել այն հավատը, թե ամեն ճակատագիր ու Լոգան սրբագրելի է, նա, ընդհակառակը, ճգնում է քաղաքական հոռետեսության մղելու մեր զանգվածները: Գիտեք, թե իր խանութում որքա՛ն լավատես է ռամկավարը. նա գիտի, որ անազնիվ ճիգն ան-գամ կարող է իր ճակատագիրը բարելավել, բայց հասարակական գործում որևէ ճիգի չի հավատում: Նա ապրում է այնպես ինչպես մտածում է: Անցեղաճանաչ տգետի իր ըմբռնումով մեր ցեղը ստորարժեք է - մի սպանիչ ըմբռնում, որ նրան պետք է դարձներ անկապաշտ: Նա իր անկումի գիտակցությունն ունի, գիտի որ հանրածանոթ է իր ընկածությունը. համակված է ներվելու անհուսությամբ, որով՝ նաև սարսափի հոգեբանությամբ: Նա բռնված է հալածվողական մանիայով: Նա կարծում է, որ իրեն հետապնդում են. վախենում է ինչպես տակավին չձերբակալված հանցավորը: Հենց այստեղից է նրա կենդանական կույր ատելությունը ազգայնական հայության հանդեպ, ինչպես և իր հայհոյելու, սևացնելու, մատնելու, դավելու և դավաճանելու մոլուցքը: Նա իբր հոգեպես քանդված էակ՝ նաև պատրապաշտ է. նա այնպես է խոսում, իրերն ու երևույթները այնպես է ներկայացնում, որ իբր թե հաղթական է, մինչդեռ իրականության մեջ ոչ մի հաջողություն չունի, և հասկանալի է դա: Օտարին լծակցողը և ցեղի հոգևոր իշխանությունից վտարվածը, չի կարող կենարար կերպով ազդել:

Բոլշևիկները, որոնք նույն հոգեմտավիճակն ունեն, կարծում են, որ հանձին ռամկավարների մի լուրջ զինակից են գտել, և այդ համարում են իրենց քաղաքականության մեկ նվաճումը հայ կյանքում: Այն բոլոր տարրերը, սակայն, որոնք այսօր բոլշևիզմի հետ են, երեկ էլ մեզ հետ չէին - հնուց ի վեր և մինչև հիմա: Հոգեբանորեն մեկուսի և հացից այն կողմը չտեսնող այդ տարրը վաղուց է դուրս եկել ցեղային հարազատության գծից: Բոլշևիզմի շնորհիվ, սակայն, այս տարրը գոյության իրավունք, արդարացում և երևութական կշիռ ստացավ: Նոր ոչինչ կա դրանում: Ներքին դավաճանը օտարից միշտ էլ արդարացում և կշիռ է ստացել, մանավանդ, երբ պատմական որոշ լուրջ վայրկյաններում անհրաժեշտ է եղել գործածվելու իր ցեղի դեմ: Ռամկավարը վախճանաբանություն չունի, այդ իսկ պատճառով՝ նա անկարող է գնահատել մեր ցեղի գոյամարտի նշանակությունը, որովհետև սրա խոստացած բարիքները հեռավոր են և այսօրվա համար ո՛չ շոշափելի: Այդ նույն պատճառով նա նախատեսելու կարողություն չունի: Այդպիսին նրան դարձրել է նյութապաշտությունը:

Անազատունակ է. ստրուկ, կարող է թերևս ազատության ըմբռնումը ունենալ, բայց ապրումը՝ ո՛չ:

Անկուլտուրունակ է. սովորական միջակություններ է տալիս. նրանից չեն ծնվի «իմացական առյուծներ», նրա հոգին զուրկ է արժեքներից, որով՝ արժեպաշտությունից:

Անզոհաբերող է. իր կամքը ընկերային-հասարակական ուղղություն չունի, ասել է հավաքականության զգացումից զուրկ է: Այդ է պատճառը, որ նա հոգեպես մեկուսի է և հակացեղային: Նա ատակ է միայն չարախորհուրդ միաբանության, նա միանում է միայն քայքայելու և քանդելու համար, թանձրացյալ օրինակ՝ «Միացյալ Ճակատը»:

Ըստ Բերգսոնի ներհայեցողական իմացականության՝ «Ատելությունը բաժանում է, որի հետևանքով ճանաչումը դառնում է անկարելի կամ սխալ»: Ճանաչել նշանակում է միության մեջ լինել նրա հետ, որին ուզում ես ճանաչել, որով՝ով ատում է՝ չգիտի, չի ճանաչում: Հակադաշնակցականը կարող է հավիտենապես սողալ մեր պատմության մթին անկյուններում, բայց երբե՛ք ճանաչել հայ ցեղի հոգևոր դիմագծությունը, երբեք հարազատել մեր խոսքի հոգեբանությունը, որովհետև տկարի և ստրուկի ատելությունն է նրա էության միակ զորավոր գիծը: Եթե նա իր ցեղը ճանաչելու, սիրելու, նրա համար զոհաբերելու կարողությունը ունենար, նա հակադաշնակցական չէր լինի: Իզուր է մեր պրոպագանդը՝ մեր խոսքը նրան դարձի բերելու, նա մեզ ո՛չ կհասկանա, ո՛չ կճանաչի, ո՛չ էլ կմիանա: Նրանք, որ հավատում են նման հոգեբանական հրաշքի՝ կա՛մ կեղծում են, կա՛մ էլ միամիտներ են:

Հակադաշնակցականի հոգում ոչինչ չկա ցեղային, աստվածային: «Արծիվ, առյուծ» գաղափարներն անգամ նա խուսափում է գոր-

ծածել իր մշակած գրականության մեջ: Նա հոգևոր աղվես է, որ աղետից առաջ քուն է քաշում, չարագուշակ բո՛ւ, որ աղետից հետո մարգարեի փետուրներ է հագնում և վայում: Նենգագործ է նա. քաղաքական երկչոտությունը և մտածումի անմաքրությունը մղում են նրան խարդախելու իր հակառակորդի բոլոր ասածները: Օրինակ, երբ մենք ասում ենք՝ հայությունը պետք չէ զինաթափվի, նա ոռնում է, թե՝ Դաշնակցությունն ուզում է նոր կոտորածների պատճառ դառնալ, չնայած որ գիտի, թե աշխարհի փոթորկումը մեզնից անկախ է և, որ նոր պատերազմը կարող է մեզ անակնկալի բերել: Նա խարդախում է մեր հոդվածները, նախադասությունները, բառերն անգամ: Այդ կողմից նա լուսեղբայրն է բոլշևիկի, չէ որ բոլշևիկը, ըստ Պրիաբրաժենսկու՝ «Երկաթե ավելով սրբում է այն ամենը՝ ինչ համաձայն չէ իր տեսակետին»: Բոլշևիկն ասում է՝ չեմ հասկանում, որով ժխտում եմ. ռամկավարը տրամաբանում է՝ տրամադիր չեմ հասկանալու, որով պե՛տք է ժխտեմ: Այդ տարրը, որ մինչև բոլշևիզմը Հայաստանի մեջ և նրանից դուրս ստրկագաստային հնազանդություն էր ցուցադրում, բոլշևիզմի երևումով՝ վայրագ, այլ անզոր ընդվզում ունի հայության այն մասի դեմ, որ նոր ճիգեր և զոհողություն է պահանջում հանուն ցեղի ապագայի: Նա զբաղեցրեց և շարունակում է զբաղեցնել քաղաքական հայությունը ներքին ճակատի վրա վրիպեցնելով նրա ուշադրությունը իր փրկության միակ զենքից - ինքնապաշտպանությունից: Իր չեզոքությամբ նա փաստորեն զինակցեց թուրքին: Այսօր էլ նա անտարբեր է մեր ճակատագրին կապված հարցերի նկատմամբ, և չի հասկանում, որ անտարբեր մնալ՝ ասել է թշնամանալ: Անձնական և անմիջական բարիքներ ձեռք ձգելու համար, նա քանի՛, քանի՛ անգամ կենսական վնասներ հասցրեց հայ դատին և ապագային: Նա լրտեսների մի լեգեոն հասցրեց հայության դահիճներին: Քաղաքականապես տգետ, բայց օժտված փերեզակի ճարպկությամբ՝ նա այսօր լծվել է նույն անարգ գործին, միաժամանակ շահագործելով մեր ժողովրդի որոշ խավերի տկարությունն ու միամտությունը: Իր բոլոր գծերով՝ ռամկավարը ժառանգորդն է հայոց պատմության այն զազիր մրուրի, որի հոգեբանությունը բնութագրում է ինքը՝ Մամիկոնյան մեծ սպարապետ Վահանը - «Ուրացության շնորհիվ պաշտոնի հասնողները (պարսից Պերոզ թագավորի քաղաքականության շնորհիվ) սովորաբար կեղծավորներ են և անպիտաններ, որոնց հետ նույնիսկ հաց ուտելուց կգարշեն հայոց ռամիկ շինականները»:

Հակազգայնական այդ չարագործը դեռ այսօր էլ սիրում է երևալ ազգային ղեկավարի դերում, չնայած, որ ցեղը նրան վաղուց է վտարել իր հոգևոր սեղանակցությունից: Գիտենք, որ անցյալի և ապագայի, սկզբի և վախճանի մասին անասուններն անգամ տարտամ ըմբռնում ունեն. ռամկավարն ու բոլշևիկը զուրկ են դրանից. երկուսն էլ

հասկացողություն չունեն մարդու և մարդկային ցեղի մեջ գոյություն ունեցող ազգայնորեն աստվածայինի մասին: Վայրի եզը անապատում կանգ է առնում, հոտոտում է իր ցեղակցի ոսկորները և գոռում, ողբում, հակադաշնակցական տականքը զուրկ է անասունի այս սրբազան բնազդից իսկ: Բուլղարական մի առակ ասում է. «Նա, որ իր ամբողջ կյանքում արայավաճառությամբ է զբաղվել, նրան մի տվեք գնահատելու բեհեզը»: Ռամկավարը մեր կյանքում եղել է և կմնա հասարակ արայավաճառ. նա չհասկացավ, չի հասկանում և պիտի չհասկանա մեր ցեղային բեհեզի գեղեցկությունը, մեր դառն ճակատագրի քաղցրությունը, մեր մեծագործ ցեղի խոյանքների իմաստն ու արժեքը:

Ահա դիմագիծը հակացեղային այն տականքի, որ կոչվում է հակադաշնակցություն:

Հակադաշնակցականի էության ամենաշնական գիծը, սակայն, նրա յուրահատուկ թրքասիրությունն է:

«Թուրքն եկավ և ամեն ինչ ավեր ու սուգ դարձավ»՝ ողբերգում էր հույն մեծ բանաստեղծը: Հակադաշնակցականը Հայաստանի կործանումի փաստից հետո էլ անընդունակ է ցնցվել այս խոսքի բովանդակ ողբերգությունից: Հույն զանգվածը ապրեց իր բանաստեղծի շնչով և ողբը վերածվեց պայթուցիկ ուժի, որ մոխիրների տակից հանեց նոր Հելլադան:

«Թո՛ւրք, դու Ալլահի անիծյալ պատկեր, քո սև օրն է՛լ կգա» - այսպես ողբերգեց հունգար ժողովուրդը, մինչև մի օր կողջուներ իր անկախության օրը:

Հակադաշնակցական հայը մեր մոխրացած հայրենիքի համար ո՛չ միայն ողբ չունի, այլև շնականորեն ծաղրում է հայրենապաշտ հայի ողբն ու տառապանքը, ամեն օր նրա ականջին կրկնելով՝ «Բարեկա՛մ, թուրքը լա՛վ դրացի էր, մեղավորը քո հեղափոխությունն է»:

«Երբ, ասում է Մինաս Չերազը, արդի կեղծ կամ անկեղծ թրքասիրության շրջանն անցնի, մեր ցեղը ծնունդ պիտի տա ճշմարտապես անաչառ և իրապես իրազեկ պատմիչների, որոնք արժանապես գնահատեն իր փրկության համար կատարված գործերը, առանց գործիչներին փոքրոգի միտումներ վերագրելու» (Ազգային խնդիրներ, - էջ 41):

Հակադաշնակցականի համար այս շրջանը երբեք, երբե՛ք պիտի չանցնի: Եթե նա ցնցվել է հայկական աղետից, այդ նրա համար չէ, որ Հայաստանն է խորտակվել, այլ նրա համար՝ որ ինքը անձնապես վնասվել է: Ըստ իր հայեցողության, այս վնասը հետևանք է հայ հեղափոխության և կարող է դարմանվել թուրքը սիրաշահելով միայն: Այստեղից է ահա՛ նրա օրգանական ատելությունը հայ հեղափոխության հանդեպ: Ո՛վ պիտի հատուցի նրան, ո՛վ պիտի վճարի, հեղափոխական հայությո՛ւնը, որ միջոցներ չունի - երբե՛ք: Բայց թուրքը մի օր կարող է մոռանալ անցյալի վատ հիշողությունները և վերադարձնել նրա ստա-

ցվածքը: Այստեղ է նաև աստառը այն խորհրդավոր ծիգի, որ թափում է հակադաշնակցականը հաչս մարդկության՝ արդարացնելու թուրքը: Ի՞նչ շահ անցյալի արյունալի հիշողությունները հրահրելուց, մինչ մոռացումը կարող է օգտավետ ներում ընծեռել նրան: Ա՛հ, այդ հոգևոր վարձկանը, որ իր դիրքը աշխարհի չարի և բարու հանդեպ միշտ էլ որոշում է այս հարցով՝ «Ո՛վ ինձ կվճարի»:

Հակադաշնակցականը - դա այն պատմական տիպն է, որին Վոլա լեռան վրա իր հոգևարքում անիծեց բուլղարական ազատության Բոտևը: Բուլղար հայդուկային առաջին վճռական ընդվզումն է Թուրքիայի դեմ: Հեղափոխական խումբը կռվի է բռնվել, կռիվն անհավասար է, հայդուկների 90 տոկոսը այլևս պաղ դիակների է վերածված, վիրավորված է և հրամանատար Բոտևը: Այդ վիճակում, սակայն, նա դեռ շարունակում է օրհասական կռիվը, արձակվում են վերջին գնդակները և հեղափոխական մարտիկների վերջին հոնդյունները: Ահա՛, ահավորորեն այդ վեհ վայրկյանին հոգևվարող Բոտևին մոտենում է բուլղար մի սայլապան և հարցնում՝ «Հապա ո՞վ կվճարի ինձ, ես հաց փոխադրեցի զինվորներիդ համար»: Պատմությունն ասում է՝ Բոտևը մեռնելուց առաջ անիծեց իր ժողովրդի անազատունակ, անզոհաբերող, նյութականացած տարրերը: Նզո՞վք և իր վերջին գնդակի հետ փչեց իր շունչը:

Ա՛հ, Բոտևի նզովված սայլապանն եղավ և՛ հակադաշն-ակցականը մեր կյանքում: Մեր պատմության ամենագերագույն վայրկյանին, երբ ցեղը օրհասականորեն իր գոյամարտը կվարեր, հաճախ լսվեց նրա անիծյալ ձայնը՝ «ո՞վ ինձ կվճարի»: Եվ հոգեբանական այն մթնոլորտում, որ պիտի ստեղծվեր հեղափոխական ողբերգությունից հետո, ինչպես բուլղար, այնպես էլ հայ երկնքի տակ, այս երկու աղաղակները մնում են արձանացած իբր հավիտենական պայքարի կանչեր - հեղափոխական առաքյալի և վարձկան սայլապանի: Մեկն իր արյունն է շռայլում, մյուսը՝ հոգևարող իր սայլի վարձքն է պահանջում: է, զազրելի տականք, ի՞նչ ենք պարտական քեզ - սայլիդ վա՞րձքը, բայց չէ՞ որ դու ոչ թե արյունդ, այլ սայլդ իսկ չտրամադրեցիր արյունող հայրենիքիդ: Ո՞ւր էիր երեկ, դու անիծյա՛լ հավիտյանս, երե՛կ, երբ դավադրված հայությունը մի աստվածային խոյանքով Արարատյան երկիրը վերստին ցեղի տունը դարձրեց:Ղարաքիլիսայի և Սարդարաբատի հերոսամարտերից մարմնիդ վրա կա՞ մի հետք, մի վերք, պատվո մի սպի: Երեկվա մեր փառքերի արևից ճակտիդ վրա կա՞ մի հատիկ ճառագայթ: Իսկ այսօր ա՛հա, դու պղծադավան թշվառական, դու մեր վերքերն ես հայհոյում: Եվ մտածել, որ մեր հանդեպ սնուցած ատելությունդ պիտի հանգեր ախտավոր թրքասիրության-իրոք որ սպանի՛չ է այս մտածումը:

Հայկական թրքասիրություն - և այդ ա՛յն ժամանակ, երբ թուրքը՝ հանձին իր երիտասարդ մտավորականության՝ հայության և Հայաստանի մասին այսպես է մտածում.

- «Դաշնա՛կ էֆենդիներ, չեք կարող պատմությունը խեղաթյուրելով հայրենիք ստեղծել, եթե այն համոզումն ունեք, թե անպատճառ օտարների շնորհիվ պիտի կարողանաք պահել ձեր գոյությունը, շենքեր շինեցեք Երևանի մեջ, որ թուրքական հին նահանգ է և տարակույս չունենք, թե մոտերս պիտի ստանա իր նախկին անունը: Եթե հարկ է հայրենիք ստեղծել ձեր երևակայած վայրի մեջ, դրանից առաջ փաստեցեք, թե՝ ձեզ է պատկանում ձեր կենտրոնն եղող Երևանը» («Պիրլիք»- թուրք ուսանողության օրգան):

Անդրոշակ հա՛յ, չե՛ս սարսափում, տրամադիր չե՛ս քո «սիրած» Երևանի համար գեթ մեկ վայրկյանով մոռանալ «սայլիդ վարձը»: Ա՛հ, զարհուրելի է, զարհուրելի - սթափումի փոխարեն ռամկավարը ավելի՝ է խորացնում իր հոգու թրքացումը: Գիտեիք, որ վաղուց իջնել և աղաղակել՝ «վա՛ր առեք հայկական եռագույնը», հոգեբանորեն ասել է՝ պարզեցե՛ք թուրքի դրոշը: Այս սինլքորը հաշտվել է այլևս այն մտքին, որ դա մի օր կարող է բարձրանալ նաև՝ Երևանի վրա. և ահա, կարծեք, ի կանխապատրաստություն այդ գալիքի, նա գաղութահայ դպրոցներում փորձում է մտցնել «Բարի լույս» (ավելի ճիշտ պիտի լիներ ասել՝ թրքալույս) դասագիրքը, որում հայ մանուկը պիտի սովորի հետևյալ ձոնը՝ թուրք դրոշակին, թուրք հայրենիքին և Աթաթուրք Քեմալին.

- «Աստղիկը մը ճակատին՝ մահիկն անուշակ,
Երկնքից իջած է մեր դրօշակ.
Անոր տեսքն անգամ կը բաւե,
Որ թուրք զինուորներն առյուծներ դառնան:
Մեծ Կազին ճամբան գծած է արդէն,
Յառաջ պիտի երթանք մենք ամէն ատեն»:

Իսկ «Պիրլիք»-ն ասում է, որ Ղազիի ճամբան տանում է դեպի Երևան:

«Բարի լույս»ն ասում է. «Հա՛յ մանուկ, հայրենիք ունես - Թուրքիան, դրոշակ ունես - մահիկն անուշիկ, մեծ հայրիկ ունես - Քեմալն Աթաթուրք...»

Իսկ հայ նահապե՞տը, նա վաղո՞ւց, վաղո՞ւց է մեռել ռամկավարի հոգում: Այժմ նա փորձ է անում իր նախահայրերի գերեզմաններն իսկ դուրս նետել իր սրտից:

Այսպե՛ս, եթե Խ. Հայաստանում սովորեցնում են հոկտեմբերիկներին ասել՝ «Լենի՛նն է հայրս», Հայաստանից դուրս, հակադաշնակցականը իր երեխային ասում է՝ «Քեմա՛լն է հայրդ»: Հոգով թրքացած այդ վատը, որ երբեմն «հայորդի» բառով շաղակրատել գիտի, փաստորեն որոշել է իր մանուկը լամուկի վերածել: Տեսնել ու զգալ, որ

ուրացության այդ զազիր գործին հատկապես լծվել է Բարեգործական կոչվածը, որը հայ բարեպաշտ մեռելների կողոպուտով և կտակներով է ապրում: Իրոք որ երկրագնդի վրա տակավին չապրված զարհուրանք է:

Հակադաշնակցականի այդ հոգևոր թրքացումը մեզ հիշեցնում է քաղաքական գործիչ Կիրովի «Գայլը՝ առաջնորդ» պատմվածքը: - «Խոյը ճգնում է համոզել ոչխարներին, որ իրենց առաջնորդ ընտրեն գայլին: Երբ ոչխարները զայրույթով ետ են մղում այդ առաջարկը՝ խոյը խուժանավարում է - «Լսեցե՛ք, ես ձեզ ասացի, որ գայլին ընտրեք առաջնորդ, զարհուրելի ի՞նչ կա սրանում: Խնդիրը դիտեցեք պատմականորեն: Պատմությունն ի՞նչ է ասում գայլի մասին. նա ասում է, թե՝ դա մի արյունարբու գազան է, որ ապրում է ավարով: Լա՛վ հասկացե՛ք, ավարո՛վ է ապրում: Բայց ի՞նչ է ավարը, դա՝ յուրացումն է ուրիշի սեփականության: Գայլը ապրում է ուրիշի սեփականության յուրացումով: Սակայն, ինչպե՞ս է դրված մեր խնդիրը: Մենք ուզում ենք նրան դարձնել մեզ առաջնորդ: Է՛, ասացեք, խնդրեմ, սրանից հետո տեղի՞ն է որևէ վախ»:

- Բրա՛վո, ճի՛շտ է, միաձայն մայեցին բոլոր ոչխարները՝ խորապես հուզված, և ընդունեցին խոյի բանաձևը երկարատև ու դղրդագին ծափերով»:

Խուժանավարող խո՛յը - ահա՛ ռամկավար մտավորականը:

Կենսաբանորեն անբարոյականը պատմության մեջ շատ հաճախ ղեկավարվում է այս խոյի հոգեբանությամբ և բարոյապես տկար հոտն էլ ոչխարի պես հետևում է նրան:

Չարը, զորավոր չարը պաշտվում է: Քաղաքականորեն հիմարը միշտ էլ վայրենավայել պաշտամունք ունի չար ուժերի և երևույթների հանդեպ: Պաշտում է, որովհետև գտնում է, որ զինաթափել չի կարող: Հոգեպես կույր է նա և կարճահուշ: Նմանն ընդունակ է ատել իր ցեղի Աստվածը, ներել իր դահիճին և սիրել նրան: Այսպես է ահա հակադաշնակցական տականքի թրքասիրությունից ծնունդ առնում ազգայնական հայության ամոթանքի ողբերգությունը: Այդ ամոթանքը խորապես ապրելու մեջ է, սակայն, նաև՝ մեր ուժը:

IV
ՀԱՅ ԲՈԼՇԵՎԻԿԸ

Մեզ համար չկա՛ սոսկական բոլշևիզմ- կա թրքաբոլշևիզմ:

Մեր դեմ գործող բոլշևիկը մենակ չէ: Ուր խոսում և գործում է նա, այնտեղ նրա կողքին, ստվերի մեջ խոսում և գործում է թուրքը -

ահա՛ թե ի՛նչն է ավելի վտանգավոր և գարշելի դարձնում բոլշևիզմը մեզ համար:

Առանձին չի լսվում բոլշևիկյան հայամերժ խոսքը. այո՛, թո՛ւրքը, թո՛ւրքը, թո՛ւրքն է ամեն տեղ: Ուր երևում է բոլշևիկը, ուր խոսում է նա, այնտեղ անհերևութաբար ներկա է թուրքը, այնտեղ շահում է թուրքը և շնորհն ծափ տալիս: Մեզ համար չկա՛ բոլշևիզմ - կա թրքաբոլշևիզմ, չկա՛ բոլշևիկ - կա թրքաբոլշևիկը:

Այդ կարմիր չարիքն այսօր հարձակողական է մասնավորապես Ամերիկայում, ուր դա փոխադրել է մեր դեմ սկսած պայքարի ծանրության կենտրոնը:

- Անտարբերություն դեպի ճշմարտությունը - ահա՛ ամենակարկառունը նրա հոգեբանության գծերից: Բոլշևիկը ոչ միայն ճշմարտազանց է, այլև ճշմարտության թշնամի, եթե դա իր հաշվին չի գալիս: Նա վարպետորեն տիրապետում է խոստանալու, ստի, կեղծիքի արվեստին: Նրա չափ մեր աշխարհում ո՛չ ոք չի կարողացել օգտագործել անասնականը մարդու մեջ: Նա գիտի զորահավաքել մարդկային բոլոր տեսակի կրքերն ու ատելությունները իր հակառակորդի դեմ: Նա չի՛ տեսաբանում, չի՛ լուսաբանում, նա միայն հարձակվում է և սևացնում: Նա ոչ միայն չի լուսաբանում, այլև լուսաբանելու բաղձանք չունի:

Բոլշևիզմը - կոպիտ ուժի տիրապետությունը սարսափի միջոցով - մեր ժամանակի ամենամեծ չարիքն է, որի դեմ պայքարելն ավելի դժվար է, քան մարդկային ցեղի որևէ թշնամու: Դա մի նոր հեթանոսություն է, մի խելագար վերադարձ դեպի վայրենացում և ընկերային գայլություն: Դա աշխարհ եկավ և իր իշխանությունը տևականացնելու նպատակով արդարացրեց հանցանքն ու հանցագործը, և հակաբարոյական այս ակտով լենինյան փարախը քաշեց մարդկայնորեն և ազգայնորեն տկար բոլոր տարրերը և նրանց վերածեց քանդիչ ուժի: Մի հատիկ չափանիշ ունի նա - շա՛հը, նյութական շահը: Տակտիկի մի հիմնական սկզբունք - հակառակորդին մեղադրել այն վատությունների մեջ, որոնք ինքն է կատարում: Թրքատիպ ջարդարար է, զանգվածորեն մարդիկ է ոչնչացնում և իր հակառակորդներին փակցնում «ոճրագործ» ածականը: Ձինակցում է թուրքին, և Դաշնակցությունը հռչակում ֆաշիստական: Հոգի է տալիս Իտալիայի և Գերմանիայի հետ բարեկամանալու համար, և մեզ անվանում է Մուսոլինիի և Հիտլերի դաշնակից: Սուտն ու կեղծիքը ոչ թե պայքարի սոսկական զենքեր են նրա համար, այլ նրա երկրորդ բնավորությունը: Աննման քարոզիչ է և լրտես, հավասարապե՛ս: Իր նպատակների համար նա օգտագործում է իր կինը, երեխան անգամ: Լրտես է ոչ թե արհեստով, այլ հոգով: Իր անասնական եսապաշտությունը նրան դարձրել է անխտրողական: Այդ է պատճառը, որ նա լրտեսում է իր մորը, հորը, քրոջը: Սատանայորեն վճռական է, որովհետև փոխվրեժի սարսափն ունի, որովհետև քաջ գիտի որ բոլ-

շևիզմի պարտության դեպքում կվտանգվի ոչ թե իր ընկերային դիրքը միայն, այլև իր ֆիզիկական գոյությունը: Ճանաչում եմ շնորհքը Լենինի հայազգի բոլշևիկների, որոնք իրար հանդիպելիս հռոմեական հավկուրների նման դժվարանում են չծիծաղել միմյանց վրա: Բոլոր հայ բոլշևիկները իրենց ստահակ լինելու գիտակցությունն ունեն: Մեր կարմիր կարապետների համար չկա քաղաքական բոլշևիզմ. նրանց դավանածը հոգևոր կարգի բոլշևիզմ է: Հայաստանից դուրս սփյուռքի մեջ գործող մեծամասնականների հարյուրն առ հարյուրը այդ տիպի արտանկարներն են: Բայց և այնպես ձևացնում են, թե նպատակագիտակ բոլշևիկ են:

«Թող չլինի՛ Ֆրանսիան, միայն թե՝ հանրապետություն ունենանք»՝ ասում էին ֆրանսիական ժողովրդի քաղաքական որոշ տարրերը, Նապոլեոն Գ.ի մահից հետո: Իրենց գործով նույնն են ասում և՛ ամերիկահայ բոլշևիկները - «Հայաստանը կարող է և՛ չլինել, միայն թե բոլշևիզմ ունենանք»: Դրանք էապես ո՛չ խորհրդային Հայաստանն են սիրում, ոչ էլ Հայաստանի ժողովուրդը, այլ խորհրդային իրավակարգը, միա՛յն իրավակարգը:

Բոլշևիկի համար կյանքը դասակարգային կռիվ է, պատերա՛զմ, իսկ պատերազմում ամեն ինչ թույլատրելի է: Այդ պայքարում նա ճանաչում է մի հատիկ օրենք - օրե՛նքը կոպիտ ուժի է: Նա դեմ է տարրական մարդկայնության, սադիստ է և իր անգթություններով ձգտում է ահաբեկել իր հակառակորդին: Ահաբեկիչ է, ըստ նրա՝ ահաբեկչությունը բնական մի երևույթ է, քաղաքական մի պահանջ՝ պայքարում: Ահա՛ թե ինչո՞վ է բացատրվում նրա հոգեկցությունը թուրքին: Այդպիսին լինելով հանդերձ, բոլշևիկը ճիզվիտորեն դատապարտում է անհատական ահաբեկչությունը և նույնիսկ բարոյախոս է դառնում, երբ դա գործադրվում է ի՛ր դեմ: Նա օգտվում է կեղծ բարոյական զայրույթից իբրև քաղաքական կամ մարտական տակտիկայի միջոց: Օրինակ, մսագործի սառնասրտությամբ նա տասնյակ հազարավոր կղերականների կյանքը հնձեց, իսկ մի ինչ որ Դուրյանի[26] համար ահագին աղմուկ հանեց:

Հաճախ լուրջ զավեշտներ է խաղում, ա՛յն իմաստով, որ իբր թե կարևորություն է տալիս հանրային կարծիքին և այդ անում է ոչ թե նորածինի պես անմեղ երևալու մտոք, այլ իր ճիվաղությունը չմատնելու համար: Նրա համար պայքարում չկա՛ մեղավոր և անմեղ, կա զորավոր և տկար, չկա՛ բարոյական և անբարոյական, կա հաղթական և պարտյալ: Նա բարոյական բավարարություն չի փնտրում ո՛չ պայքարում, ոչ էլ բարեկամության մեջ, այլ իրական շահեր, միայն շահեր: Մասնավորապես մեր գաղութներում, ուր բոլշևիզմը այնքան էլ ցանկալի ապրանք չէ տիրապետող ժողովուրդների համար, հայ բոլշևիկը ծնունդ է տվել հոգեբանական մի նոր արվեստի: Ծանոթ միջատների պես նա

գիտի ընդունել գույնը ամեն միջավայրի: Նա սովորական ծպտյալ չէ, այլ նմանակեղծ (սիմուլյանտ): Նա չի բավարարվում արտաքին գույնով, այն ձգտում է նմանվել ուրիշին, անգամ իր թշնամուն, եթե այդ հարկն է պահանջում: Նա հաճախ մեզ ներկայացնում է օտար իշխանություններին՝ իբր բոլշևիկ, իսկ իրեն ազգայնական հայ: Իր շրջապատը մոլորեցնելու նպատակով, նա գործի է դնում իր խաբուսիկ ուժերը, ճիշտ այնպես, ինչպես նեղն ընկած կատուն, որ իր փքումով և փշաքաղումով ճիգ է անում իրեն ավելի մեծ և զորավոր ներկայացնելու, քան թե կա: Նա բռնված է և՛ բանավոր սադիզմով, խոսքի Ռոբեսպիեր է, ռմբային լեզու ունի, նրան հաճախ հաջողվում է քողարկել իր տկարությունները իր խոսքի զոռությամբ:

- «Հայաստանը Անտանտի փոքրիկ շնիկ պիտի խեղդվի, փոշիացվի մեջտեղից»՝ գրում էր Բաքվի հայատառ «Կոմունիստ» թերթը, 1920-ին, ա՛յն օրերին, երբ բոլշևիկները ճիգ էին անում Հայաստանի վրայով միանալու քեմալական Թուրքիային: Այսպե՛ս են խոսում հայ բոլշևիկները: Խոսքի զոռությունը հատուկ է բոլոր բոլշևիկներին, ամենամեծից մինչև ամենից աննշանը:

Իրենց ոչնչությունը քողարկելու համար նրանք անվերջ խոսում են «Մեծ Ռուսաստանից»: Դռնփակ և հոշոտված Հայաստանի դրությունից, հայ ժողովրդի կոտորակային ցրվածությունից, երկրի ազգաբնակչության աննշան թվից ցնցվելու փոխարեն՝ նրանք սուտ խենթեր են ձևանում և իրենց «աշխարհի մեկ վեցերորդականի տերը», 160 միլիոնանոց հսկայի հաղթական և երջանիկ անդամն են համարում, ճի՛շտ այնպես, ինչպես մի ժամանակ սակավաթիվ մոնտենեգրացիները ասում էին իրենց մասին՝ - «Մենք և ռուսները 160 միլիոն ենք»:

Ի՜նչ զավեշտախառն ողբերգություն - շղթայակապ և ծվատված Հայաստանի վիճակը հայ կարմիրներին թվում է հաղթական երգ: Սրանք չե՞ն նմանվում այն խենթին, որ մի օր Նյու Յորքի մեջ փորձում էր ոչնչացնել Ազատության արձանը, աղաղակելով՝ «Կեցցե՛ ազատությունը»: Միևնույն ճիգն է տեսնվում հայ բոլշևիկների այն պնդումի մեջ, թե՝ թուրքը իրենց զինակիցն է: Նրանք գիտեն, որ թուրքը ռուսի զինակիցն է և ոչ թե Հայաստանի: Նրանք ծանոթ են Կարսի հայասպան դաշնագրի[27] կետերին - Հայաստանը մասնատված և նկուն պահելու Մոսկվայի հանձառության: Նրանք գիտեն, որ ամեն թուրքի մեջ Երևանի նկատմամբ կա այն զգացումը, ինչ որ կա Վանի, Մուշի, Կարինի և Կարսի մասին: Գիտեն, ճանաչում են թուրքը, բայց, ներքին ճակատում իրենց ոչնչությունը քողարկելու համար, հպարտանում են թուրքի հետ ունեցած իրենց երևակայական բարեկամությամբ: Նույն նպատակով նրանք իրենց զինակից են համարում ցեղերի և ազգերի բոլոր տեսակի հակազգայնական տարրերին և, ազգայնական հայության դեմ պայքարելիս՝ ասպարեզ են քաշում սևամորթին և ճերմակամորթին անխտրա-

բար՝ ցույց տալու համար, որ մենակ չեն: Մինչ ազգայնական հայությունը իրեն թույլ չի տալիս անգամ մտածել թե, կարելի է օգտվել օտարացեղ ազգայնական տարրերից կամ իշխանություններից: Ես ճանաչեցի ամերիկահայ բոլշևիզմն ու բոլշևիկը: Նրանց բոլոր ժողովները աղքատ են ծիծաղ շարժելու աստիճան, թե՛ թվապես և թե գաղափարական կարողությամբ: Սակայն, իրենց խեղճությունը քողարկելու համար նրանք իրենց ժողովները բաց են անում «ընկ. Ստալինի պատվավոր նախագահությամբ»: Թվապես մի բան երևալու համար, նրանք իրենց ժողովներին բերում են օտարազգի ներկայացուցիչներ, կազմում են թխովի հեռագրեր և կիսագույն կամ բոլորովին անգույն կազմակերպությունների անունից՝ ծափողջույններ ուղարկում Մոսկվա, Թիֆլիս, Երևան:

Ձեր հարցումին, թե՝ ինչո՞ւ չեն գնում իրենց երազած դրախտը, պատասխանում են՝ «Մենք մնում ենք այստեղ համաշխարհային հեղափոխության համար պրոպագանդ մղելու»: Հակառակ իրենց այս մանյակային մեծամտության, զզվելիորեն երկչոտ են: Հարյուրից մեկը չեք գտնի, որ դատարանում խոստվանի իր բոլշևիկ լինելը: Նո՛ւյնը՝ նաև ազգայնական հայի ներկայության: Սրանց համար չէ Կոշուտի[28] պատվիրանը - «Մի՛ գրիր և մի՛ խոսիր չհասկացածդ բաների մասին»: Ամեն բանի մասին անգիտաբար խոսելու մեջ իրենց տգիտությունը սքողելու նպատակով, նրանք ավելի ժխտում են, քան պաշտպանում: Այդպես են վարվում, որովհետև ժխտելիս հարկադրված չեն գիտության կամ տրամաբանության դիմելու: Իրենց ժխտականությունը հետևանք է նախ իրենց բարոյական քանդվածության, ապա իրենց մտքի աղքատության: Չկա՛ Աստված, բարոյականություն չկա՛, ազգություն չկա՛. չկա՛ - ինչո՞ւ չժխտել այդ ամենը, երբ այնքան հեշտ է դա: Հայհոյել բոլոր տեսակի ազգային արժեքներն ու սրբությունները - թքե՛լ ու անցնել - հակազգայնական հայն այսպե՛ս է հասկացել բոլշևիզմը: Նա հոգևոր վանդալ է - կոխում է և անցնում բոլոր սրբությունների վրայից և շնաբար բացականչում. «Ինձնից հետո՝ ջրհեղե՛ղ»: Ա՛յս է հայ մարդու դավանած բոլշևիզմը:

Պողոս առաքյալի խոսքը՝ գողացված է և հաճախ գործածված Լենինից, թե՝ նա որ չի աշխատում, պետք չի՛ որ ուտի, հայ բոլշևիկի համար չի ասված: Մասնավորապես Ամերիկայում նրանք չեն աշխատում, բայց ուտում են, և այն էլ ինչպե՛ս: Հայության ամենաանաշխատ, ամենածույլ տարրը Ամերիկայում հայ բոլշևիկն է, որ ապրում է նահանգի նպաստով կամ մութ միջոցներով: Իզուր է Մաձձինին պնդում, թե՝ մարդս միայն ստամոքս չէ, այլ և գլուխ, սիրտ, հոգի: Հայ բոլշևիկը մարդկային ամբողջ կյանքը վաղուց է վերածել ստամոքսի: Ամերիկայում հաճախ չգիտէի Խորենացու հետ ողբա՞լ, թե՝ Մոնտեսքիոյի հետ զզվել, երբ ինձ պատմում էին, թե Հայաստանից վերադարձած ոմն

Մարտիրոսյան[29] բեմերից հացի մի կտոր է ցույց տալիս, միամիտներին հավատացնելով, թե՝ խորհրդային Հայաստանն էլ հաց ունի, թե «կարմիր հացը» նվազ չափով ավազ ունի և ավելի համով է, քան էր «Դաշնակցության սև հացը»: «Շատերն ասում են, թե՝ Հայաստանում հաց չկա. հացի այս կտորը այնտեղից եմ բերել»: Այս հրեշը չէր հասկանում, որ առանց ուզելու՝ Խորհրդային Հայաստանի թշվառությունն է մատնում: Այո՛, Հայաստանի ողբերգությունը հենց նրանում է, որ զանազան Մարտիրոսյաններին հանձնարարվում է ապացուցել, թե՝ մեր դժբախտ հայրենիքում էլ մարդիկ հաց են ուտում:

Վերջին տարիները՝ ամերիկահայ բոլշևիկները մի բանի մեջ մասնագիտացան - խոսքի և գործի աճպարարության: Իբրև թե մարդ են ուղարկում Հայաստան, իբրև թե մարդ են բերում այնտեղից, հանրորեն անծանոթ, անանուն մեկը՝ տեղափոխվում է Կալիֆորնիա, մեկ ուրիշը գալիս Ֆրանսիայից - ահա՛ նմանները հռչակվում են Հայաստանից նոր վերադարձածներ և ժողովուրդը ժողովի են կանչում՝ լսելու խորհրդային հայրենիքի բարեկամին: Մանր հասարակական աճպարարությունների այս մեթոդը անհրաժեշտ է դարձել այն պատճառով, որ բոլշևիկները փորձով համոզվել են, թե՝ այլևս իրենց խոսքը զանգվածների վրա ազդեցություն չունի: Նրանք զարգացրել են նաև զգացումների չարաշահության արվեստը, սիրում են անվերջ ճառել ներգաղթից, չնայած որ գիտեն թե ազգահավաքումը անհնար է, թեկուզ ռուս և թուրք դաշինքի համաձայն (այն է՝ չզորացնել Արարատյան Հայաստանը): Թուրքն էլ լսում է այդ մասին, բայց չի ջղայնանում, որովհետև գիտի, որ ներգաղթի ամբողջ աղմուկն ըստ էության քաղաքական շանտաժ է: Ընդհակառակը, Քեմալը պատճառներ ունի երախտապարտ մնալու հայ բոլշևիկներին, որոնք Հայաստանի խեղանկարային շինարարությամբ - Նոր Տիգրանակերտ, Նոր Սեբաստիա, Նոր Խարբերդ, Նոր Արաբկիր, Նոր Մալաթիա - ձգտում են հայությանը մոռացնել տալ իր հավիտենական հայրենիքը, նրան հաշտեցնելով Արևմտյան Հայաստանը ընդմիշտ թուրքին թողնելու մտքին: Քա-ղաքական այս կավատությունից նյութապես օգտվում է ինքը՝ հայ բոլշևիկը, կողոպտելով հայ միամիտ տարրերը, որոնք զոհ են դառնում իրենց խղճալի հայրենասիրության, առանց գիտակցելու, որ Խարբերդից հրաժարվելը և Նոր Խարբերդով խանդավառվելը ոչ թե հայրենասիրություն չէ, այլև հայրենադավություն, ոչ թե գիտակցված հայրենասիրություն չէ, այլ կույր հայրենաքանդություն: Իր գաղափարախոսական տկարությամբ պայմանավորված զգացումների այդօրինակ շահագործումով, իրոք որ, հայ բոլշևիկը տգետ տարրերի վրա թողնում է հայ ազգի ապագայով մտահոգվողի տպավորություն, չնայած որ «Բանվոր» թերթը առիթ չի փախցնում կրկնելու՝ - «Մենք ազգ չենք խաղցնի, ազգը վաղուց ենք դուրս նետել Խորհրդային Հայաստանից»:

Կբավի՝ ամփոփե՛նք մեր խոսքը:

Խորհրդային իշխանության կողմից ազգայնական հայության դեմ տարվող պայքարի առաջադրություններն են՝

ա) Ազգայնական ղեկավարության սնացում - հայության՝ դեպի Դաշնակցությունը ունեցած հավատը տկարացնելու նպատակով.

բ) Գաղութահայության ամբոխացում՝ իր քաղաքական որսորդությունը հեշտացնելու համար:

Այսքանը՝ գաղութահայ ներքին կյանքում:

Իսկ համաբոլշևիկյան չափանիշով, խորհրդային իշխանությունը - իբր բարձր քաղաքականության առաջադրություններ - ճգնում է՝ գաղութահայության ամբոխացումով նաև՝ հոգեպես նվաճել երկրի հայությունը:

Երկրորդ՝ օգտվելով մեր ցրվածության հանգամանքից, որին այնքա՛ն կարևորություն է տալիս Մոսկվան, նա ուզում է սփյուռքի հայությունը վերածել միջազգային բոլշևիկյան գործակալության, լծելով նրան իր լրտեսության և պրոպագանդի կառքին:

Առ այդ՝ նա առայժմ, իբր գործունեության մեթոդ, որդեգրել է հայկական ներքին տկարությունը ցցել մեր ցեղի դեմ: Այժմ նա նկրտում է պարբերական հրձիգությամբ լարված պահել հայկական ներքին բաբելոնը, պառակտումը հասցնել անկամրջելի անդունդի խորության, և այսպիսով, ազգայնական հայությունը զրկել իր ուժերը արտաքին ճակատի վրա կենտրոնացնելու կարելիությունից:

V
ՑԵՂՈՒՐԱՑ ՀԱՅՈՒՀԻՆ

- «Մի ռազմաշունչ ցեղի մեջ-ասում է Ֆաբր Դ'Օլիվեն - երկու հակառակորդներ բռնված են վեճի: Կատաղած, նրանք սկսել են հարվածներ փոխանակել: Բայց ահա՛ մի հերարձակ կին նետվում է նրանց միջև և բաժանում նրանց: Դա մեկի կինն է, մյուսի՝ քույրը: Նրա աչքերը բոցեր են արձակում, ձայնը հնչում հրամայողաբար: Դա աղաղակում է, հևալով և ընդհատ խոսքերով հասկացնում, թե անտառում տեսել է ցեղի նահապետին, թե իրեն հայտնվել է երբեմնի հաղթական ռազմիկը:

«Դա չի ուզում - ասում է կինը - որ երկու ռազմիկ եղբայրներ կռվեն իրար հետ, դա պահանջում է, որ եղբայրները միանան ընդհանուր թշնամու դեմ: Մեծ նահապետի ուրվականն ինձ ասաց այդ ամենը - աղաղակում է զայրացած կինը: Ինքն ինձ ասաց, ես տեսա նրան»: Եվ դա հավատում է իր ասածին, համոզված՝ դա համոզում է կռվի բռնվածներին: Հուզված և կարծեք մի անդիմադրելի ուժից սանձահարված՝ հաշտված հակառակորդները ձեռք են մեկնում իրար»:

Ահա թե ի՞նչ կսպասեինք հայ կնոջից:

Այս ազնվական դերը կսպասվեր ամեն հայ կնոջից, բայց, ավա՜ղ, անցքերն եկան հաստատելու, թե կան կանայք, որոնք հակադաշնակցական իրենց ամուսինների չափ քանդված են հոգով:

Հակազգայնական հայության հոգեախտավոր կյանքի ամենատխուր և միաժամանակ նողկալի կողմը՝ դա ապազգայնացած հայ կնոջ երևալն է պայքարի կրկեսում: Նա փողոց իջավ, փողոցայնացնելու և այժմ տիղմի մեջ է: Ճշմարիտ հայը չի կարող չգալարվել ամոթից և ցավից այդ կանացի հրեշի արարքները տեսնելիս: Նա երևաց փողոցում այլացեղ տականքների հետ՝ իր ազգային սրբությունները հայհոյելիս, նա երևաց դատարանում իբրև վարձկան վկա՝ ինը հայ մարդկանց կյանքի թելը կտրել տալու նպատակով, նա մասնակցեց ցույցերի՝ իր այլասերած էության բովանդակ զզվելիությամբ՝ առարկա օտարների ծաղրին, նա ասպարեզ իջավ կատարելապես կապկացած, երբ իր կեղծ սուգը ցուցադրելու նպատակով սևեր էր հագել և մեջքը չվան անցկացրել, երբ տնե տուն ընկած ստորագրություններ էր հավաքում, բողոքի ժողովներ հրավիրում, ուրացողի պատկերը ծախում, ազգայնական տղամարդկանց հայհոյություններ ուղղում, երբ իր երեխային «դրոշակն ու դաշնակը» հայհոյել էր սովորեցնում:

Ես տեսա նրան իր ընկածության մեջ և հիշեցի հռոմեական զորավար Անտոնիոսի կինը՝ Ֆուլվիան, որն իր վրեժխնդրական մոլուցքի մեջ՝ ասեղով գլխատված Կիկերոնի լեզուն էր ծակոտում: Հիշեցի շեքսպիրյան տիպերից լեդի Մակբեթը, որը մսագործի պաղությամբ դաշույնը խրել էր տալիս իր զոհի մարմնի մեջ: Հիշեցի Լիր արքայի դուստրը՝ գիշատիչ, անհոգի, եսասեր, Վալտեր Սկոտի հերոսուհին՝ լեդի Աշտոնը՝ ամբողջապես տգիտանք և չարություն: Վերջապես՝ Տոլստոյի հերոսուհին՝ Գոլովինա՛ն - լրբենի, դատարկապորտ, հաճոյապաշտ: Իր զազրելիությամբ, սակայն, այս բոլոր տիպերին գերազանցում է ամերիկահայ ցեղուրաց կինը:

Ծանոթ դատավարության օրերին՝ դատարանում և դատարանի դռանը՝ ամեն օր, առավոտյան, կարելի էր տեսնել մի խումբ վհուկատիպ կանանց, որոնք հիշեցնում էին Բրոքեն լեռը, որի վրա, ըստ գերմանական ավանդության, Մայիս մեկի գիշերը հավաքվում էին բոլոր վհուկները և պար բռնում Մեֆիստոֆելի շուրջը: Նրանք հավաքվում էին այս կամ այն մարդու բախտի թելը կտրելու: Նյու-Յորքի փողոցներն ընկած այդ կանայք հիշեցնում էին Գորգոնաներին – հունական դիցաբանության մեջ դժոխքի սարսափները մարմնացնող քույրերին - որոնք մազերի փոխարեն իրենց գլխին իրար պլլուլված օձեր էին կրում: Եվ դա ճիշտ է, իդեալապե՛ս ճիշտ: Եղավ ժամանակ, երբ փողոցներում ազգայնական հայ մարդը առանց հայհոյվելու սրանց մոտից չէր կարող անցնել: Կորցրած կնոջական ամոթխածությունը՝ սրանք

դարձել էին պղծախոս և պղծագործ: Օգտվելով ամերիկյան օրենքից, որ կնոջը գերակշիռ դիրք է տալիս, կնամարդ ռամկավարի վախկոտությունը մարտի ասպարեզը հանձնեց իր կնոջը, և վերջինը փլուզվեց հոգեպես և փռվեց ամերիկահայ իրականության մեջ իբր շղթայազերծված ապականություն: Նա սարսափով ետ քաշվեց միայն այն ժամանակ, երբ ազգայնական տղամարդը ստիպված որոշեց այս ընկածների լրբությունը պատժել շիկացած երկաթի խարանով:

Այդ օրերին էր, երբ Ամերիկայի ազգայնական հայությունը հղացավ վատության մի մյուզեի գաղափարը, ուր պիտի հավաքեր անկման այդ շրջանի հիշատակները - հոգով այլազգիացած տղամարդկանց ու կանանց անուններ, պատկերներ, աղտեղաբան թռուցիկներ, անստորագիր նամակներ, պատռված և անարգված եռագույններ, իբր այլասերված հոգու վավերագրեր՝ հեռախոսային հայհոյանքների և անեծքների հուշեր, սուտ վկայության, դավադրության, լրտեսության դեպքերի և անթիվ սև արարքների նկարագրություններ և այլն. և այլն...

Թող կարդա՛ն սրանք զարհուրանքով եկող սերունդները, որպեսզի ավելի խորորեն ապրեն հայ ցեղի գողգոթան, որպեսզի անազատ վիճակի վիժած սոսկումները վերհիշելով, նրանք իրենց գոյության խորհուրդը խտացնեն աստվածային այն բառի մեջ, որ կոչվում է ազատություն:

VI
ԴՈՒՐՅԱՆԸ ԴՈՒՐՅԱՆԻ ԴԵՄ

"J'accuse"[30]:
Զոլա

Երբ մեկը թշնամանում է մեկին՝ դա հասկանալի է: Բայց, երբ ժողովրդի մի մասը չի բավականանում օրենքի նախատեսած խստություններով, այլ հավաքում է մի քանի տասնյակ հազար ստորագրություններ, ծախու է հանում մեռածի մորուքի թելերը, օգտվում է թրքատիպ գորգավաճառի գրպանից, թրքախոս տականքների լումաներից, օտարացեղ խաժամուժից, մութ աղբյուրներից՝ թրքական, թե բոլշևիկյան, գաղութից գաղութ ցուցադրում է սպանյալի լեշի պատկերը՝ դրամ և բողոքի հեռագրեր մուրալով, երբ զարկում է բոլո՛ր դռները՝ օտար թերթերի, եկեղեցիների, համայնքների և այլն., երբ մեռած Ղևոնդի արժեքը հաչս օտարների բարձրացնելու նպատակով շահագործում է անգա՛մ լուսապսակ եղիշե Դուրյան Պատրիարքի անունը- սրա գործերն ամերիկյան մամուլում նրան վերագրելով, երբ հոգևոր ճիվաղության բոլոր կերպերը, մարդկային ցած հոգու բոլոր հնարամտությունները փորձում է մոխրացած տեսնելու երկու ընտիր հայորդիներ - ա՛հ, այս բոլորը, իրոք որ, անմարդկային է, անընմբռնելի:

Այս կեղծ մոլեռանդությունը, իբր ախտաբանական երևույթ, հիշեցնում է իսլամ խուժանավարներին, որոնք մեռած մի հավատացյալի դիակը ծակոտում էին դաշույնի հարվածներով և ցուցադրում իբր քրիստոնյաներից սպանված մահմեդական, ողբում, լալիս, ոռնում, աղաղակում՝ մինչև որ հաջողեին սադիստական հոգևիճակ, ոճրային փսիխոզ ստեղծել իսլամ տգետ ամբոխի մեջ - կոտորած և թալան առաջացնելու նպատակով: Բոլո՛ր դեպքերում, երբ առաջնորդը անազնիվ խուժանավար է և ամբոխը խավարամիտ, մասնակի մի պատահար դառնում է առիթ հանրային կրքերի բորբոքումի, հոգևոր ընդհանուր համաճարակի:

Մոլեռանդություն արվեստավորելու առիթը ամերիկահայ տականքի համար հանդիսացավ խորհրդավոր սպանությունը մի կղերականի, որ տխուր հետքեր էր թողել Բուլղարիայում, Զմյուռնիայում, Մանչեստրում, որ Ամերիկայում գործիք դարձավ հակահայ մութ տարրերի ձեռքը, ամեն ինչ արեց եկեղեցու միջոցով կիսել, բաժանել հայ եկեղեցին, որի մեջ սպառված էր Հիսուսի շունչը և ամեն ինչ տեղի տված հայությունը կոտորակելու, ներքուստ փլուզման ենթարկելու բոլշևիկյան քաղաքականության: Այդ վեղարավոր գործակալի ներքին մարդը ցույց տալու համար՝ նախ խոսեցնել տանք իրեն, նախ լսենք ի՛ր ինքնամերկացման վկայությունը:

«Տաթև» կրոնական տարեցույցի մեջ գրած «Հայ եկեղեցու փոթորկահույզ գիշերը» իր հոդվածում, Դուրյանը ասում է.- «Հայ եկեղեցին ստույգ կանցնի մի մրրկահույզ շրջան Հայ Խորհրդային Հանրապետության սահմանադրության այն օրենքի գործադրության հետևանքով, որով եկեղեցական և կրոնական բոլոր հաստատություններն ու շենքերը պետականացվեցին: Այս պարագան Հայ եկեղեցու համար մի ճգնաժամ է ինչ-ինչ տեսակետներով» (Ե-րդ տարի,1929թ., Հալեպ-Սիրիա): Նա ընդունում է, որ «ճգնաժամ» կա, բայց, իբրև բոլշևիզան, փոխանակ հայ եկեղեցու տագնապը ուղիղ կերպով ներկայացնելու՝ ճգնում է մոլորանք ստեղծել:

Որպես թե եղածը բռնագրավում և կողոպուտ չէ, այլ պետականացում: Որպես թե չգիտի, թե եկեղեցու պետականացումը նշանակում է՝ առանձնաշնորհումներ տալ, ինչպես Տրդատի օրով, երբ հայ եկեղեցին պետականացավ, և ոչ թե իրավազրկվեց: Իբրև թե «Հայ Խորհրդային Հանրապետության սահմանադրության» տրամադրությամբ եղած է այն, երբ աշխարհը գիտի, որ գոյություն չունի «Հայ Խորհրդային սահմանադրություն», որ եղածը համախորհրդային օրենքն է, որով կառավարվում է և՛ Երևանը, որը, իբր մասնիկ Խ. Միության և ո՛չ թե իբր ինքնավար հանրապետություն, չի կարող իր մասնավոր սահմանադրությունն ունենալ: Նա այս կեղծիքն անում է կանխելու ժողովրդական զայրույթը՝ մտածելով, որ գաղութահայերը

առանձնապես խռովվելու հիմք չեն ունենա, որովհետև հայ եկեղեցին գրավվում է ո՛չ թե բոլշևիկների թելադրությամբ, այլ «Հայ խորհրդային սահմանադրության» օրենքով: Բայց լսենք խ. իշխանության հակակրոնական այդ քայլն արդարացնող հետևյալ հիմարությունը.- «Պետությունը իր ձեռքը եկեղեցու շենքերի վրա դնելով չէ, թե բուն եկեղեցու ոգին իր ճանկերի մեջ կխեղդի, ինչպես կկարծեն ոմանք, այլ այդ գործադրությամբ մեծապես նպաստած կլինի ճշմարտապես կենդանի և ժողովրդական եկեղեցու վերաշինությանը: Եկեղեցու շենքերը պետականացվելով բուն եկեղեցին գրավված չի նկատվի: Եկեղեցի ասվածը շենքը չէ, եկեղեցին ժողովրդի ոգին է և այս ոգին այնքան կզորանա, որքան նյութական կապանքներից կազատվի» :

Նա այստեղ ցույց է տալիս, թե՛ իր բոպիկությունը, թե՛ բոլշևիզանությունը: Դուրյանը տգետ է ձևանում և իբր թե չի հասկանում, որ եկեղեցիների շենքերը գրավելը պետականացում չէ, այլ բռնագրավում, կողոպո՛ւտ: Նա իբր թե չգիտի, որ խ. իշխանությունը եկեղեցին չի պետականացնում, այլ սպանում. իբր թե չգիտի, որ նա անաստված է, անկրո՛ն: Նա եկեղեցու փրկությունը տեսնում է նրա նյութական կործանումի մեջ և խուժանավարում. «ոգին այնքան կզորանա, որքան նյութական կապանքներից կազատվի ու նյութական կապանքներից ազատվելու փրկարար միջոցը եկեղեցու պետականացումն է»: Սա՛ է «ճշմարտապես կենդանի և ժողովրդական» եկեղեցին, երբ Դուրյանի տարփողած «պետականացումը» ասել է բոլշևիկյան կողոպուտ: Նշանակում է, որ հայ եկեղեցին մինչև այսօր եղել է ո՛չ «ճշմարտապես կենդանի», ոչ էլ «ժողովրդական», այսինքն՝ օրինակ, Մեծն Ներսեսը, որը հայ եկեղեցու նյութական բարորությունը նախանձելի դրության հասցրեց, կամ Խրիմյանը, որը հայ եկեղեցու նյութական հարստությունը փրկելու համար ռուս գիշատիչ կա-ռավարության դեմ մաքառեց: Նյութական կապանքներից կաշկանդված անզոր ոգիներ էին կամ քրիստոնեապես անկենդան և մարդկայնորեն հակաժողովրդական եկեղեցականներ: Ըստ այսմ, ռուհծիների խոսքը, թե թուրքերի կոտորածով հայոց հոգիներն ազատվեցին մարմնական և նյութական կապանքներից՝ Դուրյանի սրտին խոսող մի ճշմարտություն է: Այդ դեպքում, ինչո՞ւ երախտապարտ չմնալ թուրքին, որ՝ օրինակ, թուրքաց Հայաստանի վանքերն ու եկեղեցիները հիմնահատակ կործանելով, հայ եկեղեցին ազատեց «նյութական կապանքներից», և հայությունը ջարդելով՝ դարձրեց «ճշմարտապես կենդանի ժողովուրդ»: Չկա աշխարհում ավելի զազրելի արարք, քան մարդկային ճակատագրի գրքի եղծումն ու պղծումը: Դուրյանը Ավետարանի եղծանիչն է և հայ պատմության պղծիչը: Դուրյանը երախտապարտ է տաճիկներին: Դուրյանը բոլշևիկների եկեղեցաքանդ քաղաքականության պաշտպանն է: Դուրյանը նրանց գործիքն է: Դուրյանը հայ եկեղեցու և նրա նահատակների թշնամին է:

Անհոգի դավաճանի հատկանշական գծերից մեկն էլ ինքնահակասումն է: Լսե՛նք հիմա, թե ի՞նչ է ասում մինչև այժմ «Եկեղեցու պետականացումը» փրկարար միջոց համարող այս տգետը, ընդամենը երեք պարբերությունից հետո.- Նախ պետք է գիտենանք, որ Հիսուսը առաջինը եղավ Եկեղեցին պետությունից զատորոշողը, երբ ասաց, «տվեք կայսրին կայսրը և Աստծուն Աստված»: Այսպե՛ս, Հիսուսը «զատորոշեց» Եկեղեցին պետությունից և ըստ Դուրյանի՝ լա՛վ արեց: Բոլշևիկները պետականացրին եկեղեցին և, ըստ Դուրյանի՝, փրկեցին նրան: Հիսուսը կայսրի բաժինը տալիս է կայսրին, Աստծու բաժինը՝ Աստծուն: Դուրյանն այդ արդար է համարում. բոլշևիկները կայսրի բաժինը ուտելուց հետո, խլում են նաև Աստծու բաժինը: Դուրյանն ա՛յդ էլ արդար է համարում: Տեսե՛ք թե խղճմտանքի անմաքրությունն ինչպե՞ս է պատժում, ծիծաղելի դարձնում տկար էակին: Դուրյանը թե՛ Հիսուսի զատորոշումն է ընդունում, թե՛ բոլշևիկների պետականացումը, թե՛ նրա «ո՛չը», թե սրա «այո՛»ն, թե Ավետարանը, թե՛ բոլշևիկյան դեկրետը: Դուրյանը թե՛ քրիստոնյա է, թե՛ բոլշևիկ, թե՛ աստվածապաշտ է, թե անաստված: Դուրյանը գռեհիկ տեսակի ստահակ է - ահա՛ ճշմարտությունը:

Այս վեղարավոր շառլատանը շարունակում է. «Եկեղեցին երբ կհեռանա իր կոչումից, հոգևորական կալվածքից, և երբ կմտնի քաղաքական կալվածքի մեջ, այն իր վսեմ սկզբունքից շեղած կնկատվի և կդատապարտվի վտանգվելու: Եկեղեցին պետք է միշտ լուրջ և չեզոք մնա և չվստահվի քաղաքային (ուզում է ասել «քաղաքական») համակրությանը»...

Երեկ այսպե՛ս էր մտածում. եթե երբևիցե հուդայացածը կարող է սեփական մտածում, համոզումի անկախություն ունենալ - իսկ մի քանի տարի հետո, ամերիկահայ եկեղեցին դարձնում է «քաղաքական կալվածք»: Երեկ պետք էր այդպես մտածել, որովհետև անհրաժեշտ էր «տեսականորեն» արդարացնել իր ընբռնած պետականացման քաղաքականությունը՝ այսինքն՝ հայ եկեղեցու նյութական կործանումը և բարոյական անկումը: Հետո, երբ խորհրդային սահմաններում հայ եկեղեցին պետականացավ, այսինքն փրկվեց իր նյութական հարստության կապանքներից և դարձավ հոգով թեթևացած մուրացկան, երբ կիսամեռ եղած հայ հոգևորականությունն իր կաշին փրկելու համար նետվեց բոլշևիկյան քաղաքական ուռկանի մեջ և տնկվեց ազգային Եռագույնի, որով՝ մեր ցեղի բոլոր սրբությունների խորհրդանշանի դեմ, Դուրյանը պե՛տք է որ հայ եկեղեցին փոխադրեր Չիկագոյի աշխարհահանդեսի կալվածքը:

Ամեն անսկզբունք մարդ իր գործունեության ընթացքում ղեկավարվում է միմիայն տակտի թելադրանքով: Իսկ տակտը Դուրյանի պես աննկարագիր մարդուն երբեմն դարձնում է «լուրջ և չեզոք», երբեմն էլ անլուրջ և խառնակիչ:

Բայց Դուրյանի չեզոքության խորհուրդ բանին գտնվում է նրա հետագա խոսքերի մեջ.- «Սխալ է ազգային շահերը նույնացնել Եկեղեցու շահերի հետ, կամ փոխադարձաբար Եկեղեցին գործիք դարձնել ազգային շահերին, ինչպես այս վերջին հիսուն տարվա մեջ այնքան շեշտվեց այս ուղղությունը: Եղան շրջաններ՝ որում ականատես եղա և ցավոք նույնիսկ բողոք բարձրացրի, երբ աշխարհի առջև ցույց արած լինելու նպատակով եկեղեցիները փակվեցին և պաշտամունքներն դադարեցվեցին ազգային դատին համար: Սա մեծագույն սխալն էր, որ եղավ, և ի՞նչ մեծ վիրավորանք մեր Փրկչի անվան և Ավետարանին: Եկեղեցին չի կարող փակվել ազգային դատի պաշտպանության համար»:

Սակայն, այս ազգուրաց լրբությունից մի քիչ հետո, նույն Դուրյանը գրում է.- «Հիսուսն էլ հայրենասեր եղավ. նրա արտասուքը Երուսաղեմի վրա հայրենասիրական ցույց էր»: Այսպե՛ս, երբ Հիսուսն է արտասվում իր հայրենիքի համար՝ ոչի՛նչ չկա անբնական, երբ հայ եկեղեցին է ողբում իր հոտի, իր հայրենիքի անչափելի վիշտը, որից Հիսուսի սիրտը կարող էր պայթել, այդ՝ «վիրավորանք էր Փրկչի անվան և Ավետարանին»: Դուրյանը հիանում է Հիսուսի հայրենասիրական ցույցի վրա, Դուրյանը «ցավոք» բողոք է բարձրացնում, երբ հայ եկեղեցին է նման ցույց անում: Դուրյանը կեղծում է հայոց քաղաքական և եկեղեցական պատմությունը, ասելով թե՝ «ազգային և եկեղեցական շահերի նույնացումը շեշտվեց այս վերջին հիսուն տարվա մեջ», այսինքն՝ մոտավորապես հայ հեղափոխության սկզբնավորությունից իվեր: Դուրյանը թշնամի է Ներսես Վարժապետյանի և Խրիմյանի, Իզմիրլյանի և Գևորգ Ե. Վշտակրի քաղաքականության: Դուրյանը դեմ է Ներսես Աշտարակեցուն, Ներսես Շնորհալուն, Ղևոնդ Երեցին, Հովսեփ Կաթողիկոսին, Սահակ Պարթևին, Մեծն Ներսեսին և բոլորի՛ն, բոլորի՛ն, որոնք մեր պատմության մեջ սրբացան հայ հայրենիքի դատի համար մաքառելով, տքնելով: Դուրյանը լռելյայն սրանց բոլորին համարում է «Փրկչի անվան» վիրավորանք հասցնող, Ավետարանի ոգուց շեղվող: Դուրյանը չի հասկանում հայ-քրիստոնյա դարձվածքի խորհուրդը: Նա չի ուզում գիտենալ, որ սկզբից ի վեր հայությունն ու իր քրիստոնեությունը ծուլված են մի բնությամբ: Նա չգիտի, որ այս երկուսի ճակատագիրը նույնացած է: Երբ Տարոնի ժողովուրդն է բնաջնջվում, կործանվում է նաև Ս. Կարապետի վանքը:

Իբր բոլշևիկներին վաճառված մարդ՝ Դուրյանը նրանց հակահայրենական և հակազգային քաղաքականությունը արդարացնելու

նպատակով, շահագործում է անգամ Քրիստոսի հեղինակությունը՝ «Եկեղեցու գլուխը Հիսուս Քրիստոսն է և ոչ հայրենիքը»: Այս հայրենուրացը՝ հասկանալով, որ հայ հայրենիքի և բոլշևիզմի շահերն իրենց էությամբ խոտորնակ են, որ նրանց միջև հաշտության եզր չի կարող լինել՝ ճգնում է նախ հանուն Քրիստոսի գերակայության՝ եկեղեցին բաժանել հայրենիքից, որպեսզի այնուհետև կարողանա նրան լծել բոլշևիկյան կառքին՝ հայ ազգայնականության դեմ ցցելով Հիսուս-Լենին զինակցությունը:

Իբր ցեղորեն ընկած տիպ՝ նա ուզում է Քրիստոսին անգամ դարձնել բոլշևիկյան գործակալ և լծել կոմունիստների հայաստանասպան քաղաքականության:

Դուրյանը հայ եկեղեցական չէ՛: Դուրյանը մասոն էլ չէ՛: Ամեն մասոն հայրենիքը չի զոհաբերում: Դուրյանը հայ-քրիստոնյա չէ՛, այլ ծպտված բոլշևիկ: Բոլշևիկն է բոլոր բարձր գաղափարները օգտագործում ստորին նպատակների համար:

Եվ Դուրյանն արդեն կանգնած է բոլշևիզմի և քրիստոնեության հաշտության և միաբանության փաստի առջև: Լսե՛ք, թե ի՞նչ է ասում նա.- «Պետք է գիտենանք որ Եկեղեցին ի սկզբանե հակառակ չէ և չէր կարող հակառակ լինել Խորհրդային Հանրապետության բոլոր վարչաձևերին: Խոստովանենք, որ Հայկական պետության քաղաքային մարդկանց մեջ լուրջ և անձնվեր հեղինակություններ կան, որոնք խորհում են ինչպես երկրի, նույնքան և՛ եկեղեցու համար»:

Աշխարհը մինչև այսօր այս բանից տեղեկություն չունի, մինչդեռ Դուրյանը 1928 Յունիս 10.ին - իր հոդվածի թվականը - Մանչեստրում լուծել, վերջացրել է եկեղեցու և բոլշևիզմի միացման խնդիրը: Եկեղեցին դեմ չէ խորհրդային «բոլոր վարչաձևերին», իսկ բոլշևիկ հեղինակավոր անձերն էլ մտածում և աշխատում են «եկեղեցու համար»: Հիմք կա՛ այլևս հայրենիքին կառչելու, երբ ապահայրենական բոլշևիզմը եկեղեցին դրել է շատ ավելի նախանձելի, երջանիկ վիճակում, երբ օր ու գիշեր նրա մասին է մտածում: Կեղծելու մեջ սատանայի չափ համառ է այս թշվառականը: Համաշխարհորեն հայտնի է, որ բոլշևիզմը ըստ էության քրիստոնեության հակասումն է, որ առաջինի նյութապաշտությունը և վերջինի գաղափարապաշտությունը տրամագծորեն հակառակ, իրար ժխտող ըմբռնումներ են: Աշխարհը գիտի, որ բոլշևիկները կրոնը հռչակել են թույն, եկեղեցին հոգևորականության շահատակության վայր, եկեղեցականությունը՝ ժողովրդի թշնամի, բոլորը գիտեն, որ եկեղեցիները վերածվում են կինոների, ակումբների, անգա՛մ բաղնիքների, որ խ. իշխանությունը մասնավորապես շնական ծաղրանք ունի Հիսուսի և իր խաչելության մասին, որ դա այդ բոլորը համարում է հիմարական հեքիաթներ, որ բոլշևիկները ստեղծել են «անաստվածական» շարժում, որ քրիստոնյա հոգևորականության մեծ

մասը ենթարկված է զանգվածային ջարդի. որ հենց Հայաստանում բազմաթիվ քահանաներ իրենց կաշին փրկել են աստվածուրաց մեղայագրով: Դուրյանի համար այս բոլորը նշանակում են «խղճի և կրոնի ազատություն»: Ըստ սասունցիական առակաբանության, Դուրյանը այն հիմարն է, որ կարասի մեջ գլուխը խոթած եզն ազատելու համար՝ կտրում է նրա վիզը և աղաղակում, «ե՛զը փրկվեց»: Մորթված է քրիստոնեությունը, և այդ փաստը Դուրյանն արձանագրում է իբրև «խղճի և կրոնի ազատություն»: Դուրյանը քրիստոնյա չէ: Ավելին՝ նա բարեկամն է, զինակիցը քրիստոնեության դահիճների:

Դուրյանը շարունակում է- «Պետությունը, որը կպայքարի կրոնի դեմ,դադարում է պետություն լինելուց և կդառնա կրոնական աղանդ»: Ճի՛շտ է ասում Դուրյանը և այս մեկ նախադասությունը թողնում է այն տպավորությունը, որ նա միամիտ մոլորված է, որ նրա սայթաքումները արդյունք են ա՛յն բանի, որ նա բոլշևիզմի էության մասին հասկացողություն չունի, իսկապես, Դուրյանը չգիտի՞, որ բոլշևիզմը սոսկական պետականություն չէ, ոչ էլ սովորական քաղաքական կառույց, այլ ամենից առաջ՝ մի ընկերային վարդապետություն: Նա չգիտի՞, որ կոմունիզմի դավանաբանության հիմքը, այսպես կոչված, պատմական նյութապաշտությունն է, որն իր էությամբ մի ընդվզում է քրիստոնեական գաղափարապաշտության դեմ: Նա չգիտի՞, որ ճիշտ այն օրենքով, որով այս գաղափարապաշտությունը ծնունդ է տվել քրիստոնեական դավանանքին, հենց նույն օրենքով էլ նյութապաշտությունից ծագել է կոմունիստական դավանանքը: Որով՝ եթե քրիստոնեությունը կրոն է կամ աղանդ, այդպիսին է նաև մարքսականությունը: Եվ հենց այդ պատճառով էլ, բոլշևիկյան աղանդը թշնամի է քրիստոնեության - դա անաստվածություն է, սա՝ աստվածապաշտություն: Իսկապե՛ս, այս հասարակ բաները Դուրյանը չգիտի՞: Չգիտի՛, այլապես ինչո՞ւ է ասում, թե՝ «Հանրավարականներ մոտ կհանդիպենք հոսանքների, որոնք բացահայտորեն հակառակ են ավետարանական սկզբունքներին»: Ինչպես երևում է, նա բավական բաներ գիտի, և եթե չգիտնալ է ձևացնում, ապա այդ նրա համար, որ հույս ունի նվաստության ճարպիկի խաղով «Երուսաղեմը գրավել»:

Դուրյանը հավատում է, որ հեռու չէ այն օրը, երբ եկեղեցուն հակառակ բոլշևիկ հոսանքները «մեծարանք պիտի ընծայեն» նրան: Եթե այդպես է՝ ապա էլ ինչո՞ւ կառչած մնալ ազգայնական հայության, ինչո՞ւ այժմյանից իսկ չմիանալ բոլշևիկներին: Դուրյանը թշնամի չէ բոլշևիկներին, որովհետև նրանք մի օր քրիստոնյա պիտի դառնան: Դուրյանը թշնամի է ազգայնական հայությանը, որովհետև ներկայի քրիստոնյաներ են: Դուրյանը հասկացել է աշխարհի անցավորության իմաստը և դարձել կրոնական ապագայապաշտ: Դուրյանը այն սնանկ փերեզակն է, որ իր կորած ապառիկների հաշվին խաչագողություն է

անում: Դուրյանը բոլշևիկյան գործակալ է դառնում, որպեսզի մի օր՝ անաստվածներին քրիստոնյա դարձնի: Դուրյանը ա՛յն հովիվն է, որն իր ոչխարներն ազատելու նպատակով զինակցում է գայլին:

Եվ սա այն մարդն է, որ քարոզում է.- «Մեր եկեղեցու պետերը հեռու պետք է մնան քաղաքական կամ ազգային որևէ գործից, նրանք պետք է ներշնչված լինեն Հիսուս Քրիստոսով: Սրանով միայն պետք է վստահություն ներշնչեն իրենց շուրջը և այն պետության, որի հետ կապված են իբրև քաղաքացի»:

Այս խոսքերը գրող Դուրյանն այն մարդն է, որ Չիկագոյի ցուցահանդեսում դեմ կանգնեց հայ դրոշին: Դուրյանը չգիտի՞, որ դրոշակին դեմ լինել, նշանակում է քաղաքականություն խաղալ: Նա չգիտի՞, որ, օրինակ, մեկը, որ համակիր է բոլշևիկներին՝ քաղաքականության է խառնվում, ինչպես նաև մեկը, որ թշնամի է բոլշևիկներին, դարձյալ քաղաքականության է խառնվում: Երբ մեկն ասում է, որ դրոշակը քաղաքական մի ցույց է և դեմ է նրան, իր դեմ լինելով, ինքն էլ որոշ քաղաքականության է հետևում, ինչպես մեկ ուրիշը, որ կողմնակից է նրան՝ իր կողմնակցությամբ, դարձյալ քաղաքական որոշ ճակատի վրա է կանգնում: Մեկը, որ կողմնակից է Ռուզվելտին՝ քաղաքական որոշ դիրք է բռնում, մեկը, որ դեմ է նրան, դարձյալ քաղաքական դիրք է բռնում: Երբ մեկն ասում է՝ թո՛ղ ծածանվի մեր դրոշակը՝ քաղաքական նպատակ է հետապնդում - նա ուզում է, որ «կործանվի Տաճկաստանը», երբ մեկ ուրիշն ասում է՝ թող նա վա՛ր իջնի, նա էլ քաղաքական նպատակ է հետապնդում - ուզում է, որ Հայաստանը կործանված մնա: «Քաղաքական կամ ազգային որևէ գործից հեռու» մնալ՝ նշանակում է չեզոք դիրք բռնել: Չեզոքը նա է, ով թե՛ մեկ տեսակետի և թե մյուսի հանդեպ անտարբեր է: Նմանի համար բոլորվին միևնույն է, թե՛ դրոշակը բածրանո՞ւմ է, թե չի բածրանում, թե Ռուզվե՞լտն է նախագահ, թե մի ուրիշը, թե Ռուսաստանը բոլշևիկներին կմնա՞, թե չի մնա: Բայց ի՞նչ է անում Դուրյանը, նա ասում է.- «Պարոնն ե՛ր, ես չեզոք եմ և պահանջում եմ, որ այս դրոշակը վար առնվի»: Նա ասում է.- «Ես քաղաքականության չեմ խառնվում, անգլիահպատակ եմ և ամերիկահայոց Առաջնորդը, բայց վստահություն եմ ներշնչում բոլշևիկներին: Երբ անգլիական դեսպանն է գալիս՝ ես խանդավառվելու հիմք չունեմ, երբ Լիտվինովն[31] է գալիս՝ ես պարտավոր եմ նրան ողջունել, սեղանակցել»: Դուրյանը ոչ միայն ցեղորեն է անհավատարիմ, այլև քաղաքացիորեն: Նա ա՛յն դժբախտներից է, որոնք գործում են իրենց ասածին հակառակ, և ասում են իրենց գործածին հակառակ: Նրանցի՛ց, որոնք իրենք իսկ դառնում են իրենց գլխին պատուհաս- Դուրյանը՝ Դուրյանի դեմ, Դուրյանը՝ Դուրյանին դատավոր, Դուրյանը՝ Դուրյանին մերկացնող:

* * *

Բոլշևիկյան քաղաքականությունը՝ կաթողիկոսական գահը որպես խայծ ծառայեցնելու՝ շեղում է հայ բարձրաստիճան հոգևորականության որոշ տարրերը ազգային գծից: Շատերը դառնում են մութ գործիք, որոնցից ոմանց դիմակազերծ արեց Չեկայի հիասթափված գործակալ Աղաբեկովը[32]: Սրանց միջոցով խ. իշխանությունը պրոպագանդա է տանում արտասահմանում: Հատկապես Գևորգ Ե. Վշտակիր Կաթողիկոսի տկարության օրերին և մանավանդ նրա մահից հետո, երբ հոգևոր իշխանությունը կենտրոնացավ «Գերագույն Հոգևոր Խորհուրդի» ձեռքը: Բոլշևիկները հարմարագույն առիթը գտան խորացնել իրենց գործակալների գայթակղությունը՝ նրանց հմայելով կաթողիկոսական գահի հեռանկարով: Այդ հովերով տարվեցին ոչ միայն Մեսրոպ Մագիստրոսը, այլև անբարոյական Ղլտճյանը, Դուրյանը և ուրիշները: Խ. իշխանությունը էջմիածնին նորանոր զիջումներ պարտադրելու նպատակով, ձգձգեց կաթողիկոսական ընտրությունը, մինչև որ սակարկությունը որոշ արդյունքի կհանգեր: Երկար խաղերից հետո, էջմիածինը ստիպված էր տեղի տալ, և 1929 թ.ին արտասահման հասավ նրա առաջին կարմիր ծիծեռնակ - Գերագույն Հոգևոր Խորհրդի սպառնագիրը, որից պարզվում էր, որ էջմիածնին պարտադրված է լծվել պայքարի՝ ընդդեմ ազգայնական հայության: Դրանից անմիջապես հետո բեմադրվեց կաթողիկոսական ընտրությունը: Բուն գործակալները չընտրվեցին, և կարիք էլ չկար որ ընտրվեին, նրանք այնպես էին ընկել Չեկայի ցանցերում, որ այլևս իբրև հասարակ գործակալներ կարող էին օգտագործվել՝ առանց մեծ վարձատրության: Ոմանք արդեն վտարված էին արտասահմանից, ինչպես Մագիստրոսը՝ Պարսկաստանից, կամ ուղղակի փախած, ինչպես Ղլտճյանը: Իսկ Դուրյանի պես անձերն էլ, որոնք իրենց կապը իսպառ խզել էին ազգայնական հայության հետ, այլևս ոչ միայն չէին կարող դարձ ունենալ, այլև իրենց դիրքը մի կերպ պահելու նպատակով, ստիպված էին ամբողջովին անձնատուր լինել իրենց տիրոջ - Չեկայի հրահանգներին:

Հասկանալի պատճառներով՝ խ. իշխանությունը մեծ ուշադրություն պիտի դարձներ ամերիկահայ գաղութի վրա, որը համեմատաբար մեծազանգվածն է, նյութական առատ միջոցներ ունի, որից կարող էր օգտվել: Ապա որ՝ հայ դատն այնտեղ տակավին իր բարեկամներն ունի, ու վերջապես՝ նա Դաշնակցության կարևորագույն ամրոցներից մեկն է: Սրելով ներքին պայքարն Ամերիկայում, խ. իշխանությունը հավատացած էր, թե կարելի պիտի լինի վարկաբեկել հայ դատը ոչ միայն հաչս ամերիկյան հասարակական կարծիքի, այլև Հայաստանի ջերմ բարեկամների: Կար նաև այն համոզումը, որ, եթե հաջողվի Դաշնակցությունն այնտեղ քարին զարկել, Չեկան ընդհանրապես տկարացրած կլինի Դաշնակցությունը: Այս պատճառներով, նա իր կարմիր թաթը

երկարեց Ամերիկա և գործակալ եպիսկոպոսն իր արբանյակներով լծեց գործի:

Բոլշևիկները նախ ջնջել տվին «Նահատակաց Տոնը» - և առաջին գործադրողը գաղութում եղավ Դուրյանը, առանց հասկանալու, որ եկեղեցին նահատակներով է եկեղեցի, որ նահատակ չունեցող եկեղեցին ամեն ինչ է, բայց ոչ եկեղեցի, որ հայ եկեղեցին ազգային եկեղեցի է, որ ազգային բացառիկ մի աղետի զոհերը, որպիսիք են վերջին կոտորածների զոհերը, որոնք ընկան ոչ միայն իրենց զուտ ազգային, այլև կրոնական հավատին հավատարիմ մնալու գաղափարականության հետևանքով - եկեղեցիական նահատակներ են: «Հայ-քրիստոնյաներ» էին նրանք, որոնք մեռան ոչ միայն իրենց «հայության», այլև «քրիստոնեության» համար: Այս փաստն ուրացող Դուրյանի եկեղեցին ոչ հայ եկեղեցի է, ոչ էլ քրիստոնեական: Դուրյանը ոչ միայն ազգային դավաճան է, այլև կրոնական, նա ոչ միայն բոլշևիկների կամակատարն է, այլև թուրքի, թուրքը չի կարող հանդուրժել, որ նրանց հիշատակն ապրի՝ ապրեցնելով ժողովրդի մեջ վրեժի զգացումը՝ թրքության հանդեպ: Թրքասիրական պրոպագանդայի ամենախելացի ձևն է՝ հայությանը ասել - «Մոռացի՛ր նահատակներդ»: Դուրյանը թրքասիրական ախտից բռնված հայ բարձր հոգևորականների ամենակարկառուն ներկայացուցիչն է:

Դուրյանը ճշտորեն նկատում է՝ եկեղեցին՝ դա «ժողովուրդն» է, բայց չի հասկանում, թե երբ ժողովուրդը ցավի հիշողություն ունի և եկեղեցին անտարբեր է մնում, նա այլևս ժողովրդական եկեղեցի չէ, երբ ժողովուրդը դրոշակ ունի և եկեղեցին ճգնում է նրան անդրոշ դարձնել՝ նա այլևս ժողովրդի թշնամին է: Դուրյանը չհասկացավ, որ երբ ժողովուրդը անդրոշակ է, այսինքն աննպատակ, եկեղեցին էլ անդրոշակ է, որով՝ աննպատակ ու անսուրբ: Որքան զզվելի է անդրոշ ժողովուրդը, նույնքան և՛ ավելի զզվելի է և՛ անդրոշ եկեղեցին: Ժողովուրդը՝ որ զուրկ է բարձր իդեալից՝ դատարկ է մարդկայնությունից, եկեղեցին՝ որ զուրկ է մարդկայնության բարձր իդեալից՝ դատարկ է աստվածային շնչից: Դուրյանը չհասկացավ այս բոլորը և իբր կրոնական էակ նվիրվեց սատանայի ծառայության, իբրև մարդ՝ հասարակական չարագործության, իբրև հայ մարդ՝ հայ ցեղի դահիճների:

Թուրքն ու բոլշևիկը դեմ են մեր նահատակների հիշատակին՝ նրանց սգատոնին - դեմ է նաև՛ Դուրյանը:

Նրանք դեմ են մեր դրոշակին - դեմ է նաև՛ Դուրյանը:

Նրանք դեմ են մեր ցեղի ժամանակակից պատմության հերոսականին - Մայիս 28-ին - դեմ է նաև՛ Դուրյանը:

Եվ այդ էր պատճառը, որ Չիկագոյի աշխարհահանդեսի իր գայթակղության առթիվ՝ նա արժանացավ թուրք մամուլի ծափողջույններին:

Իր ըմբռնումը եկեղեցու և եկեղեցիականի կոչումի մասին՝ այս դժբախտին պիտի մղեր Զմյուռնիայում թողնել ժողովուրդը և փախչել: Ո՞րն էր ավելի սիրում- չգիտենք, բայց թողեց թե՛ մեկը և թե՛ մյուսը: Նա կաշվապաշտ էր, ո՛չ աստվածապաշտ, նա եսասեր էր, ո՛չ ժողովրդասեր: Եկեղեցին «ժողովո՞ւրդն» է- եթե այո՛, ինչպէ՞ս եղավ, որ նա լքեց նրան: Հույն մետրոպոլիտ Խրիսոստոմոսը[33] հասկացավ, թե եկեղեցին և ժողովուրդը նո՛ւյնն են, մնաց իր հոտի հետ և ստացավ նահատակի լուսապսակը: Նրա համար եկեղեցականի կոչումը վտանգված հոտի տառապանքի խաչն է. Դուրյանը տառապել չգիտի, խաչը նրա համար պաշտոնապղծության միջոց է, խաչը նրա ձեռքում մոլորանքի գործիք է: Հայր Գապոնի[34] զենքն էլ խաչն էր, որով այդ գործակալ հոգևորականը մոլորեցրեց տասնյակ հազարավոր բանվորներին և առաջնորդեց դեպի սպանդանոց: Գապոնը խաչով իր զոհերը քաշեց դեպի «հեղափոխություն», նույն զենքով Դուրյանն ուզեց սրբաթափ անել ամերիկահայությունը և նրան առաջնորդել դեպի բոլշևիզմ:

Եվ այդ մարդը, որ թուրքի և բոլշևիկի չափ ատեց մեր դրոշակը, որ իր ձեռքի խաչը ցցեց մեր սրբազնագույն զգացումների դեմ, որ հաչս ազգայնական հայության այլևս կնքած էր իր բարոյական մահկանացուն, մի օր Նյու- Յորքում պիտի սպանվեր նաև ֆիզիկապես:

Այս խորհրդավոր սպանությունը, որ վերագրվեց ինը անմեղ հայ մարդկանց, որ թուրք-բոլշևիկյան գործակալների հրահրումով ոտքի հանեց հակազգայնական հայ տականքը՝ իր սուտ վկաներով և այլ անպատմելի մեքենայություններով, բոլշևիկների էության ծանոթ և տարրական ողջամտություն ունեցող մարդուն կարող է մղել միմիայն հետևյալ խորհրդածության: Նախ՝ բարոյապես մեռած այս մարդու ֆիզիկական մահվան մեջ իր տերերը - բոլշևիկն ու թուրքը - ավելի շահ ունեին, քան ազգայնական հայությունը: Աշխարհը գիտի, որ բոլշևիկները ոչնչացնում են իրենց բոլոր գործակալներին, որոնցից օգտվել են սպառիչ կերպով, կամ որոնց ընկածությունն այլևս ակնհայտ դառնալու շնորհիվ՝ իրենց դատն ու պրոպագանդան այլևս շահելու փոխարեն, կորցնում են միայն: Բոլշևիկները նմանվում են ա՛յն վայրենիներին, որոնք որսի մեկնելուց առաջ ճարպ են քսում իրենց կուռքերի շրթներին, իսկ անհաջողության դեպքում՝ անսիրտ կերպով գանակոծում նրանց: Բոլշևիկյան «ճարպից» հետո, իր ընկածության մեջ դիմակազերծված Դուրյանը՝ պետք է որ արժանանար նրանց «գանակոծմանը»:

Ո՞վ սպանեց, հարցի պատասխանը կարելի է ստանալ նաև էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդից, որի անդամն է նաև Չեկայի գործակալ Ղլտճյանը:

Էջմիածինը կեղծ չեզոքի հանցապարտ դիրքը բռնեց, երբ ամերիկահայությունը հանձնված էր կրքերի ջրապտույտի, երբ կրքերը

ոռնում էին և պատճառ տալիս, որ Վաշինգտոնում նստած թուրք և բոլշևիկ դեսպանները շնորեն հռհռան:

Էջմիածինը, որ սովորություն ուներ հաճախ ամենադատարկ բանի համար իր պատվիրակը գաղութ հանելու, այս անգամ մնաց Պիղատոսի դերում, մինչև որ բոլշևիկյան դավադրությունը բեմադրվեր Նյու-Յորքում: Նա ո՛չ միայն չհարգեց մեծամասնության կամքը, քվեն, այլև ականջը գոցեց ազգայնական հայության բազմիցս արած դիմումների դեմ: Ընդհանրապես նա արիություն չունեցավ կրավորական չեզոքությունն իսկ պահպանելու, այլ անբարյացակամ եղավ բոլոր այն թեմական առաջնորդների հանդեպ, որոնք տրամադրություն ցույց չտվին 30 արծաթով վաճառվելու, որպիսին է օրինակ՝ հայ եկեղեցու հսկաներից՝ Ատրպատականի Մելիք-Թանգյանը[35]: Էջմիածինը չկարողացավ անգամ Բուլղարիայի Հովակիմյան Արքեպիսկոպոսին պաշտպանել հակազգայնական տարրերի դավերից, որոնք տարօրինակորեն սրբակրոն այս նահապետին մղեցին հուսահատ մահվան: Մյուս կողմից՝ նույն էջմիածինը խորհրդային արտաքին ներկայացուցչության միջամտությունը ու հովանավորությունը ապահովեց հայորեն և կրոնապես ընկած բոլոր այն առաջնորդների համար, որոնք, ինչպես Հունաստանի դևը - Մազլումյան - դժոխքի վերածեցին մեր գաղութները: Անգամ Դուրյանի կործանումից հետո՝ Ամերիկայի առաջնորդական փոխանորդ նշանակեց Գալֆայան կոչված եկեղեցական սիբարիտը, որի տեսքից ամենաբարեպաշտ քրիստոնյան իսկ կարող է մղվել իր Քրիստոսն ատելու: Դրա հանդեպ նա սկսեց և շարունակում է հալածել հայ եկեղեցու հավատարիմ սպասավորներին: Նա կարգալույծ հայտարարեց Մարդուկեսյան վարդապետին և ուրիշներին, որոնց վայելած ժողովրդականությանը ու հարգանքին հազվագյուտ բարձրաստիճան հոգևորականներ են արժանացել :

Մենք կուզեինք էջմիածինը տեսնել նահատակ, քան կողմ, իսկ ամենասարսափելին, գործիք և այն էլ ու՞մ դեմ - ազգայնական հայության: Դարերը պիտի չմոռանան այս փաստը: Կաթողիկոս կա - բայց կաթողիկոսություն չկա՛: Հայաստանում որոշ եկեղեցիներ կան - բայց եկեղեցին չկա՛: Կան պատեր և գմբեթ - բայց տաճար չկա: Կան նվիրապետական աստիճաններ և տիտղոսներ - բայց հոգևորականը չկա: Կարճ՝ կա սրբաթափ եղած եկեղեցին իր կաշվապաշտ եկեղեցականությամբ: Ո՛ւր էր, եթե հակառակը տեղի ունեցած լիներ, ինչպես եղավ Ռուսաստանում, Վրաստանում, ուր, եթե եկեղեցուն և եկեղեցականությանը նահատակության դառն ճակատագիրը վիճակվեց, բայց հաչս ժողովրդի նրանք հոգեպես մնացին կանգուն:

Արդյո՛ք, հայոց վերջին Կաթողիկո՞սը պիտի մոռանար, թե եկեղեցին նահատակությամբ է ապրում: Նա՞ պիտի մոռանար բոլշևիկների բռնամահ արած Գյուտ եպիսկոպոսի արդար արյունը: Նա՞ պիտի

հարկադրվեր կեղծ երեմիականներ կարդալ Դուրյանի պես հասարակ մի ուրացողի դիակի վրա: Եվ եթե չի կեղծում, եթե Երևանի համար օրինություն չէ ամերիկահայության համար ստեղծված պառակտյալ վիճակը, ինչո՞ւ չի հրամայում որ օր, ժամ, վայրկյան առաջ հողին հանձնվի սուտ սուրբի դիակը: Չի՞ ըմբռնում, որ մինչև այդ դիակը չթաղվի՝ ամերիկահայ կյանքը կրծող չարիքը չի թաղվի:

Չգիտենք՝ ովքե՞ր են ուրացողի տեխնիկ սպանիչները, բայց մի բան է հայտնի - նրա հոգևոր սպանիչը ինքը՝ խ. իշխանությունն է:

Չգիտենք՝ ովքե՞ր շահ ունեին նրա սպանությունից, բայց մի բան պարզ է, որ հակադաշնակցական տականքը բավական շահեց նրա անսուրբ դիակի շնորհիվ:

Հոգեբանորեն հասկանալի է նաև նույն տականքի ճիգը՝ ուրացողին «սրբացնելու»: Դուրյանը, որ Եռագույնին անարգանք հասցնելու օրից կնքել էր ուրացողի իր մահկանացուն, ազգայնական հայության համար դադարել էր ապրել՝ մինչդեռ իր սպանությունը ծափահարվեց թուրքից, բոլշևիկից և հայ տականքից: Վերջինս ուրացողի այդ արարքը և Եռագույնը դնելով նժարի վրա, գտավ, որ առաջինն է ծանր կշռում: Միշտ էլ այսպես է վարվել աստվածասպան ամբոխը: Ամեն անարգանք սրբության դեմ՝ սրբության սպանություն է: Անասնացած ամբոխը միշտ էլ սրբության սպանիչ է, բավական է, որ նա անասնատիպ մի առաջնորդ ունենա: Մինչև բարոյապես սպանվածի մահը՝ այդ ամբոխը ժխորեց, աղմկեց: Սակայն ինչո՞ւ է շարունակում իր ոռնոցը նաև՝ նրա դիակի շուրջը: Արդյո՞ք, նրա՞ համար, որ ցավում է, գնահատում - ո՛չ, իհարկե: Հանձին Դուրյանի նա տեսնում է ուրացողի, մեղսակցի իր դեմքը և ինքնապաշտպանվելու կույր բնազդից մղված, կառչել է նրա դիակին: Դա մի ճիգ է՝ իր անկումի գիտակցությունը խեղդելու: Արդարացնել իր զոհը- նշանակում է արդարացում գտնել իր անկման համար: Հանցակցությունը Դուրյանի հետ այս ամբոխի երևակայության մեջ բորբոքում է նաև նրա ճակատագրի սարսափը: Նրա մահվան մեջ տեսնում է նաև իր իսկ պատիժը, և ահա ճգնում է աղմուկի մեջ մոռացնել տալ այդ: Կա նաև մի այլ պատճառ: Հակադաշնակցական տականքը չունեցավ, չունի և պիտի չունենա սուրբը և հերոսը: Եվ ահա իր հոգևոր չտեսության շնորհիվ՝ այս պատահական ուրացողը նրան թվում է երկնքից ընկած բարիք՝ մի «սուրբ», որի դիակը վերածվեց կանխիկ դրամի: Փերեզակը սրբացնում է ամեն բան, որ կարելի է վերածել դրամի: Իսկ Դուրյանի դիակը կշտացրեց և շարունակում է լիացնել շատերին:

Բայց ի զո՛ւր ճիգ: «Մեռելներ կան, որոնց մե՛կ էլ պետք է մեռցնել» ասում է Սիամանթոն: Հենց այդ կարգի մեռելներից է Դուրյանը: Հայոց պատմությունն ավելի անողոք և արդար է, քան ապրող ժողովուրդը: Նա կգա՛, կգա վաղը, կբանա միացյալ խաչագողների

ձեռքով թաղված ուրացողի գերեզմանը և նրա դիակի հետ կվարվի այնպես, ինչպես դարերի հեռավորության վրա վարվել է բոլոր ուրացողների հետ:

Դրոշասպան Դուրյանը պիտի չկարողանա խուսափել մեր պատմության քքից:

VII
ԱՆԴՐՈՇԱԿ ԶԻՆՎՈՐԸ

Չէ՛, դաշնակցական չեղած, չի կարելի ճշմարիտ զինվոր լինել:

Հռչակավոր նկարիչ՝ Լեոնարդո Դա Վինչին աշխատում էր իր «Խորհրդավոր Ընթրիքը» պատկերի վրա, սակայն, աշխատանքը դանդաղ էր ընթանում:

Երբ նրան խնդրեցին արագացնել նկարի ավարտումը՝ պատասխանեց - «Պատկերս ավարտելու համար պակասում է մի հատիկ գլուխ, այն է՝ Հուդա Իսկարովտացու գլուխը, հենց որ գտա այդ գլուխը, պատկերս կավարտեմ մի օրից»:

Եվ, իսկապես, մի քանի օր անցավ, Լեոնարդոն գտնում է փնտրած մարդուն և նրա վրա գծում Հուդայի գլուխը - մի դե՛մք, որի վրա կարելի է կարդալ երեսուն արծաթի ահավոր պատմությունը, մի հրեշային դե՛մք, որի վրա ուրացումն ու մատնությունը իրենց հավիտենական կնիքն են դրել:

Զգում եմ, ընթերցո՛ղ, խորհրդածություններս՝ հակադաշնակցության մասին երկարեցին, սակայն, զգում եմ և ա՛յն, որ պատկերս պակասավոր պիտի լիներ, եթե նրան չավելացնեի «Հուդայի գլուխը»:

- Ամերիկայում ես տեսա և՛ անդրոշակ զինվորին՝ նախկին լեգիոնականին[36]: Հայ Լեգիոնական Միությունը նույնպե՛ս հոգևոր ճեղքվածք էր տվել՝ պառակտվել: Լենինի շունչը՝ անապատից եկած խորշակի նման՝ զարկել էր և՛ Հայ Ձենքի մարդուն: Վերջին տարիները կարմիր սատանան քար էր խառնել և՛ այդ Միության մեջ: Ճեղքվածքը առաջացել էր լեգիոնականների մի մասի ուրացումով - Եռագույնից հրաժարվելու վատությա՛մբ:

Անդրոշա՛կ զինվոր - անիծապարտ բոլշևիզմը մեզ պիտի պարգևեր և՛ այդ անմարդկային ամոթանքը:

Ունէինք անաստված եկեղեցականը - Դուրյա՛ն, ունեինք Սուրբ Գիրքը, բոլշևիզմը և թրքությունը հաշտեցնելու աշխատող խմբագիրը - Քյուրքճյա՛նը[37], Լենինին և weesky[38]-ին մեծ պատիվ ընծայող «Բանվոր»[39]ը, իր զավակները լափելու տրամադիր կինը, և այլն: Ի լրումն չարեաց - ունեցանք և՛ անդրոշակ զինվորը:

Գիտենք, որ ժողովուրդների ոգին աբսոլյուտ չէ, որ դա ենթակա է վերելքի և անկումի, որ դա կախված է մի շարք գործոններից՝ հոգևոր, ընկերային, քաղաքական, և այլն: Գիտենք այդ, բայց և այնպես չի՛ կարելի հաշտվել այն մտքի հետ, թե՝ զինվորն էլ կարող է այսպես ընկնել: Իր ծիրանին ծախու հանած արքա՛ն - իր սուրը սակարկող զորավա՛րը - իր դրոշակը պատռող զինվո՛րը՝ հավասարապե՛ս զզվելի են, բոլո՛ր էլ:

Անդրոշա՛կ - անցե՛ղ, անպատի՛վ, անհայրենի՛ք: Անդրոշա՛կ - անսի՛րտ, անսո՛ւրբ, անհոգի՛: Անդրոշա՛կ - անարի՛, աներկի՛նք, անդե՛մ:

Միջազգային այդ անդիմությունը - անդրոշակ հայությունը - սիրում է կապկել օտարին և հաճախ գերազանցել նրան: Նա անդրլեռնակա՛ն է, ծայրահեղապաշտ, ի հարկե, բացասական իմաստով: Երբ օտարը, զգաստացած, մի օր թիկունք է դարձնում իր երեկվա կուռքերին՝ օտարին աշակերտող հայը շարունակում է կառչած մնալ իր փոխառիկ հիմարությունից: Նա քարանում է: Դարձի, զղջումի ճամբի հոգևոր հերոս դառնալու փոխարեն՝ նա համառում է մնալ ցեղային դասալիք: Հայ մարդու այս հոգևոր քարացումը հետևանք է՝ նախ իր քաղաքական տգիտության և պարտվողական ոգուն: Նա կույր է՝ չի տեսնում, թե ի՞նչ է կատարվում իր շուրջը: Այսօր ոչ ոք չի գլուխ կոտրում ընկերային հին վարդապետությանը վերաբերող վերջակետի կամ ստորակետի վրա: Այսօր ընկերվարական Մագդոնալդը այնպես է ծառայում բրիտանական կայսրությանը, ինչպես զինվորն՝ իր դրոշակին: Բրիա՛նը - ո՞ր բռնապարտապաշտ ֆրանսացին սրանից ավելի ջերմորեն սիրեց Ժանա դ'Արկի և Նապոլեոնի ծածանած դրոշը:

Իտալիայում- ուր նորահաս սերունդը սնվում է կլասիկ Հռոմի պաշտած էգ գայլի կաթով - հայրենապաշտությունը կազմում է պետական դավանանքի հիմքը: Գերմանիայում հայրենապաշտությունը հասել է զայրույթի: Այնտեղ ցեղն է Աստված: Ճամբա՛ ցեղիս, ճամբա՛ տվեք, կամ կուրծքս կբանամ- գոռում է գերման զինվորը: «Զա՛րկ թշնամիներին և պաշտպանիր Ունգարիան»՝ ասում է ունգար վերաքննչականը: Հայրենի՛քն է օրվա աստվածությունը՝ Լեհաստանում, Չեխիայում, Բալկանյան երկրներում, Ասիայում - ամենուրե՛ք: Նու՛յնը կարմիր ցարերի երկրում, ուր ընկերային հեղափոխությունը սկսվեց միջազգայնականության անունով, իսկ այսօր հայրենասիրության մշակումը պարտադրվում է պետական դեկրետներով, ուր Ստալին, Տուխաչևսկի, Վորոշիլով քնարական գինվությամբ ճառեր են ասում ռուս հողի և հայրենիքի մասին: Այսպե՛ս է ամենուրեք - աշխա՛րհն ազգայնանում :

Մարդկությունը - և ամենից առաջ եվրոպական ազգերը թիկունք են դարձրել այն անիրականանալի քիմերաներին - մաքսիմալիզմ, սոցիալիզմ, կոմունիզմ - որոնք իրենց համարձակ, բայց կեղծ

մարգարեություններով ավելի քան կես դար մոլորանքի մեջ պահեցին երջանկության ծարավի աշխարհը: Արևմուտքն այսօր հնչեցնում է իր ահազանգը - ուտոպիստները մեզ հասցրին անդունդի եզրը, հե՛տ, հե՛տ, դեպի իրական կյանքը, հե՛տ, սո՛ւտ է, խաբուսի՛կ է, էլ մի՛ անսաք սոցիալիզմին - լինի դա մարքսյան, թե լենինյան: Պետք է ծառայել մարդկությանը, այո՛, սակայն, դա պիտի տեղի ունենա մեր ցեղի միջոցով՝ մեր ցեղին ծառայելու:

Ա՛յս է օրվա իրականությունը՝ համաշխարհային: Բայց, հակադաշնակցական տականքի համար ոչինչ չի փոխվել, և չի փոխվում - ինչպես իր հոգում: Եվ հասկանալի է դա, չէ որ մարդս իրենից դուրս տեսնում է միայն այն, ինչ որ կա իր հոգու մեջ: Անդրոշակ տականքը մնում է անտարբեր, երբ աշխարհում դարագլխային անցքեր են տեղի ունենում: Ռուս բոլշևիկը իր հողն ու հայրենիքն է երգում, իսկ բոլշևիզմի այբուբենին հագիվ ծանոթ հայն Ամերիկայում իր ազգային դրոշակն է պատռում:

Գիտե՛նք, գիտե՛նք, որ հայկական բոլշևիզմը՝ հացի խնդիր է, ծուլության իրավունք՝ կյանքի պայքարի համար, վատ զինված թշվառականների համար: Գիտենք այդ, բայց և այնպես մահու չափ դժվար է հաշտվել անդրոշակ հայ զինվորի գոյության հետ: Հայը, հասկանալի պատճառներով, պիտի մնա իր վահանի, իր դրոշակի տակ, անգա՛մ այն դեպքում, եթե հոգեբանական հրաշքով թուրքն իսկ բոլշևիկանա:

Մասարիկն ասում է՝ «Ասացի՞ր՝ ես չեխ եմ - պետք է իմանաս, թե ի՞նչ պետք է անես, պետք է ծրագիր ունենաս: Ի՞նչ անելդ իմանալու համար պետք է հստակ ըմբռնում ունենաս ազգիդ առաքելության մասին: Իսկ այդ առաքելության մասին ուսուցանում է պատմությունը»:

Ասացի՞ր՝ հա՛յ եմ - պետք է ուխտ ունենաս. և Կատոնի պես ամեն օր պիտի կրկնես՝ Cartago delenda est![40] Եվ Կարթագինե ասելով՝ պիտի հասկանաս Թուրքիան: Եվ պիտի պատրաստվես մի օր - աշխարհը միշտ էլ բարեկամ չի մնա թուրքին- մի օր պատուհասելու է թրքությունը: Ինչպե՞ս՝ հարցիդ կպատասխանեն երկու իմաստուն խորհրդականներդ- Սիրտդ ու ժամանակը: Մինչ այդ՝ հայ մարդը սրանից հետո մի հատիկ արժեք պիտի ունենա, թե որքա՞ն նա վտանգավոր է Թուրքիայի համար: Այո՛, այսպե՛ս, չկեղծենք. «ջայլամի քաղաքականությունը» չի՛ փրկի մեզ: Եթե թուրքն իրեն ազատ զգաց Արաքսն անցնելով, նա կկատարի և՛ արևելահայության թաղումը: Ահա՛ թե ինչո՛ւ հայ անհատի գերազանցությունը թուրք մարդու վրա՝ դառնում է պատմական անհրաժեշտություն: Ահա՛ նաև թե ինչո՞ւ հայ զինվորի անունը կրելու արժանի է նա՛, ով հայ արյունի վրեժխնդիր է, ով դավանում է թե՝ թրքությանը պե՛տք է և կարելի է պատժել Թուրքիայի սահմաններից ներս:

Անդրոշակը՝ զինվոր չէ: Ամերիկաբնակ հայ սակավաթիվ դրոշուրաց լեգիոնականները իրենց ընթացքով հաստատեցին ա՛յն, որ զենք կրել՝ չի նշանակում ճշմարիտ զինվոր լինել: Զե՛նքը, թե մարդս զինվոր դարձնողը: Կա մի այլ բան - ոգի՛ն, մարտական խմորը, արիությունը, հայրենի հողի զգացումը, սրբությա՛ն զգացումը, իր կյանքից ավելի՛ իր դրոշակը սիրելու և նրա համար ամեն վայրկյան մեռնելու հոժարակամությունը:

Եռագույնը պատռող նախկին լեգիոնականները մատնեցին երեք բան՝

- Որ իրենք ճշմարիտ զինվոր չեն եղել.
- Որ իրենք արժանի չեն դրոշակ կրելու.
- Որ իրենք, ընդհանրապես, անդրոշա՛կ են, անարի՛, անզո՛ր - որևէ դրոշակ պաշտպանելու իրենց կյանքի գնով:

Հակադրոշակյան այս վատությունը, հարվածելով ճշմարիտ լեգիոնականների հպարտությանը, ավելի՛ ևս դղրդացրեց նրանց ազգայնական մոլեռանդությունը և մղեց դեպի մեզ: Արձագանքելով Դաշնակցության կանչին՝ նրանք Եռագույնը իրենց աչքի մեջ, եկան՝ վիշապը գետնելու, հերոսի վճռականությամբ կանգնելու Դաշնակցության կողքին, ազգայնական պատնեշի վրա:

Եկան և հաստատեցին՝

- Որ չի՛ կարելի ճշմարիտ զինվոր լինել՝ դաշնակցական չեղած.
- Որ միայն մե՛ծ սրտերը գիտեն, թե ի՞նչ ասել է դաշնակցական լինել.
- Որ միայն արիները գիտեն, թե ի՞նչ է դաշնակցականությունը:

VIII
ԱԽՏԱԲԱՆԱԿԱՆԸ

«Անհատների պես - ասում է Ֆույեն - ազգերն էլ մի հոգի, մի «ես» ունեն, և այդ հոգին ու «եսը» կազմվում են ցեղի հավաքականությունից: Այնտեղ, ուր այդ հավաքականությունը ընկնում է իր պատմական արժեքների բարձրությունից, ազգը գտնվում է անկումի շրջանում և նրա հոգին խանգարվում բարոյական հիվանդությամբ»: Ահա՛ մի դատավճիռ օրվա հակադաշնակցականության մասին:

Հակադաշնակցականությունը- իբրև ուրույն հոգեվիճակ- կարող էր ախտաբանորեն շեշտվել, և շեշտվեց բոլշևիկների կողմից մեր գաղութներում ստեղծված հոգեբանական մթնոլորտի շնորհիվ:

Մեր դարը զանգվածների և ամբոխների դար է: Ամբոխից կարելի է օգտվել երկու ձևով - դրական և բացասական: Բոլշևիզմը այդ վերջինից օգտվեց և շարունակում է օգտվել բացասական ուղղությամբ: Դա ձգտում է տևականացնել ընկերային պսիխոզին նպաստող

հոգեբանական մթնոլորտը, գիտենալով, որ հոգեբանորեն բնականոն մարդ էակից կարող է միայն մի վերաբերմունքի արժանանալ - մերժումի: Հայության այն մասը, որ իր ճակատագրով և հասարակական դրությամբ - կոտորածների խելացնորող հիշողություն, տեղահանություն, տնտեսական անկայուն վիճակ, նոր միջավայրին հարմարվելու հաճախ ապարդյուն ճիգ - դարձել է ջղայնապես անկայուն և հոգեպես խախտված տարր՝ մեծապես օգտագործվեց բոլշևիզմից ո՛չ դրական ուղղությամբ: Ուր չկա պսիխոզի վիճակ՝ բոլշևիզմը ճգնում է ստեղծել, ուր կա՝ նա շտապում է ձեռք առնել պսիխոզի ենթակա տարրերի ղեկավարությունը: Այս տեսակետից հատկանշանական է, որ մինչև Նյու-Յորքի դեպքը՝ ծանոթ տականքների ղեկավարությունը գտնվում էր ռամկավարների ձեռքում, սակայն, երբ դեպքից հետո գերագրգիռ վիճակ ստեղծվեց և ախտավոր տականքը փողոց իջավ, ղեկավարությունը անմիջապես անցավ բոլշևիկներին, և այդ օրից սկսած խ. իշխանությունը խելագար ճիգ է թափում տևականացնելու պսիխոզային մթնոլորտը, որ կարողանա ընկերահոգեախտային տրամադրությունների վարակչությամբ ցնցումի մեջ պահել ցեղայնորեն և ջղայնապես անկայուն տարրերը: Այո՛, դժբախտաբար, ընկերային հոգեխանգարումը իրողություն է ամերիկահայության այն մասի համար, որ ազգային պարտականության բեռը նետել է իր ուսերից և սարսափով փախչում է ցեղորեն մտահոգվելու ճիգից:

Այդ հոգեխանգարման ախտանշանները անհատի մեջ արտահայտություն են ստանում, երբ որոշ հավաքականության մեջ ախտաբանական այդ երևույթն, աստիճանաբար զարգանալով, հանգում է ընկերային պսիխոզի, որում, ըստ մի շարք հոգեախտաբանների - Լեբոն, Սիգել, Տարդ, Կինկել - ենթական մատնում է հետևյալ գծերը.

1. - Գիտակցության տկարացում, որի դեպքում բանականությունը չի՛ վարում ախտաբանական ենթակային, այլ դիպվածական գրգռվածությունը:

2. - Զգացումների և գաղափարների միակողմանի ուղղություն: Այս դեպքում՝ ենթական կորցնում է շրջահայեցողության ընդունակությունը, պատասխանատվության զգացումը և, իբրև խտացված կիրք, կուրորեն մղվում իր մտասևեռման առարկային՝ թեկուզ մարդկության անդարմանելի չարիք հասցնելու և աշխարհի ամբողջ բարոյակարգը ոտնահարելու գնով:

3. - Բարձր զգացումների անկում, որի շնորհիվ նա դառնում է ընկերայնորեն անպիտան, բարոյապես անընտրող, զրկվում է սրբության զգացումից, ինչպես նաև գեղագիտական ճաշակից, կորցնում է հոգևոր վայելքի ընդունակությունը և դառնում է - եթե այսպես կարելի է ասել - հոգևոր գիշակեր:

4. - Գերագրգռություն: Կորցնելով բարձր գաղափարներով ապրելու ընդունակությունը, ենթական դառնում է անտարբեր հանդեպ բարձրի, հեռավորի, և հափշտակվում ներկայով միայն: Իբր այդպիսին նա կորցնում է բարոյական չափի գիտակցությունը և ղեկավարվում այն բանով, ինչը նրան մասնավոր գրգիռ է տալիս՝ տվյալ վայրկյանում: Հավիտենականության մասին զգացում չունի, իսկ պատմությունից խրտնում է: Նրա հոգևոր տեսողության շրջագիծը այսօրվանից դենը չի տեսնում, որով անընդունակ է ապրելու իր ցեղի անցյալով, համակվելով նրա ապագայով:

5. - Հուզականություն: Սիրում է վայրկյանական ապ-րումների տեղատարափը. հույզից հույզ է անցնում և հաջոր-դաբար մոռանում դեպքերը. տևական ապրումի ընդունակու-թյուն չունի, ոչ էլ հասկացողություն ողբերգականի մասին. լալիս է և ծիծաղում՝ առանց լուրջ պատճառի, արագաշարժ է, բայց միշտ էլ ձախողակ, գործում է եռանդով, բայց առանց կարևոր նպատակի, աղմկարար է՝ շփոթի և քայքայումի ազդակ:

6. - Կրքերի հորդահոսություն: Անուժ է, զուրկ է բարոյական ուժից, որով և տոկալու, համբերելու առաքինությունից: Ներմղական է, ձգտում է արագորեն իրականացնել իր մեջ բույն դրած ամեն կիրք, ցանկություն:

7. - Դատելու անկարողություն: Չի հասկանում պատմական դեպքերի իմաստը, հակում չունի տրամաբանելու, ոչ էլ ճշմարտության ընկույզի վրա ատամ կոտրելու, անկարող է իրականը անիրականից զատորոշելու, դյուրահավատ է և հատկապես հավատում է այն բանին, որ իր հաշվին է գալիս: Այդ բոլոր պատճառներով՝ բնական հարմարություն ունի գործիք դառնալու:

8. - Անհարկի վայրագություն և շնականություն:

9. - Թեթևամտություն, որ բացատրվում է ենթակայի հոգեկան տկարությամբ: Չունենալով ինքնավար բարոյական և ինքնակամություն, ենթական դառնում է եռանդի մուրացկան: Թեթևամտությունն էլ նրա մեջ ծայրահեղության է հասցնում հրահրվելու բաղձանքը, որի պատճառով նա դառնում է՝ ամեն չարիքի գործիք:

Ահա՝ մոտավորապես այն հոգեախտանշանները, որոնք վերլուծելով, կարող դիտողը կնկատի ամերիկահայությանը անդրոշակ տականքների մեջ:

Հակադաշնակցականը իբրև ախտաբանական տիպ՝ եսական է և հաճոյապաշտիկ. հոգեպես խո՛ւլ է, անկարեկի՛ց, չի զգացվում մերձավորի տառապանքից, անհամբեր է, անհանդուրժող, վայրագորեն անարդար, ատող, չար, նրա մեջ գլուխ է բարձրացրել նախրայինը. նա իրեն թելադրված գաղափարները, կարծիքները, հավատալիքները

կա՛մ ընդունում է ամբողջությամբ, անքննադատաբար, կա՛մ ամբողջությամբ մերժում:

Ախտաբանական այդ հոգեվիճակի շնորհիվ նա հեշտությամբ հանձնվում է զանազան պատրանքների, երբ այդ պահանջում է իր ղեկավարը: Օրինակ, նա հավատում է, որ կարելի է Դաշնակցությունը գլխատել, Ամերիկայից դուրս հանել, ծովը թափել, այդ նպատակով ստորագրություններ է հավաքում, հանրագրություններ կազմում, չնայած որ տասնյակ տարիներով Ամերիկայում ապրող այդ եղկելին գիտի, որ նման անհեթեթությունը դեմ է երկրի օրենքին. գիտի, բայց հավատում է: Նրա հոգևոր աշխարհն հարուստ է ցնորական բազմազան գաղափարներով, բանդագուշանքներով, նա հավատում է ամեն բանի, ինչ որ հարմար է իր հոգեբանության. ինչպես շեշտեցինք մի տեղ, նա զուրկ է չափի և իրավախոհության զգացումից, որովհետև ներքին հրամայականով, այսինքն իր խղճմտանքի ձայնով շարժվելու և գործելու փոխարեն, նա ղեկավարվում է արտաքին դրդումներով: Այս տարրը զգալիորեն ներգործունացավ և փողոց իջավ Նյու-Յորքի դեպքից հետո: Արդյոք, դժբախտ մի հոգևորականի մա՞հը հատկապես հոգեցնցումի ենթարկեց նրան, թե այն ամենը, որ այդ առիթով դրսևորվեց՝ անթեղված կար նրա մեջ: Արդյոք պայմանները կպակասեին նրան՝ իր հոգու ողջ չարությունը արկածելու համար: Գիտեինք, որ նա մեզ հետ չէր ազատագրական կռիվներում, գիտեինք, որ նա այժմ էլ մեզ հետ չէ՝ մեր ազգային մաքառումի, մեր ողբերգության, մեր վերափրկչական որոնումների, մեր ինքնապաշտպանողական ճիգերի մեջ: Արդյո՞ք, Նյու-Յորքի դեպքից հետո՞ միայն փլավ այդ տարրերի հոգին, թե նա փլած էր վաղուց: Արդյոք, հիմա՞ միայն նա միացավ մեր ցեղի թշնամիներին, հիմա՞, երեկ էլ նրա հետ չէ՞ր. ապա ի՞նչ էին հայ մատնիչները - ցեղի երեսից ընկած հրեշների այն լեգիոնը, որ մութի մեջ գործեց հայոց հեղափոխության դեմ, մինչև որ իսլամ մոլեռանդության քարի վրա կսրվեր այն ահավոր դանակը, որով թուրքը ոչ միայն հայ հեղափոխականները պիտի մորթոտեր, այլև մի օր ամբողջ արևմտահայությունը պիտի քաշեր պատմության մեջ իր զարհուրանքով եզակի սպանդանոցը:

Չէ՛, չէ՛, նրա էությունը վաղուց էր դատարկվել բարոյական այն հենակներից, առանց որոնց անհատի և ամբոխի մեջ գլուխ է բարձրացնում անասնականը:

Հակադաշնակցությունը - հասկանա՞նք, հասկանա՞նք այդ - որպես ցեղալքումի արտահայտություն, նշանակում է՝ հրաժարում ցեղի արժեքներից և սրբություններից, նրա վախճանաբանությունից - այն ամենից, որ ազգերի հավիտենականությունն է ապահովում:

IX
ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դաշնակցության շուրջն է դառնում հայոց ճակատագիրը:

Մեր ըմբռնումը՝ ապագայի մասին, որով պայմանավորվում է մեր տքնությունը ապագայի համար - ահա՛ թե ի՞նչն է կառուցանում մեր ճակատագիրը:

Այդ ըմբռնումն է մեզ - որպես անհատ և հավաքականություն - քշել տալիս պատմության առջևից կամ նրա հետևից: Դա՛ է մեզ դարձնում ստեղծագործ կամ անպտուղ, մարտիկ կամ դասալիք, մուրացկան կամ արքա, ի մի բան՝ հաղթական կամ պարտյալ:

Ապագայի պրոբլե՛մը - հայ հայրենիքի, հայ ճակատագրի պրոբլե՛մն է մեզ համար. ավելի պարզ՝ դա հայ և թուրք հարաբերության պրոբլեմն է. - երկու ժողովուրդների, որոնք այլևս չեն թաքցնում, որ իրենցից մեկի հետագա գոյությունը պայմանավորվելու է մյուսի մահով: Այդ իսկ պատճառով՝ մեծապես խռովված է ազգայնական հայը, ամեն բանից առաջ, է՛լ ավելի՝ դաշնակցական հայը: Դաշնակցականը - դա հա՛յն է, որ ընթանում է պատմության առջևից, որպես զինվոր՝ իր ցեղի ձայնին հնազանդ: Իր ցեղի գոյության և ապագայի հետ կապված խնդիրներով ապրող հա՛յն է դա: Ապագայի դռան արթուն հսկող, խռովկոտ հա՛յը - հարազատ զավակն իր քաղաքական նախահայրերի - նախադաշնակցությա՛ն: Հայրենաբաղձ հա՛յն է դա՝ սեփական երկրի ճակատագիրը ազատորեն տնօրինելու տենչանքով: Հայ մա՛րդը, որ իր ցեղի ճակատագիրը դարձրել է ի՛ր սեփական ճակատագիրը, որ կապված է մնում՝ իր ժողովրդին՝ նրա դժբախտության և պայքարի օրերին, անձնվիրաբար ծառայում, զոհաբերում և մեռնում նրա համար, երբ հարկն է պահանջում:

Հա՛յը, որ խորապես ապրում է ողբերգությունը երկրի հայության՝ հերոսաբար կառչած Արարատի փեշերին, և՝ տարագիր հայության, որ Նազովրեցու պես դեռ շարունակում է նախանձել բույն ունեցող երկնքի թռչուններին: Հա՛յը, որ հայրենիք ասելով, միշտ էլ պատկերում է Յոթնիցս սրբազան մի երկիր, որը սիրաշատ մոր նման կանչում է իր զավակներին - «Եկե՛ք, եկե՛ք, ես ձեր մայրն եմ, իմ մշտաբուխ ստինքները կաթ ունեն բոլորի՛դ համար»:

* * *

Դաշնակցության ուժն ու հմայքը Ամերիկայում ամեն բանից առաջ այն բարձր ըմբռնումի մեջ է, որ իր մասին արդարորեն կազմած է ազգայնական հայությունը: - Չի՛ կարելի հակադաշնակցական դառնալ, առանց ուրացող դառնալու: Այսպե՛ս է մտածում ամերիկահայը և,

որպես քաղաքական աղոթք, ամեն օր կրկնում՝ «Աստված երկու բան չկա հայության - Արաքսին՝ կամուրջ, Դաշնակցության՝ պարտությո՛ւն»: Այո՛, թող ժամանակները այդ երկու բանը չտան մեզ, որովհետև Հայաստանը Պարսկաստանին միացնող մի կամուրջի գոյության դեպքում՝ այլևս դժվար թե մարդ մնա մեր չեկայավար հայրենիքում, իսկ առանց Դաշնակցության՝ այլևս ազգ չենք լինի, այլ՝ մարդկային փոշի:

Ազգայնական ամերիկահայը գիտակցում է, որ Դաշնակցության պարտությունը պիտի դառնա հայ ոգու և դատի վերջնական պարտությունը- նա խորապես գիտակցում է այդ, և այդ իսկ պատճառով կանգնած է Դաշնակցության կողքին:

Ի՞նչ է, սակայն, Դաշնակցությունը:

- Հայ ցեղի մշտնջենավորման նախամտահոգությունը, նրա հավիտենական տքնությունը, նրա ինքնահզորացման, ինքնաազատագրման և լիարժեքավորվելու ճի՛գն է դաշնակցությունը:

Ցեղերի ստեղծագործ ոգին անցումներ ունի՝ դեպի գոյության բարձր ձևերը: Դաշնակցությունը հենց այդ անցումն է մեր նորագույն պատմության մեջ:

Դա ցեղի հավիտենական անբավականությունն է սեփական ճակատագրից, որ հատուկ է կենսաբանական բարոյականի տեր բոլո՛ր ժողովուրդներին:

Դա ցեղի ազնվության - նրա տքնաջանության, մարտունակության և ազատունակության բարձրագույն աստիճանն է՝ ժողովրդի մեջ: Դա մեր ցեղի հիշողությունն է, որով ժողովուրդը չի՛ մոռանում անցյալի իր մեծությունը, չի՛ հաշտվում իրեն պարտադրված անփառունակ վիճակի հետ: Ամերիկահայ ցեղակրոնի համար՝ հենց այդ անհաշտվողականությունն է դաշնակցականությունը:

Մարդկության հանդեպ ազգն իր պարտականությունը չի կատարի, եթե իր ձեռքից հանի սեփական ճակատագրի ղեկը՝ եթե դա հանձնի օտարին: Իր ցեղի պատմության ընթացքը վարելու արիությո՛ւնն է դաշնակցականությունը:

Ո՞վ չգիտի, որ դեռ սուրն է գծում ազգերի հավիտենականության ճամբան: Իր ճամբի վրա ցցվող վտանգներին և անիրավությանը կուրծք տալու քաջությունն է դաշնակցականությունը: Դա տուրքն է մտքի, սրտի և արյան, որ պահանջում է ցեղերի ինքնապաշտպանությունը: Դա այն հոգեբանական վահանն է, որով մեր ցեղը պաշտպանվեց դարերով:

Մեր ցեղի ինքնահավիտենականացման ծարավն է դաշնակցականությունը: Դա հայ մարդու անհանգիստ, մշտախռով մտածումն է Հայաստանի մասին:

Դա ցավն է, որ ապրող հայ մարդն է զգում ի տես վիրավոր Հայաստանի: Եվ վիշտը մեռնողի, թե իրեն քիչ բան հաջողվեց

կատարել հայրենիքի համար: Դա ճիշն է սրտաճաք Անդրանիկի. թե «Գործս կիսատ մնաց»:

Եվ առավելագույն զոհաբերությունը, որ ցեղահոգ հայը ժպտադեմ կատարողն է Հայաստանի համար:

Դա՝ պատմության հայացիր և Հայաստանակործան ընթացքը հաղթահարելու մեր ծիգն է: Մեր մղումն է ցեղի ինքնակենտրոնացման և ինքնափրկության:

Դա՝ ցեղի ինքնանվաճումի ծի՛գն է, նրա արթնությունը, որ չի դադարում ամենակենտրոնախույս տարրերին ուղղելու իր զգաստացուցիչ կանչը՝ «Եկեք առ իս»:

Դա գաղութահայության հոգևոր ուղեհարթումն է՝ դեպի Հայաստան: Մեր ցեղի հայրենաստեղծումի խա՛նդը. օրվա հայության ազատագրելու աննվաճ կա՛մքն է դաշնակցականությունը: Այսպե՛ս է հասկացվում դաշնակցականությունը Ամերիկայում:

Այս ըմբռնումը՝ դաշնակցականության մասին, հայ մարդուն մղել է դավանելու թե՝ ամեն մեղանչում Դաշնակցության դեմ՝ մեղանչում է ցեղի դեմ:

* * *

Ամերիկահայ դաշնակցականը սիրում է աշխատել իր անձի վրա և իր վրա կատարած աշխատանքով էլ նա չափում է դաշնակցականի իր պիտանիությունը: Նրա համար իր անձի վրա աշխատելը - դաշնակցական աշխարհայեցողության և առաքինության մշակումը - դարձել է հրամայական պահանջ, մասնավորապես այժմ, երբ հայ կյանքի ներքին չարիքը՝ հակադաշնակցականությունը - դարձել է ակտիվ և անցել հարձակողականի:

Ամերիկայում ես չտեսա ինքնաշխատությունը թերագնահատող ընկեր: Ամենքը գիտակցում են, որ պատմական վայրկյանի՝ մեր առջև դրած ծանր խնդիրները պահանջում են կուսակցական ավելի՛ մեծ կուլտուրականություն: Ինքնաշխատությունը չի՛ թելադրվում, ինչպես տեղի է ունենում բոլշևիկների մոտ: Դաշնակցականը զբաղվում է ինքնաշխատությամբ, ոչ թե օտար գաղափարախոսության ազդեցության տակ ընկնելու երկյուղից, այլ իր տեսաբանական հորիզոնը ընդլայնելու ներքին ցանկությունից, ջանալու ներքին ուրախության զգացումից:

Այնտեղ, ամեն ընկեր ինքնիրեն զգում է որպես արժեքավոր միավոր այն մեծ ուխտի մեջ, որ կոչվում է Դաշնակցություն: Բարձրորեն ընկերական է նա: Ջերմ ընկերականություն, հավատավորություն և խանդավառություն-ահա՛ նրա կուսակցական բարոյականի եռյակ սյուները: Նրա զոհաբերության չափը մնում է անծանոթ մեր շատ գաղութների համար:

Դաշնակցականը Ամերիկայում իր գործն ու զոհաբերությունը չափում է ոչ թե իր կարողություններով, այլ իր պարտականության չափով, որ միշտ էլ ավելի մեծ է և ավելի՛ն է պահանջում:

Այսպիսով, դաշնակցականությունը Ամերիկայում դարձել է մի տեսակ մյուրիդիզմ - աննահանջ պայքարի և աննվազ զոհաբերության խա՛նդ:

Քաղաքական խորհողության ընդունակ՝ նա անսխալ կերպով սահմանել է թրքաբոլշևիզմի կողմից մեզ պարտադրված պայքարը, նրա արժեքը և իմաստը: Նրա համար իրերի վիճակը լիովի՛ն պարզ է: Նա սիրում է և գիտի խորհել, և ոչ թե դատել պատրաստի բանաձևերով: Պայքարի մեջ դրած է առողջ միտք, տաք սիրտ և Վարդանանց մարտական բարոյականը՝ «խիզախ քաջության վատություն չխառնել»: Մշտարթուն է, գիտի, որ պայքարը «տոն օրեր» չունի: Ներկայացնելով ազգն ու ազգայնականությունը՝ նա միշտ էլ տիրապետող դիրքերի վրա է, այսինքն՝ վայր չի իջնում իր կոչումի և պատմական արժեքների բարձունքից: Նա խստորեն կարգապահ է: Նա նմանում է ավելի ֆրանսիական զինվորին, քան՝ գերմանականին: Առաջինը՝ իր հրամանատարը կորցնելուն պես՝ անցնում է նրա տեղը: Նման դեպքերում - իր պետերի վիրավորվելու, սպանվելու դեպքում - գերման զինվորն իրեն զգում է անտեր, անգլուխ, ամբոխանում և դադարում կազմակերպված ուժ լինելուց: Ֆրանսիականը, ինչպես ասացի, փոխարինում է իր ամենաբարձր պետերին: Վերդենի շուրջը բորբոքվող ճակատամարտերում եղան դեպքեր, երբ շարքային պարզ զինվորը փոխարինեց իր գնդապետին և զորամասի վերաբերմունքը մնաց նո՛յնը դեպի նոր հրամանատարը: Ա՛յս է ճշմարիտ կարգապահությունը: Դաշնակցականի կարգապահությունը մեքենական չէ, արտաքին չէ, դա՝ արտահայտությունն է մի բանավոր անհրաժեշտության. դա արտահայտությունն է գիտակցորեն ու կամավորապես ընդունված պարտականության: Կարգապահություն ասելով՝ մեր ամերիկաբնակ ընկերը հասկանում է շարքերի բացարձակ վստահությունը դեպի իրենց ղեկավարները: Ռեմարկյան զինվոր չէ նա, և պատահական անհաջողությունները միշտ վերից վար չի փնտրում: Նա չի ասում՝ «սպանե՛ն առաջ», որովհետև գիտի, որ իր մարմինները առաջնորդում են, և ոչ թե ղեկ-վարում՝ հեռվից: Նա նպատակագիտակ է և դրական է իր նպատակադրությունը: Տանելով իրեն պարտադրված անօրինակ պայքարը՝ նա, ինչպես ամեն դաշնակցական, հետապնդում է ո՛չ թե ապախորհրդայնացումը, այլ իրականացումը Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի: Նա համակված է ուժեղ հայրենաբաղձությամբ: Նրա համար հակադաշնակցականությունը՝ այն ներքին պատմական չարիքն է, որ տարբեր ժամանակաշրջաններում, տարբեր անվան և ձևի տակ, մեծապես դժվարացրել է մեր ցեղի չուն՝ իր հավիտենականի ճամբի վրա: Ահա՛ թե ինչո՛ւ նա

ներքին չարիքին մոտենում է ոչ թե մակերեսայնորեն, այլ ապրելու մեր ողբերգության խորությունը, գիտակցում է, որ հայ կյանքի հազար գլխանի չարիքը կվերանա մեր ճակատագրի բոլոր հանգույցների քակումով - Միացյալ և Անկախ Հայրենիքի ստեղծումով միայն:

Ամերիկահայ դաշնակցականը գաղափարական կյանք ունի, ինչպես և զգացումների մեծ հարստություն, բայց չի սիրում լաց լինել անցյալի վրա և ամեն բանում անցյալն օրինակել: Նրա մեջ նկատվում է հոգեկան մեծ լարվածություն: Դրա հետ՝ նա անասելիորեն ընկերահաղորդ է: Ցանոթ դատավարության[41] օրերին մեր շարքերը - պատի՛վ իրենց - հսկումի ամիսներ բոլորեցին:

Նա չի հավատում թղթե բանաձևերի «փրկչական» զորության, ինչպես՝ նպաստավոր պայմանների «կախարդական» ուժին՝ - նա աշխատում է, աշխատում, և աշխատո՛ւմ:

Իրեն պարտադրված պայքարում նա ցուցահանեց հոգեբանական խորին հասունություն: Նա մի հատիկ չափանիշ ունի - դաշնակցական բարոյականը: «Դու պետք չէ՛ անես այն, ինչ կարող է վնասել Դաշնակցության» - նրա համար ասել է՝ «դու պետք չէ՛ անես այն, ինչ կարող է վնասել ազգիդ»:

Նրա կյանքի ամենախռովիչ հարցն է - Հայաստանից դուրս ես ապրո՞ւմ եմ այնպես, ինչպես որ պե՛տք է ապրել հավիտենական հայ մարդուն: Եվ նա գիտի, որ այս հարցի լուծումը պետք չէ փնտրել շրջապատի աննպաստ պայմանների, այլ՝ իր ցեղային գիտակցության մեջ: Նա գիտի նաև, որ այդ հարցի լուծումից է կախված իր ծարավ գոյամարտի ելքը՝ հաջող թե անհաջող:

Նա անասելիորեն հպարտ է իր երեք «Հայրենիք»ների - երեք ազգային օրհնություններ ամերիկահայության համար - որոնցով հաջողել է օտար հեռավոր ափերի վրա իր աննյութեղեն հայրենիքն ստեղծել:

Հոգեբանական հարմարումն անծանոթ է նրան - ցեղակրոնությունը վկա: Հավանականություն և հատվածականություն չգիտի, նա համահայ է: Հայնեյի հայրենապաշտ զորականն է, որ հայրենիքից դուրս՝ տոչորվում է իր հողի կարոտով և դժվարանում է մեռնել: Մինչ հակադաշնակցականը վատաբար երգում է կոմունիստական գրականությունից առնված հետևյալ տողերը. «Միևնո՛ւյն է - հանգիստ կպառկեմ և օտարության մեջ, հողն այստեղ, թե այնտեղ - միևնո՛ւյն է»: Հայրենի կարոտը ոչ միայն ամերիկահայ դաշնակցականին պահում է պանդուխտի հոգեվիճակում, այլև մղում է նրան տառապել նաև՛ մեռած հարազատի գերեզմանի պանդխտությունից:

Դաշնակցական Բաբկեն Տեր Մանվելյանի ցեղակրոն զավակնե՛րն էին, որ իրենց հոր գերեզմանից ինձ «ափ մը հող» տալով, ասացին - «Եթե հնարավոր չէ Հայաստանի հողին՝ գեթ խառնեք Քրիստափորի գերեզմանի հողին»:

Հենց ա՛յդ է դաշնակցականությունը:

X
ՑԵՂԱԿՐՈՆ ՈՒԽՏԵՐ

«Ես հազար անգամ հանձն պիտի առնեի բռնության վտանգը,քան՝ ցեղիս այլասերումը»:
ԳԱՆԴԻ

«Հայ կյանքը, սակայն, ունի և՛ մի ուրիշ կողմ, ուր տեղի է ունենում ցեղի ոգու նոր շարժը, ուր հոգիների մեջ սկսել է հոսել թրքատյացությունը որպես հրեղեն հեղեղ, նույնքա՛ն զորավոր, որքան ցեղապաշտությունը մեր: Մեր կյանքի այդ բաժնում հայ տառապանքն ու ամոթանքը միացած, նախապատրաստում են ծնունդը նոր հայի: Մեր տիտանական ցավից ծնունդ է առնում մի նոր կրոն - հպարտության կրոնը: Իր սեփական տառապանքի մեջ մկրտված հա՛յն է աշխարհ գալիս: Նա իջնում է ցեղի ոգու բարձունքներից՝ ցեղի խոսքը շրթունքներին: Նա սեր է ավետարանում, սե՛ր դեպի ինքնակառուցում՝ ինքնահաղթահարումի ճամբով: Եվ մահ է քարոզում, մա՛հ հայ տկարությունը սնուցանող բոլոր չաստվածներին՝ հին ու նոր: Նա գալիս է վերականգնելու մեծությունը հայ անունի, որ այնքան հայհոյված է այսօր:

Չէ՛ այլևս չի կարելի այսպես ապրել, քանզի աննախընթացորեն սպանիչ է մեր նվաստությունը - այս ցնցող գիտակցությունից ծնունդ առած աշխարհ է գալիս ցեղային բարոյականով մյուռոնված հայը: Նա՛, որ ներուժ կերպով ապրած է մեր ժողովրդին վիճակված ողբերգությունն ու ամոթանքը - նո՛ր հայը, որի դրոշակից վաղը պիտի կախվի մեր ցեղի հաղթանակը: Այդ օրվա համար է ապրում և գործում դաշնակցականը: Դեռ իր լինելիության մեջ է Դաշնակցությունը - նա դեռ չի ասել իր վերջին խոսքը:

Ահա՛ թե ինչո՞ւ եմ ասում՝ օրհնի՛ր ճակատագիրը, որ հայ ես ծնած, բայց որպեսզի օտար ափերի վրա հայ մնաս, եղի՛ր դաշնակցական» («Ցեղի ոգու շարժը»):

Այսպես էի գրում ընդամենը երեք տարի առաջ: Նախատեսում էի ծնունդը նոր հայի: Սպասում էի ցեղահայտնության: Եվ հայտնվեց ցեղակրոնը:

Ընթերցո՛ղ, ճանաչո՞ւմ ես ամերիկահայ ցեղակրոններին, որոնք անճառելի քաղցրությամբ ասում են իրենց մասին՝ «մենք լեգիոն ենք». որոնց ցեղականչ «Լսի՛ր»ը զրնգում է որպես բարձր զանգակա-

տնից իջնող դողանջ և Մեծ Ուխտի առջև ծռում հազարավոր ծունկեր, խոնարհեցնում հազարավոր ճակատներ, սարսռեցնում հազարավոր սրտեր: Ճանաչո՞ւմ ես ամերիկահայ ցեղապսակ սերունդը, որն աշխատում է դառնալ արդարության գործիք այն խուժ ազգի դեմ, որ փորձեց գոյության գրքից մեր ցեղի անունը սրբել:

«Հայերը հպարտ զգալու որչա՞փ իրավունք ունեն, եթե անգամ գիտնան, թե իրենք փառապանծ անցյալ՝ են ունեցել: Բայց չգիտեն, դժբախտաբար»:

Անգլիական արդի մեծագույն մարդաբաններից պրոֆ. Հետտնի այս խոսքին, որպես պատասխան, ամերիկահայ նորահաս սերունդը հայտարարում է՝ «Ես ճանաչում եմ իմ ցեղը, ես հավատում եմ իմ ցեղին, ես պաշտում եմ իմ ցեղը, ես ցեղակրոն եմ»:

Նա հայտարարում է, որ այլևս ըմբռնել է էմրսնի խոսքի իմաստը, թե "Every man is un bundle of his ansestors". նա սկսել է հասկանալ, որ ամեն անհատ իր նախահայրերի կծիկն է, նա ըմբռնել է ժառանգականության օրենքի այն ուժը, որով նախահայրերի զորությունը փոխանցվում է անհատին, որպես կենսաբանական կարողականություններ. նա ըմբռնել է, որ մարդկային բոլոր կենսակարողությունները միայն ցեղի արևի տակ են ծլում, ծաղկում և բացվում:

Նա հասկացել է, թե՝ ցեղը և ժամանակը հավիտենակից են. թե՝ անանց է ցեղի ազդեցությունը. թե՝ ցեղն է ժողովրդի ուժերի աղբյուրը. թե՝ մարդկորեն և ազգայնորեն զորավոր է նա՝, ու ազատ է ասելու - ցեղիս զավակն եմ և ահա՝, օտարության մեջ իսկ, ի՛ր կաթը կծծեմ: Նա հասկացել է, թե՝ անհատը կտրվելով իր ցեղից, իր գոյության նախաղբյուրից - ապրելով մեկուսի, առնվազն դժվարացնում է իր հոգևոր աճումը: Եվ ընդհակառակն՝ մնալով մշտահաղորդ ցեղի գերագույն ուժերին - նա՝ անհատը ապրում ու ապրեցնում է ցեղի հավիտենական արժեքները և հենց դրանով էլ նպաստում է իր հոգեկան ինքնահսկայացումին:

Նա սկսել է հասկանալ, թե անհատների և ժողովուրդների վերելքն ու անկումը պայմանավորվում են իրենց հարազատ ցեղի մասին կազմած ըմբռնումով: Որքա՛ն բարձր է անհատների և ժողովուրդների հասկացողությունը իրենց գերագույն ծնողի - ցեղի մասին - նույնքան հոգեպես կայտառ, զորավոր, ստեղծագործ են նրանք: Ժողովուրդների բարոյականը, որոնց հոգևոր կեցվացքը, պայմանավորվում են նույնպե՛ս իրենց ցեղի մասին կազմած պատկերումով: Եվ հենց այս պատկերումը, ցեղաճանաչումի այդ հոգևոր հայելիացումն է կռում ու կոփում ժողովուրդների նկարագիրը, որով և ճակատագիրը:

«Ես ցեղակրո՛ն եմ»,- այսպես են խոսում Նոր Աշխարհի հայ մանուկը, պատանին, երիտասարդը- մեր ցեղի բարեկամներին՝ ուրախություն և թշնամիներին՝ ցավ պատճառելով:

Այսօր, երբ հայ ճակատագրի վերև կախված է եռագլխանի վտանգը - թուրքը, բոլշևիզմը և հակաազատագրական տարրերի պարտվողականությունը - ամերիկահայ նորահաս սերունդը ճիգեր է թափում հանդիսանալու կենտրոնը՝ ցեղային ուժի, քաջառողջության և գեղեցկության:

Այսօր, երբ բոլշևիկները՝ հայության տականքն իրենց տապարին կոթ դարձրած, փորձում են մեր ցեղի հոգևոր անտառը կտրել՝ ամերիկահայ ցեղակրոնությունը ճիգ է թափում իր ուխտերի միջոցով կյանքի կոչել կրոնա-քաղաքական կաշկանդումներից զերծ ամբողջական հայը, նո՛ր հայը, որն իզորու է դիմանալ մերօրյա աշխարհի քայքայիչ պայմաններին: Նա ցեղաճանաչ է, նա գիտակցում է, որ իր ցեղը ամենադաժան պայմաններում իսկ եղել է և մնում է ինքնատիպ ստեղծագործող, որ ինքը զավակն է այն մեծ նախահայրերի, որոնք հոգևարելիս լալիս էին, որ չեն մեռնում ձիու վրա՝ գոռ ճակատամարտում: Նա գիտակցում է, որ ինքը ցեղային բողբոջն է սրտի, մտքի և կամքի այն հսկաների, որոնք մի հատիկ փառք ճանաչեցին.- «Պատվո վերքերով զարդարել իրենց մարմինները և կռիվներում իրենց ճակատի քրտինքը սրբել նիզակներով»:

Քիչ է խոսում ցեղակրոնը, որովհետև գործնապաշտ է, ջանապաշտ, որովհետև «ջանքն է որ իրապես մեր մեջ ստեղծում է նոր էակը, մարդկային անասունի մեջ պատրաստում մարդու հայտնությունը և մարդու մեջ դյուցազնի արշալույսը»: Նա խոսում է՝ ուսանելու և ուսուցանելու համար, իսկ ուսանում և ուսուցանում է գործելու համար: Նա այնպես է խոսում, որ իր ձայնի մեջ իր ունկնդիրները իր ցեղի ձայնը լսեն: Նա խոսում է այնպես՝ որ իր լսարանը զգա թե կա գերագույն հեղինակությունը - ցե՛ղը, որ խոսում է ցեղակրոնի շրթունքներով: Ցեղային ինքնահարգանք, ինքնակարողություն և նկարագիր - ահա թե ի՞նչ է մշակում ցեղակրոնը իր մեջ:

Ասված է՝ «Ամերիկան կաշխատի, աշխատությունը կպատվի և գիտի այն կազմակերպել»: Նույնը կարելի է ասել և՝ ցեղակրոնի մասին: Նա իր գործն անթերի կերպով կատարելու կամք ունի: Նա ատում է անաշխատությունը և արհամարհում անջանությունը: Լեցուն քսակի սնոտի հպարտության փոխարեն՝ նրա մեծագույն հպարտանքն է դժվարություններ հաղթահարել:

Ամերիկյան միջավայրում, նրան գրավողը երկնամերձ շենքերն ու տիտանական կամուրջները չեն, այլ ամերիկացու ընկերա-մարդկային ճիգը, որի ծնունդն է իր նյութական վիթխարի քաղաքակրթությունը:

Ցեղակրոնը սկզբունքի բարձրության է հասցրել իր ժամանակը օգտակարապես գործածելով ձևը: Նա ունի իր սրբավայրը - իր ուխտը-

որում նա կռվում ու կոփում է հարանվանական, դասակարգային և ընկերային եսականություններից զերծ նո՛ր հայը:

Ցեղակրոնը չի սիրում նրանց, որոնք ցեղը սիրում են իրենց զգացումի ուժով, բայց մտքի տկարությամբ, ինչպես և նրա՛նց, որոնք սիրում են մտքի ուժով, բայց կամքի տկարությամբ: Ցեղակրոնը նրա՛նց հետ է, որոնք ցեղը սիրում են իրենց անհատականության բովանդակ ուժով - մտքի, զգացումի և կամքի բովանդակ թափով:

Ցեղակրոնի համար հայ կոչվելու արժանի չէ նա, ո՛վ մեր երկրագնդի վրա հայ անունից ավելի մի ա՛յլ բան է սիրում: Ցեղակրոնը՝ իր կյանքից ավելի իր ցեղն է սիրում:

Օտար միջավայրի գունատ արտացոլումը, թե ցեղակրոնը, այլ հայ ցեղայնության ճառագայթումն՝ օտար հորիզոնների տակ: Նա համակված է պարտականության խոր գիտակցությամբ՝ նրա՛նց հանդեպ, որոնք էի՛ն և չկան և նրանց՝ որոնք չկան, բայց պիտի գան: Ա՛յդ իսկ պատճառով՝ նա ապրում է ավելի բարձր կյանքով, նա իր կյանքին միացնում է անցյալի խորհուրդը և ապագայի հմայքը:

Նրա կյանքում ավելի գեղեցկություն, ուրախություն և քաղցրություն կա: Եթե ամեն ոք, ինչպես ասում է Շիլլերը՝ իր մեջ կրում է մի իդեալական մարդ - ապա՝ ամերիկահայ ցեղակրոն սերունդը իր մեջ կրում է վաղվա անխառն ցեղամարդը:

Իմ արյունի մեջ, ասում է ցեղակրոնը, կան ու կմնան հետքեր Անիի՛ց, Մամիկոնյանների՛ց, Մայիս 28-ի սերունդից - իմ ցեղի մեծությունից:

Այդ իսկ պատճառով՝ բոլոր հայրենիքներից և քաղաքական սահմաններից ներս՝ նա մնում է հպատա՛կն իր ցեղի:

Նա ձգտում է՝

ա) Ցեղակրոնության միջոցով զարգացնել իր մեջ այն բարոյակենսաբանական հատկությունները, որոնք կերտած են մեր ցեղի դիմագծությունը:

բ) Հայկական դրական ուժերը վերածել կենդանի ուժի:

գ) Կյանքի կոչել հոգևորապես և կենսաբանորեն զորավոր հայը, որպիսին պահանջում է իրերի նոր վիճակը գաղթաշխարհում՝ առաջ եկած մեր տեղահանության, կոտորածների բերումով:

դ) Աճեցնել օտար այլասերիչ ազդեցությանը հակազդող հայ ոգու դիմադրողական ուժը:

Ասենք, որ ցեղակրոնը չի սիրում լսել միջավայրի այլասերիչ ազդեցության մասին: Այո՛, դա ազդում է, բայց դա անզոր կլինի սպանել ինձ, քեզ, նրան, եթե մենք ապրում ենք ցեղորեն:

Ցեղերի պատմությունը մեզ սովորեցնում է, թե առանձին մարդը, ինչպես և ժողովուրդը այնքան հզոր է և արդյունազոր, որքան իր էությունը բաց է իր ցեղի հոգևոր մակընթացության առջև:

Ցեղակրոնը չի սիրում ցեղորեն անկերպարանքը, նվաստը և վախկոտը- մասնավորապես այդ վերջինը: Այդ իսկ պատճառով ցեղակրոն ուխտերի մեջ խստիվ արգելված է «մի՛ վախենար» խոսքը: Վախենալ մեկի համար՝ ցեղակրոնի հասկացողությամբ՝ ասել է թշնամանել նրան:

Վախը ենթակային դարձնում է անակտիվ, ինքնապաշտպանվելու անկարող. դա սպանում է նրա պայքարելու կամքն և խղճմտանքի անկախությունը, կարճ՝ ամե՛ն վսեմ զգացում: Նա հաճախ անհատների միջոցով հոգեպես հարվածում է, կազմալուծում ազգը: Ըստ ցեղաբանների - վախի թագավորությունը տարածվում է մինչև ցեղերը: Դա արտահայտվում է կա՛մ տարերայնորեն, կամ պարբերաբար: Վերջին ախտանշական ձևը - նախերգանքն է ցեղի հոգեվարքի: Դա նշան է, որ ազգն այլևս ազգ չէ, այլ մարդկային նախիր:

Իսկ նախրանում են ազգերը, երբ մնում են անցեղահաղորդ: Երբ ցեղահաղորդ չէ ազգը՝ նրա մեջ ցեղի ուժերը - Տիգրան, Վարդան, Վահան կամ Մեսրոպ, Նարեկացի, Շնորհալի - մնում են քնած:

Ցեղակրոնությունը գալիս է հրահրելու այդ ուժերի զարթոնքը և նրանց արտահայտություն տալու:

Ցեղային կարողությունների և առաքինությունների զգացումն ու արտահայտությունը պահանջում են որոշ հոգեբանական մթնոլորտ: Ցեղակրոնությունը ձգտում է հենց այդ մթնոլորտը ստեղծել:

Նա ճգնում է աշխարհ բերել ցեղամարդը - ամբողջակա՛ն հայ մարդը - որի մեջ և միջոցով պիտի արտահայտվեն ցեղի բովանդակ դրական ուժերն ու հատկությունները:

Անցեղահաղորդը քարշ է տալիս իր մանր և պարզ գոյությունը: Նա չի ճանաչում ավելի բարձր և ընդարձակա-հո-րիզոն կյանք: Նմանը տկար է և դժբախտ, քանզի դեռ չի զգացել իր միությունը ցեղի հետ: Նաև երկչոտ է անցեղապաշտը, որովհետև չգիտի օգտվել իր էության մեջ մթերված կենսաբանական և հոգևոր ուժի ակնաղբյուրից, նրա շտեմարանից - իր ցեղի ուժից:

* * *

Երկար այն ճամբան, որ մեր ցեղն է կտրել, անցել, իրավունք է տալիս ցեղակրոնին հավատալու, որ դա հյութասպառ եղած չի, որ ընդհակառակը, նրա հողը անախտ է, մաքուր, իսկ հունտը՝ ազնիվ, զորավոր: Ցեղակրոնը լավատես է խորապես և, հավատում է իր գործին: Նա սովորելու կամք - ավելի՛ն իմանալու և կարողանալու ծարավ ունի: Նրա պրոպագանդան առավելապես անձնական օրինակի պրոպագանդա է: Նոր ուխտակից գտնել - ահա՛ մի գործ, որի մեջ ցեղակրոնը հոգնել չգիտի: Նա համոզված է իր դավանանքի փրկարար ճշմարտության: Նա տառապում է՝ տեսնելով ցեղի ստինքից կտրված հայ մանուկը, պատանին, երիտասարդը: Ոգեկոչական է ցեղակրոնի

խոսքը՝ խռվիչ, հոգեփոխող և՝ նոր ապրումի ու հոգևոր լիության սնուցիչ: Չէ՞ որ ցեղն է նրա հոգևոր կյանքի աղբյուրը: Ցեղաշունչ է իր խոսքը. դա խորհել է ստիպում: Նա չի սիրում պայքարի մտնել հին սերունդի - իր նախորդների թողած զենքերով միայն, նա գիտակցում է, թե՝ անարդիական զենք, ասել է անզինություն, անզեն բազուկ: Նա աշխատում է գիտության զինարանից առնել իր կռվի զենքերը: Այսպես վարվելով հանդերձ, նա չի մոռանում, որ «մարդը ի՛նքն է իր առաջին զենքը»:

Հաղթել՝ ասել է գերազանցել: Գերազանցելու ճիգ է ցեղակրոնությունը: Պե՛տք է գերազանցել իր ցեղի արտաքին թշնամիներին, իսկ այդ բանում հաջողելու համար՝ պետք է գերազանցել իր նախորդ սերունդին: Այդպիսով միայն ճշմարտորեն հարգած կլինենք մեր նախորդներին: Բավական չէ հիացիկ վերաբերմունք, անգա՛մ պաշտամունք ունենալ դեպի անցյալ սերունդը - պե՛տք է գերազանցել նրան: Հենց սա է կյանքի առաջադիմության օրենքը, և հարգանքի այն պսակը, որ յուրաքանչյուր հետնորդ պարտավոր է դնել նախնյաց հիշատակների կոթողին:

Ցեղակրոնի համար չկա ավելի մեծ վատություն, քան հոգևոր խզումը սերունդների միջև: Նորահաս սերունդը կտրվե՞ց անցնող, կամ անցած գնացած սերունդներից- նա էապես կտրվում է մինչ այդ գոյություն ունեցող ցեղի արժեքներից ու սրբություններից, կրոնից ու բարոյականից: Հին սերունդից կտրվողը դառնում է հոգեպես անհող և անուղի: Էականը հոգեհաղորդակցությունն է սերունդների միջև, որի շնորհիվ վերջինները փոխանցում են ցեղի հավիտենական բոցը, ինչպես մոմը բոց է առնում մոմից: Անդարմանելի չարիք է հոգեխզումը ժողովուրդների կյանքում՝ հին և նոր սերունդի միջև, որովհետև մեկ է, միևնո՛ւյն է, օրգանապես իրար կապված աղանդության, բարոյականի և արժեքների խախտման հոգեբանական հիմքը:

* * *

Գերազանցորեն հայկական է ցեղակրոնության գաղափարը: Այդ շարժումը կաղապարված է մեր ցեղի էության վրա: Դեռ խոսք չկար ֆաշիզմի և հիտլերականության մասին, երբ ցեղակրոնության գաղափարը 1919ին ոտքի էր հանել մեր Դավիթ Բեկյան ուխտերը Սյունյաց աշխարհում, այն ուխտերը, որոնց զարկերի տակ փրկվեց բազմահազար հայ մտավորականությունը բոլշևիկյան տապարից, ինչպես և Ադրբեջանին թողնված հայոց լեռնաշխարհը ճանաչվեց որպես Հայաստանի անբաժան մասը: Փոխառիկ գաղափարները - սոցիալիզմ, կոմունիզմ - չե՛ն փրկի մեզ, նրանք օտարներից փոխ առնված տեսաբանական զգեստներ են, որոնք այնքան են խոսում մեր հոգուն, մեր արյունին, որքան սովորական զգեստը՝ մեր մարմնին:

Ցեղակրոնություն ասելով՝ Լեռնահայաստանում ժամանակին հասկանում էին ցեղային առյուծություն: Ամերիկայի մեր ուխտերի խորհրդանշանն էլ առյուծն է, որ վեդական կրոնի մեջ խոհրդանշում էր երեք բան՝ կռիվ թշնամու դեմ, պաշտամունքի հասնող սեր և գերագույն հրաժարում անձնական «ես»ից: Իսկ բագրատունյան զինվորի համար, Անիի շրջանի, առյուծը խորհրդանշում էր՝ հայ մարդու հավատը դեպի իր ցեղի ուժը:

* * *

Ցեղակրոնությունը - հաջողապես ուղղված այս շարժումը դարձել է մի դպրոց ամերիկահայ նորահաս սերունդի համար: Դա՝ ամերիկահայության ցեղահոգ «եղիցի՛ն» է:

Ցեղի հետքերով - ահա՛ թե ի՞նչ ասել է ցեղակրոնություն: Ցե՛ղը, ցեղային արյունը, ցեղի կա՛մքը՝ աստվածացված - ահա՛ դա՛ մի այլ բացատրությամբ: Դա ասել է՝ խանդավառ ծառայություն և հնազանդություն ցեղին. դա պաշտամունքն է ցեղի - իր ուժի, հանճարի և բազուկի: Դա մեր հավատն է՝ դեպի մեր ցեղի կարողությունները:

Պաշտել ցեղը, ասել է՝ բոլորանվեր հանձնվել ցեղի կամքին և աշխատել, որ այդ կամքը դառնա ինքնազոր և հաղթական: Ցեղակրոնը - ներկայացուցիչը իր ցեղի ոգու - դավանումը թե՝ Հայաստանն է՛ր, է՛ և պիտի մնա՛ մինչև վախճանը ժամանակների:

Ցեղակրոնը, որի պաշտամունքի տարրերն են - ցեղային հանճար, ուժ և արիություն - իր մեջ մշակում է զորության մարդը: Նրա մոտ կենդանի է ուժի զգացումը:

Նա զգում է, որ մոտենում է օրը՝ վերջին վճռական ճակատամարտի, որի համար չի ուզում անպատրաստ գտնվել:

Ցեղակրոնը, դա հայն է՝ նոր կենսազգացողությամբ, հա՛յը, որ իր մեջ սկսել է զգալ հայ երկրի ընդերքում քնած երկաթը: Հա՛յը, որի էության մեջ ցեղի առյուծ-կամքն է արթնացել- ճակատելով, նորաստեղծելու, հավերժանալու կամքը:

Հոգով արծիվ հայն է դա, որ նոր է իջել ցեղի պատմության բարձունքներից և ահա՛ թևահարում է վերստին դեպի վե՛ր, դեպի հայոց պատմության կատարները: Դա գորշ առօրյայից, կյանքի թմբիրից, հոգևոր մեռելությունից արթնցած հա՛յն է, որ շնչում է խոր, որի աչքերը վառվում են նոր հույսի խանդից, որն իր կրծքի տակ զգացել է իր ցեղային ուժերի ալեկոծվող ծովը, որը՝ նոր կենսազգացությամբ՝ ապրում է մի նոր կյանք - ուժի, արիության և հպարտանքի: Դա վահագնապա՛շտ հայն է- ուժապա՛շտը, զոհապա՛շտը: Ցեղահոգ Հա՛յն է դա, որ հայտարարեց - «Լոզա՞նը - ո՛չ, երբե՛ք»: Նա՛, որ զայրույթով մերժում է աշխարհի անիրավության դատակնիքը իր ցեղի ճակատագրի մասին: Ցեղապրումի ընդունակ հայն է դա, որ մի օր իր աչքը օտար հորիզոններից դարձրեց դեպի մեր երկիրը - մտասուզվեց մեր պատմության

ալեծուփ օվկիանում, և մեր ցեղի կյանքի մագաղաթին նայելով, իր էության խորքից աղաղակեց,-

«Ես կարդացի ցեղիս թողած աստվածային հետքերը երկրագնդի վրա, տեսա, համբուրեցի, պաշտեցի - ես դարձա ցեղակրոն»:

XI
ՑԵՂԱԿՐՈՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՄՔԸ

(Մի հատված իմ «Ցեղային Արթնություն» հոդվածաշարքից)

Մի ժողովուրդ, որ ինքն իրեն դեռ չի նվաճել - իսկ ինքնանվաճումը հնարավոր է ինքնաճանաչումի ճամբով միայն - ընդունակ չէ՛, արժանի չէ՛ մեծագործությունների:

Ժողովուրդների - ասենք և մի ա՛յլ ճշմարտություն - հոգևոր արդյունազորությունը մե՛ծ է այնքան, որքան բյուրեղացած, պայծառացած է նրանց ցեղային գիտակցությունը, որքան բացահայտված է նրանց նախաէությունը, հոգի՛ն:

Հազար խորհուրդ ունի հայ հոգին, որ իր խանդավառ մարգարեին է սպասում, որը պիտի հայտնվի մի օր և այն բացահայտ է մեզ:

Հայությունը ցեղաճանաչությամբ միայն կարելիություն պիտի ստանա իր էության չգիտակցված ուժերը լծելու իր ցեղին վիճակված անհավասար գոյամարտի գործին: Այո՛, դեռ ցեղաճանաչ չենք, դեռ կանչում ենք մեզ, ձայն ենք տալիս, փնտրում, բայց դեռ չենք գտել մեզ, դեռ չենք ճանաչել մեզ, որպես ցեղ:

Փնտրում ենք Հավիտենական Հայը, փնտրում ենք նրան իր հեթանոս դարերում, իր քրիստոնեության մեջ, իր պատմության լույսի տակ, իր գրականության մեջ, իր իմաստասիրության և ծարավ ճակատամարտերի, իր ինքնիշխանության և ստրկության, իր կոտորածների, արտագաղթերի և հայրենաշինության մեջ - փնտրում ենք նրան իր բնաշխարհում և օտար հորիզոնների տակ, փնտրում ենք, բայց դեռ չենք գտել: Գիտենք, սակայն, որ միայն ինքնաճանաչությամբ կարելի է տիրապետել այն տարերքին, որ հավիտենական է հայ էության մեջ - մեր ցեղայնությա՛ն:

Ցեղորեն անինքնաճանաչ՝ դեռ կույր հայ հոգու խորքերում, և այդ իսկ պատճառով՝ անզոր մերօրյա ճակատագրական խնդիրների առջև, որպես ժողովուրդ, մենք շարունակում ենք մնալ նվաստ ու նահատակ, երբ աշխարհը պահանջում է լինել ինքնահարգ և հարգանք պարտադրելու աստիճան զորավոր:

Անասելիորեն զորութենական՝ բայց դեռ իր ինքնահաղթահարումը գլուխ չհանած՝ հայ էությունը իր անսպառելի շինարարական եռանդը մսխում է ընդունայն: Մեր ժողովուրդը դեռ շարունակում է արյունի տուրք տալ իր ցեղային անինքնաճանաչության: Ա՜հ, դեռ

շարունակվում է հայոց ողբերգությունը, - մի անօրինակ ողբերգություն, որ մեր ազգային ուժի և հպարտության փոխարեն՝ մեր տկարությունն ու նվաստությունն է սնուցանում: Արդ՝ մեկնելով այն կենսաբանական ճշմարտությունից, թե՝ երբ ժողովուրդների մեջ տկարանում է ցեղի շունչը - սկսվում է նվազիլ սերունդների կենսունակությունը, հոգեպես մանրանում են անհատները, շեշտվում է նրանց վատասերումը և վրա է հասնում անժամանակ զառամություն, - մեկնելով այդ ճշմարտությունից՝ քե՛զ, նորահաս սերունդ, ցեղիդ ձայնն եմ բերում: Ես քեզ ցեղակրոնություն եմ քարոզում: Ցեղակրոնություն, որով անհայրենիք հայությունը հոգևոր զրահ կհագնի՝ օտար միջավայրերի այլասերիչ ազդեցություններին հաջողապես դեմ դնելու համար:

Այդ դավանանքը, քո միակ դավանանքը, որևէ հանգիտություն չունի այլ վարդապետությունների հետ, իսկ եթե կրոն է դա, ապա դա կրո՛նն է ցեղային հպարտության, ուժի և արիության, դա կրոնն է հայ նորահաս սերունդի:

* * *

Ցեղակրոնությո՛ւն -

Լոզանում և Լոզանից հետո, անասելիորեն վիրավորված, զարնված անարգանքի փոշիների մեջ, իր խորքի մեջ ապտակված, ցնցված հայ հոգու ծնունդն է դա:

Չէ՛, այլևս այսպես ապրել չի՛ կարելի, ապրել առանց սեփական իրավունքի, արժեքի և արժանիքի գիտակցության, առանց ներքին հպարտության - առանց սեփական կյանքի – չէ՛, այսպես չի՛ ուզում ապրել նորահաս սերունդը:

Անցեղաճանաչ՝ անզոր ու նվաստ է հի՛նը. մեզ պետք է նո՛ր հայը, որին սպասում ենք ցեղակրոնությունից: Մեզ պետք է ցեղակրոն հայը, որ զորեղ դիմանա մերօրյա քաղաքական աշխարհին:

Ցեղակրոնությո՛ւն -

Ցեղիս ճանաչումն է դա, ճանաչումը մի գերիվերո ուժի, էության.

Երկրորդ՝ այդ ուժ-էությունից ծնած լինելուս գիտակցությունն է դա.

Ապա՝ այդ ուժ-էության ցմահ հավատարիմ մնալուս ուխտն է դա:

Ա.

Ես ցեղակրոն եմ -

Եվ ահա՝ կերդվեմ Վահագնի աջի վրա երբեք չմեղան-չել ուխտիս դեմ- ապրել, գործել ու մեռնել որպես ցեղամարդ:

Բ.

Ինձ համար անհատականության և ազատության ամենաբարձր արարքը - դա հնազանդվելն է ցեղիս:

Գ.

Ես ցեղաճանաչ եմ, և ահա՛ գիտեմ, թե մե՛ծ է իմ ցեղը, թե իմ ցեղն ավելի՛ն է տվել մարդկության, քան ստացել է նրանից. գիտեմ, որ հայոց նորագույն հեղափոխությունը վերջին գործը չէ իմ ցեղի էության. գիտեմ, թե ի՞նչ բաների ատակ է իմ ցեղը:

Դ.

Ես ցեղահավատ եմ, և ահա՛ պաշտում եմ և՛ մի այլ աստվածություն - ցեղիս արյո՛ւնը, որի անարատության մեջ է իմ ցեղի ապագան:

Ե.

Ես ցեղահաղորդ եմ, և ահա՛ զգում եմ, որ իմ անձը ավելի՛ իմ գերագույն ծնողին - իմ ցեղին է պատկանում, քան իմ անմիջական ծնողներին:

Զ.

Իմ ժողովրդի քաղաքական ճակատագրով զբաղվելու պարտականություն ունեմ ես, և ահա՛ պայքարում եմ մի մեծ ճակատագրի համար, որին արժանի է իմ ցեղը:

Է.

Ցեղակրոն ե՛մ, ասել է՝ ուր էլ որ լինեմ, ընկերային ինչ դիրք էլ որ ունենամ, ես խանդավառորեն կմնամ հպատակն ու մարտիկն իմ ցեղի:

Ը.

Հայաստանից դուրս, սփյուռքի մեջ, ի՛նչ վիճակում էլ որ լինեմ՝ մեծահարուստ, բարեկեցիկ, թե օրավարձով աշխատող բանվոր՝ անդարձ պանդխտություն չեմ համարի տարագրի կյանքս: Չէ՛, վերադարձ կա:

Թ.

Կդավանեմ, որ իմ սերունդը ավելի՛ մեծ պարտականություն ունի, քան ուներ անցնող ազատագրական սերունդը: Պարտականության մեջ՝ ցեղակրոնի իմ բաժինը - առյուծի բաժինն է, ամենամե՛ծը:

Ժ.

Ցեղակրոնը, որի նշանբանն է - ավելի՛, է՛լ ավելի զորություն - պաշտամունք ունի իր ցեղի մարտական ուժի, իմա՛ Հայ Յեղ. Դաշնակցության հանդեպ:

ԺԱ.

Զոհապաշտ եմ ես, և ահա՛ երկյուղածորեն կոգեկոչեմ նրանց, որոնց պաշտամունքը հավիտենական է, որոնք առյուծացան իրենց արիության մեջ, աստվածացան իրենց հոյակապ նվիրումի մեջ - որոնք իրենց արյունը շռայլեցին մեր ցեղի գոյությունը և պատիվը հավիտենականացնելու համար:

ԺԲ.

Ցեղակրոնն էլ է ձգտում երջանկության - տեսնել թե ինչպէ՞ս աճում է իր ժողովրդի զորությունը և արդարորեն ընդարձակվում է Հայաստանը:

ԺԳ.

Ցեղով է ապրում, ստեղծագործում և հավերժանում ժողովուրդը: Մարդկային մշակույթի գործում զորութենական ուժ է ցեղայնությունը: Արդ, թե ինչու ցեղային անհատականության եղծումը՝ ցեղակրոնը համարում է ոճիր՝ ուղղված մարդկության և, ի մասնավորի, իր ժողովրդի դեմ:

ԺԴ.

Ցեղակրոնը խորշում է այն բոլոր վարդապետություններից և հոսանքներից, որոնք միտում են մեր նորահաս սերունդը հեռու պահել ցեղի կազդուրիչ ստինքից - կաթից:

Նա խորշում է հայ իրականության մեջ եռացող այն բոլոր ուժերից, որոնք թեպետև հասարակական դիրքով հակոտնյա, բայց ընդհանուր հոգեբանությամբ միացած ճակատ է հարդարած մեր լուսավոր ազգայնականության դեմ:

Ավելի՛ պարզ: Ազգայնականության երկու ձևերից- ազգայնական անհատապաշտություն և եսապաշտություն- ցեղակրոնը ողջունում է առաջինը, որն այլ բան չէ, եթե ոչ ազգանհատի արդար և արգասավոր ձգտումը՝ հավատարիմ մնալ իր ցեղի ոգուն, կատարելագործել իր պատմական տիպը, և պաշտպանել իր հավաքական անձի ազատությունը:

Ցեղակրոնի այդ ձգտումը լիուլի համապատասխանում է համամարդկային բարոյականի և առաջադիմության բարձր սկզբունքներին:

ԺԵ.

Մե՛ծ է ցեղակրոնի իմ թշնամանքը, ինչպես մե՛ծ է իմ պաշտամունքը:

Ցեղիս թշնամիներ են - թուրքը, բոլշևիկը սրանց հայադավ գործակալները, ամեն անվան ու ծպտումի տակ - որոնց վճռաբար կհակադրեմ իմ զորութենական ցեղապաշտությունը:

- Ինձ համար գոյություն ունի հարցերի հարցը՝ հապա բախտահաս թո՞ւրքը:

- Ես խորշում եմ բոլշևիզմից, որովհետև հակամարդկային է: Երիցս ատում եմ դա, որովհետև հակահայ է՝ թուրքի չափ, որովհետև թուրքի հետ զինակցած մտավ Հայաստան, որովհետև նրանից ցայսօր օգտվեց ցեղիս գերեզմանափորը - թո՛ւրքը, միա՛յն թուրքը:

Ցեղադրուժ բոլշևիկը իր շնական հրաժարիմքն ունի.

Ես՝ իմ վճռական այո՛ն՝ ցեղիս.

Նա իր թղթե անզոր եղիցի՛ն ունի.

Ես՝ իմ հանապազորյա ազատագրական աշխատանքը ցեղիս համար:

Զզվելիորեն բացասական է բոլշևիկը, և դիմազուրկ՝ հոգեպես:

Ցեղակրոնը մարդկության ներկայանում է ցեղադրոշմ ճակատով:

ԺԶ.

Պարտվողականություն, կրավորական տառապանք, սարսափի հոգեբանություն, լալկանություն, մտքի անիշխանականություն, կրոնական անդենականություն, դասակարգային և հարանվանական եսականություն - այդ ամենից խորշելով խորշում է ցեղակրոնը:

ԺԷ.

Ցեղակրոն եմ, ասել է՝ պարտեմ, կամեմ, կարող եմ գերազանցել, և պե՛տք է գերազանցեմ ցեղիս թշնամիներին - նա՛խ թուրքին:

ԺԸ.

Ուժապաշտ՝ տկարություն ու նահանջ չի ճանաչում ցեղակրոնը: Նրա մոտ կենդանի է ծարավը՝ ուժի, քաղցրությունը՝ զոհաբերության, և ճիգը՝ ցեղի ուժերի կենտրոնացման:

Արտաշեսյան իր նախնիքների մեծության հետամուտ՝ նա պատկառում է իր ցեղից, և աշխատում ամենուրեք արժանավորապես ներկայացնել դա:

ԺԹ.

Նրա համար նվիրական է հայոց նորագույն քաղաքական գոյառության օրը՝ Մայիս 28-ը և այն խորհրդանշող սրբազան եռագույնը, որ է՝ սրբությո՛ւն, քաղաքական դա՛տ և վախճանաբանությո՛ւն, միաժամանա՛կ:

Ի.

Հայ մարդու հետ ցեղակրոնը խոսում է հայերեն, որովհետև գիտակցում է, թե լեզվի մահը արագացնում է ժողովուրդների հոգևոր մահը:

ԻԱ.

Ինքնամսխումի մեջ ազատ չէ՛ ցեղակրոնը:

Քաջառողջ լինելու իրավունք և պարտականություն ունի նա, որի ձեռքին է եկող սերունդների ճակատագիրը:

ԻԲ.

Նրա համար նախասիրելի են ա՛յն գիտությունները, արվեստներն ու արհեստները, որոնք կարելի է ծառայեցնել իր ցեղի հզորության և հաղթանակին: Ցեղակրոնը՝ մարտիկ է կամ պատրաստվում է դառնալ այդպիսին:

ԻԳ

Անձնական կամքի մշակությամբ՝ ցեղակրոնը սատարում է հայ ոգու հսկայացումին:

Ցեղի կամքի աստվածացումը - ահա՛ թե ինչի է ձգտում նա:

Այդ անմեռ կամքին, ահա՛, որ չմեռավ դաժան դարերի հարվածների տակ, և չթողեց, որ հայության մեջ Մամիկոնյանների ռազմաշունչ ոգին մեռնի, ցեղակրոնն ասում է վճռաբար՝ այո՛ և ամե՛ն:

XII
ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉ
ԱՐԾՎԻԿՆԵՐ

Դուք ուզում եք ծառայել ձեր հայրերի՞ հայրենիքին.
բարի՛. այդ դեպքում ծառայեք ձեր զավակների հայրենիքին:
ՎԻԼԵ

Մանկական դաստիարակությունը, իբրև ազգային խնդիր, այն բովանդակությունն է, որով ազգայնական ամերիկահայությունը շոշափում է իր ապագայի սիրտը: Ազգային դաստիարակության նպատակն է՝ կաղապարել, ձևավորել մանուկի ցեղային գիտակցությունը - այսինքն՝ մարդ էակի կենսաբանական բովանդակությունը կերպադրել, տիպարորեն, ցեղայնորեն:

Մի ժողովրդի ապագան կախված է ցեղային ա՛յն թթխմորից, որ դաստիարակության միջոցով դրվում է մարդ-էակի էության մեջ՝ սրա ամենաճկուն հասակում: Ցեղակրոնության միջոցով՝ ամերիկահայությունը ձգտում է իր մանուկի մեջ զարգացնել հենց ցեղային թթխմորը - ժառանգականության տվյալները:

Մանուկին հատուկ է ամեն ինչ ընդունել անքննադատաբար, մասնավորապես արտադպրոցական նյութերը: Բավական չէ, որ դաս-

տիարակությունը ըստ ձևի և մանկավարժորեն նպատակահար-մար լինի, պետք է նախանձախնդիր լինել հատկապես բովանդա-կության մասին, իսկ դաստիարակության բովանդակությունը-դա հոգե-ցեղային կարելիություններն են: Մեթոդն այն չափով արժեք ունի, ինչ չափով, որ դա նպաստում է բովանդակության հայտնաբերմանը: Ամեն նյութ մանկան գիտակցության համար ձևավորիչ ուժ ունի: Այդ իսկ պատճառով, ամեն բանից առաջ անհրաժեշտ է նյութերի ընտրությունը, իսկ ընտրողն ամեն բանից առաջ նկատի պիտի ունենա մանուկի ցեղա-հոգե-բանական հատկությունները: Նյութը պիտի նպաստի մանուկի զգացական խորության: Պետք է խուսափել բոլոր տեսակի անբովանդակ նյութերից, որոնք եթե չեն քանդում, գեթ թուլացնում են մանուկի հոգևոր կարողությունները:

Մեր հետապնդած դաստիարակությունը նախ պիտի մշակի հայ մանուկի ցեղաշունչ սիրտը, ինչ որ հասուն տարիքում դժվար է ստեղծել, եթե չասենք անկարելի: Իսկ ցեղաշունչ սիրտ ստեղծելու գործում դաստիարակչական բոլոր ազդակներից - ընտանիք, հասարակություն, ավանդություններ, դպրոց - մայրն է ամենավճռական դեր խաղացողը:

Այլ ժողովուրդների կյանքում ընտանիքը միայն լրացնում է դպրոցի գործը: Բայց ամերիկահայությունը ազգային դպրոցներ չունի, որով՝ ընտանիքը, որ առավելապես ասել է մայրը՝ պիտի փոխարինի և դպրոցը: Եվ այդ ընտանիք-դպրո-ցի նպատակը պիտի լինի ուժեղացնել հայ մանուկի հոգե-ցե-ղային դիմադրողականությունը: Իսկ այդ անելու համար՝ դա հրամայողաբար պիտի դառնա հոգեկան և ցեղային առողջու-թյան աղբյուր:

Մայրը տալիս է նյութը - ցեղանյութը, դաստիարակիչը՝ հոգին: Այս երկուսն են կռում, կոփում ցեղի ճակատագիրը՝ մանուկի միջոցով: Այս երկուսի միջոցով տարվում է նաև՝ ցեղի գոյամարտի նախապատրաստությունը:

Հայրը, որպես ընտանիքից դուրս գործող, նվազ դաստիարակչական ազդեցություն ունի իր զավակների վրա, քան մայրը:

Այդ իսկ պատճառով, Արծվիկների կազմակերպությունը ամերիկահայ ազգայնական կնոջ - Կարմիր Խաչի ցեղահոգ գործն է:

Ամերիկահայ ազգայնական կինը կատարում է երկու գործ՝

ա) Նա ճիգ է անում ընտանիքը վերածել դպրոցի:

բ) Նա ճգնում է թափ տալ ցեղակրոն շարժման, նոր կյանքի և հոգևոր վերանորոգության այս գործին:

Կարմիր խաչուհին սկսել է գիտակցել, որ ինքը վերանորոգչական կարևորագույն ազդակն է, ինչպես և գլխավոր կռողը ցեղային առաքինությունների: Լծված նորահաս սերնդի դաստիարակության գործին՝ նա իր հոգու հետ՝ իր զավակին տալիս է մեր ցեղային առաքինությունների տախտակը:

Չկա՛ ազգային ապագայի կառուցում՝ առանց մոր, առանց հոգեփոխված՝ նաև բանապես ցեղայնացած կնոջ:

Մայրն ավելի՛ է մոտ իր երեխային, նա ավելի՛ն է տալիս նրան. ա՛յդ իսկ պատճառով, երեխան ավելի իր մոր պատկերն է:

Այդ գիտակցությամբ ահա՛ Հայ Կարմիր Խաչը, որ 1934ի ընթացքում կրկնապատկեց իր թիվը, նոր սերունդի դաստիարակության զուգահեռ՝ աշխատում է ստեղծել հոգեփոխված մայրը: Նա գիտակցում է, որ վերանորոգումը պետք է սկսել հասարակական առաջին բջիջից՝ ընտանիքից, իսկ ընտանիքում նա՛խ իրենից՝ հայ կնոջից: Այս նպատակով էլ նա տքնում է հոգեցեղորեն վերարարչագործել ամերիկահայ կինը:

Կարմիր Խաչի ստեղծած շարժման մեջ ցեղորեն կայտառանում է նաև հայ կինը: Այդ շարժումը պատրաստում է ցեղային ոգու դաստիարակչուհին: Ամերիկայի կարմիր խաչուհու համար է նաև՛ գերման կնոջ ուղղված նոր տասնաբանիայի առաջին պատվիրանը - «Դու պետք չէ մոռանաս, որ մոր և կնոջ քո պարտականություններից զատ՝ պետք է մասնակցես ազգիդ կյանքում տեղի ունեցող ճակատագրական անցքերին»:

Եվ կարմիր խաչուհին աշխատում է իր բախտորոշ բաժինը բերել իր զավակներին տված ցեղահարմար դաստիարակության գործին: Նա աշխատում է դառնալ ցեղամայր, որպեսզի իր զավակները դառնան ցեղաճանաչ, ցեղահավատ, ցեղակրոն:

Նա հասկացել է, որ գերագույն է մոր առաքելությունը - որ նա կոչված է իր երեխայի դաստիարակության միջոցով կառուցելու իր ցեղի ապագան: Այո՛, երեխան ներկայացնում է ապագան. նա մի խոստումնալի կարելիություն է, մի ժպտացող հույս՝ լավագույն ապագայի: Եվ երեխայի հենց այդ հանգամանքն է իրեն դարձնում սրբազան ժողովուրդների համար: Կյանքի բոլոր մեծագործությունները, հաղթանակները՝ ցեղերի ոգու արծվային թևաբախումներ են: Ամերիկահայուհին հասկացել է այդ և ճգնում է արծվամայր դառնալ և իր արծվիկին սովորեցնել լայնաթռիչ խոյանքը՝ հանուն իր ցեղի Մեծ Վաղվան:

Հայ Կարմիր Խաչի ամեն մասնաճյուղ պարտադրորեն ստեղծում է արծվիկների բույն, իր թևի տակ, վարում է նրանց կյանքը, դաստիարակում նրանց: Ավելացնենք, որ արծվիկների կազմակերպությունը մեկ մեկ տնկարաններ են ցեղակրոն ուխտերի համար: Տասներեք տարին անց՝ արծվիկները միանում են ցեղակրոն ուխտերին: Այդ շարժումը մեծ խանդավառություն է ստեղծել թե՛ մանուկների, թե՛ շրջապատի մեջ: Արծվիկը սովորում է ճանաչել և սիրել ցեղը, ապրել նրա արժեքներով: Իրենց պաշտամունքը Եռագույնի հանդեպ արտահայտելու համար հաճախ նրանք իրենց անվանում են «Եռագույնի մանուկ»:

- Americas future lies an its youths[42].

Նայելով հայ արծվիկի աչքերին, որոնք իրենց ցեղի հոգու խորքն են արտացոլում, մենք հպարտորեն կարող ենք ասել, որ ավազի վրա դրված չէ ամերիկահայության շենքը, որ նա ապագա ունի, որովհետև արծվաբույններ - արծվիկների սերունդ ունի:

Աշխատիր՛, աշխատիր՛, աշխատիր՛ կարմիր խաչուհի, որ վաղը Հայաստանը արծիվների բույն դառնա:

XIII
ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅՈՒՆ

«Պիտի ապրեմ, քանի դեռ Մասիսը չի կործանվել»:
ՈՐԲԵՐՅԱՆ

Նորահաս սերունդի առջև բանալով իր դուռը, Դաշնակցությունը նրա առջև էապես բացեց Հայոց ապագայի դուռը: Այդ սերունդի մեջ բացառիկ տեղ է գրավում ուսանողությունը - մեր վաղվա մտավորականությունը: Մեր կանչին, առաջինը լինելու, արձագանգեց Բոստոնի ուսանողությունը, որ այժմ գործում է «Ահարոնյան Ակումբ» անվան տակ:

Բոստոնին հետևեց Նյու- Յորքի ուսանողությունը: Այժմ ջանքեր են թափվում միություններ ստեղծելու այն բոլոր համալսարանական քաղաքներում, ուր հայ ուսանողություն կա:

Ամերիկահայ ուսանողության մի մասը - բարեբախտաբար անշան մասը - տեղավորված է հայ կյանքի ապազգային բևեռի վրա: Ցեղորեն կույր՝ այդ տարրը հայկական երկնակամարի վրա լուսատուներ չի տեսնում:

Նյութապաշտությամբ թունավորված՝ նա ուսանում է հացի, միա՛յն հացի համար: Նա բանով և գործով հաստատել է Ֆիխտեի խոսքը, թե՝ «Այս կամ այն փիլիսոփայության ընտրությունը կախված է մարդու անձնական հատկություններից»: Իր հոգեբանության համաձայն՝ նա ընտրել է նախանձի և հացի փիլիսոփայությունը - բոլշևիզմը: Այդ ուսանողության հոգևոր կյանքը կարելի է բնորոշել մի հատիկ բառով - ինքնաուսայնացում: Մի՛ սեր ունի - ժամանցը, հաճոյալի ժամանցը: Նրա համար «հավասար են՝ երկինքն ու չվանը»: Գերագույնը կյանքում՝ իր ա՛նձն է: Իր ծագումից զատ ոչի՛նչ չունի հայկական: Անարժեք է, կորա՛ծ ցեղի համար, որով՝ պարարտ հող է «լենինյան սերմունք»ի համար:

- Ուսանողության մյուս մասը - ցեղորեն առողջ տարրը - թրծվում է Դաշնակցության շնչով: Սրանց համար Հայոց ցեղայնությունը մարած հրաբուխ չէ՛, ոչ էլ կիսաշեջ, այլ անընդհատ գործող հրաբուխ:

Ցեղի ներքին աճումը - հակառակ անպատում արհավիրքների - իրողություն է: Չդադարեցրին նրա աճումը՝ ո՛չ կոտորածները, ո՛չ տեղահանությունը, ոչ էլ տարագրությունը: Դա նշան է, որ մեր ցեղն իր ընդերքում կրում է, կարողական վիճակում, պահեստի հոգևոր և կենսաբանական հսկայական ուժեր: Հասկանալի է, որ նման ցեղի զավակները չէին կարող չգիտակցել, թե՝ աններելի տգիտություն և վատություն է - սեփական արժեքների ուրացումով օտարության մեջ կեղծ իրավահավասարություն փնտրելը:

Ազգայնական ուսանողությունը գիտի, որ համամարդկային քաղաքակրթության ճամբան միագիծ չէ, որ ամեն ազգ զարգացման իր ուրույն եղանակն ունի, և որ ոչ մի արդարացում չունի ազգային առանձնահատկությունների զոհաբերումը այս կամ այն օտար մշակույթին, որքան էլ այդ վերջինը մեծ լինի:

Օտարը միշտ էլ բնազդական, այլ արդար արհամարհանք ունի այլասերվածի հանդեպ, անկախ նրա ընկերային դիրքից: Ճշմարիտ իրավահավասարությունը այլացեղ ազգերի և անհատների միջև հնարավոր է միայն և միմիա՛յն սեփական արժեքների միջոցով:

Այս ըմբռնումն է գծել «Ահարոնյան Ակումբ»ին պատկանող ուսանողության ճամբան:

Եվ ո՛չ մի զիջում ի հաշիվ մեր ցեղային անհատականության և արժանապատվության - ահա՛ նրա նշանաբանը:

Ցեղաճանաչ՝ այդ ուսանողությունը իր ցեղային անեղծ էությամբ աշխարհին ընդունում է անմիջական կերպով - թա՛րմ կենսազգացողությամբ:

Նա զգում է մեր ապրած ժամանակի մեծությունը, և աշխատում է՝ աննշան սերունդ չկոչվելու համար: Աշխատում է, քանզի գիտի, որ պատմությունը վաղը վերստին ազգերը դատաստանի պիտի կանչի և պիտի ոտնակոխի, տրորի այն ամենը, որ տկա՛ր է, անզո՛ր, անպատրա՛ստ:

Նա զգում է գալիքը, որն աննախընթացորե՛ն փոթորկաբեր պիտի լինի: Մոտենում են նոր աշխարհավերության օրերը:

Եվ նա խորապես գիտակցում է, որ ոճիրի համազոր տգիտություն կլիներ կարծել, թե՝ հայությունը լենինյան շանթարգելի շնորհիվ կարող է զերծ մնալ աշխարհի գլխին պայթող փոթորկից:

* * *

Տիեզերիմաստության պետք չկա հասկանալու համար, թե՝ մեր օրերը - նոր վերածնունդի, նոր ոգեկառուցումի օրեր են: Վերանորոգումի ճիգ են կատարում բոլո՛րը, անխտիր, բոլոր ազգերը - զորավոր թե՝ տկար, հաղթական թե՝ պարտյալ:

Աշխատա՛նքն է եռում ազգերի ծոցի մեջ - ոգո՛ւ աշխատանքը, որով աշխատող ազգերը կռում, կոփում են իրենց մոտավոր ապագայի դեմքը, որ ասել է՝ իրենց հոգևոր դեմքը: Դասակարգային եսականությամբ բռնված՝ դեռ երեկ նրանք ինքնաթշնամական հարվածներով իրենց դարավոր քաղաքակրթությունը կվտանգեին, իսկ այսօր՝ ցեղի ճակատագրի ընդհանրության զգացումով զինված, գործի է լծված, որպես մի՛ մարդ: Գրկած իրենց պատմության անիվը՝ նրանք ճգնում են այն դարձնել դեպի իր բնական ճամբան:

Աշխատո՛ւմ են ազգերը, առաջին հերթին ֆաուստյան խռովքով, աշխատում են նրանց մտավորականությունները - տքնում, քրտնում այն մեծ օրերի համար, որ գալիս են:

«Ուժն է կրոնը, վա՜յ տկարին» - ահա՛ օրվա նշանաբանը: Ճշմարիտ մտավորականությունը - իր անունին արժանի - ցեղի ոգու գրականությամբ, ցեղի խոսքի բոցով հրդեհում է ապրումները, մասնավորապես, նորահաս սերունդի և նրան նվիրումի, զոհաբերության ու գործի մղում:

Երբե՛ք, երբե՛ք, մարդ էակի հայացքն այնքա՜ն վճռականությամբ դարձած չէր եղել դեպի կյանքի ամենամե՛ծ ուժը, ամենամե՛ծ արժեքը, ամենամե՛ծ աստվածությունը - աշխատա՛նքը: Հայրենիքները դարձել են մեկ մեկ հսկա դարբնանոցներ, ուր դարբին-ազգերը ճակատագրի սալին իրենց ծանր կռանն են իջեցնում: Ոտքի վրա՛ է ազգը - մե՛ծ, քրտնաքո՛ր, հաղթակա՛ն: Այլևս իրար հասկացել են ու միացել՝ ժողովուրդն ու ընտրանին, պարտականությունն ու գիտակցությունը: Նման վիճակում են իրականանում համերաշխությունն ու հավասարությունը՝ ընկերային խաղերի միջև: Նրանց աշխատանքի առաջացրած ներքին ջերմությունից սկսել է հալվել դասակարգերի միջև ցցված սառուցե լեռը: Այդ աշխատանքի մեջ, վերջապես, պիտի հաջողվի սպանել մարդկային երջանկության թշնամին- Մեդուզա՛ն: Այլևս աշխատանքը դառնում է օրհնություն: Աշխատողը նրա մեջ դնում է իր այրական ուրախությունը, իր խանդավառությունը, իր մտածումը՝ իր հոգին: Աշխատանքը թափանցվում է աշխատողի էությամբ, որով՝ աշխատող ազգը դառնում է ինքնաճանաչ:

Չէ՞ որ անխոս ինքնախոստովանությո՛ւն, ինքնաարձանացում, ինքնաարտահայտությունն է աշխատանքը:

Այսպե՛ս, ոգու այդ նոր աշխատանքի մեջ ընկերայնորեն սրբվում են, երիտասարդանում, վերածնվում - ազգայնանո՛ւմ են ազգերը:

* * *

Աշխարհն ազգայնանում է:

Օրինակնե՞ր: Ահա՛ Ֆրանսիան, ուր ֆրանսիստների - «բանվորի, գյուղացու և զինվորի» շարժումը տարածվում է ինչպես հրդեհն՝

անտառում: Այդ միության անդամները, որպես խորհրդանշան, կրում են հին ֆրանկների զինվորական տապարը - ա՛յն ծանր և հատու զենքը, որ մի ժամանակ երգում էին գաղիական դյուցազներգակները - «Մեր հայրերը կկռվեին երկսայրի տապարներով. նրանք ընկան ճակատամարտներում և արծիվները նրանց մահը ողբացին»: Ժորեսի հայրենիքի իսկական խորհրդանշանն այսօր, վերստին, հին, ծանր և երկսայրի տապարն է, որով ֆրանկները ժամանակին գոռ Հռոմի դռները խորտակեցին: Տապա՛ր - դա հոգեբանորեն նշանակում է - զա՛րկ, ֆրանսիացի, որ ֆրանսիան ապրի:

Երե՛կ էր, երբ երկու ընկերվարական ղեկավարներ - Փարիզի երեսփոխան Մոնտանիոն և Բորդոյինը՝ Մարկե՛ն - հայտարարեցին իրենց ընտրող բանվորությանը՝ «Մենք ապրում ենք մեկը պատմության ամենամեծ անկյունադարձերից: Չենք կարող ժխտել փաստը, թե նոր զորավոր իշխանության գաղափարները կենդանացուցիչ կերպով տարածվում են ողջ աշխարհում: Չե՞ք խորհում, որ դա իր հասարակական արդարացումն ունի: Երբ մարդ վտանգի մեջ է՝ նախ և առաջ նա մտածում է իր մերձավորների մասին: Թույլ տվեք մեզ մտածելու մերոնց մասին, ծե՛ր մասին, և զոհաբերելով սխոլաստիկան, դարբնե՛նք նոր կյանք: Լինե՛նք կնքահայրը նո՛ր հասարակության՝ դրված ազգային հիմունքների վրա»:

Մարկեն, որ վերջերս ծառացավ Երկրորդ Միջազգայնականի դեմ, ասում է մի այլ տեղ՝ «Հասել է ժամը, երբ պետք է վերջ տալ կեղծիքներին, քարացած ու խուլ դոկտրինաներին: Չե՞ք զգում խռովքը վաղվա օրվա: Գնացե՛ք, դիտե՛ք երիտասարդության մեջ, որ չի ուզում այլևս խմել դառն բաժակից, և դուք էլ կտեսնեք սարսուռը նոր օրվա, կտեսնեք աչքերի փայլը նրա՛նց, որոնք կոչված են դառնալու դարբինը մի նոր և պայծառ ապագայի: Աճապարե՛նք - երբ մի ազգ կործանվում է՝ նրա ինքնապաշտպանության համար ձեռք են առնվում գերագույն միջոցներ: Հասկացե՛ք, մեզ փրկելու համար պետք է նո՛ր երգ երգել»:

Այսպե՛ս է աշխարհի ամենաառաջավոր մասում - Եվրոպայում: Եվ ո՞ւր, ո՞ւր «նոր երգ» չի երգվում, ո՞ւր հայրենիքի փրկության համար ձեռք չեն առնվում «գերագույն միջոցներ», ո՞ւր, մեր երկրագնդի վրա, հակադաշնակցական հոգիներից դուրս, ո՞ւր չի գործում կյանքի բնաշրջումը: Ժողովուրդները ազգայնանում են, որովհետև նոր ցեղաբախումների վտանգ կա: Ազգայնանում են՝ ինքնապաշտպանվելու, փրկվելու համար: Ցեղաշարժ կա ամենուրե՛ք: Ցե՛ղը - ընտանիքից, տոհմից, ժողովրդից, պետությունից վեր - ցեղը, որպես ուժածնության և ուժադարմանումի միջոց: Ինչպես երեկ, այսօր էլ ցեղի ինքնապաշտպանվելու կարողությունը պայմանավորվում է ազգային անհատի ինքնապաշտպանվելու կարողությամբ:

Վա՛յ այն ազգին, որ իր մեջ ուժ և միջոց չի գտնում ինքնապաշտպանվելու համարձնամու դե՛մ, բոլշևիզմի դե՛մ, օտար վատասերիչ ազդեցության դե՛մ: Իր գոյության համար պայքարում է ծղոտը, ցողո՛ւնն անգամ: Բնության հիմնական օրենքն է՝ ինքնապաշտպանությունը:

Կուզեի, որ այդ ամենը գիտակցեիր, և լա՛վ գիտակցեիր, ամերիկահայ ուսանողություն: Կուզեի, որ այդ բոլորի հետ գիտակցեիր և ա՛յն, որ հին աշխարհի վերակառուցման մեր օրերում հայությանը պե՛տք են Ոգով հզոր առաջնորդներ, հոգևոր Սամսոններ, մտքի, սրտի և կամքի հսկաներ: Պե՛տք են առաջնորդներ, որոնց անձնավորությունը լույս, ջերմություն և հավատք ճառագայթեր, որոնք տե՛ր լինեին իմացական կեցվածքի, կարողանային գրել, կախարդել, գործել, կազմակերպել, որոնց խոսքը թափանցված լիներ երկաթե տրամաբանությամբ և զրնգար որպես դամասկոսյան սուր: Առաջնորդնե՛ր, որ պաշտվեին: Առանց նմանների - ոգո՛ւ առաջնորդների - ազգերը դատապարտված են քարշ գալու պատմության հետևից:

Երբ չկան հսկաներ՝ ազգը դիտում է աշխարհն ու երեվույթները հալածվող կենդանու պղտոր աչքերով, և իր օրերն սպանում հին, մաշված բառեր ու բանաձևեր որոճալով: Երիցս դժբախտ է անմարգարե ազգը՝ նա տեսիլներ չի՛ ունենա: Սակայն, զզվելի՛ է մարգարեն, որ Աստված չունի, կամ չաստված ունի - նմանը կեղծ է և անզո՛ր: Զորավո՛ր է կենդանի Աստծու - կենդանի ցեղի անունով մարգարեացողը միայն: Նա՛ ուզում է վարել, առաջնորդել, պե՛տք է լինի ցեղի ոգու ներկայացուցիչը: Մեր օրերում ղեկավարել կարող է նմա՛նը միայն: Կուզեի, որ ամերիկահայ ուսանողությունը իր շարքերից մեզ զորավոր, կամային ղեկավարներ տար:

Ամերիկահայ ուսանողությունը - վաղվա մտավորականությունը - իր անունն արդարացնելու համար՝ հայ կյանքում պիտի կատարի այն, ինչ դեր կատարում են ուղեղն ու սիրտը մարդկային էակի համար: Նա հրամայողաբար պիտի դառնա գիտության և ցեղային պարտականության մարդ: Եվ որպես այդպիսին, առաջին հերթին նա պիտի հայացնի օտար համալսարաններում ձեռք բերած իր գիտական պաշարը, ապա գիտական մտքի քիմիարանից պիտի անցկացնի հայության օրվա «ճշմարտությունները»: Պիտի հիմնավորի ու աշխատի համազգայնացնել Դաշնակցությունը, որպես ազգային կենդանի դավանանք: Վերջապես՝ նա պատճառագիտորեն պիտի բացատրի հայ կյանքի չարիքներն ու թերիները, պիտի սրբագրի ու վարի այն:

Ահա՛ այն մեծ դերը, որ վերապահված է ամերիկահայ վաղվա մտավորականության - ուսանողությա՛ն: Նա այսօր դավանում է՝

- Որ իր սերնդին վիճակված է ապրել իր ցեղի պատմության ամենագերագույն ժամանակաշրջանը:

-Եվ որ իր սերունդը ճակատագրապես կապված պիտի մնա իր ցեղին:

XIV
ՄԻ ԲԱՂԴԱՏԱԿԱՆ

Մեր օրերը շատ տեսակետներով հիշեցնում են Հայոց պատմության V դարը:

Առաջին կետը, որ մատնանշում է նմանությունը մեր ժամանակի և Ավարայրի օրերի, դա հայությունը բաղկացնող տարրերի հոգևոր բևեռացումն է - ազգայնական և հակազգայնական: Հայ կյանքի այս շերտավորումը Ավարայրի շրջանի պատմագիրը բնութագրում է հետևյալ երկու հատկանշական սահմանումով: Նա ազգայնական հայությունն անվանում է՝ ուխտապահ, հակազգայնականը՝ ուրացող: Սասանյան Հարստությունը, Հայաստանի ապագա համաիրանացման ու ձուլումի ճամբան հարթելու պետական առաջադրությամբ, ճգնում էր հայությունը բաժանել երկու անհաշտ հատվածների, ինչպես վարվում է և՛ խորհրդային իշխանությունն այսօր:

Այդ առթիվ մեծապես խռովված էին հայության ազգայնորեն արթուն տարրերը, ինչպես և՛ այսօր:

Հայաշխարհի գլխին գալիք փորձանքների նախազգացումը հրդեհել էր ազգը, ինչպես և՛ այսօր:

Վարդանը հանուն համորեն հայության էր բարձրացրել դրոշակը, ինչպես և՛ Դաշնակցությո՛ւնն այսօր: Ազգային շարժմանը մասնակցում էին ժողովրդական բոլո՛ր խավերը՝ հոգևորական, իշխան, ազատ, սեպուհ, ռամիկ, ինչպես և՛ այսօր: Արտաքին թշնամին գործ ուներ հայ ժողովրդի ծառացած խղճմտանքի հետ, ինչպես Խ. իշխանությունն՝ այսօր: V դարի ցեղապաշտ հայությունը - դա «Արտաշատի ժողովն» է, ուր հայը խրոխտում է. «Այս հավատից ո՛չ ոք չի կարող մեզ խախտել: Անկարելի է, որ մեր Աստվածը փոխենք մարդու հետ»:

Դա՝ այսօրվա մարդկային հասկացողությունների լեզվով, նշանակում է, թե՝ աշխարհը ոչինչ ունի, որի հետ ազգայնական հայությունը փոխել ուզեր իր աստվածային եռագույնը:

Ահավոր է այդ շրջանի, մանավանդ, ցեղաշունչ կղերի ազդեցությունը: Նա՛ է քաջալերիչը ժողովրդի, և խորհրդատուն՝ բանակի: Ղևոնդ երեցն է Հայաստանի հոգևոր տերը. նրա ձայնն է դղրդել, շարժել, ոտքի հանել Հայաշխարհը. նրա սրբազան զայրույթն է այդ ժամանակաշրջանի աստվածապետական դաժան օրենքի խարիսխը՝ «Հայրը թող չխնայի ուրացող որդուն, որդին՝ հորը, ծառան՝ տիրոջը»... Օրվա անաստված և հուդայացած եկեղեցականը չկար երեկ՝ Վարդանանցին. սակայն, ղևոնդատիպ եկեղեցականներ, թեկուզ նվազ թվով, բայց կան և՛ այսօր: Ցեղի և նրա հավատի փրկության համար հայ

եկեղեցին ոտի տակ է առնում հիսուսական ներողամտության բովանդակ բարոյականը և դառնում է քրիստոնեության զինված բազուկը: Ահավո՛ր մի ուժ, որի հանդեպ հանկարծակիի եկած թշնամին ասում է, «Եթե իրենք՝ աստվածներն էլ մեզ օգնության գան, անհնար է մոգության օրենքները հաստատել հայոց մեջ. մարդիկ, որոնք ո՛չ կապանքներից են զարհուրում, ոչ տանջանքներից վախենում, որոնք մահը կյանքից նախամեծար են համարում - ո՞վ կարող է նրանց դեմ կանգնել»:

Հայոց պատմության դատավճիռն այդ շրջանում որոշ է և զարհուրելի՝ «Սատանան - Վասակի մասին ասում է Եղիշեն - ձեռք առել էր իբրև վահան, հագել էր դա իբրև զրահ՝ դառնալով նրա կամքին իբրև կատարյալ զինվոր»:

Օրվա հայ քաղաքական վասակության մասին, նվազ դաժան չպետք է լինի և՛ վաղվա մեր պատմության դատաստանը:

Ղազար Փարպեցու սրբազան զզվանքը բառ է կերտում ուրացողը դիմագծելու - «աղվեսակնի՛ք»: Այսպես, այն ժամանակ էլ ուրացող հայը եղել է երկչոտ ու խարդախ:

Հայ պատմագրի ատելությունը ցեղուրաց հայի հանդեպ, ստեղծել է նաև մեկ ուրիշ որակում՝ «ցուրտ մարդիկ»:

«Ցուրտ» է նաև՛ օրվա ուրացողը- հակադաշնակցակա՛նը, հայության ներքին եռանդը պաղեցնողը - նա և՛ դասալիք է, և՛ դասալքության մղող:

Սո՛ւգ է ուրացող նախարարների տան մեջ. տնեցիները նրանց ընդունում են լացով. «ոչ ոք չէր ուզում նրանց սեղանակից լինել՝ ո՛չ կին, ո՛չ որդի, ո՛չ ազատ, ո՛չ ծառա, ո՛չ սպասավոր»:

Վարդանը Ավարայրի ճակատամարտից առաջ, իր բանակին ուղղած ճառի մեջ ասում է. «Մեր ծառաներն իսկ կխրտնեին ու մեզանից հեռու կփախչեին»:

Հայ կանայք - ինչպես կարմիր խաչուհիներն այսօր - ոչ միայն գարշում էին մոգերի երեսը նայել, այլ իրենց տղաներն ու աղջիկները նրանց մոտից չէին անցկացնում»:

Հայ սպարապետն է խոսում՝ «Կռիվն այլևս նյութի վրա չէ, այլ պատիվ, հայրենիք, կրոն պաշտպանելով մեռնել, և քաջությամբ անմոռաց անուն թողնել»:

Խանդավառ է - ինչպես ցեղակրոններն այսօր- և՛ նորահաս սերունդը. «Պատանիները վազելով դեպի մկրտության ավազանն՝ աղաղակում էին. «Այս գիշեր ջրով, վաղն առավոտ՝ արյունով»: Եվ սպարապետը, որ սեփական ուժի գիտակցությունն ունի, հիշեցնում է հայ բանակին՝ «Մենք ավելի շատ հաղթական եղած ենք, քան թե պարտված»: Ճակատամարտից առաջ նա չի մոռանում՝ իր հոգու ամբողջ բյուրեղությամբ ասել իր մարտիկներին՝ «Միայն թե մեր խիզախ քաջության վատություն չխառնենք»: Եվ սկսվում է կռիվը: Վարդանի արդար վրեժխնդրության հարվածից Վասակն ազատվում է, թաքնվելով պարսից «փղերի թիկունքի ետևը», ինչպես միշտ արել և անում է ցեղուրաց հայը: Նա վատորեն դավաճանում է իր ցեղին և նրա հարվածներից ազատվելու համար ապավինում է օտարին՝ թշնամու թիկունքին - երեկ պարսիկին, այսօր բոլշևիկներին:

Հատկանշական է, որ արտաքին թշնամին ավելի առարկայական է դեպի հայը՝ քան ուրացող հայը:

Պարսիկ մոգերն հայոց մասին ասում էին. «Անպարտելի՛ են», իսկ ուրացող Գդիհոնը հոխորտում էր. «Ես Վահանի և բոլոր հայոց հետ ոչ թե նետով կկռվեմ, այլ նետիս կոթով բոլորին կցրեմ»: Խոսքի գոռությունը հատուկ է բոլոր ժամանակների ուրացողներին: Նույնպես չե՞ն հոխորտում նաև մեր օրերի Գդիհոնները - Բոլշևիկները:

Յոթը հարյուր մոգեր «Վռամական Հուրը» Հայաստան բերելով, Նավասարդից Նավասարդ, այսինքն մեկ տարվա ընթացքում, պիտի թաղեին հայ հոգին: Բայց այդ օրից անցել են ավելի քան հազար Նավասարդներ և մեր ազգությունը կա ու կմնա: Այսօր Վռամական Հրո փոխարեն բոլշևիկ մոգերը Լենինյան հոգևոր մոխիրն են բերել Հայաստան: Ուրացողը, օտարի կրակով ու մոխիրով սնվող հայը, միշտ էլ կոխել, անցել է մեր ցեղային արժեքների վրայից, և սողացել թշնամու ոտքի տակ: Հայ դասական ուրացողներից Մերուժանը մասնավոր ատելություն ուներ հայկական արժեքների և սովորությունների հանդեպ: Նա ճգնում է ծպտվել իբր պարսիկ՝ սովորությամբ և ճաշակով: Հոգեբանական այդ տիպը ապրում է և՛ այսօր: Նա արհամարանք ունի սեփական արժեքների և սրբությունների հանդեպ - անկապաշտ ռամկավա՛րն ու բոլշևի՛կը: Սրանց որդիներն այսօր թուրք դրոշի գովքն են երգում: Մերուժանաշունչ չէ՞ր այն սինլքորը, որ Ամերիկայում մեր ընկերների դատապարտության լուրն առնելով, Եռագույնը փռում է իր տան մուտքին և հրավիրում իր քաղաքական դավանակիցները գինարբուքի: Մարդկորեն անասնացածները կոխելով Եռագույնի վրա՝ ներս են մտնում և բազմում ռամկավարի անսուրբ սեղանի շուրջը: Կա ամենազզվելին: Հայ ուրացողը միշտ էլ եղել է քաղաքական կավատ: Երբ օտարը տրամադիր է եղել հաշտվել պայքարող հայության հետ՝ ուրացողը նրան հիշեցրել է իր կորուստները, որ հայերն են պատճառել: Մերուժանը հաճախ այս լարի վրա էր խաղում. նա սուգ էր կեղծում պարսից տված զոհերի համար և հրահրում Շապուհի կրքերը:

«Հարցրե՛ք Անդրանիկից, Նժդեհից, ինչո՞ւ այնքան թուրք գյուղեր ավերակ դարձրին», ասում է Մանվելյանը՝ իր «Մղձավանջ» պատմվածքի մեջ: Զզվելի՛ կավատություն: Հայկական ջարդերը, ավելի քան երկու հազարամյակների մշակույթի կործանումը, միլիոնների լլկաբար կառափնատումը, 1915-ի զարհուրանքը սովորական մի ակտ է, իսկ մի

քանի հարյուր թուրք գյուղերի ավերումը, ա՛հ, հայորեն թշվառականացածի համար՝ անմարսելի, անսովոր մի երևույթ է: Տառապում է նա, որ թուրքը թեթևորեն պատուհասած է: Ավելին՝ նա մղձավանջ է ապրում: Զզվելի չէ՞:

Տիզբոնում, 452-ին ապստամբության ղեկավարների դատն է տեղի ունենում: Ուխտապահները շղթայակապ են, Վասակը շքախմբով, և հայոց թագն ստանալու տենչով վառված, հոխորտ: Բայց, ահա՛ մերկացվում է նա իր շքազգեստներից և կնաբար նստած մատակ ձիու վրա՝ նետվում է բանտ: Հայ պատմագիրն ասում է՝ նա մեռավ որդնալից, չարատանջ մահով, գլուխը ծեծելով: Մեռավ ժառանգելով դարերի անեծքը: Օտարից թագ ակնկալեց և թուք ստացավ:

Վասակը օտարի «փղերի թիկունքի ետևը»- հակադաշնակցականը բոլշևիկի պաշտպանության տակ: Այս նզովյալ փաստը պիտի չմոռանա մեր պատմությունը:

Վասակը թքված Շապուհից - V դարի այս անողոք դատավճռից պիտի չխուսափի և՛ մեր օրերի ներքին վատությունը - հակադաշնակցականությունը:

Անհնա՛ր է, որ վաղը մեր պատմությունը այս փաստն էլ չարձանագրի:

Վասակը սևացած հայոց պատմության մեջ - ֆիզիկապես սպանված օտարից, բարոյապես՝ իր ցեղից:

Իսկ Վարդանը - հավիտենորեն սո՛ւրբ, և զորավոր:

Այսպե՛ս է: Հաճախ խաչվում է Աստվածությունն անգամ: Հաճախ գերագույնը, գերարժեքը ենթարկվում է ամենաստորինի իշխանության, սակայն, կա՛, գործում է ողբերգականության դիալեկտիկան, որի ուժով պայքարում ընկած հերոսի կորուստը վերածվում է բարոյական հաղթանակի:

Այսպե՛ս է: Արի և արիադավան ժողովուրդը գնահատումի իր դիալեկտիկան ունի: Նա գիտի արհամարհել կեղծ մեծությունն ու արժեքները՝ թեկուզ նրանք տվյալ պատմական ժամանակաշրջանում հաղթական լինեն: Ինչպես և գիտի գնահատել ու պաշտել հավիտենապես արժեքավո՛ր, մե՛ծ, սուրբ՝ թեկուզ մարդկային տականքների կողմից նրանք հայհոյված լինեն: Դարերով ու դարերով ա՛յս է եղել հայ ժողովուրդի գնահատումի եղանակը:

Դա տարբեր չի՛ կարող լինել և՛ այսօր:

Չէ՛, անհնա՛ր է, անհնար, որ մեր ցեղի գահը թափուր մնա, երբ Վարդանների պաշտամունքը կա:

Չէ՞ որ ամեն սրբություն, ամեն զորություն ձգտում է հավերժանալու:

Ինչպես ամեն հավիտենականություն ուզում է պսակավորվել:

Իսկ ամեն պսակավորում լինում է արյունի ճիգով - դաշնակցականությա՛մբ:

XV
ԽԱՉԻ ՍՏՎԵՐԸ

Ամերիկա՛, ո՞ւր է արդարությունդ:

Ինքը հայորդիներ խստագույնս պատժված մի հասարակ ուրացողի համար:

Ի՞նչ, քո երդվյալները չդողացի՞ն իրենց խղճմտանքի առջև, երբ էլեկտրամահվան դատապարտեցին նրա՛նց, որոնք դեռ երեկ քո դրոշի համար էլ կուրծք տվին շնացող թուրքին:

Չէ՛,չէ՛, Արարչության օրից ի վեր տեղի չէր ունեցել նման վատություն:

Գիտցի՛ր, սակայն, որ քո դատարանից զատ, ուր մեր մե՛ծ ցեղի այլասերած տականքը իր ատելավառ կրքերի ողջ ապականությունը թափեց, կա՛ և Հայոց պատմության դատաստանը:

Քո մեծության մեջ որքա՛ն միամիտ ես դո՛ւ, Ամերիկա՛: Իսկապես, չգիտե՞ս, որ դատապարտածդ հայերը՝ զոհերն են թրքա-բոլշևիկյան դավի: Չհասկացա՞ր, թե ինչ-ինչ պատճառներով չկարողացար արդարություն անել դավադրված հայության:

Քո դատարանում, որ ասել է՝ քո հոգում, պաշտպանություն գտավ հայ փերեզակի հերմեսացուպը - նյութական շահի խորհրդանշանը՝ մեր աստվածային Եռագույնի դեմ: Եվ կարող է լինել, որ վաղը, ի ուրախություն բոլշևիզմի գործակալների՝ երկու հայ կորյուններ մոխիր դառնան քո հնարած էլեկտրական աթոռի վրա:

Ի՞նչ, չե՞ս լսում թուրք և սովետ դեսպանատներից բարձրացող մեֆիստոֆելյան հռհռոցը՝ քո արդարության հասցեին:

Գիտենք՝ հաճախ այսպե՛ս է գործում օտար արդարությունը: Ոչի՛նչ - քաղաքական գիշերը հավիտենական տևողություն չէ: Աշխարհը դառնում է, ժամանակը գործում: Դեռ երեկ էր, ինչ նա մի շարք գահեր գետին զարկեց: Կույրե՛ր, միա՛յն կույրերը չեն տեսնում, թե ինչպես պատմության որդը կրծում է խորհրդային իշխանության հիմքերը: Ոչի՛նչ, մենք կսպասենք սեփական արդարության, որ պիտի գործի վաղը՝ մեր Հայրենիքում՝ ապախորհրդայնացա՛ծ Հայաստանում:

* * *

Մերժվեց վերաքննությունը և... մեր երկու ընկերների թիկունքում սպառնալիորեն ցցվեց խաչը:

Եվ խաչի նսեմ ստվերը փռվեց ազգայնական հայության հոգեաշխարհի վրա:

Ա՛հ, գիտե՛մ, ցեղադավան ամերիկահայություն - գիտե՛մ, չէ՞ որ դեռ երեկ քեզ մոտ էի, քեզ հետ էի, երբ կարմիր շեյթանը դավադրեց քեզ - գիտե՛մ, այժմ սիրտդ ուռած է զայրույթից և բարկությունդ կմխա:

Գուցե և վաղը սուգ հագնի ճակատդ, բայց թող չկորանա՛ դա - տղամարդ պայքարողին վայել չէ՛ տկարությունը: Վե՛ր գլուխդ, չէ՞ որ դու այն ազգն ես, որ գիտի հավիտենականության բարձունքից դիտել աշխարհն ու անցքերը: Գլուխդ վե՛ր, ուր մշտարթուն մի աչք կա, որ հսկում է թշնամիներիդ վրա: Վե՛ր, որտեղից մի սաստող ձեռքի ստվերն է կախվել թշնամիներիդ գլխին:

Տեսնո՞ւմ ես միա՛յն հացով ապրող երկրասող տականքը: Լա՛վ, դիտիր, - նրանք այնպես են շարժվում, կարծես, ներքնապես մի ծանր բեռ կրեին:

Ա՛հ, ներքին չարության համար քաղցած այդ չարարվեստ տականքը - նա վաղուց է ոռնում դատարանների դռան և երկու որդիներիդ արյունն է պահանջում: Նա հոգնեց սպասելուց: Իր չարության քաղցը հագեցնելու համար՝ օր, ժամ, վայրկյան առաջ նա ուզում է մեր արդարների աճյունը տեսնել:

Եվ, ո՞վ գիտի, գուցե վաղը աշխարհի ամենահարուստ նահանգի պետն էլ չուզեց զգալ վեհափառությունը մեր ողբերգության՝ այն ժամանակ կմոխրանան, կմեռնեն Եռագույնի նո՛ր վկաները - Մատթևոսն ու Նշանը[43]:

Եվ գիտե՞ք ինչպես – ինչպե՛ս հայ լեգեոնականն է մեռնում՝ ստոյիկյան խրոխտությամբ և ժպտադե՛մ:

Ես տեսա, ես ճանաչեցի նրանց: Ամերիկան թողնելուց առաջ, գնացի հրաժեշտի՝ մեր բանտարկյալներին, և երկարորեն, ծունկ ծնկի, խոսեցի մահվան դատապարտված երկուսի հետ: Աստվա՛ծ իմ՝ ի՞նչ տղամարդիկ են: Սրանց ոտքի հետքերը պիտի համբուրեին գողուդի ռամկավարն ու պղծադավան բոլշևիկը, եթե զուրկ չլինեին մեր ցեղի ճակատագրի զգացումից: Ժամեր տևող մեր տեսակցության ընթացքում նրանց կողմից ո՛չ մի խոսք չեղավ այն մասին, թե ի՞նչ աշխատանքներ են տարվում դուրսը՝ իրենց ճակատագրի դաժանությունը մեղմացնելու համար: Այո՛, այդ մասին և ո՛չ մի ակնարկ:

Երկուսն էլ, սակայն, խորապես ազդված էին Վարանդյանի[44] մահից:

- «Ինչպե՞ս է Ահարոնյանը, հույս կա՞, որ նորից գրիչը ձեռքն առնի» հարցրեց Մատթևոսը:

- «Արդյո՛ք, հույս կա՞, որ մոտիկ ապագայում Իտալիան կամ մի այլ ուժ զարկի Թուրքին»՝ հարցրին, երբ ոտքի վրա էինք և կողջագուրվեինք բաժանվելու համար:

- «Այո՛, տղա՛երք, աշխարհը դառնում է. անկյունադարձի առջև է մարդկությունը. մեզ կմնա աշխատել և պատրա՛ստ լինել»: Այս խոսքերով բաժանվեցի մեր երկու ցեղահոգ ընկերներից, որոնց աչքերի մեջ ցավով կարդացի այրող կարոտը զենքի, ծածա՛ն Եռագույնի, կռվի թուրքի դեմ:

Մատթևո՛ս, Նշա՛ն - ահա՛, ամերիկահայությո՛ւն, երկուսը սրտով մեծ ու զորավոր զավակներիցդ, որոնք վաղը, ներքին թշնամուդ ցանկությամբ, պիտի մեռնեն, եթե ամերիկյան մի նահանգապետ նրանց մահն ուզեց:

Ի՞նչ արած, գիտես, որ ժամանակը ազգերի վրա կոխելով է անցնում: Նրա ոտքի կապարյա ծանրության անծանոթ չես դու: Այս անգամ էլ նա ոտքը սրտիդ վրա, ազգային վերքիդ կոխեց: Վա՛յ քեզ, եթե ուժ և արիություն չունեցար խրոխտալու, որ քո սիրտն ավելի՛ ուժեղ է քան ժամանակի գարշապարը: Այո՛, այսպե՛ս է վայել այն ազգին, որ աշխարհի անարդարության հետ պայքարի մտած՝ դժբախտություն ունի նեղվելու և՛ իր տականքից:

Բարոյական ա՛յս կեցվածքն է վայել քուրմին, որ քաղցրաբար իր զոհն է մատուցանում: Զոհարարի քո վիճակում հավասարապես աններելի են՝ տրտունջն ու տկարությունը:

Ո՛չ Հովբի մռայլ շեշտը, ո՛չ էլ Բայրոնյան հուսահատություն - ո՛չ մեկը և ո՛չ մյուսը:

Գիտցի՛ր, սակայն, որ այն օրը, երբ գործադրվեց մահապատիժը՝ մի խորհրդավոր ձայն զարհուրանքով պիտի գոռա թշնամիներիդ ականջի մեջ - memento-հիշի՛ր:

Այն օրից ծանոթ տականքները վատաբար պիտի դողան իրենց հետապնդող ձեռքի ստվերից:

Երկու ուրվականներ, ամեն գիշեր, նրանց դռները պիտի զարկեն:

Նրանք ամեն օր պիտի մեռնեն, պիտի մեռնեն՝ դեռ չմեռած:

Այն օրը, երբ քեզ, ամերիկահա՛յ երկու զավակներիդ մահը գուժեցին՝ դու կբարձրացնես ճակատդ, գուրգուրանքով կնայես Եռագույնիդ, այն մտովի կխոնարհեցնես արիներիդ համբուրելի աճյունի առջև, ապա կբարձրացնես - ամենաերկյուղածորեն կհամբուրես, մեկ է՛լ, յո՛թն անգամ, և կհանձնես օրվա իր պահակին՝ ցեղակրո՛ն զավակներիդ:

Այսպե՛ս է վայել այն ազգին, որ հանուն իր հավիտենականի գիտի իր զավակներից ամենաընտիրնե՛րը զոհաբերել:

Այսպե՛ս է կատարվում ամե՛ն մարտիրոսություն:

Այսպե՛ս է ստեղծվում ամե՛ն հերոսական:

Այսպե՛ս են հաղթանակում ազգերը:

ԲԱՆՏԱՅԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ[45]

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստա՛ն և ճշմարտություն - ահա՛ իմ աստվածությունները:

Հայրենասեր չես, եթե կյանքդ տրված չէ ի սպաս սրանց, որոնցից մեկին ծառայել կարելի է՝ մյուսի միջոցով միայն:

Խորհրդանիշ՝ ինձ համար չի նշանակում մտածել միայն: Դա, միաժամանակ, և ինքնախորացում է, երկո՛ւնք, որ հնարավոր է դարձնում ներատեսությունը:

Սիրո՛ւմ եմ գաղափարը, որ աշխարհ է գալիս ներքին գողգոթայի ճամբով կամ էլ փայլատակում է ուղեղիդ մեջ - մտքիդ՝ իբրև շանթող հայտնություն:

I
ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հեռո՛ւ ստությունից և լի նրանով,
ինչ ընդդեմ է ստության»:
ԽՈՐԵՆԱՑԻ

Պատմությու՛ն - դա անավարտ վեպ չէ, այլ՝ չավարտված ճակատամարտ:

Եվ իր էջերը՝ ռազմադաշտե՛ր, որոնք արյունով են ներկում եկող-անցնող սերունդները:

* * *

Ազգերի կյանքն՝ ըստ էության՝ գոտեմարտ է մահվան հետ:

Նրանք - ազգե՛րը միայն այն չափով են կենսունակ ու ստեղծագործ, ինչ չափով վերապրած և իմաստավորած են իրենց անցյալը, իրենց պատմությունը:

* * *

Պատմագրել՝ նշանակում է կռվի մտնել ժամանակի հետ՝ թույլ չտալու համար, որ նա մարդկային ազգի անցյալն սպանի: Ժողովրդի անմահության կոթողն է պատմությունը:

Վա՛յ այն ժողովրդին, որի անցյալն իր համար լոկ մի գերեզման է անխոս: Չկա՛ ավելի մեծ ծառայություն՝ իր ժողովրդին, քան պատմագրումը նրա անցյալ կյանքի: Նոր Խորենացիներ, Եղիշեներ թող ճակատագիրը չզլանա մեզ:

* * *

Ճշմարիտ պատմագրության դեմ մեղանչում ենք, երկու դեպքում. նա՛խ՝ երբ անգիտանալով անցքերը վերլուծող, կապակցող, համադրող և տեսականորեն ընդհանրացնող մտքի դերը՝ նրան հաղորդում ենք վիպական գունավորում, որով այն՝ պատմությունը վերածում ենք մի երկարաշունչ պատմավեպի: Կամ էլ՝ երբ անգիտանալով սրտի դերը, պատմությունը դարձնում ենք պեղումների և հանածոների մի մեռյալ նկարագրություն, այսինքն՝ ցամաքեցնում ենք ժողովրդի ոգեշնչման աղբյուրը, որպիսին պետք է որ լինի պատմությունը: Նա՛և իմաստասիրելու կարող - ահա՝ թե որպիսին պիտի լինի պատմագրողը: Իր անունն արդարացնելու համար՝ պատմագրությունը պիտի լինի, միաժամանակ, նա՛և պատմության փիլիսոփայություն: Անցքերին թափանցել իմաստասիրական վերլուծող մտքով, և նրանց մասին խոսել սրտի լեզվով: Այսպիսի՛ն էր Միշլեն: Մարդկային կյանքի պես՝ պատմությունն էլ ո՛չ լոկ սրտի, ո՛չ էլ միայն մտքի գործ է, - դա սինթեզն է երկուսի:

Անցքերն ու անձերին հասկանալու համար բավական չէ միայն տեսությունը, պետք է նա՛և համազգալ նրանց:

Ընդունենք և այն, որ պատմության նշանակությունը ոչ միայն ճանաչողական է, այլև՝ դաստիարակչական, վերանորոգչական:

* * *

Պակասավոր է այն հայը, որ հայրենի պատմության իմաստասիրությունը, նրա հետագա զարգացման ուղիները հասկանալու համար չի վերապրել իր ժողովրդի ողջ անցյալը:

Շատ բան խնայված կլիներ հայության - տառապա՛նք, արյունն՝ե՛ր, եթե հայ մտավորականությունը դեռ անցյալ դարի երկրորդ կեսից երևան եկած լիներ ընդհանրապես պատմության, և ի մասնավորի՝ հայոց պատմության իմաստասիրության լրիվ սպառազինությամբ:

* * *

Պետք է վերապրել և վերիմաստավորել հայրենի պատմության ողջ հոլովույթը:

Պետք է Հայկի հետ ծառանալ Նեբրութի դեմ, Տիգրանի հետ՝ ընդարձակել Հայաստանը, Արտաշեսի հետ՝ բարեկարգել այն, Բագրատունիների հետ Անին հրաշակերտել և ապա՝ նրա կործանումը ողբալ... Ի մի բան՝ պետք է վերապրել մեր պատմության բոլոր բախտորոշ անցքերը - նրա վերելքներն ու անկումները, նրա փառքերն ու տառապանքը, նրա աննկուն ընդվզումներն ու կուլտուրական-հարուստ շինարարությունը:

Այսպես՝ մինչ մեր օրերը:

Այսպե՛ս են ճշմարտորեն Հայաստանում Հայ սիրտն ու գիտակցությունը:

Այսպե՛ս է ստեղծվում համահա՛յը, ամբողջական հայը:

* * *

Գուժկա՛նը - ամենաողբերգականը Հայոց պատմության դերակատարներից, որի դերը Հռոմում, արտաքին վտանգների ժամանակ, կատարում էր ծիրանագույն դրոշը՝ պարզելով Կապիտոլիումի վրա:

«Ահա՛, հասավ գուժկանը... Ի նշան սգո պատռեց օձիքը և հող ցանեց գլխին»*:

Ո՞վ է այդ եղերականը, և ի՞նչ է խորհրդանշում նրա երևալը:

Գուժկա՛ն - դա խռովված անձնավորումն է իր ժողովրդի հավաքական գիտակցության, նրա արթուն բնազդի, նրա ապրելու կամքի:

Հասեհա՛ս է վտանգը - շուտով կպայթի ամպրոպը, և ահա՛ Հայաստանով մեկ տարածվում է կարմիր գուժը՝ մրրկելով ու մտրակելով բոլոր կամքերը:

«Ելե՛ք, ելե՛ք, և օրհասական կռվի պատրաստվեք... Նվա՞լ, ո՛չ, ո՛չ, ես արդեն ողբացի ամեն հայի փոխարեն, և՝ պատռելով օձիքս՝ զգացի ցավը ո՛ղջ ազգի... Ելե՛ք, վատություն է վայել, երբ հարվածող բազուկներ ունենք. մա՛հ, մա՛հ՝ մեզ մահվամբ սպառնացողին: Ելե՛ք, հանուն կյանքի, նրա բարեշրջման, նրա կատարելության, ելե՛ք... Մահից ավելի կյանքն է զորավոր, ելե՛ք»...

Այսպե՛ս է ապրել, վերապրել, հավերժացել հայը:

Այսպես, ամեն անգամ, երբ հայտնվել է գուժկանը՝ իր հիմքպատվանդանից սասանվել է հայությունը, ցնցվել, իր մեջ հաղթահարել իր ներքին տկարությունները, և՝ իր վաղեմի մեծության վայել մի ամեհի ծառացումով, ելել մահվան ճամբաներն է կտրել՝ մահից է՛լ զորավոր...

II
ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Ժողովուրդը կնմանվի իր երկրին, որն իր ներքին ուժերի աշխատանքով բարձրունքներ է կարկառում:
Մասիս, թե Մեսրոպ - հավասարապես սրբազան կատարներ, որոնց տրված է գոյության բարձրունքներում պահել հայ միտքն ու հայացքը:

Կան դանդաղ զառամող ու մեռնող ժողովուրդներ - նրա՛նք, որոնց անցյալ գոյության դպրոցը՝ իրենց երկրի աշխարհագրական

* Հայոց պատմության (ծանոթ. հեղինակի):

դիրքի և արտաքին այլ ազդակների շնորհիվ եղել է նվազ դժվարին: Պատմության կողմից բարերարվածներն են դրանք՝ տեր միջակ մորալի, որոնք կորցրած իրենց անհատականությունը, շարունակում են ապրել իրենց անցյալի վարկով միայն:

Ամեն ժողովուրդ իր ուսերի վրա է կրում իր պատմական բախտի բեռը:

Նվազ ոգելից և խոստումնալից է այն ժողովուրդը, որը գնալով չի երիտասարդանում հոգեպես, որին պակասում է իր պատմական առաքելության գիտակցությունը:

Նմանին, զլանալով իր հարգանքը, աշխարհն ասում է՝ ապրելու և ստեղծագործելու համար նա՛խ ճանաչիր և ճանաչել տուր քե՛զ:

* * *

Փոխադարձ է ազդեցությունը երկրի և այն մշակող ժողովրդի միջև: Հնագույն ժամանակներում, ինչպես և քաղաքակրթության լուսաբացին, առավել չափով զորավոր է եղել բնության ազդեցությունը մարդու վրա:

Անհամար թելերով է կապված իր գետերին, իր Վոլգային ռուսական հոգին:

Ծովի, ծովեզրերի ծնունդ է հույնը:

Անապատն է կաղապարել արաբի էությունը: Իսկ հայ էությունը մշակելու գործում ազդեցության առյուծի բաժինը ընկել է Հայոց լեռներին:

Մասի՛սն է դայակը հայ հոգու:

* * *

Ծո՛վ է ժողովուրդը: Ինչպես հողմերից առաջացած ալիքները չեն դրսևորում ծովի ողջ դինամիկան, նրա զորությունը, այնպես էլ ժողովուրդների առօրյական մանրագործությունները չեն սպառում այն ամենը, որ տեղի է ունենում նրանց հոգու խորքում:

Կան խորքային ալեկոծություններ, որոնք ընդգրկում են բովանդակ ծովը:

Կան նաև՝ հոգեշարժեր - պատերազմ, հեղափոխություն, վերածնունդ, որոնց ընթացքում ժողովուրդը իր էությունն ու ուժերը բացահայտում է առավելագույն չափով:

Այո՛, ծով է ժողովուրդը: Դա հոգու միասնություն է: Ով չգիտի, ու չի զգում այդ՝ թող հեռու մնա նրանից:

* * *

Ժողովուրդն է մեր ժամանակների աստվածությունը: Թեև նրա մասին և նրա անունից խոսում են իր բոլոր զավակները, քչերը, սակայն, շատ քչերն են էաբանորեն ճանաչում նրան:

Ժողովրդին, ինչպես և բնությանը ճանաչել կարելի է իր ամբողջության և խորքի մեջ:

Այսպե՛ս միայն, և ոչ՝ այլ կերպ:

Երկուսն են դեպի նրա խորք-էությունը տանող ճամբաները - իր պատմությունը և իր աչքերը՝ գերագույն պահե-րում:

Առաջինը վկայում է թե ի՞նչ էր նա անցյալում և ի՞նչ կարող էր մնացած լինել նրանից: Երկրորդը խոսում է այն մասին, թե ի՞նչ է նա այժմ և ի՞նչ կարող է դառնալ վաղը:

Ժողովրդի ա՛չքը, որի արտահայտչականությունը տրված չէ մարդկային խոսքին:

Կան գերագույն պահեր - ժողովրդի գոյության ու ճակատագրին սպառնացող արտաքին վտանգի ժամեր, երբ դա լայնանում է, խորանում արծվի աչքի պես, երբ այդ վերջինը իր բնին, իր ձագերին երկարող թշնամու ձեռքը, ժանիքը, մագիլն է տեսնում:

Նման դեպքերում ժողովուրդն ամբողջապես աչք է դառնում, որին նայելու արիություն չի պակասում սակավաթիվներին միայն:

Նրա հայացքից փախչում, թաքնվում են այն բոլորը, որոնք մինչև այդ կաղմկեին, կխուժանավարեին հրապարակում - կրկեսային-ներ՛ը, ինքնակոչները, սովորականները:

Եվ, իրենց դիրքերի վրա՝ վտանգի պահին՝ մնում են զորավորները միայն:

«Իմ զավակը չէ նա, ու ինձ համար մեռնելու հրաման չի աղերսում ինձանից»,- անխոս ասում է հրաբխի պես արթնացած ժողովուրդը: Եվ գործում՝ իր ապրած դարերի իմաստությամբ՝ սահմանելու և պարտադրելու գերպարտականության գործեր:

Նման վայրկյաններին նա զորավորների մեջ փնտրում է զորավորագույնին և նրա ափի մեջ դնում իր ճակատագիրը:

Այսպես է աշխարհ գալիս ճշմարիտ առաջնորդը:

Խորքի կանչին արձագանգում է խորքը - ժողովուրդ և առաջնորդ գտնում են իրար՝ միանում, ամբողջանում էութենական մի միասնության մեջ:

Այսպես է ստեղծվում հավաքական սիրտը: Նման պահերին է սրբազանում ապրումը, խոսքը, գործը:

Նման մթնոլորտում են հղացվում հերոսները և ծնունդ առնում գործերը հերոսական:

* * *

Ես տեսել եմ մեր ժողովրդին նման հոգեվիճակում. տեսել նրան՝ իր բիբերի մեջ, տեսել խռովքոտ տողանցն իր սերունդների, տեսել ռազմի իր սրբերին և գայլերին՝ Վարդաններին և Վահաններին...

Եվ ժողովրդի հզոր շնչով օծված՝ երկու անգամ անհավասար ճակատամարտերի եմ առաջնորդել նրա զավակներին: Ղարաքիլիսայի օրհասական օրերին, երբ թուրք հորդաների հետ մա՛հը կանցներ Ախուրյանը, ու երկու տարի անց՝ Սյունիքում, ուր պանթուրանականները կնկրտեին լեռնահայությունը վերածել դիակների կամուրջի՝ թուրք և թաթար հայրենիքների միջև:

Եվ երկու դեպքում էլ հայ մարդը կատարել է ռազմի մեծագործություններ, քանզի մեզ հրամայել ու վարել է աչքը ժողովրդի:

* * *

Ժողովուրդն ավելին է, քան իր պետությունը, իր իշխանությունը, անգամ իր կուլտուրան:

Իր ոգու հայտնությունը դժվարացնող բազմազան արգելքների պատճառով նրան հաջողվում է իրականացնել իր կարողական ուժերի մի չնչին մասը միայն: Պետության - ճշմարիտ պետության, բանականության և մարդկայնության վրա կառուցված պետության դերը հենց այդ արգելքները աստիճանաբար վերացնելու մեջ է կայանում:

Ժողովուրդ - դա Անթեյն է առասպելական: Պարտվում է նա, հենց որ կտրվեց հողից: Իսկ այդ վերջինը՝ հայրենի հողը խորհրդանշում է կուլտուր-ազգային այն բոլոր արժեքներն ու սրբությունները, որ ստեղծել է ինքը՝ ժողովուրդը:

* * *

Անհակ պարտական է իր ընթացքն արդարացնել իր ժողովրդի առջև, իսկ ժողովուրդը՝ իր պատմության:

* * *

Ժողովրդից է ամեն հաղթանակ, անկարող ղեկավարից՝ ամեն պարտություն:

* * *

«Ես գրում եմ մի ձեռքով, պայքարում՝ երկուսով»:

Այսպե՛ս, Վիկտոր Հյուգոյի պես վարվիր, երբ ժողովրդիդ գերագույն բարիքներն ես պաշտպանում:

Ժողովրդի համար՝ զույգ ձեռքով - այսպես բոլոր դեպքերում:

* * *

Կյանքում, խղճմտանքից զատ, ես ճանաչեցի երկու այլ դատավորների ևս՝ Աստվա՛ծ և ժողովո՛ւրդ: Առաջինի դեմ մեղանչեցի, երկրորդի դեմ՝ երբե՛ք:

III
ՀԱՅՐԵՆԻՔ

Նա ծնվեց մարդու առաջին մտածումի հետ՝ թե սուրբ է հայրենի հողը:

Նա ստեղծվեց այն օրը, երբ մարդն առաջին անգամ լինելով գիտակցորեն ու ժպտադեմ մեռավ հայրենի հողի հա-մար: Հայրենիք թե սոսկ երկիրը, դա հայրենիք է դառնում այն հոգևոր արժեքներով, որոնցով նրան օժտում է ժողովուրդը:

Երկիրը - դա հայրենիքի աշխարհագրական զրահն է: Հայրենիքը - այդ երկիրը մշակող ժողովրդի ոգին է, նրա մշակույթը:

* * *

Ժողովրդի հոգևոր ստեղծագործությունը՝ ահա՛ հայրենիքը՝ իր սկիզբն առավ նրա բանարվեստի, ձեռագիր գրքերի, սրբի, լուսակիրի, հերոսի, նրա առաջին ավանդությունների հետ: Հայաստան երկիրը հայրենիք դարձրին Մեսրոպի այբուբենը, Մամիկոնյանների ուխտը, Բագրատունիների շինարարական մեծագործությունը:

* * *

Իբրև հասկացողություն՝ հայրենիքն ընդգրկում է ո՛չ միայն անցյալն ու ներկան, այլև՝ գալիքը: Դա ժողովրդի պա-տմական առաքելությունն է ըստ իր վախճանական նպատակի՝ զարգացող մի հավերժություն է Հայրենիքը: Դա եկող ու անցնող սերունդների անմահությունն է, որն իբրև գաղափար և գործ ժողովուրդը դրոշում է նյութի վրա, խոսքի մեջ, և այն ապրեցնում իբրև անմեռ հուշ, իբրև պատմություն:

* * *

Հայրենիք չէ կայսրությունը: Հայրենիքը խորացող էություն է: Դա արտաքին նվաճում չէ, այլ՝ ինքնանվաճում, ինքնամշակում:

Հրեության համար՝ հայրենիքը խորհրդանշող «լացի պատ»ը ավելի մեծ հոգևոր կարողություն ունի, քան Չինաստանը՝ չինացիների համար:

Աշխարհակալություն - ահա՛ հայրենիքների թշնամին՝ հարա-զատ, թե օտար: Վերջ ի վերջո կործանվում է աշխարհակալող ամեն երկիր - Բաբելոն, Հռոմ, Բյուզանդիա, որովհետև նա սպանում է և՛ իր սեփական հայրենիքը:

Խելագար անձնասպանություն է աշխարհակալությունը, հոգե-սպանությո՛ւն:

* * *

Մարդկային գործերի մեջ հայրենիքի պաշտպանությունն է ամենասրբազանը:

Հայրենիքի չափ նվիրական է և պատերազմը հայրենական: Հավաքական ավազակություն և սպանություն է այլ կարգի ամեն պատերազմ:

Եվ ճշմարիտ հերոսները նրա՛նք են միայն, որոնք մեծագործում են և առաքինանում իրենց վտանգված հայրենիքը պաշտպանելու ժամանակ:

Հերոսի անունը պիտի զլանալ աշխարհակալական պատերազ-մի մասնակցող ամեն զորականի: Սպանության և կողոպուտի ելած բանակը կարող է քաջ ավազակներ ու մարդասպաններ տալ, բայց ոչ և հերոսներ:

* * *

Հայրենիքը չի տրվում այնպես, ինչպես ժառանգվում է հայրե-նական հարստություն: Դա ձեռք է բերվում ամեն մի սերունդի և նրա առանձին անդամի կողմից. ձեռք է բերվում հայրենաճանաչումով, հայ-րենապաշտությամբ, նրան արժանի դառնալու ձգտումով: Կարելի է հայրենիքում լինել, բայց հայրենիքից չլինել, կարելի է հայրենիքում ապրել, բայց և այնպես հոգեհաղորդ չլինել նրան:

Կարելի է, վերջապես, իրավապես հայրենատեր լինել, իսկ հոգեպես՝ անհայրենիք:

Արժանի չես հայրենիքիդ, եթե այն չես դավանում իբրև գերագույն նպատակ, իսկ անձդ՝ իբրև միջոց:

* * *

Սոցիալապես որքան արդար՝ այնքան զորավոր է հայրենիքը: Գերերջանիկ է մարդը, որ կարող է ասել. «Իմ հայրենիքում արևը ծագում է բոլորի և ամեն մեկի համար, այնտեղ երկիրը մշակելու և հոգեպես մշակվելու ազատություն ունեմ ես»:

* * *

Հայրենիք ստեղծել՝ նշանակում է բեկոր առ բեկոր հայտնա-բերել, իմաստավորել, պատմականացնել իր երկիրը: Նշանակում է այնպես հարազատել իր երկիրը, որ նրանում ոչինչ չմնա անհայտ, անխոս, մեռյալ: Նշանակում է վայր առ վայր նվաճել երկիրը, շունչ և իմաստ տալով նրանց:

Ի մի բան՝ հայրենիք ստեղծել՝ նշանակում է հարազատել իր երկիրը և հարազատանալ նրան: Այսպիսով ահա՛, նույնանում են ժողովրդի ոգին ու հայրենիքը: Սրանց դարավոր փոխներգործության արգասիք է հայրենիքը:

* * *

Որքան վսեմ է մի ժողովրդի հասկացողությունը հայրենիքի մասին, այնքան զորավոր է նրա երկիրը, նրա հայրենասիրությունը:

* * *

Իմ հայրենիքը - դա մարդկայնորեն այն լավագույնն է, որ կա Հայաստանում:

* * *

Կեսարը կուզեր լինել առաջինը գյուղում, և ոչ երկրորդը՝ քաղաքում:

Հեթանոսական փառասիությունն: Ես կցանկանայի լինել վերջինը Հայաստանում, միայն թե ազատ և անկարոտ լինեին նրա բոլոր զավակները:

Նման հայրենիքում բավարարված կլինեին բոլոր փառասիրությունները և ապահովված՝ բոլորի երջանկությունները:

* * *

Ների՛ր, Տե՛ր, ների՛ր ինձ, եթե մի օր հայրենիքիս օգտակար լինելու համար մեղանչեմ քո դեմ: Արդար է հայրենիքին ծառայել ամեն ինչով, բացի ստորությունից:

* * *

Մեռի՛ր այնպես, որ մահդ էլ ծառայի հայրենիքիդ - ահա՛ իմ դավանած հայրենասիրությունը:

Հերոսական գործերից ավելի ոգեշնչող է մա՛հը հերոսական:

IV
ՄԵՐ ՆԱԽԱՀԱՅՐԵՐԸ

Ժամանակին Աստված էր նախահայրը - Աստվածը իր ցեղի, տոհմի, և իր պաշտամունքը՝ կրո՛ն:

Թեև մի օր մարդը դադարեց Աստված կոչել իր նախահորը, վերջինը, սակայն, շարունակեց պահել իր սրբազան հանգամանքը:

Զատեցեք նախահայրերի աճյունը հայրենի հողից և դուք կունենաք երկիր մշակելի, բնակելի, բայց ոչ հայրենիք:

Հայրենիքը ստեղծվում է հողը, նյութը հաղթահարելով, երկիրն արժեքավորելով, իմաստավորելով նրան խորհուրդ և սրբազնություն հաղորդելով միայն: Իսկ սրբազանն աշխարհում նույնպես նախահայրերից է: Նրանցից է գերագույն քաջությունը՝ հերոսությունը, որի դափնիները չեն թառամում երբե՛ք:

Զորավիգ ունենալով նրանց ոգին՝ հոգնություն չգիտեն ռազմիկը՝ կռվում, կուլտուրայի մշակը՝ խաղաղության մեջ:

Նրանք են ստեղծիչը մեր պատմության, նրանցից՝ մեր գիրն ու գիրքը, նրանք են մտավոր լույսը մեր կյանքի, նրանցն է գերագույն իշխանությունը՝ հավե՛րժ, առանց որի և՛ թագ, և՛ հանրապետության նախագահ, և՛ դիկտատոր - աշխարհիկ ամեն մի իշխանություն մնում է անվավեր և անզոր:

Ճշմարտության պես ծերության անհաղորդ՝ նրանք խորհրդանշում են ո՛չ միայն իրենց ժողովրդի անցյալը, այլև՝ ապագան, վերահայտնվելով աշխարհ եկող ամեն հայ էակի մեջ: Անմահ՝ նրանք հանդիսանում են աղբյուրը մեր ազգային ոգու անմահության:

Նրա՛նք են սկզբնավորողը հայկականության: Արդ, թե ինչո՛ւ պաշտամունքի պակասը դեպի նախահայրերը, ասել է՝ սիրո և հարգանքի պակաս դեպի հայկականությունը:

* * *

Գերազանցի՛ր նախորդներիդ: Կռվի՛ր այնպես, որ քո ընթացքով հեշտացնես քեզնից հետո միևնույն նպատակի համար կռվողների գործը - ահա՛ մարտերի և մարտիկի բարոյական իմպերատիվը:

Այս բարոյականով մեր պատմության մեջ առավելապես Մամիկոնյան զորավարներն են առաջնորդվել: Ավարայրը հոգեբանորեն նախապատրաստված էր Մուշեղի, Վասակի, Մանվելի և այլոց հերոսականով: Վարդանն ու վարդանանքը իրենց հերթին, նախապատրաստեցին, հեշտացրին Վահան Մամիկոնյանի պայքարը, որը պիտի հարկադրեր Տիզբոնին՝ հրաժարվել Հայաստանը իրանականացնելու մտքից:

Իբրև օրենք՝ գերազանցի՛ր նախորդներիդ՝ խիզախությամբ, նվիրումով, հայրենահոգությամբ:

Գերազանցի՛ր - դա ոգու հրամայականն է, նրա հարաճուն զարգացման, կատարելագործման հրամայականը:

Ո՛վ չի գերազանցում իր նախորդներին՝ նա անարգում է նրանց անունը՝ մեղանչելով ոգու զարգացման օրենքի դեմ:

* * *

Ամեն անգամ, երբ Մասիսներին եմ նայում, ներքին հայացքիս առջև բարձրանում են վեհափառ ծակատները մեր նախահայրերի: Եվ, կրկնում եմ հանգույն գոթական ռազմիկի. «Ես կուզեի նրանց հետ լինել» - իմ փառապսակ նախահայրերի հետ:

* * *

Եթե թերություններ ունեմ - այդ կպարտեմ ինձ, իսկ այն, որ լավ ու լավագույն է իմ մեջ՝ նախահայրերի՛ս:

Արդ, թե ինչու ճակատամարտերում շահածս ամեն մի դափնին, երկյուղածորեն, նրանց հայտնի, թե անհայտ շիրիմներին դրի ես:

V
ՀԱՅԸ*

Նկարագրի անկախություն - ահա՛ էականը: Երբ պակասում է դա՝ ասել է պակասում է այն անփոխարինելին, առանց որի ժողովուրդները ուրույն մշակույթ չեն ստեղծում:

Ժողովուրդների ճակատագրի աստվածը պետք է փնտրել ոչ թե երկնքի վրա, այլ նրանց կրծքի տակ - նրանց նկարագրի մեջ:

Իսկ նկարագիրն այն է, ինչ որ ստեղծում են տվյալ երկրի աշխարհագրական դիրքն ու պատմությունը: Ժողովրդի ոգին է նկարագիրը, որ ենթական արտահայտում է իր հոգևոր ստեղծագործության միջոցով:

Ամեն նկարագիր իր հիմնական գիծն ունի, որը նրբերանգավորում ու շեշտում է ենթակայի հատկությունները և իշխում նրանց վրա:

Ո՞րն է հայկական նկարագրի հիմնական գիծը:

- Լրջությո՛ւնը, հայի մտավոր և բարոյական լրջությունը, որն ամեն բանից առաջ ծանրախոհություն է ենթադրում:

Խոսքիս ճշմարտությունը վճռապես հաստատում են՝

- Հայ ժողովրդի գործերի հազարամյա վկան՝ իր պատմությունը և իր էպոսը, որի հերոսների բարքն ու գործերը խոր հարգանք են պարտադրում.

- Իր հեթանոս աստվածները, որոնց նա օժտել է իր բարձր հոգեգծերով.

- Վերջապես, իր ինքնատիպ ճարտարապետությունը, որի կոթողները, շեն թե կիսավեր, կնմանվեն հսկաների, որոնք հայոց երկնքի տակ նստած՝ ձեռքը ծնոտին՝ կարծես աշխարհի բաներն են խոկում:

Այո՛, լուրջ է հայը՝ մտաբարոյապես:

Եվ, հենց այդ բախտորոշ հոգեգծով էլ պայմանավորվեց իր քաղաքական ճակատագիրը:

* * *

Հայը ոգու ժողովուրդ է, իսկ ոգուն ներհատուկ է տառապանքը:

* Մի հատված իմ «Հայկական նկարագրի հիմնական գծերը» ձեռագրից (ծանոթ. հեղինակի):

Բոցից, երկունքից, ցավից ծնած իր Վահագնը - ահա՛ հայի կենսազգացողությունը, նրա աշխարհայուրացումը:

Նրա համար չէ լոկ կեցության ուրախությունը: Հայի համար՝ աշխարհի հետ հաշտ և ուրախ լինելու համար բավական չէ կուշտ լինելը:

Ժողովուրդներ կան, որոնք կյանքն ու աշխարհը ընդունում են այնպես, ինչպես որ նրանք տրված են բնորեն, ինչպես որ նրանք կան առարկայորեն:

Իր էության բերումով՝ հայն իր գոյությանը հաղորդում է որոշ սրբազանություն և նպատակ՝ ձգտելով իմաստավորել և կատարելագործել այն:

Հայն իդեալի ժողովուրդ է, իսկ իդեալը ենթադրում է ոգու խռովք, նպատակասլացություն, լավագույնի կարոտ:

Աշխարհը տրված է ո՛չ միայն վայելելու, այլև՝ կատարելագործելու, բարեշտկելու այն - ահա՛ հայի աշխարհընկալումը, նրա էտիկական բարձր հասկացողությունը, որի հետևանքով այնքան վաղ մարդկայնացավ նա՝ կանխելով գրեթե իր բոլոր հարևաններին: Հայը հավասարապես տառապում է ինչպես իր գոյության ծանրածանր պայքարի արդար ցավից, այնպես էլ՝ աշխարհի և մարդկային ազգի անկատարելության գիտակցությունից:

Նրա համար աշխարհը դեռ այն չէ, ինչպիսին կարող է լինել, և պե՛տք է որ լինի:

Միերը՝ հայկական էպոսի հերոսը - իմա՛ ինքը հայ ժողովուրդը - մերժում է գոյություն ունեցող աշխարհակարգը՝ լավագույնի պահանջ զգալով և առաջադրելով:

* * *

Հային ծանոթ չէ չարության ուրախությունը: Չարախնդալ չէ՛, նա կուզի իր գոյության թշնամիներին իսկ միայն պարտված տեսնել, բայց ոչ և՛ դժբախտ:

Արծաթ չկա հայ մարդու ծիծաղի մեջ: Ծիծաղը հայի մեջ ավելի մտածումն է առաջացնում, քան սիրտը: «Ա՞յս է աշխարհը, մարդը» - ահա՛ նրա ծիծաղի հոգեբանական լեզուն, իմաստը:

Հայ հոգում տեղ չունի արտաքին նախանձը: Վաղուց է ինչ հայը նախանձողին - իր արքային - Արտավազդին շղթայի զարկած պահում է վիհերում: Նախանձում է չարը, նաև՝ հոգեպես տկարը: Հայը խորշում է թե՛ մեկից, թե՛ մյուսից:

Ժողովուրդներ կան, որոնք իրենց բացասորեն մարդկայինը - իրենց նկարագրի ամենադատապարտելի թերիները, կենսաբանական անհրաժեշտությամբ, ծառայեցնում են իրենց գոյության պաշտպանության: Հայը վաղուց է դատապարտել աշխարհաքանդ չարությունն

իբրև պայքարի զենք: Ի զուր են շները լիզում Արտավազդի շղթաները - արթուն է հայ դարբինը:

Հայ էության այդ չարամերժ գիծը- որ պատիվ է բերում ենթակային- մեծապես դժվարացրել է իր դարավոր գոյամարտը: Չարի ու բարու իր հասկացողությամբ, դեռ այսօր էլ հայը մղվում է ամենայն անշահասիրությամբ- անքաղաքագիտորեն - դիրք ճշտելով մեկի թե մյուսի հանդեպ, առանց հաշվի առնելու գոյություն ունեցող առարկայական պարագաները:

Իր այդ հոգեգծի պատճառով՝ նրա մտածողությունն ու արտաքին վարքագիծը ընդունել են ապաքաղաքական, որով և՝ անաշխարհահարմար բնույթ:

* * *

Աչքը կուշտ ժողովուրդ - ահա մի ուրիշը - ամենահայ-կակա՛նը հայի գովելի հատկություններից:

Խոսեցրե՛ք իր էպոսը, իր ֆոլկլորը և պիտի համոզ-վեք, որ հայի համար հացը՝ կեցության բարիքների շարքում առաջինը չէ:

«Ձեռքը բարձրացրեց Դավիթը՝ մանուկ, ուզեց ոսկին վերցնել. հրեշտակը, հեռացնելով ձեռքը, դրեց կրակի վրա, մատը կրակին սեղմեց և այրեց մատը. մատը բերանը դրեց և լեզուն այրեց. լեզուն այրվեց՝ սակավ համրացավ նա: Եվ սկսեցին նրան կանչել կակազ Դավիթ»*:

Այսպե՛ս, պատժելով իր ապագա հերոսի միամիտ արարքը՝ հայը հաստատել է իր անընչասիրությունը, իր հոգեկան պայազատությունը:

Հայոց արքան՝ Հայաստան հրավիրելով Նազովրեցուն, ասում է - թեև շատ մեծ չէ իր երկիրը, բայց կբավի երկուսին:

Մի ուրիշ թագակիր՝ Տրդատը, աշխարհակալելու սահմանված իր սուրը նետում է Սեպուհ լեռների մեջ:

«Հարգված ու կո՞ւշտ ես՝ գոհ եղիր, հո՛ղ է մնացածը»,- ասում է միջնադարի հայ երգիչը՝ Նաղաշը:

«Հարուստ է նա, ու լուսաբացից համեստ աշխատանքի է լծվել իր անդաստանի մեջ»,- ասում է անանուն իմաստասերը՝ ի՛նքը ժողովուրդը:

«Եթե հյուրեր եկան՝ հաց տուր, կերա՞ն հացը՝ մինչև դուռը տար»,- ասում է Ձենով Օհանը:

«Աստծուց ենք ե՛ս էլ, հացս էլ, ով կարիք ունի, թող վայելի»:

* «Սասունցի Դավիթ» (ծանոթ. հեղինակի):

Գիտենք՝ անցորդին է պատկանում թոնրից հանված հայ շինականի առաջին հացը: Ահա՛ հայը, և ահա՛ և հացը հայի համար, հացը՝ առնված բառիս ամենահայկական իմաստով:

* * *

Հռոմեացին մի առաքելություն գիտեր՝ իր կյանքը տրամադրել իր պետության, աստվածացնել այն և լինել հպարտ նրանով:

Դասական հույնի համար և գերագույնն աշխարհում իր քաղաք-պետությունն էր, որի փառքի և հզորության համար աշխատելով կառաքինանար անհատը:

Հայաստանի քաղաքական անկախության կորուստի փաստով՝ հայի համար դարերի ու դարերի պետության դերը պիտի կատարեր ազգությունը:

Ազգային գոյության խնդիրը - ահա՛ թե ինչն է կազմում հայոց պատմության առանցքը:

Այդ իսկ պատճառով հայ մարդու համար բարձրագույն արժեքը, սրբությունը, հեղինակությունը պիտի դառնար հայկականությունը՝ իբրև գիտակցված էութենական միասնություն:

Գիտենք, ժամանակին իսլամը փոքրասիական աշխարհամասի վրայով անցավ իբրև մի տարերային հեղեղ՝ իր ճամբին իրեն խառնելով բոլոր օտար գետերը և թավալեց դեպի ծովը: Մահմեդականացան գրեթե բոլոր ժողովուրդները: Միայն Արածանին և Արաքսը պահեցին իրենց ջրերի սրբությունը: Հայաստանը, սակայն, կղզիացվեց, պաշարվեց իսլամության ծովով: Այսպես լինելով հանդերձ, հայությունը մնաց իբրև գրանիտե ժայռ՝ իրեն խեղդել փորձող ծովում:

Եվ, այնուհետև, քանի-քանի եղեռններ, վայրագության նախճիրներ պայթեցին Հայաստանի գլխին:

Մի բազմաղետ երկիր, որն ըստ արաբ պատմագրի, դարերով ծեծեցին, տրորեցին «օտար սմբակներն ու կայծակները»: Այս պայմաններում գերապրեց հայ ազգությունը:

Աններելի սխալ է կրոնական կրքով բացատրել հայի հավատարմությունը քրիստոնեության հանդեպ: Հայ հոգուն անծանոթ է ֆանատիզմը. վկա՝ թոնդրակեցիների շարժումը, միջնադարի մեր կենսահաստատ պոեզիան, և մերօրյա ժամանակահարմար հայ եկեղեցականությունը: Տիրապետող գիտակցությունը հայի մեջ վաղուց է ինչ ազգայինն է, և ո՛չ կրոնականը, ինչպես որոշ ժողովուրդների մոտ: Նա շատ վաղ հայացրեց քրիստոնեությունը: Հայկականությունն է հայի ճշմարիտ կրոնը:

Արդ, թե ինչու եմ ասում՝

- Չկան «հայեր», կա Հայը:

Խորհրդածում եմ հայկականության մասին և միտքս հանգչում է նրա ամենաազնվական անոթների վրա:

Ահա՛ մեր նախահայրերը լուսադավան - Մեծն Ներսես, Սահակ, Մեսրոպ. ապա՝ հերոսական փաղանգը Մամիկոնյան զորավարների՝ Մուշեղ, Վարդան, Վահան՝ կենդանի վահանը Հայաստանի պաշտպանության, Աշոտ՝ մարտերի բոցերում երկաթացած. իսկ նոր և նորագույն ժամանակներում՝ Աբովյան, Խրիմյան, Ալիշան, Պատկանյան, Զավարյան: Վերջապես, հեղափոխականն ու ռազմիկը միշտ մահապատրաստ, որոնց համար Հայաստանը աստվածություն էր, Հայկականությունը՝ կրոն:

Եթե գեղեցիկն այն է, որ հարազատորեն համապատասխանում է իր սեռի-տեսակի գաղափարին, ապա՝ հայորեն հարազատ է նա, ու՝ հանդիսանալով ներկայացուցիչն ու կրողը հայկականության՝ վերջինը արտահայտում է առավելա-գույն չափով:

Գերազանցն իր տեսակի մեջ - ահա՝ ճշմարիտ հայն իբրև ոգի և կերպար:

* * *

Հայն իր Վահագնը ուներ - աստվա՛ծը քաջության: Քաջ և քաջապաշտ է նա:

Հոգեկան այդ պաթոսին՝ քաջության կպարտի հայը իր բազմավտանգ գոյությունը: Քաջ են, ընդհանրապես, ոգով ժողովուրդները: Սրանցից է հայը՝ գերազանցորեն: Հեթանոս հայի քաջությունը չտկարացավ նաև քրիստոնեական Հայաստանում: Սխրագործելու իր տենչանքին զուգահեռ՝ դա ընդունեց արտահայտության մի նոր ձև ևս - նահատակությունը կամավոր, որն իր խորքի մեջ ոչ այլ ինչ է, բայց եթե՝ գիտակցական մահվամբ քաջաբար անհամանալու ձգտումը: Ըստ էության՝ մահամերժ ոգու խիզախանքն է - քաջություն թե նահատակություն:

Հայն իր ամենասիրելի ու սրբացրած հերոսին անվա-ել է քաջ, և այսպիսով տվել իր գերագույն գնահատականը ոչ միայն քաջին, այլև՝ քաջության, ընդհանրապես:

* * *

Օտար լծերի տակ երկարորեն ապրած ժողովուրդներին հատուկ է մի հոգեգիծ, որը հոգեգիտությունը անվանում է «ստրկական երկյուղ»:

Այդ ամոթալի արատից, այդ չարիքից զերծ է հայ էությունը, որովհետև օտար իշխանության լուծը կրելով հանդերձ, նա չի դադարել իրեն զգալ ավելի բարձր իր երկրին բռնորեն տիրողից:

Տրդատներից մինչև Մամիկոնյանները, և Դավիթ Բեկից մինչև մի բուռ հեղափոխականների «Բանկ Օտոման»[46]ը գրավող Բաբկեն Սյունին՝ քաջությունը հայի համար եղել է այն, ինչ որ է համը պտուղի

համար՝ բնորեն: Այնպիսի մեծագործություն պիտի կատարեմ, որ նրա մասին խոսեն երկնքում անգամ՝ ասում է Վարդանը Սասանյան արքունիքում: Նաև ասպետական է հայավայել քաջությունը: Հայ էպոսի հերոսը առաջին հարվածը զիջում է Մսրամելիքին, առանց մտածելու, թե դա կարող է մահացու լինել իրեն համար: Այժմ հարվածելու հերթը Դավիթինն է, սակայն, միջամտում է հակառակորդի քույրը, և հայ հերոսը խնայում է իր առաջին երկու հարվածները Մսրամելիքին:

- Հե՛յ, հե՛յ, - ձայն է տալիս Դավիթը, նախազգուշացնում թշնամուն, թե գալիս է: Հին գող է Մսրամելիքը. հայ հսկան՝ բարեմիտ, միամիտ կոչվելու աստիճան:

Այսպիսին է հայի քաջը՝ արդարորեն հպարտ, բայց ոչ՝ բարձրագլուխ, գոռոզ:

Զա՛րկ միայն նրան, որն ի վիճակի է պատասխանելու զարկիդ - ահա՛ հայի մորալը:

* * *

Ժողովուրդները ևս մտածում ու գործում են ըստ իրենց աշխարահայեցողության, որն այլ բան չէ, բայց եթե նրանց տեսական, նրանց մտածողության նկարագիրը:

Հայոց ընդհանուր նկարագրի հիմնական որոշիչներից մեկն էլ շինարարական տենչանքն է՝ անշեջ, անսպառ:

Ինչո՞վ է պայմանավորվում այդ պաթոսը, ի՞նչն է սնուցանում այդ խանդը, և որո՞նք են նրա հոգեբանական նախադրյալները:

- Նախ՝ աշխարհի, մարդու և կյանքի մասին իր կառուցած էթիկական հասկացողությունը:

Պատմության նպատակաբանական սկզբունքին հավատարիմ՝ հայն իրեն զգում է ավելի իբրև պարտականության, քան միայն անձնական երջանկության ձգտող էակ: Արդ, թե ինչու հայի մորալը էվդեմոնիստական չէ - երջանկապաշտական չէ:

Նա ունի գիտակցությունը իր առաքելության, որի աստիճանական իրականացման մեջ է տեսնում երջանկության իր իրավունքը: Նա վոլունտարիստական տիպ է: Եթե սիրեր փիլիսոփայությունը՝ նա պիտի նախընտրեր Ֆիխտեին - նրա կամապաշտական իմաստասիրությունը: Ծանրածանր պայքար, վտանգներ, և իբրև սրանց բնական հետևանքը՝ մշտական տառապանք - ահա՛ բովանդակությունը հայոց պատմությա՛ն, ահա՛ եռյակ դաստիարակիչները հայ կամքի: Աշխատա՛նքն է օրենքների օրենքը հայի համար: Կուրորեն ու կրավորաբար չենթարկվել իր դժխեմ ճակատագրին, այլ՝ պայքարել նրա դեմ, պայքարել շինարարելով: Այսպես են վարվում հայաբարո ժողովուրդները միայն:

Հայի համար շինարարությունն է գերագույնը պայքարներից, և հավերժացողը հաղթանակներից: Շինարարել նշանակում է՝ ճգնել, հաղթահարելով իր տառապանքը: Երբ խզված է արտաքին, քաղաքա-

կան ազատությունը՝ որոշ տիպի ժողովուրդներ այն փոխարինում են ներքին ազատությամբ, - մի բան, որ ենթակային տալիս է շինարարությունը: Այս դեպքում դեր է կատարում նաև հոգևոր կոմպենսացիայի օրենքը. իրավազրկված՝ գործելու մի բնագավառում, ենթական երևան է գալիս մի այլում: Անկարող սեփական հայրենիքում իր կարողության ու կորովի համար ասպարեզ գտնել՝ հայ տաղանդը և քաջությունը տեղ գտան ու երկար ժամանակ մնացին բազմած Բյուզանդիոնի գահի վրա:

* * *

Չար ու ավերիչ են լինում ստեղծագործելու անզորությունից տառապող ժողովուրդները միայն:

Հայաստանի հարևաններից և նրա հեռակա ոսոխներից, դժբախտաբար, քչերն էին զերծ այդ չարանյութ տկարությունից:

Ահա՝ թե ինչու արյունը, ավերն ու ավարը անպակաս եղան Հայաստանից: Այս պայմաններում իսկ, իր էության հավատարիմ՝ հայը պիտի մղվեր շինարարել և վերաշինել անդադրում: Նա, որ մի ժամանակ ասել էր՝ «Անին շե՛ն, աշխարհն ավեր», պիտի չկարողանար հաշտվել իր երկրի կիսավեր վիճակի հետ: Իր պատմության կարելիության սահմաններում՝ հայն այսպես է հատուցել իր գոյության թշնամիներին. «Քանդեցին, ահա ավելի լավը կկառուցեմ»: Կառուցել ավելի լավը, քան էր կործանվածը - այս եղավ հայի նշանաբանը պատմականորեն: Եվ, հետամուտ ավելի անթերին կառուցելու, հայը պիտի ճարտարանար, պիտի կատարելագործեր իր շինարարական տաղանդը: Վկա՝ Բագրատունիների բազմաշեն մայրաքաղաքը, Կիլիկիայի Սիսը, Տարսոնը, որոնք հարաբերորեն այնքան կարճ ժամանակամիջոցում կուլտուրապես օրեկան-տարեկան դարձան:

Դա այլևս սովորական շինարարություն չեր, այլ՝ մշակութային հրաշագործություն:

* * *

Հոգևորապես չափահաս և ազգորեն ինքնատիպ - ահա՝ թե իբրև ինչպիսին է մեզ ներկայանում հայը իր պատմության դեռ արշալույսին:

Չկա՝ դիմազուրկ արվեստ. եթե կա՝ մեռյալ է դա: Հայն ունի ուրույն դեմք, շեշտված անհատականություն, իր շինարարությունը՝ յուրահատուկ ոճ:

Շինարարելիս, ստեղծագործելիս՝ նա սիրում է ex ipso fonte bibere*:

---

* Խմել սեփական ակնաղբյուրից (ծանոթ. հեղինակի):

Լուսաբաղձ ժողովուրդ, որն ապրել, պայքարել, շինարարել է գիրքը ձեռքին: Նա գործել ու ստեղծագործել է՝ միտքը երկնքում, ձեռքը երկրի վրա՝ պիտի ասեր Ալիշանը:

Մեր երկրագնդի վրա երկու ուժեր չեն հոգնում – ժամանակն ու հայը՝ մեկը կործանելու, մյուսը՝ վերաշինելու:

* * *

Պատմության նպատակն է ժողովուրդներին և մարդկային անհատներին վարել դեպի ներքին բարոյական ազատություն, առանց որի սակավարժեք է արտաքին ազատությունը:

Երբ մի ժողովուրդ՝ հոգեկան կուլտուրայի զորությամբ տիրել է բարոյական ազատության, օտարի լուծը, բռնությունը կարող է միայն խոչընդոտել նրա պատմական չուն, բայց ոչ և՝ ուժաթափել, խեղդել նրա ոգին: Այդ ներքին ազատությունը ձեռք է բերվում շինարարությամբ և ստեղծագործությամբ միայն:

Որքա՛ն պոեզիա, որքա՛ն խորհուրդ կա հայ շինականի կյանքում: Նա սրբազնության շունչ է հաղորդում իր աշխատանքին՝ երկիրը մշակելիս անգամ:

Երկրագործել դեռ այսօր էլ հայի համար նշանակում է՝ ազնվացնել բնությունը, և ուրախ պտղառատություն տարածել: Միհր-միթրայական այդ վեհ հասկացողությունը աշխատանքի մասին գալիս է հեթանոս դարերի խորքից:

Իսկ ճարտարապետել - հայկական, ինչպես և հեգելյան իմաստով - նշանակում է՝ սրբել, սրբագործել երկրի որոշ կետերը, որպեսզի այնտեղ Աստված ու աստվածայինը բնակվեն:

Այսպես, այս նպատակով է տաճարներ կառուցել հայը - տաճարնե՛ր, որոնց գմբեթները ո՛չ միայն ծգտում են դեպի երկինք, ինչպես գոթականը և անտիկ- այլև՝ անխոս խոսում նրա մասին:

Սահմանակցել իդեալականին, սրբազանին և հավերժին, նրանց շունչը խառնել իր առօրյական կյանքին, նրանցով սնուցանել իր ստեղծագործական ավյունը - ահա՝ հայ հոգին:

Հավերժանալ շինարարելով, ստեղծագործելով - ահա՝ հայկականը, չափազա՛նց հայկականը:

Միայն նման ժողովուրդը, որը սիրում է աշխարհն ու իրերը դիտել sub specie aeternitatis - հավերժության բարձրունքից՝ կարող էր պատմության ամենադժվարին պայմաններում ոչ միայն վարել իր անհավասար գոյամարտը, այլև հարուստ ստեղծագործության փառահեղ էջ բանալ համաշխարհային մշակույթի պատմության մեջ:

Շինարարության բնավին հերո՛ս է հայը:

VI
ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԽՈՀԵՐ *

Ի՞նչ կարող է, և ի՞նչ չի կարող մարդը: Այդ հարցին պատասխանելուց առաջ պետք է ճշտել՝ ո՞ր մարդուն է վերաբերում դա:

Չկա վերացական մարդը. մարդն ընդհանրապես կա կոնկրետ, կա որոշ մարդը:

Խորապես տարբերվում է ոչ միայն այսինչ մարդն այնինչից, այլև՝ նույն անձն իրենից՝ ըստ իր տարբեր հոգեվիճակների: Ահա՛ մարդը, որը հաջողել է հաղթահարել իր ներքին արգելքները՝ հոգեկան ծուլությունը, կույր կենսասիրությունը, մահվան երկյուղը և այլն:

Ահա՛ մի ուրիշը, որի հոգու վրա դեռ ճնշում է ներքին արգելքների լուծը: Տարբերության մի ամբողջ ծով է բաժանում այդ երկուսին:

Երբ մեր ոգին գերի է ներքին կույր ուժերի-արգելքների՝ հաճախ մարդկորեն կարելին մեզ թվում է անկարելի:

Փորձեցե՛ք, սակայն, հաղթահարել ձեր ներքին արգելքները՝ արտաքին արգելքներն ու դժվարությունները պիտի թվան նվազ դժվարահաղթ:

Ոգի՛ն է գծում մարդու կարողության սահմանները - նրա բարոյական կարողության:

* * *

Ճշմարտությունը հասկանալուց մինչև այն ընդունելը, և այդ վերջինից մինչև այն գործադրելը առնվազը յոթն օրվա ճանապարհ է:

* * *

Սոկրատին սպանող հասարակությունը այլևս սոկրատներ չծնեց. նա ամլացավ հոգեպես: Արդա՛ր պատիժ:

* * *

Ճշմարտորեն ազատ է նա՝ միայն, ու չի զգում բռնության առկայությունը:

Ազատ կարող է լինել հզորազոր ոգու տերը միայն:

Հոգով տկարների համար մարսելի սնունդ չէ ազատությունը:

* * *

Զգալ, որ հոգի ունես - ահա՛ թե երբ են բացում, խոսում, ժպտում ճշմարիտը, բարին, գեղեցիկը:

---

* Առնված իմ նույնանուն ձեռագրից (ծանոթ. հեղինակի):

Անհոգի,- ասում է պարզ ժողովուրդը և դրանով անսխալորեն բնութագրում այնպիսիներին, որոնք կարող են իրենց չարագործությունները ու դաժանությունները ներոնականության հասցնել:

Հոգու համար՝ երկնքի կապտության հետ մրցող շուշանը բույս չէ՛ միայն. արևի հետ ամեն օր առաջինը համբուրվող լեռը՝ հողեղեն կարկառ, բարձունք չէ՛ միայն: Հոգին - որին մատչելի է ամեն խորք, բարձունք, հորիզոն - հոգին է բանալին տիեզերքի, թարգմանը բնության:

Զգա՛լ, որ հոգի ունես - ա՛յս է մարդկայնացնում մեզ, միայն ա՛յս:

* * *

Պատմական գործիչը պատկանում է ոչ միայն իր դարաշրջանին, անցյալին, այլ՝ իբրև էություն՝ նաև ապագային:

Իբրև զարգացող ոգի նա երևան է գալիս բոլոր եկողանցնող սերունդների մեջ, որով նա միշտ ժամանակակից է:

Պատմական անձը քարեղեն արձան, քարացած էություն չէ, այլ՝ հավերժաշունչ ոգի:

Այլ կերպ մոտենալ պատմական անձերին՝ կնշանակի մեղանչել նրանց ոգու դեմ: Հինգերորդ դարի կրոնաշունչ Մամիկոնյանները մեր օրերում պիտի առաքինանային իբրև քաղաքական հերոսներ:

* * *

Ուզո՞ւմ ես գործել ճշմարիտը, ապա ուրե՛մն կանգնեցրո՛ւ ճամբիդ հանդիպած ամեն մեկին և ասա՛.

«Բարեկա՛մ, լավ է Դիոգինեսի տակառով բավականանալ, քան Արիստիպոսի նման քարշ գալ թագավորների ետևից ու հացկատակել նրանց սեղանների շուրջը»:

Դու գործած կլինես գեղեցիկը, եթե հաջողես մտքիդ ուժով հաճախ դեպի վեր, դեպի կեցության կատարները բարձրացնել խոնարհ ճակատները մարդկանց:

Իսկ եթե գործել ուզես բարին՝ մի՛ զլանար ամրացնել թևը հանդիպածդ ամեն վիրավոր արծվի:

Այսպե՛ս վարվիր թեկուզ մտովի, և դու ծառայած կլինես թե՛ մարդկային ազգին, թե՛ մարդկայնության:

* * *

Երկու բան չեմ ներում մարդուն՝ իր ստորությունները, որոնցով սնվում է իր բարոյական տկարությունը, ապա՝ իր տկարությունը, որից ծնունդ են առնում իր ստորությունները:

* * *

Գա՞ի, թե՞ ոգու մեծություն. դրված այս երկընտրանքի առջև՝ ես պիտի ընտրեի վերջինը: Ի՞նչ արժեն գահերը, երբ նրանց վրա բազմում են հաճախ մարդկային ցեղի ամենաեղկելի ներկայացուցիչները:

* * *

Ասում են՝ կշտացած առյուծը կորցնում է իր կատաղությունը:

Իսկ մարդն անկշտում է. որքան խժռում, որքան հարստանում՝ այնքան կատաղում է նա:

Չէ՛, մարդուն բարի չես դարձնի՝ նրա կերն ավելացնելով:

* * *

Կորցնելով սրբության զգացումը՝ մարդն անխուսափելիորեն դառնում է շնական և մարդատյաց:

* * *

Մարդկային անհատը չի դադարում միջոց լինելուց նաև այն դեպքում, երբ երևան է գալիս իբրև հանճար:

«Աստվածներ»ը Աստված չեն:

* * *

Փախի՛ր նրանից, որին զզվանք չի պատճառում և ոչ մի ապականություն՝ շոշափելի թե բարոյական:

Նմանը անընտրող է լինում կյանքում, նաև՝ ապականարար:

* * *

Իր խորքի մեջ մորալ է ամեն վարդապետություն, կրոնական թե ընկերային, որը մտավոր կուրություն է պահանջում իր դավանողներից: Այո՛, կեղծ է, հակամարդկային նմանը, որով և՝ մերժելի:

* * *

Կա բռնության ամենազարհուրելին, անասնացուցիչը ու անարգիչը մարդկային ազգի՝ մտավոր բռնությունը, որը բանավոր էակներին մտածողության մի որոշ ձև և ուղղություն պարտադրելով՝ խեղում է նրանց ոչ միայն մտապես, այլև՝ հոգեպես:

* * *

Ստորություն, երկչոտություն, դաժանություն - ահա՛ եռյակ կրքեր՝ կույր հրեշներ, որոնք ծնվում են իրարից: Երբ մեկը երկչոտ է, նա չի ուշանա հռչակվելու ստորության իր գործերով: Իսկ ստորը անխուսափելիորեն պիտի դաժանանա: Ներոնը՝ երկչոտության, ստորության ու դաժանության այդ հրեշը քաջություն չունեցավ՝ իր ամենանարգ վիճակի մեջ իսկ՝ անձնասպան լինել:

Դաշույնը՝ ստրուկների ձեռքով՝ վերջ դրեց նրա կյանքին:

* * *

Անե՛ծք, յոթնիցս անե՛ծք այն ճոխ սեղանին, որի շուրջը տեղ չունեն այն պատրաստողները միայն:

Ի՞նչ, միթե նման սեղան չէ օրվա ընկերային կյանքը:

* * *

Մարդն օգտվել գիտի և՛ թույներից՝ հիվանդության դեմ: Վաղուց է ինչ նա մահվան դեմ հանել է հենց մահվան զենքը - թույնը՝ այն չափավորելու, բարեխառնելու:

Տարբեր են հոգևոր աշխարհում գործող թույն-չարիքները, որոնք մնում են բարոյապես սպանիչ բոլոր դեպքերում:

Չէ՛, չի՛ կարելի չափավորել, բարեխառնել չարիքը: Ըստ էության՝ չափ չունի չարիքը - իր բոլոր ձևերի տակ մե՛ծ է դա:

Միևնույն ճամբով է ընթանում կյանքը, թե՛ աշխարհակալի, թե՛ այլոց ողորմությամբ ապրող մուրացիկի - գերեզմանատա՛ն ճամբով: Ի զուր աշխարհ եկած չես լինի, եթե այդ ճամբին մի հատիկ ծաղիկ ավելացնես կամ նրանից մի տատասկ հեռացնես:

Հավատա՛ - մարդն ու աշխարհը ավելի են շահում շատերի համեստ, բայց մարդկորեն բարի գործերից, քան սակավաթիվ անհատների մեծագործություններից: Չի՛ լինում և՛ բարության փոքրը. դա էլ միշտ մեծ է ըստ էության, մե՛ծ իր ամեն մի արտահայտության մեջ: Բուդդան, մի կարապի կյանքը փրկելով՝ դրեց սկիզբը սրտի կրոնի, սիրո իմաստասիրության:

* * *

Ընկեր ու բարեկամ փնտրի՛ր տառապանքի, ճշմարտության և կատարելության ճամբաների վրա: Ընկերացի՛ր ամեն տառապողի, ճշմարտության հետամտողի հետ, և միայն նմանների առջև բա՛ց էությանդ դռները:

Այս ճամբաներից դուրս, սակայն, եղիր և՛ փականք, և՛ բանալի շրջապատիդ համար:

* * *

Ճշմարտորեն ազատ է նա միայն, ով ազատ է մահվան երկյուղից:

* * *

Չեմ սիրում միայն ձևական օրենքի կողմից սահմանված պարտականությունները: Ի՞նչ կկորցներ աշխարհն իր հոգևոր գանձերից, եթե նման պարտականությունները մնային անկատար: Ձևական

օրենքի հողի վրա, լավագույն դեպքում, աճում են բացասական առաքինություններ միայն, որոնք հերոսական մի հատիկ տող չեն ավելացրել աշխարհի պատմությանը: Ձևական ո՞ր որենքն է պահանջում, որ մարդկային անհատը մեռնի իդեալի, սրբության, հայրենիքի համար: Մի՛ գողանար - ահա՛ ձևական օրենքը, որը մարդը հեգնում է իր գոյության առաջին իսկ օրվանից: Գերագույն արժեքների համար՝ ներքին մղումով, կամովին մեռնում է ո՛չ թե ձևական օրենքի հպատակը, այլ մարդը՝ ներքնապես ազատագրված մարդը:

* * *

Թեև ամեն ժողովուրդ իր հայրենիքն ունի, մարդկությունը, սակայն, դեռ մնում է անհայրենիք:

Մարդկությունն է մարդկության հայրենիքը, որ դեռ գոյություն չունի:

* * *

Բարիքը, որը բախվելով ավելի մեծ և անանձնական բարիքի հետ, մեզ զրկում է նրանից՝ դառնում է չարիք:

* * *

Արդար լինելու համար՝ մարդկանց մեջ - թեկուզ թշնամիդ լինեն - փնտրի՛ր նախ նրանց լուսավոր կողմերը:

Սկսեցի՞ր բացասականներից՝ պիտի չնկատես դրականները, վասնզի պիտի չուզենաս նկատել:

* * *

Ուժերիցդ վեր չէ որևէ պարտականություն - որքան էլ ծանր լինի դա - եթե գտնում ես, որ պարտական ես կատարելու այն:

* * *

Նվազ զբաղվիր այլոց թերություններով, այլապես պիտի դադարես սեփական թերություններդ նկատել:

* * *

Միայն ստոր կրքերից զերծ մարդն է ընդունակ պայծառորեն խորհելու: Չարերը թանձրամիտ են լինում:

* * *

Ազգային հավաքական երջանկությունը հնարավոր է միայն հաղթահարված - և ոչ՝ սանձված միայն - ԵՍ-ի հայրենիքում:

* * *

Գինովություններից ամենագլխիչը իշխանությամբ գինովնալն է:

Նմանը հեշտությամբ է կոխում-անցնում իր իշխանության սահմանները, և հաճախ ի չարը գործ դնում այն: Եվ մի օր էլ, անխուսափելիորեն, դառնում է - լատինասությամբ՝ malorum claras patrator - վատության դիկտատոր:

* * *

Արդա՛ր է, որ միշտ էլ գիտության տանք վերջին խոսքը: Այսպես վարվելով, սակայն, չմոռանանք, որ միայն տգիտության սահմանակցող միամտությունն է այս կամ այն գիտնականի շրթներից գիտության վերջին խոսքն սպասում:

Ամենագետ չէ և՛ գիտությունը - նա էլ վերջին խոսք չունի:

* * *

Զա՛փ ճանաչիր, առավել ևս՝ փառասիրության մեջ:

Ճիշտ է, աշխարհը ծափ է տալիս փառքով պսակվածներին, բայց անփառունակ աչքը - իմա՛ նախանձողի աչքը - դժվար է տանում փառքի փայլը: Աշխատի՛ր, որ փառքդ ըստվերիդ պես ընթանա հետևիցդ, բայց երբե՛ք՝ առջևիցդ:

* * *

Սրբության բարձրունքներից մինչև գոյության գռեհիկը - ահա՛ ուղիների այն աշխարհը, ուր դեգերում է մարդկային ոգին: Եվ, բևեռանում հաճախ - վսեմանում կամ գռեհկանում: Հենց այդ բևեռացմամբ պիտի բացատրել սրբի և սինլքորի գոյությունն աշխարհում:

* * *

Ինձ տրված չէ առանց բարոյական զարհուրանքի դիտել մարդուն իր նվաստության մեջ: Այդ վիճակում տեսնել պիտի չուզեի թշնամուս անգամ: Լավ է դժբախտ, քան նվաստամիտ լինել: Նվաստանալով՝ ենթական խաթարում է իր մարդկային կերպարը, սպանում իր ներքին մարդուն: Չնվաստանալու համար՝ սպարտացի մանուկը քարի վրա իր գանգը փշրեց:

Մի՛, մի՛ նվաստացիր, անգա՛մ Աստծուդ առջև:

* * *

Անբարոյական է այն ամենը, որ նվազեցնում է մեր հոգեկան արիությունը:

* * *

Ո՛չ խորություն, ո՛չ բարձրունք՝ հոգևոր տափարակ - ահա՛ նա, որ և՛ ուսուցիչ է, և՛ հասարակական գործիչ միաժամանակ:

Միտքս խռովված էր այդ օրը, երբ հանդիպեցի նրան, և փորձեցի խոսել հավիտենական առեղծվածների մասին:

Կսպասեի իր խոսքին, երբ ձեռքը տանելով դեպի գլխարկը դիակը նորից հարեց. «Վերջերս անկանոն է քունս»... և, բաժանվեցինք:

Խեղճ ժողովուրդ, վայ քեզ, վայ մանուկներիդ, և երիցս վայ ապագայիդ:

* * *

Կռիվներում հերոսանալուց ավելի դժվար է կյանքում հերոսավայել կեցվածք ունենալը:

Հերո՞ս ես՝ ապա ուրեմն՝ աշխատիր բոլոր պարագաներում արժանի լինել անվանդ:

* * *

Հերոս չէ նա, ով գիտակցում է, որ ինքը հերոս է: Ոգով հսկա լինելով հանդերձ, ծերություն չճանաչող մանուկ է հերոսը, որը սկսելով գործելիս իսկ կարծում է թե կատարում է մի շատ սովորական գործ, և ոչ ավելին:

* * *

Մեծ մարդը՝ մեծ նավի կնմանվի: Վայ նրանց, որոնք հանդիսանում են իբրև թիրախ՝ նրա հարվածներին:

Նա զորավոր է, երբ չափվում է զորավորների հետ:

Սակայն, վայ իրեն, երբ փորձում է պաշտպանվել՝ այն էլ անհնշան հակառակորդների դեմ:

* * *

Երբ խոսքդ սրբազանորեն կամ ողբերգորեն բարձր առարկաների մասին է, աշխատիր, որ նրա վրա արյան հետքեր լինեն - և սրտիդ, և մտքիդ արյան:

* * *

Նոր ամեն մի ցավ ինձ կրկնել է տալիս:

«Չէ, որ դու ինձ չես ընկճի: Դու, որ թեւատում ես տկարներին, պիտի ավելի ես ջարդես իմ ոգին: Արդ, թե ինչու եմ ողբում քեզ: Միայն քո շնորհիվ հզորը դառնում է հզորագոր: Ահմ այդպիսին է իմ ոգին»:

* * *

Դերեր կան, որոնք միջակություն չեն վերցնում
Կա՞յր ես՝ եղի՛ր Մարկ Ավրելիոս
Իմաստասե՛ր ես՝ եղի՛ր Պլատոն
Զորավա՛ր ես՝ Ավարայրի Վարդան եղիր

Մեծ պաշտոններն առանց հոգեկան մեծության նման են կավե անդրիի՝ դրված ոսկե պատվանդանի վրա:

* * *

Ազգային ոգի - ահա՛ գերագույն հերոսը, միա՛կը, մեր պատմության անիվը դարձնող, մեր հավաքական ճակատագիրը վարող հերոսը:

Էապես միայն դա է գործում պատմության մեջ և պատմության համար: Անհատ հերոսներն ոչ այլ ինչ են, եթե ոչ միայն անձնավորուներն այդ ոգու:

Մնում են հերոսները՝ Մանվելները, Մուշեղները, Վարդանները. մնում է, սակայն, նրանց ոգին, որն իր մարմնավորումը գտնելով այլ հայերի մեջ՝ շարունակում է ապրել ու ներգործել:

Եվ հենց սրանում է հերոսների անմահությունը: Չէ՛, չի՛ մեռնում հերոսը. նա միայն իր անոթն ու անունն է փոխում:

* * *

Իր ժողովրդի հոգեկան հզորության արտահայտիչն է հերոսը, բայց ոչ և՛ չափը: Ժողովրդի հոգևոր պոտենցիալը, նրա կարողական ուժերը չի արտահայտել և ո՛չ մի հերոս:

Ժողովուրդն ավելի՛ն է, քան իր ամենամեծ և փառաշատ հերոսը:

* * *

Հերոսի կյանքը միշտ էլ մեծության ու փառքի դժվարին վերելք չէ միայն, այլև՝ Գողգոթա:

Քչերին, շա՛տ քչերին է տրված վայելելու իրենց փառքը - այն սակավություններին, որոնք հաջողում են իրենց վերելքի ժամանակ շրջանցել Գողգոթան:

* * *

Աշխատի՛ր, որ խոսքդ լինի համակ լույս և ճշմարտություն - կայծա՛կ, որը զարկելուց առաջ լուսավորում է առարկաները:

* * *

Բաներ կան, որոնց էությունը տկար խոսքը արտահայտում է այն չափով միայն, ինչ չափով կաթիլն արտացոլում է անսահմանությունն ու վեհությունը աստղալից երկնքի:

Մենք ազդում ենք ոչ այնքան նրանով, որ հաջողում ենք արտահայտել, որքան՝ մեր խոսքի ցավով, որ չենք կարողանում արտահայտել մեր զգացածը:

Կարողանալ ընթերցողին, լսարանին զգացնել տալ այն, որ մեզ չի հաջողվում արտահայտել - ահա՛ հենց այդ անարտահայտելի զգացողությամբ են ազդում ճշմարիտ գրողն ու հռետորը:

Սրանում է նրանց բարձր կարողությունը, գերագույն արվեստը:

Նրանք տիրում են խոսքի հոգուն, նրա բովանդակ էներգիային, նրա առավելագույն արտահայտչականության - անարտահայտելին արտահայտելու իրենց ճիգի, ցավի, հզոր խոսքի իրենց կարոտի զգացողությամբ:

Ամենաարտահայտի՛չը խոսքի...

Ա՛հ, սրա ցավը ես զգացել եմ ողջ կյանքում:

Արդյո՞ք, դա միայն խոսքի աստվածների՞ն է տրված: Երևի՛:

* * *

Երբեմն ժամն աշխատում է և՛ վատերի համար, իսկ ժամանակը՝ միշտ էլ և բացառաբար՝ արժանավորի՛:

Ժամը երբեմն ժպտում է, բարձրացնում նաև անարժանին, ժամանակը, սակայն, մի օր նմանին իր կեղծ բարձրունքից զարկում է գետին, փառազրկում:

Ժամի ծնունդ է ամեն բախտահաս:

Դո՛ւ բարեկա՛մ մեծ բան մի համարիր այն, որ քեզ տալիս է ժամը, վայրկյանը: Դու գործիր ժամանակների՛ համար:

* * *

Ուզո՞ւմ ես հաղթահարել ցավդ՝ արձանացրու այն, ապա՝ կանգ առ նրա առջև ու ասա. «Այո՛, բարեկա՛մ, անծանոթ չենք իրար. քեզնից առաջ ես ճանաչում էի ուրիշներին, քեզնից ավելի մեծերին»:

* * *

Մեր սեփական ցավերը մեղմելու, մոռանալու մի հատիկ միջոց կա - մտածել այլոց ցավերի մասին:

* * *

Ձինաթափված ամեն մի կիրք մի նոր զինակից է, հաղթահարված ամեն մի ցավ՝ հոգևոր հզորանքի նո՛ր աղբյուր: Գիտե՛ս, ցավից վայում էին աստվածները Օլիմպիոսի, երբ նրանց կողքերին Արամազդի շանթերն էին թաղվում: Քեզ, բարեկա՛մ, քեզ վայել չէ ցավի նման արտահայտությունը, վասնզի դու մարդ ես, մարտի՛կ:

Ուրեմն, սովորի՛ր ժպտալ անգամ տառապանքների և զրկանքների մեջ: Նման պահերի՛ն է աճում, հզորանում, վեհանում մեր ոգին: Կանգնի՛ր բարձր ճակատագրից և դու կմնաս անմատչելի տկարության համար:

Ահա՛ գերագույն երանությունը, որին ձգտում է հոգիս:

Քայլի՛ր իմ ճամբով, բարեկա՛մ:

* * *

Ո՞րն է պատմության ամենաուսանելի դասը:

- Չկորցնել չափի զգացումը, երբ դիպվածը մեր ախոյանին մեր ձեռքն է հանձնել: Վաղը պատմությունը կարող է մեր ախոյանին կարգել դատավոր մեզ դատելու համար: Եղի՛ր արդար, արդա՛ր եղիր, քանզի դա է լավագույն քաղաքականությունը: Գիտցի՛ր, մեր արդարությունից մենք ենք առաջին շահողը: Մեր երկրագնդի վրա դեռ ոչ ոք չի զղջացել արդար լինելու համար:

Ճշմարտորեն զորավո՛րն է արդար:

Եվ, միայն արդա՛րն է ճշմարտորեն զորավոր:

* * *

Երջանկությո՛ւն: Ո՞վ է երջանիկ:

- Հիվանդի համար՝ առողջը, աղքատի համար՝ հարուստը, այն վերջինի համար՝ է՛լ ավելի հարուստը:

Երջանիկ է և՛ կալանավորը, որի խուցի կույր պատուհանով արևը, երբեմնակի, իր մեկ-երկու աղոտ ճառագայթն է ներս ուղարկում:

Չէ՛, չկան, նույնիսկ աշխարհիկ առումով երջանիկներ չկան:

Կան մարդիկ, որոնց դժբախտները երջանիկ են համարում:

Կան, սակայն, գերերջանիկնե՛ր - նրանք, որոնց հաջողվում է իրենց կյանքի գործը հերոսական մահով պսակել:

* * *

Ես իմ կյանքով հաստատեցի Հերոդոտոսի խոսքը. «Վտանգավոր է չափից ավելին ցանկանալ»:

Ես ուզեցի, որ մեր ցեղի գոյության թշնամին հենց իմ օրով նստի իր հայրենիքի փլատակների վրա, և վայի՛ նախանձելու յոթնիցս անիրավված իմ ժողովրդի ճակատագրին:

* * *

Տեսնո՞ւմ էք թիթեռնիկի հետևից վազող երեխային: Նրան գուցե և հաջողվի բռնել իրեն հրապուրող թռչող ծաղիկը, բայց, ավա՜ղ, կարճատև է լինելու իր ուրախությունը - նա պիտի սպանի նրան, կամ էլ փախցնի առանց ուզելու:

Արդյո՞ք նույնն էլ տեղի չի՞ ունենում երջանկություն կոչված թիթեռնիկին հետամտող չափահասների հետ:

Որքան եթերային է թիթեռնիկ-երջանկությունը, այնքան կոշտ է մարդկային էությունը: Միայն հոգու մշակույթի դարի՛ն է տրված լինելու, միաժամանակ, նաև երջանկության դար, որը կանխավ պիտի համարել սակավաթիվ նրբահոգիներին միայն, որոնց շարքում առաջին տեղը խորհրդագետ[47] Մեթերլինգին է պատկանում, անվիճելիորե՛ն:

* * *

Արդարև, առանց գիտության հնարավոր չէ վերակառուցել բնությունը. ճիշտ է, սակայն, և՛ այն, որ գիտությամբ չես հոգեփոխի, չես վերանորոգի մարդուն:

Գիտությունը մարդկայնացուցիչ հատկություն չունի - նրանից օգտվում են և՛ բարի, և՛ չար նպատակների համար: Ահա՛ թե ինչու պիտի բացատրել մարդկային անհատի բարոյական անմշակությունը գիտության մեր դարում: Մարդկայնանալու համար պետք է հետևել նախ Սոկրատին, ապա հետո՝ Դարվինին:

* * *

Մարդու բարոյական կողմը, ամեն բանից առաջ, արդյունք է իր հետապնդած մեծ ու փոքր նպատակների:

Ամեն մի նպատակ, ըստ իր որակի, ենթակայի մեջ առաջացնում է որոշ հոգեվիճակ, իսկ այդ վերջինը կաղապարում է նրա նկարագիրը, նրա էության հոգևոր կողմը, նրա ներքին մարտը: Նպատակը, նպատակասլացությունն է կյանքի շարժիչ ուժը: Նոր նպատակադրություն, ասել է՝ ներքին ուժերի նո՛ր շարժ, մտածողության նո՛ր ուղղություն, պայքարի նո՛ր հրայրք:

Ուժածին է ամեն նպատակ, և իբրև սկզբունք, նաև՝ արգասավոր է, սակայն, ոչ հավասար չափով:

Անձնական նպատակներն զբաղեցնում են մեր ուժերի նվազագույնը միայն:

Մարդը հոգեպես աճում է առավելապես այն դեպքերում, երբ շարժման մեջ է դնում իր ուժերի առավելագույնը և լավագույնը: Դժբախտություն է աննպատակությունը - հոգեկան աղետ, քարացում, մա՛հ, որի ժամանակ ենթական տառապում է հոգեկան կարկամությամբ, ճղճիմությամբ, հոգեսպան մանրագործությամբ:

Կործանարար են այլամերժորեն եսական, ստոր նպատակները, որոնք անպատիժ կերպով հետապնդել չի կարելի:

Նման նպատակները լինում են հոգեսպան, մանավանդ պատանեկության համար:

Պատանի՛, ասա՛ քո նպատակը, որ ասեմ քո երիտասարդությունը:

* * *

Երիտասարդությո՛ւն, աշխարհի անգերազանցելի գեղեցկությունն ես դու, երբ բարձրանպատակ ես:

Արդարև, չկա գեղեցկություն, որ զորեր ստվերել հերոսական կեցվածքդ, երբ կանգնած ես պսակահաս կետի վրա, մրցության դափնին ձեռքիդ:

* * *

Հային հատուկ է սրբության զորավոր զգացումը՝ աղբյուրը հոգևոր անսպառ ուժի, նվիրումի, պաշտամունքի: Նրա համար բարձր ստորադրության առարկաները - հայրենի հող, նախահայրեր, մայրություն - վերացարկվելով մարդկայինից դառնում են սրբազան: Վերաբերմունք դեպի այդ կարգի առարկաները - ահա՛ մի այլ փորձաքար, որի վրա ճշտել կարելի է ժողովուրդների նկարագրի մետաղը:

«Ամենագեղեցիկն աշխարհում իմ մոր աչքերն են»,- ասել է հոգեվարող Նիցշեն:

«Ամենաբարին աշխարհում իմ մոր դեմքն է»,- ասում եմ ես:

Մա՛յր, հա՛յ մայր, դու և՛ mater dolorosa - թախծության մայր, և՛ մեծածին Խանդութ, երի՛ցս օրհնությո՛ւն քեզ:

«Մոր սիրտը միշտ էլ այնտեղ է, ուր իր ծնունդներն են. թեև մեռնում է մայրը, իր սիրտը, սակայն, շարունակում է բաբախել իր ծնունդների համար. մոր սիրտը մեռնում է իր վերջին ծնունդի մահվան օրը»...

Այսպես էր խոսում մայրս իր խանդաղատանքի ժամերին:

* * *

Կալանավոր էի ցարի օրով, և մայրս ամեն Կիրակի ինձ այցի կգար հեռավոր գյուղից. կգար ոտքով:

Իր նիոբեական վշտից ազդված՝ կզայրանայի, որ ինձ համար կնահատակի իր անձը: «Ի՞նչ,- կպատասխաներ,- կա՞ռք նստեմ, կա՞ռք վայելեմ, երբ շղթաների և զրկանքների մեջ ես դու»...

«Դեպի քաղաք ճամբա ընկնելուց առաջ,- կպատմեին քույրերս,- մայրիկը հսկումի է կանգնում Տիրամոր առջև, արյուն լալիս, կուրծքը եկեղեցու քարերին քսում մինչև որ արյունոտվի ստինքները. խե՛ղճ կին՝ կուզի որ քարերն էլ զգան իր ցավը»: Ահա՛ մայրը, որի նման են բոլոր հայ մայրերը:

* * *

Այն օրից, երբ մարդու մեջ, առաջին անգամ լինելով, շանթեց մտածումը, թե աշխարհը կարող է լինել - և պետք է որ լինի ավելի բարեկարգ, ավելի արդար, քան որ է, և որ այդ անկատարելության պատճառը ինքը, մարդկային ազգն է - այդ օրվանից մարդը ճանաչեց տառապանքը:

* * *

Մարդկությունը տառապանքին կպարտի իր հոգևոր ողջ մշակույթը:

Ով տառապանքից է փախչում՝ կատարելությունից է փախչում:

Ով չի տառապել՝ չի՛ աճել, չի՛ հզորացել ոգով:

* * *

Ճշմարիտ ամեն մի արվեստագետի մեջ առկա է տառապողը, խորապես տառապողը:

Եվ հենց տառապանքն է ստեղծագործում:

* * *

Կա և բարոյական հերոսություն՝ ժպտալ, ժպտալ գիտենալ անգամ ամենաանմարդկային տառապանքների մեջ՝ այն կրելու իբրև բարձրագույն պատվանշան, իբրև առյուծի մորթի, որ հնում հերոսներին էր տրվում:

* * *

Քեզ մի՛ կարծիր այն, ինչ որ չես: Մի՛ չափազանցրու կարողություններդ, մի՛ խաբիր քեզ. կյանքը մի օր պիտի փորձի դնի՛ ուժերդ: Աշխատիր լինել ա՛յն, ինչ որ կուզեիր կարծել քեզ:

Բաներ կան տիեզերքում, որոնց մասին մարդը գիտի այնքան միայն, որքան միօրյա կյանքով ապրող միջատը՝ Պլատոնի նախահավիտենական գաղափարների մասին:

Եթե բռնության ծոցում մնա նույնիսկ մի հատիկ գաղտնիք՝ ճշմարտությունը մարդու համար - աբսոլյուտ ճշմարտությունը պիտի շարունակի մնալ իբրև մի աներևույթ աստվածություն: Տիեզերաշենքի և բնության այդ վերջին գաղտնիքին տիրելով միայն մարդս կդառնա ճշմարտաճանաչ: Մինչև այդ մարդու ճակատագիրը պիտի կազմեն գիտական հիփոթեզը և հավատը:

* * *

Երիցս նահատակ է նա, ով մենակ է կրում ճշմարտության բեռը:

* * *

Խորապես մեղանչում է մարդը՝ մահվան գաղափարը հավիտենա-կան կորուստի հետ կապելով:

* * *

Կորուստ չկա տիեզերքում – կա անդադարում մի շարժ, որի ընթացքում կերպարանափոխվելով հոսում է ամեն ինչ: Nauta Dei - պիտի ասեր դիալեկտիկ փիլիսոփան: Մեռած՝ չի նշանակում ոչնչացած, կորած, այլ կերպարանափոխվեց, թողնելով իր նյութեղեն անոթը երկրին, ոգին՝ մարդկության: Չլիներ ոգու անմահությունը՝ չէր լինի նրա կատարելության ձգտումը, նրա առաջընթացը, որի ճամբի վրա ամեն մի խորհող էակի կյանքը մի առաջաքայլ է: Եթե էապես գոյություն ունենար մահը՝ հավիտենական կորուստի իմաստով, չէ՛ր ապրի մարդկության անցյալը, որին կրթնելու կարիք է զգում եկող ու անցնող ամեն մի սերունդ:

Լիներ մահը՝ անցյալը կլիներ մեռյալ, իբրև մի խավարտչին գիշեր, իբրև մի անդունդ դատարկ և անխոս:

Անմեռ ու անկորուստ է մարդկային ամեն մի գործ, ամեն շարժուձև:

Իբրև անոթ՝ վաղո՛ւց է խորտակվել Բեթհովենը, չկա նա, կան, սակայն, մնում են նրա ակկորդներն աստվածային:

Դարեր է, ինչ կյանքից մեկնել է Միքելանջելոն, սակայն, ապրում է իր «Մովսես»ը:

Եկավ, ասուպի պես փայլատակեց ու անցավ Բոնապարտը՝ սերունդների զարմանքը շարժելով, մնաց, սակայն, սահման չճանաչող փառասիրությունը, մնաց մեծության ծարավն անհագ, նոր Բոնապարտների կարելիությունը, մնաց:

Այսպե՛ս է գործում ոգու դիալեկտիկան: Մահ չկա՛, կորուստ չկա՛ տիեզերքում, կա աստիճանական ոգիացումը նյութի, ոգու անվերջ զարգացում, կատարելագործում կա:

* * *

Բարեկա՛մ, երբ հավիտենական բաժանումդ դարձավ անխուսափելի՝ աշխարհից քաշվիր այնպես, ինչպես արևն է քաշվում: Չկա՛ մահ, կա անցումի մի այլ ոլորտ: Անմե՛ռ է մեզ սկզբնավորող, մեզ շնչավորող զորությունը, բա՛նը, ոգի՛ն:

Մի՞թե մեռնում է լույսի ճառագայթը՝ արևին, իր սկզբնաղբյուրին վերադառնալով:

* * *

Մահը տրված է մարդուն՝ այն հաղթահարելու համար:

* * *

Միայն կամավոր նահատակն է բացարձակ ազատություն վայելում:

Նրա՛ն է տրված՝ զգալ իրեն բարձր մարդկային օրենքներից, և դո՛ւրս մարդկայինի սահմաններից: Նրան անծանոթ է երկյուղը մահվան: Նրան չի կարելի վախեցնել. նրանից վախենում են, թեև անզեն ու անչար է նա:

* * *

Ամեն մարդ իր տեսանելի կամ աներևույթ դաստիարակիչն ունի, որի դերն ու ազդեցությունն իր նկատմամբ շարունակվում են մինչև գերեզման:

Մեկի փոխարեն՝ ես երկուսն ունեցա՝ Մամիկոնյաններն ու Մասիսը: Առաջիններն ինձ հայրենիքի համա՛ր մեռնելու տենչ ներշնչեցին: Երկրորդը՝ սե՛ր դեպի հոգևոր բարձրունքները:

* * *

Երաժշտական ամեն աղմուկ՝ երաժշտություն չէ՛, քարակոփությունը՝ քանդակագործություն չէ, ամեն չափածո գրվածք՝ պոեզիա չէ՛:

Ստեղծագործությո՛ւն - ահա՛ գեղարվեստը:

Իսկ ստեղծագործում է մարդը՝ մղված իր ներքին ուժերի լիությունից, առավել ևս՝ իր ներշնչումի ուրախությունից:

Այլ խոսքով՝ նա ստեղծագործում է՝ իր ներաշխարհը արտահայտելու անհրաժեշտությունից մտրակված:

* * *

Տեսանող է ամեն ճշմարիտ արվեստագետ: Նրա ներքին տեսադաշտում, նրա հոգու հորիզոնում՝ որոշ վայրկյաններում՝ հայտնվում են իդեալական պատկերներ: Ահա՛ հենց այդ հմայիչ պատկերները, տեսիլքները հավերժացնելու փորձի արդյունք են արվեստները:

* * *

Խորհրդածում էի մարդկության ապագայի մասին, և միտքս կանգ առավ ատոմի վրա:

- Սա՛, սա՛ է ապագայի խորհրդանշանը և անոթը:

Սրա սրտում է թաքնված ժողովուրդների վաղվա ճակատագիրը: Սրանով է պայմանավորվելու - իբրև կարելիություն - վաղվա կյանքի չարն ու բարին...

Ատո՛մ, դու անսիրտ աստվածությո՛ւն, ո՞վ, ո՞վ է գործի դնելու քո տարերային ուժը - չարության ձեռք՝ պատերա՞զմը, թե խաղաղությունը:

Օ՜հ, ես արդեն լսում եմ նախամահվան հռնդյունները, և, միաժամանակ, ցնծության աղաղակները հազար հազարների...

Ես տեսնում եմ երկրի երեսը պղծող արյունն ու ավերը, և... շուշաններ, շուշաննե՛ր, ավելի փարթամ մշակույթի շուշաններ... և, ասում եմ վաղվա խռովքով՝

- Օրհնությո՛ւն քեզ, սակայն, և անե՛ծք քե՛զ, ատո՛մ, եթե պատերազմին ու չարին պիտի ծառայես:

* * *

Չէ՛, բարեկամ, մայր չէ բնությունը:

Դա,- պիտի ասեր իմաստասիրական դպրոցներից մեկը,- «պատճառ ու հետևանք» կոչվող մի կույր խաղ է, որի ընթացքում արարածներից մեկի գոյությունը պայմանավորվում է մյուսի մահվամբ: Անդադար կառուցելու և կործանելու խելագարությո՛ւն, հեշտա՛նք, վամպիրիզմ՝ ասում եմ ես:

Իր զավակները լափող առասպելական Կռոնոսը - ահա՛ բնությունը:

Դա՝ և՛ կերպարար է, և՛ խաթարիչ, և՛ կենարար, և՛ սպանիչ, և՛ մաքրություն, և՛ ապականարար:

Տես, ամենանուրբ ծաղիկների է նա զարդարել աղբակույտերն անգամ, սակայն, կանցնեն օրեր, գուցե և՝ ժամեր, և նա կապուտաչյա շուշանները կվերածի աղբի:

Ահա՛ մի դեմք՝ համակ կենդանի մարմարիոն, արյո՛ւն և արև, որը վաղը նա կարող է պղծել ամենագարշ ախտի նշաններով - խոցերով: Միայն վայրկյաններ առաջ, անապատում, վագրի քաղցը հագեցնելու համար՝ նրա ժանիքներին հանձնեց տկար եղնիկին: Նույն բնականությամբ՝ այդ գազանին, իբրև կեր ու լեշ, նա պիտի հանձնի ավելի զորավորին:

Նրա համար հավասարարժեք և հավասարիրաժ են շունը, մանրեն, հանճարը: Պետք էր ճիճուներ աճեցնել - չգիտես՝ ինչո՞ւ - և նա կտրեց կյանքի թելը Մեծն Մակեդոնացու:

Կուրությո՛ւն, դաժանություն, անհեթեթություն - ահա՛ իր հատկությունները: Հազարամյակներ առաջ՝ մեկը մարդկության ամենազգայուն զավակներից՝ Բուդդան, կարդալով բնության օրենսգիրքը, ընդվզեց նրա դեմ:

Չէ՛, բարեկա՛մ, մայրական չէ բնության գիրկը: Դու բնությունից դուրս փնտրիր այն, որ նա զլանում է մարդուն:

Հավերժությա՛ն, ինձ նման, հաճախ, հավերժության կրծքին հանգչեցրու հոգնած գլուխդ...

* * *

Եվ խոսեցի ես ունայնության մասին.

- «Մարդն աշխարհ է ստեղծում և աշխարհից հեռանում անբաժին»:

- «Մարդու արժեքն ու արժանապատվությունը ստեղծագործելու մեջ է և ոչ՝ ունենալու: Եվ, քանի որ ոչ ոք ոչինչ չի տանում աշխարհից՝ լավ է, որ մարդս մի բան թողնի աշխարհում, թեկուզ՝ առյուծի պես՝ արյան հետքեր մարդկային անապատում» Մասիսն ինձ ասաց:

VII
ՀԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆԸ

Ժողովուրդների կուլտուրական արժեքը պետք է ճշտել համամարդկային այն գծերով, որ հատուկ են նրանց հոգևոր ստեղծագործությանը:

Եվ հենց այդ համամարդկայինը, մարդկորեն այդ օրինակելին է կազմում ամեն ազգի լավագույնը:

Եվ, ազգերի մտավորականությանն է ընկնում աշխատել, որ համաշխարհայնացած «ամեն» բառի նման համամարդկայնանա այդ լավագույնը:

Նման գծեր ես տեսնում եմ հեթանոս հայության բանարվեստի մեջ- նրա զրույցների, առասպելների, երգերի մեջ:

Եթե Անիի վսեմաշուք ավերակները մեզ խոսում են հայի ճարտարապետական հանճարի և գեղագիտական բարձր ճաշակի մասին, ապա մեր հեթանոս վիպասանության բեկորները վկայում են նախաքրիստոնեական հայի անգերազանցելի մարդկայնության և բարձրորեն ասպետական ոգու մասին: Վահագնա-Անահիտական Հայաստանում ես տեսնում եմ այնպիսի հոգեգծեր, առաքինություններ, որոնք պիտի բաղձալ մեր՝ որքան գոռոզ, այնքան հոգեպես աղքատ ու տմարդի դարաշրջանին:

Աշխարհի ո՞ր մեծ, ո՞ր աշխարհակալ ազգը պիտի չուզենար իր ֆոլկլորի մեջ ունենալ հետևյալ իմաստալից պատառիկը.

«Քեզ եմ ասում, քաջ տղամարդ Արտաշես,
Որ հաղթեցիր Ալանների քաջ ազգին,
Եկ, լսիր Ալանների գեղաչյա դստերս խոսքերին
Եվ տուր պատանին:
Որովհետև օրենք չէ, որ քեզի համար դյուցազները
Ուրիշ դյուցազն զարմերի կենդանությունը ջնջեն
Կամ իբրև ծառա ստրուկների կարգում պահել
Եվ երկու քաջ ազգերի մեջ
Մշտնջենավոր թշնամություն հաստատեն»:

Լսո՞ւմ ես, ընթերցող, օրենք չէ, ասում է հեթանոս հայը, դյուցազունների համար թույլատրելի չէ՝ առաջին՝ օտար դյուցազունների գոյությունը վերացնել, երկրորդ՝ ստրկացնել, ծառայեցնել նրանց, երրորդ՝ երկու քաջ ազգերի միջև հավիտենական թշնամություն ստեղծել: Գաղափարախոսական անհանդուրժողության համասփյուռ հալածանքների մեր ամոթալի օրերում որքա՜ն մարդկորեն հպարտ է հնչում հին հայի խոսքը:

Այո՛, «ոչ է օրից»...

Հայը դեմ է քաջ զարմերի ոչնչացման, ստրկացման, և՝ լինելով քաջ՝ նա հարգանքով է վերաբերվում իր քաջ թշնամուն անգամ:

Ահա՛ հոգևոր կերպարը հեթանոս հայի, որի մարդկայնացուցիչ գաղափարներով պիտի թթխմորել Արևելքի հոգևոր հացը:

* * *

Ցա՛վ է, երբ օտար ազգերը չեն ճանաչում մեզ. ցա՛վ է բյուրիցս, և վատությո՛ւն, երբ օրվա հայությունն ինքը չի ճանաչում իրեն:

Դեռ 19-րդ դարի առաջին կեսին, Անիի այցելուներից մեկը՝ ճարտարապետ Տեքսիեն դժվարացել է նմանություն գտնել երբեմնի մեծաշեն քաղաքը շինարարողի և իր օրերի հայության միջև: Նա ասել է, ի միջի այլոց. «... Հազիվ կարելի է այս հիշատակարանների մեջ - որոնք հունական ճաշակ և փափկություն են արտահայտում - ճանաչել այն ազգի մտքի ծնունդը, որ մեր օրերում կորցրել է արվեստի ամեն մի զգացմունք, և նույնիսկ բոլորովին չի հիշում, թե ինչպիսի սարդիկ էին իր նախահայրերը»:

Անինքնաճանաչ է և օրվա հայությունը: Լինելով այդպիսին՝ նա խորապես մեղանչում է թե՛ իր ապագայի և թե՛ մարդկության դեմ: Ամեն ազգ պարտավոր է մարդկությանը տրամադրելու իր լավագույնը՝ իբրև հոգևոր թթխմոր:

Հայկական լավագույնի - բարձր մարդկություն արտահայտող գուբան երգերի բովանդակած վեհ գաղափարների - վերարծարծումն, նրանց պրոպագանդը հայ մտավորականության կողմից ոչ միայն հայկական, հայրենասիրական, այլև՝ համամարդկային պարտականություն է:

«Ոչ է օրից», այո՛:

Բայց Արևելքը չյուրացրեց հեթանոս հայության բարձր մարդկությունը - նա մնաց տմարդ, նա ղեկավարվեց և դեռ շարունակում է ղեկավարվել ջունգլիների օրենքով:

Եվ, հենց այդ էր պատճառը, որ Առաջին համաշխարհային պատերազմին, համո՛թ Արևելքի և Արևմուտքի, ամայացավ հայոց աշխարհի մեծագույն մասը:

Աճառյանը իր «Հայոց լեզվի պատմության» մեջ, խոսելով մեր անգիր բանահյուսության պատառիկների մասին, անխոցելի գիտակցությամբ ճշտել է նրանց ողջ բառամթերքը, բառերը վերածել իրենց արմատական ձևերին, և վերջապես, նշել նրանց հայկական և ոչ-հայկական ծագումը: Այսպես մանրակրկիտ կերպով մեր գուբան երգերի բեկորների լեզուն ուսումնասիրող մեր անգերազանցելի լեզվաբանը կարևոր չի համարել՝ երկու խոսք էլ ասելու նրանց գաղափարային իմաստի, նրանց կուլտուրական կարողության մասին: Այդ թերությունը, պետք է ասել, հատուկ է գրեթե բոլոր հայ բանասերներին: Ինչո՞վ բացատրել դա. հայոց իմաստասիրական մտքի տկարությա՞մբ, թե՞ մերօրյա հայ մտավորականի պարտվողական հոգեբանությամբ: Վերջինի տառապողները, ընդհանրապես, խոնարհամիտ են լինում և բնազդորեն փախչում այն ամենից, ինչ որ նրանց հիշեցնում է լիարժեք կյանքով, քաջաբար ու փառքով ապրող իրենց նախահայրերին:

Նախահայրերը պարտավորեցնում են մեզ. լսենք նրանց մեզ ազգորեն ճանաչելու համար:

Գիտակցե՛նք մտավորականի ազգային և համամարդկային մեր կոչումը և կատարենք այն:

«Ո՛չ է օրից»... Այո՛:

VIII
ՌԱԶՄԱԿԱՆ ԽՈՀԵՐ*

Աշակերտի՛ր ճշմարտորեն մեծերին - ռազմի հանճարներին, սակայն, մի՛ մոռանա, որ վտանգն է զորականի լավագույն ուսուցիչն ու դաստիարակը:

Պատմության բոլոր դարաշրջաններում - դյուցազնական Հելլադայից մինչև Հռոմը, և Հաննիբալից մինչև Նապոլեոնը - մարդը համառորեն խորհրդածել է այն մասին, թե ինչո՞վ և ինչպե՞ս է շահվում հաղթանակը: Եվ, ձգտելով պատասխանել այդ հարցին, նա ծնունդ է տվել մի շարք տեսությունների, որոնցից ամեն մեկը բովանդակում է ճշմարտության հատիկներ միայն, բայց ոչ՝ ամբողջ ճշմարտությունը:

Մի հատիկ ևս ավելացրած կլինենք ճշմարտության ֆոնդին, եթե ասենք, որ էականը պատերազմում, կռվում, ամենաէականը մահն է՝ աներևույթ, սակայն, իրական երրորդ գործոնը, ուժը - երրորդ դերակատարը:

Մարտերում, հավասար այլ պայմաններում, սովորաբար, հաղթանակում է այն կողմը, որն այդ «երրորդ»ից ավելի է օգտվում, քան իր հակառակորդը: Իսկ օգտվել մահից, նշանակում է՝ նրանից օգտվելու կարելիությունից զրկել իր ախոյանին: Նման վիճակի մատնելով վերջինին՝ մենք էապես զինաթափում ենք նրան, որով և՝ապահովում մեր հաղթանակը:

* * *

Հաղթանակել կռվում, նշանակում է՝ մահվան սպառնալիքով իր կամքը պարտադրել հակառակորդին:

Մահ սպառնալ - ահա՛ կռվի ողջ էությունը, և դաժանությունը, միաժամանակ:

Հետախուզական պարզ աշխատանքից սկսած մինչև բարդ և բախտորոշ ճակատամարտը՝ կռվող կողմերը իրապես մրցում են ահավարության մեջ:

Կռվի նման մեթոդի առավելությունը նրանումն է, որ ահավարուն իբրև ավելի ակտիվ կողմ՝ մնում է զերծ մահվան երկյուղից, կամ նրա ազդեցությունն իր համար հասցնում է նվազագույնի:

---

* Իմ նույնանուն ձեռագրից (ծանոթ. հեղինակի):

Մարդկային արարածը ընդունակ է հոգեֆիզիկական որոշ աստիճանի լարվածության միայն, լարվածություն, որի սահմանն անկարելի է անցնել առանց պատժի, առանց սուր կորովաթափության, որը նախորդում է անձնատվության, պարտության:

Չափվող կողմերը՝ ահավարությամբ հենց իրենց ախոյանի այդ կորովաթափությունն են հետապնդում:

* * *

Նոր զենքեր ճարտարող արդիական գյուտարարը, թե վայրենին - որը կռվի մտնելուց առաջ ահուսարսափի ազդող դրսերևույթ է տալիս իր դեմքին, ասես՝ մահակերպարանատրվում է- սրանք երկուսն էլ ղեկավարվում են միևնույն հոգեբանական հաշվով- ահավարությամբ կաթվածել հակառակորդի հոգեֆիզիկական ուժերը, և, այսպիսով, նրան մղել անձնատվության: Մահակերպարանավորման գործում կատարյալ կլասիկներ, կատարյալ արտիստներ են եղել Հաննիբալը, Բոնապարտի փոքրկաշունչ՝ այրուձին, և Սուվորովը՝ սվինի ջատագով:

Գիտե՞ք, իրար հանդիպելիս՝ ահավարության են դիմում նաև գազանները, բնազդի ուժով:

* * *

Խոտան պիտի հռչակել այն բոլոր տեսությունները, որոնք հաղթանակը միշտ էլ նվիրում են այն կողմին, որը մի հատիկ զինվոր, մի թնդանոթ, ամրաշինական մի կառուցվածք ավելի ունի: Ո՛չ, ոչ, հարյուր զինվորի ուժը միշտ էլ հավասար չէ հարյուրի ուժին: Այդ ուժն ունի իր հավելումն ու նվազումն ունի, նայած թե ո՞վ և հոգեբանական ինչպիսի՞ մթնոլորտում ու ինչպե՞ս է ղեկավարում այդ հարյուրյակը: Կռվում գործ ունենք կենդանի, հարափոփոխ, դինամիկ և ոչմեքենական մեռյալ ուժերի հետ, որոնք չեն մնում քարացած միևնույն կետի վրա: Տեխնիկան վճռական դեր է կատարում միայն այն դեպքում, երբ նրանցից օգտվում ենք իբրև ահավարության միջոցներից: Հաղթանակը օրինաչափորեն թեքվում է այն կողմը, որը հաջողվում է ավելի երկար ժամանակ մահվան սարսափի տակ պահել իր հակառակորդին ճգնելով խորտակել նրա դիմադրական ոգին: Այո՛, ըստ էության ռազմավարությունն այլ բան չէ, եթե ոչ ահավարություն: Եվ, որովհետև մահն է ահացուցիչը՝ մենք բնավ մեղանչած չենք լինի լեզվի ոգու դեմ, եթե այսպես բանաձևենք՝ ռազմավարությունը - հոգեբանորեն առնված՝ դա մահավարություն է:

* * *

Սուվորով, թե ամեն զորավար, որը սվինը գերադասում է հրազենից: Սուվորով լինելու համար պետք է լինել Սուվորով, այսինքն՝ պատերազմական հանճար, հերոս, և զինվոր միաժամանակ:

Հանճար ու զինվոր էին՝ Կեսարը, Հաննիբալը, Նապոլեոնը:

Կատարելատիպ հերոսներ էին Մամիկոնյան Մուշեղ, Վասակ, Վարդան զորավարները: Սակայն, կարելի է ռազմական տաղանդ, հանճար լինել, բայց և այնպես հերոս չլինել:

Հերոսը բարոյական հանճար է, սրտի հանճար, և միշտ քաջաքաջ ու մահապատրաստ:

Հանճարի համար պատերազմն ամեն բանից առաջ մտքի գործ է: Իր բանակի հաղթանակն ապահովելու համար՝ նա համադրում է ռազմի գործում դեր կատարող բոլոր գործոնները, միաժամանակ վարպետորեն օգտվելով իր հակառակորդի գործած սխալներից:

Ընդհակառակը, հերոսի հաղթանակ պսակողը՝ իր հոգեկան ուժն է, որով սնվում են իր արիությունն ու մահապատրաստությունը:

Հանճարը դա բանակի ուղեղն է, հերոսը՝ սիրտը:

Օրինություն է հանճարը, բայց, ավա՛ղ, նա հեշտ ու հաճախ չի ծնվում:

Հաղթանակ կարելի է շահել նաև առանց հանճարի, առանց հերոսների՝ երբե՛ք:

* * *

Ոգու մարդը - ահա՛ սխրագործելու, մեծագործելու կա-րող ղեկավարը: Այսպիսի՞ն էր նա, ու աշխարհակալ Հռոմի դեմ ստրուկների ատելությունը շղթայազերծեց- Սպարտակը՝ ներշնչելով մարդկության այն վսեմ ճշմարտությունը, թե աշխարհը պիտի վայելի մարդն, ընդհանրապես, և ոչ թե իր նմաններին ճնշելու և շահագործելու իշխանությամբ զորավորը միայն:

Այսպիսին էր նա, ու ողջ բանակով դարանակալեց կանանց մոտ՝ թույլ տալով հռոմեական լեգեոններին երևալու իր թիկունքում - Կարթագենի ամեհի զավակը, որի հարվածները հարկադրեցին Կեսարների գոռոզ ազգին, խոստովանելով, թե Հռոմից և հռոմեացու հոգուց դուրս էլ մեծություն կա:

Վերջապես, նա, ու Տղմուտի ափերում դարերին և սերունդներին իմացյալ մահով անմահանալու ճամբան մատնանշեց՝ հրաշունչ Մամիկոնյա՛նը, որն իր արյունով հաստատեց, թե չի կարելի մարել այն, որն էությամբ անմարելի է - հայկակա՛ն ոգին:

* * *

Զորավար՝ չե՛ս, եթե նախ զինվոր չես: Այդ ճշմարտությունը, առավել ևս, պատշաճում է հայ մարդու հոգեբանությանը: Հայը սիրում է կռվի ժամանակ իր ղեկավարներին տեսնել կրակի առաջին գծի վրա, դեմ առ դեմ մահվան հետ: Նա սիրում է հավասարությունը մահվան մեջ: Եվ արդա՛ր է նրա պահանջը: Հրեշային անհեթեթություն է անարի, շահախնդիր, մորթապաշտ զորականը: Հաճախ խաբում են ուսադիրները - այդ լավ գիտի հայը: Նրանք միշտ էլ չեն համապատասխանում ենթակայի ներքին հնարավորություններին, նրա հոգեկան ուժերին: Աստիճանը միշտ էլ ոգու կամ տաղանդի չափը չէ:

Բազեն էլ թռչուն է, բայց ամեն թռչուն բազե չէ:

Այո՛, ամեն սպա ղեկավար չէ:

* * *

Ո՛ւժ, ավելի ուժ - ահա՛ անհրաժեշտն ու էականը կռվի դաշտում:

Տալու, ծախսելու համար՝ պետք է ունենալ: Ամենակուլ է կռիվը: Այնտեղ ուժերի առատություն է պետք: Ուժերի լիությունն է մարդուն մղում առատաձեռն զոհաբերության: Վայրկյանից վայրկյան նոր ուժերի առկայություն զգալ՝ նոր, մինչ այդ անծանոթ ուժերի: Եվ, հենց այդ նոր ուժերի հորդումն է արիությունը:

Արիացուցիչ է հոգեկան ուժը - ուժը, որ ծնունդ է առնում այս բարձր գաղափարներից, որոնք հոգեբանության լեզվով կոչվում են force idee[48]:

Զոհաբերելով սահմանավոր մեր կյանքը՝ մենք նվաճում ենք հավերժությունը,- ասում էին խաչակիրները: Դա ուժածին գաղափար է: Այդպիսին են նաև պատվի, փառքի, մեծության գաղափարները:

Սրանցից ավելի զորավոր է հայրենիքի գաղափարը:

Փառքով, փառասիրությամբ էին ոգեշնչված Նապոլեոնի մարաջախտները: Նրանց կուռքերն էին՝ կայսրը և Պատվո լեգեոնի շքանշանը: Թեև զորավոր, բայց ժամանակի ընթացքում թափը կորցնող խթան է փառասիրությունը: Փառքով հագենալ կա: Անհագ է հավերժության ծարավը միայն: Արդ, թե ինչու աշխարհը զարմացնող, բայց ոչ հիացնող Մյուրատները, Դավուները, Նեյերը պատերազմների փոթորիկներում պարտված՝ ծերացած արծիվների պես, խաղաղ կյանքի կարոտով մի օր կախեցին իրենց թևերը:

Եվ հենց այդ օրն էլ թեքվեց մեծ Կորսիկացու աստղը, որովհետև նրա զորքերի վարիչներն այլևս շանթող զորավարներ չէին:

* * *

Պատերազմում հարվածում է, սպանում, վերքեր հասցնում ցավեր ու ավերներ պատճառում և՝ ինքնապաշտպանվող կողմը, բայց նա չի հանցագործում:

Որքան անհիծյալ է սուրը հարձակվողի՝ այնքան նվիրական է նա ինքնապաշտպանվողի ձեռքում:

Հակահարվածել, սպանել ակամայից՝ առանց սպանիչ դառնալու - ահա՛ թե որպիսի գիտակցություն է ծովացնում մեր հոգեկան ուժերը:

* * *

Երբ առկա է կարող առաջնորդը՝ հայը կռվում հեգնում է մահը, զոհաբերում քաղցրորեն: Եվ ընդհակառակը, նմանի պակասի դեպքում, նա կորցնում է իր թափը, կորովաթափվում: Արդ, ինչու առաջնորդության խնդիրը, հայի համար, գերազանցորեն բարոյա-հայրենասիրական է: Անհայրենասիրություն և անբարոյականություն է, երբ անարժանը, տկարը, անանձնվերը ղեկանավում է առաջնորդությանը: Զորավար լինելու համար նախապայման է՝ զորավոր լինել: Իսկ այդպիսին լինելու համար պիտի կարողանաս արհամարհել և՝ հարստություն, և՝ վայելք, և՝ մահ:

Չէ՛, բավական չէ աստիճանով զորավար լինել, պետք է և զորավոր լինել - ահա՛ հայի պահանջը իր առաջնորդներից:

* * *

Առաջի՞ն կռիվն ես վարում, զորակա՛ն. այո՞, ապա ուրեմն, զինվի՛ր հայրենապաշտությամբ, փառքով, խելահեղությամբ, դյուցազնացի՛ր, մարդեղեն աստվա՛ծ կտրիր, մի բան՝ բյուրապատկի՛ր հոգեկան ուժերդ - կռիվը շահելու համար:

Վա՛յ քեզ - անփառունակությունն է պսակելու ապագադ, եթե պարտվեցիր: Ռազմական փառքի կատարները Ալեքսանդր, Հաննիբալ, Կեսար - այդ հրեղեն անունները գուցեև մնային անծանոթ աշխարհին, եթե պարտված լինեին իրենց վիճակված առաջին ճակատամարտում:

Այո՛, շատ անգամ հենց առաջին կռվի ելքն է առավելապես ճշտում մեր հետագա ճակատագիրը :

* * *

Ես մերժում եմ այն բարոյազուրկ հասկացողությունը, թե հայրենիքի շահը սրբագործում է ամեն միջոց:

Ստորությունը չի դադարում ստորություն լինելուց և՝ այն դեպքում, երբ այն կատարվում է անգամ հայրենիքի համար:

Արտոնյալ մարդասպան, բռնացող, ավարառու - ա՛յդ է ստորության ընդունակ զորականը: Բարոյական տկարության ծնունդ է ամեն կարգի ստորություն: Նա, ով մահապատրաստ է հայրենիքի համար՝ ստորության չի դիմում: Ստորության դիմում է անհայրենասեր կաշվապաշտը: Ստորությամբ չեն պաշտպանում հայրենիքը:

Նրան՝ հայրենիքին, վայել է բարձրորեն մարդկայինը, ասպետականը, կորովին:

Մարդը հոգեպես բևեռանում է առավելապես խոր բերկրանքի և սարսափի ժամանակ:

Սուր բևեռացումի են ենթարկվում զինվորը՝ գրոհի, ճամբորդը՝ նավաբեկության ժամանակ:

Հոգեկան այդ երևույթը, նվազ սրությամբ, տեղի է ունենում և բանտերում:

Մարդկանց ամենաբարիներին և ամենաչարերին ես հանդիպել եմ կռվի դաշտերում, մեկ էլ՝ բանտերում:

Հոգեկան բերկրանք, սարսափ, տանջանք - սրանք մարդկային էության նկատմամբ կատարում են հոգեբանական ռեակտիվի դեր: Դրական թե բացասական բևեռացմամբ ենթական դրսևորում է իր էությունը՝ շեշտելով իր նկարագրի հիմնական գծերը: Ժողովուրդներն իրենց էությունը առավելագույն չափով մատնում են պատերազմի ժամանակ, որը և՛ բերկրանք, և՛ սարսափներ ապրելու այնքան առիթներ է ընծեռնում: Պայթե՞ց առաջին հրանոթը՝ բանակի ընկերայնորեն առաքինի տարրերը - այլասերը, մարտունակը, հայրենասերը հոգեկան բևեռացմամբ դառնում են համակ սեր, ընկերասիրություն, խիզախություն: Եվ հենց սրանք են կազմում բանա-կի իրական ուժը, նրա բարոյական ողնաշարը, նրա «մատյան գունդը»: Սրա՛նք են վտանգի դնում իրենց կյանքը, սխրագործում, հերոսանում, և հաճախ իրենց արյունով ներկում դեպի հաղթանակը տանող ճամբան:

Իսկ ընկերայնորեն պաղ տարրերը - եսապաշտը, անարին, անհայրենասերը, բևեռացման նույն օրենքով, դառնում են բանակի տկար ու խոցելի կողմը, երևան գալով իբրև դասալիք, ահընկեց, կռիվ կեղծող, գլուխ պահող:

Վա՛յ այն բանակին, որին հոգեբան և կարող ղեկավարներ են պակասում: Նման դեպքում տկար տարրերին հաճախ հաջողվում է ապամագնիսացնել, բարոյալքել անգամ մարտունակ տարրերը: Զանգվածների հոգեբանության օրենքներին ծանոթ ղեկավարը անձնական կենդանի օրինակի վարակչությամբ նպաստում է իր զինվորների դրական հոգեբևեռացմանը, որով և անկարելի դարձնում բացասականը: Եվ, հենց սրանում էլ, ըստ էության, կայանում է ղեկավարության գործի կեսը - նրա կարևորագույն մի մասը:

* * *

Նախընտրիր իբրև թշնամի ունենալ նեմեյան առյուծը, քան աղվեսը:

Զորավորի հետ չափվելն ավելի հեշտ, նաև՝ ավելի պատվաբեր է քան, նենգողի:

* * *

Իմ զինակիցը կռվում - դա ե՛ս եմ, ե՛ս ամենից առաջ:

* * *

Հայը կռվում է աննահանջ և սխրագործում ավելի իբրև կամավոր, քան պարտադիր ծառայության զինվոր:

Նրա սրտով չի՝ գործել հրամանով, իսկ մեռնել հրամանով՝ բնավ:

Պարտադիր ծառայության մեջ իսկ նա իրեն զգում է կամավոր:

Հոգեբանական այդ իրողությունը հետևանք է այն բանի, որ երկար, շատ երկար ժամանակ՝ իր պատմական ճակատագրի բերումով հայն իր հայրենիքի պաշտպանության գործին մասնակցել է ոչ թե իբրև իր նախարարի ստրուկը, ճորտը, այլ՝ իբրև հայ մարդ, որ պարտական է կռվելու Հայաստանի համար*:

Հայի այդ հոգեգիծը՝ դրական և օրհնաբեր, պիտի պահպանվի գուրգուրանքով, քանզի կամավորության գաղափարն ավելի վեհ է, քան պարտադիր ծառայությունը:

Կամավորությունը ուխտվածություն է - ահա՝ թե ինչումն է իր խորհուրդը, իր ուժը: Եվ ոչ մի իշխանություն չի կարող մեռնելու բռնադատել նրան, ով ուխտված չէ, մահապատրաստ չէ հայրենիքի համար: Կարելի է առաջ վարել անգամ Հորթապաշտներին. նմաններին իսկ կարելի է զոհաբերել, բայց նրանց կրավորական, ակամա մահերով հաղթանակ չի շահվում:

Կամավորագրվողն է քաջագործում, մեռնում կամովին - հաղթանակում:

* * *

Արդյո՞ք, զինվորը - ամեն զինվոր ընդունե՞լ է կռիվը - ահա՝ հարցը, որին պիտի պատասխանի ղեկավարը:

Ընդունել կռիվը. առանց հոգեբանական այդ ակտի՝ զինվորը մնում է սովորական հրացանավոր, մեռյալ թիվ:

Կարելի է լինել բանակի շարքերում, ծածան դրոշի տակ, բայց և այնպես իրեն չզգալ իբրև ռազմապատրաստ մարտիկ: Ռազմիկն արթնանում է հրացանավորի մեջ դեռ կռ-վից առաջ: Այդ զարթոնքը տեղի է ունենում այն վայրկյանին, երբ զինվորն ընդունում է կռիվը, այսինքն, երբ նա հաշտվում է հանուն մի սրբազան արժեքի իր կյանքը վտանգի դնելու մտքի հետ: Հավասար այլ պայմաններում հաղթանակում է այն կողմը, որի շարքերում նվազ է կռիվը հոգեբանորեն չընդունողների թիվը: Ընդունել կռիվը - նախ ա՛յդ:

Հոգեկան այդ ակտից են ծնունդ առնում և՛ զինվորը, և՛ բանակը, և՛ հաղթանակը:

---

* Վարդան Զորավարը՝ վերջապահ զորամասի հրամանատար նշանակելով իր եղբայր Համազասպյանին, պատվիրում է նրան բռնություն չգործադրել նրանց վերաբերմամբ, որոնք չեն ուզում պատերազմել: - Լեո (ծանոթ. հեղինակի):

* * *

Մեր ղեկավարությունը միայն այն չափով է ակտիվ և իմաստուն, ինչ չափով մեզ հաջողվում է խանգարել մեր հակառակորդի ղեկավարության գործը:

Եվ հաղթանակը սկսում է ժպտալ մեզ հենց այն վայրկյանից, երբ անկարելի ենք դարձնում թշնամու ուժերի ղեկավարությունը: Նման դեպքերում խզվում է ո՛չ միայն արտաքին կապը նրա ուժերի միջև, այլև՝ մարտիկների արիությունը և արթնությունը սնուցանող այն աներևույթ, ասենք՝ էլեկտրական հոսանքը, որ միացնում է էությունները և ստեղծում այն, որ ես անվանում եմ հավաքական սիրտ:

Հոգեբանական նման մթնոլորտում ապամագնիսացվում է զինվորը, նա իրեն զգում է անզեն, անգլուխ կորած: Մի գրոհ, մի հարված ևս - և թշնամուն կմնա ողբալ իր պարտությունը:

* * *

Ո՞վ է ղեկավարում ինձ. խորհելով այդ մասին՝ զինվորը շատ անգամ հոգեբանորեն հաղթանակում է կամ պարտվում դեռ կռվի չբռնված:

Ո՞վ է վարելու ճակատամարտը. ժամանակակից մի Մամիկոնյա՞ն, թե՞ մի սովորական սպա, որի, ինչպես գիտենք, աստիճանը միշտ էլ ներքին ուժ, արժանավորություն չի ենթադրում: Ահա՝ հարցը, որն այնքան հաճախ խռովում է զինվորի միտքը:

Իր անունը չի արդարացնում այն զորականը, որը կարծում է, թե բավական է միայն հրամանը, որպեսզի իր զինվորը կռվի: Միայն հրամանով չեն նետվում դեպի մահ, չեն մեռնում, մասնավորապես մեր ժամանակներում: Զինվորը կռվում է, խիզախում, վտանգի դնում իր կյանքը, երբ իր զորամասը գտնվում է հոգեպես շիկացած վիճակում, երբ իր թիկունքում, իր կողքին ամեն ինչ խթանում է նրա արիությունը, երբ վարարած կրքերի մի հրահեղեղ նրան քշում է առաջ: Նման հոգեբանական մթնոլորտում է մարդու մեջ արթնանում ռազմիկը: Իսկ այդ մթնոլորտն ստեղծում է կարող ղեկավարը:

Կռվում՝ ղեկավարն էապես իր ներքին մարդը, իր ներքին աշխարհը վարելով է ղեկավարում իր զորամասը:

Այո՛, ղեկավարությունը միշտ էլ ենթադրում է ինքնաղեկավարություն, միաժամանակ: Ճակատագրական նշանակություն է ստանում նրա ամեն մի խոսքը, շարժուձևը, երևումը:

Զինվորը տրամադիր է իր ղեկավարի մեջ տեսնելու ավելին, քան սովորական ուսադրավորը:

Բոնապարտի զինվորները լուսապսակ էին տեսնում իրենց կայսեր գլխի շուրջը, երբ սկսում էր խոսել նա:

* * *

Իբրև մարդկային կամարտահայտություն, գործունեություն կռիվն էլ իր դիալեկտիկան ունի, որի օրենքները մեզ հիմք են տալիս կանխատեսելու ռազմագործողության ընթացքն ու վախճանը:

Ինչպես պատմական անցյալ դեպքերի անսխալ վերլուծությունը մեզ օգնում է հասկանալու ժամանակակից իրադրությունները և նրանց զարգացման հեռանկարները, այնպես էլ տվյալ մարտի հաջորդական փուլերի ճշգրիտ անալիզը մեզ առնվազն կռահել է տալիս նրա զարգացման ձևերը: Այլ խոսքով, դիալեկտիկական մեթոդի կիրարկումը՝ ռազմագործողությունները գնահատելիս՝ մեզ հնարավորություն է տալիս կանխատեսելու կռվի զանազան ընթացքը,- կանխատեսություն, առանց որի չի կարելի կռիվը ղեկավարել: Ղեկավարել, ասել է՝ անհրաժեշտ վայրկյանին վճռաբար հասցնել մեր հերթական հարվածը: Ծովը մակընթացության և տեղատվության ժամանակահա՝ կռիվը: Անասելիորեն հարափոփոխ է նրա պատկերը: Իր ժամանակին պետք է հասկանալ, թե հօգուտ ո՞ր կողմին է տեղի ունեցել փոփոխությունը և ըստ այնմ ճշտել մեր վճռական միջոցառումը: Եթե կռվի և հաղթանակի տենչը ինքնին հաղթանակի կեսն է - իբրև հաջողության նախադրյալ - ապա՝ նրա մյուս կեսն էլ պայմանավորվում է խմորվող ռազմանցքերի կանխատեսությամբ:

* * *

Գոյություն ունեն երկու տեսակ զինվորներ՝ մեկը, որ կռվում է, մյուսը՝ որին կռվեցնում են:

* * *

Թող կռվի չմեկնեն թվապաշտները - նրա՛նք, որոնք ընդունում են, թե ուժը, զորությունը թվի մեջ է միայն: Ոգի՛ն է կռվի մղում զինվորին: Ով որ համրում է՝ չի՛ խիզախում:

* * *

Կռվադաշտում նմանվիր առյուծին, որը քնում է բաց աչքերով: Ասում են, որ առյուծը, իրեն հետապնդողներից ծողոպրելու համար, պոչով ավլում է իր հետքերը:

Ա՛յդ բանում, զորակա՛ն, միայն այդ բանում դու մի՛ նմանվիր առյուծին:

* * *

Կռվում ճանաչիր մի հատիկ սահման - անկարելի՛ն:

* * *

Ի՞նչ կուզեիր արծվից:

- Նրա թևերը,- ասաց արվեստագետը:

- Նրա բնազդը,- հարեց ռազմիկը:

Առաջինին պետք էր թռիչք, երևակայություն ստեղծա-գործ:

Երկրորդին՝ արտաքին և ներքին սրատեսություն:

Մեկը հետամուտ է գեղեցիկին, մյուսը՝ հաղթանակին:

* * *

Մեկն ինձ խնդրեց՝ բանաձևել իմ ռազմական փորձը:

Ահա՛ դա՝ ասացի.

- Առաջինը՝ թույլ չտալ հակառակորդին մտածելու իսկ, թե ինքը ավելի զորավոր է մեզնից, և այդ հենց կռվի սկզբից:

- Երկրորդ՝ հենց կռվի սկզբից զգացնել տալ հակառակորդին, որ մենք զորավոր ենք նրանից:

* * *

- Ի՞նչ են ասում սարերն իրենց խրոխտ լռության մեջ,- հարցրի իմաստունի անուն հանած մի ծեր լեռնականի:

Հայացքը դեպի հայրենի կատարները դարձնելով, նա լռեց մի պահ՝ կարծես նրանցից պատասխան սպասեր, ապա՝ իմաստաբանեց.

- Լեռներն ասում են՝ պահի՛ր մեզ, լեռնակա՛ն, որ մենք էլ քեզ պահենք:

* * *

Ով կռվում ժամանակ է կորցնում՝ հաղթանակն է կորցնում:

* * *

Ունեցիր միշտ ավելին, քան պետք է քեզ - արիություն, բարություն, նվիրում:

Անհրաժեշտ չափով արի չես, եթե արիությունդ չափավորելու կարիք չես զգում:

Գիտե՞ս, ջրախառն է խմվում իսկական գինին:

* * *

Արդար լինենք, զորավա՛ր, դու՝ եթե հանճարեղ իսկ լինես, դու միայն նախապատրաստում ես հաղթանակը. այն շահում է զինվորը:

* * *

Ավելի հեշտ է մշակել, քան պաշտպանել հայրենի երկիրը:

Լավ մշակ, լավագո՛ւյն մարտիկ - այդպիսի՛ն եղիր դու:

Միայն նմանի հայրենիքն է սանձված պահում արտաքին ընչաքաղցությունը:

* * *

Զորակա՛ն, կռվիր այնպես, որ կարողանաս ասել զենքի ընկերներիդ՝ ի՛նձ պես կռվեցե՛ք:

* * *

Բանակը, նայած ո՞վ է առաջնորդում իրեն, միաժամանակ և՛ կայծքար է, և՛ ամպրոպային ամպ: Առաջինից կարելի է կայծեր հանել, երկրորդից՝ շանթեր քամել:

Բանակն այն է, ինչ որ առաջնորդին հաջողվում է դարձնել նրան: Ոչի՛նչ է բանակը- ամեն ինչ են անհատ զինվորն ու առաջնորդը: Չափվում են բանակները, սակայն հաղթում կամ պարտվում է զինվորը, և առաջին հերթին՝ առաջնորդը:

* * *

Պատերազմիր այնպե՛ս, որ չամաչես տարածդ հաղթա-նակից:

Արդար է հաղթանակդ, երբ այն արդար է համարում պարտված թշնամիդ իսկ:

Պարտվե՛լ հայրենի հողի վրա-գերագույն վատություն:

* * *

Չէ՛, տղամարդավայել գուպար չէ դա, երբ չափվող կողմերից նվազ տկարը օգտվում է իր հակառակորդի տկարություններից և նրան իր կամքը թելադրում: Հաղթանակի մասին խոսք չի կարող լինել այստեղ: Ճշմարիտ հաղթական ու հաղթանակ փնտրիր միայն այնտեղ, ուր հերոսաշունչ ոգին չափվում է ո՛չ թե մարդկային տկարությունների, այլ՝ մահվան հետ:

Նա՛ է հաղթականը, ու առանց ներքին կեղծիքի կրկնել կարող է Ֆիրդուսու խոսքը՝ հոգևորի իմաստով առնված. «Առյուծի ուղեղն է լափում իմ սուրը սայրի և համարձակի մութ արյունը խմում»:

Այո՛, ուր առյուծ չես զգետնում, այնտեղ չկան ճշմարիտ հաղթականներ ու հերոսներ:

* * *

Մահը չունի մեծ թշնամի, քան մարդը, մարտիկը՝ անմահության ղեկը նավով:

Մեր անձի վրա տարած հաղթանակ- ահա՛ հիմքը մեր այլ կարգի հաղթանակների:

* * *

Բաժանի՛ր հաղթանակդ, զորավա՛ր, և միշտ էլ առյուծի բաժինը թո՛ղ զինվորներիդ, ավելի ճիշտը՝ այն խորհրդավոր ուժին, որ վարեց քեզ և զորքերիդ ճակատամարտում:

Ա՜հ, որքան արդար էին գաղիական էպոսի հերոսները, երբ իրենց հաղթանակի փառքից բաժին էին հանում նաև իրենց գործածած սրին՝ իրենց անվան հետ հռչակելով նաև սրի անունը:

* * *

Միջոցների անխտրականությամբ շահած ամեն հաջողություն պղծում է, ապականում մարդկային բարոյական աշխարհը:

Մարդկայնության առաջին թշնամին է անխտիրը:

* * *

Ստորությունն էլ է պարտվում, բայց երբեք չի զինաթափվում:

* * *

Մի՛, մի՛ սպանիր թշնամուդ անգամ, եթե կարելիություն կա սպանելու նրա մարտունակությունը - կռիվը շարունակելու նրա ցանկությունը:

Այլ կերպ վարվողը մարդասպան է հասարակ, և ոչ՝ մարտիկ:

* * *

Փառքի կատարները բարձրանալու համար կա մի հատիկ սանդուխք, որի առաջին աստիճանը կոչվում է քաջություն, իսկ վերջինը՝ դարձյա՛լ քաջություն - մահամերժ քաջություն:

* * *

Փա՞ռք ես փնտրում՝ վտա՛նգ փնտրիր: Հերոսական ոչինչ չկա այնտեղ, ուր շնագայլն ու աղվեսն են կռվում:

Վա՛գրը վագրի դեմ - ահա՛ կռիվը հերոսավայել:

* * *

- Ես ողջունում եմ քեզ և ճակատում քո դեմ, քանզի թագավոր ես դու:

Դարեր ու դարեր առաջ Քսերքսեսին ուղղված հույն ռազմիկի այդ խոսքը պատշաճ է ասել իր հայրենի հողի համար մահվան կուրծք տվող ամեն ռազմիկի, քանզի առանց թագակիր լինելու՝ իր մեծ նվիրումի մեջ թագավո՛ր է նա:

Հարվածելուց առաջ ողջունել իր հակառակորդին - հնում այսպես էին վարվում ասպետոգի կռվողները:

Իսկ այսո՞ր...

* * *

Մի՛ զլանար կարեկցանքդ տկարներին, սերդ անգամ. զայրույթիդ, սակայն, արժանացրո՛ւ Հերակլեսի պես զորավորներին միայն: Նայի՛ր տկարներին, եթե թշնամիդ իսկ լինի: Հարգի՛ր քաջության օրենքը - մնա՛ մարդ, մարդ մնա՝ բոլոր դեպքերում: Եվ, զա՛րկ միայն նրանց, որոնք կարող են պատասխանել զարկիդ:

* * *

Անձնվիրության մեջ մնալով միշտ առաջինը, վերջինը մի՛ համարիր զոհաբերություններից ամենամեծն անգամ:

Թո՛ղ, մահվա՛ն թող զոհաբերության վերջ դնելու հոգը:

* * *

- Սպինե՛րս, հայրենիքիս համար ստացած վերքերս համրեք:

Այսպես խոսելու ազատ մարդը ընդունակ չէ ստորության ու նվաստացումի:

* * *

Նա, ով կռվում երբեք չի եղել՝ հաճախ մնում է անինքնաճանաչ և անճանաչ իր շրջապատի համար:

Վտանգի մթնոլորտում է, առավելապես, մարդս դրսևորում իր ներքին ուժերը, հակումները, նկարագրի գծերը:

Առանց մարտնչումների՝ որքա՛ն հերոսներ ու որքան դասալիքներ անհայտ պիտի մնային զանգվածների մեջ:

Մարտնչի՛ր, որ ճանաչե՛ս քեզ, և որ ճանաչե՛ն քեզ:

* * *

Վերջին հաշվով՝ կողմերի զոհապատրաստության չափն է որոշում՝ այս կամ այն ճակատամարտի, ապա՝ ողջ պատերազմի ելքը:

Հաղթում եմ, նշանակում է՝ հակառակորդիս գերազանցում եմ զոհաբերության մեջ: Ահա՛ ռազմական դոկտրինայի այբն ու փիլիսոփայությունը:

* * *

Մարդուն աշխարհում երբեմն վիճակվում է ապրել ավելին, քան այն, որն անվանում ենք ողբերգություն:

Օրինակ՝ երբ վիրավորը աղաչում է իր սպանիչին – ինչպես Իլիականի Հեկտորը՝ Աքիլլեսին-չանարգել իր դիակը:

Այո՛, դա ավելին է, քան սովորական ողբերգությունը: Նման դեպքերում զարհուրելին մահը չէ, այլ այն տանջող գիտակցությունը, որ քեզ մահ պատճառողը մահիցդ իսկ հետո քո հանդեպ մարդ լինելու քաջություն չունի:

Մեռնելով՝ մարդը դադարում է որոշ երկրի, ազգության, գաղափարաբանության հետ կապված լինելուց:

Նա վերացարկվում է, համամարդանում, ոգիանում: Մեռնելով՝ նա մերկանում է աշխարհային ամեն տեսակի պատկանելիությունից, կապից, և դառնում բացարձակ մարդ, որի դիակի առջև պիտի լռի ամեն կարգի տմարդություն:

Հոգևոր շնագայլությո՛ւն է հակառակորդի դիակի անարգումը:

* * *

Դիրքեր կան - անառիկ կոչվող - որոնցից կախված է ոչ միայն օրվա, այլև հետագա կռիվների ելքը. դիրքեր, որոնց նշանակությունը ոչ միայն ռազմավարական է, այլև՝ ռազմագիտական: Նման դիրքերի շուրջը և նրանց համար, հանձին մարտիկների, էապես չափում են մահը և մահը. ուզում եմ ասել, թե այդտեղ մարտիկների մահապատ--
րաստության աստիճանն է կանխորոշում կռվի ելքը:

Եվ, մահվան գնով էլ հաղթահարվում է դիրքերի «անառիկությունը»:

* * *

Հրեական մի զորավար, նահանջելով հռոմեական լեգեոնների առջև, խոր դժգոհության առիթ է տալիս իր բանակին:

Զինվորների հարցումին՝ «Ինչո՞ւ չի դիմադրում», նա պատասխանում է, թե իրեն ազատ չի համարում աննշան վայրի համար թափելու այն արյունը, որ պահել է Սողոմոնի տաճարի պաշտպանության համար:

Եվ, կրնկակոխ շարունակվում է նահանջը: Զորավարը, սակայն, կանգ չառավ նաև Սիոնի պատերի տակ,- ասում է պատմությունը: Եվ, Տիտոսի լեգեոնները կործանեցին Երուսաղեմը:

Ո՛չ, ո՛չ, զորավա՛ր, դու սոփեստում էիր՝ սրբություն կեղծելու: Դու մեռնել չէիր ուզում. դու երկչոտ էիր, որով և անազնիվ:

Կարևորագույն վայրերի պաշտպանությունը ապահովում են նվազ կարևորների համառ պաշտպանությամբ միայն: Այսպե՛ս, և ոչ այլ կերպ: Ըստ իր կարևորության՝ «տաճար» է ամեն դիրք, և իբրև այդպիսին պիտի պաշտպանել դա: Չկան ո՛չ աննշան դիրքեր, ո՛չ էլ աննշան գործեր կռվի դաշտում: Այնտեղ կարևոր է նշանակալից ամեն ինչ: Եվ, եթե կա՝ աննշան մի բան, դա էլ հենց մարդկային արյունն է, անգամ զորավարի արյունը:

* * *

Գրողներ կան, որոնք, ըստ էության, հոգևոր անասնականություն են քարոզում, անշուշտ՝ կիրթ, գեղեցիկ անասնականություն:

Ահա՛ ձեզ մի մեծ գրող՝ Անատոլ Ֆրանսը, որի կարծիքը մարդու և մարտիկի մասին ավելի բարձր չէ, քան վայրենու հասկացողությունն Աստծու մասին:

«Մարդկանց,- ասում է նա,- ղեկավարում է իրենց ամենազորավոր զգացումը: Զինվորի, ինչպես և զանգվածի ամենազորավոր զգացումը երկյուղն է: Նրանք հարձակվում են թշնամու վրա իբրև նվազագույն վտանգի»...

Ահավո՛ր զրպարտություն:

Ա՞յս է մարդը, մարտիկը, որը փախչելու առավելագույն վտանգից՝ մահից, ակամա քայլում է դեպի «նվազագույն վտանգը»:

Արդյո՞ք երկյուղն էր վարում Մարաթոնի անմահներին, կամ Բաստիլիայի դեմ գրեթե անզեն, բռունցքներով գրոհող հեղափոխական ամբոխներին: Ո՛չ, ո՛չ:

Մեծատաղանդ գրողին ծանոթ չէ սխրագործելու ուրախությունը, տենչը, գեղեցկությունը. ահա՛ իր մեծ դժբախտությունը:

Արիների, քաջերի, հերոսների գոյության փաստ- ահա՛ կենդանի բողոք՝ պատասխանը հոգևոր անասնականության ամեն կարգի քարոզիչներին:

* * *

Ես հավատում եմ հայ հոգու մեծության:

Եվ վիպական չէ իմ հավատը: Դա արդյունք է հարուստ կենսափորձի:

Հայ մարդուն տեսել ու ճանաչել եմ մարտերում, տեսել ու վայելել գեղեցկությունը նրա արիական խոյանքների:

Հայը միշտ էլ հերոսագործում է, երբ նրա առաջնորդներին հաջողվում է, կռվի ընթացքում, հավաքական սիրտ ստեղծել;

Նման սրտի գործ էր Ավարայրի, իսկ մեր ժամանակներում՝ Ղարաքիլիսայի ճակատամարտը:

Երբ - ասենք մեր Պատմահոր ոճով - երբ «փոքր ածուն» Հայաստանը իր մեջ ուժ է զգում ծառանալու Սասանյան հզոր պետության դեմ, այլևս իրենց իմաստից դատարկվում են սովորական ստորոգությունները, հասկացողությունները:

Ի՞նչ էր Ավարայրը: Բախտախնդրությո՞ւն: Մի՛, մի՛, հայհոյեք ոգու դեմ: Եվ, իզուր բառեր մի՛ փնտրեք, քանզի պիտի չհաջողեք որակել այն: Հայ ոգու գործը - երկյուղած՝ կրկնենք այս պարզ բառերը և բավականանանք:

Ոգու մեծագործություններ կան, որոնց իմաստն ու արժեքը ճշտելու համար բառեր դեռ չկան:

Ոգու, հայ ոգու այդ մեծագործություններից էր Ավարայրը:

* * *

Ի զե՛ն:

Որքա՛ն թափ ու թև կա այդ սեղմ խոսքի մեջ: Քիչ լեզուների է տրված հայոց այդ մի զույգ բառերի արտայայտչական թափը:

Լսելու կամ մտովի կրկնելու այդ ռազմականչը՝ պատկերում ես հանկարծակի արթնացած վագրին, որը ձգվում է հարձակվելու համար. արծվին՝ որը թափահարում է թռիչք առնելուց առաջ. և, նպատակասլաց հեծյալի՛ն, որի երիվարի սմբակները կայծակներ են արձակում:

Ի զե՛ն - վագներյան մի ամբողջ սիմֆոնիա է դա, հերոսական խելահեղիչ մի մարշ, որ ոտքի է հանում բանակները, շարժում, փոթորկում և վարում դեպի ստույգ հաղթանակ:

Դա մի հարուցիչ կանչ է, որի սրբազան իմաստին հնազանդվելով՝ քանի՛- քանի՛ անգամ հայոց բանակները, կատաղությամբ հարբած, շարժվել են դեպի Հայաստանի սահմանները և մահվան դեմ լեռնացել:

Հեռավոր մարտերի և հաղթանակների մի գոռ արձագա՛նք, որը, դարերը ճեղքելով, գալիս է վերստին ռազմի փողը հնչեցնելու.

- Ելե՛ք, ելե՛ք, կռվի ելե՛ք նորից...

Դա մեր դասական ռազմավարների ոգու մոլեգնած փոթորիկն է, որի թափին կարոտած, հայ ռազմիկները կերթային փնտրելու մահը՝ նրան իրենց դրոշի առաջ ծնկի բերելու:

Մի ահեղ ճիչ է դա - ճիչը հայ հողի, որից արթնանում է հայոց արդար ատելությունը և մահաբեր թշնամու դեմ զինվում: Մի ամպրո՛պ, մի շա՛նթ՝ հայոց սրտի երկնքից արձակված:

Մահասաստ մի հրամա՛ն, որը հայ մարտիկին մոռացնել է տալիս կյանքն ու աշխարհը ողջ, և նրան համակում Հայաստանի ու հաղթանակի ծարավով:

- Ի զե՛ն... ես կուզեի այդ ռազմականչը շրթունքներիս մեռնել...

IX
ԱՆՀԱՏ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Առանձին անհատի ընկերային դիրքավորումը, նրա վերաբերմունքը դեպի իր պետությունը - ահա՛ թե ինչով է պայմանավորվում այդ վերջինի ճակատագիրը - պետության ճակատագիրը:

Հնարավոր են հետևյալ դիրքավորումները.

- Նախ՝ անհատը սիրում է իր պետությունը, և այդ դեպքում անձնվիրաբար գործում, զոհաբերում, տառապում նրա համար, որով և նպաստում նրա հզորացմանն և պաշտպանմանը:

- Նա խորթանում է իր պետությունից՝ դառնում անտարբեր դեպի նրա ճակատագիրը, որով՝ վերջինը դառնում է տկար և դյուրակործան:

- Վերջապես, նա, անհատը թշնամանում է իր պետությանն և աշխատում ի կորուստ նրա:

Պատմությամբ հաստատված են հետևյալ ճշմարտությունները.

- Մարդը չի կռվում այն բանի համար, որը իրենը չի համարում՝ չի հավատում բարոյական տեսակետով:

- Արիաբար մարտնչում է նա, ու տրամադիր է անձնվիրաբար գործելու այն հավաքականության համար, որին պատկանում է:

- Անարի է զոհաբերելու անտրամադիր ամեն անհատ, անկախ իր ընկերային դիրքից, իր խառնվածքից և հասակից:

Որով,- եզրակացնում են որոշ ուղղության պատկանող ընկերաբաններ,- անհատին պիտի դնել այնպիսի վիճակում, որ նա հավատարմանա իր պետության և չզատի իր ճակատագիրը նրա ճակատագրից:

* * *

Արդյո՞ք արդարանալի է՝ արտաքին վտանգի դեպքում ի կորուստ իր պետության աշխատող անհատի ընթացքը:

- Ո՛չ, հազարի՛ցս ո՛չ:

Քանզի պարտված պետություն, ասել է՝ դժբախտ ժողովուրդ:

* * *

Ըստ նորանշան մի տեսության - որի համար անհատն ինքնանպատակ է - հայրենասիրությունը պայմանավորվում է կենսական շահերի հաշվառմամբ: Այնտեղ, ուր հաշվի չեն առնում այդ շահերը՝ չքանում է հայրենասիությունը, իր տեղը զիջելով անհատի անտարբերության կամ նրա ներքին թշնամանքին: Ըստ այդ նյութապաշտիկ ընկերաբանների՝ հայրենասիրությունը, ինչպես ամեն առաքինություն, պայմանական է: Տուր, որ տամ: Ահա՛ նմանների հայրենասիրությունը: Հացիս չափ, ստացածիս չափ և՝ հայրենասիություն: Ո՛չ ավելի, և ո՛չ պակաս: Կարիք կա՞ ասելու, որ դա հայրենասիրություն չէ, այլ՝ պղծումն նրա հասկացողության:

Սիրո և նվիրումի մասին խոսք չի կարող լինել այնտեղ, ուր տիրապետող է եսական շահը: Սեր դեպի հայրենի երկիրն ու ժողովուրդը ենթադրում է բացարձակ նվիրվածությունը հայրենիքին: Բարձր էթիկականություն է հայրենասիրությունը: Գոյություն ունի սոցիալական մի հատիկ զգացում, որ եսական շահասիրություն չի վերցնում: Եվ, դա հայրենասիրությունն է: Այդ նվիրական զգացումն է մայրը պատմության ողջ հերոսականի: Դրա շնորհիվ են ապրել, գերապրել թվապես տկար ժողովուրդները: Անձնական շահասիրության հետ կցորդվող հայրենասիրություն - ինչպիսի անարգանք՝ ուղղված ամենանվեր հայրենասերների դեմ: Ինչի՞ վերագրել այդ գռեհիկ ըմբռնումը - մտքի տկարությա՞ն, թե սրտի աղքատության:

* * *

Մեկը* - որին 18-րդ դարը թյուրիմացաբար անվանել է իմաստասեր- դժգոհելով իր կառավարությունից՝ գրել է իր երկրի դեմ. «Նվաստացած ֆրանսիական ազգը այժմ արժանացել է ողջ Եվրոպայի արհամարհանքին: Ոչ մի հեղափոխություն ի վիճակի չէ նրան դարձնելու ազատ: Նա կմեռնի սեփական անզորությունից: Օտա՛ր նվաճումը- ահա՛ թե ինչը կփրկի նրան: Եվ, դա կախված է դիպվածից ու պարագաներից»:

Զզվելի հայրենասիություն: Ենթական ցանկանում է, որ իր երկիրը դառնա օտար ոտից կոխան, և գիտե՞ք ինչու. որովհետև գնահատված չէ իր կառավարության կողմից: Վատությո՛ւն անանուն, անորակելի, վատություն in gradu heroico...[49]

Վա՛յ այն հայրենիքին, որի պաշտպանների հայրենասիրությունը իր հիմքում նյութապաշտիկ է, հաշվետես:

X
ՀԱՄԵՍՏ, ԲԱՅՑ ՈՉ ՆՎԱՍՏ

- Խոսքի անկում - տխո՛ւր երևույթ, հետևանք ժողովրդի այն վատառողջ հոգեվիճակի, որ կոչվում է պարտվողականություն:

Արդյոք չե՞ս զգում, թե ինչպես շնչահեղձ է լինում հայ խոսքը Հայաստանից դուրս: Ամեն բանից առաջ պակասում է խանդն ստեղծագործ-բեղմնավորիչը մտքի, սրտի: Տարագրի պես խղճալի է և հայ խոսքն այսօր:

- Համեստ լինենք, բարեկա՛մ, պատշաճ է, որ օրվա հայ խոսքը, Հայաստանում, թե մեզ մոտ՝ սփյուռքում, համապատասխանի ներկա Հայրենիքի սահմաններին:

Մի ափ, որի հյուսիսն ու հարավը, գիտես, շոշափել կարելի է անգամ անզեն աչքով:

- Համեստ, այո՛, սակայն, եթե դա նշանակում է լինել նվաստ, նվաստամիտ, ես վճռաբար մերժում եմ նման համեստությունը: Հայաստանն առնված օրվա իր հորիզոնով, ո՛չ, ո՛չ, Հայաստանը բազմիցս ավելին է, քան իր աշխարհագրական սահմանները: Արդյոք չգիտե՞ս, որ հայրենիքներ կան, որոնց քաղաքական ու հոգևոր սահմանները չեն համընկնում. ասենք՝ հունական, հրեական հայրենիքները: Ինչ վերաբերում է հայոց հայրենիքին, նրա հոգևոր և աշխարհագրական կարողությունները իրար համեմատում են ճիշտ այնպես, ինչպես Արարատն ու Արարատյան դաշտում ընկած մի համեստ բլուր: Օրվա մեր հայրենիքը - եթե ներելի է այսպես ասել՝ խտացված էություն է:

- Չեմ հասկանում քեզ:

- Ուրեմն, լսի՛ր, որ հասկանաս:

Պատմական վայրեր կան, որոնք անցնելով օտարի ձեռքը չեն օտարանում, չեն դադարում մնալ մերը, եթե նրանց վրայով դարեր ու դարեր անցած լինեն. օրինակ՝ Արարատը, Անին, Տարոն աշխարհը - ծնողը հայոց մտքի և սրտի հանճարների, և...

- Այս տեսակետով առնված, ինչ խոսք, մեծ է հայոց հայրենիքը:

---

* Դիդրո (ծանոթ. հեղինակի):

- Նա, բարեկա՛մ, մեծ էլ կմնա հավերժ, աշխարհագրական ինչ սահմաններ էլ որ ունենա: Տրդատ ու Տիգրան Մեծ, Սահակ և Մեսրոպ, հրաշունչ Մամիկոնյաններ ու շինարար Բագրատունիներ, Բյուզանդական գահը զարդարող Չմշկիկներ. ապա՝ նրանց բանակների մեջ, ըստ Գելցերի՝ «տաղանդ ու ընդունակություն մտցնող» հայազգի զորավարներ. ապա՝ Նարեկացի ու Քուչակ, անհական հիասքանչ ճարտարապետություն, որի - ըստ արևմտյան գիտության՝ «խիստ ազդեցության տակ են ծնվել և զարգացել եվրոպական զույգ ոճերը՝ ռոմանականն ու գոթականը». ապա՝ 9-րդ դարի հայ մտքի շլացուցիչ փայլատակումը Պավլիկյան ուսմունքը, և, ի վերջո, հայկական բազմահազար ձեռագրերը, որոնցով պիտի հպարտանային աշխարհի մեծագույն պետությունների մայրաքաղաքները-այս բոլորը երկնող ժողովրդի հայրենիքը չի կարող, հաչս մարդկության, մեծ չհամարվել, բավական է, որ հայը լինի գիտակ և արժանի իր անցյալ կուլտուրական մեծության, այսինքն լինի ինքնաճանաչ և ինքնահարգ:

- Այս տեսանկյունից դիտելով, ես էլ տեսնում եմ մեծությունը մեր հայրենիքի և բաժանում արժեքավորումդ ամբողջապես:

- Ուրա՛խ եմ: Եզրակացնենք: Մեր հայրենիքի և ժողովրդի մեծությունը պետք է չափել ո՛չ թե Հայաստանի օրվա անձուկ սահմաններով, այլ՝ հայ մտքի և արվեստի ազդեցության հորիզոններով: Պատմականորեն առնված՝ մերն է այն ամենը, որ հայը տվել է աշխարհին: Մեր ստեղծած պատմության ո՛ր դարում էլ և երկրագնդի ո՛ր կետի վրա էլ լինի՝ կմնա սեփականությունը հայ ոգու: Մենք մեր արդար բաժինը ունենք որոշ ժողովուրդների փառքի մեջ, օրինակ՝ իրանական, բյուզանդական, արաբական և այլն: Հայ մտքի և բազկի գործերը Հայաստանից դուրս՝ կմնան իբրև հոգևոր գաղութներ: Այո՛, մարդկային սփյուռքից զատ՝ մենք ունենք նաև մեր ստեղծած արժեքների սփյուռքը:

Միայն նման գիտակցությամբ և ինքնազգացողությամբ կարելի է չեզոքացնել ապահայացուցիչ-ապազգայնացուցիչ ազդեցությունը մեզ սպառնացող օտար միջավայրերի:

- Արդա՛ր ես, բարեկա՛մ: Այժմ ես հասկանում եմ քեզ. այո՛, Հայաստանից դուրս հայորեն չկորչելու համար, հայը պիտի զրահվի պահանջածդ գիտակցությամբ: Եվ, ինչո՞ւ վհատել, դառնո՛ւմ է աշխարհը...

XI
ԸՆՏՐԱՆԻՆ

Ժողովուրդն ավելին է, քան թվում է: Նրանում ավելի ուժեր կան, քան նա զգում է և արտահայտում: Ժողովուրդը - դա իր ուժերին

անծանոթ դյուցազն է, որ հաճախ գործում, սխրագործում է, գրեթե, ենթագիտակցորեն:

Դա հողն է՝ դեռ պեղումների չենթարկված, որի մեջ ավելի արժեքներ կան թաքնված, քան այն, որ լույս աշխարհ է բերված:

Հայտնաբերել այդ թաքուն, դեռ չգիտակցված արժեք՝-ուժերը, նշանակում է ուժի նորանոր աղբյուրներ բանալ նրա էութեան մեջ:

Եվ, հենց սրանում է կայանում ընտրանիի՝ ճշմարիտ մտավորականության դերը: Իրենց հատուկ բնագավառներում, այդ բացառիկ և պատասխանատու դերը կատարում են պատմաբանը, լեզվագետը, բանասերը, հնագետը՝ նպաստելով իրենց ժողովրդի ինքնաճանաչման:

Հետադարձ հեռանկարով վերականգնել իր ժողովրդի պատմության այս կամ այն դարաշրջանի հոգևոր կյանքը. հնագիտական պեղածոների դրսևորմամբ ճշտել նրա մշակույթի հանգրվանները. համեմատական լեզվագիտությամբ որոշել նրա լեզվի- որ ասել է՝ նաև նրա գիտակցության, նրա ոգու - հասակը, ապա՝ նրա տեղը մարդկության մեծ ընտանիքում. արդիական փիլիսոփայության լույսի տակ դնել նրա ավանդությունները, նրա էպոսը, առասպելները. սեղմ ասած՝ ժողովրդին ճանաչել տալ իր ողջ անցյալը, նշանակում է՝ նրա համար լիարժեք կյանքով ապրելու և ստեղծագործելու նախադրյալներ ստեղծել:

XII
ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐ *

Հոռետեսությո՞ւն - ո՛չ, ո՛չ, անտեղի է դա մարդկության ապագայի նկատմամբ, քանի որ մարդը ինքնամշակմամբ կարող է Սոկրատ դառնալ:

Ոգու սոկրատյան մշակույթ - ահա՛ թե ինչի կարիք ունի մերօրյա աշխարհը:

Ա

Օժտե՛ք մարդուն քաջությամբ և նրան կդարձնեք ավելին, քան է՝ սովորական մահկանացուն:

Տվե՛ք նրան իմաստություն և նա կդառնա բարոյապես ավելի նախանձելի:

Իսկ եթե նրան օժտեք նաև հոգու վեհությամբ՝ ձեր առջև կարծանանա Սոկրատը, այսինքն՝ կատարյալը:

Այսպիսին էր նա, որի երևումը իր դարաշրջանի ոգին հեղաշրջեց:

Առաջինը լինելով, նա հանդգնեց Իզիդայի քողը բարձրացնել՝ ճշմարտության գաղտնիքին տիրելու համար:

---

* Դիմաստվերներ իմ նույնանուն ձեռագրից (ծան. հեղինակի):

Բնազանցության անհաս բարձրունքներից նա իմաստասիրությունը իջեցրեց երկիր, որպեսզի նրա լույսի տակ մարդը նշմարի աշխարհն ու իրերը: Մարդկության առաջին մեծ բարոյագետը, ճշտելու բարու և բարոյականի հասկացողությունները, մարդու մեջ արթնացրեց խիղճը - ներքին աստվածությունը, որի առջև բանավոր էակը պարտավոր է իր ամեն մի արարքն օրինականացնել:

Կար նախասոկրատյան անհատը, որին կվարեին արտաքին իշխանությունը, ծևական օրենքը, սովորությունը:

Սոկրատով սկսվեց գոյությունը ինքնավար անհատի, անձի:

Պետական վարիչ չէր Սոլոն, Լիկուրգոս, Պերիկլես չէր. նա օրենսդրեց մարդկային բարոյական աշխարհի համար՝ հանդիսանալով ուսուցիչն ու դաստիարակը նրանց, որոնք կնկրտեին ժողովրդի և պետության ճակատագիրը վարել:

* * *

Մտքի և ոգու Հերակլե՛ս - այսպիսին եղավ նա իբրև իմաստասեր:

Մի անգամ, ասում են, ամբողջ օր նա մնաց խորասուզված մտքի ծովում, և միայն ծագող արևը նրան իրականության վերադարձրեց:

Ոգու կյանքով ապրելու, ներքնապես ազատագրվելու չափ ինքնակենտրոնանալու ինչպիսի՛ կարողություն:

Մտքի և կամքի հսկա՛, որի խոսքը, կյանքն ու ճակատագիրը պայմանավորելով իրար, նրանից ստեղծեցին կատարելատիպը, որի նմանը դեռ եղած չէր մարդն աշխարհում:

Նա էլ ընդունեց պայքարը, սակայն, սոկրատյան ձևի - պայքար, առանց կրքի, ատելության ու թշնամանքի:

Ճշմարտությունը եղավ իր միակ զենքը. անխռովությունը - դիրքը՝ անգրոհելի, անառիկ: Եղավ աներկյուղ, երբ պետք էր Աթենքի բռնավորներին շանթել: Եվ, նույնքան անհողդողդ, երբ հարկ էր խուժանավարների կեղծիքին սովոր ամբոխներին ճշմարտություններից դառնագույնն ասել:

«Ի՞նչ է աստված՝ ես չգիտեմ. ես գիտեմ միայն ինչն աստված չէ»,- ահա՛ խոսքը, որին վիճակված էր նոր դարաշրջան, պատմության մեջ նոր էջ բանալ, խո՛սքն իմաստունի և իմաստասերի, որի առջև իբրև ուրվականներ Օլիմպիոսի աստվածները չքացան:

Այսպես ապրեց կատարելագույնը մարդկանցից. գիտցավ արհամարհել կյանքը, երբ պետք էր մեռնել ի խնդիր բանականության սրբազան իրավունքների:

* * *

Սոկրա՛տ, աշխարհիկ սո՛ւրբ, գովք... քեզ: Գո՞վք - ո՛չ, ո՛չ, մի օր դու մերժեցիր կենդանի գովքը՝ դափնին, որ կտրվեր քեզ Պոդիտեի ճակատամարտում ցուցաբերածդ քաջագործության համար՝ պահանջելու, որ նրանով քո կողմից փրկված վիրավոր Ալկովեադեսին պսակեն:

Կարիք չզգացիր, ոգու հսկա՛, որ ուրիշները մեծությունդ վկայեն:

* * *

Սոկրա՛տ, վերստին ոգեկոչեցի քեզ, և ահա՛ դարերի մշուշի միջից ժպտում ես ինձ իբրև իմացության ու բարության արև՝ լույսի հեղեղ ու ջերմություն սփռելու աչքը կույր խցիկում:

Այսօր էլ լքած կեցարանս՝ եկել եմ այցի քեզ, գերագույն կալանավոր:

Զրպարտված սիկոֆանտներից ու մահվան դատապարտված, ահա՛ կանգնած մեծ անհայտի սեմին, մահվան բաժակը ձեռքիդ՝ հոգու անմահության մասին ես իմաստասիրում անխռով...

Գերմարդկայի՛ն կեցվածք - ասեք աստվածավայել, որի վեհությամբ կախարդված, անպատում ցավերս - որոնց բեռան տակ առասպելական Աթլասն իսկ կկքեր - ավելի թեթև եմ զգում: Եվ, շղթաներս՝ չքացա՛ծ...

Սոկրա՛տ, գերագույնը մարդկության որդիներից, գո՛վք քեզ, թեև դու բարձր ես ամեն գովքից ու դափնուց, անհունորե՛ն բարձր...

Բ

Հաննիբա՛լ - ոգու հսկա՛, որի ռազմական հանճարը, փառքն ու անձնական դժբախտությունը հավասարապես մեծ եղան, որը, սակայն, իր մեծ հայրենասիրության արժանի հայրենիք չունեցավ - քե՛զ, հռոմասա՛ստ հերոս, իմ սքանչացումը քե՛զ...

Գ

Ընկավ Կեսարը՝ դաշունահար:

Եվ, աչքերը առհավետ փակելուց առաջ՝ փառքի վերջին շարժումով նա ծածկեց իր մերկությունը, որպեսզի դիակնացած վիճակում իսկ իրեն չպակասի վեհությունը:

Մե՛ծ, վեհափառորեն մեծ ռազմադաշտերում՝ նա մեծ եղավ և մահվան մեջ:

Կեսար լինելու համար բավական չէ մականը, վեհություն է պետք: Ճշմարտորեն մեծերի շունչն է վեհությունը: Ave, Caesar! Ողջո՛ւյն, Կեսա՛ր...

Դ

Սցիպիո՛ն - խիզախ զինվոր և հաղթակա՛ն, ես հասկանում եմ քեզ:

Հավասարապես մեծ եղան նվիրումդ Հռոմին և հայրենիքիդ անունով կատարված ապերախտությունն անձիդ դեմ: Քանի կա պատմությունը, զորավա՛ր, պիտի ապրեն դառնության խոսքերդ, որոնցով հայրենի հողը՝ ոսկորներդ գրկելու արժանի ես գտնում:

Խորաչափում, զգում եմ մեծ ապերախտվածիդ դառնությունն արդար, և այնուամենայնիվ, վարանում եմ անիրավ հռչակել հայրենիքդ:

Հայրենիքը - սիրաշա՛տ մայր՝ չունի՛ ավելի սիրելի զավակ, քան զինվորը, որի բոլորանվեր պաշտումով և ջահել արյունով է պայմանավորում իր գոյությունն ու մեծությունը:

Հայրենիքը միշտ էլ արդար, միշտ էլ երախտագետ է նրա հանդեպ, որի փայփայիչ անունը՝ զինվո՛ր՝ բարձր է ամեն տիտղոսից, պաշտոնից, շքանշանից:

Զինվորն ավելին է, քան քաղաքացին, որը իր պարտականություններից ավելի իրավունք է փնտրում:

Զինվորը՝ հայրենիք՝ մոր առաջին զավակը, իբրև մարդ և մարտիկ, ճանաչում է միայն մի հատիկ իրավունք՝ մարտնչել ու մեռնել հայրենիքի համար: Գիտե՞ս, ով այդպիսին չէ՝ զինվոր չէ:

Ապերախտությունը, զորավա՛ր, որ բաժին ընկավ քեզ՝ ստվերն է փառքիդ, արդյունք մեծության ու փառասիրության այն պայքարի, որ հին է մարդկային հասարակության պես:

Մեր անկատարյալ աշխարհում իր դեմ մախանք* է առաջացնում ճշմարիտ ամեն մեծություն, արժեք, փառք:

Եվ, բնական դարձած այդ մախանքը մեծության դեմ միշտ էլ պսակվել է պարտությամբ, որովհետև պատմությունը տեր է կանգնել Սցիպիոնների ոսկորներին և հերոսական գործերին:

Զորավա՛ր, Հռոմի անվան արժանի հաղթակա՛ն, իմ մեծարա՛նքը քեզ...

Ե

Վարդա՛ն - ահավասիկ մի անուն՝ ավելի՛ հմայքոտ, ավելի՛ զորավոր, քան մականը Հայաստանի գահը վայելած բոլո՛ր թագակիրների:

Մի անուն, որի մեջ հինգերորդ դարի հայ գեղջուկ մարտիկը իր հողի և հավերժության ձայնն էր լսել:

* Չար նախանձ (ծանոթ. խմբ.):

Մի նախանձելի անուն, որը կրելով, Մամիկոնյան կոչվելու համար՝ աշխարհակալ Բյուզանդիոնի հայազգի կայսրերը իրենց ծագումն էին կեղծում:

Մի անուն - մի ամբողջ դավանա՛նք, մի ո՛ւխտ, մի բարոյական իմաստասիրությո՛ւն:

Դավանա՛նք - հայի համար Հայաստա՛նն է գերագույն արժեքն այս աշխարհում:

Ո՛ւխտ - մեռնել, բայց չնահանջել, երբ Հայաստանին են պաշտպանում:

Բարոյական իմաստասիրություն - Մամիկոնյանը չի նահանջում և վատության առջև՝ խաղաղ պայմաններում:

Այսպիսի՛ն էին Մամիկոնյանները՝ հայրենահո՛գ, հերո՛ս, ասպե՛տ:

* * *

Դժվար չէ զորավար լինել, բայց ոչ և՝ զորավոր: Ամեն մականակիր կեսար չէ, ինչպես ամեն զորավար զորավոր չէ;

Ավարայրի մեր պսակավորը թե՛ մեկն էր, թե՛ մյուսը:

Թեև մարտը զորավարն է վարում, հաղթանակում է, սակայն, զորավորը, զորավո՛ր է նա՛, որ մերժում է տկարությունը, երկյուղը, պարտությունը:

Մամիկոնյանները զորավոր էին այն սրտառուչ բանականությամբ, ինչպես մի ուրիշը հայ է անբռնադատորեն, քանզի չի կարող հայ չլինել:

Մարդը, նրանց հասկացողությամբ, չէր կարող չլինել հերոս, քանզի բարձր արժեքներ կան, որոնց համար կռվելու, հաղթանակելու պահանջ կա, քանզի աշխարհը կա:

Իբրև տոհմիկ հերոսներ՝ նրանք մահն ընդունում են իբրև վերջին փորձություն՝ մարդու համար:

Մահվամբ է փորձում մեզ հավիտենականը, և վա՛յ նրան, ով պարտվեց մահից. նա արժանի չէ Հայրենիքին, հավերժության:

Մամիկոնյանները զինվոր էին թե՛ մեկի, թե՛ մյուսի՝ արժանի երկուսին էլ:

Մեր նվիրումի դիմաց՝ հայրենիքը անմահանալու առիթ է պարգևում մեզ, որով՝ հայրենիքի համար մեռնելը գերագույն պատիվ է, և ոչ՝ ձևական պարտականություն:

Ահա՛ դասական հայ զորականի հասկացողությունը հայրենիքի և հայրենասիրության մասին:

Հայոց պատմության մեջ Մամիկոնյանների՛ն է պատկանում առաջին ուխտի պատիվը: Ո՛ւխտն է Վարդանների դյուցազնության աղբյուրը: Ուխտ ուներ Կարթագենի ամեհի զավակը և նա դարձավ

Հռոմը սարսափեցնող Հաննիբա՛լ: Ուխտվածնե՛րն են հաղթում մահին և նրան ծառայեցնում կյանքին:

Իբրև ժառանգություն՝ Մամիկոնյաններն իրենց ուխտը կտակեցին եկող սերունդներին: Եվ, իր զավակների ուխտածությամբ ապրեց Հայաստանը:

* * *

Դարե՛ր, դարեր են անցել, և իմ էության մեջ դեռ որոտում, դղրդում է Վարդանի Ավարայրյան խոսքը՝ ուղղված հայոց բանակին. «Վախը թերահավատության նշան է... Մահն ընդունենք ուրախ սրտով»:

Դարեր են անցել, զարգացել, ճոխացել է հոգեգիտությունը: Այսուհանդերձ, այսօր իսկ շատ սակավ է թիվն այն զորականների, որոնց համար գաղտնիք չէ Ե դարի հայ զորավարի հայտնաբերած հոգեբանական մեծ ճշմարտությունը:

Թերահավատությունն - ահա՛ իրական թշնամին, որին չհաղթահարած հաղթանակ տոնած չէ և ոչ մի զորավար:

Հաղթանակում կամ պարտվում է նախ ոգի՛ն, ապա հետո՝ նյութեղեն զենքը:

Մահվան դեմ հաղթանակելով է նվաճվում կյանքը, ապրեցվում հայրենիքը:

Այսպիսի՛ն էին իրենց կյանքն ու մահը հայրենիքին ծառայեցնող Մամիկոնյանները - իմացյալ մահվան կեսարները. նրա՛նք, որոնց համար ռազմարվեստը մահարվեստ էր, այսինքն՝ մահվան դեմ հաղթական կանգնելու, մահի՛ց էլ զորավոր հանդիսանալու արվեստ. նրա՛նք, որոնց ճակատներից ավելի արժանավորը մեր աշխարհում դեռ չի շոշափել դափնին...

* * *

Վարդա՛ն, զորավա՛ր և զորավորդ հայոց, անցած, գոյ և գալոց մեր սերունդների անունից համբո՛ւյր Ավարայրի՛դ, համբո՛ւյր անունիդ...

Զ

Ահա՛ և նրա՛նք՝ ուխտի իմ գերագո՛ւյն եղբայրները- նահատակնե՛ր ու հերոսնե՛ր, որոնք մի օր, անկարող աշխարհին իրենց անպատում ողբերգությունը ոռնալով՝ երանեցին այսպես.

«Նրա՛նց, որոնք գոռ մարտերի բոցերում իրենց ոգին են պողպատում, և զարնվում իբրև պարտականության ջահել աստվածներ, երանի՛:

Արծվի՛ն, բարձրունքներում՝ բիբերն աստղերին, հոգևարող արծվին է՛լ երանի՛:

Եվ, առյուծին արքայական, որ մեռնելուց առաջ՝ անապատների հավերժության իր վերջին մռնչյունն է խառնում, երի՛ցս երանի՛»:

ՀԱՎԵԼՎԱԾ
ԻՄ ՏԱՊԱՆԱԳԻՐԸ

Անցո՛րդ, կանգ ա՛ռ, կա՛նգ, անցորդ այս անհայտ հողաթմբի առջև, որում ինձ տրված չէ հանգչել:

Եվ, ասա՛ դեռ աշխարհ ու արև կա՞...

Միթե՞ քուն են մտել սրտերը հայոց, երբ մեռելները քուն չունեն, քանզի գերեզման չունեն:

Օ՜հ, ձայնը, խռովիչ ձայնը մեռելների լսո՞ւմ ես, անցո՛րդ, հայոց արյան վայրերից բարձրացող կանչը... Կա՛նչը կարմիր եղեռնի բյուրաբյուր մեր զոհերի... Կա՛նչն անլռելի, որ մերթ՝ իբրև խոլ փոթորիկ մռնչում է մարդկային ազգի խլության դեմ, և մերթ իբրև անզոր հողմ՝ նրա մեռյալ խղճի դռանը սվսվում...

Գերեզման՛ն են ուզում մեռելները, անցո՛րդ: Ա՜հ, երանի՛ հայրենի հողում, հողի քնով քնած երջանիկներին. երի՛ցս երանի՛...

Հանգի՛ստ են ուզում մեռելներն անթաղ, անգերեզման՛...

Եվ, պիտի հանգչեն... Այնժամ պիտի հանգչեմ և՛ ես, երբ հայոց աշխարհի երեք հսկաները՝ Մասի՛ս, Նեմրո՛ւթ և Սիփա՛ն իրար ձայն տան, կանչեն ցնծագին. «Հե՛յ, հե՛յ, էլի՛ հայո՛ւն ենք, էլի՛ հայ, էլի՛ Հայաստա՛ն»...

* * *

Անցո՛րդ, ասա՛, հեռո՞ւ է այդ օրը:

Բաբո՛, դու լալի՞ս ես, դու զինաթա՞փ ես, երբ ես դեռ տոգորում, դեռ շարունակո՛ւմ եմ կռիվը:

Ի մա՛րտ, անցո՛րդ, ի մա՛րտ, որպեսզի տարաբնակ հայը՝ հայրենադարձ, և մեր մեռելները՝ գերեզման ունենան:

Ի մա՛րտ...

ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՆԱՄԱԿՆԵՐ, ԵԼՈՒՅԹՆԵՐ

ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵ՞ՐԸ

Փա՜ռք այն ոգիներին, որոնք չլսեցին ժամանակի, պատմության և իրենց ազգի ձայնը ու գործի ասպարեզ իջան...

Բանտարկյալնե՞րը...

Ովքե՞ր են այդ բանտված ոգիները:

Եթե այդ հարցը առաջարկենք Ճերմակ Ցարին կամ Կարմիր Սուլթանին, նրանք «ավազակ» և «մարդասպան» անուններով կմկրտեն նրանց: Այո՛, նրանք, բանտարկյալները, Ազատության ավազակներն են, որոնք ուզեցին Ազատություն և Արդարություն գողանալ իրենց հրատանջ Ազգի համար:

Նրանք հանդգնեցին փշրել Հայի ձեռքն ու ոտքը կաշկանդող բռնության շղթաները: Նրանք, Հայի ազատության ասպետները, ցույց տվեցին բռնակալներին, թե Հայը այլևս արցունքի գետեր չի թափում, այլ՝ բողոքում է, որի ձայնից դողում են տիրանները իրանց շիրիմների խորքերում, ցույց տվեցին, թե Հայը այլևս չի բախում, այլ՝ փշրում է Ազատության դարպասները:

Այդ բանտված ոգիները անվախորեն Ռուսիայի Ցարին «Պրոկրուստ» անունով կնքեցին, երբ նա հրամայեց իր կոզակներին՝ տապարներով ջախջախել էջմիածնի դռները, նրանք էին, այդ Հայի անկախության Կարապետները, որոնք փորձեցին ջախջախել այն բռնակալների գլուխները, որոնց մեջ հղացավ հայկական ընդհանուր կոտորածի միտքը: Վերջապես, այդ բանտարկյալները այն ըմբոստ ոգիներն էին, որոնք բարձրացնելով իրենց ձայնը, այսպե՛ս խոսեցին.

- Բռնակալնե՛ր, ամեն մի ազգ, ինչպես և Հայը, նման է մի նորածին մանուկի, որը օրերի ընթացքում ազատվում է ծնողական կապանքներից: Ի՞նչ կնշանակի բռնության մագիլների մեջ խեղդել մի ազգ յոթ հարյուր տարի, ի՞նչ կնշանակի մանուկին օրորոցի մեջ պահել մինչև գերեզմանի սև տախտակը...

Ահա՛ այն բանտարկյալները, որոնց մեջ խոսեց Ազատության, Արդարության ու Վրեժի ձայնը: Եվ նրանք վճռեցին պարզել Հեղափոխության Կարմիր դրոշը ու նամուսով դրոշի տակ մեռնել, քան թե բենամուս ապրել, սողալով բռնակալների առաջ և լիզելով բռնության անարգ շղթաները: Եվ նրանք ասպարեզ իջան, ցցած իրենց դրոշը, գործեցին և ընկան Ցարի ու Սուլթանի դրած թակարդների մեջ:

Ու այսպես, իրենց կարմիր գործունեության համար, բանտվեցին այդ խռովարար ոգիները Ռուսիայի և Տաճկաստանի զնդանների մեջ...

Ապրում են բանտարկյալները նեղ ու խոնավ բանտերի մեջ ու Ազատության ու Վրեժի ոգին աճում է նրանց սրտի մեջ, և եթե շուտով հասնեն Ազատության ալիքները և փշրեն նրանց բանտերի դռները, այն ժամանակ պիտի թունավորվի բռնակալների կյանքը:

Բայց ավա՜ղ, այդ կարմիր բանտարկյալների տասնյակից միայն մեկն է ազատվում, իսկ մյուսնե՞րը... Օ՜հ, մութ գիշերին հարցրե՛ք, որովհետև նա է տեսնում, երբ գահին հավատարիմ կազակի սվինը հնձում է բանտի պատերի մեջ տասնյակ բանտվածների կյանքերը: Պետերբուրգի մոտով վազող գետակին հարցրե՛ք, որովհետև նա է տանում ու խեղդում դիակները կիսախողխո՛ղ...

Ի՞նչ են կտակում հայ բանատարկյալները, երբ Ցարիզմից և Սուլթանիզմից ծնված մահը մոտենում է նրանց: Թող ապրի՛ անկեղծ հայրենասերի անունը, կեցցե՜ Հեղափոխությունը... կեցցե՜ Միությունը...

Այդ մարտիրոսները կարողանում են միայն այդքան կարճ խոսել, որովհետև ֆալագը շուտ կաշկանդում է նրանց լեզուները: Հավերժական փա՜ռք այդպես կտակողներին:

Հարգա՛նք այդ Միության...

Որովհետև միայն Միության պարզած ձեռքը կարող է բացել մեզ համար հայի Ազատության դարպասները, միայն Միության ձեռքի տապարը կարող է փշրել այն զնդանների դռները, որոնց մեջ բանտված են մեր եղբայրները:

Ուրեմն, Անդրանիկի և Մուրադի ձեռքերը թող պարզվեն *միանալու* համար:

Դե՛, թող բարձրանան այդ ձեռքերը, պատրաստ եմ համբուրելու:

Եվ եթե Միության Աստվածը զոհ է պահանջում, ահա՛, հայրենակիցնե՛ր, ծաղիկ կյանքս զոհի սեղան բարձրացրե՛ք:

«Ռազմիկ», Պլովդիվ (Ֆիլիպե), 1907, թիվ 132:

ՄԵՐ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԻՉԸ[50]

Մեծ մարդը.- Դա սպասվելիք օգնությունն է, մխիթա-րությունը: Մեսիան, որ ժամանակների մայրը երբեմն-երբեմն աշխարհ կուղարկի այս կամ այն ժողովրդի և մարդկության համար:

Մեծ մարդը.- Պարզատես, վշտակիր, հերոս երևալով հոգեկանորեն կփոխի իր միջավայրը: Նրանով կարժեքավորվի, կիմաստանա, կվեհանա կյանքը: Նրա խոսքը կազդի որպես հրաշեկ կայծ՝ բռնկեցնելու իրեն հետ առնչող սրտերն ու զգացումները: Նրա ներկայությունը կազնվաց-նի, կթևավորի, կգոտեպնդի հոգիները: Նրա

շնորհիվ անկարելին կդառնա միայն դժվարին, դժվարինը կարելի: Երազ-ները կդառնան նպատակ, նպատակները՝ իրականություն: Կփոխի ժողովրդի հոգեբանությունը, ճակատագիրը, պատմությունը:

Մեծ մարդը.- Դա Աստված է, միայն այն տարբերությամբ, որ դա իրեն Աստված կզգա միայն իր կյանքի որոշ վայրկյաններում և որպես այդպիսին կկերտի իր հավերժական, իր աստվածարժան գործերը:

Այդպիսին էր Քրիստափորը՝ Հայկական Պրոմեթեյը, մեր Հեղափոխության արարիչը, մեծ առաքյալը, մեծ վրիժակը:

Քրիստափորի հոգու և գործի մեծությունը պատկերացնել կարողանալու համար, դառնանք, մի վայրկյան, վերադառնանք մեր Հեղափոխության նախօրյակը՝ տեսնենք թե ի՞նչ էինք երեկ:

Աշխարհի ամենից անիծապարտ բռնապետության արնոտ ձեռքով կխաչվեր հայ ժողովուրդը:

Գողգոթայից՝ Արևմտահայաստանից կբարձրանար աղաղակը հավաքավառ խաչեցյալի. օգնություն, փրկություն ինձ:

Իսկ մարդկությունը՝ հանցավոր ու անտարբեր, կպա-տասխաներ.

- Ո՞ւր ես, արբ արցունքդ...

- Կոտորվո՞ւմ ես, ջրի չա՞փ էլ արժեք չունի արյունդ՝ դու ես մեղավոր, որովհետև թույլ ես...

- Կողոպտվո՞ւմ ես, տեր չե՞ս վաստակիդ՝ դու ես մեղավոր, որովհետև թույլ ես...

- Շղթաների մե՞ջ կծնեն, կապրեն, կմեռնեն զավակներդ՝ դու ես մեղավոր, որովհետև թույլ ես...

- Կա՞խ է գլուխդ, խոնա՞րհ է ճակատդ, բռնության լծի տակ երկտակվա՞ծ է մեջքդ, պատվիդ տերը չե՞ս, ցեղիդ սրբազան լեզվից օգտվելու իրավունքն իսկ չունե՞ս, վաղո՞ւց է ինչ եկեղեցիներիդ զանգերի քաղցր ղողանջը չես լսում, առանց իդեալի և վեհության կսվսվա՞ս միայն-ստրո՞ւկ ես դու ես մեղավոր, դու. ի՞նչը մղեց քեզ միա-մտորեն հավատալու ցնորապաշտ Նազովրեցու վսեմ, բայց վտանգավոր խոսքին: Ո՞վ ասաց, որ թույլը մեղավոր չէ, որ թույլ է, և որ ուժեղը երախտիք չունի, որ ուժեղ է: Դու խաբված ես, ժողովուրդ, որ զոհն ես քրիստոնեական բարոյախոսության, որ շարունկում է մնալ որպես ներկ և շպար, որպես քոծ և դիմակ ուժեղների հոգու համար: Թուլությունը,- ասում է աշխարհը,- ծնված է սնուցելու ուժը: Ուժն է ծնում իրավունքը: Ուժեղին է աշխարհը, հայրենիքը, ազատությունը և ամեն ինչ:

- Ուզո՞ւմ ես վերջ տալ գերմարդկային տառապանքիդ, որի Շեյքսպիրը դեռ չի հայտնվել: Ուզո՞ւմ ես վերջ տալ գողգոթայիդ, որի վրա, որպես հույսի ժողովուրդ, կմեռնես ամեն օր և չես մեռնի: Ուզո՞ւմ

ես փրկողից.- եղիր ուժեղ, քանզի թույլերը բարեկամ չունեն աշխարհում: Իսկ ուժիդ ապացույցը տալու համար ցույց տուր երկու բան.- առաջինը, որ գիտես մեռնել գիտակցորեն, կռվում՝ գործոն և իմաստալի մահով, երկրորդը՝ որ գիտես մեռցնել: Ապացուցեցի՞ր այդ, ունեցա՞ր այդ երկու առաքինությունները, մասնավորապես առաջինը՝ փրկված ես:

Այս էր աշխարհը հայկական գողգոթայի հանդեպ: Այսպես կպատասխաներ մարդկությունը մահվան դատա-պարտված այս ժողովուրդին, որը չէր ուզի մեռնել, բայց չէր կարող և ապրել:

90-ական թվականներին ուժգնորեն զգացվեց Քրիս-տափորի շունչը: Նրա դրոշի տակ հավաքված հասարակական բանակը - կուսակցությունը արդեն խռովել է մահվան լռությունը: Հոգեպես կլարվի ժողովուրդը: Նրա որդիները որպես ապստամբ կնետվեն լեռները, արիաբար կչափվեն բանակների հետ՝ կանգիտանան վտանգը, կարհամարհեն մահը, ժպիտը երեսներին կբարձրանան կախաղանները, բաց ու բարձր ճակատով կերևան աքսորի ճանապարհներին, կպայթեն մի շարք ապստամբություններ՝ մեկը մյուսից հերոսական ու հիասքանչ, տեղի կունենա արշավանքների մի ամբողջ շարք՝ մեկը մյուսից հանդուգն ու փառավոր, օրեց օր կխորանա պայքարը, լեռների վրա կբազմանան հեղափոխական խմբերը, անհավասար կռիվներում կդարբնվի լեգենդար ֆիդային, ազատամարտը կծնի հերոսներ, կհարստացնի մեր ցեղի հերոսական մարտիրոսությունը, նրա փառատաճարը: Ի լրումն այդ բոլորի մի օր բռնակալի որջում՝ Ստամբոլում կպայթի, կգոռա դժոխային մեքենան-Սուլթանասպանության փորձը-ծնունդ Քրիստափորի տի-տանական մտքի և զգացումի, մի հանդուգն մահափորձ, որի մասին եվրոպական «Ֆրանկֆուրտեր Ցայտունգ»ը կարծանագրեր. «Հայկական ուժանակը դղրդեցրեց ոչ միայն Պոլիսը, այլև ամբողջ աշխարհը»:

Հետևա՞նքը:

Կրավորական նահատակության փոխարեն-նշան մեր երեկվա թուլության-պատճառը օտարների դեպի մեզ ստացած սպանիչ արգահատանքի-մեր ժողովրդի վերջին տարիների հերոսականը արժեքը անկախ հայրենիք ունենալու իրավունքի:

Քրիստափորը վառելով մեր ժողովրդի հոգու մեջ ինքնահարգանքի զգացումը, կդարձնի նրան արժանի մարդկության հարգանքին:

Մարդկության պատմությունը այլ բան չէ, քան պատ-մությունը ազգերի արժանապատվության համար մղված պայքարի: Շնորհված արժեքների և արժանապատվության փոխարեն, ինքնանվաճ ազգային արժանապատվություն ու ինքնաստեղծ արժեքներ: Այն ինչ որ այսօր ունենք, այն ինչ որ մեզ տվել է քաղաքական կշիռ, այն ինչ որ շատ բան

է ավելացրել մեր ազատության արժանի համարվելու իրա-վունքին, թե մոռացված, թե շնորհված՝ դա ձեռք է բերված երկարատև և հերոսական պայքարով:

Քրիստափորի շնորհիվ քաղաքական մուրացիկը կդառնա մարտիկ:

Գաղթականությունները կամ կկորչեն, կամ կհար-մարվեն օտար միջավայրին: Հայը բնավեր՝ չի կորցնի իր ազգային դիմագիծը, նա չի ապազգայնանա, որովհետև մեծ հայի շնորհիվ իր հոգու մեջ և իր շուրջը կկրի հոգևոր հայրենիքը, որովհետև օտար միջավայրերում հոգեպես կապրի իր հայրենիքում:

Մեր վերջին վեց տարվա պատմությունը-տխուր նկարագրությունը մեզ հետ կատարվածի, Քրիստափորի օրոք և նրանից հետո կդառնա պատմությունը այն բանի, ինչ որ մենք կկատարենք մեր թշնամիների հետ: Քրիստափորը կփրկի հայ պատմության արժանապատվությունը:

Սեղմ ասած՝ շնորհիվ Քրիստափորի օտար լծերի տակ ստրկորեն հոգևարող հոգևոր հոտի փոխարեն այսօր կա անկախ և ստեղծագործ քաղաքական ժողովուրդը և հավիտենական արժեքներից՝ Մայիս 28ը: Այսօր քսաներորդ դարաշեմքում կանգնած հայությունը նախահեղափոխական շրջանի ստրուկների և առևտրական միջնորդների արհամարհված հոտը չէ, որին աշխարհը կզլանար անկախության իրավունքը, այլ մարդկության գնահատանքին արժանացած քաղաքական մի ժողովուրդ՝ վիրավոր, բայց ազատ հայրենիքն ունենալու իրավունքը ձեռքին: Մի ժողովուրդ, որ Քրիստափորի թողած անմեռ արժեքների գիտակցությամբ և պաշտամունքով կշարունակի գոռալ մարդկության երեսին. «Ոչ ոքի ի վնաս, իմ և մարդկության երջանկության համար անկախ ապրել եմ ուզում»:

Փառք հայ ժողովրդի հոգեբանությունը, ճակատագիրը և պատմությունը վերաստեղծող մեծ Քրիստափորին:
Թող ապրեն նրա թողած արժեքները:

«Հայաստան», Պլովդիվ, 1924, թիվ 29:

ԱՆԱՐԻՈՒԹՅՈՒՆԸ - ՄԱՅՐ ՉԱՐՅԱՑ

(Խորհրդածություններ Վարդանանց տոնի առթիվ)

Ներքին թշնամին:

Հին է սրա պատմությունը: Նա երեկ չի ծնվել և վաղը չպիտի մեռնի: Խոսել սրա մասին՝ կնշանակի պատմել մեր ցեղի պատմության ամենա - տխուր էջերը:

Դա զինակիցն է ու եղբայրը արտաքին թշնամու, որի մասին հայոց պատմությունն ասում է զայրույթով՝ «Շապուհի զորքերը կառաջնորդեին հայանուն դավաճանները՝ ծանոթ Հայաստանի դիրքերին ու դրության»:

Ազգադավն է նա, որի սև գործերի մասին խոսելիս վաղվա պատմիչը զզվանքով պիտի գրի՝ «Տաճիկ զորքերին դեպի Հայաստան կառաջնորդեին հայանուն կարմիրները»:

Երեկ նա չէր ճանաչում ազգային անկախ պետություն, այսօր ներքին թշնամին կաշվից դուրս է գալիս արդարացնելու և ամրացնելու օտար իշխանությունը Հայաստանում:

Օտարի լուծը ժամանակին նա արդարացրել է Պարսկահայաստանում, Տաճկահայաստանում, Ռուսահայաստա-նում, և վաղը, եթե իրերի բերումով թաթարները մտան մեր երկիրը, և վաղը, եթե մեր երկրում ապրող մի բուռ եզիդներն իսկ արիություն ունեցան հայությանը պարտադրելու իրենց գերիշխանությունը - ներքին թշնամին անարի հայը, ծափ կզարկի և սրանց:

Միայն ազգային իշխանություն չի ճանաչում դա:

Վաղը նա չպիտի ճանաչի և երրորդ Հայաստանը, եթե այնտեղ հեղափոխականների փոխարեն իշխեն հայ-կաթոլիկները՝ ամենից չեզոքները:

Այս է, այսպիսին է մեր ներքին թշնամին, որը այնքան սև դարեր և օրեր է ապրեցրել հայության, որը քանիցս ու քանիցս ներսից է պայթեցրել մեր բերդերը և հեշտացրել օտարների մուտքն ու իշխանությունը Հայաստանում:

* * *

Վատերը կարճահուշ են լինում:

Մենք գիտենք, սակայն, թե ի՞նչպես պատժվեց Ե. դարի հայի վատությունը: Քաղաքական հեռատեսության դիմակի տակ գործող Վասակի դավաճանությունը չմնաց անպատիժ, իսկ Ավարայրի խնկելի «արկածախնդիրը» հայ ժողովրդի կողմից հռչակվեց սուրբ:

Նույն ձևով պատժվեցին և Դավիթ բեկի հակառակորդները ԺԸ. դարում:

Ավելի խստագույնս պիտի պատժվեն հայոց պատմության կողմից մեր օրերի ներքին թշնամիները:

Պատմությո՜ւնը... Ա՜հ, դատավորների այդ մեծ և անմահ դատավորը, որին չի հաջողվել լռության դատապարտել և ոչ մի ուժի, չպիտի կարողանա կաշառել և կարմիրների արծաթը: Պատմության դատաստա՜նը - ահա սև օրերը վատերի:

Այդ օրը նա պիտի թքի վատ մեռելների գերեզմանին և կենդանի վատերի ճակտին անփառունակ:

* * *

Սակայն, իրենից ի՞նչ է ներկայացնում ներքին թշնամին՝ հոգեբանորեն: Ո՞վ և ի՞նչ է դա որպես հոգեբանական նկարագիր: - Անարին է դա:

Դա կենդանի համադրությունն է հին փառասեր հայի և դարերի ընթացքում օտար լծերի տակ տկարացած, անարիացած հայի:

Անարին է դա, որի մեջ դեռ ապրում է Տիգրան Մեծի շրջանի հայ մարդու փառասիրության մի մասը:

Անարին է դա, որի մեջ անթեղված մնում է դեռ Արշակունիների շրջանի հայ մարդու փառասիրության մի մասը. - Արշակունիները, որոնց օրոք հայկական զինանշանը կխորհրդանշեր Արծիվը՝ թևաբաց՝ աշխարհակալ:

Անարին է դա, Տիգրան Մեծի և Արշակունիների աշխարհակալ հայության փառասիրությամբ օժտված, բայց դարերի ստրկության մեջ իր արիությունը կորցրած հայն է ներքին թշնամին:

Կա՛, սրա մեջ կա փառասիրություն, բայց պակասում է արիությունը: Իսկ նման արարածը և՛ դժբախտ է, և՛ վտանգավոր: Սրան պետք է բավարարել իր փառասիրությունը, բայց ավա՜ղ, արիության պակասի շնորհիվ սա անընդունակ է զոհաբերություն պահանջու մեծ, բարի և առաքինի գործերի: Նա կուզեր երկնքի աստղերը վար բերել, արծվի թևերից փետուր խլել. նա կուզեր իր անվան շռինդով առնվազն հայոց աշխարհը լցնել... Նա փառասեր է և... այսքանը:

Փառասեր, բայց և ոչ արի: Իսկ նմանը և՛ դժբախտ է, և՛ դժբախտացնող. իսկ նմանը չար ուժ է, չարագործ, հրեշ:

* * *

Անարի փառասերն իր հետքերն է թողել և համաշխարհային պատմության մեջ: Նախանձի որդը հանգիստ չէր տա Հերոստրատին: Նա կուզեր անմահանալ, հավերժանալ, բայց կպակասեր արիությունը: Եվ ահա՛ մի գիշեր նա ուզեց անմահանալ: Եվ մթության մեջ կատարեց իր մութ գործը. նա հրդեհեց, կրակի մատնեց հին աշխարհի ամենամեծ տաճարը և իր անունը կապեց պատմության, անմահացավ... որպես չարագործ:

* * *

Մեր ներքին թշնամին.

Հայ Հերոստրատն է դա, որն իր սև գործերով մեր դարերի պատմությունն է սևացրել: Եվ որքան շա՜տ են նրանք, - փոքրիկ Հերոստրատները: Հիվանդոտ փառասիրությամբ, բայց զուրկ արիությունից: Նրանք, բոլոր տեսակի Հերոստրատները գործի վրա են այսօր: Նրանք գործում են և անմահանում ... Հերոստրատաբար, չարագործաբար:

Նրանք այսօր հայ ցեղի սրբությունների ամոթալի աճուրդն են կազմակերպել: Սրբության առևտուր: Ծախու են հանված Մայիսի քսանութը, Եռագույնը, Հայկական անցագիրը: Դավել են և դավում են վատերը հայ ցեղի գոյության և այդ գոյությունն արդարացնող սրբությունների դեմ:

Արիության պակասը, անարիությունը - ահա՛ վատ հայերի և նրանց վատությունների մայր պատճառը:

Քանի դեռ հայ մարդու փառասիրության չի միանում վտանգն ու մահը անգիտացող արիությունը, քանի դեռ կա անարի հայը - կլինի ներքին թշնամին. իսկ քանի դեռ կա այդ հրեշը - քաղաքական ավելի բարվոք վիճակը երազ պիտի մնա մեզ համար:

Անարիություն - ահա՛ վատ հայի գոյության պատճառը:

Վատ հայը - ահա՛ հայ ժողովրդի դարերի և այսօրվա դժբախտության գլխավոր պատճառը:

* * *

Եթե անարիությունը մայրը բոլոր չարագործների և չարյաց՝ եթե անարիությունն է երբեմնի հոգով արծիվ մեր ժողովուրդը դարձրել Գառն Աստծու - դարերի անմեղ որսը Արևելքի գայլ ցեղերի համար, արիությունն է, որ պիտի փրկի հայությունը:

Արիություն - հետ այսու սա՛ պիտի լինի հայ մարդու կոչումը:

Վահագնի հետ պիտի խոսի հայ մարդը հիմա - Աստվածը հին հայոց, Աստվածը Արիության և Հաղթանակի:

Փտած, եղծանված են հին մագաղաթները:

Նոր ավետարանի խոսքը պիտի լսի հայությունը:

Ցեղորեն անկախ ապրելու և ստեղծագործելու և ոչ ժամանակավոր կյանք մուրալու համար հայ ժողովրդի հա-վաքական հոգու մեջ հրամայողաբար հարություն պիտի առնի պաշտամունքը մեր հին և հզոր Աստծու: Վահագնի համար տաճարներ պիտի բարձրանան Արարատյան դաշտում, Սյունիքում, Արցախում, մեր գաղութներում, ամեն տեղ, ուր կապրի հայը՝ ամեն մի հոգու մեջ, քանզի արիությունն է եղել հավիտենական պարտականությունը այն ազգերի, որոնք չեն ուզում մեռնել:

- Արիացի՛ր, արիացրո՛ւ՝ սա պիտի լինի մեր օրվա նշանաբանը: Վահագն-Աստված, արիապաշտությունը - նոր կրոն, հայ մարդն - արի՛, եթե չենք ուզում մեր տեղն արևի տակ մի օր զիջել մեզնից արիներին:

«Արաքս»,Սոֆիա, 1926 թ., 11 փետրվար:

ՕՐԵՐԻ ՕՐԸ

Նախնի իմաստասերներից Թալեսը սովորություն ուներ ամեն տարի «շնորհ» մատուցել Աստծուն, քանզի նախ՝ ծնվել է բանավոր և ոչ անբան, երկրորդ՝ որ ծնվել է հույն և ոչ բարբարոս»: Մենք Թալեսաբար նույնը կատարենք ամեն օր, նախ որ մեր երջանիկ սերունդի օրով տեղի ունեցավ Մայիսի 28-ի պատմական ակտը - հայ ժողովրդի քաղաքական հարությունը և ապա, որ մենք պատկանում ենք հայության այն արի և անձնուրաց մասին, որի գերմարդկային ճիգերի շնորհիվ միայն դարերի ստրկության ճահճից այնքան դյուցազնորեն բարձրացավ մեր Ազգը և արժանաբար տեղ գրավեց օրվա պետությունների կողքին:

Բարոյական կորովի և ողբերգության աղբյուրներով այնքան հարուստ եվրոպական ժողովուրդներից մեկը ամեն տարի ծունկի է գալիս իր անկախության և փառքի ճանապարհին ընկածների հողաթմբի առաջ և խորհրդածում: Ամեն տարի նա հավաքում է հայրենի և օտար դաշտերում ընկած իր որդիների նշխարները և իրեն հատուկ վեհությամբ թաղում իր հավաքական սրտի և գիտակցության մեջ:

Մի ուրիշն այդ ժողովուրդներից իր ճերմակ մարմարիոնն ունի, որով ճգնում է գեղեցկացնել մահը իր որդիների համար:

Երրորդն ունի իր ամենամյա երկվայրկյանի դադարը, երբ բևեռից բևեռ տարածված իր պետության և գաղութների մեջ կանգ կառնի կյանքը, երբ ազգեր և ազինք մտքով ծնրադրում են ու խոկում են մի նվիրական հողաթմբի առջև: Որքան վեհ, այնքան իմաստուն արարք:

Ժողովուրդները ծնրադրում են, որովհետև խորապես գիտակցում են, որ եթե չընդունեն, թե կա մի բան բա՛ծր իրենցից, բարձր իրենց առօրյա շահերից և ապրումներից - իրենց մեջ ուժ չեն գտնի բարձրանալու մինչև գերագույն ըմբռնումն ու զգայնությունը - կարողություններ, որոնք հարյուրապատկում են ժողովուրդների բարոյական կորովը:

Ծնրադրում են ժողովուրդները՝ շեշտելով իրենց կուլտուրականության հետ և իրենց պաշտամունքը դեպի իրենց մեծության ու երջանկության համար ընկածները:

Իսկ կխորհրդածեն, կխոկան նորանոր ճշմարտությունների մասին, որոնցով զինված՝ նրանք կդառնան ու կմնան մեծ և անպարտ: Ուժ է ճշմարտությունը: Չկա ուժ առանց ճշմարտության: Չկա փրկություն առանց ուժի: Ճշմարտություններ... որոնցով այնքան ուժեղ են եվրոպական ժողովուրդները: Գերագույն ուժեր, որոնցով այնքան աղքատ է մեր կյանքը: Այդ ուժ ճշմարտությունները և՛ կան, և՛ չկան

մեզանում: Չկան՝ ասենք - և ճիշտ է, որ չկան - այլապես՝ այն չպիտի լինեինք ազգովին, ինչ որ ենք այսօր:

Չկա՛ն, և դրա համար էլ ուղեկորույսները, դարձընթաց եղածներն ու բարոյալքվածներն այնքան շատ են մեր իրականության մեջ:

«Ճշմարտությունները պիտի սովորել,- ասել է Արևելքի իմաստուններից մեկը,- եթե նրանք գրված են անգամ պատերի վրա»:

Սովորե՛նք և գործադրենք որոշ փրկարար ճշմարտություններ: Վերապրեցնենք մեր ցեղի հոգու մեջ այդ գերագույն ուժերը՝ որպես ազգ չկորչելու համար:

Մեր նկատմամբ մեղավոր է և մարդկությունը, բայց անմեղ չենք և մենք: Մերն է մեղքի մեծ բաժինը, քանզի մեր ձեռքին է բանալին այն բո-լոր դրությունների, որոնց մեջ կուզեինք և կարող ենք լինել, քանզի մենք ենք մեր քաղաքական բախտի ճարտարապետը:

Օտա՞րն է մեղավոր, որ մեզանում դեռ այնքան մեծ է թիվն այն հայ անհատների, ընտանիքների և խմբակցության, որոնց համար Մայիս 28-ը դեռ շարունակում է մնալ որպես մի *«բացակայող Աստվածություն»*:

Ո՞վ է ստիպում մեզ՝ չլինել հայրենապաշտ: Ո՞վ կարող է խլել մեզնից անկախ հայրենիքի սրբազան գաղափարը: Ո՞վ կարող է ինքնանվաստացումի զոհ դարձնել մեզ, երբ գիտենք, թե գիտակցական ստրուկի և հանցագործի մեջ չկա տարբերություն, երբ զգում ենք, թե երկարատև ու ծանր հոգևարք է անհայրենիք գոյությունը:

Ո՞վ կարող է պահանջել, որ հայը՝ որ կգբաղվի վաճառականությամբ, հայը՝ որ կուսանի, հայը՝ որպես բանվոր, հայը՝ որ կմշակի հողը, հայը՝ որ կուսուցանի, հայը՝ որ զենք կկրի - ո՞վ կարող է ստիպել, որ այդ բոլորը չլինեն ավելին, քան այն, ինչ որ են:

Ո՞վ և ի՞նչը կարող է այդ բոլորին զրկել և՛ հպարտ, և՛ արի, և հայրենանվեր լինելու ազատությունից:

Մեր հոգուց դուրս կա՞ մի չար ուժ, որը կարողանար մեզ թուլության դատապարտել, երբ խորապես գիտակցել ենք, թե թուլությունը անբարոյականություն է և մահ:

Ո՞վ և ի՞նչը, վերջապես, կարող է արգելել բոլորին և ամեն մեկին՝ իրենց կյանքի գերագույն հարցը դարձնելու, որ բոլորն ու ամեն մեկը հաճախ և հաճախ հարց տան իրենց, թե «Ի՞նչ ձևով կարող եմ էլ ավելի օգտակար լինել Հայրենիքիս»:

Կա՞, մեզնից դուրս գոյություն ունի՞ այդ սև ուժը՝ թշնամի միայն մեր ցեղին և նրա բախտին:

- Չկա՛ մեզնից դուրս, կա՛ մեր հոգու մեջ:

* * *

Արդյոք օտա՞րն է մեղավոր, որ դեռ ամեն հայի մոր կաթը Հայաստանի անկախության գաղափարի սրբազան կաթը չէ, որ բարձր հայրենասիրության կրակն ու լույսը չեն թափանցել մեր ժողովրդի բոլոր խավերի մեջ: Օտա՞րն է մեղավոր, երբ թրքական յաթաղանից հալածական հայության մի մասը ազատ երկրներում իսկ կշարունակի գործածել Հայաստանը գերեզմանատան վերածող շնական ժողովրդի լեզուն՝ զարմացնելով և զայրացնելով ոչ-իսլամ մարդկությունը մեր վրա: Օտա՞րն է մեղավոր, որ դեռ կան հայեր - ահա՛, և որքան շատ են սրանք - որոնց կողմից անվերջ գողգոթաների և փառքերի տեր հնագույն ժողովրդի անդամ լինելը դեռ չի գիտակցվում որպես գերագույն երջանկություն: Եվ ո՛չ մի օրենք, անգա՛մ կանոն՝ պարտադիր բոլորի, բոլորի՝ համար. կան կար-ծիքներ միայն՝ իրերամերժ, խակ, խուժական: Օտա՞րն է մեղավոր մեր կյանքում տիրող մտաբարոյական անիշխանութեան համար: Էսնաֆական և եսապաշտ տրամադրություններ և գորշ ամենօրեություն. Օտա՞րն է մեղավոր այդ բոլորի համար: Ո՛չ, ո՛չ, օտարի իշխանությունից վեր է խլելու մեզնից այն՝ ինչ որ ունենք, և տալու այն ինչի որ կարոտ ենք: Թողնենք օտարներին մեղադրելու թույլերին հատուկ ցավը, որպեսզի կարողանանք տեսնել մեր թերությունները, որ ամաչենք մեզնից և սկսենք զբաղվել ինքնաուղղումով:

Օտարները նյութել են մեր գոյության և բախտի դեմ և պիտի շարունակեն չարիք նյութել, որովհետև թույլ ենք: Մարդկության վերաբերմունքը դեպի մեզ կփոխվի, *երբ հոգեփոխվեց մեր ժողովուրդը, երբ մի անգամ ընդմիշտ հասկացանք, թե ազգերի դժբախտության գլխավոր պատճառը իրենց շրջապատող ժողովուրդների մեջ չէ, այլ՝ իրենց թույլի հոգեբանության, երբ հոգևոր ստրկության ճահճից բարձրանալու ճիգեր կփորձեն մեր ժողովուրդի այն տկար ու անհայրենապաշտ տարրերը, որոնց կողմից դեռ անտես առնված քաղաքական մի սրբություն կա - Մայիսի քսանութը :*

* * *

Ժողովուրդների ճակատագիրը, վերջ ի վերջո, բնորոշվում է նրանց մեջ ապրող գաղափարներով, որոնք միացնում են մեծամասնությունն այդ ժողովուրդների:

Կբարձրանան ու կընկնեն, կհաղթեն ու կպարտվեն, կապրեն ու կմեռնեն նրանք՝ իրենց մեջ գերիշխող գաղափարների համեմատ:

Կբարձրանան, կհաղթեն ու կապրեն ժողովուրդները, երբ նրանց մեջ տիրաբար կիշխի բացարձակ անկախության ոգին, բայց ազգասիրությունը, երբ անհատը, խմբակցությունը, դասակարգը Հայրենիքի և ընդհանրության շահը կգերադասի անձնականից, երբ մեծամասնությունն իրեն ավելի պարտականության տեր կզգա, քան

իրավունքների, և երբ այդ մեծամասնության մեջ կզգացվի անձնավստահությունն և անշեջ հավատը դեպի իր ապագան:

Ընդհակառակը՝ կընկնեն, կպարտվեն, կմեռնեն ժողովուրդները, երբ կթունավորվեն անասնացող նյութապաշտությամբ, երբ նրանց մեծամասնությունը իր Աստվածը կդարձնի անձնական կաշին, երբ կժխտի այլասիրական ամեն տեսակի պարտականություն և վախով ու անվստահությամբ կնայի իր ապագային:

Կբարձրանան, կփարթամանան, կհզորանան ժողովուրդները, երբ նրանց մեջ ապրող անկախության ու մեծության իդեալը կլուսավորի ու կջերմացնի իրենց անցնելիք պատմական ճամբան:

Հոգեվարել կսկսեն նրանք, երբ նրանց մեջ դժգունել կսկսի այդ իդեալը, որի մահը կդառնա առնվազն ժողովուրդների հոգևոր մահը:

Չկա՞ ազգային իդեալ - չկա՛ ծգտում, չկա՛ ստեղծագործություն, չկա՛ հաղթանակ, ապագա չկա՛:

Թուլություն, անփառունակություն և մահ ասել է անիդեալ գոյությունը:

Իդեալ... աստվածային ուժ, որ կհաղթահարի մարդկային ազգի երջանկության բոլոր թշնամիները - վախը, կասկածը, որ կենթարկի, կհպատակեցնի, կստրկացնի բոլոր տեսակի պայմանները, դրությունները, ուժերը և կլծի սրանց իր հաղթական կառքին:

Իդեա~լ... աստվածային անսխալ ու ամենակարող առաջնորդ, որն իրեն փարող ժողովուրդներին կառաջնորդի, կմղի առաջ և առաջ, դեպի այն խորհրդավոր ու երջանիկ հեռուն, ուր ծգտողները կտոնեն իրականացումն իրենց երազների, ուր ժողովուրդները կնույնանան իրենց իդեալի հետ:

Այսպես, ժողովուրդները նախ կընկնեն հոգեբանորեն, ինչպես և քաղաքականապես բարձրանալու համար՝ նախ կբարձրանան հոգեբանորեն:

Ահա՛ թե ինչո՛ւ Մայիսի քսանութը պիտի մնա տիրականորեն միակ քաղաքական աստվածությունը, որին փարված հայությունը պիտի կարողանա ապրել և ստեղծագործել ազգորեն:

«Արաքս», 1926թ., թիվ 99:

ՏԱՐԱԾՎՈՂ ԱՆԻՆ

«Եկա, տեսա, ողբացի»

Նորից խաչե՞ր ու խաչե՞ր մեր հեգ Հայրենիքում: Խաչեր գերեզմանացած ու ավերակ գյուղ ու քաղաքի վրա: Նորից երկրի հայությունը՝ բախտից նետահար, ոճիրի ու սուգի մեջ: Ստորերկրյա կույր ուժերից զարնված ժողովուրդ - որ հազար մեռել, ավելի վիրավոր

և շա՛տ ավելի աղետյալներ ունի - նորից հազարավոր որբեր կհանձնի օտարների խնամքին:

Տարերքների կույր բռնությունից հալածական և վերահաս ձմռան դաժանությունից սարսափահար՝ հարյուր հազար հայեր իրենց հայացքն ակամայից դարձնում են դեպի հայ գաղութները:

Օգնության են կանչում, օգնություն են սպասում, օգնություն՝ շուտափույթ, սրտաբուխ և լիաբուռն:

Ուշացա՞նք մենք - օգնության կփութա մահը:

Նվա՞զ եղավ մերը - առատածեռն պիտի լինի մահվան օգնությունը:

Ո՞վ է սակայն այն Աստծու արարածը, որ և՛ հայ կկոչվի, և՛ կմնա անտարբեր, անկարեկիր տարրերի պատերազմում սրտից զարնված Հայաստանի նկատմամբ:

Ո՞վ է այն հայ և մարդ կոչվելու անարժանը, որ կարող է և օգնության ձեռք չերկարել իր ճակատագրի հետ կռվի բռնված մեր ժողովրդին:

Ո՞վ է այն ստրուկ չհայը, որը հեթանոսաբար կողբերգի. կսգա միայն առանց իրովսանն մեղմելու մեր Հայրենիքի նորագոյն սուգը:

Ո՞վ է... բայց ինչո՞ւ եմ հարցնում, մի՞թե դեռ կան, մի՞թե դեռ կարող են լինել նմանները:

Ի՛նչ, սո՞ւտ է ուրեմն հին խոսքն այն մասին, թե տառապանքը կազնվացնի ցեղերի և անհատների հոգին:

Կե՞ղծ է ուրեմն այն հին կարծիքը, թե տառապանքը վսեմ և իմաստուն խորհուրդներով կլցնի հոգիները: Ո՛չ, ո՛չ, սուտ չէ, կեղծ չէ տառապանքի ազնվացուցիչ հատկությունը մարդու և մարդկային ազգի համար: Կա՛մ մարդ ենք՝ ընդունակ տառապելու և ազնվանալու, կամ ան-ասուն: Ո՞վ կուզեր վերջինը լինել: Ո՞վ ընդունակ չէ գոնե հոգեպես չար-չարակցելու իր հարազատ ժողովրդին, որի վսեմական Գողգոթայի վրա այսօր չարախնդում են իր գայլ հարևաններից թուրքն ու թաթարը:

Չէ՛, չկա և չպիտի լինի հայազգի մեկը, որ խղճի խայթ չզգար իր տաքուկ սենյակը մտնելիս կամ առատ սեղանին մոտենալիս, քանի դեռ հազարներն ու հազարները մերկ ու հացի կարոտ շարունակում են նստած մնալ Նոր Անիի ցրտաշունչ փլատակների տակ:

Չէ՛, չկա և էլ չպիտի լինի անսիրտը, անմարդասերը, անհայրենասերը մեզանում, երբ ճակատագիրը, գուցե և վերջին անգամ, փորձում է մեզ - հայն արժանի՞ է և ի վիճակի՞ անկախ հայրենիք ունենալու, թե՞ ոչ:

Արդյո՞ք պիտի կարողանա՞նք ապացուցել աշխարհին, թե ինքնօգնության, ստեղծագործության և ինքնահարգանքի զորեղ զգացումներով զինված ազգ ենք՝ արժանի և կարող անկախության: - Այդ եթե

տարածվող Անին սանձահարելու, եթե մեր երկրի ավերածությունը դարմանելու, եթե ավերակներին նոր շունչ փչելու՝ կյանք տալու համար - եթե ազգովին հասկացանք, թե օտար միջոցներից բարոյապես ազատ ենք օգտվելու միայն այն դեպքում, երբ արդեն սպառել ենք մեր սեփական բովանդակ կարողությունները, և ապա եթե ազգովին լծվեցինք օգնության գործին: Չվարվեցի՞նք այս ձևով - ապացուցած պիտի լինենք, որ արժանի չենք ո՛չ թե պետական կյանքի, այլև մեր գոյությունը քարշ տալու որպես ժողովուրդ:

* * *

Սպեղանի էր սպասում երկիրը մեր - նոր վերքեր ստացավ: Ներգաղթ էինք երազում - երկրաշարժի բերումով արտագաղթի վտանգը կա այսօր:

Գաղթ, պանդխտություն. ա՜հ, սոսկում եմ այդ բառերից, երբ թերթում եմ մեր գաղթականության տխուր պատմությունը: Ո՞ւր են ժամանակին Մոլդավիա, Վալախիա, Լեհաստան և այլուր գաղթած բազմահազար հայերը:

Նրանք - գիտենք այդ - նրանք հեծությամբ էին բաժանվել հայրենի հորիզոններից, տանելով իրենց հետ և՛ եկեղեցական սպասքներ, և՛ գրչագիր մատյաններ, և՛ հիշատակներ: Թողնելով հայրենի հողը՝ նրանք ուխտել էին չօտարանալ, չկորչել որպես հայ, բայց «կարելի՞ է գետով դեպի ծով թափվելը տեսնել և տարակուսել նրան խառնվելու կորչելու վրա»:

Գետերը՝ որքան էլ որ մեծ լինեն, թափվելով ծովերը՝ կորչում են:

Նույնն է հայ գաղթականությունը այն ժողովուրդների նկատմամբ, որոնց հետ խառնվում է այսօր:

Ահա՛ թե ինչո՛ւ պիտի արգելել մի հատիկ իսկ հայի գաղթը երկրից. իսկ այդ անելու համար չբավականանանք միայն կրկնելով օտար այցելուի սրտացավ երեք բառերը՝ գրված Անիի տաճարներից մեկի կիսակործան պատի վրա - «Եկա, տեսա, ողբացի»: Իսկ բնական աղետի մեր զոհերի ձեռքը պանդուխտի ցուպը չտալու համար տանք այն ամենը, որով կարողանար վերաշինել իր ավեր երկիրը, որ վերապրել կարողանար:

Չողբանք միայն, այլ՝ անհրաժեշտ զոհաբերությամբ վե՛րջ տանք ողբերին մեր Հայրենիքի մեջ:

Չե՞ս կասկածում դու տարաշխարհիկ հայություն, չե՞ս կասկածում, որ քո որոշ տարրերը դեռ չեն հասկացել, թե գաղութներում որպես հայ ապրելու, չձուլվելու համար պետք է նախ երկրի հայությունն ապրեցնել:

Վստա՞հ ես, արդյոք, թե դժբախտություն չպիտի ունենաս վաղը քո շարքերում տեսնելով հայեր՝ չկատարված պարտականության կնիքը ճակատներին: Չե՞ս կասկածում - երանի՞ քեզ, քանզի միայն այսպիսով դու իրավունք պիտի ունենաս պահանջելու, որ աղետյալ եղբայրներդ շարունակեն կառչած մնալ հայրենի հողին:

Այո, դու չպիտի լքես երկիրդ, ժամանակավորապես դժբախտացած եղբայր, քանզի Հայաստանից դուրս ամենուրեք անիմաստ մահը, անհայտ գերեզմանն է սպասում հայ գաղթականին:

Ես ճանաչում եմ քեզ. դու չես գաղթի, երկաթե՛ ժողովուրդ, որին աստվածային տեսչությամբ - վկա քո պատմությունը - տրված է առասպելական փյունիկի՝ իր աճյունից վերածնվելու կարողությունը. դո՛ւ, անմահ ժողովուրդ, որի վրայով Արևելքի բարբարոս հորդաներն են եկել ու անցել, բայց և այնպես դու կաս ու կմնաս, դո՛ւ, քրտինքի հերոս ժողովուրդ, որի ստեղծագործ ձեռքը անդամալուծել դժվարացան անգամ Լենկթեմուրները՝ մեծ ու փոքր - դու պիտի վերաշինես ու շենացնես քո երկիրը:

Ես ճանաչում եմ քեզ՝ չար բախտի հետ պայքարի մտած անընկճելի ժողովուրդ, խորապես հավատում քո մեծ ու երջանիկ ապագային և... կարոտով ու երկյուղածորեն համբուրում աշխատանքի մեջ կոշտացած ու սրբացած քո ձեռքը, քո հայրենաշեն ձեռքը:

«Արաքս», Սոֆիա, 1926, թիվ 233:

ԿՅԱՆՔԻ ՕՐԵՆՔԸ

Ա

Մեր դարին, մասնավորապես մեր օրերին, ոչինչ այնքան չի տկարացնում ազգերի պայքարունակության ոգին, որքան այն աղետալի հույսը, թե իրենց ճակատագիրը բարվոքողը սեփական ճիգերը չեն, այլ՝ ինչ որ արտաքին ուժեր:

Ճիշտ է, որ մարդկային ցեղը շատ ուշ սկսեց իմաստասիրել, թե պայքարն է կյանքի օրենքը, պայքարը որպես միջոց անհատի և ցեղերի ինքնակատարելագործության: Նա ուշ ըմբռնեց, թե ապրել, ասել է՝ առաջադիմել պայքարի ճամբով, բայց իրապես նրա կյանքը եղել է անվերջ նպատակադրություն և ձգտում, իր մոտավոր կամ հեռակա նպատակներին հասնելու համար:

Նա - անհատ թե հավաքական մարդը - իր գոյության ընթացքում չի ապրել մի վիճակ, որի մեջ իրեն դժգոհ չզգար և ավելի լավը:

Բավական չէ միայն նպատակադրել. պետք է նաև իմաստությամբ ընտրել կարողանանք դեպի նպատակը տանող ճամբան:

Վասնզի որքան բնական ու ճիշտ է այս կամ այն նպատակի ընտրությունը, այնքան դժվար է այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ միջոցների անսխալ ընտրությունը: Առաջին դեպքում, անհատը թե հավաքականությունը թելադրվում է իր կարիքներից՝ ունենալու ավելին, քան ունի, լինելու ավելին, քան է:

Երկրորդ դեպքում՝ նպատակադրողը պետք է առաջնորդվի իմաստությամբ - քաղաքական թե կենցաղական - եթե չի ուզում իր բովանդակ կյանքը սպառել անվերջ թափառումների ու պրպտումների, փորձերի և փորձանքների մեջ:

Ժողովուրդներ ու անհատներ կան, որոնք Մետերլինգի Կույրերի պես, մոլորված տգիտության անտառում, կշարունակեն խարխափել մթության և անստուգության մեջ, բազում ճամբաների վրա:

Մոլորանք ու խարխափում - ահա՛ թե ե՞րբ է ծնունդ առնում տառապանքը և հսկայական սև թռչունի պես իր ցուրտ թևերը տարածում իրենց նպատակի ճամբին մոլորված, ճամբից դուրս ընկածների հոգու վրա: Չեմ ուզում ասել, թե տառապանքը հետևանք է ամեն տեսակ պայքարի, որ ենթադրում է նպատակը: Երբե՛ք: Հաջող պայքարի դեպքում՝ մարդկային հոգեկան ուժերը աճում են հաղթահարվելիք դժվարության համեմատությամբ: Անսխալ պայքարի ընթացքում մարտնչողի հոգին լցվում է հաղթական ուրախությամբ՝ զորեղացնելով աշխարհի հետ կռվի բռնվածի թևն ու թափը:

Տառապանքը - հուսո և ներքին ուրախության չգոյությունը - հետևանքն է ընդունայն, անիմաստ պայքարի, պայքար, որի վախճանը չի տեսնվում, որի հաջող ելքին այլևս չի հավատում պայքարողը, զուր պայքար, որի ընթացքում գլուխ է բարձրացնում հուսահատությունը և հարվածում մարտնչողի ոգին: Այո՛, անհուսությունը ծնում, իսկ տկարությունը դիեցնում է, սնուցանում տառապանքը: Ասել է՝ տառապանքը հետևանք է ո՛չ թե նպատակադրության, նպատակի, որքան էլ մեծ և հեռավոր լինի դա, այլ՝ նպատակի համար ընտրված սխալ ճանապարհի:

Ի՞նչն է, սակայն, աղետալի սխալների մատնում անհատին և ժողովուրդներին իրենց նպատակներն իրականացնելու միջոցների ընտրության գործում:

Ըստ իս՝ մարդկային անիմաստությունն է:

Ժողովուրդները տառապել են և տառապում են իրենց առաջնորդ տարրերի անիմաստությունից: Իսկ իմաստուն չեն, ասել է՝ անզոր են և դժբախտ այն բոլոր ժողովուրդները, որոնց գաղափարախոսական և վարիչ առաջնորդությունը չգիտի, թե ի՞նչ է և ինչո՞ւմ է կայանում կյանքի օրենքը:

Դա, այդ օրենքը, արտահայտվում է այն անսկիզբ և անվախճան պայքարի մեջ, որին վկա են աշխարհն ու մարդը: Պայքար, որ արդիական բացատրությամբ կոչում ենք գոյության կռիվ:

Ապրելով՝ մարդկությունը անուղղակի կերպով նպաստում է իր թվական աճման, ինչպես և ցեղամիջյան մրցումին՝ գոյության կռիվը դարձնելով ավելի ներուժ և բորբոքուն: Այդ կռիվը ենթադրում է երկու անփոփոխ իրողություններ.

ա) Որ երկիրը սահմանափակ է, իսկ մարդկային ցեղը աճում է և աճում - մի պարագա, որը ստիպում է մարդկության՝ իր քանակը հարմարեցնել իր գոյության իրական միջոցներին:

բ) Որ բոլոր պարագաներում էլ, մտավորապես թե ֆիզիկապես զորավորները, ավելի ընդունակ հարմարվելու միջավայրին, զբաղեցնում են ավելի բարվոք դիրք, կացություն, չեզոքացնում տկարներին և թողնում ավելի կենսունակ սերունդներ:

Իսկ դա, այլ խոսքերով, ասել է՝ անողոք և անվերջանալի կռիվ ուժեղի և թույլի միջև, որը միշտ էլ պսակվում է ուժեղ հաղթանակով և թույլի ոչնչացմամբ: Եվ այդ՝ որպես բարեշրջության օրենք, և այդ՝ հանուն անհատի և ցեղերի զարգացման և կատարելագործության: Այդ է Դարվինի տեսության կմախքը:

Գոյության կռվի մասին կան և այլ տեսություններ, օրինակ՝ կրապոտկինյանը, ըստ որի՝ գոյության կռիվը մի փաստական համագործակցություն է: Ապրում են այն տարրերը միայն, որոնք զինակցում են միասնական աշխատանքի և պայքարի համար, իսկ առանձին մնացածները, թող որ ուժեղ, կորչում են: Ամեն ցեղ ճգնում է հարմարվելու իր շրջապատին՝ գոյության կռվում չկորչելու համար, իսկ դա ենթադրում է երկու բան - զինակցություն և բախում:

Ինչպես տեսնում եք, սա էլ Դարվինի պես շեշտում է գոյության, իմա ցեղամիջյան կռվի փաստը, որ պիտի շարունակվի, քանի դեռ մարդը մարդու, ինչպես և ազգը ազգի համար միջոց է և ոչ թե նպատակ: Կա և պիտի մնա ցեղամիջյան պայքարը: Ի՞նչ է սակայն, նրա նպատակը:

- Ժամանակի ընթացքում անկարելի դարձնել կռիվը մարդկային ցեղերի միջև, ինչպես անհատամիջյան կռիվը: Այո՛, պայքար և պատերազմ - և այդ՝ հանուն ցեղերի կատարելագործության, խաղաղության ու եղբայրության:

Առանց այդ պայքարին՝ չկա և չի կարող ստեղծվել ցեղերի և անհատների կատարելություն, վտանգի պայքարում կորչելու վախն է ստիպում անհատին և ցեղերին՝ զարգացնելու իրենց կարողությունները, կատարելագործվելու:

Ուր չկա պայքար՝ վտանգ չկա, իսկ ուր վտանգ չկա ու գոյության կռիվը ոչնչով չի զբաղեցնում մարդկանց, այնտեղ կա

տկարություն և անկատարելություն: «Ուր կան գայլեր, այնտեղ ոչխարներն ավելի նվազ տխմար են»: Բնությունը դիտմամբ է դրել պայքարի բնազդը անհատի և ցեղերի մեջ, որպեսզի կատարելագործության մղի նրանց: Մրցումը եբեմն վախի, երբեմն ամոթի, երբեմն մեր դիմացինին գերազանցելու ցանկության ձևերի տակ՝ խթանում է հետ չմնալ, կանգ չառնել, այլ՝ առաջադիմել անվերջ, իսկ դա նպաստում է մեր զարգացման և կատարելագործումին:

Մարդս կարող է և տկար լինել, բայց նա չի սիրում տկարությունը և հարվածում է նրան, երբ սա երևան է գալիս մարդու պատկերով:

Եղի՛ր այնպիսին, որ արհամարհելու փոխարեն քեզ հարգել կարողանամ - այսպես, այս իմաստով պիտի թարգմանել հարձակվողի հոգեբանությունը:

Ահա՛ մի շատ սովորական օրինակ:

Երբ որ երկու հոգի առաջին անգամ լինելով հանդիպում են կյանքում, նրանք մեծ ուշադրությամբ սկսում են դիտել ու զննել իրար: Ի՞նչ է նպատակը այդ փոխադարձ զննության: Ըստ դարվինիստների՝ դա արվում է իրար տկարությունները պարզելու և նրանցից օգտվելու նպատակով: Դիտված է, որ երբ մեկի մոտ տկարություն նկատվեց, դիտողը գիտակցորեն թե բնազդաբար օգտվում է նրանից, առնվազն բարոյապես վնասելով տկարին (առնվազն ծաղրելով տկարությունը): Սրան զուգահեռաբար, մարդկային կյանքում նկատում ենք մի այլ երևույթ: Ամեն անգամ, երբ որ մեկը մի ուրիշի մեջ գտնում է այն, որ կատարելանման է, անմիջապես դառնում է հարգալից դեպի դիմացինը, և ոչ թե ստրկականությունից մղված, այլ՝ հիացումից: Ընդհակառակը, տրամագծորեն տարբեր վերաբերմունք ենք ցույց տալիս թույլին: Սրա նկատմամբ, ամեն բանից առաջ մարդս զգում է արհամարանքախառն հուսախաբություն: Կուզեիր դիմացինիդ մեջ իդեալ հատկություններ գտնել, որ մղվեիր նմանվելու նրան, որ հոգեպես կաղապարվեիր նրանով, և, հանկարծ... տկարություն: Ահա՛ արհամարհանքի և հաճախ բնազդական թշնամանքի պատճառը:

Բ

Առաջին հայացքից անիմաստ է թվում նման վերաբերմունքը: Ինչո՞ւ է քննադատական մարդ արարածի վերաբերմունքը դեպի իր շրջապատը: Ինչո՞ւ հիանալ կամ թե պարսավել անպայման: Որովհետև մարդը - որպեսզի իրեն զգա ու տեսնի մի իդեալ միջավայրում - փնտրում է կատարյալը, նա հիանում է գեղեցիկին, վսեմին, զորեղության վրա, ցանկանալով նրանց հավերժացնել *կյանքում:* Իսկ պարսավում է տկարը, տգեղն ու անկատարյալը, ձգտելով նրանց վերացնել, արտաքսել կյանքից:

Մարդը ավելի հակամետ է գրավվելու, քան թե քննադատական վերաբերմունք ցույց տալու: Եվ հենց դրանումն է հոգևոր մշակույթի ինչպես և պաշտամունքի գաղտնիքը:

Այժմ մեր հայացքը դարձնենք ազգերի կյանքին: Այդտեղ էլ նույն օրենքն է գործում: Անհատների պես, ազգերն էլ հիանում են հզորներից և արժանավորներից, և մղվում արհամարհելու, շահագործելու և հարվածելու տկարներին: Ուր կա տկարություն՝ այնտեղ հարձակում և հարված կա: Գիտենք, թե ինչպե՛ս փոքր և անզոր ազգերը աճապարում են յուրացնելու լեզուն, գրականությունը, սովորությունները այն ազգի, որի ձեռքում տվյալ ժամանակամիջոցում գտնվում է առաջնության դափնին: Գիտենք նաև, թե ինչպե՛ս է արհամարհվում լեզուն, անունը, երկիրը տկար և անպայքարունակ ժողովուրդի: Ուժեղ ժողովուրդը հաճախ ակամայից արհամարհում է թույլին: Բայց երբ այդ վերջինն ուժեղացավ, անգամ միայն բարոյապես, միայն արժանավորությամբ - և ոչ անպայման թվապես - երկու ժողովուրդների միջև ստեղծվում է փոխադարձ հարգանք: Նմանները այլևս չեն պատերազմում ամեն առթիվ. նրանք կարողանում են հասկացողության գալ և առանց զինյալ բախումների:

Եվ հենց այդ է պատճառը, որ ժողովուրդները, *քաղաքականապես* ազատագրվելուց առաջ, մարդկության արհամարհանքից ազատագրվելու ճիգեր են կատարում: Ահա՛ այսպես, ցեղամիջյան պայքարի ճամբով, աստիճանական հոգևոր հավասարեցմամբ, ազգերը մի օր - շատ հեռավոր ապագայում - պիտի իրականացնեն տիեզերական եղբայրության իդեալը:

Արդյոք այսօր հնարավո՞ր է աշխարհը լցնող «ազգ և ազինք»-ների համաշխարհային եղբայրությունը: Մարդկությունը որպես «մի հոտ, մի հովիվ», որպես «Ազգերի Դաշնակցություն»: Հնարավո՞ր է դա այսօր, վաղը, մոտիկ ապագայում: Ո՛չ, իհարկե:

Թող այդ «ոչ»ը չսարսափեցնի, այլ՝ զգաստացնի, խրատի մեզ: Կա դարերի փորձը, կա անցյալը, կա մարդկային ցեղի պատմությունը, որոնք վճռական «ոչ»ով են պատասխանում այդ հարցին: Այդ հարցի պատասխանը փնտրեք և կգտնեք նաև Հռոմի պատմության մեջ: Համաշխարհային թագավորությունը չի կարող հաստատվել *հավասարապես չհարգված* ժողովուրդների վրա: Հռոմի ճակատագիրը կբաժանի բոլշևիկների երազած տիեզերական հասարակապետությունը, եթե նրա մեջ մտնեն նաև այնպիսի ժողովուրդներ, որոնք իրենց բարոյամտավոր անչափահասության պատճառով չպիտի դիտվեն որպես հավասարապես հարգված և հավասարազոր (հոգևոր իմաստով) անդամը ամբողջության: Կան դեռ ժողովուրդներ, որոնք կարող են կույր աղիքի դերը կատարել մարդկային ցեղի հոգևոր օրգանիզմում: Այդ է պատճառը, որ համամարդկային եղբայրության երազը շարունակում է մնալ

այդպիսին, և դա չպիտի իրականանա, քանի դեռ կան և կմնան հավասարապես չհարգված ժողովուրդներ:

* * *

Ահա՛ թե ինչո՞ւմն է մարդկային ցեղի տարբեր խմբերի բաժանման գաղտնիքը:

Խմբավորումներ, որոնք գտնվում են մշտատև մրցման պրոցեսի մեջ և այսպիսով մղում տալիս և մղում ստանում՝ դեպի կատարելություն և հոգևոր հավասարեցում, դեպի գալիք համաշխարհային եղբայրացում:

Այդ մրցումը երբեմն հասնում է իր ամենաբարձր կետին՝ պատերազմի ձևի տակ, և ունի մի հատիկ նպատակ - կենսունակ ազգերը բարձրացնել, հզորացնել, հավասարացնել նմանների հետ, իսկ անպայքարունակներին, իսկ կորչելու դատապարտվածներին օր առաջ դուրս շպրտել աշխարհից:

Որպես ամփոփում՝ կրկնենք մեկ էլ, թե ցեղամիջյան պայքարը մեծ և անողոք օրենքն է կյանքի, անփոփոխ օրենքը անհատի և ցեղերի զարգացման և կատարելագործման - պայքար, որի նպատակն է՝ թույլ չտալ մարդկային անհատին և հավաքականություններին կանգ առնելու, քարանալու մի որոշ կետի վրա, այլ՝ նրանց մտրակել ու մղել առաջ, մինչև որ պայքարող կողմերը կհասնեն մարդկային իդեալի մի վիճակի, երբ այլևս պայքարն սպանած կլինի պայքարը, երբ կդադրի պատերազմը՝ տեղի տալով կատարելագործված ազգերի եղբայրության և համատարած խաղաղության առջև:

Իսկ մինչև այդ երանելի օրը՝ պատերազմը պարբերաբար կփոխի իր պատմական տարազները միայն, բայց ոչ և էությունը:

Եվ ազգերը կշարունակեն զինվել ու վերազինվել նորանոր արնոտ բախումների համար:

Մինչև այդ հեռավոր օրը՝ մարդկությունը կծաղրի և կընդոտնի իր ընտրանիի խաղաղասիրական ցնորքները:

Մինչև այդ՝ *վա՜յ պարտվածին...*

«Արաքս», 1930թ., թիվ 1, 2:

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ԱՐԻՈՒԹՅՈՒՆԸ

Ա

*Ես էլ թագավորազն եմ**

ՇԱՎԱՍՊ

... Պարզել անցյալի իրենց պարտության պատճառները, նորից մոռացության տալ պատմության խրատականը և ապա, նոր աղետներից զարնված՝ վերստին սերտել պատմության դասերը - ահա՛ անհեռատես ազգերի ճակատագիրը:

Որքան մոռացկոտ, այնքան տկար ու դժբախտ է դա: Մոռացա՞վ իր պատմությունը, ասել է՝ անխրատ է ժողովուրդը և պատժի արժանի:

Միշտ էլ ուժեղին պիտի պատկանի երկիրը. Հովբի այդ խոսքերով է ազգերին խրատում պատմությունը:

Ուժեղը, ճշմարտորեն ուժեղը, որ արժանավորն է, արի՛ն: Ճշմարիտ ուժը, որ ոգու ուժն է: Հզոր ոգին, որ քանակորեն տկար Հելլադայի առջև ծունկի բերեց անծայրածիր Պարսկաստանը: Դա իտալական փոքրիկ երկրամասի ձեռքը դրեց աշխարհի բախտը: Դա Տիգրան Մեծի Հայաստանը վերածեց հզորագույն թագավորության: Քաղաքապետությունը, որ Սպարտա էր կոչվում, մնաց անխոցելի, քանի դեռ - հավատարիմ Լիկուրգոսի սահմանադրության - գերադասում էր պատերազմներում կորցնել իր կյա՛նքը և ոչ թե վահանը, Հռոմը, որ պատգամներ էր արձակում աշխարհին, ընկավ, որովհետև նրա զորավարները, որոնք մի ժամանակ կավե անոթներ էին գործածում, այլևս դժվարանում էին իրենց կաշառել փորձող ազգերի ներկայացուցիչներին ասելու. «Կգերադասենք իշխել արծաթյա և ոսկե անոթներ գործածողների վրա, քան թե ոսկի և արծաթ ունենալ»: Ընկավ և Հայաստանը, որովհետև անմիաբանության ոգին մեր ժողովուրդից խլել էր իր անօրինակ արիությունից ազատորեն օգտվելու կարելիությունը:

Երբեք, ո՛չ ազգային թագավորության դարերում, ո՛չ էլ այն ժամանակ, երբ Հայաստանը *դաստակերտ կայսերաց և երկրորդ թագավորություն Պարսից* կկոչվեր, երբե՛ք տիրության ոգին չտկարացավ Հայության մեջ:

Ճիշտ է սակայն և այն, որ այդ ծիգ դարերի ընթացքում չեղավ մի դեպք, որ հայությունը ընտանի պատճառներով կարողանար լիուլի օգտվել այդ ոգուց:

Հենց սրանում է մեր ժողովուրդի ողբերգականությունը:

* Հայոց Պատմություն (ծանոթ. հեղինակի):

Բ

Արիությո՛ւն:

Միակ ճշմարիտ կրոնը, առանց որի ոչինչ արժեն կրոնները:

Կեղծ է ամեն մի գրականություն, բարոյական, քաղաքական վարդապետություն, որ ուժ և արիություն չի ներշնչում իր դավանողին:

Դատապարտելի է ամեն մի դպրոց, եկեղեցի, կուսակցություն, որը արիադավան և արի չի դարձնում մարդուն որպես անհատ և հավաքականություն:

Արիությո՛ւն - միակ ճշմարիտ բարոյականը:

Կորցնելով իրենց արիությունը - իմա իրենց դրական բոլոր առաքինությունները - ժողովուրդները կորցնում են իրենց գոյության բարոյական իրավունքը: Անարին կորցնում է պատմությունից իրեն տրված մասնավոր առաքելությունը՝ իրագործելու մարդկային ցեղին օգտակար լինելու կարելիությունը: Այդպիսին դառնում է ընդունակ միայն անստեղծագործ և անփառունակ կյանքի, կարոտ արտաքին օգնության: Նմանը ժամանակի ընթացքում դառնում է միջազգային պարազիտ, մինչդեռ ժողովուրդների կոչումն է լինել միջազգային արժեք և ազդակ:

Այդ տխուր և անարգական վիճակից ազգերին հեռու է պահում արիապաշտությունը:

Արիությո՛ւն, ժողովուրդներին բարոյապես նեխելու վտանգից փրկող հոգևոր ախտն է դա:

Երբ կա դա՝ չկա վատը, ստորը, կամ առնվազը աննշան է դառնում սրանց ազդեցությունը անհատի թե ժողովուրդների կյանքում:

Բարոյական արև է դա, որ առողջագործում է իր շրջապատը: Երբ կա դա՝ կա և՛ մեծագործություն, և՛ վեհություն, և՛ անձնվիրություն: Պակասո՞ւմ է դա՝ այլևս ոչինչ արժեն բարձր գաղափարները, ծրագիրները, տեսությունները, քանզի պակասում է նրանց իրականացնող ուժը: Անարիությո՛ւն, ասել է՝ հոգևոր սնանկություն:

Անարին ոչինչ չի ավելացնում աշխարհի անկորչելի հարստության: Դա հաճախ բարոյական մուրացիկ է, այլոց ճիգերից օգտվող: Անարին չի ծառայում մարդկային քաղաքակրթության:

Հանձին Ալեքսանդր Մեծի՝ արիությունն էր, որ Հունական մշակույթը Ասիա մտցրեց: Դա էր - նախ վկաների հաղթական արիությունը - որ Նազովրեցու վարդապետությունը պարտադրեց բարբարոսներին: Դա էր, որ նոր հորիզոնների տեր դարձրեց մարդկությունը, սանձելով ծովերի ամեհությունը, մեղմելով դաժանությունն անապատների և նվաճելով օդը:

Արին է հանդգնողը, անձնազոհը, մարդասերը:

Արիությունն է շարժում պատմության ընթացքը:

Մեծ սիրտ, ազնիվ նկարագիր, վսեմ մտածում - արիության հարազատներն են այդ բոլորը, ճառագայթները միևնույն արևի:

Արիությունն: Կորցնելով այդ բարձր հատկությունը՝ ժողովուրդները կորցնում են իրենց կարողությունները անկաշկանդ կերպով զարգացնելով և կատարելագործելով կարելիությունը: Անարիանալով՝ նրանք ընկնում են օտար լծերի տակ, կորցնում իրենց անկախությունը - միակ հոգևոր մթնոլորտը, որի մեջ միայն հնարավոր է ցեղերի առանձնահատուկ հանճարի փթթումը:

գ

«Դուք ինքնին գիտեք զքաջութիւն աշխարհի Հայոց»:*

Այդ դյուցազնական առաքինությունը երբեք չտկարացավ մեր ժողովրդի հոգու մեջ, մինչև մեր քաղաքական անկախության վախճանը, որից հետո հայ ձեռքը պիտի զրկվեր դարերով զենք կրելու իրավունքից:

Հայությունը չգիտի իր պատմությունը, ասել է՝ չգիտի օգտվել իր պատմությունից - ահա՛ իր դժբախտության ակն ու աղբյուրը: Նա ծանոթ չէ իր արիական անցյալին, իր հավաքական դյուցազնականին և դրա համար էլ-ուրախություն իր գոյության թշնամիներին-նա հավատում է ամեն ինչի, միայն ոչ իր սեփական բազկի ուժին, դրա համար էլ իր ամբողջության մեջ նա պարտվողական է: Նրա համար Ավարայրի Մամիկոնյանը ավելի նահատակ է, սուրբ, քան ռազմիկ և հերոս:

Պատմագիտորեն տգետ՝ նա իր նախնիներին համարում է իրեն բնութենակից, որոնց, սակայն, հոգով այնքան կնմանվի, որքան աղավնին՝ արծվին: «Մեզ պես անռազմասեր է եղել և հին հայը, այլապես ինչո՞ւ պիտի կործանվեր մեր թագավորությունը»,- այսպես է տրամաբանում օրվա հայությունը - մասնավորապես նրա հակահեղափոխական մասը - և իրեն ոչինչ չհամարելով, ոչինչ չի ուզում աշխարհից, բացի օտար դռներում իր անստեղծագործ գոյությունը քարշ տալու իրավունքից:

Նա չգիտի, որ հայկական բոլոր արքայացեղերը կործանվել են ո՛չ թե արիության պակասի պատճառով, այլ՝ մեր ցեղի ղեկավար տարրերի առանձին երկպառակտությունների և այլ պատճառների երեսից: Ինքնակործան են եղել գրեթե մեր բոլոր թագավորությունները:

Նա ոչինչ, կամ շատ քիչ բան գիտի իր ցեղի հնավանդ ռազմունակության ու ռազմական մեծագործությունների մասին, և դրա համար էլ անհավատ է դեպի իր բազուկը, անհույս՝ դեպի իր ապագան: Նա չգիտի, որ հայ արիությունը հայոց աշխարհի համար դարերով կատարել է հոգևոր շանթարգելի դեր՝ չեզոքացնելով ու զինաթափելով բազում արտաքին վտանգներ: Եթե Հայաստան արշավող թշնամի հորդաները ծով ալիքներ էին, ապա հայկական արիությունը ծովափյա ժայռ էր, որին կզարնվեին ու կցնդեին արտաքին թշնամության հորձանքները: Օրվա հայությունը, այո՛, չի՛ ճանաչում իր դասական արիների համաստեղությունը. նա պաշտամունք չունի դեպի անմահ արիները. նա չի՛ դաստիարակվում նրանց մեծագործություններով - ահա՝ մեր դժբախտությունը:

Եվ մեղավորը ժողովուրդը չէ, այլ՝ այն տարրը, որի ջանքերով ցեղային ինքնաճանաչության է բերվում ժողովուրդը - մեր մտավորականությունն է մեղավոր:

Մեկից ավելի անգամ դժբախտություն եմ ունեցել լսելու ազգային պատմություն դասավանդող հայ ուսուցչին և խորապես ցավել եմ մեր աշակերտող սերունդի համար: Մի կենդանի մեռել, մեռյալ շեշտերով խոսում է մեռելների մասին: Պատմությունը նրա համար անհոգի կմախք է և ոչ թե բաբախուն սիրտ: Նա հետևակ գիտելիքներ ունի մեր պատմության այս կամ շրջանի մասին. գիտի ցամաք անցքեր, թվեր, անուններ, այսքանը միայն: Նա սիրտ չունի և սիրտ չի՛ դնում իր դասերի մեջ: Միևնույն տրամադրությամբ նա խոսում է և՛ Տիգրան Մեծի և՛ Վեստ Սարգիսի մասին:

Հպարտանքից չեն դողում, չեն լայնանում նրա ռունգերը, երբ պատմում է, թե ինչպե՛ս պարսից արքան, հայ սպարապետի անօրինակ քաջագործություններից հիացած, ամեն անգամ երբ գինու բաժակը շրթունքներին կմոտեցներ՝ կդժվարանար չբացականչել՝ «ճերմակաթին գինի խմի»:

Ամոթի զգացումը չի՛ այրում նրան, երբ իր խոսքը հայ խռովասեր նախարարի չարագործությունների մասին է:

Սեղմ ասած՝ ստեղծագործ վերապրում չի՛ նրա ավանդած պատմությունը, այլ՝ անհոգի հնախոսություն, քանզի իրեն կպակասի ազգային հպարտանքի նվիրական զգացումը:

Գերազանցորեն հայրենապաշտ - ահա՛ թե ինչպիսի՛ն պիտի լինի պատմության դասատուն: Այդպիսին չի՞ - ասել է՝ նրա տեղը դպրոցը չի: Ասել է՝ բարոյապես ազատ չի իր ձեռքն առնելու մեր ցեղի կյանքի սրբազան գիրքը:

«Արաքս», 1930, թիվ 25-27:

* Եղիշե (ծանոթ. հեղինակի):

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՄԱՅՔԼ ԱՐԼԵՆԻՆ

«Զատեցի՞ր իրականությունը ճշմարտությունից՝
իրականությունը դառնում է կույր, իսկ ճշմարտությունը՝ խելագար»

Ա

Բաներ կան, միստր, որոնք հավիտյան պաշտելի են - Աստված, Հայրենիք, Մայր - որոնց մասին մարդ արարածը, եթե հոգեպես խաթարված չի, չի՛ կարող առանց կրոնական հարգանքի խոսել: Այդ տարրական պաշտամունքի դեմ, խոսելով Հայաստանի մասին, դուք մեղանչել եք կոպտորեն:

Ամերիկյան մի լուրջ ամսագրի էջերից դուք արհամարհանքի ծանր քարեր եք նետել մեր ցեղի հասցեին: Ձեզ՝ «պատվով մեռնելու անընդունակ ցեղի մի զավակ»ը համարելով, դուք բացականչել եք աներկյուղածորեն. «Դարերով անարգ նահատակության և գծուծ փախուստների ժողովուրդ... ո՛վ Հայաստան, ո՛վ տգեղ դարպասող», և այլն:

Այսպե՛ս, հայածին Մայքըլ, այսպես եք խոսել հայության մասին: Չասե՞մ՝ "Well roared lion" - լա՛վ ես մռնչել, առյո՛ւծ:

Ա՛հ, պիտի ուզեի, որ ձեզ ծնող ժողովրդի նվաստ վիճակը թելադրած լիներ ձեր հիստերիկ բացականչությունները: Դժբախտաբար, դա ո՛չ հայրենասիրական de profundis[51] է, ո՛չ էլ պոռթկում՝ ի տես հայության անկյալ վիճակի: Ավելին քան պարզ է ձեր ծանոթ տողերի ներքին իմաստը: Գրչի պչրանք, և ո՛չ ավելին: Ձեր գրիչն այդ դեպքում շարժման մեջ է դրել ձեր վիրավորված եսը և ո՛չ թե ձեր ցեղի ճակատագիրը: Կխոստովանեմ, եթե ձեր չանգռած տողերը - ի դեպ՝ սիրային մի հիմարական վեպի մեջ ի՞նչ գործ ունեն Հայաստանի ու հայության վերաբերող տողերը - եթե նրանք լույս աշխարհ ընկնեին մեր ժողովրդի քաղաքական թե ռազմական այս կամ այն պարտության առթիվ, ինձ հետ հազարները պիտի ծափահարեին ձեզ: Այսօր, սակայն, նրանք զզվանք են շարժում, որովհետև հայության անմխիթար վիճակը չէ, որ ծնունդ է տվել ձեր վատահամբավիչ տողերին, այլ քանզի - ձեր իսկ խոսքով - «Մի երիտասարդ* դարպասելու է եկել , բայց իր բարեկամուհին որիշի հետ է գնացել»:

Ի՛նչ գռեհիկ շարժառիթ՝ իր ցեղի դեմ հարձակվելու համար:

Այսպես, Հայությունը՝ «ատամները թափած ծերունի՞»: Այո՞:

Եվ ինքնանվաստացումի այդ գարշելի պրոպագանդան մի այնպիսի ժամանակ, երբ աշխարհը կշարունակի զվարճանալ մեզ անիրավելով և հալածելով: Եվ ինքնաթքումի այդ փորձը Լլոյդ Ջորջի և

* Ինքը հեղինակը (ծանոթ. հեղինակի):

Ուիլսընի հայրենիքներո՞ւմ, ուր հասարակական կարծիքը կարող է ոչ աննշան դեր խաղալ մեր դատի այս կամ այն ելքի համար:

Գիտեք, չէ՞, որ Ռիշելիեոն սովորություն ուներ իրեն ներկայացած զեկուցագրերի վրա միայն երեք բառով հայտնել իր վճիռը, vidi, legi, probavi*: Տեսա ձեր տողերը, միստր, կարդացի, գարշեցի: Ներեցե՛ք, խնդրեմ, եթե ձեր գրչից գարշի ամեն ճշմարիտ հայ: Ի՞նչ, չգիտե՞ք, որ հայրենիքի մասին չպիտի խոսել, եթե համոզված չեք, որ ձեր խոսելուց հետո դա ավելի գեղեցիկ, ցանկալի, ավելի պաշտելի պիտի դառնա: Չգիտե՞ք, stulte, stude![52]:

Ժողովուրդների կյանքն իրենց մեջ կբաժանեն Հաջողությունն ու Ձախորդությունը, իբրև երկու ձեռքերը մի ինչ-որ խորհրդավոր ուժի, օրենքի, աստվածության: Արդյոք վիպագիր Արլենը չգիտի՞, որ ստրկության շղթաներ ու ցնցոտիներ կրելուց առաջ, մեր ցեղն էլ է կրել իր անկախության ու հզորության ծիրանին, իր փառաց զգեստը: Իր մեծության օրերին, երբ Տիգրան աշխարհակալի բանակները կարշավեին դեպի Արաբիա, Բաբելոն և ավելի հեռուները, և մեկից ավելի հարկատու ազգեր սարսափով կարտասանեին հայ անունը, հայն էլ վերեն վար կնայեր աշխարհին: Եվ, ի հարկե, հայագիտոչրեն տգետ Մայքըլը չգիտե, որ Բիսմարկեն ու բազմազգի Բիսմարկներեն շատ դարեր առաջ հայ պետական մարդն ասել է. «Մարդկային գոյության բարձունքներում ուժեղն է արդարը»:*

Այո՛, կար ժամանակ, երբ Հայաստանն ավելին էր, քան ծովե ծով մի երկիր, երբ հաջողության վարդագույն մատները պսակ կհյուսեին հայ հաղթական ճակտին: Բայց, ավա՜ղ, արևի տակ ի՞նչ կա կայուն: Հրթիռային վերելք տեսած ազգը պիտի ունենար իր շռնդալից անկումը: Նա աստիճանաբար պիտի կորսնցներ իր հզորությունը, մինչև որ մի օր էլ իրեն կզգար պայմանընկալի և ապա լծակիր ստրուկլի վիճակում, մինչև որ մեր հարևանները իրար մեջ մեր ցեղի «զգեստները կբաժանեին»:

Պատճառնե՞րը: Թող չանհանգստանա օտարալեզու Արլենը, այդ մասին տարբեր կարծիք չունեմ և ես: Այո՛, Հայաստանը անձնասպանությամբ վերջ տվեց իր քաղաքական գոյությանը: Նա պարտվեց իր ներքին անհամերաշխության դևից, և ապա արտաքին թշնամիներից: Նա ինքնակործան եղավ: Այդ մասին զայրույթի խոսքեր ունեմ և ես: Բայց ինչո՞ւ ընդունայն քրքրել պատմությունը: Ընդունում եմ, թե հայությունը իր ահավոր դժբախտության մեջ բարոյապես ազատ չի

* Տեսա, կարդացի, հաստատեցի (ծանոթ. հեղինակի):
* Տրդատ Մեծին է պատկանում այդ ասությունը (ծանոթ. հեղինակի):

ասելու իր մասին՝ մեղքն իմս չէ, որ քաղաքականապես կաղում եմ դարերով: Այսքանը մեր անցյալի մասին:

Բ

Գիտե՞ք, որ ժողովուրդների հավիտենականությունը պայմանավորվում է նրանց ստեղծագործության հավիտենականությամբ: Դեռ կան, ապրում են Հայն ու Հայաստանը, ասել է՝ հայությունը արևելյան ամենավայրագ բարբարոսության լծերի տակ իսկ - անշուշտ, իրական կարելիության սահմաններում - եղել է ստեղծագործ:

Ճիշտ է, որ հայությունը, իր գերիշխան վիճակը կորցնելուց հետո, ընթացել է ամենաթույլ դիմադրության գծով: Ավելին՝ եղել են պատմական մոմենտներ, երբ դա, ինչպես հրեությունը, հարկադրված է եղել գիտակցորեն զոհելու իր արժանապատվությունը հանուն իր գոյության և անմեռ արժեքների պահպանման: Սակայն, ճշմարիտ է և այն, որ Հայաստան Երկրի վրայով չի անցել մի հատիկ դար, որի ընթացքում գերիշխան կյանքի հույսերով ընդվզած չլիներ հայությունը: Նրա մտավորական ընտրանին վերջին անգամ – կես դար առաջ - իր ժողովրդի վերադաստիարակիչը լինելուց առաջ, նրա անցյալ մեղքերի քավիչը հանդիսացավ: Երբ նա ձեռքը զարկում էր մեր ազատագրական գործին, խորապես գիտակցում էր, թե դարերի ստրկությունը մեծապես տկարացրել է հայ զանգվածների ազգային ինքնագիտակցությունը: Սակայն, նա հավատում էր մեր ազգային վերածնունդին, որը պիտի հոգեփոխեր մեր ժողովրդին իր ամբողջության մեջ:

Եվ տարիներով հնչեց նրա մարգարեաշունչ խոսքը: Ե՛ս եմ ճշմարտությունը, իմա՝ ճշմարիտ աշխարհայացքը, ներցեղային բարոյականը, անկախության կրոնը: Այսպես տարիներով ու տարիներով, Հայոց աշխարհի երկարությամբ և խորությամբ տարածվեց հեղափոխության զարթուցիչ կանչը: Բայց, ավա՜ղ, տխուր իրականությունը չուշացավ զգացնել տալու, թե օտար լծերի ազդեցությունը ավելի մեծ ավերածություններ է առաջացրել հայ հոգու մեջ: Ուրախություն մեր ցեղի գոյության թշնամիների, որոնցնացան քարոզներ լսվեցին Հայ հեղափոխության հենց առաջին տարիներում: Դա արտահայտությունն էր մեր ժողովրդի որոշ տարրերի ստրկական հոգեբանության: Այդ քանդիչ տարրերը չուզեցին հասկանալ - չեն ուզում և հասկանալ այսօր - թե թշնամանել հարազատ եղբոր դեմ հենց այն պատճառով, որ նա իր կուսակցության փարախից չի՝ կնշանակի տկարացնել արտաքին թշնամու դեմ ուղղված մեր հարվածի թափը: Հերձասիրության հին դևն էր դա, որ տարբեր անվան ու ձևերի տակ կշարունակեր օտարի հայասպան դերը, մեծապես դժվարացնելով մեր վերածնունդի գործը:

Կար ընտանի թշնամին, որի երեսից հայ հեղափոխական

տարրը պիտի հարկադրվեր ուժաթափ լինել նաև ներքին ամոթալի պայքարներում:

Տեսնե՛լ ու զգա՛լ, թե ինչպես մտակույր Հայը զենքեր է դարբնում իր հարազատ եղբոր դեմ՝ ընդհանուր թշնամու գործը հեշտացնելու համար- ա՜հ, այդ զարհուրելի ողբերգությունը դեռ այսօր էլ բաժինն է հայ հայրենասերի: Դեռ այսօր էլ հայության քաղաքական ճակատագրից ավելի դառն է նրա ներքին ճակատագիրը: Գիտենք- ֆիզիկական ցավ պատճառելու աստիճան պարզ է, որ օրվա Հայաստանը արտաքին թշնամու համար «Մի դուռ է՝ փականքը կոտրած»: Գիտենք, որ հայ մտավորականության մի մասը- դավանողն ու գերին անձնակենտրոն մորալի - կշարունակի սև թելերով հյուսել հայության ճակատագիրը: Կասկածից դուրս է և այն, որ հայության տարագիր կեսի համար, եթե օր առաջ չհոգեփոխվեց- սակավաթիվ տարիներ են պետք, որպեսզի նրա կյանքում մահվան տրագիզմը տեղի տա հոգևոր ինքնասպանության առջև, որպեսզի հայ homo-ն դառնա homunculus և մեռնի ապազգայնացմամբ: Գիտենք և այն, որ տարաբնակ կեսի կապույտ կոտորածը խնդրական պիտի դարձնի գոյությունը հայության երկրորդ կեսի, որ կառչած կմնա Արարատի փեշերին:

Այս է, միստր Արլեն, այսպես մահորեն աղետալի և տխուր է հայության ճակատագիրը: Եվ հասկանալի է դա: Պատմությունը միշտ էլ որդիների մեջ պատժում է Հայրերի մեղքերը, հի՛ն:

Գ

Սակայն, ի՞նչ անել: Ինչպե՞ս կուզեիք սրբագրել հայ հոգեբանությունը, և նրա միջոցով՝ մեր հավաքական ճակատագիրը, որպեսզի նա պատմության գարշապարին կառչած չմնա:

Ձեր ծանոթ տողերո՞վ, որոնց ամեն մի տառը թեթևամիտ արհամարհանք է շնչում: Միամտությունն: Հայհոյելով չեք բժշկի հիվանդին: Մոռացե՞լ եք անգլո-սաքսոն գրողի իմաստուն խոսքերը. «Չլինի թե սատանան հարվածելու ժամանակ վիրավորեք նաև աստվածությունը, որ կապրի մարդու մեջ»:

Չե՞ք ընդունում, որ ձեր գրչի պչրանքով խորապես վիրավորել եք սրբազան հայկականությունը հայության մեջ:

Ձեր խոսքը Հայաստանի մասին, միստր, այնքան հոխորտ է, որ կարծեք Ձեր ցեղի համար Հերակլեսի տասներկու մեծագործությունները կատարած լինեիք: Խոսել եք իշխանություն ունեցողի պես, և ծիծաղելի դարձել, որովհետև դեռ ոչ զոհաբերել, ոչ էլ տառապել եք այն ժողովուրդի համար, որին բարոյապես սնանկ կանվանեք: Ձեզ համար ներելի չէ, եթե չգիտեք, որ իրենց ցեղի ստվերային կողմերի վրա հարձակվելու իրավունք և պարտականություն ունեն միայն նրանք, որոնք տեսնում, հասկանում և սիրում են իրենց ժողովուրդը իր

բովանդակ մեծության և տկարությունների, իր բովանդակ ողբերգության մեջ:

Ձեր գրչից ամաչելու համար բարի եղեք վերհիշելու Իսրայելի վշտակիր առաջնորդներին:

«Նրա - մարգարեի - սիրտը կծկվում է ցավից, նրա շրթունքները լի են մերկացումներով. նրա աչը բարձրացել է ցույց տալու պատուհասը, որ գալիս է. նա տառապում է իր ժողովուրդի համար, և որովհետև սիրում է նրան, հարձակվում է նրա վրա»:

Ահա՛ Եսային, որը Եհովայի բարկությամբ կսպառնա իր ժողովրդին.

- «Նրա - Իսրայելի - պալատների մեջ փշեր ու նրա պարիսպների վրա եղինջ ու եկքան պիտի բուսնեն: Եվ չագալների բնակարան պիտի լինի: Այնտեղ նեռ օձը իր բույնը պիտի շինի... Եվ ուրուները այնտեղ պիտի հավաքվեն...»

Ինչո՞ւ: - Որովհետև,- ավելացնում է բանաստեղծ-մարգարեն,- որովհետև, «քո արծաթդ կղկղանք դարձավ», որովհետև «գինուդ մեջ ջուր է խառնված»:

Այսպես է վայում անգերանգանցելի բանաստեղծը ու նոր վայերով սպառնում, որովհետև Իսրայելն սկսել է ունայնություններին «խունկ ծխել»:

Բայց ահա՛, հարվածելուց հետո, մարգարեի վշտալի սիրտը կանչում է սիրով.

- «Արթնացի՛ր, արթնացի՛ր, քո զորությունը հագիր, ո՛վ Սիոն. քո փառավոր հանդերձները հագիր... Թեև աղյուսներն ընկան, մենք տաշված քարերով պիտի շինենք...»

Այո՛, այսպիսի՛ն է հայրենապաշտ առաջնորդը: Նա միայն մերկացնող չէ, այլև՝ հուսատու: Նա չի՛ նզովի միայն, այլև՝ կգոտեպնդի:

Ահա՛ և Երեմիան՝ հրեության ողբերգուն.

- «Քո բոլոր թշնամիները իրենց բերանը քեզ վրա բացին»,- ցավից ու ամոթից գալարվում է մարգարեն: Նա կլացի ու կսպառնա, որովհետև իր ժողովրդի գլխից «փառաց թագն է ընկել»:

«Մեր հայրերը մեղք գործեցին և չկան, ու նրանց անորենությունների պատիժը մենք կկրենք:

Վիշապներն անգամ ծիծերը կհանեն ու իրենց լակոտներին կաթ կտան.

Իմ ժողովուրդիս աղջիկը անապատի ջայլամների պես անգութ եղավ.

Կաթնակերի լեզուն ծարավությունից իր քիմքին փակեց
Տղաները հաց ուզեցին, բայց նրանց ջարդող չկար.
Կարմիր հագուստներով մեծացողները աղբանոցներ գրկեցին.

Ու սրից մեռածները անոթությունից մեռածներից երջանիկ էին»:

Այսպես դառնադառն է մարգարեի խոսքը, որպես ազգային ամոթանքի ու վշտի արտահայտություն:

Բայց, քանզի նրա կոչումը միայն ողբալը չէ, ահա՛, Եհովայից ներշնչված՝ նա ճգնում է վերստին Պաղեստինյան հույսերով զինել հրեությունը.

- «Պիտի սպասեմ այն բոլոր ազգերին, որոնց մեջ քեզ ցրվեցի, բայց քեզ չպիտի սպառեմ»:

Այսպես հայրենակրոն էին Իսրայելի հոգևոր առաջնորդները: Նույնն էր նրա և մոտավոր անցյալի մտավորական ընտրանին, քաղաքական խորհողը, քերթողը, գիտնականը և այլն:

«Ես կապրեմ ծայրահեղ արևմուտքում, բայց Արևելքում է իմ սիրտը»,- կերգեր Իսրայելի Ահարոնյանը - Հուդա Ալևին:

Հապա Բեալի՞կը: Ա՜հ, սրանց նման պիտի սիրել Հայրենիքը՝ ապագայի Սիոնը կառուցել կարողանալու համար:

Հապա Պասմանի՞կը - Ձեզ նման օտարալեզու, որին իր ազգային ուղղափառությունը պիտի թելադրեր հետևյալ հպարտ պարբերությունը. «Աշխարհը մեզ կհալածի մեր անցյալ մեծության համար»:

Ահա՛ և Իսրայելի օրվա առաջնորդությունը՝ Վայցման, Սոկոլով, Արտուր Հանքկե, Վարբուրգ, Հակոբսոն և այլն:

Սիոնիստական միջազգային կազմակերպության հոգևոր բարձրունքները, որոնց թիկունքում միշտ էլ կանգնած են աշխարհածանոթ միլիարդատեր Շտրաուսները, Վարբուրգները, Ռոտշիլդները և այլն: 1919-ին, Judische Rundschau-ի էջերից սիոնիստների պետն այսպես կխոսեր համաձայնական պետություններին. «Դուք ուզում եք թե ոչ՝ մենք կլինենք Պաղեստինում: Դուք կարող եք փութացնել կամ հետաձգել մեր մուտքը, ձեզ համար, սակայն, լավ պիտի լինի, եթե դուք օգնեք մեզ, *այլապես մեր աշխարհաշեն ուժը կդառնա քանդիչ,* որը կստիպի ցնցվելու ողջ աշխարհը»:

Այս բարձր մտավորականի սպառնալիքով էր - արվել հրեա դրամատերերի անունից - որ ձեռք բերվեց Բալֆուրյան ծանոթ հայտարարությունը:

Այդ դեպքից մի տարի անց, Լոնդոնում գումարված մի հրեական համագումարում, ձեզ նման, միստր, օտար լեզվով գրող Մաքս Նորդաուն, հայրենասիրական գինովության մեջ բացականչում էր՝ Le jour de gloire est arrive![53] Սիո՜նը, Սիոնը կվերականգներ: Գիտե՞ք, որ դեռ երեկ մեծ ազգերը փորձում էին աշխարհահռչակ Այնշտայնի հանճարը սեփականացնել: Գերմանական հրեա է,- պնդում էր գերմանական մամուլը: Ո՛չ՝ ֆրանսիական է: Չէ՛, չէ՛, իսպանական է: Մեծանուն

գիտնականին մնում էր վերջ տալ անտեղի վեճին, և նա թալմուդականին հատուկ հպարտությամբ հայտարարեց՝ ես հրեա եմ:

Օրեր առաջ, թերթերը գիտության այդ տիտանի մասին գրեցին. «Այնշտայնը սինագոգում»:

Դ

Կար ժամանակ, «երբ Հրեաստանի ամբողջ հարստությունը մի խուրձ խոտ էր և մի կողով»,- ծաղրում էր Յուվենալը: Իսկ մնացածները չարախնդում էին. «Հրեան ողորմություն է խնդրում, լուցկի ծախում»:

Դարեր անցան: Բևեռ բևեռ ցրված մեծ թափառականը ապրեց օտար հասարակության խոռոչներում, դարերով կուրծք տվեց ոչ-հրեա մարդկության թշնամանքին, բայցևայնպես՝ իրեն գահընկեց չհայտարարեց: Նա մնաց հոգով թագավոր ազգ: Նա - դոգմաների և Մեսսենական հույսի ժողովուրդը - օտար ժողովուրդների ծոցում ապրեց որպես «հյուր և թշնամի», և անխոս կրկնեց մարդկության. «Չէ՛, Աստծու, Աշխարհի և Մարդու մասին ունեցած իմ ըմբռնումից մի հովտ անգամ չեմ զիջի քեզ»: Այսպես ապրեց Հրեությունը, մինչև որ մի օր էլ իր իշխանությունը տարածեց աշխարհի մեծ մասի վրա:

Նա հաղթեց, որովհետև նրա մոտ գերագույն հակակշիռը պատկանում է ազգին, որը ներկայացվում և արտահայտվում է իր ընտրանիի միջոցով: Նա հաղթեց, որովհետև նրա մեջ պարտականություն է անհատական երջանկության ձգտելը, սակայն, օգուտ Իսրայելի բարորության. գովելի է փառասիրությունը, բայց Իսրայելի փառքի համար. արդար է հարստանալու տենչը, հարստությունը, բայց դա ո՛չ թե որպես նպատակ, այլ որպես միջոց՝ այն Իսրայելի դատին ու ազդեցությանը ծառայեցնելու համար: Եվ հենց այդ է պատճառը, որ հրեությունը այսօր տեր է մի անպարտելի ուժի - *ոսկու և խելքի եղբայրության* - իր ծոցի մեջ: Այսպիսով, միայն նա հաջողեցրեց իր մեծագույն դժբախտությունը, իր արմատական տարտղնումը - կարծեք ալքիմիաբար վերածել մեծ օրհնության իր համար: Այսօր նա տեր է մի այնպիսի հզորության - ոսկի, հեղինակություն, ուժ - որը նրա համար երազ պիտի մնար անգամ Տիտոսից կործանված անկախ Հրեաստանի մեջ:

Գաղտնիքը գիտե՞ք: Իր աննվազ պաշտամունքը դեպի Սիոնը, որով և որի համար ապրեց Աբրահամի ցեղը: Իր բոցեղեն հայրենաբաղձությունը, որը ո՛չ թե միայն հայրենազուրկ Հրեային Հրեա պահեց, այլև այն դարձրեց մարդկության ամենահարուստ, ամենահիմաստուն և ամենահեղափոխական մասը:

Այժմ իր բախտի կառքը կքաշեն և՛ բոլշևիզմը, և՛ ֆրանմասոնությունը, և՛ միջազգային բորսաները, դրամատները, մամուլի մեծագույն մասը և այլն: Բայց քինաքաքույց ազգը չբավականացավ իր հաղթանակով: Հոգեպես միշտ քաղցած մարդկության նետած իր մեկ-երկու

նորանշան գաղափարներով, ազգերի ծոցի մեջ նա վառեց դասակարգային արնոտ պայքարի կրակը, և այսօր - տեր աշխարհի ոսկու երեք քառորդին - նորանոր պատերազմների և ընկերային հեղափոխության ուրվականով սպառնում է աշխարհին: Այսպես, դարերով տանջվածը պիտի դառնար ազգերի տանջիչը: Ու միշտ հավատարիմ իրեն՝ նա հանճարեղ է և՛ տանջելու մեջ:

Նա դարեր ու դարեր տևող իր անզորության և նվաստացումի վրեժն է լուծում: Եվ իրավունք ունի:

Արդյոք, այժմ պարզ չի՞ պատասխանը ձեր հարցի, թե ինչպե՞ս «հրեաները տեր ու տիրական են եղել աշխարհին»:

Իսկ հայությո՞ւնը, որը կուզեիք, որ մեռած լիներ «Նինվեի, Կարկամիշի և Բաբելոնի հետ», ավա՜ղ, դա շարունակում է մնալ «Արարչագործության տարագիրը»: Այլ կերպ չէր էլ կարող լինել: Ու գիտե՞ք թե ինչո՛ւ: Այդ «ինչու»-ին որպես պատասխան՝ երկու խոսք ևս: Մեր պատմության ընթացքում - իմացե՛ք և՛ այդ - մեծահարուստ հայը չեղբայրացավ հայ մտավորականին, ո՛չ էլ ազգերի բախտի հետ խաղացող ուժերի բարեկամությունը փնտրեց: Միայն զմյուռնիացի հայերի հարստությամբ կարելի պիտի լիներ մի մեծ Հայաստան գնել: Այդ ծով հարստության մի չնչին մասն իսկ - որը քեմալականները քամուն տվին - պիտի բավարարեր հրեաբար կաշառելու մարդկության երեք քառորդի խղճմտանքը, այն հայասեր դարձնելու աստիճան: Բայց - անե՛ծք մեկուսի երջանկության դավանանքին - հայ ցեղի ապրած և ապրվելիք բոլոր տեսակի դժբախտության անիծված ակնաղբյուրին անե~ծք...

Ոսկեքսակ հայը չկանգնեց ոսկեգրիչ մտավորականի թիկունքում, և այդ վերջինի լեզուն՝ կարճ, խոսքն անլսելի եղավ միջազգային արեոպագների մեջ: Եվ եղավ այն, ինչ որ եղավ: Խորհրդածե՛ք, պարո՛ն արվեստագետ, եթե սիրտ ունեք, խորհրդածե՛ք այդ մասին, և դուք - համոզված եմ - ձեր ցեղը մեղադրելու փոխարեն, պիտի դատափետե՛ք Հայաստանը կործանող այն հանցապարտ մտայնությունը, որ կանձնավորեն հայ օտարասերը և հայ մեծահարուստը - թշվառականներ, որոնց որքան ավելի ժպտա բախտը, այնքան հոգեպես կհեռանան իրենց ցեղի կյանքից: Պարզ չի՞, թե ինչո՛ւ միայն հայությունը կմնա որպես պարտված մասը մարդկության:

Ե

Արդարև, ազգերի պատմությունը ավելի անշուք կլիներ, եթե առաջնորդները անցյալի վրայից պարբերաբար չվերցնեին գերեզմանաքարը՝ նրանց ախտերն ու սխալները ի լույս հանելու նպատակով:

Մեր ցեղն էլ - երբեմն իր տկարություններին գերիգործել է ի կորուստ իրեն, և այսպիսով պատճառ տվել, որ իր գոյության նավի ղե-

կավարները արդար զայրույթով խարազանեն իր հոգեբանության ստվերային կողմերը:

Ո՞հ, այդ մարգարեաշնորհ ղեկավարները, որոնց ցեղային բարոյականով օծուն սիրտը գիտցավ կծկվել մեր ժողովուրդի ամեն մի ցավից, և ցնծալ ի տես համահայկական ամեն մի հաջողության: Նրանք, մեր ցեղի հոգու այդ սրբազան անոթները, հաճախ իրավունքից ավելի պարտականություն են զգացել գոռալու հայության երեսին. «Քո էության մեջ մի բան կա, որը պիտի սպանես, եթե ազգորեն ապրել կուզես»:

Ահա՛ սուրբ Սահակը, սրբազան զայրույթով գինովցած. «Քահանայանալ ի վերայ տիրանենգ, եւ տիրասպան եւ մատնիչ ժողովրդոյ ոչ կարեմ»:*

Ահա՛ հայոց պատմության հայրը՝ Խորենացին. «Հաճախ վարդապետներ ու վարդապետություններ փոխող. ուսուցիչներ, ընտրված ոսկով և ոչ սուրբ հոգով. աշակերտներ՝ ծույլ ուսանելու, և արագ այլոց ուսուցանելու, զորավարներ՝ անարդար, ինքնասեր, կողոպտիչ - արժանավոր ընկերն ավազակների. իշխաններ՝ ապստամբ, ագահ, անբարո. դատավորներ՝ տմարդ, կաշառվող, անորեն՝ բոլորը զուրկ սիրուց և ամոթից»...

Ահա՛ և Հայոց Հայրիկը, համակ սեր ու վիշտ. «Միթե՞, հայոց ժողովուրդ, դու գռեհաց կավ ես աշխարհիս երեսին»:

Հապա Ահարոնյա՞նը՝ իշխանն ու փառքը մեր նորագույն գրականության, որի սիրտը արևածաղիկի պես միշտ էլ արևը - Արարատյան արևը փնտրեց:

Հայության վշտակիրը, որի հոգևոր կյանքի հորիզոնը միշտ էլ բռնել է գերագույն դեմքը մեր ծվատված Հայրենիքի:

Հայության տրիբունը՝ ոսկեբերան, որի հոգին հայոց պատմությունից ծծեց այն ամենը, ինչ որ գեղեցիկ է, վսեմ ու հերոսական, և դրա համար էլ որքան ուժեղ է իր ցեղասիրությունը, այնքան կատաղի է իր բարոյական զայրույթը, որը սակայն, իր սիրող սրտից կբխի:

Նա խոսքի հոգևոր կայծեր ունի, և գիտի շանթել այն ամենը մեր ցեղի կյանքում, որ տկար է ու տգեղ, աննվեր ու անփառ. հակառակահորդոր ու թունավորիչ. այն ամենին, որ երկրամոլ են, որոնք անեծք ու նվաստություն կշահեն մեր պատմության համար:

Հանգույն բիբլիական մարգարեների՝ նա նզովել գիտի, բայց իրեն հատուկ մեծ սիրով գիտի և դափնեպսակել:

Նրա վշտալի հանճարը անմահացրեց հայ վրիժակը, որը գիտցավ աներկյուղ շփման գալ մահվան հետ:

---

* Ղազար Փարպեցի (ծանոթ. հեղինակի):

Նա երգեց հայորդին, որը դավանել գիտցավ ազատությունը, նրա համար գիտակցորեն իր արյունը թափելու աստիճան:

Օրհնեց ու քաղցրացրեց մահը հերոսների:

Մարգարեացավ գալիքը և եռակի զանգահարեց հայության վարած վերջին գուպարների մասին:

Հրեղեն խոսքով երկու սերունդների հոգում նա բորբոքեց ինքնահզորության ծարավը, և սե՛ր դեպի տիտանիզմը պայքարի և զոհաբերության մեջ:

Եվ գիտցավ ներշնչել, թե Հայաստան Երկիրը ո՛չ թե միայն ցանկալի որսավայր է իր գայլ հարևանների համար, ո՛չ էլ հարմար վայր՝ միայն անփառունակ գերեզմաններ ծորելու, այլ՝ որ դա հարմար է նաև Անկախության և փառքի տաճարներ բարձրացնելու համար:

Այսպես ապրեց ու ստեղծագործեց հայ պսակավոր քերթողը, իր ճակատագիրը ներքին հաղորդակցությամբ կապելով իր ցեղի ճակատագրին:

Ահա՛ թե ինչո՛ւ ամեն անգամ, երբ հայ մարդը կթերթի Ահարոնյանի հայրենաշունչ երկերը՝ կմղվի մտովին համբուրելու նրա ներցեղային բարոյականով օծուն գրիչը:

Ահա՛ թե ինչո՛ւ այսօր Միցկևիչի պես նա էլ ազատ է ասելու իր մասին. «Ես և Հայրենիքս նույնն ենք»:

* * *

Այսպե՛ս, միստր Մայքլ, միայն այս ճամբո՛վ է ձեռք բերվում իրենց ցեղի հոգեբանության հոռի կողմերի նկատմամբ դատախազ ու դատավոր հանդիսանալու իրավունքը:

Հայությունը քննադատելուց առաջ՝ *պետք է արիությունն ունենալ ապրելու նրա պատժված խղճմտանքը.* պետք է քաջություն՝ իջնելու նրա խղճմտանքի խորքերը, կրկին ու կրկին անգամ ապրելու նրա և՛ փառքը, և՛ ամոթանքը - նրա բովանդակ ողբերգությունը:

Այն դատապարտելուց առաջ՝ պետք է խաչվել նրա ապրած Գողգոթայի վրա: Իսկ այսպես վարվելու համար՝ ընդունակ պիտի լինել անսահման սիրո և զոհաբերության:

Այլապես՝ քննադատել չպիտի նշանակի տառապել:

Իսկ երբ քննադատողը չի տառապի, նա վուլգար չարախնդացող է և ո՛չ՝ քննադատ: Արհամարհանքի աչքը միշտ էլ հակամետ է ավելի թերիներ, քան առաքինություններ տեսնել: Այո, անսխալ տեսնելու և արդարախոհ լինելու համար՝ պետք է մեծ սեր ունենալ: Ձեզ, դժբախտաբար, պակասում է դա, ասել է՝ պակասում է թե՛ քննադատելու բարոյական իրավունքը և թե՛ հոգեբանորեն առարկայական լինելու կարելիությունը:

Զ

Դուք գիտե՞ք հայ գրողի ճակատագիրը՝ ապրել ու ստեղծագործել կիսաքաղց և մեռնել զրկանքների մեջ: Դուք գիտե՞ք այդ - ամերիկորեն խելոք մարդ - և այսօր դասալիքորեն հեռու կապրեք մեր ցեղի կյանքից:

Ի՞նչ, արդա՞ր է, որ նման մեկը, որի համար չի ներցեղային բարոյականը, ըստ որի՝ ցեղակից հանճարն ու բեռնակիրը հարազատ եղբայրներ են - ասացե՛ք, արդա՞ր է, որ նմանը իր «նշանավորության» պսակին մի բան ավելացնելու ունայնասիրությամբ, օտար մամուլի մեջ իր ազգը *կենդանի մեռյալ* հռչակի:

Դասալիքը դատավորի դերո՞ւմ:

Կընդունեմ, արգահատելի է անհայրենիք ժողովուրդը, բայց միթե յոթնիցս զզվելի չի՞ հայրենիքի զգացումից ու պաշտամունքից զուրկ անհատը:

Դո՛ւք, որ «իմաստություն» ունեցաք ձեր գրիչը չթաթախելու հայ Արյունի և Արցունքի ծովի մեջ, դուք, որ սիրտ չունեցաք գոնե մի անգամ կրկնելու՝ «Եղբա՛յրներ, հա՛յ ապրենք», ազատ եք ձեր տաղանդը զրնգուն դրամի և հանգստով էության վերածելու, ազատ եք ձեր քմախորժ վեպերով ընթերցող հին ու նոր աշխարհի կրքերը խաղաղել, սեղմ ասած՝ թույլ տվե՛ք, խնդրե՛մ, վերադարձնելու ձեզ հայության մասին գործածած ձեր բառը - դուք կարող եք «կուրտիզան»աբար սպասավորել օտար գրականության, բայց ոչ և վատահամբավել ձեր ցեղը հաչս օտար ազգերի:

Չգիտե՞ք, որ այսօր - երբ օտարատյացությունը սկսել է ատամներ ցույց տալ տարագիր հային - ձեր տողերը կարող են արդարացնել ու սնուցել օտար ժողովուրդների արհամարհանքը դեպի հայ անունն ու դատը:

Չգիտե՞ք, որ ձեր ծանոթ տողերը կարող են ինքնանվաստացումի մղել օտար ափերի վրա ծվարված հայությունը, որ առանց այն էլ, հասկանալի պատճառներով ծանր տուրք է տալիս ազգային վատասերումին:

Վերջապես, ինչո՞ւ եք ուզում խախտել հայության հավատքը դեպի իր ապագան:

Տմարդություն չէ՞ փողոցի լեզվով խոսել մարդկային արդարության և մահվան հետ անհավասար պայքարի մտած մի բուռ ժողովուրդի մասին:

Ինչո՞ւ եք ուզում փութացնել նրա հույսերի մահը, որ իր ստույգ մահը պիտի դառնա:

Ծագումով հայ եք, և կակնկալվեր, որ - իմացե՛ք, կան և օտարազգի ասպետ գրիչներ, որոնք տարիներով մեր դատին կծառայեն - արվեստագետի ձեր խոսքով դուք ևս սրտապնդվեիք մահու և կենաց

կռվի բռնված տարագիր հայությունը: Եվ, հանկարծ, սպասված եղբայրական խոսքի փոխարեն՝ արհամարհանքի ծանր քարեր:

Մե՛ղք ձեզ:

Գրող լինել - այն էլ հայազգի - և մեր ցեղի անօրինակ արհավիրքները շահադիտող մարդկության երեսին թքելու փոխարեն, հարձակվել նրա զոհերի վրա: Ամո՛թ ձեզ:

Ի՞նչ, դրանո՞ւմ է գրչի մարդու կոչումը: Տաղանդը տրվում է նրանով կուրտիզանությո՞ւն անելու, այն հարստության ու հանգստի վերածելո՞ւ համար:

* * *

Դուք տեսաք, միստր, թե ինչպե՛ս են խոսում ժողովրդի, ժողովրդի մասին և ժողովրդի անունից:

Տեսաք վշտակրությամբ ու նվիրումով մեծ հրեա և հայ առաջնորդներ, որոնց համար չէ օլիմպիական մեծությունը, որի մեջ այնքան անկարեկիր ու պաղ եք դուք: Առաջնորդնե՛ր, որոնց համար միայն նա՛ է ճշմարտորեն մեծը, որը մեծ զավակն է նա՛խ իր ժողովուրդի, և ապա՝ մարդկության:

Իսկ դո՞ւք. ինչի՞ եք ծառայեցնում ձեզ տրված տաղանդը: Փոքրոգի՛, ինչպե՞ս թիկունք ցույց տվիք ձեր ցեղի Գողգոթային: Ինչո՞ւ չուզեցիք, հրեա օտարալեզու գրողների պես, լինել նա՛խ ձեր ցեղի տաղանդավոր զավակը: Դժվա՞ր է: Ծա՞նր է հայ խոսքի խաչը: Ընդունում եմ: Բայց չէ՞ որ հենց այդ ծանր խաչը սիրով կրելու մեջ է ճշմարիտ մեծությունը:

Սակայն, ինչո՞ւ կերակրեմ, երբ հայությունը դարձել է «տաղտուկ ամենքին և մի բեռ » ձեզ համար: Չէ՞ որ դուք սկսել եք ամաչել ձեր ծագումից: Այո՞: Ուրեմն, գրչի կոկետություն չի՞ ձեր չանգռածը Հայաստանի մասին:

Այդ դեպքում թույլ տվեք, մեկ էլ գարշելու արվեստագետի ձեր ցեղամերժ տաղանդից, որը - մե՛ղք - առաքինություն չունեցավ խոնարհվելու Հայության Տառապանքի, Հույսի և Հերոսական մեծության առջև:

Մենք հավատում ենք՝ Գողգոթայից հետո Հարությո՛ւն կա:

Եվ արդա՛ր է մեր հավատքը:

Մենք զգում ենք մեծ ապագան հայ Հայրենիքի, և երկյուղածորեն ծնրադրում նրա աստվածային տեսիլքի առջև:

Մենք նախաճաշակում ենք նրա գալիք երջանկությունը: Եվ յոթնիցս հպարտ ենք, որ հայ ենք:

Համբո՛ւյր ձեր անարգած Հայաստանին:

«Նոր Արաքս», 1930, թիվ 11, 12, 15-18:

ՑԵՂԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԶՈՐՈՒՅԹ

Եթե ցայսօր մեր ժողովուրդը հարվածներ է միայն ստանում և ողբերգորեն՝ անկարող է հակահարվածել- դրա պատճառն այն է, որ նա չի ապրում ցեղորեն:

Անասելիորեն ճակատագրական և անկշռելի է ցեղա-յին ազդակի նշանակությունը մի ժողովրդի վերածնունդի, ազգամբողջացման և պետականացման գործում:

Գիտե՛նք, հասարակագիտական այդ պարզ ճշմարտությունը, սակայն, անկարելիության աստիճան դժվար է, բառերով «ի՞նչ է ցեղը» հարցի սիրտը շոշափել:

Մարդաբանության այդ տված սահմանումներից և ո՛չ մեկն ընդունելի՝ չէ ինձ համար:

«Ցեղ» հասկացողությունը սահմանելու համար բա-վական չեն հին եզրերը (տերմին):

Նրանցով չի կարելի սպառել ցեղի ողջ կարողությունը:

Ցեղը՝ դիմագծորեն ազգայինն է, ա՛յն տիպարականը, որով ժողովուրդները տարբերվում են իրարից:

Այո՛, ցեղային գործոնն ավելի՛ բարդ իրողություն է, քան ենթադրվում է:

Դժվար է դա սահմանել գիտական լեզվով:

Այստեղ՝ միա՛յն հարաբերական գիտականության մասին խոսք կարող է լինել:

Ըստ մեզ - ասենք առանց տեսական խորացումների – ցեղն ավելի հոգի է, քան կար:

* * *

Մեր դարում, մասնավորապես, մեր օրերում, ոչինչ այնքան չի՛ տկարացնում ժողովուրդների պայքարունակության ոգին, որքան ա՛յն աղետալի մոլորանքը, թե իրենց ճակատագիրը բարվոքողը սեփական ճիգերը չեն, այլ ինչ որ՝ արտաքին ուժեր:

Ավելի՛ պարզ:

Մի ժողովուրդ, որն իրեն պետք եղած ուժն իրենից դուրս է փնտրում, կուրորեն իր պարտությունն ու անկումն է նախապատրաստում:

Հասկանա՛նք, որ ցեղի ուժակշիռն ավելի մեծ է, նրա ներքին կարողությունը բյուրաբյուր անգամ ավելի՛ հար-ուստ, քան՝ ժողովրդին:

Ա՛յն ժողովուրդը, որ գիտի այդ - գիտի ճշմարտությունը. փրկված է նա:

Հայաստանում ես ավելի բաներ եմ տեսնում, քան հայ ժողովուրդն ու իր օրվա արժեքները:

Հայաստան չի նշանակում երկրամաս և ժողովուրդ միայն, ո՛չ, ո՛չ. այնտեղ կա մի «երրորդը», մի այլ ուժ - ցե՛ղը - առանց որի, փառքի ու մեծության աստղերի տակ չի ապրում ու զարգանում ժողովուրդը:

Հայ ցեղը- դա հայ հողն է՝ համակ բոց ու զորություն, որ ասում է անխոս- ես սնվում եմ նրանցով, որոնց՝ սնուցանում եմ:

Ե. դարում, կրակի բախտը կփորձի պարսկականության խոփը քարին զարկողը, հայոց թարմաշունչ ցեղայնությունն էր, որը այսօր կռվի պիտի կանչել Հայասպան թրքության և ցեղամերժ լենինականության դեմ:

Ցեղն է, որ մեր մեջ կապրեցնի և կզորացնի Հայաստանը, անգամ, Հայաստանից դուրս:

Ցե՛ղն է մեր ապավենը:

* * *

Ցեղը չի ծերանում, թիկնադարձություն չգիտի և չի պարտվում:

Նա ժամանակների վկան է, հավիտենական հայը, Աստծու գործակիցը:

Ցեղն արարիչ է, ժողովուրդը՝ արարած:

Ժողովրդի ուժածին մեքենան է ցեղը և նրա ուժակիրը, որն իր մեջ կրում է մի ինչոր տիեզերական և հարուցիչ ուժ:

Դա՝ այն հոգևոր շաղախն է, առանց որի ժամանակը հեշտությամբ է հյուլեացնում ժողովուրդներին:

Ժողովուրդը կարող է և շինարար լինել, ցեղի ազդեցությունը, սակայն, մի՛շտ էլ ստեղծագործ է:

Այդ իսկ պատճառով, ավելի մշակույթունակ է ցեղը:

Երբ չկա ցեղը՝ ժողովուրդների հոգևոր անդաստանը ավելի խծուծ է արտադրում, քան ցորեն:

Նվաստախոհ և նվաստախոս է ժողովուրդը, ցեղը մի՛շտ էլ թագավոր է և գահընկեցություն չգիտի:

Հակառակահորդոր է ժողովուրդը - և աննվեր ու անփառ, երբ նրա մեջ տկարացած է ցեղի ձայնը:

Հարանվանական է ժողովուրդը-կաթոլիկ է, բողոքական և այլն - ցեղը մի՛շտ էլ մի՛ է և ամբողջական:

Ժողովուրդ՝ ասել է դասակարգ և դասակարգային եսականություն, ցեղն ընկերային արդարություն է և հնարավոր հավասարություն:

Ժողովուրդը կարող է և գիտենալ, ցեղը մի՛շտ էլ կա-րող է նաև:

Առաջինը կառաջանա գայթ ի գայթ, ցեղը՝ եռադարձ ալիքի սաստկությամբ:

Մեկը կայականություն է, մյուսը՝ ուժականություն - ցե՛ղը:

Ժողովուրդը՝ դա «Կարսն» է - ցեղը՝ Ղարաքիլիսան: Մինչև այս ռազմադաշտը մեր ժողովրդի ճակտին ես աստղեր չտեսա:

Ժողովուրդը հաշվետես ուղեղ է, ցեղը՝ ավելի սիրտ, որ անհաշիվ կերպով զոհաբերել գիտի:

Միայն ցեղին է տրված «հարյուրեզյան» զոհաբերությունը - ամենամեծը:

Ապրել օրը օրին, թելն ու ասեղը ձեռին՝ իր դրությունը կարկատելու գործի վրա - ահա՛ ժողովրդի գորշ առօրյան: Ցեղը, կարկատումի «քաղաքականություն» չգիտի:

Մի՛շտ էլ ամբոխանալու հակամետ է ժողովուրդը, ցեղն է, որ միաբան ու լարված կպահի ժողովրդի կամքը:

Ցեղը կարող է ժամանակավորապես և՛ պարտվել, բայց պարտվողականություն չգիտի:

Նրա մեջ ամեն ինչ նոր է, իսկ նորը հին է՝ իմաստությամբ շաղախված:

Նա գիտի նախատեսել, նախազգալ վտանգը և արհամարհել՝ միաժամանակ:

Ժողովուրդը, հաճախ, տարակույսի և վարանումի կմատնվի, ցեղը բնազդորեն գիտի իր կտրելիք ճամբան:

Մինչ ժողովուրդն արդարություն կխնդրէ - ցեղը կգործադրի դա:

Ժողովուրդ՝ դա ասել է կշիռ առա՛նց սրի-իրավունքի անզորությո՛ւն: Ցեղը՝ դա սուրն է, հաճախ սուրը, առանց կշռի:

Ժողովուրդը կխոստանա, բայց քիչ բան կտա, երբ ցեղունակ չէ:

Ցեղին, միայն ցեղին է տրված ժողովրդի ստրկության ծանր շղթաները արծվի թևերի վերածելու արվեստը: Նա՝ ստրկության մեջ իսկ, չի կորցնում իր պատմական ճամբան: Անցեղաշունչ ժողովրդին տրված չէ այդ բնազդական կարո-ղությունը:

Ժողովուրդը՝ դա հայ հոգու մարտիրոս կողմն է, ցեղը՝ հերոսական:

Ժողովուրդը մեռյալներ կտա, ցեղը՝ դյուցազուններ:

Մեկը սիրում է քարշ գալ ծանոթ ճամբաներում, մյուսը - ցեղը՝ դժվարակոխ ուղիներ է փնտրում:

Հելլենական Թերմոպիլը և հայկական Վարդանակերտը, Մարաթոնը և Ավարայրը, բուլղարական Շիպկան և մեր Սյունիքը - ցեղի շունչն է օծել այդ բոլոր ռազմավայրերը:

Ժողովուրդը՝ դա ա՛յն վախկոտն է, որին ուզեցին գործի ուղարկել և նա առարկեց - «դուրսն առյուծ կա»: Ցեղն իրենից դուրս առյուծ չի ճանաչում:

Ցե՛ղի արևը կարող է և թեքվել, բայց մայր չի մտնում:

Ցե՛ղն է մեր ապավենը:

* * *

Անասելիորեն կարևոր է ցեղի տեսակարար կշիռը:

Ժողովրդի մշտախռով տարերքն է ցեղը:

Ժողովուրդները միայն ցեղի միջոցով գլուխ կհանեն իրենց հոգևոր ինքնակառուցումը:

Ցեղը կաղապարիչ ուժ է:

Ժողովուրդը, մի՛շտ էլ, ցեղի թևերով - անցյալի և ապագայի ուժով է առնում իր թռիչքը:

Երբ ժողովրդի մեջ ցեղը չի շնչում, նա ծալում է արծվի իր թևերը: Երբ ժողովրդի մեջ արթուն չէ ցեղը- նա տառապում է հոգևոր ամլությամբ և քաղաքական համլետականությամբ:

Ո՛չ թե միայն ներկան, այլև ապագան իր սնունդն ստանում է անցյալից- ցեղից:

Ժողովուրդը ներկան է, ցեղը՝ երեկը, այսօրը և վաղը:

Առաջինը հաճախ կլանվում է ներկայով, երկրորդը հանում է մեզ ներկայից և ցույց տալիս անցյալն ու ապագան՝ իդեալ լույսի տակ:

Արթուն է ցեղը- ասել է՝ ժողովուրդն իր լսողությունը տվել է անցյալին, աչքը՝ ապագային: Դա ասել է՝ նրա անցյալը մշտական է, իսկ ապագան՝ նախօրոք ապրված:

Սակայն տկարացա՞վ ցեղը-ազգն այլևս «մի որդակեր շենք է, որ ո՛չ մի նեցուկ չունի և առաջին իսկ փոթորիկին պիտի կործանվի»:

Ցե՛ղն է մեր ապավենը:

* * *

Ցեղն ավելի՛ նրանք են ներկայացնում, որոնք այլևս մեկնել են մեր աշխարհից և նրանք, որոնք պիտի գան:

Երբ ժողովուրդը ցեղորեն կապրի - նրա կյանքում փրկարար դեր կկատարեն առավելապես նրա մեծ մեռելները, որոնց իշխանությունը և՛ արդար է, և՛ իմաստուն, և՛ զորավոր:

Իսկ ցեղորեն ապրել - ասել է պատմական հիշողությամբ վերապրել անցյալ սերունդների կյանքը՝ նրանց ճակատագրին կապելու մերը:

Ցեղ՝ ասել է իմաստություն, խստաբարոյություն և զորույթ:

Դա՝ Հայ Ատլասն է, որ իր ուսերի վրա հայկականության երկինքն է կրում:

Ցեղը զորութենական հայկականության օվկյանն է, որից սնունդ են առնում Հայ էության ծովը, լճակն ու վտակը:

Ցեղայնությունը - դա արյան միություն է, միությունը ճակատագրի, դա կրոնն է, լեզուն - դա ուժն է այդ բոլորի, առանց որի կա եսակենտրոն անհատների ամբոխ, բայց ոչ՝ ազգ: Այն, ինչ որ ունենք, որպես մշակույթ և ազդեցություն, ոչինչ է, բաղդատմամբ ա'յն բանի, որ ունի և պիտի տա մեզ ցեղի անսպառ ոգին:

Չկա ցեղը - կա ժողովրդի ստորարժեքության գիտակցությունը, կա այդ գիտակցության դառնությունը:

Ցեղից են գալիս հայ զենքի, բազուկի և գրչի բոլոր մեծությունները:

Երբ ցեղորեն կապրենք՝ մենք կօգտվենք մեր ցեղին հատուկ հերոսականությունից և գերագույն պատվասիրությունից, նրա կրոնական բոցավառությունից և մշակութային խանդից- նրա ո'ղջ զորութենականությունից:

Մինչ ժողովուրդը միջակություններ կծնի, ցեղի ինքնահայտնությունը տեղի կունենա հերոսների, սրբերի ու լուսակիրների միջոցով:

Երբ ցեղորեն ենք ապրում - ասել է ներքին, հզորացուցիչ հաղորդակցության մեջ ենք անցյալի մեծ առաջնորդների հետ:

Անցեղաշունչ ժողովուրդը կորովի և իմաստուն առաջնորդներ չի ունենա:

Ցույց տվե'ք ժողովրդին իր ցեղի արև - դեմքը, որ նա ինքնատեսությամբ բարձրացնի իր խոնարհ ճակատը: Հե'նց սրանում է մտավորականության, գրականության, եթե կուզեք, նա'և, հեղափոխական շարժումների դերը:

Անարժեք է գրականությունը, եթե դա ցեղի ոգու ինք-նահայտնությունը չէ, եթե նրա մեջ ցեղի ոգին չի ճառագայթում:

Երբ ժողովուրդը մեծ թևաբախումներ ունի, ասել է՝ ցեղաշունչ նրա գրականությունը- դա նշան է, որ նրա մեջ ցեղն է գործում:

«Զարթե'ք, փա՜ռք իմ», Շնորհալիաբար պիտի երգի հայ գրողը, եթե ուզում է արագացնել փրկարար ցեղացնցումը՝ հայ էության մեջ:

Ո'չ թե եվրոպականացում, այլ ցեղայնացո'ւմ. միա'յն ցեղը կարող է ազգային արժեքները համամարդկայնացնել:

Եվրոպականը պիտի ծառայեցնել որպես միջոց միայն՝ մեր սեփականը դրսևորելու և փարթամացնելու համար:

Ժողովուրդն ընդունում է օտար մշակույթն, ապազգայնանալով, ցեղը՝ ազգայնացնում է իր ընդունածը:

Անօգուտ է նմանողությունը: Ավելի'ն՝ դա ավարտում է մեր ցեղայնությունը: Ամեն նմանողություն ժողովուրդները կգնեն իրենց անհատականության կորուստի գնով:

Երբ արթուն է ցեղը՝ ժողովուրդը տեսնում է իր հոգու անբավ հարստությունները և իր գրականության միջոցով նրանք փռում՝ աշխարհի առջև:

Ցեղորեն չապրող ժողովրդի համար՝ համր է անգամ, իր հայրենի աշխարհը: Նմա՜նը կարող է խորթանալ անգամ իր հարազատ միջավայրում: Ցեղորեն ապրողն, ընդհակառակը, կարող է և' մեծ սփյուռքի մատնվել, ինչպես Իսրայելը, բայց մի'շտ էլ զերծ մնալ ներքին հոգեբանական կորստաբեր ցրումից:

Ցե'ղն է մեր ապավենը:

* * *

Ցեղակրոնությո՜ւն- ահա' համադարմանը, առանց որի հայությունը կմնա մարդկության քաղաքականապես ամենատնանկ մասը:

Ցեղակրոնությո՜ւն, դա անցյալապաշտություն չէ, ո'չ էլ հոգևոր պորտաբուծություն, ինչպես և՝ ո'չ ծույլ հուսադրություն, ոչ էլ՝ մեղկ ապագայապաշտություն:

Անցյալի պաշտամունքի և ապագայի մեծ հույսի ստեղծագործ կենակցությունն է դա, որ ժողովրդի հոգուն ամենաշքեղ հղացումներ է տալիս:

Ցեղակրոնն է նա, ո'վ ապրում է ցեղորեն՝ ցեղի կյանքով և ցեղի համար:

Ցեղակրոնությամբ պիտի փարատել մեր ժողովրդի ներքին տկարությունները:

Ցեղապաշտության կրակով պիտի մոխրացնել հնոտինն ու սնոտինը՝ մեր մտավորականության կյանքում:

Ցեղայնությո՜ւն - դա' է այն շաղախը, որ սերունդներին այնպես է իրար կապում, ինչպես կիրը՝ հոյակապ շենքի քարերը:

Երբ ցեղակրոն է ժողովուրդը - նրա սակավաթվությունը դառնում է երկրորդական:

Ժողովրդի համար իր խաղերի միջև եղած ցեղային հոդակապության սերտությո՛ւնն է էականը:

Ցեղն է ներգործունացնում ժողովուրդը, նա է տալիս ներգործուն մարդը- նախակարապետը ցեղային գերմարդու:

Ահա', թե ինչո՛ւ եմ ասում- ցեղակրոնության ճամբի դեպի քաղաքական փրկարար միակրոնություն:

Մեր մտավորականության է մնում աշխատել, որ ցե-ղակրոնությունը դառնա արդի հայ հոգու եռյակ ծևերը՝ նրա մտածումը, զգացումը և կամքը, մասնավորապե'ս կամքը:

Ցեղի գերազոր կամքը - ահա' ժողովրդի փրկության լծակը:

Ցե'ղն է մեր ապավենը:

* * *

Մինչ հայը իր ցեղի մեջ մարդկայնություն, թուրքն իր հոգում՝ գայլություն է մշակում:

Այդ իսկ պատճառով թուրքի մոտ ատելությունն ավելի՛ հարուստ զինարան ունի, հայի մոտ՝ սերը:

Թուրքը՝ դա իժն է, որ դեռ իր մոր արգանդում զին-ված է թույնով:

Նրան՝ մի հանցանք ներել, ասել է՝ երկու նորերը արտոնել:

Մեր ժողովրդի համար թուրքն անպարտելի է, ցեղի համար՝ արհամարհելի:

Թուրքը դեռ ծանոթ չէ մեր ցեղի բազուկի ուժին, մինչև հիմա նա գործ ունեցավ մեր ժողովրդի, բայց, գրեթե, երբե՛ք՝ ցեղի հետ:

Նրա զենքի հաջողությունը սեփական ուժի լիությունից չեր, այլ՝ մեր դիմադրության պակասից:

Ժողովուրդը կարող է և՛ մոռանալ թրքության հասցրած չարիքները, ցեղը՝ չի ների:

Ցեղորե՜ն, ցեղորե՜ն ապրենք, որպեսզի սրտով մեծ և զորավոր Վարդաններն ու Վահանները անպակաս լինեն Հայոց աշխարհում:

Ցեղն է ժողովրդի հոգևոր զինարանը. նախ այնտեղից առնենք մեր սպառազինությունը՝ թրքության դեմ:

Երբ ցեղն է գործում՝ Գարահիսարցի մի հյուսն դառնում է Անդրանիկ, և Սեբաստացի մի շինական՝ Մուրադ:

Երբ ցեղորեն կապրենք՝ ամեն մի հայ զոհի փոխարեն աշխարհ կգան երկու նոր վրիժակներ: Ցեղն է, որ ժողովրդի կրծքի տակ վրեժխնդրության հիդրան կապրեցնի:

Ցեղն է, որ ժողովրդի սուրը սրել կտա իր նահատակների գերեզմանաքարի վրա՝ այն ավելի՛ ևս հատող, զարհուրելի և հաղթական դարձնելու համար:

Ցեղը՝ դա ժողովրդի սրտին նստած շանթակիր ամպն է:

Ցե՛ղն է մեր ապավենը:

* * *

Որքան տիրական է ցեղի ազդեցությունը ժողովրդի կյանքում, այնքան հեշտ է ինքնապաշտպանվում վերջինս:

Ժողովուրդը անճգնություն է, ցեղը՝ մտրակող կամք:

Ժողովուրդը դպիրներ է ծնում, ցեղը՝ մարգարեներ:

Ժողովուրդը նահանջելու տրամադիր զինվորն է, ցեղը՝ միշտ էլ Վահագն:

Ցեղն արիություն է, նաև՝ արիապաշտություն. հասկանալի է, թե ինչո՞ւ հեթանոս հայության իմաստությունը Վահագնին էր նվիրել բոլոր ամիսների 27-րդ օրը:

Խաղաղության ժամանակ, գուցե և կարելի է ապրել առանց ցեղի, վտանգի ժամանակ՝ երբե՛ք:

Ցեղը՝ դա ճակատամարտերում ճերմակած հազարա-վերք զորավարն է, որ միշտ էլ կերիտասարդանա վտանգների ժամանակ:

Ժողովրդի ուղեցույցն է ցեղը. նա իր մեծ մեռելների գերեզմաններով է նշանադրում ժողովրդի փրկության ճամբան:

Ցեղը՝ դա աստվածանման Հայկն է, որն իր եռացող զայրույթը եռաթևյան աղեղի մեջ դրած՝ թշնամուն կուղղի:

Դա ա՛յն խորախորհուրդ ուժն է, որ Նպատ լեռան վրա լարված պահեց Մեծ Պարթևի երկնաբարձ բազուկները, մինչև որ հայերը հաղթեցին:

Դա հայ սպարապետի հպարտանքն է, որ սաստեց թշնամուն՝ «Եթե հարվածը իմն է՝ չի փրկվի»:

Ցե՛ղն է մեր ապավենը:

* * *

Այս կամ այն ցեղը մոտավոր ճշտությամբ դիմագծելու համար՝ նրան պիտի դիտել իր հոգու հայելու՝ իր կրոնի մեջ, որովհետև ցեղի մոտավոր ինքնահայտնությունը հնարավոր է միայն իր աստվածների միջոցով:

Իր մտաբարոյական զարգացման չափով, ցեղն իր կրոնի մեջ դնում է իր հոգեբանական գծերը, իր աշխարհզգացությունը, իր բնազանցական էությունը:

Հայը լինելիական է- հաստատում է հայոց հեթանոս կրոնը: Լինելիակա՛ն է հայը - ահա՛ ակն ու աղբյուրը մեր մեծ Հույսի և Զորույթի: Այս է, որ ի ուրախություն թուրքի, դեռ չի գիտակցում հայ մտավորականությունը՝ իր մեծամասնության մեջ:

- Պիտի մեռնի՛ անհատը, որ ապրի դասակարգը- պատգամում է մեծամասնականությունը:

- Մեռի՛ր դասակարգ, որ ապրի ազգը- ասում է ֆաշիստականությունը:

- Թո՛ղ մեռնեն երկուսն էլ՝ անհատ, թե դասակարգ, որ ապրի ցեղը,- ասում է Հիտլերականությունը:

Տեսնո՞ւմ էք, որ Հեգելի, Ֆիխտեի, Նիցշեի հավիտե-նականի փիլիսոփայությամբ թրծված Գերմանիան է, որ ճգնում է ոտքի հանել ցեղը:

Իսկ հա՞յը - ավա՜ղ, հայ մտավորականությունը ցեղահաղորդ չէ և՛ այսօր: Նա ծանոթ չէ իր ցեղի հոգու կարելիություններին և այդ իսկ պատճառով շարունակում է կառչած մնալ իր վտիտ ժողովրդասիրության՝ առանց օգտվել կարողանալու իր ցեղի զորությունից: Նա շարունակում է մնալ քաղաքականապես սնանկացած մի ժողովրդի անզոր

մտավորականությունը, երբ պատմական վայրկյանը նրանից պահանջում է լինել ցեղի ընտրանին:

Ցեղերի գոտեմարտ կա այսօր - ոչի՛նչ են ժողովուրդները- անանախընթաց գոտեմա՛րտ, որին չմասնակցել սեփական արյունով- նշան է պատմական փոքրոգության: Դա նշան է, որ հայ մտավորականությունը դեռևս տեր չէ եղե-ռաբար ապրված մի նոր իմաստասիրության, որ նա օտար է իմաստասիրական հերոսության, ինչպես և անծանոթ՝ հայ ճակատագրի ճշմարիտ իմաստասիրության:

Այսօրը՝ նո՛ր օր է - հասկանա՛նք այդ, և այն, որ հայ մտավորականությունը երբե՛ք չի ունեցել ավելի մեծ և պատասխանատու դեր:

Վայրկյանը, որ ավելի՛ քան ճակատագրական է, պահանջում է նախ՝ հերոսական բարոյականության և մտածումի, ապա՝ մեծագործության և ինքնաողջակիզումի ընդունակ մի մտավորականություն:

- Գերազանցի՛ր և պիտի հաղթե՛ս,- ասում է աշխարհն ազգերին: Եվ հայը միայն ցեղակրոնությամբ կարող է գերազանց հանդիսանալ, որովհետև գիտենք՝ հրաշունչ ցեղայնությունն է նրա էության հիմնական կշռույթը:

Ցե՛ղն է մեր ապավենը:

* * *

Ժողովուրդը գործում է, ցե՛ղն է, սակայն, իրականացնողը: Բավական չէ գործելը, իրականացնե՛լ է պետք, հասկանա՛նք այդ: Հասկանա՛նք նաև, որ բոլոր տեսակի հաղթանակներ տարվում են նախ՝ ցեղի ոգու քիմիարանում:

Ժողովուրդը կարող է և հարմարվել իր նվաստ վիճակին, ցեղի համար, սակայն, անդարձ չեն աշխարհի վճիռները:

Նրա համար անսրբագրելի չէ Լոզանը, հավատացե՛ք:

Երբե՛ք, ա՜հ, երբե՛ք հայ անվան շուրջն ա՛յնքան ամոթանք չէր կուտակվել, որքան վերջին տասնամյակի ընթացքում:

Եվ հենց սրանումն է մեր դրության փշեպսակը, ինչպես և մեր փրկության գրավականը՝ միաժամանակ:

Չէ՞ որ գերման ցեղի քաղաքական միության գիտակցությունը ծնունդ առավ և զարգացավ տառապանքի և նվաստության դպրոցում:

Ցե՛ղն է ժողովրդի հոգևոր ոսկեփոխը:

Այսօրը՝ նո՛ր օր է - ու գիտի այդ՝ գիտի փրկարար ճշմարտությունը:

Այսօր, երբ մեր Հայրենիքում կարմիր գերեզմանափորները հայոց ցեղն ու աստվածն են թաղում, և նրանց բրիչների ձայնն արձագանքում է խորհրդային գծից դուրս. մեր այս վշտաշունչ օրերին, երբ թուրքը՝ Լոզանից ծեռք բերած անպատժության արտոնագիրը ծոցը՝ բաց ճակատ շրջում է արևի տակ և իր յաթաղանից մազապուրծ հայության ոչնչացումը որոճում - այս, մեզ համար անփառունակ օրերին, երբ չարագուշակ բուերն են հսկում մեր հավաքական ճակատագրին - թո՛ղ ցեղակրոնության խոսքը հնչի որպես կազդուրիչ կանչ:

Չէ՛, թե՛, Մասիսը - հայոց ցեղայնության հրաբուխը-դեռ չի շիջած. նո՛ր, մենք նո՛ր ցեղաշարժերի կսպասենք՝ մեր արյան մեջ զգալու ներկայությունը անցյալի և վաղվա հաղթական հայության: Մենք ասում ենք - մի՛շտ էլ արդար է, որ մեր կյանքում օրենսդիր և առաջնորդ է ցեղը և ո՛չ թե ժողովուրդը:

Արթնացա՞վ ցեղը՝ մենք վերստին կբռնենք հավիտե-նականության ձեռքը և կռվի կկանչենք անարդար ժամանակը:

Եվ կհաղթանակենք, քանզի ցեղի աստվածները - Հայկն ու Վահագն - պիտի բարձրացնեն շանթընկեց մեր բազուկը և վանեն նրա հարվածները:

Ցե՛ղն է մեր ապավենը:

«Խռովք», Սոֆիա, 1932, թիվ 1:

ՑԵՂԱՅԻՆ ԱՐԹՆՈՒԹՅՈՒՆ[54]

ԻՄ ԽՈՍՔԸ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՆՈՐԱՀԱՍ ՍԵՐՈՒՆԴԻՆ

ԽՈՍՔ ԱՌԱՋԻՆ
Ի՞ՆՉ Է ՑԵՂԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքական վայրկյանը, որ կապրի հայությունը, պատմական է և գերագույն:

Այդ գիտակցությունը խռովքի է մատնել մեզ:

Այլևս սուր կերպով զգացվում է, որ բախտորոշ անկյունադարձը մոտ է, և որ նրանից է կախված մեր ժողովրդի լինել-չլինելը: Խորապես գիտակցվում է այլևս, որ օրվա մտայնությամբ, անպատիժ կերպով, չենք կարող շարունա-կել մեր անհայրենիք գոյությունը:

- Ի՞նչ, ի՞նչ է պատրաստում մոտիկ ապագան մեզ համար- ահա՝ չարչարող հարցը, որ վճռապես դրվում է հայ մարդու առջև:

Այդ հարցին պետք է պատասխանել մի այլ հարցով՝-թե զորութենական ի՞նչ կարողություններ կան թաքնված մեր ցեղի էության մեջ:

Իսկ այդ հարցին կարող է պատասխանել ցեղաճանաչը միայն:

Արդարև՝, առանց ցեղային ինքնաճանաչումի՝ անկարելի է զերծ մնալ սեփական ուժերը ստորագնահատելու, ինչպես և գերագնահատելու աղետալի սխալմունքից :

Ավելի'ն կա:

Մի ժողովուրդի էության ստվերային կողմերը ոչ թե միայն կասեցնում, այլև հաճախ անկարելի են դարձնում նրա դրական հատկությունների զարգացումը, առանց որին, ի հեճուկս Հայաստանի և հայության թշնամիների, մեր քա-ղաքական ճակատագիրը պիտի շարունակի պահել իր անօրինակ դաժանությունը:

Այո', ժողովուրդների անզորության և դժբախտության ամենաներգործոն պատճառը՝ իր սեփական էության մասին ունեցած տգիտությունն է, անինքնաճանաչությունը- իմա՝ անցեղաճանաչությունը:

Մերօրյա հայությունը ծանոթ չէ այն հոգեբանական օրենքներին, որ ժողովուրդների զարթնումը կկառավարեն, այդ իսկ պատճառով նա չի աճում հոգևորապես:

Դեռ իր խորքին անծանոթ է հայությունը, և դրա համար էլ պարտվողական է:

Նա դեռ չի սրբել իր աչքերը՝ իր հոգու միջոցով աշ-խարհը, իրերը և իր սեփական ուժերը անսխալ կերպով տեսնելու համար: Նա դեռ չգիտի չափն իր հոգևոր զորութենականության, նա չի' զգում իր զորութենական կարողությունները և չգիտի, թե ի՞նչ պայմանների տակ կարող է զարգացնել ու կիրարկել այդ ուժերը:

Նա դեռ չի զգում իր ուժն և չգիտի, թե ի՞նչ կարող է դառնալ որպես ցեղ:

Եվ հենց այդ է պատճառը, որ նա դեռ չի գտնում թե իր ներքին կռվանը և հաստատ հենակետ չունի: Նա հոռետես է, անասելիորեն պարտվողական: Իսկ ժողովուրդները գերազանցորեն լավատես են, զորավոր, վճռական, երբ սուր կերպով կզգան երկու բան՝ իրենց ներքին ուժը և իրենց ճակատագիրը բարեփոխելու համար աշխարհի հետ փոխանակած հարվածների քաղցրությունը: Դեռ այդպիսին չէ հայը, որովհետև ցեղաճանաչ չէ:

Ինքնաճանաչ չէ մերօրյա հայը:

Նրա համար հայոց պատմությունը անզորության և պարտության, կոտորածների և տեղահանության տխուր նկարագրությունն է, և ո'չ ավելին:

Իսկ այդօրինակ ըմբռնումը սեփական պատմության մասին այլ բան չէ, եթե ոչ մի բացասական և աղետային ինքնաներշնչում:

Արդ թե ինչո՞ւ պետք է խորացնել մեր պատմական հիշողությունը՝ վերապրելու մեր ցեղի կրած-անցած պատմական ողջ ճամբան: Առ այդ մեր անցյալին պետք է մոտենալ մեր պատմության խորիմաստ ուսումնասիրությամբ: Պատմագիտական լույսի տակ պետք է դնել մեր ցեղի գոյության և կյանքի ծանրակշիռ խնդիրները, որոնց անսխալ լուծումից է կախված մեր լինել-չլինելը: Հետևաբար, դառնանք ցեղաճանաչ, քանզի միայն նմանն է դառնում ակտիվ ուժ, քանզի ժողովուրդները միայն ինքնաճանաչությամբ են դառնում որոշ աշխարհայեցողության տեր, իսկ նմանը դառնում է ավելի ստեղծագործ:

Ցեղաճանաչությունից զուրկ ժողովուրդը իր նորաբույս սերունդին կտա սխալ դաստիարակություն, կունենա սխալ քաղաքականություն և սխալ ռազմավարություն:

Հայոց ցեղայնության անծանոթ մանկավարժը, զորականը և քաղաքական գործիչը կարող են գործել կուրորեն միայն, առանց գիտական հիմունքի: Իսկ գիտենք, որ ազգերի ճակատագիրը առավելապես կախված է իրենց դաստիարակությունից, արտաքին քաղաքականությունից և ռազմավարությունից, որոնցից առաջինը կրթում է նրանց ներքին ուժը՝ կատարելագործում ցեղը, իսկ երկրորդը և երրորդը այդ ուժից իմաստնորեն օգտվելու կարելիություն են ընձեռում նրանց:

Սեղմ ասած՝ բացարձակապես անկարելի է անսխալ դաստիարակություն, քաղաքականություն, ռազմավարություն մշակել՝ առանց սեփական ցեղի ոգու հիմնական ճանաչումի:

Արդ, թե ի՞նչու եմ ցեղակրոնություն քարոզում:

Ցեղակրոնություն, ասել է՝ ցեղաճանաչություն, ջերմաջերմ պաշտամունք դեպի ցեղի փառահեղ անցյալը, ապա ստեղծագործ հավատ դեպի ցեղի մեծ ապագան:

Ցեղակրոնությունը հայ կյանքի բարձրացող նոր ալիքն է մեր ազգային հոգևոր կազմվածքի, բնատրամաբանական հակազդումը՝ իրեն մահվամբ սպառնացող օտար միջավայրերի դեմ:

Ահա' թե ինչո'ւ կանգնած վաղվա շեմին՝ մեր անմեռ ցեղի մեծ ապագայի հավատքով ես իմ խռովիչ կանչն եմ ուղ-ղում օտար աշխարհներում ցրված մեր նորահաս սերունդին՝

Եղի'ր արթուն, արթո'ւն ցեղորեն:

Եղի'ր ցեղակրոն:

ԽՈՍՔ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՅԸ ԵՎ ԹՈՒՐՔԸ

Թուրքը, համաշխարհային պատերազմի օրերին, իր տկարության սարսափից (լա'վ ըմբռնիր այդ, ասացի՝ իր տկարության սարսափից) խթանված, հղացավ ծրագրերից ամենադիվայինը՝ բնաջնջել մի հինավուրց ցեղ, որ դարե-րով իր շուրջը միայն լույս և քրտինք էր սփռել:

Հղացավ և գործադրեց:

Եվ մի օր, թրքահայության ողջակիզումի առաջին օրը, բարձրացող արևը Հայաստան երկրի փոխարեն տեսավ մի կատարյալ գեհեն: Տեսավ խաչի նսեմ ստվերն ընկած մեր չորսհազարամյա

հայրենիքի վրա: Տեսավ, թե ինչպես մի խաղաղասեր ազգ՝ վախկոտ, բայց հարձակողական, փոքրոգի, բայց ավերիչ-կիրոսեր մի անզեն և անպաշտպան ժողովրդի դեմ՝ այն իր պատմական հայրենիքից արմատախլելու խելագարությամբ: Տեսավ թե ինչպես կմոխրանային հազարամյա օրհնությամբ լեցուն գյուղերը մեր, կպղծվեին վանքերը, եկեղեցիները, գրադարանները՝ հազար: Տեսավ խուժդուժ գործը տապարի, յաթաղանի, կապարի - ամեն տեսակի և չափի գործիքների, որոնցով սպաննել և ավերել կարելի է: Այլևս Հայաստանով անցնող գետերն արյուն էին կտրել, իսկ կիրճերը դիակներով լեցուն: Տեսավ թե ինչպես իրենց ծնողների և ամուսինների ներկայությամբ կխլեին և կբռնաբարեին կանայք: Գործի վրա էր թրքական սանձարձակ շնությունը, որ անասուններին իսկ կգերազանցի: Հայ տղամարդիկ՝ անկարող դիմանալու՝ անձնասպան կլինեին, և սարսափից խելագար մեր աղջիկները խմբովին Եփրատի ալիքները կգրկեին: Տեսավ թե ինչպես հայրը հավաքեց իր ընտանիքը և այրեց ողջ. թե ինչպես սովահար հայ մանուկները իրենց մորթված մայրերի դիակներին կպած՝ ծիծ կծծեին: Շատ տեղերում էլ հայ մանուկների ջարդը խաղի վերածվեց. նրանց ոտքերից բռնած՝ իրար զարնելով կսպանեին:

Արևը տեսավ տուն, տանիք ու ճամբաներ՝ արյունով ներկված: Տեսավ բարձրունքների վրա, գետափերին և ձորերի մեջ՝ մահվան հետ կռվի մտած արնաթաթախ հայորդիներ: Տեսավ թե ինչպես «շներն ու շնագայլերը մեր սիրելիների սրտերը կկրծեին»: Տեսավ իրենց գողգոթայի ճամփին, անասունների պես, վաճառքի հանված հայ կանանց ու մանուկներ, և լուսավորեց խաչի ճամբան ծերերի, կաղերի և կույրերի:

Հայոց արևը տեսավ այդ ամենը և խավարեց այդ օրը:

Եվ մի օր էլ եղեռնի վերջին օրը, երբ այլևս ամեն ինչ տխրորեն կատարյալ էր, բնությունը նստեց սգալու Հայոց Աշխարհի մոխրակույտերի վրա...

Եվ թուրքը անօրինակ շնականությամբ ասաց Եւրոպացուն՝ «ջարդից վերջը աղոթք արի և արդարացա»:* Իսկ դիվանագիտական խարդավանքների վարպետ Մոսկվան, հանձին Ռադեկի, չուշացավ արդարացնելու Թուրքիայի հայաջինջ քաղաքականությունը**. «Իթթիհատը իր երկրի անկախությունը պահելու համար արեց ինչ-որ

* Մի թուրք հարյուրապետի խոսքերը գերմանացի Ֆոն Գորդոնին (ծանոթ. հեղինակի):

** Տես. բոլշևիկյան «Նոր Աշխարհ»ի թիվ 3-ը, 1922, հոկտեմբեր, Թիֆլիս (ծանոթ. հեղինակի):

կարող էր: Նա վճռեց ոչնչացնել ամբողջ հայ ժողովուրդը: Եվ կասկածից դուրս է, որ Պոլսի մեջ նստած իթթիհատական ղեկավարները այս հարցի մեջ շարժվեցին պետական անհրաժեշտության գաղափարով: Թուրքիայի համար խնդիրը շատ սուր էր դրված- ապրել կամ մեռնել: Նրանք նախընտրեցին ապրել»:

Այսպե՛ս, այսպես խոսեց կարմիր հրեշը՝ սեղմելով Թուրքիայի հայաջինջ ձեռքը: Քրիստոնյա աշխարհն էլ լրբություն ունեցավ, որպես կարեկցանքի արտահայտություն, մեզ նետելու մի երկբառ նախադասություն՝ «մարտիրո՜ս ժողովուրդ»:

Իսկ հա՞յը... Դեռ կսպասի, թե նրա որդիները մեկ-մեկ նեմեսիսներ[55] պիտի դառնան՝ իրենց այնքա՜ն արդար ու աշխարհաշեն ցեղը քարին զարնող դահիճը պատուհասելու համար:

Հայը տեսավ ու զգաց հայաքանդ եղեռնի ահավորությունը միայն: Մարդկության հետ, սակայն, մենք էլ դեռ չենք չափել վեհությունը այն աստվածային շարժուձևի, մեծությունը մարդազգի պատմության մեջ նախընթաց չունեցող այն գերմարդկային արարքի, որով մեր ժողովուրդն իր կեսը ողջակիզեց՝ ցեղի արյունը, հոգի՛ն փրկելու համար:

Մի շարք օտար ժողովուրդներին հատուկ տկարությամբ, իմա՛ ցեղուրացությամբ. հայն էլ կարող էր փրկել իր ֆիզիկականը, բայց յոթնիցս փառք իրեն, նա չունեցավ այդ տկարությունը գիտակցորեն, թեկուզ շատ տեղերում կրավորական հերոսացումով, նա զոհեց կեսը իր մարմնից՝ ցեղի էության դեմ չմեղանչելու համար: Նա դարձավ իր սեփական Զոհը և Զոհարարը՝ միաժամանակ:

Եվ փրկվեց ցեղը:

Ահա՛, նորահա՛ս սերունդ, ահա՛ ցեղը մեր, որի անունով կանչում եմ և ասում քեզ.

- Եղի՛ր ցեղակրոն, ցեղակրո՛ն եղիր, քանզի կտրվելով ցեղից՝ անհատը մեռնում է հոգեպես, ինչպես և հաշտվում իր ցեղի մահվան հետ, քանզի ցեղակրոնությամբ, միա՛յն ցեղակրոնությամբ վահանավորված հայությունը կարող պիտի լինի՝

Հաջողաբար պատվար կանգնել օտար միջավայրերի այլասերիչ ազդեցության դեմ.

Հաշվեհարդարի ենթարկելով ներքին աղետաբեր ճակատը, որից մեծապես կօգտվեն թուրքն ու բոլշևիկը, փրկարար քաղաքական միադավանության մղել սփյուռքի հայությունը.

Հայ հոգին պահել անառիկ ազգասպան լենինականության հարձակումների դեմ:

Եվ զինաթափել գոյ և գալիք թրքական վտանգը, որ մահվամբ կսպառնա մեզ:

Այո՛, ցեղակրոնությունը, մեր դավանանքը, որ շոշափում է աղերսի հիմնական գաղափարը և որով անհատներն ու սերունդները կապվում են իրենց գերագույն ծնողին՝ ցե-ղի՛ն, ցեղակրոնությո՛ւնն է մեր ապավենը:

ԽՈՍՔ ԵՐՐՈՐԴ
ԱՂԵՏԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Թուրքը փորձեց բնաջնջել հայությունը և հաջողե-ցավ մասամբ:

Ի՞նչ, ա՞յս է եղածը:

Միայն արևմտահայության երեք քառորդը կորցրինք. սրա և հարյուրավոր սերունդների երկրավոր ստացվածքն ամբողջապես:

Միայն ա՞յս է մեր կորուստը:

Հազարամյակներ ճամփու դրած Հայոց Աշխարհը մնաց անհայ և ավեր:

Միայն սրանո՞վ է մեզ վիճակված աղետի ահավորությունը:

Ո՛չ, դժբախտաբար, ո՛չ:

Աղետն ավելի ահավոր է, քան մարդկայնորեն կարե-լի է ըմբռնել:

Մեր կորուստը միայն մարդկային չէր, նյութական չէր միայն: Թրքական հարվածը ուղղված էր ոչ թե միայն Հայ մարմինին, այլև հայ հոգեկանին:

Եվ դա պիտի ունենար իր վճռական ազդեցությունը հայ հոգեբանության վրա:

Եվ ունեցավ:

Այլևս գիտությամբ հաստատված իրողություն է աղետների ազդեցությունը մարդկային հոգեբանության վրա:

Հաստատված է և այն, որ անհատները տարբեր կերպով են դիմագրավում դժբախտությունը: Ոմանք զոհ են գնում այն տխուր հոգեվիճակին, որ կոչվում է անկումի հոգեբանություն:

Այդ դեպքում բարոյալքվածները կորած են համարում ամեն ինչ և թեթև սրտով հրաժարվում անձնական, թե ազգային ամեն տեսակի իդեալից և սրբությունից: Նմանների մեջ գլուխ են բարձրաց-նում ամենաստորին բնազդներն ու կրքերը՝ չարախոհություն, նա-խանձ, պարտվողականություն, և ենթակային մղում համապատասխան արարքների: Օրինակ, թշվառամիտները, որոնք հայոց քաղաքական դատը խորհրդանշող Եռագույնը կհայհոյեն:

Ոմանք էլ իրենց ապրած «նավաբեկության» հակազ-դում են դրականապես-այն բարձր հոգեվիճակով, որ հոգեգիտության մեջ հայտնի է վսեմացում անունով: Այդպիսի-ների մեջ ավելի ևս շեշտվում

են բարոյական, սոցիալա-կան, հայրենասիրական և այլ ազնիվ կրքերը: Սրանք՝ շնորհիվ իրենց դրական հակազդումին, դառնում են հոգեպես ավելի կայտառ, բարեսեր և անընկճելի: Մասնավորապես մեծ աղետների առաջացրած հոգևոր շփոթների ամոթալի օրերում սրանք կատարում են բարոյական շանթարգելի դեր փրկելով և պահպանելով ազգային իդեալներն ու արժեքները: Օրինակ, ցեղավար Դաշնակցա-կանները:

Ապրիլյան Եղեռնը, որի հողմը վերապրողներին բևեռից բևեռ ցրեց, բնականորեն, բևեռացումի պիտի մղեր և հայ հոգին:

Վերապրողներից մեկը ընկավ Ամերիկա և այնտեղից իր ծանոթին այսպես գրեց:

«Ահավասիկ քեզ ցավալի մի լուր ևս. մենք ամերիկյան զինվոր պիտի գնանք. Ամերիկան էլ պատերազմի մեջ մտավ. ուր որ գնանք, ազատում չկա մեզ»...

Զարհուրելի է, չէ՞- հավասար չափով և զզվելի- մտածել, թե այդ օրերին իսկ թրքական գեհենից անցած հայ մարդը մնացել է զինատյաց:

Հոգեբանական այդ տիպը պիտի դառնա մեր օրերի պարտվողականը- մեր ներքին կրավորական թշնամին:

Մի ուրիշը, նույնպես վերապրող, ընդհակառակը, այսպե՛ս պատգամեց իր եղբորը.

«Այլևս ձեզ կմնա վրեժի ավետարանը համբուրել և գործադրել»:

Սա առաջինի հակոտնյան է. պայքարունակ և զոհաբերելու հոժար հայը, որի կյանքն այսօր էլ մի հատիկ իմաստ ունի-ծառայել իր ցեղին:

«Բոլորն իրենց զավակները նետեցին. և շալկի տարա մինչև Արաբստան և հետ բերի»,-ահա՝ սրբասուրբ հայ մայրը, որի ցեղամերժ զավակը մի օր գաղութներում- անկումի վարդապետությամբ մոլորված- իր զզվելի թուրքերենով պիտի գոռար մեր երեսին. «Լենինն է հայրս»:

Մի խումբ որբեր էլ ընկան Արաբիայի անապատները, որոնցից ամենամեծը տաս տարեկան: Ուղտարածներ էին դարձել և միայն մեկը գիտեր իր հայ լինելը:

Մի օր, երբ ուղտերը կորոճային կիզիչ արևի տակ փռված, որբերից տարեցը- ահ, փառք մեր ցեղի ազնվական արյունին- ավազի վրա իր ձեռնափայտի ծայրով գրեց հայոց Այբը լուսածին և սրբազան սարսուռով հայտնեց իր ընկերներին, թե իրենք հայեր. են, հա՛յ-ծախված օտարին:

Դժբախտ փոքրիկների աչքերը թացացան և անապա-տի ավազը անհագորեն նրանց արցունքը ծծեց:

Ու այնուհետև հայ այբուբենը լուսավորեց և ջերմացրեց մեր որբերի կյանքը և մի օր էլ՝ նրանց ելած ճամբան:

ԽՈՍՔ ՉՈՐՐՈՐԴ
ՀԱՅԻ ԵՎ ԹՈՒՐՔԻ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Կա մի ողբերգական թյուրիմացություն, որը պետք է փարատել, օր, ժամ, վայրկյան առաջ պետք է փարատել՝ ողջակիզված հայության և ճշմարտության հարգանքի տուրք տված լինելու համար:

Սխալ և անարդար է կարծել, թե հանկարծակիի եկած արևմտահայությունը Եղեռնի օրերին դրսևորեց իր հոգու միայն մարտիրոս կողմը:

Ո՛չ, ո՛չ: Եթե ուշի ուշով վերլուծեք անօրինակ Եղեռնը ամբողջացնող դեպքերը, խորապես պիտի համոզվեք, որ հայը իր հոգեկան արիությամբ մեծապես կգերազանցեր թուրքին:

Այդ օրհասաբեր օրերին Թուրքահայաստանից կարելի էր լսել «լացը շղթայված հերոսության», իսկ որոշ վայրերում՝ մռնչյունը դավադրված առյուծների:

Հասկանանք հետևյալը:

Մարտիրոսանալու կամքը եղել է և կմնա հոգու գերագույն հերոսականությունը: Կրավորական հերոս-ահա թե ով է մարտիրոսը, որ արհամարհել գիտի մահը: Եվ ո՞վ է հերոսը, եթե՝ ոչ նա, որ ներգործորեն մարտիրոսանալու կամք ունի:

Էականն կյանքն արհամարհել և մահվան երեսին ժըպտալ գիտենալն է: Իսկ այդ բանին ընդունակ է թե՛ մեկը, և թե՛ մյուսը:

Ամեն հայ ընդունակ է մարտիրոսանալու, իսկ ամեն մարտիրոս կարող է հերոս լինել,- մի բան, որին ընդունակ չէ թուրքը:

Վայրագությունը- այս մեկն էլ հասկանա՛նք- իր խոր արմատներն ունի մարդկային էության մեջ: Ըստ Շոպենհաուերի՝ մարդս ցավ է պատճառում ուրիշներին, իր սեփական ցավը մեղմացնելու համար: Այդ դեպքում՝ վայրագությունը մի տեսակ դարման է իր սեփական ցավի դեմ:

Թուրքական գազանությունն էլ պետք է բացատրել անհատ, թե հավաքական թուրքի հոգեկան տկարությամբ: Նաև՝ այդ տկարության նվաստացուցիչ գիտակցությամբ:

Թշնամու հաղթական բանակների առջև Թուրքիան արդեն սկսել էր հավաքել իր աշխարհագրական փեշերը: Ահա թե ինչու նա՝ իր սարսափից խթանված և իր ցավը մեղմելու բնազդով՝ իր տկարության վրեժը պիտի լուծեր անզեն հայից, որին վտանգավոր կհամարեր իր գոյության համար: Եվ նա իր կառավարության օրհնությամբ կազմակերպեց Ապրիլյան Եղեռնը, որի ժամանակ կիրարկած իր միջոցները ամեն բանից առաջ մատնում են երկչոտությունը թուրք ցեղի:

Թուրքն ի վաղուց անտի ճանաչված է որպես ահաբեկիչ ազգ-ահաբեկիչ իր վախկոտության պատճառով:

Սպանվի՛ր մեկը- ասել է Լենինը- և ահաբեկած կլինես հազար հոգի:

Սպանվի՛ր հազարը- բոլշևիզմի քուրմից շատ առաջ ասել է թուրքը- և ահաբեկած կլինես մի ամբողջ ժողովուրդ:

Եվ դարեր շարունակ՝ թուրք պետության կառավարելու միակ մեթոդն ու զենքը եղել է ահաբեկումը: Ներսը՝ յուրայիններին ջեննեթյան խոստումներով, իսկ դուրսը՝ այլացեղերին ահաբեկումով կառավարել,- ահա՛ թուրք պե-տական իմաստությունը:

Պատմությունը կվկայի, որ թուրք առաջնորդությունը սպանությամբ, ավարի և ավերածությամբ է սնուցել իսլամ խուժանի մոլեռանդությունը:

Կոտորա՛ծ- ամեն պատերազմից առաջ- իսլամ զանգ-վածները գազանացնելու նպատակով: Կոտորած - ամեն պարտությունից հետո՝ զանգվածները պարտվողական ոգուց զերծ պահելու համար:

Բարբարոս է թուրքը, իսկ բարբարոս՝ ասել է տգիտություն, անբարոյություն և վախկոտություն:

Երկչոտ և բարբարոս, այն տարբերությամբ, որ նա չի փախչում, այլ հարձակվում է իր վախից: Ցավ պատճառելու ուժեղ հակում ունի նա- սադիստ է, իսկ հոգեբանական այդ տիպը միշտ էլ երկչոտ է:

Նաև՝ իր ոճիրին վերադարձող է թուրքը, վախկոտ ստրուկ է նա և մի հատիկ բան գիտի՝ կատարելապես ստրկանալ և ստրկացնել:

Ավելի՛ եղեռնամոլ, ասել է՝ և վախկոտ է հավաքական թուրքը: Վախն ու կրոնական կեղծիքն են օրորել նրա պետական մանկությունը: Վախն է եղել նրա դաստիարա-կության հիմքն ու խարիսխը: Եվ այդ է պատճառը, որ նա միայն բռնակալներ է տալիս:

Թուրքը մահացուորեն տգետ է, իսկ նմանը չի կարող արի լինել: Նա ամենածույլն է ցեղերից, ասել է և անարին: Նա ճակատագրապաշտ է, իսկ նմանի անցյալը խեղդում է ներկան, և ժխտում ապագան,- ահա թե ինչու նա զուրկ է վերածնունդի և կատարելության գաղափարից: Նա չունի նաև ընկերային արդարության գաղափար:

«Ինչ որ Աստվածն է, այն էլ իր երկրպագողներն են»,- ասել է Արևելքի ալևոր իմաստությունը: Ալլահին վե-րագրված հատկություններով պետք է ճանաչել թուրքը: Աշխարհի ամենասեռակենտրոն ժողովուրդն է նա, որի շնաբարոյությունը սեռն իսկ փոխադրված է երկինք: Իսկ նմանը անասելիորեն անարի է: Արդ,

թե ինչու եմ ասում՝ թուրքը կարող է առյուծաշուն, առյուծակապիկ ծնել, բայց երբեք՝ առյուծ: Հայը հավիտենականության զգացումն ունի, թուրքը՝ իր անխուսափելի նահանջի և պարտության ներշնչումը,- մի բան, որ նրա հոգում առաջացրել է մարգարեի առասպելական կտակը, որն, ըստ Ղուրանի, պիտի բացվի Օսմանի ցեղի շիջանելից հետո: Հայն ամենավսեմ հասկա-ցողությունն ունի մայրության մասին: Թուրքը աշխարհի միակ ժողովուրդն է, որ մայր չունեցավ, չունի և պիտի չունենա:

Յոթնիցս նվիրական է հայրենիքի հասկացողությունը հայ մարդու համար. թուրքը հայրենիք չունի և պիտի չունենա, քանզի մայր և ընտանիք չունեցավ: Պետություն դեռ ասել չէ հայրենիք: Օրվա Քեմալիստանը երկիր է միայն և ոչ թե հայրենիք: Իսկ նման երկրամասերը օրհնված չեն, անառիկ չեն, ապագա չունեն:

Անհատների պես կան և ազգեր, որոնք երբեմն կհա-ջողեն, բայց ոչ իրենց սեփական առաքինությունների ուժով, այլ իրենց թշնամիների տկարության շնորհիվ: Նման-ներից է շնացեղ թուրքը, նա'խ թուրքը:

Թուրքիան վերականգնեց և կապրի երկրորդ Ռուսիա-յի շնորհիվ, և կպահվի երրորդ, գալիք Ռուսիայի համար:

Ահա' թե ինչու կհավատամ, թե բախտահաս Քեմալիստանի ապագայից ավելի հուսալի է անապատի ավազուտների վրա իր ծեռնափայտի ծայրով լուսակաթ Այբը գրող հայ որբի ապագան:

ԽՈՍՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ցեղակրոնությո'ւն - ա'յդ կթելադրի մեզ Ապրիլյան Եղեռնի խորհուրդը խորին:

Ցեղակրոն լինել՝ ասել է ապրել ցեղի համար, որի անունով մեռան հազարներն ու բյուրերը. ասել է՝ պատրաստ լինել ամեն վայրկյան մեռնելու այն դատի համար, հանուն որի մեր ցեղն իր կեսը ողջակիզեց. ասել է՝ մեր սրտի վրա կրել այն բոլոր վերքերը, որ թուրք բազուկը հայության մարմնին և հոգուն հասցրեց:

Ցեղակրոնությո'ւնը - այո', միայն այս ճամբով մեր անօրինակ տառապանքը կսկսի ծառայել մեր հավաքական գոյության իմաստին:

Ցեղակրոն լինել՝ ասել է ունենալ տառապանքն ըն-դունելու հերոսական կամք և այն հաղթահարելու կարողություն: Ասել է՝ այլևս փրկարար է մեր տառապանքը, և դա մեր ժողովուրդը կպատրաստի մի մեծ նվիրումի, և մի երջանիկ ապագայի համար:

Մարդկորեն- հասկանա'նք այդ- մարդկորեն կամ փախչում ենք տառապանքից կամ ընդունում այն:

Հետ այսու հայը՝ ցեղավար հայը վճռականապես պի-տի ընդունի այդ, բայց ոչ շոպենհաուերյան իմաստով:

Քաղաքական, թե հոգեբանական հոռետեսի համար միակ ցանկալի ելքը՝ տմարդի փախուստն է կյանքից, պայքարից, ցավից:

«Մի' պրպտեք անցյալը, սև վարագույրը թող ծածկի դա: Թո'ղ այդ օրերից, ժամերից, վայրկյաններից մինչև տարիներ խավար լինի և թվականի մեջ չգումարվի»,- այսպես գրեց մի աղետահար տղամարդ իր բարեկամին:

Սուր կորովաթափություն ապրած այդ մարդը պիտի դառնար մեր օրերի պարտվողականը և իր հոգու սևով ներկեր աշխարհն ու երկիրը:

Մի ուրիշն էլ այսպես ճանկռեց թղթի վրա.

«Տեսանք երեխաներ, որոնց սրտերը շները կկրծեին... Այսուհետև ինչպե՞ս կարելի է հանգիստ հոգով ապրել այս աշխարհի վրա: Այլևս մեզ ապրել չի' վայելի, մայրիկ»:

Այո', նորահաս սերունդ, այսուհետև չի' կարելի հանգիստ հոգով ապրել, և պետք չէ ապրել անդորրապես, եթե նույնիսկ այդ կարելի լիներ: Բայց և այնպես պե'տք է ապրել, ապրե'լ անհանգիստ հոգով, ապրե'լ թրքական եղեռնի ամբողջ հիշողությամբ, ապրե'լ ցեղորեն, ապրե'լ ամոթ համարելով մեկուսի և եսական երջանկու-թյունը, որ Հայաստանից դուրս այլ բան չէ, եթե ոչ մի կրկներևույթ կյանքի անապատում:

Չէ', չնմանվենք հոռետեսին, ոչ էլ էպիկուրյան վերա-բերմունք ունենանք դեպի կյանքը: Մոռացում չփնտրենք թեթևամիտ հաճույքների մեջ, այլ ընդունենք տառապանքը՝ որպես միջոց մեր հավաքական վերածնունդի և քաղաքական փրկության:

Ընդունենք այդ որպես «հրեղեն սուր, որ կպահպանի կյանքը մահից և անկումից»: Ընդունենք տառապանքը էդմոն Ֆլեդի ցեղաշունչ խոսքի իմաստով.- «Ես հրեա եմ, որովհետև ամենուրեք, ուր լալիս է մի ցավ՝ հրեան է լա-լիս»:

Այսպես, Մեծ Եղեռնի խորհուրդը պետք է հեղաշրջի հայության ներքին կյանքը: Այդ պետք է որոշի հայ անհատի և հավաքականության բարոյականը, փիլիսոփայությունը, աշխարհազգացողությունը: Այդ պետք է գունավորի մեր հոգեկան աշխարհը՝ սնուցանելով մեր ներքին մարդն ու հայը, հավիտենական հայը: Այդ՝ ցեղակրոնության պիտի տանի մեզ:

- «Ի՞նչն է հայորեն ճշմարիտը»,- հարցին՝ ցեղակրոնը պետք է պատասխանի. Հայաստանը կար և պիտի վերականգնվի Թուրքիայի անդամահատությամբ:

- Ի՞նչն է հայորեն բարին.

- Անընտրողաբար հարվածել թուրքն ու Թուրքիան:

- Ի՞նչն է հայորեն գեղեցիկը.

- Ապրել լեգեոնականության ոգով, և հասունանալ ցեղի մղելիք ճակատամարտերի համար:

Թրքատյացությունը: Այո՛, կատաղի է մեր ատելությունը, քանզի կտառապենք որպես հայ և որպես մարդ: Մեր մեծ տառապանքից պիտի ծներ մեր մեծ ատելությունը, որն այլ բան չէ, եթե ոչ հոգեբանական պատասխանը հայ տա-ռապանքի:

Ցեղակրոն չե՞ս, և չե՞ս ատում թուրքը, որ փորձեց գոյության գրքից ցեղիդ անունը սրբել՝ ասել է չես զգում այն վերքերն ու վիրավորանքը, որ թուրքը հասցրեց մեր ցեղին:

Արդ, թե ինչո՛ւ կեղծ և զզվելի կիռչակեմ հակադրո-շակյան «քաղաքականություն»ը, որի մեջ ցեղուրաց հայը դեռ չգիտի հասարակ ծիավորը տարբերել ասպետից: Ցեղակրոնություն կքարոզեմ, այո՛, քանզի պակասավոր կհամարեմ անցեղաճանաչ, անցեղահավատ, անցեղապաշտ հայը: Այսուհետև համանշանակ պետք է համարել անցեղա-ճանաչ և անհայրենասեր հասկացողու-թյունները:

Ցեղակրոնությամբ, ցեղակրոնությամբ միայն հայ հոգին պայքարի, դժբախտության ու կռվի մեջ ավելի հանդուգն ու կատաղի կդառնա, ինչպես առյուծը, երբ իր արնահոս վերքերն է տեսնում:

Ցե՛ղը, ցեղակրոնությո՛ւնն է մեր դավանանքը:

ԽՈՍՔ ՎԵՑԵՐՈՐԴ
ՑԵՂԸ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Այսօրը՝ նոր օր է:
Ով գիտի այդ՝ գիտի ճշմարտությունը:

Անասելիորեն ճակատագրական է ցեղային ազդակի նշանակությունը մի ժողովրդի վերածնունդի, ազգային ամ-բողջացման և պետականացման գործում:

Գիտենք հասարակագիտական այդ պարզ ճշմարտու-թյունը, սակայն, անկարելիության չափ դժվար է- «ի՞նչ է ցեղը»- հարցի սիրտը շոշափել:

Մարդաբանության ցարդ տված սահմանումներից և ո՛չ մեկն ընդունելի չէ ինձ համար: Ցեղ հասկացողությունը սահմանելու համար բավական չեն հին եզրերը: Նրանցով չի կարելի սպառել ցեղի ողջ տարողությունը:

Այո՛, ցեղային գործոնը ավելի բարդ իրողություն է, քան ենթադրվում է:

Դժվար է դա սահմանել գիտական լեզվով: այստեղ միայն հարաբերական գիտականության մասին խոսք կարող է լինել:

Ըստ մեզ, ասենք առանց տեսական խորացումների, ցեղն ավելի հոգի է, քան՝ կավ:

* * *

Մեր դարում, մասնավորապես մեր օրերում, ոչինչ այնքան չի տկարացնում ժողովուրդների պայքարունակության ոգին, որքան այն աղետալի մոլորանքը, թե իրենց ճակատագիրը բարվոքողը սեփական ճիգերը չեն, այլ ինչ որ արտաքին ուժեր:

Ավելի՛ պարզ:

Մի ժողովուրդ, որ իրեն պետք եղած ուժերը իրենից դուրս է փնտրում, կուրորեն իր պարտությունն ու անկումն է նախապատրաստում:

Հասկանա՛նք, որ ցեղի ուժակշիռը ավելի մեծ է, նրա կարողականությունը բյուրաբյուր անգամ ավելի հարուստ, քան՝ ժողովրդինը:

Այն ժողովուրդը, որ գիտի այդ, գիտի ճշմարտությունը, փրկված է նա:

Հայ ցեղը՝ հայ արյունն է, համակ բոց ու զորույթ, որ ասում է անխոս.- «Ես սնվում եմ նրանցով, որոնց սնու-ցանում եմ»:

Ցեղը չի ծերանում, թիկնադարձություն չգիտի, և չի պարտվում, երբե՛ք:

Դա հավիտենական հայն է, ժամանակների վկան, Աստծու գործակիցը:

Ցեղն արարիչ է, ժողովուրդը՝ արարած: Ժողովուրդի ուժածին մեքենան է ցեղը, և նրա ուժակիրը, որի մեջ կրում է մի ինչ որ տիեզերական և հարուցիչ ուժ:

Դա այն հոգևոր շաղախն է, առանց որի ժամանակը հեշտությամբ է հյուլեացնում ժողովուրդներին:

Ժողովուրդը կարող է և շինարար լինել, ցեղի ազդեցությունը, սակայն, միշտ էլ ստեղծագործ է: Եվ այդ իսկ պատճառով ավելի մշակույթունակ է ցեղը:

Երբ չկա ցեղը՝ ժողովուրդների հոգևոր անդաստանը ավելի խծուծ է արտադրում, քան ցորեն: Հաճախ նվաստախոհ և նվաստախոս է ժողովուրդը, ցեղը միշտ էլ թագավոր է, և գահընկեցություն չգիտի:

Հակառակահորդոր է ժողովուրդը՝ աննվեր ու անփառ, երբ նրա մեջ տկարացած է ցեղի ձայնը: Հարանվանական է ժողովուրդը- կաթոլիկ է, բողոքական, լուսավորչական և այլն - ցեղը միշտ էլ մի՛ է և ամբողջական:

Ժողովուրդ, ասել է՝ դասակարգեր և դասակարգային եսականություն, ցեղը՝ ընկերային արդարություն, և հնարավոր հավասարություն:

Ժողովուրդը կարող է գիտենալ, ցեղը մի'շտ էլ կարող է նաև:

Մեկը կայականություն է, մյուսը՝ ուժականություն:

Ժողովուրդը հաշվետես ուղեղ է, ցեղը՝ սիրտ, որ անհաշիվ կերպով զոհաբերել գիտի:

Միայն ցեղին է տրված «հարյուրեզյան զոհաբերություն»-ը - ամենամեծը:

Ապրել օրը օրին, թելն ու ասեղը ձեռին՝ իր դրությունը կարկատելու գործի վրա,- ահա' ժողովուրդի գորշ առօրյան:

Ցեղը կարկատումի քաղաքականություն չգիտի: Միշտ էլ ամբոխանալու հակամետ է ժողովուրդը, ցե'ղն է, որ միաբան ու լարված կպահի ժողովուրդի կամքը:

Ցեղը կարող է ժամանակավորապես և' պարտվել, բայց պարտվողականություն չգիտի:

Նրա մեջ ամեն ինչ նոր է, իսկ նորը հին է՝ իմաստությամբ շաղախված:

Նա գիտի նախատեսել, նախազգալ վտանգը, և արհամարհել՝ միաժամանակ:

Ժողովուրդը հաճախ տարակույսի և վարանումի կմատնվի, ցեղը բնազդորեն գիտի իր կտրելիք ճամբան:

Մինչ ժողովուրդը արդարություն կխնդրի, ցեղը՝ կգործադրի այդ:

Ժողովուրդը, հաճախ ասել է՝ կշիռ առանց սրի-իրավունքի անզորությո'ւն:

Ցեղը՝ սուր է, հաճախ սուրը առանց կշռի: Ժողովուրդն էլ կխոստանա, բայց քիչ բան կտա, երբ ցեղաշունչ չէ:

Ցեղին, մի'այն ցեղին է տրված ժողովրդի ստրկության ծանր շղթաներն արձվի թևերի վերածելու հոգեբանական արվեստը: Ստրկության մեջ իսկ՝ նա չի կորցնում իր պատմական ճամբան: Անցեղունակ ժողովրդին տրված չէ այդ բնազդական կարողությունը:

Ժողովուրդը հայ հոգու մարտիրոս կողմն է, ցեղը՝ հերոսական:

Ժողովուրդն ավելի մեռելներ է տալիս, ցեղը՝ դյուցազներ:

Մեկը սիրում է քարշ գալ ծանոթ ճամբաներում, մյուսը՝ դժվարակոխ ուղիներ է փնտրում: Հելլենական Թերմոպիլը և հայկական Վարդանակերտը, Մարաթոնը և Ավարայրը, բուլղարական Շիպկան և մեր Սյունիքը- Ցեղի շունչն է օծել այդ բոլոր ռազմավայրերը:

Ժողովուրդն այն վախկոտն է, որին ուզեցին գործի ուղարկել, և առարկեց նա. «Դուրսն առյուծ կա»:

Ցեղն իրենից դուրս առյուծ չի ճանաչում:

Ցե'ղն է մեր ապավենը:

ԽՈՍՔ ՅՈԹԵՐՈՐԴ
ՑԵՂԸ ՈՐՊԵՍ ՈԳԻ

Անասելիորեն կարևոր է ցեղի տեսակարար կշիռը:

Ժողովրդի մշտախռով տարերքն է ցեղը:

Ժողովուրդը ցեղի միջոցով է գլուխ հանում իր հո-գևոր ինքնակառուցումը:

Ցեղը կաղապարիչ ուժ է:

Ժողովուրդը միշտ էլ ցեղի թևերով, անցյալի և ապագայի ուժով է առնում իր թռիչքը:

Երբ ժողովուրդի մեջ արթուն չէ ցեղը, վերջինը ծալում է արձվի իր թևերը,- նմանը տառապում է հոգևոր ամլությամբ, ինչպես և՝ քաղաքական համլետականությամբ:

Ոչ թե միայն ներկան, այլև ապագան իր սնունդն ստանում է անցյալից:

Ժողովուրդը ներկան է, ցեղը՝ երեկը, այսօրը և վաղը: Առաջինը հաճախ կլանվում է ներկայով, երկրորդը՝ հանում է մեզ անցյալից և ցույց է տալիս անցյալն ու ապագան՝ իդեալ լույսի տակ:

Երբ արթուն է ցեղը, ասել է- ժողովուրդն իր լսողությունը տվել է անցյալին, աչքն՝ ապագային: Ասել է՝ նրա անցյալը մշտակա է, իսկ ապագան նախօրոք ապրված:

* * *

Ցեղը՝ ապրող սերունդ չէ:

Ոչ էլ համագումարն է աշխարհ եկած ու անցած բոլոր սերունդների:

Դա գումարելի չէ, և գումար չէ:

Դա պատմության պրոցեսի հավերժ կենդանի ենթական է, որի կյանքում ոչ ոք և ոչինչ չի մեռնում:

Նրա մեջ գոյ են և ապրում են բոլոր անցած գնացած հայ սերունդները, որոնց հետ էին Մեծն Տիգրան, Արտաշես Աշխարհակալ, սպարապետ Մամիկոնյան և այլն:

Ցեղը, որ էաբանական կորիզ ունի, և մշտատև պայքարի մեջ է ժամանակի հետ, բնազդորեն ձգտում է անեղծության և մահահաղթահարումի:

Ահա' թե ինչո'ւ նա կրոնական խորք ունի- մի ճշմարտություն, որ հայ ցեղուրաց լենինադավանը պիտի չհասկանա: Նա պիտի չհասկանա, որ ցեղն ավելի նրանք են ներկայացնում, որոնք այլևս մեկնած են մեր աշխարհից և նրանք, որոնք աշխարհ պիտի գան:

Երբ ցեղորեն է ապրած ժողովուրդը՝ նրա կյանքում փրկարար դեր են կատարում, առավելապես, նրա մեծ մեռելները, որոնց իշխանությունը և՛ արդար է, և՛ իմաստուն, և՛ զորավոր:

Իսկ ցեղորեն ապրել, ասել է՝ պատմական հիշողությամբ վերապրել անցյալ սերունդների կյանքը, նրանց ճակատագրին կապելով մերը:

Ցեղ, ասել է իմաստություն, խստաբարոյություն ու ուժ:

Դա հայ Ատլասն է, որ իր ուսերի վրա հայկականության երկինքն է կրում:

Ցեղը հայկական ուժի օվկիանն է, որից սնունդ են առնում ժողովրդի էության ծովն ու վտակը:

Ցեղայնությունը՝ արյան միությունն է, միությունը ճակատագրի կրոնն է, լեզուն է, այդ բոլորի ուժն է, առանց որի կարող է գոյություն ունենալ եսակենտրոն անհատների մի ամբոխ, բայց ոչ՝ ազգը:

Այս՝ ինչ որ ունենք, որպես ուժ, մշակույթ և ազդեցություն, ոչինչ է բաղդատմամբ այն բանի, որ ունի և պիտի տա մեզ ցեղի անսպառ ոգին:

Երբ չկա ցեղի գիտակցությունը, կա ժողովրդի ստոր-արժեքության և տկարության գիտակցությունը,- այդ գիտակցության դառնությունը:

Ցեղը լավատեսությամբ կզինի ժողովուրդը, և ազգային ձախորդությունները անդարմանելի չեն թվում մեզ:

Ցեղաճանաչ չենք, և ահա՛ օտարության մեջ, անհարազատ միջավայրերում գրեթե կրավորական դիրք ունենք,- մի պարագա, որ մեր ոչնչության և հոռետեսության զգա-ցումն է սնուցանում: Իսկ յոռետեսություն, ասել է՝ պարտ-վողականություն և փախուստ պայքարից: Իսկ հոռետես, ասել է՝ մեկը, որի մեջ մեռնելու աստիճան տկարացել է հավատը դեպի սեփական ուժերն ու ապագան: Մեկը, որի մեջ նվազ առ նվազ զարգանում է ինքնաժխտումը և դառնում անկումի հոգեբանություն:

Իսկ այդ հյուծող հոգեբանության հողի վրա քաղա-քական շնականությունը- որ մեր իրականության մեջ կոչվում է հակադաշնակցականություն - իր մահահոտ ծաղիկներն է բացում:

Նման մի ժողովուրդ այլևս հրաժարվում է իր ցեղահայտ և ստեղծագործ կամքից, իր արժեքներից և արժանա-պատվությունից: Նմանը փնտրում է օտար ուժեր,- մի հոգեբանություն, որը սեփական ուժերի լարում չի պահանջում:

Անկամ ու հոգեբանության ախտավոր հողի վրա իր գունատ ծաղիկներն է բացում և կրոնական խորհրդապաշ-տությունը:

Ցեղահաղորդ չէ մերօրյա հայությունը, և ահա՛ սիրիահայ իրականության մեջ և այլուր սունկի առատությամբ ծնունդ են առնում

կրոնական արտառոց աղանդներ, որոնք մեր աշխարհը տխուր պանդխտություն համարելով, հան-դերձյալն են երազում՝ իրենց անդենական հայրենիքը:

* * *

Մեր արդար հպարտության առյուծն է ցեղը: Ցեղից են գալիս հայ զենքի, բազուկի և գրչի բոլոր մեծություն-ները:

Ցեղորեն, ցեղորեն ապրենք, որ օգտվել կարողանանք մեր ցեղին հատուկ հերոսականությունից և գերագույն պատվասիրությունից, նրա կրոնական բոցավառությունից և մշակութային խանդից՝ նրա ողջ զորութենականությունից:

Գիտցե՛ք, մինչ ժողովուրդները միջակություններ կծնեն, ցեղի ինքնահայտությունը տեղի կունենա հերոսների, սրբերի և լուսակիր-ների միջոցով:

Երբ ցեղորեն ենք ապրում, ասել է՝ ներքին հզորացուցիչ հաղորդականության մեջ ենք անցյալի մեր մեծ առաջնորդների հետ:

Ոչ ցեղահաղորդ ժողովուրդը կորովի և իմաստուն առաջնորդներ չի ունենա;

Ցույց տանք ժողովրդին իր ցեղի՝ իր գերագույն ծնողի արև դեմքը, որ նա ինքնատեսությամբ բարձրացնի իր խոնարհ ճակատը:

Չէ՞ որ հենց սրանում է ճշմարիտ մտավորականության, գրականության և ազատագրական շարժումների դերը:

Անարժեք է գրականությունը - «ազգի առաջապահը» չէ նա - եթե ցեղի ոգու ինքնահայտությունը չէ, եթե նրա մեջ ցեղի ոգին չի ճառագայթում: Եթե մեծ թևաբախումներ ունի ժողովուրդը, ասել է ցեղաշունչ է նրա գրականությունը, դա նշան է, որ նրա մեջ ցեղն է գործում:

«Զարթնի՛ր, փառք իմ»՝ շնորհալիաբար պիտի երգի հայ գրողը, եթե ուզում է արագացնել փրկարար ցեղացնցումը՝ հայ էության մեջ:

Ոչ թե եվրոպականացում, այլ ցեղայնացում, քանզի միայն ցեղը կարող է ազգային արժեքները համամարդկայնացնել: Օտարը պետք է ծառայեցնել որպես միջոց միայն՝ մեր սեփականը դրսևորելու և փարթամացնելու համար:

Ոչ ցեղաշունչ ժողովուրդը ընդունում է օտար մշա-կույթը՝ ապազգայնանալու: Ցեղը ազգայնացնում է ընդունածը:

Անօգուտ է նմանողությունը: Ավելի՛ն՝ դա ավարտում է մեր ցեղայնությունը: Ամեն նմանողություն ժողովուրդները գնում են իրենց անհատականության կորուստի գնով:

Երբ արթուն է ցեղը՝ ժողովուրդը տեսնում է իր հոգու անբավ հարստությունները և փռում է նրանք աշխարհի առջև:

Ցեղորեն չապրող ժողովրդի համար համր է անգամ իր հայրենի աշխարհը:

Նմանը կարող է խորթանալ անգամ իր հայրենի միջավայրում:

Ցեղորեն ապրողն, ընդհակառակը, կարող է և մեծ սփյուռքի մատնվել, ինչպես Իսրայելը, բայց միշտ էլ զերծ կմնա ներքին հոգեբանական կորստաբեր ցրումից:

ԽՈՍՔ ՈՒԹԵՐՈՐԴ
ՑԵՂԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆՆ Է ՄԵՐ ԱՊԱՎԵՆԸ

Ցեղակրոնությո'ւն- ահա' համադարմանը, առանց որին հայությունը կմնա մարդկության ամենատնանկ մասը, քաղաքականապե'ս տնանկ:

Անցյալի պաշտամունք չէ ցեղակրոնությունը, ոչ էլ հոգևոր պորտաբուծություն է. ծույլ հուսադրություն չէ դա, ոչ էլ՝ մեղկ ապագայապաշտություն: Մեր փառաշատ անցյալի և ապագայի մեծ հույսի ստեղծագործ կենակցությունն է դա, որից ժողովրդի հոգին իր ամենաշքեղ հղացումները կառնի:

Ցեղակրոն է նա, ով ապրում է ցեղորեն՝ ցեղի կյանքով, ցեղի վախճանաբանությամբ և ցեղի համար:

Ցեղակրոնությամբ պետք է փարատել մեր ժողովրդի ներքին տկարությունները:

Ցեղապաշտության կրակով պետք է մոխրացնել հնոտին ու սնոտին մեր մտավորականության կյանքում:

Ցեղայնությունը այն շաղախն է, որ իրար է կապում սերունդները, ինչպես կիրը՝ հոյակապ շենքի քարերը:

Երբ ցեղակրոն է ժողովուրդը, նրա սակավաթվությունը դառնում է երկրորդական:

Ժողովուրդի համար իր խավերի միջև եղած ցեղային հոդակապությունն է էականը:

Ցե'ղն է ներգործոնացնում ժողովուրդը. նա' է տալիս ներգործոն մարդը՝ նախակարապետը ցեղային գերմարդու:

Ահա թե ինչու եմ ասում- ցեղակրոնության ճամբով դեպի քաղաքական փրկարար միակրոնություն:

Մեր ցեղընկալ մտավորականության է մնում աշխատել, որ ցեղակրոնությունը դառնա արդի հայ հոգու երրակ ձևը՝ նրա մտածումը, զգացումը և կամքը, մասնավորապե'ս կամքը:

Ցեղի գերազոր կամքը, որի կարիքը կզգանք մեր կամքերը մտրակելու,- ահա' ժողովրդի փրկության լծակը:

* * *

Մինչ հայն իր ցեղի մեջ մարդկայնություն, թուրքը դարերով իր հոգում գայլություն մշակեց:

Այդ իսկ պատճառով թուրքի մոտ ատելությունն ավելի՝ հարուստ գինարան ունի, հայի մոտ՝ սերը:

Թուրքը իժն է, որ դեռ իր մոր արգանդում զինված է թույնով:

Մի հանցանք ներել թուրքին, ասել է՝ երկու նորերն արտոնել նրան:

Թուրքը «զորավոր» է մեր ժողովրդի համար. դա արհամարհելի է մեր ցեղի համար:

Թուրքը դեռ ծանոթ չէ մեր ցեղի բազկի ուժին: Նա գործ է ունեցել մեր ժողովրդի, բայց ո'չ ցեղի հետ: Նրա զենքի հաջողությունը սեփական ուժի լիությունից չեր, այլ՝ մեր ժողովրդի դիմադրության պակասից:

Մեր ժողովուրդը իր տկարության մեջ, կարող է և մոռանալ թրքության մեզ հասցրած չարիքները: Ցեղը չի՝ ների:

Ցեղորե'ն, ցեղորե'ն ապրենք, որպեսզի սրտով մեծ և զորավոր Վարդաններն ու Վահաններն անպակաս լինեն հայոց աշխարհում:

Ցե'ղն է ժողովրդի հոգևոր զինարանը:

Այնտեղից, նա'խ այնտեղից առնենք մեր սպառազինությունը՝ թրքության դեմ:

Գիտակցե'ք, որ երբ ցեղն է գործում, գարահիսարցի մի հյուսն դառնում է Անդրանիկ, և սեբաստացի մի շինա-կան՝ Մուրադ:

Երբ ցեղորեն ապրենք, ամեն մի հայ զոհի փոխարեն աշխարհ կգան երկու նոր վրիժակներ:

Ժողովրդի կրծքի տակ վրեժխնդրության հիդրան ցեղն է ապրեցնում:

Իր հերոսների և նահատակների գերեզմանաքարերի վրա՝ ցեղն է սրել տալիս ժողովրդի սուրը, այն ավելի հատու, զարհուրելի և հաղթական դարձնելու համար:

Ժողովրդի սրտին նստած շանթակիր ամպն է ցեղը:

* * *

Որքան տիրական է ցեղի ազդեցությունը ժողովրդի կյանքում, այնքան հեշտ է ինքնապաշտպանվում վերջինս:

Ժողովուրդը անճգնություն է, ցեղը՝ մտրակող կամք:

Ժողովուրդը դպիրներ է ծնում, ցեղը՝ մարգարեներ: Միշտ էլ նահանջելու տրամադիր զինվորն է ժողովուրդը. ցեղը՝ միշտ էլ Վահագն է:

Ցեղը արիություն է, նա'և արիապաշտություն, ահա' թե ինչո'ւ հեթանոս, այլ ցեղակրոն հայության իմաստու-թյունը Վահագնին էր նվիրել իր բոլոր ամիսների 27-րդ օրը:

Խաղաղության ժամանակ գուցե և կարելի է ապրել առանց ցեղակրոնության, վտանգի ժամանակ՝ երբե'ք:

Ճակատամարտերում ճերմակած հազարավերք զորավարն է ցե'ղը, որը միշտ էլ կերիտասարդանա վտանգ-ների ժամանակ:

Ժողովուրդի ուղեցույցն է ցեղը, որն իր մեծ մեռելների գերեզմաններով է նշանադրում ժողովուրդի փրկու-թյան ճամբան:

Ցեղը աստվածանման Հայկն է, որ իր եռացող զայրույթը եռաթևյան աղեղի մեջ դրած՝ թշնամուն ուղղեց:

Դա հայ սպարապետի հպարտությունն է, որ սաստեց թշնամուն՝ «Եթե հարվածն իմն է՝ չի փրկվի»:

Դա այն խորախորհուրդ ուժն է, որ Նպատ լեռան վրա լարված պահեց Մեծ Պարթևի երկնաբարձ բազուկները, մինչև որ հայերը հաղթեցին:

Ցեղակրոնությո'ւնն է մեր ապավենը:

ԽՈՍՔ ԻՆՆԵՐՈՐԴ
ՑԵՂՆ Է ՄԵՐ ԱՊԱՎԵՆԸ

Այս կամ այն ցեղը մոտավոր ճշտությամբ դիմագծելու համար, այն պետք է դիտել իր հոգու հայելու՝ կրոնի մեջ, որովհետև ցեղի շեշտված ինքնարծանացումը հնարավոր է միայն իր աստվածների միջոցով:

Իր մտա-բարոյական զարգացման չափով, ցեղը իր կրոնի մեջ է դնում իր հոգեբանական գծերը, իր բնազանցական էությունը:

Հայը լինելիական է՝ հաստատում է հայոց հեթանոս կրոնը:

Լինելիական է հայը,- ահա ակնաղբյուրը մեր մեծ հույսի և զորույթի:

Ա'յս է, որ չի գիտակցում հայ մտավորականությունը՝ իր մեծամասնության մեջ:

- Պետք է մեռնի ազգը, որ ապրի դասակարգը,- պատգամում է բոլշևիզմը:

- Մեռի'ր դասակարգ, որ ապրի ազգը,- ասում է ֆաշիզմը:

- Թող տեղի տան երկուսն էլ, անհատ թե դասակարգ, որ ապրի ցեղը,- ասում է հիտլերականությունը:

Տեսնո՞ւմ եք, Հեգելի, Ֆիխտեի և Նիցշեի հավիտենականի փիլիսոփայությամբ թրծված Գերմանիան է, որ ճգնում է ոտքի հանել ցեղը: Իսկ հայ մտավորականությունը- ավաղ, ցեղահաղորդ չէ և այսօր: Նա ծանոթ չէ իր ցեղի հոգու կարելիություններին, և այդ իսկ

պատճառով շարունակում է կառչած մնալ իր վտիտ ժողովրդասիրության՝ առանց օգտվել կարողանալու իր ցեղի դինամիկայից:

Քաղաքականապես անիրավված է շարունակում մնալ մի ժողովրդի մտավորականությունը, երբ պատմական վայրկյանը նրանից պահանջում է լինել ցեղի ընտրանին:

Ցեղերի գոտեմարտ կա այսօր- անզոր են ժողովուրդները- աննախընթաց գոտեմարտ, որին չմասնակցելը սեփական արյունով՝ նշան է պատմական փոքրոգության:

Դա նշան է, որ հայ մտավորականությունը դեռևս տեր չէ եղերաբար ապրված մի նոր իմաստության, որ նա օտար է իմաստասիրական հերոսության, ինչպես և անծանոթ՝ հայ ճակատագրի ճշմարիտ իմաստասիրության:

Այսօր նո'ր օր է- հասկանանք այդ, և այն, որ հայ մտավորականությունը երբեք չի ունեցել ավելի մեծ և պատասխանատու դեր:

Վայրկյանը, որ ավելի քան ճակատագրական է, պահանջում է նախ հերոսական բարոյականության ու մտածումի, ապա մեծագործության և ինքնաողջակիզումի ընդունակ մի մտավորականություն:

- Գերազանցեցի'ր և պիտի հաղթես,- ասում է աշխարհը ազգերին:

Իսկ հայը միայն ցեղակրոնությամբ կարող է գերա-զանց հանդիսանալ, որովհետև գիտե'ք- հրաշունչ ցեղայնությունն է նրա էության հիմնական կշռույթը:

Ցե'ղն է մեր ապավենը:

Հասկանա'նք, ժողովուրդը գործում է միայն, ցե'ղն է, սակայն, իրականացնողը:

Բավական չէ գործել, իրականացնել է պետք :

Հասկանա'նք նաև, որ բոլոր տեսակի հաղթանակները տարվում են նախ ցեղի ոգու քիմիարանում:

Ժողովուրդը կարող է հարմարվել իր նվաստ վիճակին, ցեղի համար, սակայն, անդարձ չեն աշխարհի վճիռները: Նրա համար անսրբագրելի չէ Լոզանը, հավատացե'ք:

Լոզանը- ահ, երբե'ք, երբե'ք հայ անունի շուրջը այն-քան ամոթանք չէր կուտակվել, որքան՝ վերջին տասնամյակի ընթացքում: Եվ նորահա'ս սերունդ- հենց սրանում է մեր դրության փշե պսակը, ինչպես և մեր փրկության գրավակա-նը՝ միաժամանակ:

Չէ՞ որ գերման ցեղի քաղաքական միության գիտակցությունը ծնունդ առավ և զարգացավ տառապանքի և նվաստության դպրոցում:

Ցեղն է ժողովրդի հոգևոր ոսկեփոխը:

Այսօրը՝ նո՛ր օր է- ու գիտի այդ, գիտի փրկարար ճշմարտությունը:

Այսօր, երբ մեր հայրենիքում- ցեղի հավիտենական հայրենիքում- կարմիր գերեզմանափորները մեր ցեղն են թաղում, և նրանց բրիչների ձայնը արձագանքում է Խորհրդային գծից դուրս. մեր այս վշտաշունչ օրերին, երբ գայլաբարո թուրքը, Լոզանից ձեռք բերած անպատժության ար-տոնագիրը ծոցը՝ բացճակատ շրջում է արևի տակ, և իր յաթաղանից մազապուրծ հայության ոչնչացումը որոճում, այս մեզ համար անփառունակ օրերին, երբ չարագուշակ բուերն են հսկում մեր հավաքական ճակատագրին, թո՛ղ ցեղակրոնության խոսքը հնչի որպես կազդուրիչ կանչ:

Չէ՛, չէ՛ Մասիսը- հայոց ցեղայնության հրաբուխը- դեռ չի շիջած:

Նո՛ր, մենք նոր ցեղաշարժերի կսպասենք, մեր արյան մեջ զգալով ներկայությունը անցյալի և վաղվա հաղթական հայության:

Եվ ասում ենք մենք՝ միշտ էլ արդար է, որ մեր կյանքում օրենսդրի և առաջնորդի ցեղը, և ոչ թե ժողովուրդը:

Արթնացա՞վ ցեղը- մենք վերստին կբռնենք հավիտենականության ձեռքը և կռվի կկանչենք անարդար ժամանակը:

Եվ կհաղթանակենք, քանզի ցեղի հեթանոս աստվածները՝ Հայկն ու Վահագն՝ պիտի բարձրացնեն շանթընկեց մեր բազուկը և վարեն նրա հարվածները:

Ցե՛ղը,- գիտակցիր այդ, նորահա՛ս սերունդ,- ցե՛ղն է մեր ապավե՛նը:

ԽՈՍՔ ՏԱՍՆԵՐՈՐԴ
ՑԵՂԱԿՐՈՆՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՏԱՄԲԸ

Ա.

Ամփոփեմ ասածներս՝

- Մի ժողովուրդ, որ ինքն իրեն դեռ չի նվաճել (իսկ ինքնանվաճումը հնարավոր է միայն ինքնաճանաչումի ճամբով), ընդունակ չէ, արժանի չէ մեծ գործերի:

Մի այլ ճշմարտություն - ժողովուրդների հոգևոր արդյունազորությունը այնքան մեծ է, որքան բյուրեղացած է նրանց ցեղային գիտակցությունը, որքան բացահայտված է նրանց ցեղային էությունը, հոգին: Հազար խորհուրդ ունի հայ հոգին, որ դեռ իր խանդավառ մարգարեին կսպասի, որ պիտի հայտնվի մի օր և այն բացահայտի մեզ:

Հայությունը ցեղաճանաչությամբ միայն կարելիություն պիտի ստանա իր էության չգիտակցված և չիմաստավորված ուժերը լծելու մեր ցեղի վարած անհավասար գոյամարտի գործին:

Այո՛, դեռ ցեղաճանաչ չենք, դեռ կանչում, ձայն ենք տալիս մենք մեզ, փնտրում ենք, բայց դեռ չենք գտել մեզ, դեռ չենք ճանաչել մեզ, որպես ցեղ:

Փնտրում ենք հավիտենական հայը, փնտրում ենք իր հեթանոս դարերում, իր քրիստոնեության մեջ, իր պատմության լույսի տակ, իր գրականության մեջ, իր իմաստասիրության և վարած ճակատամարտերի, իր ստրկության և ինքնիշխանության, իր կոտորածների, արտագաղթերի և հայրենաշինության մեջ: Փնտրում ենք նրան իր բնաշխարհում և օտար հորիզոնների տակ, բայց դեռ չենք գտել:

Չենք գտել, սակայն գիտենք, որ միայն ինքնաճանաչությամբ կարելի է տիրապետել այն տարերքին, որ հավիտենական է հայ էության մեջ - մեր ցեղայնությունը:

* * *

Ցեղորեն անինքնաճանաչ՝ դեռ կույր հայ հոգու խոր-քերում, և այդ իսկ պատճառով անզոր մերօրյա խնդիրների առջև՝ մենք, որպես ժողովուրդ, շարունակում ենք մնալ նվաստ և նահատակ, երբ աշխարհը պահանջում է լինել ինքնահարգ, և հարգանք պարտադրելու աստիճան զորա-վոր:

Անասելիորեն զորութենական, բայց դեռ իր ինքնահաղթահարումը գլուխ չհանած, հայ էությունը իր անսպառելի շինարարական եռանդը կմսխի ընդունայն: Եվ այդ իսկ պատճառով մեր ժողովուրդը կշարունակի արնոտ տուրք տալ իր ցեղային անինքնաճանաչության:

Ա՜հ, դեռ շարունակվում է հայոց ողբերգությունը, մի անօրինակ ողբերգություն, որ մեր ազգային ուժի և հպարտության փոխարեն մեր տկարությունն ու նվաստությունն է սնուցանում:

Ուստի, մեկնելով այն կենսաբանական ճշմարտությունից, թե երբ ժողովրդի մեջ տկարանում է ցեղի շունչը՝ սկսվում է նվազել սերունդների կենսունակությունը, հոգեպես փանաքիանում են անհատները, շեշտվում է նրանց վատասերումը, և վրա է հասնում անժամանակ զառամությունը:

Մեկնելով այդ ճշմարտությունից՝ քե՛զ նորահաս սերունդ, ցեղիդ ձայնն եմ բերում քեզ: Ես քեզ ցեղակրոնություն եմ քարոզում: Ցեղակրոնությո՛ւն, որով անհայրենիք հայությունը հոգևոր զրահ կհագնի՝ օտար միջավայրերի այլասերիչ ազդեցություններին հաջողաբար դեմ դնելու համար:

Այդ դավանանքը, մեր միակ դավանանքը որևէ հանգիտություն չունի այլ ուսմունքների հետ, իսկ եթե կրոն է դա՝ ապա՝դա կրոն է ցեղային հպարտության, ուժի և արիության, դա քո՛ կրոնն է, նորահաս սերունդ:

Բ.

Ցեղակրոնությո՛ւն:

Լոզանում և Լոզանից հետո՝ մահացուորեն վիրավորված, զարնված անարգանքի փոշիների մեջ, իր խորքի մեջ ցնցված հայ հոգո՛վ ծնունդն է դա:

- Չէ՛, այսպես, այլևս այսպես չի կարելի ապրել, ապրել առանց սեփական իրավունքի, արժեքի և արժանիքի գիտակցության, առանց ներքին հպարտության, առանց սե-փական կյանքի, թե՛, այսպես չուզեր ապրել նորահաս սերունդը:

Անցեղաճանաչ՝ անզոր ու նվաստ է հինը, իսկ մեզ պետք է նոր հայը, որին կսպասենք ցեղակրոնությունից: Մեզ պետք է ցեղակրոն հայը, որ զորեր դիմանալ մերօրյա քաղաքական աշխարհին:

Ցեղակրոնությո՛ւն:

Նախ ցեղիս ճանաչումն է դա, ճանաչումը մի գերիվերո ուժի-էության.

Երկրորդ՝ այդ ուժ-էությունից ծնած լինելուս գիտակցությունն է դա.

Ապա՝ այդ ուժ-էության ցմահ հավատարիմ մնալուս ուխտն է դա:

Գ.

Ես ցեղակրոն եմ, և ահա կերդվեմ Վահագնի աջի վրա, երբեք չմեղանչել ուխտիս դեմ, որ է՝ ապրել, գործել և մեռնել որպես ցեղակրոն:

Դ.

Ինձ համար՝ անհատականության և ազատության ամենաբարձր արարքը՝ հնազանդվելն է ցեղիս:

Ե.

Ես ցեղակրոն եմ: Այդ ասել է՝

Ես կճանչեմ իմ ցեղը,

Ես կհավատամ իմ ցեղին

Ես կպաշտեմ իմ ցեղը:

Ես ցեղաճանաչ եմ, և ահա գիտեմ, թե մեծ է իմ ցեղը. թե իմ ցեղն ավելի՛ն է տվել մարդկության, քան ստացել է նրանից. թե հայոց նորագույն հեղափոխությունը վերջին խոսքը և գործը չէ իմ ցեղի էության: Ես գիտեմ, թե ինչ բանի ատակ է իմ ցեղը:

Ես ցեղահավատ եմ, և ահա ես կպաշտեմ և մի այլ աստվածություն՝ ցեղիս արյունը, որի անարատության մեջ է մեր ժողովրդի ողջ ապագան:

Ես ցեղահաղորդ եմ, և ահա՛ կզգամ, որ իմ անձը կպատկանի ավելի իմ գերագույն ծնողին՝ իմ ցեղին, քան իմ ծնողներին:

Զ.

Իր ժողովրդի քաղաքական ճակատագրով զբաղվելու գերագույն պարտականություն ունի ցեղակրոնը, և ահա՛ ես կպայքարեմ մի մեծ ճակատագրի համար, որին այնքան արժանի է իմ ցեղը:

Է.

Ցեղակրոն եմ, ասել է՝ ուր էլ որ լինեմ, ընկերային ինչ դիրք էլ որ ունենամ, ես խանդավառորեն կմնամ հպատակն ու մարտիկը ցեղիս:

Ը.

Հայաստանից դուրս, սփյուռքի մեջ, ինչ վիճակում էլ որ լինեմ՝ մեծահարուստ թե օրավարձով աշխատող բանվոր, անդարձ պանդխտություն չեմ համարի տարագրի կյանքս:

Չէ՛, չէ՛, վերադարձ կա:

Թ.

Հայրենիքիցս դուրս ես ինձ վրա կնայեմ որպես ցեղորեն զորահավաքի ենթարկվածի վրա:

Ժ.

Կդավանեմ, որ իմ սերունդը ավելի մեծ պարտականություն ունի, քան ուներ անցնող ազատագրական սերունդը:

Պարտականության մեջ ցեղակրոնի իմ բաժինը՝ առյուծի բաժինն է՝ ամենամեծը:

ԺԱ.

Ցեղակրոնը, որի նշանաբանն է - ավելի՛, էլ ավելի զորություն - պաշտամունք ունի իր ցեղի մարտական ուժի, իմա՛ ՀՅ Դաշնակցության հանդեպ:

ԺԲ.

Զոհապաշտ եմ ես, և ահա՛ երկյուղածորեն կոգեկոչեմ նրանց, որոնց պաշտամունքը հավիտենական է, որոնք առյուծացան իրենց նվիրումի մեջ, աստվածացան իրենց հոյակապ գաղափարականության մեջ-որոնք դյուցազնորեն իրենց արյունը շռայլեցին՝ մեր ցեղի գոյությունն ու պատիվը հավիտենականացնելու համար:

ԺԳ.

Ցեղակրոնն էլ կձգտի երջանկության՝ տեսնել, թե ինչպես կ'աճի իր ցեղի զորությունը և արդարորեն Հայաս-տանը կ'ընդարձակվի - ահա' նրա երջանկությունը:

ԺԴ.

Ցեղը կապրի, կստեղծագործի, կհավերժանա ժողովուրդը:

Մարդկային մշակույթի գործում զորութենական ուժ է ցեղայնությունը:

Արդ, թե ինչո'ւ ցեղային անհատականության եղծումը ցեղակրոնը կհամարի ոճիր՝ ուղղված մարդկության, և, ի մասնավորի, իր ժողովրդի դեմ:

ԺԵ.

Ցեղակրոնը կխորշի այն բոլոր հոսանքներից և վարդապետություններից, որոնք կմիտեն մեր նորահաս սերունդը հեռու պահել ցեղի կազդուրիչ ստինքից - կաթեն:

Նա կխորշի հայ իրականության մեջ չեռացող այն բոլոր ուժերից, որոնք թեպետև ընկերային դիրքով հակոտնյա, բայց ընդհանուր հոգեբանությամբ միացած՝ ճակատ է հարդարած մեր լուսավոր ազգայնականության և ազգային դատի դեմ:

Ավելի' պարզ: Ազգայնականության երկու ձևերից՝ ազգային անհատապաշտություն և եսապաշտություն՝ ցեղա-կրոնը կողջունի առաջինը, որն այլ բան չէ,եթե ոչ ազգ-անհատի արդար և արգասավոր ձգտումը՝ հավատարիմ մնալ իր ցեղի ոգուն, կատարելագործել իր պատմական տի-պը, և պաշտպանել իր հավաքական անձի ազատությունը:

Մեր այդ ձգտումը լիուլի համապատասխանում է միջազգային և ընկերային բարոյական և առաջադիմության բարձր սկզբունքներին:

ԺԶ.

Մե'ծ է ցեղակրոնի իմ թշնամանքը, ինչպես մե'ծ է իմ պաշտամունքը:

Ցեղիս թշնամիներն են՝ թուրքը, բոլշևիկը և սրանց ցեղադավ գործիչները, ամեն անվան և ծպտումի տակ, որոնց վճռաբար կհակադրեմ իմ զորութենական ցեղակրո-նությունը:

Ինձ համար գոյություն ունի հարցերի հարցը՝ հապա բախտահաս թո՞ւրքը:

Այո', հայրենիքի շենքը պետք չէ բարձրացնել օտա-րատյացության ժայռի վրա, բայց և այնպես հայությունը պետք չէ ների թրքության: Ավելի'ն: Եթե այդ արնապարտ ցեղից, որ կողոպտիչն ու սպաննիչը հանդիսացավ անզեն հայության կեսին, մի օր մի բուռ

անսուրբ մոխիր մնա, այդ մերժելի մոխիրի հետ իսկ դատի-դատաստանի պիտի նստի հայը:

Կխորշեմ բոլշևիզմից, որովհետև հակամարդկային է:

Երիցս կատեմ դա, որովհետև հակահայ է դա. որովհետև թուրքի հետ զինակցաբար դա մտավ Հայաստան, որովհետև նրանից ցայսօր օգտվեց ցեղիս գերեզմանափորը՝ թուրքը, միա'յն թուրքը:

Բոլշևիկը իր շնական հրաժարիմքն ունի:

Ես՝ իմ վճռական այո'ն ցեղիս:

Նա իր թղթե անզոր եղիցի'ն ունի:

Ես՝ իմ հանապազորյա աշխատանքը ցեղիս ազատագրության համար:

Զզվելիորեն բացասական է բոլշևիկը, և դիմազուրկ՝ հոգեպես:

Ցեղակրոնը մարդկության կներկայանա ցեղադրոշմ ճակատով:

ԺԷ.

Պարտվողականություն, կրավորական տառապանք, սարսափի հոգեբանություն, կյանքի ճապաղություն, լալկանություն, մտքի անիշխանականություն, կրոնական անդենականություն, դասակարգա-յին և հարանվանական եսականություն - այդ ամենից խորշելով կխորշի ցեղակրոնը:

ԺԸ.

Ցեղակրոն եմ, ասել է՝ պարտեմ, կամեմ և կարող եմ գերազանցել, և պետք է գերազանցեմ ցեղիս թշնամիներին - նա'խ թուրքին:

ԺԹ.

Ուժապաշտ է, և տկարություն ու նահանջ չի ճանաչի ցեղակրոնը: Նրա մոտ կենդանի է ծարավը ինքնաճանաչ-ման, քաղցրությունը զոհաբերության և ճիգը ցեղի ուժերի կենտրոնացման:

Արտաշեսյան իր նախնիների մեծության հետամուտ՝ նա կպատկառի իր ցեղից և կ'աշխատի ամենուրեք արժանավորապես ներկայացնել իր ցեղը:

Ի.

Ցեղակրոնի համար նվիրական է հայոց քաղաքական գոյառության օրը - Մայիս 28-ը և այն խորհրդանշող սրբազնասուրբ Եռագույնը, որն է՝ սրբություն, քաղաքական դատ, և վախճանաբանություն, միաժամանակ:

ԻԱ.

Ես ցեղակրոն եմ, և ահա վճռապես կընդվզեմ քաղաքական աննպատակության դեմ, որի ազգասպան պրոպա-գանդին լծված են

հակադրոշակյան տարրերը - և կաշխատեմ, որ սփյուռքի մեջ, ուր մենք կտառապենք որպես մարդ և որպես հայ մարդ, որ հայությունը տեսիլաթափ չլինի:

ԻԲ.

Հայ մարդու հետ հայերեն կխոսի ցեղակրոնը, որովհետև կգիտակցի, թե լեզվի մահը հաճախ ժողովուրդների հոգևոր մահը կարագացնի:

ԻԳ.

Ինքնամսխումի մեջ ազատ չէ ցեղակրոնը: Քաջառողջ լինելու պարտականություն և իրավունք ունի նա, որի ձեռքին է գալոց սերունդների ճակատագիրը:

ԻԴ.

Նրա համար նախասիրելի են ա'յն գիտությունները, արվեստներն ու արհեստները, որոնք իր ցեղի հզորության և հաղթանակին կծառայեն:

Կա'մ մարտիկ է ցեղակրոնը, կա'մ կպատրաստվի վաղը դառնալու այդպիսին:

ԻԵ.

Անձնական կամքի մշակությամբ ցեղակրոնը կսատարի հայ ոգու հսկայացումին:

Ցեղի կամքի աստվածացումը - ահա' թե ինչի կձգտի նա:

Այդ անմեռ կամքին, ահա', որ չմեռավ խավար դարերի հարվածների տակ, և չթողեց որ ժողովրդի մեջ Մամիկոնյանների ռազմաշունչ ոգին մեռնի, ցեղակրոնը ասում է վճռաբար՝ այո' և ամե'ն:

* * *

Ես ցեղակրոն եմ, և ահա' կանգնած վաղվա սեմին՝ լիաբուռն ցեղի խոսքն եմ նետում մեր նորահաս սերունդի հոգու մեջ - ես սերմանում եմ և առատ հունձքի սպասում:

Ես կանչում եմ՝

- Ո՞ւր եք, զորավորներ, դո'ւրս, դու'րս եկեք առաջին գծի վրա, ուր ցեղի անունով և ցեղի համար պարզված եռագույնը ձե'զ է սպասում: Եկե'ք բանակելու նրա սրբազան ծալքերի տակ, ուր տկարությունը, նահանջն ու վատու-թյունը տեղ չունեն:

Եկե'ք, միացե'ք մեր Մեծ Ուխտին, որի կուռ շարքերի մեջ այնքան պարզ, տիրական ու քաղցր է լսվում ցեղի ձայնը:

Եկե'ք, օր, ժամ, վայրկյան առաջ եկե'ք միանալու ամերիկահայ նորահաս սերունդի ցեղապսակ մասին, որն ուխտած է՝ օտար

աշխարհներով անցնել ամերիկյան մեծ գետերի պես - միշտ պահելով իր ուղղությունն ու թափը. ուխտած է՝ ընթանալ ցեղի հավերժացման գծով:

Ցե'ղը, ցեղակրոնությո'ւնն է մեր ապավենը:

«Հայրենիք», Բոստոն, 1933, թիվ 6517, 6520, 6524, 6528, 6534, 6542, 6545, 6554, 6568, 6583:

ԱՀԱ ՄԱՐԴԸ
(ECCE HOMO)*

Նրան, որը խմեց և՛ հայ տառապանքի բաժակից:

Ճշմարտություն լինելուց ավելի պարադոքս է Գյոթեի խոսքը այն մասին, թե մենք չենք կարող ճանաչել մարդուն, երբ նա գալիս է մեզ մոտ - նրան ճանաչելու համար պետք է գնանք նրա մոտ:

Յավորովը[56], որ խմեց և՛ հայ տառապանքի բաժակից՝ Հայաստանը չտեսած ճանաչեց և խորազգաց հափշտակությամբ երգեց մեր «Միշտ էլ քաջ»ը:

Հայն իր բնաշխարհիկ օրրանում չտեսած՝ նա ճանաչեց հայությունը, քանզի նա սովորական բանաստեղծի ձիրքերից ուրիշ մի բան ուներ իր մեջ - խոր հայտնատեսություն աշխարհի և մարդու հանդեպ:

Նա իր սրտի լարերը թրթռացրեց տառապող ու պայքարող հայության համար:

Ծնունդ մի կայտառ և ռազմաշունչ ցեղի՝ նա եղավ մեկն այն սակավաթիվ բանաստեղծներից, որոնք ամենայն իրավամբ գրավում են առաջին տեղը ոգու հերոսների փաղանգում:

Ծնված «աշխարհծովից», ինչպես իր մասին ասում է ինքը - նա եղավ երգիչը ողբերգորեն զարհուրելիի, սրբազանի և հերոսա-կանի: Եվ հանուն ստրուկ և անհիրավված Հայրենիքի, պայքարեց երգերով - պայքարեց մահվան, թուրքի և աշխարհի անարտության դեմ: Նա եղավ մեկը մարդու ամենազգայուն որդիներից, որի կրծքի տակ արդարության առյուծը մռնչաց, մինչև որ կլքեր մեր աշխարհը, որը այնքան անիծեց:

Ապրեց «գոյության ուրագանի» մեջ, և տառապեց, տառապեց գերմարդկորեն: Եվ տառապանքի զայրույթի մեջ հաճախ աղաղակեց.

---

* «Ահա մարդը» (լատ.), Հրեաստանի հռոմեական կուսակալ Պիղատոսի խոսքեր՝ ի տես փշե պսակով Հիսուս Քրիստոսի:

«Ես չեմ ապրում - այրվում եմ ես»: Որպես պրոմեթեիստ՝ նա ըմբոստացավ մարդկային անարդար ճակատագրի, քաղաքական բռնության և ընկերային անարդարության դեմ:

Նա տկարություն չունեցավ մարդկային գոյության բարդ առեղծվածները լուծել իմաստասիրորեն միայն: Աստվածորեն զգայուն՝ նա հոգով զինակցեց մարդ-եղբոր, մարդ-ըմբոստին և մարդ-տառապողին: Եվ նրա կյանքն եղավ համախաչելություն: Նա խաչվեց բոլոր խաչեցյալների հետ:

Նա խմեց և տառապանքի բաժակից և աստվածային արբեցությամբ աղաղակեց. «Արբե՛ք ի սմանե»: «Հայեր»ի եղերաշունչ քնարերգակը երգեց և՛ հայ ցավը: Նա երգեց և մեր «ճանապարհ Խաչին», իսկ երգելուց առաջ, ապրեց, ապրեց խորապե՛ս: Նրա համար՝ տառապանքն եղավ աստվածային հեշտանք; Չէ՞ որ, «բանաստեղծի նման Աստված էլ՝ որպեսզի ստեղծի, հարկ եղավ նախ լացել»:*

Նա երգեց հայ պանդխտությունը, և այդ ո՛չ թե որպես մի բանաստեղծական քմայք, ո՛չ թե որպես մի մարդասիրական շարժուձև, ո՛չ թե իր ճակատը զարդարող լուսապսակին փառքի մի նոր ճառագայթ ավելացնելու ցանկությամբ: Ո՛չ, ո՛չ, նա հանուն տառապողի իմացավ արհամարհել դափնին ու ջահելության գինին:

Նա երգեց մեր տարագրությունը, որովհետև մեկն էր մեր ժամանակների մարդու ամենազգայուն որդիներից և չէր կարող չերգել աշխարհի ցավերից ամենավսեմն ու հերոսականը: Ապրելով «սկիզբն ու վախճանը ողջ մարդկային խռովքին», նա չէր կարող չարձագանգել այն մեծ ողբերգության, որ մասնավորապես 19-րդ դարի վերջերին բաժին ընկավ Հայաստանին և իր որդիներին: Նա երգեց աշխարհի և իր բախտի դեմ ոտքի ելած հայությունը: Նա զինակցեց մեզ, որովհետև զավակն էր այն մեծ սրտի տեր ժողովուրդին, որ արիություն ունեցավ իր քաղաքականության մեջ խաչը դնել: Նա մեր ցեղի պաշտպանության ի խնդիր իր սուրը պիտի տար, եթե զորական լիներ: Չէ՞ որ նրա կյանքում անբաժան մնացին «բանաստեղծի քնարը և զինվորի զրահը»: Նա մեզ իր աստվածաշունչ քնարը տրամադրեց, քանզի երգիչ էր: Նա Հայաստանը չտեսած, մեզ համար եղավ ու կմնա այն, ինչ որ է Բայրոնը Հելլադայի համար:

Եվ այդ այն ժամանակ, երբ աշխարհին շանթահարելու կարող բազուկներն անշարժ, շրթունքները համր մնացին Հայաստանի համար մարդկայնորեն մի բան ասելու կամ անելու պրոբլեմի առջև, երբ եվրոպական մարդկությունը տմարդությունը ունեցավ քանիցս իր մատը խրելու Քրիստոս- Հայաստանի արնահոս վերքերի մեջ և մնալու անկարեկից: Աստվա՞ծ իմ, որքա՞ն փոքրիկ են մեծ պետության մեծագույն քաղաքագետները Յավորովի առջև, որոնք հաճախ կզլանան երկու գունատ խոսք ասել ի պաշտպանություն անիրավված հայրենիքների:

Եվ այդ այն ժամանակ, երբ առաջին քրիստոնյա ժողովուրդի հայրենիքից կբարձրանար հիսուսյան աղաղակը. «Էլի, էլի, լամա սափաքթանի»*: Եվ այդ այն ժամանակ, երբ հազարամյա մշակույթի և խաչի տեր ժողովուրդի կացությունը իրենից կներկայացներ բևեռներից կազմված մի անկողին, որի վրա բռնադատված էր պառկելու հայը: Յավորով երգեց իր «Հայեր»ը և իր երգը թև առավ, թռավ անցավ իր հայրենիքի սահմաններից դուրս, համայն հայության երախտագիտությունը նվաճելու համար:

Ահա՛ թե ինչո՞ւ, 1912-ին, երբ պատերազմական շեփորը ոտքի հանեց Բալկանյան ազգերը, մարդկության - թուրք կոչված - ամենա անմարդկային մասի դեմ, Անդրանիկի և իմ կանչին որպես հոգեբանական արձագանք՝ հայ գաղթաշխարհի բոլոր ծայրերից կամավորներ հասան, ուխտելով Քրիստափորի գերեզմանի վրա և հայ և Բուլղար դրոշակների տակ ճամբա ընկան՝ հայ արյունը խառնելու Բուլղար որդիների արյան: Եվ ընկան նրանք, ընկան Յավորովի հայրենիքի համար, ընկան ժպտադեմ:

Ահա՛ թե ինչո՞ւ, երբ վաղը Արևելքում խորտակվեն բռնության վերջին գահերը – սև թե կարմիր - երբ ազատության հրեշտակն այցելի Արարատի սգավոր փեշերը՝ անկախ Հայաստանի մայրաքաղաքում Հայ գրչի, սրի և խաչի հերոսների կոթողների կողքին, կբարձրանա և Յավորովի արձանը: Եվ Արարատյան վեհափառ արևը իր արշալույսին և վերջալույսին, համբուրելով կոսկեզօծի մարդկայնության մյուռոնով օծված նրա ճակատը:

«Դու պիտի գաս, սպասվա՛ծ օր»,- ասում է Յավորովի մի տողը:

Այո՛, պիտի գա՛, չուշանա՛ այդ օրը, քանզի նա այնքան անխուսափելի է, որքան և արշալույսը: Նա պիտի գա. իսկ, մինչև այդ, ես, երկու ազգերի զինվորը, մտովի կհամբուրեմ երկու հայրենիքների վշտակիրի քնարը:

«Ազատ խոսք», Սոֆիա, 1935, թիվ 85:

---

* «Աստծու լացը», Դանիել Վարուժան,«Հեթանոս երգեր»:

* «Աստվա՞ծ իմ, Աստվա՞ծ իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ» (եբր.). Խաչված Հիսուսի վերջին խոսքերը:

«ՀԵՐԿ»Ի ՀԱՐԳՈ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ[57]

Հարցնում էք՝

ա) *Ի՞նչ է իմ կարծիքը ներկա հայ երիտասարդության մասին.*

- Մերօրյա հայ երիտասարդությունը, հակառակ իր անհայրենիք գոյության, օժտված է իր հավիտենական ծնողի - իր ցեղի անսպառ ուժականությամբ:

Եթե նա, իբրև ուրույն սերունդ, բառի գիտական իմաստով դեռ ձևավորված ու կազմակերպված չէ, դրա լրջագույն պատճառը հին սերունդն է, որը դժբախտություն ունեցավ շատ շուտ՝ հենց իր արշալույսին, կորցնելու ճշմարտորեն իդեալիստ ու ցեղահոգ իր վարիչ ընտրանին:

Այդ սերնդին ցավագինորեն պակասեց մտավորական-նի իր կոչման ու պատմական պատասխանատվության բար-ձր գիտակցությունը, պակասեց վերանորոգչական խանդը, և այդ իսկ պատճառով Հայոց վերածնունդը եղավ պակասավոր, իսկ հեղափոխությունը՝ կաղ ու թևատ: Նա չունեցավ խստորեն շեշտված տեսական խղճմտանք: Նա չսիրեց երես երեսի գալ գոյության ծանր պրոբլեմների հետ և մտածումի քրտինք թափել նրանց վրա: Նրան պակասեց հերոսականի էթիկան: Նա եղավ հանդուգն միայն այն ժամանակ, երբ պետք էր ընդօրինակել մեր միջավայրի ու ժողովրդի հոգե-բանության անհարիր կեղծ եվրոպականը, կասկածելի ար-դիականը, օտարը: Նա շփոթեց ազգային կուլտուրան դիմազուրկ կուլտուրականության հետ, առանց հասկանալու, որ առաջինն է միայն հատող զենք, ցեղամիջյան պայքարների համար:

Հանցապարտորեն դարձավ կրավորական երկրպագուն օտար իրականություններից ծնունդ առած «մոդեռն» գաղափարաբանու-թյունների և, այսպիսով, պատճառ դարձավ մեր ազգային ոգու խաթարման ու պառակտման: Այդ սերունդը, չնչին բացառությամբ, ցայսօր էլ չունի կյանքի ստակ փիլիսոփայություն, փիլիսոփայական կուռ աշխարհայեցողություն, ու այդ իսկ պատճառով մեր հոգևոր կյանքը շարունակում է մնալ քաոսային:

Օրվա տարագիր հայ երիտասարդությունը հինի մո-լորանքներից զերծ մնալու, ինչպես և վերանորոգչական պաթոսի, ուժի և կամքի վերածվելու համար՝ հրամայողաբար պիտի դիմի մշակութային որոշ վերաքննության: Նա պիտի վերաքննի այն գլխավոր հասկացողությունները, որոնք կազմում են հիմքը օրվա հայության կուլտուր-քաղա-քական կյանքի:

բ) *Ի՞նչ պիտի անի այն.*

- Ա՛յն, ինչ որ անում է երիտասարդ սերունդը՝ ընդհանրապես և համաշխարհորեն: Հին է սերունդների պրոբլեմը, այնքան, որքան հին է մշակույթի պատմությունը: Ժո-ղովուրդները իրենց երիտասարդության

միջոցով են իրականացնում իրենց հավիտենականը, նա՛և՝ վերջինի միջո-ցով պարբերաբար թարմացնում, հեղափոխականացնում, ուժավորում իրենց ոգին: Այսօր ամենուրեք - Արևելքում թե Արևմուտքում, Հին թե Նոր Աշխարհում - ամեն տեղ ազգերի ծոցի մեջ երիտասարդական բունտ, ընդվզում կա: Երիտա-սարդությունը միաժամանակ և՛ հեղափոխական, և՛ հեղափոխիչ ուժ է: Աշխարհի վերակառուցման մեր խռվքոտ օրերում նա հանդիսանում է ամենապայքարունակ տարրը - ծարավի Նորի, մի նոր էթիկայի, նոր կենցաղի, ընկերային մի նոր, մի արդար կարգ ու սարքի, մի նոր ճակատագրի: Ամենուրեք նա խոստանում է դառնալ վտանգի ու հերո-սականի սերունդ: Որոշիչը մերօրյա երիտասարդության կյանքում կենսաբանականը չէ - տարիքը, հասակը չէ, այլ՝ ապրած պատմա-կանորեն բացառիկ նշանակություն ունեցող ժամանակաշրջանը: Նա սիրում է առողջը, կոնկրետը, զորավորը: Խորշում է այն ամենից, որ տկար է, թևաթափ և շփոթ:

Ցեղային ուժերի զարթոնքը, միության և կենտրոնաց-ման պրոցեսում, առաջնակարգ ազդակների շարքում, երիտասարդու-թյունը գրավում է առաջին տեղը: Նրա օրվա կրոնն է՝ վոժդիզմը, առաջնորդապաշտությունը: Նա դառնում է գրոհի սերունդ, և այդ իսկ պատճառով ուժապաշտ է, այդ միևնույն պատճառով նա զորավոր առաջնորդներ է փնտրում: Աննախընթաց խանդով ու վճռականությամբ նա կառուցում է իր ազգային հավատամքը: Նա դարբնում է, ճանաչումի քաղցրությամբ նա կռվում, կոփում է իր սեփա-կան աշխարհայեցողությունը, իր դինամիկ աշխարհընթացումը - այնպիսի՛ն, որ համապատասխաներ իր ժամանակի ոգուն, իր ցեղի էության, իր հայրենիքի ներքին և արտաքին պայմաններին, ինչպես և այդ վերջինի հետ կապված բոլոր տեսակի պրոբլեմներին:

Դրանից տարբեր չի կարող լինել և պիտի չլինի մեր երիտասարդության դերը: Իր անունն ու կոչումը արդարացնելու համար նա մի հատիկ հոգևոր լծակ ունի - Ցե՛ղը, մի հատիկ ճամբա - Ցեղի հետքերով:

գ) *Այդ տեսակետից ի՞նչ դեր կարող է ունենալ «Հերկ»ը:*

- Մտքի անհիշխանականությունից, մտավոր դիսցիպլինայի պակասից տառապող հին սերունդը իր օտարահակ տրամադրություն-ներով խորապես մեղանչեց իր ցեղի դեմ, և, այդպիսով, պատճառ դարձավ իր ժողովրդի անօրինակ ողբերգության: Այսօր այլևս ակնբախ իրողություն է մարդկության վերախմբավորումը ցեղային հիմքերի վրա: Ու երիտասարդությունը՝ ամենուրեք, եռուզեռ է, շարժում, ծառացած կամք, կենդանի գործ:

«Հերկ»ը՝ իբրև երիտասարդ սերունդի օրգան՝ պիտի աշխատի նախ հոգեբանորեն նվաճել երիտասարդ Հայը, հայությունը՝ իր ցեղի

համար: Իսկ իր այդ մեծ առաքելության մեջ հաջողելու համար՝ նա պիտի նպաստի սեփական ազգային գաղափարաբանության մշակման գործին:

Պետք է նախ օտար խաթարիչ ազդեցություններից ազատագրել ու կազմակերպել Հայ Մտածողությունը, այլա-պես Հայությունը կմնա պառակտված ու ցրված հոգեբանորեն, կմնա տկար՝ միշտ պատրաստի որս իր երկու թշնամիների-Հայաստանում՝ իր հարևանների, Հայաստանից դուրս՝ օտարացման վտանգի համար:

Պատմությունը աճապարում է - չդանդաղե՛նք:

Դեկտեմբեր, 1937, Սոֆիա

«Հերկ», Բուխարեստ, 1938, թիվ 9:

ՑԵՂԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԶԵՆՔԸ

«Ես հարցնում եմ այնպես, ինչպես ո՛չ ոք դեռ չէ հարցրել - ո՞ւր ենք գնում: Մեզ համար տեղ կա՞ պատմության մեջ: Գիտե՞ մեկը, որ բոլորվին մենակ ենք մնացել, որ ներկա չունենք: Գիտե՞ մեկը, որ եթե դադարենք գոյություն ունենալուց՝ տիեզերաշենքի մեջ մի հատիկ հյուլե իսկ պիտի չշարժվի»:

Հայոց պատմության փիլիսոփայության ծանոթ ու հայրենազգաց ամեն մտավորական հայ կխոստովանի, որ Մամիկոնյանների Հայաստանը - թեկուզ հաճախ կիսված, կիսանկախ, կիսակործան - ավելի՛ հայկական է, ավելի՛ հայրենիք, և ավելի՛ պաշտամունք պարտադրող, քան է՛ր նույնը՝ Տիգրան Աշխարհակալի կամ Արտաշեսի օրով:

Ո՞ւր փնտրել սրա գաղտնիքը:

Հոգեբանական այդ իրողության պատճառներից առաջինը նրանում է, որ Տարոնի ստեղծած արժեքներից շատերը կրում են համահայկական կնիք, երկրորդը՝ նրանք վավերական են, անմեռ, երրորդ պատճառը- դա Մամիկոն-յանների հայի և Հայաստանի հավիտենականով ապրելու, նրանց համար անշահասիրաբար գործելու ու արիաբար մեռնելու ուխտն է:

Այո՛, մեր ցեղի հավիտենականը նվաճող գրեթե բոլոր հոգևոր զենքերը -լուսեղեն այբուբեն, քաջաքաջ արիություն, անցավորը հավիտենականին զոհաբերելու տենչ, կենսաբանական բարոյական, հայրենակրոնություն - այդ բոլորը, գրեթե բոլորը, մեզ տվել է Տարոնը:

Հայոց աշխարհի ո՞ր անկյունում հայն այնպե՞ս պաշտեց իր հողը, այնպե՞ս առյուծացավ ճակատամարտերում, իր երկրի համար այնպե՞ս մեռնել գիտցավ, ինչպես Տարոն աշխարհում:

Պատմական անցյալի տեսակետով մեր այդ երկրամասը, ո՛չ միայն իր հոգևոր կարողությամբ, այլև իր ռազմագիտական անչափելի նշանակությամբ, իսկապես որ ուրույն աշխարհի արժեք ունի:

Ճի՛շտ է, սուրբ է հայրենի երկրի ամեն մի բուռ հողը, սակայն, ճիշտ է և այն, որ հայրենիքներն ունեն իրենց պատմա-ռազմագիտական տեսակետից ամենանվիրական ու ամենակարևոր երկրամասը,- ա՛յն երկրամասը, ուր ցեղը ամենից շա՛տ է արյուն թափել, կուլտուրական գանձեր դիզել, հերոսական պատմություն ստեղծել- ա՛յն երկրամասը, առանց որի հայրենիքը ո՛չ թե զորավոր ու անկախ լինել, այլև իր գոյությունը պահել, ինքնապաշտպանվել չի կարող:

Ճակատագրորեն մեծ է Տարոնի նշանակությունը մեր ցեղի և հայրենիքի պաշտպանության համար:

Քանի դեռ մեր երկրի աշխարհագրական մարմնից կտրված կմնա Տարոնը՝ վտանգված կմնա մեր հայրենիքի ապագան:

Ամեն երկիր իր «Տարոն»-ը ունի:

Հարցրե՛ք ազգերին-նրանք սրբազան սարսուռով կարտասանեն իրենց «Տարոն»-ի անունը:

Դեռ երեկ էր, ինչ քեմալական Թուրքիայի ներքին գործոց նախարարը- Շիվքրի Գայա- Թրակիայում արտասանած իր ճառի մեջ, Ադրիանուպոլսի նշանակությունը Թուրքիայի ինքնապաշտպանության տեսակետից շեշտելու մըտ-քով, հայտարարում էր. «Ամեն թուրք ինքն իրեն պիտի զգա ադրիանուպոլսեցի, նա՛խ ադրիանուպոլսեցի»: Ինչո՞ւ, որովհետև քանի դեռ թրքական է Ադրիանուպոլիսը, թուրքը մեկ ոտքով կմնա Եվրոպայում, որովհետև կորցնելով Ադրիանուպոլիս քաղաքը, կործանվելու աստիճան կտկարանա Թուրքիան:

«Նա՛խ Ադրիանուպոլսեցի»- երկու բառեր միայն, որոնք տալիս են հայրենիքի ինքնապաշտպանության անսխալ բանաձևը:

Որքա՜ն խոր հոգեբանություն, որքա՜ն ռազմաքաղաքական իմաստություն ու նախանձելի հայրենապաշտություն կա թուրք պետական գործիչի այդ մի հատիկ պատգամ - բանաձևի մեջ:

«Նա՛խ Ադրիանուպոլսեցի» - դա ասել է թո՛ւրք մարդ, արթուն կա՛ց, քանզի վաղ թե ուշ, Թրակիայի դաշտերում իրար պիտի զարնվեն երկու ճակատագրեր՝ Թուրքիայի և մի օտար պետության: Դա ասել է պարտվե՞ց թուրքն այդ կետի վրա, նա կպարտվի բոլոր ճակատների վրա: Դա ասել է՝ ամեն թուրք իրեն պիտի համարի զինվոր՝ միշտ պատրաստ վահանի վերածելու իր կուրծքը Թուրքիայի ամենակարևոր ճակատի վրա:

Եվ իբրև արձագանգ թուրք նախարարի հայտարարության, Պոլսում թուրք ուսանողությունը այսպես պատասխանեց ֆրանսիական մի լրագրողի. «Մենք բոլորս էլ ցեղապաշտներ ենք, ծայրահեղ

ցեղապաշտներ. ցեղապաշտությունը մեզ համար հոգևոր սնունդ է, ինչպես հացն ու ջուրը մարդկային օրգանիզմի համար»:

Նույնը մի այլ առթիվ. «Ամենասրբազան պարտականությունը մեզ համար - դա Թուրքիայի անունի, պատվո և անկախության համար մեռնելն է»:

Այսպես է խորհում, գործում, նախապատրաստվում թուրքը. նա այսպես է կազմակերպում իր ազգությունը՝ վտանգի նախօրյակին:

Իսկ մե՞նք, իսկ հա՞յը:

Ո՞վ կարող է ուրանալ, որ Տարոնը մեզ համար յոթնիցս ավելի՛ն է, քան Թրակիան Թուրքիայի համար:

Արդար չէ՞, որ այսօր հայ մարդն ավելի մտահոգվի Տարոն աշխարհով, քա՛ն թուրքն իր Ադրիանուպոլսով: Սպասելի չէ՞, որ այսօր ո՛չ թե միայն տարոնցին, այլև ամեն հայ, անկախ իր քաղաքական ու հարանվանական հանգամանքից, ջերմաջերմ պաշտամունք ունենա Տարոնի ստեղծած ցեղակնիք արժեքների, առաքինության ու սրբությունների հանդեպ:

Ժամանակը չէ՞, որ ամեն հայ մարդ զինվորագրվի «Մամիկոնյանների ուխտ»-ին, որից, ավա՜ղ, ավելի ներքին, քան արտաքին պատճառներից աստիճանաբար խորթացավ հայությունը և այդ իսկ պատճառով ցեղորեն տկարացավ ու պատժվեց անմարդկորեն: Այսօր, երբ մարդկությունը մեզ դրել է հայորեն ապրելու և ստեղծագործելու անկարելիության առջև այս աշխարհածուփ ու վտանգալի ժամանակներում, քաղաքական իմաստություն չէ՞, որ ցեղերից ամենավտանգվածը, հայը, վերստին ապավինի Տարոնականության - ցեղի հավիտենական զենքին:

...

Գերազանցորեն հեղափոխական են մեր օրերը, ճակատագրական՝ մերօրյա անցքերը:

Վաղուց է, ինչ մարդկությունը իրեն զգում է նստած հրաբուխի վրա: Ականկած է հին աշխարհը: Մարդը - անհատ թե հավաքականություն - այսօր աննախընթացորեն անապահով, խռովված է զգում իրեն:

Զարհուրելի են ցնցումները կյանքի բոլոր մարզերում: Ճգնաժամ են անցկացնում՝ պետություն, տնտեսություն, կրոն, փիլիսոփայություն:

Վերաքննության են դրված կյանքի բոլոր պրոբլեմները: Ժողովուրդները հեղափոխական չտեսնված ցասումով ջախջախում են կեղծ արժեքների, գաղափարների ու ճշմարտությունների տախտակները, և նրանց փոխարեն նորերը գրում:

Այլևս բեկվել է պատմության զարգացման գիծը, և սկսվել է սուր անկյունադարձը:

Սկսվել է նորը, նո՛ր աշխարհ, նո՛ր պատմություն, որի ստեղծիչը հանդիսանում է նոր, վերանորոգված մարդը - վտանգի, հերոսականի, ճակատագրի մարդը:

Ամենուրեք - Արևելքում թե Արևմուտքում, հին թե նոր աշխարհում - գալիքի ահավորությունից խթանված՝ վերածնվում, հոգեպես երիտասարդանում են հին ժողովուրդները. ակտիվանում՝ երիտասարդները: Երբե՛ք ժողովուրդները այդքան ուժապաշտ չէին եղել: Ամեն մեկն աշխատում է ոտքի հանել իր թաքուն ուժերը, հաղթահարել իր ներքին տկարությունները, սանձել, շղթայի զարկել իր ցեղախույս «Ես»-երը, նախանձները, չարությունները:

Բոլորը - հաղթական թե պարտյալ, մեծ թե փոքր - ելել են նվաճելու ներքին անապատը, այնպե՛ս, որ դա անհետանա ո՛չ թե միայն իրենց երկրի քարտեզից, այլև իրենց հոգուց: Տիրող տագնապը ավելի՛ ևս շեշտում է եռագլխանի վտանգը. բոլշևիզմ, պատերազմ, ցեղային վատասերում-որի դեմ հաջողաբար պայքարելու համար՝ ժողովուրդները ապավինել են իրենց ցեղային բնազդի ուժին և անսխալականության- իրենց կենսաբանական բարոյականին:

Ամենուրեք- անհատ թե դասակարգ- կամովին սահմանափակում են իրենց անձնական իրավունքներն ու շահերը՝ հանուն ցեղի և հայրենիքի: Ու նման ինքնասահմանափակումը - զոհաբերության այդ գերագույն ակտը- ո՛չ թե նվաստացնում, դիմազրկում է մարդկային անձնավորությունը, ընդհակառակը, դա մեծապես ուժավորում, հարստացնում է նրա հոգևոր կյանքը:

Բոլոր ժողովուրդների համար- մասնավորապես նրանց, որոնք պատերազմից ծանրորեն վիրավոր ու պարտ-ված դուրս եկան- բոլորի համար, այլևս ցեղային դավանանքի բնույթ է ստացել իրենց ուժերի կենտրոնացման, կազմակերպման ու ակտիվացման անհրաժեշտության գործը: Նրանք գերմարդկային ճիգեր են թափում, մի կողմից, ներցեղային բարոյականի ուժով դարմանելու միջազգային դաժան պայմանագրություններից ստացած վերքերը, մյուս կողմից, պատրաստվում են դիմագրավելու վաղվա վտանգը:

Քանի դեռ Ռաթենաուն գերման ժողովրդին կներշնչեր, թե «գետնախնձորն» է իր ճակատագիրը, Գերմանիան, իբրև պարտյալ, հաղթականներին կվճարեր օրական չորս միլիոն, և նվաստ էր նա: Այն օրից, սակայն, երբ գերման ճակատագրի ղեկավարությունը իր ձեռքն առավ ռազմաճակատից վերադարձած մի վիրավոր տասնապետ, երբ ժողովուրդն իր ճակատագիրը համարեց Ցեղն ու Հայրենիքը, այն օրից փոխվեցին միջազգային հարաբերությունները- պարտյալը, առանց պատերազմի, դարձավ հաղթական:

Հունգարիան - Տրիանոնի ողբերգական զոհը – չուշացավ իր դպրոցների մեջ մտցնել ռևիզիոնիզմը, իբրև պարտադիր առարկա-

նարդար պայմանագրերի վերաքն-նության պահանջը: - «Տրիանո՞ն, ո՛չ, երբե՛ք» - այսօր ամեն մի հունգարացու համար դարձել է քաղաքական աղոթք:

Հապա զորք պահելու իրավունքից զրկված Կրալի Մարկոյի հայրենիքը - Բուլղարիան, որի հանդեպ հաղթա-կանները եղան դաժանորեն շնական - այս փոքրիկ երկիրը, իր կենսաբանական զորավոր բարոյականի ուժով ծնունդ տվեց երևութապես մի աշխատավորական բանակի, անզեն զորքի, որն այսօր պիտի դառնար իր մարտական ուժը:

Այսպես գործեցին ցեղորեն անպարտելի պարտյալները:

Ի՞նչ են անում հաղթականները:

Լսեցե՛ք նրանցից մեկին, Ֆրանսիայի մտավորականության.

«Գրողներս, մեր երկրի գլխին կախված սպառնալիքի առջև, ցավելով որ ֆրանսիացիների միաբանությունը կատարված իրողություն չէ դեռ, վճռեցինք դադարեցնել ամեն գժտություն, ժողովրդին եղբայրության օրինակ տալու համար»:

«Միանա՛նք՝ Ֆրանսիան վերանորոգելու համար»,- ասում է նրանց երկրորդ մանիֆեստը: «Ստեղծե՛նք մի նոր Ֆրանսիա, որ ավելի՛ զորավոր լիներ, քան բոլոր վտանգները»,- ասում է ժողովրդին ուղղված նրանց երրորդ մանիֆեստը:

Ահա Ֆրանսայի բարձր մտքի՝ իդեական ու քաղաքական ամենատարբեր ուղղության պատկանող մարդկանց հայրենասիրական շարժումը:

Այս է ամեն տեղ ազգերի ու անցքերի հոգեբանությունը - դինամիկան:

Այսպես հիմնաշարժ է եղել, հիմքից խախտվել, այսպես քանդվում ու վերակառուցվում է մի ամբողջ աշխարհ - հի՛նը:

Հասկանալի է, որ տիրող ընդհանուր տագնապի պրոբլեմի կապակցությամբ - մի տագնապ, որ այնքան զգալիորեն շոշափում է մեր հավաքական ճակատագիրը - վաղուց դրված պիտի լիներ և՝ Հայ ապագայի խնդիրը՝ -ի՞նչ է լինելու հայ մտավորականության այսօրվա և վաղվա անելիքը իր ժողովրդի և Հայրենիքի ինքնապաշտպանության համար:

...

Ճակատամարտերից առաջ, կանխավ պարտված պիտի համարել այն ժողովուրդը, որ չի կարող շեշտակի նայել աշխարհի աչքի մեջ և ասել. ես հասկանում եմ քեզ:

«Դիտի՛ր աշխարհը և նմանվի՛ր նրան»,- ասում է դասական իմաստությունը:

Դիտում է հայը, դիտում իր առջև փռված աշխարհը, բայց, կարծեք, չի տեսնում, չի հասկանում ա՛յն, ինչ որ կատարված է իր շուրջը:

Տարիներ է, ինչ մեր մտավորականության ցեղահաղորդ մասի հետ կրկնում ենք - մարդկությունը վերախմբա-վորվում է՝ հիմք ունենալով ցեղը: Ժողովուրդները վերադառնում են իրանց էության նախաբյուրին, քանզի նրանց համար այլևս գիտականորեն աներկբայելի է, որ «օրգանականը պատմության մեջ՝ ցեղն է»: Այդ փրկարար ճշմարտությունը, դժբախտաբար, միայն հայ մարդը չի հասկացել: Ցեղի գաղափարն է իմաստավորում մեր գոյության իրա-վունքը, ինչպես և՝ հայրենիքի համար մեռնելու մեր պարտականությունը: Այս բարոյականով են զորավոր օրվա բոլոր ազգերը: Մենք տկար ենք հոգևարելու աստիճան, որով-հետև մեզ պակասում է այդ բարձր բարոյականը: Մեր դրության ահավորությունը նրանում է, որ հայությունը, իր ամբողջության մեջ, դեռ չի հասկանում աշխարհի ներկա պայմանները: Նա չի հասկանում, որ թուրքի նման հարևան և թշնամի ունեցող ժողովրդի համար, հնի շարունակությունը համազոր է ցեղային ինքնասպանության:

Ցեղորեն անինքնաճանաչ է հայությունը: Ամո՜թ մեզ- օտարը, Ֆրանց Վերֆելը պիտի գար ասելու-«ոգու ժողո-վուրդ է հայը»: Այո՛, ոգու ժողովուրդ ենք և այդ իսկ պատճառով այն բոլոր վարդապետությունները, որոնք դիմազուրկ ոգու ծնունդ են, օրինակ, սոցիալիզմ, բոլշևիզմ, կոսմոպոլիտիզմ - մնում են անմարսելի և անհարազատ հայ հոգու համար:

Ոգեշունչ էր քրիստոնեությունը և հենց այդ է պատճառը, որ նրա գիրկը նետվողներից առաջինը՝ եղավ հայը: Հասկանա՛նք - մեր ժողովրդի ամենազորավոր զենքը միշտ էլ եղել է ոգին:

Ամեն ճշմարիտ հերոս նախ ոգու հերոս է: Առանց ոգու հզորանքի հայ մարդը կարող է և՛ հանդուգն լինել, դիպվածով և՛ հաղթական հանդիսանալ, բայց ո՛չ՝ և՛ հերոս: Ոգու հերոսներ էին Մամիկոնյան ռազմիկները, և հենց սրանում է գաղտնիքը, որ նրանց ձայնի մեջ ցեղի ուժի և կամքի վագրը կմռնչար, որ նրանք բիբլիական Դավիթի նման, թշնամու դեմ հաճախ դուրս էին գալիս «երեք քարով» միայն և խորտակում նրան, իրենց առաջին հարվածով:

Ոգեշունչ է հայ ռազմիկը և այդ է պատճառը, որ նա Արևելքի լավագույն պարտիզանն էր, է՛ և այսօր, որ նա շատ անգամ սակավաձեռն ուժերով հսկայաթիվ բանակների դեմ է ճակատել, որ կռիվներ է վարել ամենադժվարին պայմանների մեջ՝ կես-կուշտ, կեսքաղցած, առանց նվազագույն տեխնիկ միջոցների, առանց զինակիցների, մենա՛կ ու հաճախ՝ իսպառ կտրված աշխարհից:

Դարեր առաջ մեր ռազմիկների ոգեշնչությունն է շարժել թշնամի Շապուհների նախանձը. «Երանի՜ նրան, որ հայոց գեղի տերն է. այնպիսի տիրասեր և միաբան ու միամիտ զորաց, որոնց գնդից ու նշաններից հուր և բոց կելներ»:

Ոգու մարդ էին Մամիկոնյան բոլոր զորավարները, որոնց կամքի առջև խոնարհվում էր ամեն դժվարություն և վտանգ, որոնց համար վտանգ ասել էր մի հին, ընտանի ծանոթ: Ոգեշունչ էին նրանք և հենց այդ է պատճառը, որ ժամանակին նրանք հանդիսացան իրենց ցեղի արթուն բնազդը, նրա աչքը, նրա ուղին, նրա մարգարեն, նրա օրենսդիրը և մասնավորապես, իրենց ժողովրդի անզուգական ղեկավարն ու առաջնորդը: Ասենք մի այլ ճշմարտություն - միայն ոգու մարդը կարող է մեր ժողովրդի ղեկավարը լինել:

Իսկ ոգու մարդ ասել է՝ ցեղամարդ: Նմանին, միա՛յն նմանին կարելի է հայ ժողովուրդը և երկիրը վստահել:

Որքա՜ն կորուստներ ու ամոթանք խնայված պիտի լինեին Հայաստանին, եթե հայությունը հարազատեր ու սիրեր կիրարկել այս ճշմարտությունը:

...

Հայությունը դեռ հասկացողություն չունի այն չարիքի մասին, որ կոչվում է ստամտավորականություն: Հայը սխալ է գործածում մտավորական բառը, սխալ հասկանում՝ նրա իմաստը: Նրա համար մտավորական է ամեն ուսյալ մարդ: Հենց սրանում է նրա աղետալի սխալը: Ուսում, կրթություն, գիտական պաշար - անհրաժեշտ են սրանք, բայց դեռ բավական չեն մեկին ճշմարիտ մտավորական դարձնելու: Մեկը կարող է իմացականորեն շատ զորեղ լինել, բայց և այնպես իրավունք չունենալ մտավորական կոչվելու:

Ճշմարիտ մտավորականը նա է, որ իր մտավոր կարողության, ամեն բանից առաջ, միացնում է խորապես բարոյական նկարագիր, բարձր գաղափարականություն, ստեղ-ծագործելու - նոր իդեալներ, արժեքներ, կյանքի ձևեր ստեղծելու ընդունակություն, սրբազանի զգացում, տեսական խղճմտանք, հոգևոր արիություն, ժողովուրդն իր ամբողջության մեջ սիրելու, նրա համար տառապելու անսահման կարողություն:

Ի՜նչ խոսք, որ նման մտավորականը, իրերի բերումով, կարող է տեղ գտնել այս կամ այն քաղաքական կազմակերպության մեջ, բայց նրա նվիրումն ու գործը չեն կրի դասակարգային, հատվածական բնույթ: Նրա համար գոյություն ունի ամբողջությունը- ազգը, որին անշահասիրաբար կծառայի: Ճշմարիտ մտավորականությունը, որի գործը անընդհատելի է ազգի կյանքում - այն հոգևոր ուժն է, առանց որի ժողովուրդ անվան տակ ամբոխներ կապրեն, առանց որի ազգություն չի ստեղծվի: Հանձին սերունդների՝ մտավորականությունները օրգանապես չեն կտրվում իրարից, չեն ժխտում, այլ հարստացնում են, կատարելագործում իրար: Այդ տեսակետից ճշմարիտ մտավորականության ստեղծա-գործությունը կրում է հավիտենականի կնիք: Ճշմարիտ

մտավորականներից զուրկ չէ հայությունը, բայց զրկված է նրանից օգտվելու կարելիությունից: Մեր ստամտավորականությունը ավելի՛ շուտ հարմարվեց գաղթաշխարհի պայմաններին և պարտադրեց իրեն:

Այսպիսով՝ մեր ժողովուրդն ու իսկական մտավորականությունը մնացին իրարից կտրված: Կեղծ մտավորականությունը, որի դեմ ազգերի ընտրանին մահու և կենաց պայքար է բացել, մեզ մոտ այլևս ամբողջովին նվաճել է կյանքը և կիշխի անընտրողաբար ու միահեծան կերպով:

Օրվա հայ կյանքի հոգևոր ահեղ չքավորության, տափակության ու այլանդակությունների միակ պատճառը մեր ստամտավորականությունն է:

Չարարվեստ բանսարկություն, հացակռիվ, դիրքի մակաբուծություն, պաշտոնապղծություն, խոսքի ազգասիրություն - այդ բոլորի մեջ՝ կարելի է նրա հոգու հետքերը տեսնել:

Անցեղաշունչ է, որով և հոգեպես թևատ ու առօրեական ունայնություններից ու մանրուքից բարձրանալու անզոր: Անստեղծագործ՝ նա վազում է առավելապես բացասական ու աննշան նպատակների ետևից, մնալով՝ զզվելիորեն մանրագործ, պառակտիչ ու չար: Այսօր ավելի հեշտ է յոթը շնագայլերի քաղցը հագեցնել, քան անցեղաշունչ հայ ստամտավորականի չարությունը: Դարերի վկայությամբ է հաստատված մեր ցեղի կենսունակությունը, նրա կենսաբանական խոյանքը, սլացքը, բայց և այնպես նա մնում է նվաստախոհ, օտարամոլ, պարտվողական: Իբրև ազգային պաշտոնյա, նա Աստվածաշնչի անմահացրած մաքսավորն է՝ ծույլ, անհավատարիմ, հացապաշտ: Իբրև գործիչ՝ դպիր է նա: Իբրև ուսուցիչ՝ հոգով էսնաֆ, անկարող ուժի և հզորանքի տեսիլներ պարզել աշակերտող սերունդի առջև:

Եթե այսօր մեր զավակները գունատվում են ցեղորեն, հայորեն - դրա պատճառը, օտար միջավայրից ավելի, այդ տարրի անցեղաշնչությունն է:

Մեր մտավորականության հոգևոր դեղնախտով տառապող այդ մասը չուզեց օգտվել Ամերիկայի մեր ցեղահոգ մտավորականների թարմ օրինակից- ցեղակրոնությունից: Նա վատաբանեց. «Ցեղակրոնությունը Հիտլերություն կհոտի»: Նա այսպես չարամեկնեց, գիտնալով հանդերձ, որ ցեղակրոնությունը ծնունդ է առել մեր հայրենի Լեռնաշխարհի գլխին կախված մեծ վտանգի օրերին, երբ մարդկությունը լսած չէր Հիտլերականության մասին: Հանձին մեր Դավիթբեկյան ցեղապահ ուխտերի՝ 1920-ին գործեց ու հաղթանակեց ցեղակրոնությունը: Նա գիտի, որ Հայաստանի մտավորականություն, ՀՀ Դաշնակցություն, Սյունյաց երկիր- այդ բոլորը իրենց փրկությունը կպարտեն ցեղակրոնության: Հայ ստամտավորականը գիտի այդ, բայց և այնպես

նա չարաբանեց. «Ցեղակրոնությունը հարմար է ամերիկյան միջավայրին միայն»:

Եվ այդ մեր օրերում, երբ ամեն հայ մարդ քաջ գիտի, որ նորահաս սերունդը հավասարապես վտանգված է Փարիզում, թե Թավրիզում, Սիրիայի մեջ, թե Բալկաններում - մեր բոլո՛ր գաղութներում, և որ նա՝ նվաստության զգացումից ազատվելու համար, կարիք ունի մի ցեղային ide'e force-ի, ցեղային կազդուրիչի - ցեղակրոնությա՛ն:

Ստամտավորականությունը հաջողել է լղոճել մեր ժողովրդի բոլոր բարձր ըմբռնումները: Նա շատ բան է սպանել և թաղել անթաղ մեր կյանքում: Ահա՝ մեկը նրա զոհերից - Հայ Եկեղեցին, որի պաշտոնեությունը այնքան էլ տգետ չէ չհասկանալու համար, որ մեռյալ ծիսակատարություններով ու մեռելաթաղով զբաղվով եկեղեցին, վերջ ի վերջո, իր ժողովուրդն ու Աստվածը պիտի թաղի:

Հապա մեր դպրո՞ցը, որտեղից վաղուց են փախել «բազե»ները. անդեմ, անարյուն, անցեղ հայ դպրոցը, ուր ուսանել կարող են բոլոր ազգերի մանուկները: Այդ հաստատությունը հայ աշակերտի սերունդին կարող է ամեն բան տալ, բացի հայրենիքից, հայրենիք պաշտպանելու արիությունից և հայրենիքի համար մեռնելու քաղցրությունից:

Անզեղջ է հայ ստամտավորականը. ի զուր անցան Ալիշանի ու Ռաֆֆիի, Ահարոնյանի ու Վարուժանի և այլոց դյուցազնաշունչ ցեղականչները, նրա համար անմատչելի մնացին հերոսականի բարձունքները: Նա չսիրեց վտանգը, փախավ հերոսներ կրթող ազնվական վտանգից և իր երկչոտությամբ՝ հաճախ վտանգեց իր ժողովրդի ապագան: Երեկ պարտվողական էր, այսօր, նա՛և երկչոտության քարոզիչ: Նրա համար՝ հերոսը արկածախնդիր է, իդեալիստը՝ տխմար, վախկոտը՝ խոհեմ, սրիկան՝ գործի մարդ:

Քաղաքացիորեն անարի է նա, զզվելի՛որեն անարի. նրան, անգամ պաշտոնապես չի կարելի տեսնել արդարների ու լավերի կողքին: Եվ այդ է պատճառը, որ այսօր հայ իրականության մեջ, ամեն քայլափոխում վատությունն է դարանակալ, որ աղվեսները առյուծներ են խեղդում, սինլքորները՝ Հիսուսներ են խաչում:

Խարդախամիտ է մեր ստամտավորականը. առանց խռովքի, նա մեկ-մեկ ճառում, թուղթ է մրոտում ազգային դիսցիպլինի մասին, սակայն, առանց անդրադառնալու, որ այդ բարձր առաքինությունը կարելի է տեսնել միայն այնտեղ, որտեղ գերագույն հեղինակություն ու կամք կա - ցեղի՛ կամքը: Իբրև թե հոգու ու մարմնի առողջ սերունդ է երազում, բայց չի խոստովանում, որ ցե՛ղն է սերունդների հավիտենական կազդուրիչն ու հզորացուցիչը:

Նա թոթովում է նա՛և ներքին համերաշխության մասին, բայց անգիտանում, որ առանց գերագույն հաշտարարի - որպիսին է ցեղը,

գերեզմանի հողը միայն կարող է հաշտություն պարտադրել օրվա ոգեսպառ հայության:

Ուզում է նորահաս սերունդը հայ պահել, բայց մատը մատին չի զարկում՝ Հայաստանը հային պահելու համար, բայց և այնպես, վատորեն խուսափում է նորահաս սերունդի դաստիարակության խնդիրը լուծել՝ հայրենիքի ինքնապաշտպանության կապակցությամբ, ինչպես արվում է ամենուրեք: Նա գիտի, բայց չի խոստովանում, որ ամեն մի ժողովրդի բուժակշիռը- դա՝ իր երիտասարդությունն է, որ միաբանություն, Հայաստանից դուրս՝ հայը հայ պահելու կարելիություն, հայրենիքի ինքնապաշտպանության համար անհրաժեշտ մարտական ուժայդ բոլորը, և ավելի՛ն, մեզ կտա նորահաս սերունդը, եթե, անշո՛ւշտ, հին սերունդը կարողացավ Հայաստանի ինքնապաշտպանության գործը դարձնել հոգեկան պահանջ՝ նորի համար, եթե երկու սերունդների վրա էլ հսկեց ցեղը, եթե երկուսն էլ ապավինեցին ցեղին- Մասիսի նման հավետ «ներսից հրաբուխի ահեղ խառնարանով եռուզեռ» մեր ցեղին:

...

Ո՞վ է ներկայացնում Հայ կամքը (գոյություն ունի՞ նման բան), ո՞վ է արտայայտում, ո՞վ է վարում դա:

Անտեղի հարցեր: Հայ ստամտավորականության նեխած լիբերալիզմը վաղուց է հանգել անիշխանականության: Գաղութներում վաղուց է սկսվել ցեղի ոգու կազմալուծման գործընթացը:

Գաղութահայությունն այսօր ո՛չ հասարակություն է, ո՛չ էլ ժողովուրդ, այլ հոգևոր իմաստով՝ մարդկային փոշի, իսկ քաղաքական իմաստով՝ ստվեր միայն:

Այնտեղ, ուր հոգևոր և գաղափարական հարաբերությունները տեղի են տվել լոկ առօրեական նյութա-եսական հաշիվների առջև, այնտեղ, բառիս հասարակագիտական իմաստով, հասարակություն կամ ժողովուրդ գոյություն ունենալ չի կարող: Եղածը հայ զանգված է, անտեր, անիդեալ, անուղի մի զանգված, և ոչ ավելին: Օրվա իր կացության մեջ՝ գաղութահայությունը ամենայն արդարությամբ կարող է յուրացնել Նարեկացու խոսքը և կրկնել իր մասին. «Ամբարներս լցված են ոչնչությամբ և պահեստներս՝ հովերով. ստվերների նմանություն ունեմ և կերպարանքս է՝ ծիծաղելի»:

Անհայրենիք հայության օրվա «կերպարանքի ծիծաղելիության» միակ պատճառը իր կեղծ մտավորականությունն է, որի համար աշխարհը չի դառնում, չի փոխվում: Անհարազատ արևելցի, կեղծ եվրոպացի, ավելի ճիշտը՝ Արևմուտքի հիմարության ու սխալների ծաղրապատկերը - ահա՛ անցեղաշունչ հայ մտավորականի շեշտված տիպը: Տարիներով նա արևմտականություն կեղծեց, բայց չարևմտականացավ, բայց եվրոպացու կենսաբանական բարոյականը չունեցավ,

ինչպես և չհասկացավ, որ եվրոպական ազգերին հատուկ հերոսական զգացումը արդյունք է ոչ միայն վերջինների կենսաբանական պայմանների, այլև՝ մի բարձր փիլիսոփայական աշխարհըմբռնումի: Նա չի հասկանում, որ մարդ արարածը սիրով տառապում է, զոհաբերում, մեռնում հավիտենական արժեքների և ո՛չ թե թղթե հիմարությունների, բանաձևերի ու հոդվածների համար:

Իր հոգեբանությամբ նա մնում է մի ոտքով Արևել-քում, մյուսով՝ Արևմուտքում. նա մնում է կես-կես, ավելի ճիշտը՝ ո՛չ այս, ոչ էլ այն:

Դեռ այսօր էլ - մեր երկրագնդի ամենավտանգալի օրերին - նա վատորեն փախչում է բոլոր այն խնդիրներից, որոնք այնքան մոտիկից շոշափում են մեր Ցեղի և Հայրենիքի ճակատագիրը, խնդիրներ, որոնց մեջ մեր ժամանակի սիրտն է զարկում:

Նրա համար ինքնաքննադատողությունն ու զղջումը - զորավորների այդ զույգ առաքինությունները - դեռ մնում են անծանոթ:

Նա-հայոց ստամտավորականությունը դեռ այսօր էլ իր տկարությունները ատելու չափ հայրենասիրություն և արիություն չունի:

Հետևա՞նքը. հետևանքն եղավ այն, որ հայ կյանքի գետն այսօր այնքան տիղմ է կուտակել իր տաշտի մեջ, որ այլևս ուղղությունը փոխելու աստիճան դժվարացած է իր հոսանքը:

Հոգևոր աղետ - ահա՛ թե ինչի է մատնված սփյուռքի հայությունը իր ցեղախույս ստամտավորականության կողմից:

Նման դրության մեջ է մեռնում ժողովուրդների հոգին:

Ո՞ւր է ելքը:

Ո՞վ կփրկի հայ հոգին ստույգ մահից:

Ո՞վ կօգոնի մեր կյանքի երկնակամարը, որ այնքա՜ն ժամանակ օդափոխված չէ:

- Ցե՛ղը, միա՛յն ցեղը:

Մեր ճշմարիտ մտավորականությունը վաղուց է հնչեցրել վտանգի զանգը: Շատ ենք ուշացել: Օր առաջ պետք է ճշտել մեր ցեղի նկարագրի այն գիծը, որ հաղթական հանդիսացավ անցյալ դարերի և փոթորիկների դեմ, ու պարբերաբար կարելի դարձրեց մեր ազգային վերածնունդներն ու հեղափոխությունները. ժամ առաջ պետք է ճշտել մեր ցեղի ոգու այն հաղթական գիծը, և հետ այսու նրա վրա, միա՛յն նրա վրա կառուցել մեր հայաշեն ու հայրենաշեն գործը, ու վերստին նրան, միա՛յն նրան կռթնել՝ գոյ և գալիք վտանգների դեմ հաջողաբար ճակատել կարողանալու համար:

...

Տարոնականությունն է մեր ցեղային նկարագրի հաղթական գիծը, մեր ցեղի գերագույն առաքինությունը, հայ հոգու հավիտենական խռովքը - նրա անմահության տենչը, նրա մեծագործության կարոտը, նրա հոգևոր պայազատությունը:

Տարոնականություն - դա ասել է՝ Մամիկոնյանների ճամբով:

Տարոնականության - ցեղի հավիտենական այդ զենքին ենք դիմում, որովհետև այլևս աշխարհը մեզ համոզեց, որ ներկա պայմաններում վտանգի, հերոսականի ու մահվան մարդը միայն կարող է Հայաստանը ապրեցնել:

Տարոնականություն, ասել է՝ հավիտանականի զգացում, որի սրբազան առարկան ցեղն է:

Դա ասել է՝ նա՛և իդեալական սեփականության զգացում, որի առարկան Հայրենիքն է:

Պարտականության, հզորանքի և քաջության կրոն - ահա՛ թե ինչ է նշանակում Տարոնականություն:

Տարոնականություն - դա ասել է՝ ճշմարիտ մտավորականի և տարոնաշունչ ռազմիկի զինակցություն, հանուն Ցեղի և Հայրենիքի:

Դա ասել է՝ հետայսու երկու բան պիտի զբաղեցնի հայ միտքը՝ սիրտը և բազուկը՝ Հայաստանը և իր ինքնա-պաշտպանությունը:

Ցեղային այդ դավանանքը անհրաժեշտորեն պարտադրում են մեզ Հայաստանի աշխարհագրական դիրքը, մեր ժողովրդի թվական տկարությունը, մեզ սպառնացող օրվա և վաղվա վտանգները:

Դա - Տարոնականությունը մեզ պարտադրում է նաև հոգելից Մամիկոնյանների պես Հայրենիքին անշահասիրաբար ծառայելու ու նրա համար քաջաբար մեռնելու պատրաստ մի նո՛ր սերունդ հասցնելու հրամայականը:

Մեզ մի նոր սերունդ է պետք- վտանգի՛ սերունդ, որ աշխարհը և իրերը տեսնել սիրեր իր ճակատագրին հրամայել գիտցող կամքի աչքերով:

Երեկ - հասկանա՛նք այդ- մեզ պատժողը թուրքը չէր, այլ՝ մեր տկարությունը թուրքի միջոցով:

Դա վաղն էլ կպատժի մեզ, եթե մինչև այդ վաղը Տարոնականությամբ չհաղթահարենք մեր տկարությունը:

Հայրենիք պաշտպանել, վաղը կարող են նրանք մի-այն, որոնք մինչև այդ վաղը հոգեպես կզինվեն Տարոնականությամբ, այսինքն՝ Մամիկոնյան մեր հրաշունչ ռազմիկներից կսովորեն ապրել ու գործել միայն ա՛յն բանի համար, որի համար արժե մեռնել, և մեռնել ա՛յն բանի համար, որի համար արժեր ապրել:

Մի՛շտ պատրաստ՝ ժպտադեմ կատարելու այն, որ պահանջում է Հայրենիքը:

Ցեղի և Հայրենիքի համար Մամիկոնյանների պես մեռնել ուզել ու մեռնել գիտենալ - ահա՛ թե ինչն ենք մենք անվանում Տարոնականություն:

Այսօր «տարոնականություն» են քարոզում բոլոր ազգերը: Տարոնականությամբ - ցեղի այդ առաջին զենքով կամ մենք պիտի

անցնենք հայի տկարությունը սնուցանող հին հասկացողությունների դիակների վրայով, կամ էլ Նորը, որ սկսել է իր խորտակիչ գրոհը հին աշխարհի դեմ, վաղը պիտի անցնի մեր ժողովրդի դիակի վրայով:

«Տարոնի Արծիվ», Սոֆիա, 1938,թիվ 1-2:

ԻՆՉՈ՞Ւ ՏԱՐՈՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դիպվածով ձեռքս անցավ «Նոր Օր»-ի համար 4489-ը, ուր Տարոնականության առթիվ ասված է. «...Այդ տողերը գրողը մինչև երեկ Տարոնականություն բառը արտասանած չէր, բայց և այնպես Հայրենիքի համար քաջաբար կռված էր»:

Ինձ վերաբերող այդ տողերի մեջ կա ոչ միայն ճշմարտության ու հարգանքի պակաս - հարգա՛նք, որ թվում է, թե ամեն հայ մարդ պարտական է Հայաստանի համար քաջաբար կռվողներին - այլև, կարծեք, հատկապես այս օր-երին, մոլորանք ստեղծելու միտում: Ի՞նչն է այդ թերթին հիմք և իրավունք տվել ասելու «մինչև երեկ» - իմ անցյա՞լը, իմ այնքան ծանոթ աշխարհայեցողությո՞ւնը, թե՞ վերջերս Տարոնականության մասին գրած մեկ-երկու հոդվածներս: Գիտակցական իմ ամբողջ կյանքում, ինչպես և իմ վարած բոլոր ճակատամարտերում- Բալկաններում, Ղարաքիլիսայում, թե Լեռնահայաստանում ինձ վարել է այն ոգին, որը անվանում եմ Տարոնականություն: Ի՞նչ, նոր է բա՞ռը: Թեև-իմ փոխարեն պիտի ասեր Թորգոմ Պատրիարքը - «Թեև ընդհանրապես բառը չունենք մեր շրթների վրա կամ մեր գրչի տակ, բայց ունենք գաղափարը մեր խղճմտանքի խորը»: Այո՛, այն փաստը, որ «տարոնականություն» բառը նոր է գործածվում - դեռ ապացույց չէ, որ նոր է և՛ գաղափարը, ոգին մեր կյանքում: Հայրենիքի համար քաջաբար կռվելու և գիտակցորեն մեռնելու տրամադիր ամեն հայ, Մամիկոնյաններից մինչև մեր օրերը, եղել է տարոնական, թեկուզ այն պարզ պատճառով, որ Եղիշեի մատյանը համարվել է Հայոց ազատագրության ավետարան՝ մեր բոլոր սերունդների կողմից, որ տարոնաշունչ մեր պատմագիրն է բանաձևել «մահ գիտակցյալ»-ը հայրենիքի համար, և սերունդները խանդավառել «Մամիկոնյան Ուխտ»-ի խորհրդով:

Թույլատրելի՞ է շփոթել «բառն» ու բովանդակությունը: Տարոնականությունը բովանդակություն է և ոչ թե բառ: Էաբանորեն առնված՝ դաշնակցականությունն ու Տա-րոնականությունը, ինչպես և Տարոնականությունն ու Ցե-ղակրոնությունը տարբեր բաներ չեն ու չեն կարող լինել հայ ցեղի ճակատագիրը խորքով ու իմաստասիրորեն ապրող ամեն հայի համար: Սրանցից որևէ մեկը առանց իր հոգևոր նախընթացի անկարելի պիտի դառնար: Ժամանակների հոլովույթի հետ,

այդ բոլորին ծնունդ է տվել մի ոգի, որի գծերից մեկ- Հայրենիքի համար քաջաբար կռվելու ու մեռնելու ուխտածությունը մենք անվանում ենք Տարոնականություն: Իմ լույս ընծայած գրքերից, իմ գրած հոդվածներից, իմ արտասանած խոսքերից որի՞ մեջ չէք տեսնի ցավախառն մի ցասում այն մասին, թե հայությունը պատմաճանաչ չէ. այո՛, իր պատմության իմաստասիրությունը դեռ չունի հայը: Եվ հենց այդ է պատճառը, որ ոմանց նորանշան ու անհասկանալի է թվում Տարոնականությունը: Պատմությունը մի՛շտ էլ եղել է հերոսորեն ողբերգականի պատմություն: Ուզում եմ ասել՝ ազգերն առավելապես խորանում, իմաստասիրում են իրենց դժբախտության մեջ ու վտանգի օրերին: Կարծո՞ւմ եք, որ երբևիցե մեր ժողովրդին վիճակվել է ավելի մեծ ու ահավոր ողբերգություն, քան այն, որ նա ապրում է այսօր: Իզուր պիտի անցներ մեր տարագրության զարհուրանքը, եթե մեր ապրած տառապանքից ու մեզ սպառնացող վտանգից խարազանված, մենք չխորանայինք մեր պատմության մեջ - մեր քաղաքական կազմակերպված կամքը՝ դաշնակցականությունը ավելի ևս շեշտելու և ակտիվացնելու նպատակով:

Սիոնը կար, բայց «սիոնականություն» բառը չկար: Նա հազարամյակների պատմություն ունի, սա՝ տասնամյակների: Կարո՞ղ եք պնդել, որ անհայրենիք հրեության դարավոր կյանքը վարողը սիոնականությունը չի եղել: Արդյո՛ք, քաղաքական սիոնիզմը հրեության դարերի հոգևոր սիոնականության արդյունքը չէ՞: Ինչո՞ւ հրյան իր պաշտամունքը Սիոնի հանդեպ անվանեց սիոնիզմ, իսկ իրեն՝ սիոնիստ: Եվ, կարծո՞ւմ եք, որ այդ «բառը» զգալապես չակտիվացրեց օրվա հրյան: Սիոնականությունից առաջ կարելի՞ էր երևակայել, որ մեր օրերում Պաղեստինը պաշտպանելու համար աշխարհ գա հին հերոսական Մակաբեյներին հիշեցնող մի նոր սերունդ: Չխաղա՛նք բառերի հետ, էականը բառը չէ, անունը չէ՛, տեսությունը չէ՛, այլ Հայրենիքի համար «քաջաբար կռվելը»:

Ո՛վ խուսափում է ոգուց և կառչում բառերին, ցույց է տալիս, որ թշնամի է խորքին, իմաստին բովանդակությա՛ն:

Ո՞վ կարող է իրեն հայ մտավորական անվանել և իր մտքի բարոյական մահավճիռը չտալ, եթե դա չի հասկանում Տարոնականությունը, այսինքն՝ ոչինչ գիտի Հայոց Պատմության և այդ վերջինի իմաստասիրության մասին: Դաշնակցականությունը կար, բայց, արդյո՛ք, մինչև վերջին տարիները մեկը կարո՞ղ է մեզ ցույց տալ մեր կուսակցական գրականության մեջ «դաշնակցականություն» բառը: Դա, սակայն, բնա՛վ չի նշանակում, որ դաշնակցականություն չկար Դաշնակցության և դաշնակցականի մեջ: Էականը բառը չէ, բայց հասարակագիտորեն ճիշտ է և՛ այն, որ «բառ»-ի, անունի ստեղծումից ներքին ապրումը դառնում է ավելի բովանդակալից, ավելի կոնկրետ և ավելի գիտակցական:

Ի՞նչ էր անունը այն ուժի, այն ոգու, այն դավանանքի, որ մինչև Դաշնակցության աշխարհ գալը Արաբոներին հանել էր լեռները: Մեռնողները չգիտեին այդ անունը, բայց մի օր իրենց շարժումը պիտի մկրտվեր «Դաշնակցություն» անունով:

Խոստովանենք, որ ո՛չ բառն է նոր, ո՛չ էլ բովանդակությունը - դրանք առնված են Հայոց Պատմության գանձարանից: «Ուխտ Մամիկոնեից» - նո՞ր է դա. եթե տարոնականություն բառի փոխարեն սրանով անվանվեր հոգևոր այդ շարժումը, արդյո՛ք, տարբե՞ր վերաբերմունք պիտի գտներ նրանց կողմից, որոնք աղետալիորեն սխալ հասկացողություն ունեն կուսակցականության մասին:

Այսօր, երբ ամեն հայ վտանգված է համարում մեր Ցեղի և Հայրենիքի ապագան, Տարոնականությունը- «քա-ջությամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր»-ը - Մամիկոնյան ոգու այս վերակոչումը, մասնավորապես դաշնակցականներիս համար, պիտի համարվեր ողջունելի: Տարոնականությունը ես անվանել եմ «ցեղի առաջին հոգևոր զենքը», քանզի ծանոթ եմ այն դժնդակ պայմաններին, որոնց մեջ մեր ժողովուրդը վարեց իր անհավասար գոյամարտը և հարկադրաբար պիտի վարի և՝ վաղը: Իսկ վտանգի ժամանակ- լա՛վ հասկանանք այդ - «սուրը վարծով չեն առնում»: Այդ ասել է, որ մենք պայքարի մեր հոգևոր զենքերն ու մտքի մեր ղեկավար սկզբունքները պիտի առնենք ոչ թե մեր ցեղի էության անհարազատ օտարոտի վարդապետություններից, այլ մեր պատմության հավիտե-նական շարժը վարող ոգուց: Այդ ոգին - անխոս զգացվի թե խոսքի վերածվի - Տարոնականությունն է մեզ համար: Ի՞նչ էր իմ օրերի Սյունիքի «Դավիթբեկյան ուխտ»-երի ոգին, եթե ոչ միևնույն Տարոնականությունը՝ տարբեր անվան տակ: Հոգևոր աղետ է հայի անտարբերությունը - դավաճանությո՛ւն: Իսկ սերը՞ - չկա ավելի անարժեք բան, քան նրա սերը, նրա սովորական հայրենասիրությունը: Հրաշագործ է, սակայն, հայ մարդու պաշտամունքը, նրա ուխտվածությունը:

Մեր ժողովրդի բոլոր մեծությունները արդյունք են իր որոշ զավակների ուխտվածության: Վաղը քաջաբար կռվելու պատրաստ զինվորներ կունենա միայն նա, ով այսօր ուխտ ունի: Այս հասկացողությամբ ժամանակին ես ծնունդ տվի «Դավիթբեկյան ուխտ»-երին, որոնք լիուլի արդարացրին իրենց անունը վտանգի ու պարտականության ճակատի վրա: Միևնույն հոգեբանական հաշիվներով «ուխտ» անվանեցի նաև Ամերիկայի մեր ցեղակրոն միավորները: Տարբեր բան է խումբը, տարբեր՝ ուխտը: Հայրենիքի համար քաջաբար մեռնելու ուխտվածություն է Տարոնականությունը: Չկա ավելի անպիտան իմացական էակ, քան ուխտազուրկ հայ մարդը: Փորձառաբար գիտեմ՝ ոչի՛նչ չարժի հայկական քանակը, թիվը, եթե դա ոգեզուրկ է: Անուխտ հայ, ասել է անոգի, իսկ անոգի հայ, ասել է՝ աննվեր, անարի, անզոր: Ասացի՝ «ոչինչ չարժի», և այդ ոչ թե այն իմաստով, որ մերօրյա հայությանը տրված չէ թվապես չափվելու իր արտաքին թշնամիների հետ, այլ որովհետև ոգեզուրկ հայ հավաքականությունը եղել է ու կմնա ամենավտանգավոր ամբոխը: Նման մի ամբոխ մի օր քեմալական չեկաներին հանձնեց մեր Ղարսը՝ ասպետական անձնասպանություն պարտադրելով իր տղամարդ ղեկավարներից գնդապետ Մազմանյանին: Տարոնականությունը՝ ուխտվածության բարոյական է, առանց որի հայությունը, մասնավորապես, այսօր և վաղը՝ ճշմարիտ զինվոր ու ղեկավար չի ունենա, ինքնապաշտպանունակ չի դառնա:

«Նոր Օր»-ը գրում է. «Տարոնական ոգու առաջնորդները պահանջում են, որ ամբողջական Հայաստանի ոգուն փոխարինի նրա մեկ գավառի անունը»:

Այստեղ այլևս անկոռեկտ բառագործածություն կա, կա մեղանչում մտածողության պարկեշտության դեմ: «Տարոնի Արծիվ»-ի ընդհանրապես, և, ի մասնավորի իմ հոդվածների ո՞ր տողից եզրակացրիք, որ մենք ուզում ենք Հայաստանի ոգին փոխարինել նրա «մեկ գավառի անունով»: Ինչի՞ վերագրել այդ կոպիտ ու աղաղակող շփոթը - անգիտությա՞ն, թե՞ մոլորանք ստեղծելու միտումի: Մի խմբագրի համար դժվա՞ր է զանազանել «Տարոն» անունը Տարոնականությունից:Տարոնականությունը «գավառի անո՞ւն» է, թե հոգևոր բովանդակություն: Իմ հոդվածի առաջին տո-ղերը բավական չէի՞ն ցանկության դեպքում հասկանալու, որ Տարոնականությունը ես համարել եմ մեր ցեղի ոգու (դուք ասեք- «Հայաստանի ոգու») զույգ գծերը- հավիտենական արժեքներ ստեղծելու խանդ, և այդ արժեքների համար քաջաբար մեռնելու ուխտվածություն: Ինչո՞ւ ուխտվածություն կքարոզեմ - այդ մասին հարցրեք այն բոլորին- զինվոր թե մտավորական- որոնք գեթ մի հատիկ օր Հայաստանի սահմանների վրա ճակատ ճակատի են եկած թշնամու հետ: Ազգերի տարերքը- նրանց առաքինություններն ու հոգևոր թերիները կարելի է ճանաչել միայն մեծ վտանգների ժամանակ, երբ վերջինները նետում են իրենց դիմակը: Զինվոր մարդ եմ, և արնոտ փորձերով եմ ճանաչում մեր ժողո-վուրդը: Չկա հայ մարդ,որ անսխալ կերպով չթվի իր ժողո-վրդի տկարությունները, բայց սակավաթիվ են նրանք, որոնք գիտե՞ն, թե ուր է թաքնված հայի հզորության հոգևոր աղբյուրը: Ի՞նչն է եղել մեր ժողովրդի կենդանի խղճմտանքը հանդիսացող լավագույն մատենագիրների ներշնչումի աղբյուրը, նրանց սիրտն ու գրիչը վարող ուժը: Ո՞ր հայ գրողը, ո՞ր ճշմարիտ հայրենասերը, և մասնավորապես, ո՞ր ռազմիկը Հայաստանին սպառնացող վտանգի վայրկյաններին չի ոգեկոչել Հայրենիքի համար մեռնել ուխտած Մամիկոնյանների օրինակը:

Ե՞րբ է հայ սուրը գործել առանց Վարդանի, և գրիչը շարժվել առանց Մեսրոպի անունը տալու: Դեռ երեկ չէ՞ր, որ հայ գրողներից ամենացեղաշունչը- Ահարոնյանը «Հայրենիք» ամսագրի մեջ Ղարաքիլիսան անվանեց «Նոր Ավարայր»: Եվ ի՞նչ է Ավարայրը, ընդհանրապես, իբրև պատմական դեպք, նշանաբան, խորհուրդ, եթե ոչ տարոնական ոգու մեկ գործը: Շա՞տ է անցել այն օրից, երբ Հայաստանի կառավարությունը իր անդրանիկ զրահապատն ու շքանշանը անվանեց «Վարդան Զորավար»: Վարդանի շքանշանով վարձատրել հայ զինվորին, կնշանակի վարձատրել տարո-նական ոգին, դա կնշանակի այդ ոգին համաժողովրդականացնելու նպատակ հետապնդել: Եվ հենց դա է ճշմարիտ դաստիարակությունը - Հայաստանի համար մեռնելու ուխտի համազգայնացումը: Մեր եկեղեցին ամենայն երկյուղածությամբ ու պաշտամունքով, դարեր ու դարեր տոնում է Տարոնականության երկու մեծափառ գործերը - Գրերի Գյուտը և Ավարայրը: Արդյոք, այս բոլորը, համայն հայության կողմից, կատարվել է - ինչպես թույլ եք տվել ձեզ ասելու - «պարզապես գրգռելո՞ւ մեր տարոնցի հայրենակիցների տեղական հայրենասիրությունը»:

Ի՞նչ է նշանակում, երբ Հայ Եկեղեցին սրբացնում է Մամիկոնյան ոգին, այդ ոգու կրողներին - արդյո՞ք, դա միայն երախտագիտության տո՞ւրք է, թե՞ նաև՝ խորագույն մտահոգություն Հայրենիքի ապագայի հանդեպ: Սրբացնելու ու հավերժացնելու Մամիկոնյանների ուխտը՝ եկեղեցին մեր ժողովրդին տվել է ինքնապաշտպանության զենքերից ամենահատուն ու հաղթականը- «մահ գիտեցյալ»-ը: Հենց ա՛յդ է Տարոնականությունը: Հայ Եկեղեցու իմաստուն ակտը, որը 15 դար հետո պիտի որդեգրեր մեր կառավարությունը՝ տարոնական ուխտ չէ՞ր: Տոնել չի՞ նշանակում ասել՝ նմանվե՛ք տոնելիներին:«Նայի՛ր դասական մի հույն տղամարդու, լինի դա հերոս, թե՝ իմաստասեր, և ամոթով դիտիր քեզ». ասել է Հերդերը:

Ես ասում եմ. «Հայ մարդ, կարո՞ղ ես առանց խոր ամոթանքի քեզ բաղդատել մի Մամիկոնյանի հետ - նմա՞ն ես նրան»:

Չգիտե՞նք, որ եկեղեցի, դպրոց, ընտրանի- այդ բոլորը միշտ էլ մեր ժողովրդի փրկությունը տեսել են Վարդանատիպ քաջեր ու հայրենապաշտներ հասցնելու մեջ: Եվ դարերի ընթացքում ու «մինչև երեկ» ո՞ր անմիտ հայն է հանդգնել Տարոնական ոգու այդ համահայկական պաշտամունքը համարել «Հայաստանի մի գավառի անուն» կամ «տեղական հայրենասիրություն»: Մտածումի այդ ի՞նչ անկում է: Այսօր, երբ ավելի քան երբեք վտանգված են Հայրենիքն ու հայությունը - ինչո՞վ անհասկանալի պիտի մնար Տարոնական ոգու քարոզ-չությունը, որ ասել է՝ արծարծումն ու շեշտումն այն բանի, ինչ որ դարերով կատարել է հայությունը: Չընդունե՞լ, որ այսօր էլ այս ոգով կարելի է ոչ միայն հայը՝ հայ պահել տարագրության մեջ, այլ և՝ հայը մարտիկ

դարձնել յոթնիցս վտանգված Հայաստանի համար: Չէ՞ք լսում հուսահատ ճիչերը, թե դժվար է օտարության մեջ հայը հայ պահել: Արդյոք, նա, որ այսօր դժվարանում է հայ մնալ, վաղը պիտի ուզենա՞ հայրենիք պաշտպանել: Կուզեի՞ք, որ եկող մեծ օրերը իրենց առջև գտնեին ցեղորեն ու մարդկորեն մի անարյուն, անգույն, անզոր - մի պզտիկ սերունդ: «Նոր Օր»-ը պիտի չուզե՞ր, որ իրենց կյանքի սրբություններին ու արժեքներին, իրենց ցեղին ու հայրենիքին, իրենց Աստծուն, իրենց պարտականության «այո՛», իսկ իրենց «Ես»-ին և հաճույքներին, կենցաղային նյութապաշտության և աշխարհի այլ կարգի գռեհկություններին վճռաբար «ոչ» ասողների մի սերունդ ունենայինք:

Մամիկոնյանները իրենց զոհաբերությունը կկատարեին իրենց խոսքի, իրենց ուխտի կշռով: Եթե «տարոնականություն» բառով չբնորոշենք՝ ամեն ինչ հայրենիքի զոհաբերելու ուխտվածությունը, ոգին, բարոյականը, հապա ինչո՞վ: Անգիտանա՞նք պատմությունը: Այն հանգամանքը, որ հայոց բոլոր տոների շարքում - ազգային, հեղափոխական, եկեղեցական - տարոնական ոգու տոնը՝ Վարդանանցը, տոնվում է համահայկականորեն, խորքով ու ապրումով, ապացույց չէ՞, որ այդ ոգին և իր պաշտամունքը կա մեր ժողովրդի մեջ՝ թեև տկարացած: Այն, ինչ որ համարում ենք ծուլումի ու այլասերումի վտանգ և հուսահատ կանչ արձակում, միթե՞ հետևանք չէ հենց այդ ոգու տկարացումին: Տարոնական ոգու քարոզչությունը գալիս է նորոգելու և միաժամանակ, մեկնաբանելու այն խորհուրդը, թե ինչո՞ւ հայությունը իր սրտի սնունդը, բազկի ուժը և հավատի ջերմությունը հավիտենապես պիտի ստանայ Մամիկոնյանների ոգուց և ուխտից: Եթե հոգեկան այդ գիծը բնազդաբար ապրած ու զարգացրած չլինեին հայկական սերունդները, եթե դա չհամարեին գոյամարտի անհրաժարելի զենք- ինչո՞ւ Մամիկոնյանների անճիտումից հետո Բագրատունիները, Ռուբինյանները և Սյունաց աշխարհը հա-վերժացրին ու համազգայնացրին Վարդանների պաշտամունքը: Այդ բոլորը ճշմարտություն համարելով՝ ես ասել եմ. «ճի՛շտ է, սուրբ է հայրենի երկրի ամեն մի բուռ հողը, սակայն ճիշտ է և այն, որ հայրենիքներն ունեն իրենց պատմա - ռազմագիտական տեսակետից ամենակարևոր ու ամենանվիրական երկրամասը,- այն երկրամասը, ուր ցեղը ամենից շա՛տ է արյուն թափել, մշակութային գանձեր դիզել, հերոսական ու պատմություն ստեղծել, այն երկրամասը, առանց որի հայրենիքը ոչ թե զորավոր ու անկախ լինել, այլ և իր գոյությունը պահել, ինքնապաշտպանվել չի կարող: Ճակատագրորեն մեծ է Տարոնի նշանակությունը մեր Ցեղի և Հայրենիքի պաշտպանության համար»: Ա-հա՛ այսքանը Տարոնի մասին:

«Տարոնականությունն է մեր ցեղային նկարագրի հաղ-թական գիծը: Տարոնականությո՛ւն ասել է՝ Մամիկոնյանների ճամբով, դա ասել

է՝ ցեղի և Հայրենիքի համար Մամիկոնյանների պես մեռնել ուզել ու մեռնել գիտենալ»: Այս էլ տված է Տարոնականության մասին:

Արդյո՞ք, իմ այս տողերից կարելի՞ էր այն եզրակացությունը հանել, որին հանգել է «Նոր Օր»-ը: Ո՞վ և ե՞րբ է փորձել (ոչ ոք կփորձեր այդ անմտությունը) «ամբողջական Հայաստանի ոգուն «հակադրել» - նրա մեկ գավառի անունը»: Ի՞նչ է դա - մտքի մոլորա՞նք, թե՞ մոլորանք ստեղծելու տկարություն:

...

Մի ժողովուրդ ճանաչելու համար բավական է լսել նրա մեջ հնչող խոսքը: Ոգու տրամաբանությունն է վարում լեզուն, խոսքը: Երբ մեկը լեզվական տարազները գործա-ծում է առանց որոշ բովանդակություն դնելու նրանց մեջ, մատնում է, որ իրեն պակասում է անսխալ հասկացողությունը այն բանի մասին, որից նա խոսում է: Եվ միշտ էլ անբարոյացուցիչ է խոսքը, երբ դա ներքին հոգևոր իրականության արտահայտիչն ու արտահայտությունը չէ:

Հավասար չափով պետք է զարհուրել ինչպես բառերի անիմաստ, այնպես էլ նրանց անպարկեշտ գործածությունից: Օրվա հայ մտավորականության որոշ մասի խոսքը իսպառ կորցրել է իր հստակությունն ու որոշականությունը, ինչպես և իր խորհրդանշային ուժը: Դա ախտանշան է մտավոր քաոսի և տեսական խղճմտանքի պակասի: Սնամեջ խոսքը վտանգավոր է անքննադատ ընթերցողի համար: Ավելի մեծ չարիք է դա նորահաս սերունդի համար: Պետք է խոստովանել, որ մեր ժողովրդի անմիաբանության պատճառներից մեկն էլ հենց նման խոսքն է: Մեր կյանքում ամեն կեղծիք՝ մի գերեզման է ճշմարտության համար: Եվ բավա-կան չէ, որ կեղծողը հաջողում է ժամանակավորապես գերեզմանել ճշմարտությունը, այլև ծպտումի հոգեբանության օրենքով նա երևան է գալիս հենց իր թաղած ճշմարտության պատկերով: Այստեղ ոչ միայն ճշմարտությունը սպանելու փորձ կա, այլև հանրության առջև ինքնապաշտպանվելու, նամանավա՛նդ՝ իբրև ծպտված հաղթական փառավորվելու ճիգ:

Մեր իրականության մեջ լեգեոն են ճշմարտության թշնամիները - երբեմն նույնիսկ օրենքը, կանոնը, կարգա-պահությունը, ձևական իշխանությունը և այլն: Բայց ճշմարտության մեծագույն թշնամին մնում են նրանք, որոնց ներքին կյանքում ճշմարտությունը անհրաժեշտություն չէ, որոնք հարմարվել գիտեն աշխարհի բարոյական բոլոր մթնոլորտներին: Ճշմարտության թշնամիներն են նախևառաջ ոգու թշնամիները, որովհետև ճշմարտությունը գործում է և ազդում միայն ոգու միջոցով: Նրա առաջին կարգի թշնամիներից են նա- և «նյութապաշտության կույր խլուրդները», նրանք, որ «անցեղ» են, անառաքինի, երկչոտ, տկար:

Ճշմարտությունը միայն ստության հակաթեզիսը չէ, այլև բարին, սրա կերպարանը, գիտակցությունը և հոժա-րությունը: Իմ խոսքը բարոյական ճշմարտության մասին է: Այդ ճշմարտությամբ է սնվում ժողովուրդների ոգին: Առանց դրան մարդը մնում է անստեղծագործ, պատեհապաշտ, խղճմտանքը՝ մեռյալ: Դա խորապես ապրված սեփական ճշմարտությունն է: Դա է միակ հոգեփոխիչ և ազատագրիչ ուժը, նաև՝ միակ դաշնակիցը, համերաշխիչը հանրային կյանքում: Դա է կերտում մարդու հոգևոր նկարագիրը, որով միայն արդարացում է գտնում ամեն կարգի ճշմարիտ ղեկավարություն, իշխանություն:

Հայության մեջ, իր ժամանակին, այդ ճշմարտությունն ապրեցին Մամիկոնյան սերունդները - և հենց սրանում էր հայրենիքի և ազգի համար «սրտի հրճվանքով» ու գիտակցաբար մեռնելու իրենց հերոսության գաղտնիքը: Այդ ճշմարտությունն է ահա՛, որ այսօր պակասում է մեր մտավորականության մի մասին: Ճշմարտություն չէր լինի, եթե ասեի. «Հա-յաստանի ապագան կարելի պիտի լիներ ապահով համարել, եթե մեզ տրված լինեին այն կարելիությունները, որ ունի եվրոպական այս կամ այն պետությունը - օրինակ՝ տեխնիկա, ճարտարարվեստ, նյութական հարստություն, դրական գիտություններ, կարգապահություն, մաժինոյան գծեր[58] և այլն»: Սակայն, մի բարոյական ճշմարտություն ասած կլինեմ, եթե հայտարարեմ. «Հայրենիք ապրեցնելու և պաշտպանելու համար, ամեն բանից առաջ, պետք են նրա համար մեռնել ուխտած մարդիկ, որպիսիք էին Մամիկոնյանները»:

Այդ ճշմարտության պակասի պատճառով մեր մտա-վորականության մի մասը շարունակում է մնալ հոգեբանորեն ցրված, և առատ տուրք է տալիս մարդկային մանր տկարություններին: Այդ տկարություններից մեկը, և ամենազզվելին, խեղաթյուրելու հակումն է:

Բարոյական մի ճշմարտությամբ ապրեց ու գործում է ամերիկահայությունը: Նա ժամանակին գիտակցեց, որ ով աշխատում է իր նորահաս սերունդի համար, նա աշխատում է իր ազգի ու սրա ապագայի համար: Այդ փրկարար գիտակցությամբ նա աննախընթաց խանդավառությամբ ողջունեց Ցեղակրոնությունը՝ մեր ուխտերին հանձնելով իր զավակները: Եվ ահա՛ մեր շարժման հենց առաջին տարին, խեղաթյուրելու տկարությամբ տառապող մեկը խծբծեց. «Հայ ժողովրդի ներկա կացության մեջ ցեղակրոն անունը գիտական չէ»: Ո՞վ կարող է ասել, թե ի՛նչ իմաստ է դրված այդ ցնդաբանության մեջ: Ի՞նչ է նշանակում «ներկա կացության մեջ գիտական չէ» - մտքի հոպոպություն չէ՞ դա: Արդյո՛ք, գիտությունը հարաբերական հասկացողություն է՝ կապված այս կամ այն կացության հետ: Այդ անհեթեթության հեղինակը գիտի, անշուշտ, որ «երկու անգամ երկուսը հավասար է չորսի» ոչ միայն իր ապրած երկրում, այլև Չինաստանում, ամենուրե՛ք: Նա գիտի այդ, բայց և այնպես, մոլորանք ստեղծելու տկարությունը – խեղաբարոյու-

թյունը նրան մղել է հիմարաբանության: Մի ուրիշը՝ ցեղի և Ցեղակրոնության դեմ քար նետեց՝ բանագողության դիմելու գնով - գողանալով մի եվրոպացու քառորդ դար առաջ գրած հոդվածը: Ահա՝ թե մինչև ուր է տանում ճշմարտության զգացումի պակասը: Եվ զզվելին նրանում է, որ մոլորեցուցիչները ձեր ամբողջ գրվածքից մի բառ, մի նախադասություն առնելով, չարամտորեն նրանից հանում են իրենց ուզած եզրակացությունը՝ ընթերցող հասարակությունը մոլորանքի մատնելու համար: Այսպէ՛ս է գործում անցեղահոգ հայ միտքը մեր կյանքում: Խեղաթյուրումի հոգեբանությունը արդյունք է չարության և իմաստակության: Խեղաթյուրողի նպատակը՝ առարկայական ճշմարտությունը ժխտելեն ավելի, ճշմարտության քարոզչի գործը դժվարացնելն է: Որ խեղաթյուրումը, ընդհանրապես, հետևանք է հոգևոր քան-դվածության ու անստեղծագործության, այդ պարզ երևում է նրանից, որ խեղաթյուրողը միայն կտցահարում է, սևացնում, ժխտում, բայց սեփական ոչինչ է տալիս: Նա ընդունակ չէ ասելու՝ «այսպե՛ս պետք է լինի»: Նա իր հասկացածի և չհասկացածի մասին միայն թուքակում է՝ «այդպես պիտի չլիներ»: Նա կույր չէ, տեսնում է, որ պետություն, եկեղեցի, մանկավարժություն, ցեղային առողջագիտություն, սպորտ - այդ բոլորն այսօր հետապնդում են մի նոր նպատակ - հասցնել նոր մարդը, որ միշտ էլ աշխարհ է գալիս պատմության անկյունադարձերի ժամանակ: Իրենց ժամանակի համար նոր էին՝ վերածնության մարդը, լուսավորության դարի մարդը, ֆրանսիական հեղափոխության մարդը: Իր նոր մարդն է փնտրում նաև հետպատերազմյան շրջանի պատմությունը: Նա գիտի այդ, գիտի ճշմարտությունը, սակայն այն խոստովանելու և կիրարկելու արիություն չունի: «Հին մարդը, որ անցնում է, երկվացած էր՝ տեսության մեջ իդեալիստ, իսկ իրական կյանքում նյութապաշտ. դեմոկրատիզմից և այլասիրությունից խոսող, բայց եսապաշտ. կրոնը անհատական խղճի գործ համարող, բայց սրբության զգացումից զուրկ. հայրենասիրություն կեղծող ու վտանգի ժամանակ դասալքող. ազատությունից ու ազատականությունից ճառող, բայց իշխանության տիրանալիս՝ շնականորեն բռնավոր, ընկերավարություն դավանող, բայց իր հացի համար ընկերոջ դիակը կոխոտող: Այսպես հոգով պառակտված ու ցեղորեն անդեմ էր հինը: Նա մեռնում է այսօր և իր տեղը տալիս նորին - ցեղորեն դիմորոշված, երկվությունից, կեղծիքից, ստորությունից զերծ, բարոյապես առողջ ու ամբողջական մարդուն»: Ասացի՝ այդ նոր մարդու համար է աշխատում մերօրյա պատմությունը:

Կարելի՞ է առանց բարոյական զարհուրանքի պատկերել մեր ժողովրդի օրվա հոգեվիճակը: «Նոր Օր»-ի խմբագրականը ողբալով հայ իրականությունը, ասում է. «Այսօր հազար կտորի վերածված ենք, ֆիզիկապես և նյութապես սպառած ենք. ոտքի տակի հողը կորցրած ենք ու կգտնվենք կորցնելու և օտարանալու վտանգի առջև»: Լա՛վ է

լուսանկարել. հենց այդ է մեր վիճակը- գերեզմանից միայն մի քայլ ենք հեռու: «Այսօր զոհողության ոգին կպակասի մեզ» - ճիշտ է նույն թերթի նա՛և այդ հաստատագրումը: Եվրոպացու առողջ ինդիվիդուալիզմը հայ մարդու մեջ վերածվել է զզվելի անձնապաշտության: Այդ այդպես լինելով հանդերձ՝ հիշյալ թերթը կտցահարում է նրանց, որոնք Տարոնականություն են քարոզում, այսինքն՝ Մամիկոնյաններին հատուկ զոհողություն Ազգի և Հայրենիքի համար: «Նոր Օր»-ի խմբագրի գրչին է պատկանում նա՛և հետևյալը՝ «Մասնավորապես հայ երիտասարդի համար ցեղապաշտության իդեալը պետք է լինի սրբազան դավանանքը, մոլեռանդ հավատքը»: Ի՞նչպես հաշտեցնել «Նոր Օր»ի ցեղապաշտությունը Տարոնականության հանդեպ սնուցած իր չկամության հետ: Չէ՞ որ Տարոնականութ-յունը այլ բան չէ, եթե ոչ մեր ցեղի ոգու դրականը, նրա դրական գծերը: Հապա ի՞նչը- եթե ոչ Տարոնականությունը - կտա մեզ ժամանակի պահանջած ամբողջական հայ մարդը, որով և՝ հոգեբանորեն ու նպատակագիտորեն ամբողջացած հայությունը: Երևի ասվի- Դաշնակցությո՛ւնը: Այո՛, Դաշնակցությո՛ւնը: Մենք այդպես ենք մտածում և հենց դրա համար էլ գտնում ենք, որ Դաշնակցության քաղաքական աշխատանքներին զուգահեռ առաջ պիտի տարվի նա՛և մեր ժողովրդի ոգեվերանորոգումի գործը, այլապես անհնար է ստեղծագործ ելք գտնել մեզ համար՝ ներկա աննախընթացորեն ծանր կացությունից: Դաշնակցության նպատակը կուսակցություն մնալ ու կազմակերպություն պահելը չէ, այլ ազգ դառնալը, իսկ ազգն ստեղծվում է ազգային ոգու ստեղծումով - մի բան, որ հնարավոր է միայն և միմիայն Մամիկոնյան ոգու արծարծումով:

Մի ժողովուրդ, որն անօրինակ աղետից հետո իսկ խորապես չի ցնցվում և թե մղվում վերաքննելու ամեն բանից առաջ իր բարոյականը՝ կենսաբանորեն բարոյազուրկ ժողովուրդ է:

Աշխարհահռչակ Կրապոտկինը՝ Փարիզի կոմունարների ձախողանքից հետո, պիտի քաշվեր մենության մեջ՝ մշակելու նոր բարոյականություն՝ գալիք հեղափոխական պայքարների համար:

Դանիացի ժողովուրդը իր անցյալ դարի 70-ական թվականներին կրած ազգային մեծ աղետից հետո, պիտի ծնունդ տար վերանորոգչական մի հորդ շարժումի, մկրտելու այն իր աստվածաշունչ որդիներից Գրունդվիգի անունով - Գրուդվիգյանի՛զմ, որին հաջողեց նախ հաշտեցնել մտավորականությունն ու պարզ ժողովուրդը, որով և՝ մարդկայնության բարձր սկզբունքն ու ազգային ոգին, մարդկային հոգևորն ու ազգայինը, որոնց միջև դարերով բացված կմնար մի մեծ վիհ: Այդ շարժման շնորհիվ դանիական մտավորականությունը խորացավ իր հոգևոր ու ազգային էության մեջ, դիմեց պատմության դաստիարակչական ազդեցության, կռեց իր նոր աշխարհայեցողությունը, և վե-

ռանորոգվելով՝ վերանորոգեց, ոգեփոխեց իր ժողովուրդը, որի բարգավաճության այսօր նախանձում են աշխարհի մեծ ու փոքր ազգերը:

Գրունդվիգի ստեղծագործ գաղափարաբանությունը հող գտավ եվրոպական բոլոր երկրներում: Գրունդվիգյանիզմը վերաստեղծեց հյուսիսային բոլոր ժողովուրդները: Սրա շնորհիվ երբեմնի խոպան Ֆինլանդիան դարձավ «ճերմակ շուշանների երկիր»: Նրա քարոզչության գործին Գերմանիայի մեջ այսօր լծված են պրոֆ. Ռայնը և ուրիշներ:

«Ռուսիայի թշնամիները,- ասում է մի ռուս գրող,- կոչված են, կարծեք, հոգևորապես արթնացնելու մեզ»:

Չասե՞մ - ամո՛թ մեզ, և վա՛յ մեր ժողովրդին, որ թուրքին իսկ չհաջողվեց ցեղորեն արթնացնել հայ մտավո-րականությունը՝ իր ամբողջության մեջ:

...

Եթե Մամիկոնյաններից մեզ մնացած լիներ միայն Վարդան Զորավարի ճառը՝ ուղղված հայ բանակին, Ավարայրի ճակատամարտից առաջ, ես դարձյալ կմնայի տարո-նական ոգու երկրպագուն, պաշտողը: Մեկուկես հազարամյակ առաջ հայ զինվորը տվել է հայրենապաշտության ու անձնվիրության գերագույն չափը, որով և՝ մի անգամ ընդմիշտ լուծել է հաղթանակելու գաղտնիքը - «սրտի հրճվանքով ընդունենք մահը»: Ասպե՛տ էր Մամիկոնյանը, քանզի ճշմարիտ հերոս էր - «մեր խիզախ քաջության վատություն չխառնենք»:

Ցեղորեն ինքնաճանաչ՝ հպարտ մտածումի մարդ էր նա - «ավելի շատ հաղթական եղած ենք, քան թե պարտված»:

Խորապես իմաստուն էր նա- «երկյուղը թերահավատության նշան է»: Եվ ազնվորեն փառասեր - «ո՛վ արիաբար առաջ անցներ, ազգից քաջ անուն կժառանգեր», ասում է Հայոց Սպարապետը: Զինվոր եմ, և ծանոթ ազգերի ծարավ պատերազմների պատմության: Ոչ թե հինգերորդ դարում, այլև մեր ժամանակներում շատ քիչ ազգերի մեջ զինվորությունը հաջողել է մշակել այն բարձր բարոյականը, որով ապրեցին ու գործեցին մեր Մամիկոնյանները - մի հերոսական, որին դժվար թե դարերը կարողանան նոր բան ավելացնել:

Ի՞նչ. հերոսականության, հայրենապաշտության, ցե-ղային հպարտանքի, մարտական խանդի, ասպետականության - ի մի բան՝ Մամիկոնյանի բարոյականի կարիք չի՞ զգում օրվա հայությունը:

Այլևս «արիաբար առաջ անցնող»-ներ պետք չե՞ն:

Հապա վտանգված Հայաստա՞նը: Զարմանալի՞ է, որ հայ զինվորը վտանգի այս օրերին Մամիկոնյանների ոգուց ու բարոյականից - Տարոնականությունից է խոսում: Այդ ո՞ր օրվանից հերոսականության ու հերոսապաշտության քա-րոզչությունը մեր կուսակցության մեջ վտանգավոր հերետիկոսություն համարվեց: «Նոր Օր»-ի խմբագիրը

շա՞տ վատ է ներկայացնում Դաշնակցությունը, որի համար էականը եղել է և պիտի մնա՝ ամեն բանից առաջ հայ հայրենիքի համար քաջաբար կռվողներ և մեռնողներ հասցնելը: Իսկ դա հնարավոր է միայն և միայն այն ոգու միջոցով, որի քարոզչությանը լծված ենք մենք:

Միևնույն թերթի կողմից Տարոնականությունը համարվում է «խարխափումներ»-ի արդյունք: Խարխափո՞ւմ - դա հատուկ է քաղաքական սիրուններին և ոչ թե զինվորին, որ գիտի իր գործը՝ խաղաղության մեջ ուխտվածություն քարոզել, իսկ վտանգի ժամանակ «քաջաբար կռվել»: Դա հա-տուկ է նրանց միայն, որոնք շարունակում են աղմկել դեմոկրատիայի, լիբերալիզմի, անհատապաշտության և նման չհասկացված և մասնավորապես, սխալ հասկացված փոխառիկ հիմարությունների մասին - բաներ, որ չգիտենք, թե այս օրերին ինչ առնչություն ունեն մեր տարագիր ժողո-վրդի ճակատագրի հետ:

Մի վայրկյան ճշտենք հայ ճակատագիրը շոշափող խնդիրների կարևորության չափը: Ո՞րն է, ավելի ճիշդ՝ ո՞րը պիտի համարել խնդիրների խնդիրը օրվա հայության համար.

- Հայության ու հայ հայրենիքի ինքնապաշտպանությունը:

Ի՞նչն է եղել դարերի այդ ինքնապաշտպանության մշտահաղթ զենքը.

- Մամիկոնյանների ուխտվածությունը, բարոյականը, ոգին:

Իսկ ի՞նչն է եղած և պիտի լինի Դաշնակցության դերը:

- Իր ժողովրդի համար ապահովել այդ զենքը, որ անվանում ենք Տարոնականություն:

«Մոտավորապես երեք քառորդ դար տևեց մեր ժողովրդի ազատագրական պայքարը: Հաջողվեցի՞նք մեր նպատակի մեջ», հարցնում է «Նոր Օր»-ը, առանց պատասխանելու իր դրած հարցին: Ահա՛ թե ո՞ւր է խարխափումը: Այո՛, խարխափում կա. խարխափում են նրանք, որոնք Թուրքիայի քաղաքական բարեկամությունն են երազում, կանխավ հային հոգևոր զինաթափություն քարոզելու, հեռացնելով մեր ժողովրդի ուշադրությունը իր ինքնապաշտպանության խնդրից, որոնք չխրատված երեկվա մեր պատմությունից, իրենց մանր անձնականությունը բավարարելու նպատակով չեն քաշվում մոլորանք ստեղծել անգամ հայ հայրենիքի համար «քաջաբար կռվողներ»-ի շուրջը:

Զինվորը - այդ էլ լավ հասկանանք, - չի խարխափում երբե՛ք. նա կամ քաջաբար կռվում է կամ էլ դասալքում: Զինվորի համար ճշմարիտ է միայն այն դավանանքը, որը նրան բարոյական ուժ և արիություն է տալիս կռվելու և կարիքի դեպքում մեռնելու հայրենի երկրի համար:

Զինվոր մարդ եմ. իմ անցյալի ու վաղվա անելիքի չափ պարզ, հստակ և որոշ է իմ այսօրվա դավանանքը - մի դավանա՛նք, որի խարիսխը ձգված կմնա մեր ցեղի ոգու մեջ. դավանանք, որն իր մեջ կրում է իր հոգևոր, պատմական և իմաստասիրական արդարացումը:

Ա'յս է եղել, է ու կմնա Դաշնակցականի իմ դավանանքը:

Սրանից տարբեր պիտի չլինի ընդհանրապես Դաշնակցականի դավանանքը: «Պատմական Հայաստանի մեջ Տարոնը անկասկած իր տեղն ունի ուրիշ շրջանների կարգին»,- ասում է «Նոր Օր»-ը, թույլ տալով սխալներից ու մեղանչումներից ամենաաններելին:

«Ուրիշ շրջանների կարգին» դասել Տարոնը, ասել է՝ ծանոթ չլինել Հայոց պատմության:

Իր միևնույն խմբագրականի մեջ ավելացնում է նա. «Տարակույսից վեր է, որ Պատմական Հայաստանի որոշ վայրերը իրենց փառքով և ոգով մեզ կպարտադրեն բացառիկ հարգանք և պաշտամունք»: Ճիշտն այդ է, և դա ժխտումն է իր առաջին ասածների: Այո՛, հենց Հայաստանի այդ «որոշ վայրեր»-ից մեկի - Տարոնի՝ հավիտենապես «բացառիկ հարգանք ու պաշտամունք» պարտադրող «փառքն և ոգին» է մեր քարոզած Տարոնականությունը: Պարզ չէ՞, որ եթե այդ բացառիկ հարգանք ու պաշտամունք պարտադրող ոգուց զրկենք մեզ՝ մեր մեջ ոչինչ չի մնա դաշնակցականությունից: Դատարկ անոթի վերածած չե՞նք լինի Հայաստանի ոգին, եթե նրանից դուրս թողնենք այդ ոգին: Խմբագիրը չի ուզում, որ հայն իր գոյությունը կապի անցյալի հիշատակներին և թելադրում է, որ նա իր «գոյությունը հաշտեցնի ներկայի պայմաններին»: Բայց և այնպես, խոսում է «Հայաստանի ոգու» մասին, առանց անդրադառնալու, որ ոգին սնվում է անցյալի հյութերով միայն, որ ոգի ասել է՝ առավելապես անցյալ, որ դա գրեթե ամբողջապես անցյալ սերունդների ապրումների, ոգորումների, ողբերգության, հաղթանակների, դիզած բարոյական հարստության, ուժի, պաշտամունքի և զոհողության արդյունքն է:

Ոգին է կռում ազգերի ճակատագիրը: Փոխվեց մեկը՝ փոխվում է և մյուսը:

«Մի՛ մարեք ոգին»,- ասված է երկու հազարամյակներ առաջ ոգու մի հսկայի կողմից, որի առջև պիտի ծունկ ծռեր անգամ աշխարհակալ Հռոմը: Ուր մարած է ոգին՝ այնտեղ մեռյալ է կյանքը: Ոգի հասկացողությունը - կուլտուրական հասկացողություն է:

Արժեքներ, սրբություններ, մարդկայնություն, գաղա-փարներ, իդեալներ, հոգեկան ուժ, լեզու, արվեստներ, իմաստություն, իմաստասիրություն, առաջնորդություն, հերոսական, փառք - ոգին է այդ բոլորի ստեղծիչը:

Այլ բան չէ մարդկային բովանդակ պատմությունը, եթե ոչ՝ ոգու զարգացման առաջընթաց և արդյունք, միաժամանակ: Էականը մի ժողովրդի համար իր վարած այս կամ այն քաղաքականությունը չէ, այլ այն ոգին, որով ղեկավարվում է նա, ժողովուրդը: Քաղաքականությունը գրեթե միշտ էլ լինում է միայն այնքան արդյունավետ, որքան զորեղ և ակտիվ է այն վարողի ոգին:

Ոգին է մի ժողովրդի ուժերի մեծագույն բազմապատկիչը: Կամք, ստեղծագործություն, արիություն մի՛ փնտրեք ոգեսպառ եղած ժողովրդի մեջ:

Չարիք է տկարոգի մարդու ղեկավարությունը, անեծք՝ նրա իշխանությանը:

Ոգին է վարում, ստեղծագործում, հաղթանակում, «մահվամբ մահը կոխում», մարտիրոսության մղում, առաքինացնում, անմահությունը նվաճում:

Ոգեզուրկ ժողովրդի հերոսները, լուսակիրներն ու սրբերը մնում են իբրև մեռյալ իրականություն: Նրանց հիշատա՞կը- դա իրենց ոգին է, որ փոխանցվում է սերնդե սերունդ, և հենց այդ ապրող ու ստեղծագործող ոգու կյանքի մեջ է իրական անմահությունը:

Վարդանների անմահությունը - դա հայրենապաշտությամբ, քաջությամբ և ցեղային բարոյականով զորավոր հայ սերունդներն են:

Հայրենիքն է ոգու ամենասրբազան թանձրացյալ ստեղծագործությունը:

Դեռ չի տեսնված, որ ոգեսպառ մի ժողովուրդ տևապես հայրենիքի տերը մնա: Սովորեցրեք հայ մարդուն Մամիկոնյանների անսահման նվիրումով ծառայել հայրենիքին և մեռնել նրա համար, և դուք կապահովեք նրա հայրենիքի գոյությունն ու անկախությունը: Թշնամին - անգամ ամենից նախնականը - գիտի թե ինչո՛ւ նաև պետք է հարվածել իր ախոյանի ոգուն: Եվ ինչե՞ր, այսօր ինչե՞ր չեն անում թշնամի համարված ժողովրդի ոգին տկարացնելու համար:

Հայ ոգու կրողներն էին Մամիկոնյանները: Հայաստանի բազմապիսի թշնամիներ փորձով գիտեին այդ, և հենց այդ էր պատճառը, որ նրանց կողմից այնքա՛ն հետևողականությամբ և բարբարոսությամբ հետապնդվեց հրաշունչ Վարդաններ, Մուշեղներ և Վահաններ ծնող ազգատոհմի անճիտումը:

Ոգին է վարել Պլուտարքոսի, քրիստոնեության, հայրենիքների, գիտության, հեղափոխության բոլոր հերոսներին ու մարտիրոսներին:

Ոգեզուրկ ժողովրդին վարում են դիպվածները: Երբ մի ժողովուրդ վերելքի ու հաղթանակների փոխարեն անվերջ խոսում է վտանգի մասին- հասկացեք, որ նա ոգեթափ է եղած:

Նմանի վարած ամենահիրատես և չափավոր քաղաքականությունն իսկ բանի պիտի չծառայի: Ոգու պակասի արդյունք է մեր ժողովրդի օրվա հոգևոր անշարժությունը, նրա քաղաքական հոռետեսությունը, նրա կյանքի գռեհկությունը, անհամերաշխությունը:

«Թուրքիա և Հունաստան բարեկամության դաշինքը ստորագրեցին, - այն Հունաստանը, որը «Մեղալի Իդեայի»-ն համար, միլիոնից ավելի զոհ տվեց». ասում է «Նոր Օր»-ը և այդ քաղաքականությունը համարում է «իրատես»: Քաղաքական ինչպիսի՛ պարզամտություն:

Հույնը հրաժարվեց Մեծ Հունաստանի գաղափարից ոչ թե նրա համար, որ իմաստուն ու շահավետ համարեց իր արդի քաղաքականությունը, այլ որովհետև, նրա ոգու ուժերը ընդունակ էին պաշտպանելու միայն և միայն իր հայրենիքի օրվա նեղ սահմանները, և ո՛չ ավելին:

Մամիկոնյանները - որոնց բարոյականը այնքա՜ն պահանջկոտ էր մարտնչող հայ անհատի հանդեպ, որոնց համար աշխարհը շուկա չէր, այլ քաջագործությունների ասպարեզ, որոնք գիտեին կյանքին արժեք չտալ - գիտցան համադրել քրիստոնեությունն ու ազգությունը: Սրանով պետք է բացատրել սրբազանի այն խոր զգացումը, որ դարերով իրենց անգերազանցելի հերոսության մայրը հադիսացավ: «Առանց Վարդանի և Մամիկոնյանների՝ կարելի չէր երբեք, որ Հայաստան փրկվի»,- ասում է Հայոց պատմությունը՝ մի ճշմարտություն, որ ամենայն վճռականությամբ կարելի է կրկնել և ա՛յսօր:

«Ղեկավարելու արժանի լինելու համար պետք է միշտ էլ արժանի լինել, որ հետևեն քեզ»: Եվ մարդը - անհատ, թե հավաքականություն - նվիրումով ու տևապես հետևում է միայն զորավոր ոգու տեր ղեկավարներին:

Այդպիսին էին Մամիկոնյանները - հետևե՛նք նրանց, քանզի չկա ցեղային ավելի մեծ առաքինություն, քան ընթանալ ցեղի հոգևոր առաջնորդների ճամբով, և քաջաբար մեռնել «ի վերա աշխարհիս մեր և ի վերա ազգիս մեր» - ահա՛ թե ի՛նչ ենք հասկանում Տարոնականություն ասելով:

«Տարոնի Արծիվ», Սոֆիա, 1938, թիվ 5-6:

ԶՈՐԱՎԱՐ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԸ ՏԱՐՈՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սխալ է, ավելի՝ ոճիր է կարծել, թե բոլոր ճշմարտությունները մարդու պես մահկանացու են, թե նրանք էլ մեզ պես ծնվում են, ապրում, սպառվում, մեռնում:

Ո՛չ, ո՛չ, ճշմարտություններ կան, որոնք անմեռ են, հավիտենական, ինչպես ինքը՝ ժամանակը:

Այդ կարգի ճշմարտություններից են նրանք, որոնք վերաբերում են հայրենիքին, մահվան, հաղթանակին, առաջնորդին, պարտականության և այլն:

Այդ ճշմարտությունները իրենց արյունով կնքել ու դարերին և սերունդներին կտակ են թողել Մամիկոնյան ռազմիկները:

Եթե բացենք դարերի գերեզմանը և խոսեցնենք հայոց պատմու-թյան մեջ հավերժացած այդ անմահներին, նրանք պիտի ասեն.

«Մեր օրով ղեկավարի և զինվորի համար ոչինչ չարժեր կյանքը, երբ Հայրենիքը վտանգի մեջ էր»:

«Մեր օրով կանգուն մնաց Հայաստանը, որովհետև մենք իմացանք երես-երեսի գալ, դեմ-հանդիման կանգնել գերագույն պարտականության, ինչպես հավատավորը՝ իր Աստծու առջև:

«Մեր օրով հայը մնաց անպարտելի, որովհետև մենք իմացանք զգալ սրբազանի ներկայությունը կյանքի և պատմության մեջ. իմացանք մեր առօրյային խառնել հավիտենականի հոգսերը:

«Մենք իմացանք չափվել մեզնից գերազանց ուժերի հետ, որովհետև սովոր էինք չտագնապել վտանգի մեծությունից, որովհետև մեր օրով կյանքի կոչվեց «անմահից գունդը»:

«Մենք մնացինք հաղթական, որովհետև մեր օրով հաղթական մահն էր մարդկային արժեքի և արժանիքների միակ չափանիշը, որովհետև իրապես գիտակցում էինք զոհի և զոհաբերության անհրաժեշտությունը և անխուսափելիությունը՝ հայրենի հողի համար:

«Մենք եղանք զորավոր, որովհետև մենք մոտիկ էինք կանգնած մեր ցեղի ճակատագրին, շա՛տ մոտիկ, այն շոշափելու աստիճան, և հենց այդ էր պատճառը, որ մեր օրով հայը եղավ ռազմունակ և տիրասեր:

«Մեր օրով էլ «աղվեսին» հաճախ հաջողվում էր խնդել զսպված վագրին ու առյուծին - Ձիրավի դյուցազունը՝ Մուշեղը - պիտի սպանվեր «մտքից թեթև» Վարազդատից - մեր ժամանակ էլ կար ներքին տկարությունը, մահաբույն նախանձը, չարությունը, բայցևայնպես, հակառակ որ մեր մի բազուկը զբաղեցրինք թիկունքում - մենք երբե՛ք չտարակուսեցինք, թե մեր թափած արյունը փրկարար է հայրենի երկրի համար և թե մենք պիտի հաղթանակենք:

«Մեր օրով հայ զենքը պարտություն չտեսավ, որովհետև ամեն Մամիկոնյան հայոց բախտը պատմության կողմից իր ձեռքը տրված համարեց և այդ գիտակցությամբ իրեն անսպառ ուժ և արիություն ներշնչեց:

«Մեր օրով առաջնորդության գաղափարը կապված էր վտանգի, հերոսականի և գիտակցական մահվան հետ. տարոնաշունչ հայը իր մահով հաղթանակում էր մահը և իրեն էր ենթարկում հավիտենական կյանքը՝ անմահությունը:

«Մեր օրով հրամայելու - երբ վարող և հրամայող չկա՝ ժողովուրդն աստիճանաբար վարժվում է իր դանդաղ հոգևարքին - մեր օրով հրամայելու և հրամայվելու անդիմադրելի մղում կար. կար դժվարության և վտանգներին կուրծք տալու արիություն, կռիվներում

քրտնելու քաղցրություն. մենք իմացանք հրաժարվել մեր անձից, երբ պետք էր մեռնել:

«Մեր օրով, որպես հայ և մարտիկ մենք երբե՛ք չտկարացանք, որովհետև մեր բազուկը վարում էր Վահագնը, իսկ մեր խղճմտանքը՝ ուխտապահության մեր հեթանոս աստված Միհրը»:

* * *

Որքան ցեղահոգ, այնքան սրտառուչ է Տ. Տ. Հ. Միության կեդր. վարչության առած որոշումը- դեկտեմբեր ամիսը հայտարարել տարոնական վերածնունդի ամիս:

Վերածնունդ - դա ասել է՝ ամոթի ու ցավի խոր գիտակցությամբ զգալ, որ այսօր այն չես, ինչ որ էիր և որ ուխտել ես աշխատել վաղը դառնալ ա՛յն, ինչ որ էիր:

Ժողովուրդների ապագան իրենց հերոսաբար ապրելու, պայքարելու և զոհաբերելու կամքի մեջ է:

Հենց ա՛յդ ասել է տարոնականություն - ապրե՛լ, պայքարե՛լ զոհաբերե՛լ:

Տարոնականություն է Մամիկոնյան հսկաներից Վարդանի ուխտը - այնպիսի մի գործ պիտի գործեմ, որ ամբողջ աշխարհին պատմվի մինչև հավիտյան:

Դա դավադրված Մուշեղ զորավարի անճառելի դառնությունն է - ո՛ւր էր, թե ձիու վրա հանդիպեր մահը:

Դա մեր ազգային երրորդ ապստամբության ղեկավարների բարձր ըմբռնումն է - մեր ձեռնարկը կնոջ և զավակների համար չի:

Դա հայ սպարապետի լացն է, որ չի մեռնում գոռ ճակատամարտերում՝ Հայաստանի համար:

Դա Մանվել Մամիկոնյանի ցեղային արդար իրավունքի գիտակցությունն է - ինչ որ ինձ ժառանգություն կլինի, թագավորը՝ օտարը, չի կարող ուրիշի տալ:

Տարոնականությո՛ւն - դա Մեսրոպի անմահ գործն է, որ կարելի դարձավ որովհետև հայ սուրը պաշտպան կանգնեց նրան:

Դա հայ ռազմիկի գործն է, որ հաղթական եղավ, որովհետև Հայ եկեղեցին օրհնեց նրան:

Տարոնականությո՛ւն, ասել է՝ ցեղային հզոր և անզիջող անհատականություն:

Դա ասել է՝ թույլ մի՛ տար, որ ցեղիդ ստեղծագործության ու հայրենաշինության շղթան ընդհատվի:

Դա նոր ուխտ է տարոնաշունչ Մեսրոպների, Պարթևների, Խորենացիների շնչով օծուն իմացական նոր առյուծներ հասցնելու:

Դա ձգտումն է՝ վազքը մեր ցեղի ոգու - մեր լուսեղեն նշանագրերի - դեպի արևը, կյանքի աղբյուրը, լույսը:

Դա մեր հավատքն է, թե մեր այնքան արգասավոր ցեղը դեռ պիտի կրկնի իր զորավոր զավակները - Վարդանները, Մուշեղները, Վահանները, որ նա պիտի հասցնի հերոսական սքանչելիքներ գործելով վտանգի մի նոր սերունդ:

Դա ցեղի անմահ ընտրանու գործը շարունակելու ուխտն է:

Դա ասել է՝ հպատակություն ցեղին:

Դա ասել է՝ մտածումիդ, ապրումիդ և գործիդ մեջ ցեղը դի՛ր:

Դա և՛ հերոսապաշտություն է, և՛ նոր հերոսական ծարավ:

Կե՛ղծ է, մեռյա՛լ է ա՛յն պաշտանքը, որը պատմական գործերի չի մղում սերունդները:

Կորա՛ծ է այն ժողովուրդը, որի հերոսները կմնան որպես մեռյալ իրականություն:

Տարոնականությունը - դա ցասումնալի մի անեծք է Հայաստանին ծառայելու պատրաստ հայի նվիրումն ու գործը դժվարացնող ներքին չարության դեմ:

Աշտիշա՛տ, զոհափառ, զոհաշատ - ահա՛ այն անունը, որ խորհրդանշում է Տարոն աշխարհը և իմաստն է կազմում տարոնականության:

Վերջապես, տարոնականությունը մի վճռական միջոց է օրվա մեր ազգային կյանքը թունավորող հոգևոր մանրուքի և գաղափարների քաոսի դեմ:

Դա, մեր հասկացողությամբ, միաժամանակ, մի բողոք է մեր հավաքական տկարությունը սնուցող, պարտվողական, թուլօրոր քարոզչության դեմ:

* * *

Հին, ցեղահոգ իմաստությունն ասել է - եթե ուզում ես մեկին բարություն անել, բարություն արա՛ նրա զավակներին:

Կուզե՞ք նպաստել տարոնականության տարածման - Մամիկոնյանների ոգով դաստիարակեցե՛ք նորահաս սերունդը:

«Ռազմիկ», 1938, թիվ 46:

ՄԱՏՆՈՒԹՅՈՒՆ ԹԵ՞ ՊՐՈՎՈԿԱՑԻԱ

Որոշ թերթերում կարդացի մի հայտարարություն իմ մասին:

Որպես թե «հակակուսակցական» և «հակակարգապահական» ինչ որ «արարքների համար» հեռացված եմ ՀՀ Դաշնակցությունից:

Երրորդ պրովոկացիան է դա, որ տեղի է ունենում վերջի երկու տարվա ընթացքին Բուլղարիայում ապրող, երկրից եկած, որոշ մտավորականների դեմ: Անմիջապես ասեմ, որ այդ բոլորի հեղինակը Ռուբեն Տեր Մինասյանն է՝ տարիների իմ անձի և իմ քարոզած ցեղա-

հոգ - դասակարգ, հատվածականություն և սուտ սոցիալիզմ ժխտող-դաշնակցականության թշնամին: Աշխարհը, գիտի, որ Բուլղարիայում քաղաքական կուսակցություններ չկան և կուսակցական պատկանելիությունը պատժվում է: Տեր Մինասյանը գիտի նաև այն, որ դեռ երեկ էր, ինչ Յավորովի արձանի բացման և Քրիստափորի մահվան 30-ամյակին նվիրված մեր հանդիսության առթիվ՝ մեզնով զբաղվող և մեր ցեղի գոյության թշնամի երկրի մամուլը մերկացումներ և հարձակումներ կատարեց իմ դեմ:

Այժմ, որի՞ն է ծառայում այս մարդը և ի՞նչ է իր կատարածը-պրովակացիա,թե՞ մատնություն: Չորրորդ տարին է, ինչ լռում եմ այն մասին, որ այդ մարդը անձնական հաշիվներով դավեր է նյութել իմ սկսած ցեղակրոն շարժման դեմ, այդ վերջինը Ամերիկայով սահմանափակելու և իր խանձարուրի մեջ խեղդելու նպատակով:

Այդ և ուրիշ ավելի ծանր խնդիրների կապակցությամբ՝ ես վաղուց նրան մեղադրել եմ որպես դավադիր և պահանջել մերկացումը նյութված դավերի: Այդ կարելիությունը շատ հասկանալի պատճառներով ինձ չարվեց և ես ժամանակին նաև սոֆիաբնակ երեք անձերի ձեռքով հղել եմ իմ հրաժարականը: Որից հետո մի գրությամբ ինձնից խնդրել են ետ առնել հրաժարականս: Ես այդ խնդրանքն անգամ պատասխանի չեմ արժանացրել: Իսկ այժմ դուրս է գալիս, որ ո՛չ ես եմ հեռացել՝ ներքին դավադրության մեջ մեղադրելով Տեր Մինասյանին, այլ որպես թե «հակակուսակցական» ընթացքի մեջ եմ գտնվել և հեռացվել»: Նման բարոյականով կարելի՞ է հայրենիքին և ազգայինին օգտակար լինել:

Հասկանալի չի՞, որ իր ողջ կյանքը նման բանսարկություններով, ընկերադավություններով լցնող և անձնանպատակ թայֆաներով Դաշնակցության ներքին կյանքը թունավորող մեկի հետ կարելի չէ միևնույն հարկի տակ լինել:

Վաղուց է, որ այս մարդու ներկայությունը ղեկավարության մեջ՝ համարել եմ և համարում եմ կատարյալ աղետ Դաշնակցության համար և համոզվել, որ քանի նա դեռ կհաջողեցնի իր իմացած ճամբաներով իրեն պարտադրել, իրական և կրող ղեկավարություն չի ունենա Դաշնակցությունը: Չեմ ցավում, որ դեռ 1921 թվականին Հայաստանի մտավորականության հետ փրկել եմ և՛ սրա կյանքը:

Գիտեմ, որ հերթական իր այս տկարությունը արդյունք է իր միակ ընդունակության իր ամեն մի ծախողումից և ուրշների ամեն մի հաջողությունից հետո՝ արվեստական թնջուկներ ստեղծել և հանրության ուշադրությունը հեռացնել իր անձից:

Տեր Մինասյանի վատությունը խորանում է նրանով, որ նա ո՛չ միայն խեղաթյուրում է այսօրվա մեր հարաբերությունների բնույթը, այլև օգտվում է անցյալի իր մի այլ վատությունից:

Ասվում է, որ ես 1921 թվին էլ «պատժվել» և «ներվել եմ 10-րդ ընդհ. ժողովի կողմից»: Թե ո՞վ է «ներվել» այդ ժողովից և ո՞վ իբրև Թավրիզի դավադիր ստացել բարոյական իր պատիժը, երևում է հենց նույն այդ ժողովից, որ ամոթանքով լռել է Տեր Մինասյանի ստեղծած Կարսի մասին, իսկ իմ վարած Սյունյաց գոյամարտի վերաբերյալ, թողել է հետևյալ որոշումը.

- «Զանգեզուրի ապստամբական շարժումները և նրա շարունակությունը ունեցել են արտակարգ նշանակություն՝

1) Մեծամասնականները զգաստացնելով, նրանց բռնության եռանդը չափավորելու, 2) Փետրվարյան հեղափոխությունից հետո նահանջող ընկերների, բանակի և գաղթականության թիկունքը ապահովելու և նրանց Պարսկաստան անցքը դյուրացնելու, 3) Զանգեզուրի ամբողջ գավառը Հայաստանի Հանրապետությանը միացնելու, 4) Արտաքին աշխարհի մեջ մեր հարցի քաղաքական դիրքը ամրացնելու տեսակետից»:

Հայրենասեր և բարոյականի տեր երկիր ո՞ր հայը դեռ 1921 թ.-ին Թավրիզում չհասկացավ, որ հենց Կարսի աղետը աննշան թողնելու և անպատասխանատու մնալու նկատումով վայրկյանի պահանջ էր Հայաստանի համար «արտակարգ նշանակություն» ունեցող իմ այդ ծառայության դեմ դավել և գրել ինձ - «Թո՛ղ Անդրանիկությունները»: Անդրանիկն էլ քեզ պես վարվեց և այժմ անտեր թափառում է Եվրոպայում»:

Նմանապես ո՞ր հայն այսօր պիտի չհասկանա, որ ցեղակրոն շարժումից, վերանորոգչական և վերաքննական ոգի ստեղծելու մեր ճիգից, մեր ստեղծած ցեղային խռովքից և մանավանդ իր համար այնքան անհաճո տարոնականությունից հետո, Տեր Մինասյանը հոգեբանական նույն հաշիվներով անհրաժեշտ պիտի չհամարեր կրկնել 1921թ-ի դավը իմ դեմ, որպեսզի արվեստական թնջուկով հրապարակը վերստին աղմկելով՝ մոռացնել տար տարիների իր ունայնագործությունը և ծածկել ներքին պառակտիչի իր մեղքերը:

Ո՞ր հայը չգիտի, որ խորապես տարբեր են իմ և Տեր Մինասյանի ըմբռնումները «կուսակցականության» և «կարգապահության» մասին, և ո՞վ չգիտի, որ իմ հասկացած դաշնակցականությունը հայությանը տվել է Զանգեզուրը, մահից փրկել Հայաստանի Դաշնակցությունը, իսկ Տեր Մինասյանի «կուսակցականություն»ը և «կարգապահություն»ը Կարսի ամոթանքը և Քան լեռան անօրինակ ողբերգությունը:

Երբե՛ք չեմ զարմանում, որ Տեր Մինասյանը գոհ է այսօրվա վիճակից և սիրտ ունի հայ ժողովուրդի աննախընթացորեն ծանր և փափուկ այս դրության մեջ իր անձնական թշնամանքն ու ընկերադավությունը հրապարակել արվեստական թնճուկներ ստեղծելու հաշիվնե-

րով: Ես դժգոհ օրվա կացությունից՝ այսօր չէ, որ հայության փրկությունը տեսնում եմ վերանորոգումի մեջ: Դժգոհ և դավադրված՝ ես հեռացա և արություն ունեցա լռել իմ արած քայլի մասին: Ի՞նչը կարող էր առիթ տալ, որ իմ կողմից դատապարտվածը հրապարակեր իր թշնամանքը՝ խեղաթյուրելով ճշմարտությունը:

Ռուբեն Տեր Մինասյանը տրամադի՞ր է ստանձնել իր ընկերադավության հետևանքների պատասխանատվությունը:

«Ռազմիկ», Սոֆիա, 1938, 7 դեկտեմբերի, թիվ 59:

ՄԵՌՆԵԼՈՒ ԿԱՄՔ
(Մի զինվորի ճշմարտություններ)

Զինվորն իր ժողովրդին երկու բան կպարտինախ՝ ճշմարտություն, ապա՝ իր կյանքը:

Մեր երկրագնդի վրա սահմանավոր մի գետին կա, մի կտոր հող, որից առնված է մեր կենդանի կավը, որին միայն հարազատ ու բնիկ են մեր մարմինն ու ոգին - առավելապես ոգին: Մեր Հայրենիքն է այդ հողը:

Դա՝ հայրենիքը մի հոգևոր իրականություն է, դա «մի բան է ոգուց և ոգու համար»:

Ոգին է իմաստ և սրբազնություն հաղորդում երկրին:

Զրկեք երկիրն իր սրբազնությունից, իր հոգևոր նշանակությունից, և դա կդադարի հայրենիք լինելուց:

Հայրենի՞ք - «այստեղ է իմ հավատը, այստեղ է իմ ցեղը, այստեղ են հետքերն իմ հայրենի» (Կիկերոն):

«Պիտի պաշտպանեմ սրբարանները ու սրբությունները իմ հայրենիքի» (Պոլլակս): Այսպես կբանաձևեր իր երդումը Հռոմի զորացանկերի մեջ իր անունը արձանագրող երիտասարդը:

Քաղաքացի լինել, ըստ Դեմոսթենեսի, ասել էր «զոհաբերության մասնակցել»: Հայրենիքներն էապես ստեղծվեցին ա՛յն օրը, երբ նրանց որդիները, առաջին անգամ լինելով, զգացին սրբազնությունը իրե՛նց հայրենի հողի:

Նաև ճշմարիտ հերոսականը տեղի ունեցավ այն օրը, երբ մարդը սովորեց և սիրեց գիտակցորեն գործել, տառապել ու մեռնել իր հայրենիքի համար:

Այո՛, հայրենիքների գոյությունը միշտ էլ պայմանավորվել է նրանց համար ամեն վայրկյան մեռնելու պատրաստ ուխտվածների գոյությամբ:

* * *

Մեր երկրագնդի վրա, ուխտերից ամենասրբազանը մի՛շտ էլ կնքված է եղել Աստծո և Հայրենիքի համար: Deo et Patria![59] Նմաններից էր Մամիկոնեից Ուխտը:

Որպեսզի հայը իր կյանքը քաղցրորեն պատարագեր իր Հայրենիքին, նա պիտի ձգտեր բարձրանալ սովորական մարդկայնությունից, իսկ դրանում հաջողվելու համար, նա պիտի զգար կարիքը՝ մի գերագույն արժեքի, որպիսին է ցեղի հավիտենականը: Մամիկոնյաններին հաջողվեց նվաճել հայի հավիտենականը, որովհետև նրանց համար իրենց ուխտը Հայրենիքի համար մեռնելու լոկ ցանկություն չէր, երդում չէր, այլ կամք:

Մեռնելու կամք - դա ներքին ինքնաբուխ այն զգացումն է, ավելի՛ ճիշտը ներքին մղումը, որ ուխտվածին ուժ, արիություն և ուրախություն է տալիս մեռնելու իր հայրենիքի և ցեղի համար:

Կա՞ այդ կամքը - ասել է՝ ենթական հաջողել է հաշտեցնել իր անձը իր ցեղի հավիտենականի հետ. ասել է՝ նա այլևս գտել է ինքն իրեն, այլևս ինքնաճանաչ է, որով և՝ տեր իր ցեղի թաքուն ուժերին: Ճշմարտության ու հերոսական բարոյականի մարդ՝ նա այլևս ճշտել է իր վերաբերմունքը դեպի իր անձը, դեպի իր նմանները, դեպի ճշմարտությունը: Նմանների հայացքը միշտ էլ ուղղված է դեպի հավիտենականը. այլևս նմաններին չի խռովում կյանքի մանրուքը: Իբրև ռազմիկ՝ անպարտելի են նմանները:

Նմաններին վարողը արտաքին իշխանությունը և օրենքը չեն. սրանք չեն ուղարկվում, այլ գնում են մեռնելու ո՛չ թե նրա համար, որ դա պահանջում է ազգը, այլ որովհետև իրենք են մեռնել ուզում: Սրանք և՛ կամավոր զոհ են, և՛ զոհարար՝ իրենց անձի:

Նմանների հայրենիքում զինվորը կարող է մեռնել, բայց ո՛չ և պարտվել:

Այսպես էին Մամիկոնյանները:

* * *

Հայրենիքն է շնորհում մարդուն՝ հպարտանքներից ամենաարդարը, ցավերից ամենախորը, պաշտամունքներից ամենաանխառնը և մահերից ամենասուրբը:

Մեր հեթանոս դարերից արձակված հերոսական ու ցավախառն մի ճիչ, մի կա՛նչ դեռ արձագանգում է իմ արյան մեջ. «Զորակա՛ններ հայոց, այլևս հայրենիք չենք ունենա,եթե այս ալյաց մեջ չխեղդենք թշնամին» (Պարիլի): Դա ասել է, ո՛վ նահանջում է վտանգի առջև ընդունում է մահվան իշխանությունը կյանքի վրա. դա ասել է՝ ով փախչում է իր հայրենիքի շուրջը բորբոքվող կռվի ժամանակ, նա վատաբար լքում է այն ամենը, որ սրբազան է մեր աշխարհում, նա հրաժարվում է իր

իդեալ սեփականությունից, որպիսին է հայրենիքը, և մահանում բարոյապես:

Հայ զորավարը, ասում է Պարիլին՝ «չուզեց ապրել պարտվելուց հետո. նա ծիարձակ դիմեց թշնամու վրա, և մեռավ դյուցազնաբար՝ իր սրի վերջին հարվածով ճեղքելով թշնամի զորապետի սաղավարտն ու գանգը: Իր զինվորները կատաղած, ընկան թշնամու վրա՝ պաշտպանելու իրենց զորավարի մարմինը: Հուսահատական էր կռիվը, և ամենքն ել մեկ առ մեկ մեռան»: Այսպես էր սիրում նախաքրիստոնեական հայն իր Հայրենիքը և մեռնում նրա համար: Այդ օրերին, ասում է նույն օտարազգի հեղինակը, Հայաստանի մեջ տարածված խոսք կար, թե ծերունի զորականը չի կարող ստել կամ անխորհուրդ բան ասել:

Ինչպիսի՜ բարձր բարոյական: Ո՜րքան նման է հայ ռազմիկը իր «արի և իմաստուն» աստվածներին:

Հազարիցս ճիշտ է ասված, թե «զենքը վայել են քաջերին և ոչ խորամանկներին»:

Թեև արդիական զենքերը մաթեմատիկական զենքեր են, բայց և այնպես բանակների ճակատագիրը որոշողը այսօր էլ, վաղն էլ և հավիտենապես կմնա մարդկային ոգին:

Էապես ոչինչ չի անում այն ժողովուրդը, որն իր նյութական զենքերի հետ միաժամանակ, չի կատարելագործում նաև իր զինվորը:

Դիպվածական կամ «գողացած» հաղթանակներից երբեք չեն շահել հայրենիքները:

Լավ բան է անշո՛ւշտ, մի հատիկ զենք ավելի ունենալ, բայց ոչինչ բան է հազարներով իսկ ավելի ունենալը, եթե ռազմիկին վարողը մահվան գաղափարի հետ հաշտված հերոսական ոգին չէ:

Հրամայելու և հրամայվելու անդիմադրելի մղում, խանդ, դժվարությունների կուրծք տալու ծարավ, կռվում քրտինք կտրած ձիու վրա մեռնելու տենչ, մեր օրերի լեզվով՝ «լեգեոնի՛զմ», «մյուրիդի՛զմ» պիտի ասեր կովկասյան լեռնցին, մեր լեզվով՝ Տարոնականություն - ահա՛ թե ինչն է հատու և հաղթաբեր դարձնում զենքը՝ զինվորի ձեռքում:

Ի՞նչը հայերիս դարձրեց հաղթական Սարդարաբադում և Ղարաքիլիսայում - չգո՛ թի՞վը, սպառազինությո՞ւնը, կռվի հանճարեղ հատակագիծը - վճռապես ո՛չ, ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսը, այլ՝ մեր ուխտը, մեր կամքը՝ մեռնե՛լ, բայց թուրքը չտեսնել էջմիածնում, Երևանում:

Այո՛, պատերազմական տեխնիքայի շարժիչը վաղն էլ և հավիտենապես կմնա մարդը, մարդկային ոգին:

Այդ այդպես լինելով հանդերձ, նյութապաշտիկ դեմոկրատիայի հատուկ նախանձը՝ ոգու փոխարեն քարյուղը հռչակեց համաշխարհային պատերազմի ամենամեծ հերոսը:

* * *

Զինվորական երեք դոկտրիններից - նյութապաշտական, իմացապաշտական և ոգեպաշտական - վերջի՛նը պետք է լինի մերը:

Առաջինի համար ամեն ինչ է թիվը, երկրորդի համար՝ կռիվը շախմատային խաղ է, երրորդի համար՝ դա հոգեկան ակտ է:

Հավիտենական է կոնֆլիկտը թվի և որակի, ամբոխի և ընտրանիի միջև: Նյութապաշտականը ամբոխների դոկտրինն է: Միշտ էլ պարտվել են այն ազգերը, որոնք ունեցել են մի հատիկ հենարան - թիվը, քանակը: Կռվադաշտը միշտ էլ պատկանել է որակին: Նրան են և՛ վաղվա հաղթանակները:

Ֆրանսիայի Ազգային ժողովը իր պարտված զորավարներին կուղարկեր կառափնարան: Մեր օրերի հույները մեռնելու կամքից զուրկ զորականներին ծովը թափեցին: Եվ արդար էր դա, քանզի ճակատամարտը ո՛չ մեռյալ թվերի բախում է, ո՛չ էլ շախմատախաղ է, այլ ամեն բանից առաջ՝ հոգեկան ակտ: Ասել է, պարտությունը մարդկային ներելի սխալ չէ, այլ պատժելի հանցագործություն:

Թո՛ղ հեռու մնա իր ժողովրդի ղեկավարությունից նա, ով մեռնել չգիտէ իր հայրենիքի համար:

Ամեն ղեկավար - տասնապետ, զորավար, նախարար - որ հրաժարվում է մեռնել իր հայրենիքի համար, հանցագործ է:

Զինվորական բարոյականը չի ասում՝ հաղթանակի՛ր բոլոր դեպքերում, դա ասում է՝ հաղթականորեն մեռնել գիտցի՛ր բոլոր պայմաններում:

Զենք, դիրք, քաղաքական վայրկյան - այդ բոլորը կնպաստեն քո հաղթանակին՝ կբավի, որ դու մեռնելու կամք ունենաս, այսինքն՝ անձիցդ ավելի սիրես այն, որի համար կռվի ես դուրս եկել:

Ամեն ճշմարիտ իշխանություն - տասնապետություն, նախարարություն - ենթադրում է ավելի բարձր բարոյական իշխանավորի, քան իշխվողի մոտ:

Հասկանա՛նք ե՛վ այդ:

* * *

Մասաուա՜ - Աֆրիկայի ամենաանառիկ կետը, որ տարիներ առաջ Իտալիայի ռազմական հմայքի գերեզմանը հանդիսացավ - վերջերս երկյուղածորեն ծունկ ծռեց միևնույն երկրի վերածնված զավակների առջև: Ո՞ւր է գաղտնիքը:

Ղարաքիլիսայում և Սարդարաբադում քաջության հրաշքներ կատարած հայը չկռվեց Ղարսում: Սակայն նույն Ղարսի պարտյալը դյուցազնացավ Սյունիքում:

Ի՞նչ է նշանակում այդ: Դա նշանակում է, որ ոգին կամայականություն չի ճանաչում, որ դա չի քարանում, չի մնում միևնույն կետի

վրա: Դա երբեմն ծալում է իր թևերը, երբեմն էլ թռիչք է առնում դեպի նորանոր նվաճումներ:

Մեկից ավելի են ոգու անկման ու ակտիվացման պատճառները: Գլխավորագույնը, սակայն կմնա առաջնորդի անձը:

«Առանց բանակի չի կարելի պատերազմել, բայց բանակն էլ չի կարող պատերազմել առանց առաջնորդի»:

Առաջնորդը - ահա՛ մեծ «ամեն ինչ»-ը:

Նախ պատասխանենք այն հարցին, թե ո՞վ արժանի չէ և ատակ չէ առաջնորդ լինելու: - Նա՛, որի էությունը ճանաչում է «մարդկայինը միա՛յն». ո՛վ չունի իր գերագույն առարկան, չունի առարկայորեն ու հավիտենապես արժեքա-վորը ու սրբազանը կյանքում, որի առջև կանգներ, ինչպես հավատացյալն իր Աստծու. ո՛վ ստեղծագործ խղճմտանք չունի:

Ճշմարիտ առաջնորդ լինել չի կարող եսապաշտը, ընչասերը, հոգով փչացածը: Առաջնորդ լինելու համար բա-վական չեն անգամ արտակարգ իմացականությունը: Քա-ջությունն էլ-որ բարձր հատկություն է զինվորի և քաղաքացու համար- բավական չէ մեկին ճշմարիտ առաջնորդ դարձնելու: Քի՞չ եսասերներ, ընչաքաղցներ կան, որ քաջ են: Բայց ե՞րբ է տեսնվել, որ նման քաջերը մեռնել ուզեին այս կամ այն սրբության համար: Կարելի է քաջ կռվող լինել, բայց կյանքը զոհելու հոժարություն չունենալ: Քաջեր շատ է տեսել աշխարհը, հերոսներ սակավ: Առաջնորդ կարող է լինել միա՛յն հերոսը: Իսկ հերոս լինել, ասել է՝ հավիտենարժեք բաների առջև ոչինչ համարել իր կյանքը:

Հերոս է նա, որի համար կյանքն արդարացում ունի, երբ դա ապրո՞ւմ է ո՛չ թե իբրև նպատակ, այլ իբրև մի սրբազան բանի ծառայեցնելու կամ զոհելու միջոց:

Հերոս է նա, որի հայացքը ուղղված է հավիտենակա-նին. նա՛, ով ժպտալ գիտի ճակատամարտի բոցերի մեջ. նա՛, որի հոգին վտանգի ժամանակ զգում է մի գերագույն ուրախություն - ճակատամարտի և անձնվիրումի ուրախություն. նա՛, ով գրոհից առաջ սիրում է խոսել հավիտենա-կան բաների մասին:

Հերոս է բիբլիական Գեդեոնը, որ երեք հազարից ընտրեց երեք հարյուրը միայն, և հաղթանակեց: Հերոս է Կլեմանսոն: Գերմանները հասել են Վերդենի պատերի տակ, և ֆրանսիական կառավարությունը՝ խուճապի մատնված՝ տրամադիր է լքել Փարիզը, հեռանալ վտանգի գծից:

Ահա՛ հայտնվում է «Վագր»-ը և մռնչում. «Ինձ թվում է, որ մենք շատ հեռու ենք կրակի գծից՝ պետք է փոխադրվել Վերդեն»:

Հերոս է Քեռին, որ իր վտանգված զինվորները փրկելու համար իր կուրծքը դարձրեց կենդանի թիրախ թշնամու կրակին:

Հերոս էր Դանտոնը, որն իր գլխատումից երկու օր առաջ իր բարեկամներին, որոնք իրան խորհուրդ էին տալիս ստույգ մահից խուսափելու համար, փախուստի դիմել, պատասխանեց. «Մի՞թե մարդ կարող է հայրենիքը իր կոշիկների տակը կրել»:

Այսպե՛ս են սիրում, գործում և մեռնում՝ հերոսատիպ առաջնորդները:

Ճակատագրի մարդ, վտանգների բարեկամ՝ նրանց համար ի-րենց անձն ավելի բան չէ, քան հայրենիքին ծառայելու միջոց:

Ժողովուրդները քաղաքական և հոգևոր առնականության են հասնում նման առաջնորդների շնորհիվ միայն:

Ճշմարիտ առաջնորդ էր Պիլսուդսկին, է՛ Մուսոլինին, Հիտլերը, ծովակալ Հորթին - օրվա մարդկության հոգևոր հսկաները, որոնց ոտքերի տակ մեռնում է իրենց ժողո-վուրդների հին ճակատագիրը: Սրանց համար ազգությունը՝ անցյալ, ներկա և գալոց սերունդները ընդգրկող մի ամբողջություն է, էաբանական մի հավաքականություն - մի ճակատագիր, մի ոգի, մի առաքելություն, մի ցեղ, մի արյուն: Սրանք գիտցան իրենց ժողովրդին պարտադրել մի մեծ և տիրական մտածում - իրենց հայրենիքի ինքնապաշտպանությունը՝ ժողովրդի վերածնունդի ճամբով:

Վաղուց է ինչ սրանք իրենց ցեղահանճար մտքի մուրճով կռում են իրենց ժողովրդի նկարագիրը, որով՝ և՛ նրա նոր ճակատագիրը:

Մեծ են մեր ապրած օրերը, քանզի կյանքը հրապարակ է դրել մի քանի մեծ ճշմարտություններ:

Մեծագույնը այդ ճշմարտություններից ասում է՝ որպեսզի ցեղդ ու հայրենիքդ ապրեն, նրանց համար մեռնելու կամք ունեցի՛ր: Մեր քարոզած Տարոնականությունը այլ բան չէ, եթե ոչ մեռնելու կամք մեր վտանգված Հայրենիքի և Ցեղի համար:

Իբրև հայ մարդ անպետք է նա, ո՛վ չունի այդ կամքը: Իսկ ով դեմ է այդ կամքի մշակման հայության մեջ՝ նա ներքին թշնամին է մեր Ցեղի և Հայրենիքի:

Մարդկային ցեղի մեծագույն ուսուցիչները մի՛շտ էլ հանդիսացել են նրանք, որոնք մարդկանց վեհորեն մեռնել են սովորեցրել:

Այդ տեսակետով, Մամիկոնյանները եղան և կմնան հայության հավիտենորեն սրբազան ուսուցիչները:

«Տարոնի Արծիվ», Սոֆիա, 1939,թիվ 7:

ՈՒԺԻ ՊՐՈԲԼԵՄԸ

(Հատված «հոգեվերանորոգության» անհրաժեշտության մասին ճառից)

Ազգերի առջև այսօր վճռապես դրված է ուժի պրոբլեմը: Կորչում է մի ժողովուրդ, երբ նա խուսափում է այդ պրոբլեմից կամ էլ դժվարանում է լուծել դա:

Ուժի պրոբլեմը դրվում է և լուծվում ժողովուրդների հոգեվերանորոգության պրոբլեմի կապակցությամբ: Ուժեղ, հավատավոր և պայքարունակ դառնալու համար, անհատների նման, ժողովուրդները ևս պիտի վերանորոգվեն մշտապես: Կորցնելով վերանորոգվելու ընդունակությունը՝ ժողովուրդները կորցնում են իրենց ապրելու, ստեղծագործելու, պայքարելու հավատը:

Ազգովին դժբախտ է հայը, որովհետև իր մտավորականության մի մասը դեռ չի հասկանում, որ օրվա ցեղախառով ազգերի կյանքում էականը քաղաքական վարչաձևը չէ, այլ անհատի և զանգվածների վերածնունդը, հոգեփոխությունը: Այլևս հոգեվերանորոգված են, կամ ավելի ճիշտը՝ հոգեվերանորոգչական ճիգեր են կատարում բոլոր ժողո-վուրդները և հենց այդ է պատճառը, որ օրվա իտալացու, գերմանացու, հունգարացու ուղեղում տեղի է ունեցել մի խոր հեղափոխություն: Այդ է պատճառը նաև ա'յն բանի, որ օրվա մարդը ավելի ակտիվ է, արդյունագործ, խանդավառ:

Անցե'ք երկրե երկիր և պիտի տեսնեք, որ ապրելու, պայքարելու, զոհաբերելու անխառն ուրախություն, ինչպես իրենց գոյության արտաքին և ներքին չարիքները հաղթահարելու համակարգված աշխատանք կա միայն ցեղավար ժողովուրդների մեջ: Այն ամենը, որ երեկ կթվար անորոշ, մթին ու անտրամաբանական, այժմ, վերանորոգվածի համար դարձել է որոշ, պարզ, հասկանալի: Այլևս արարածը գտել է իր արարիչը- իր ներքին հենարանը- և այդ իսկ պատճառով նա այսօր ավելի՝ հուսալի է ու անդորր: Այս է ընդհանրապես օրվա ազգերի հոգեվիճակը: Բացառություն է մեր ժողովուրդը միայն կամ նրա խոշոր մի մասը, որ շարունակում է մնալ հիվանդ կոչվելու աստիճան անզոր և անհույս: Նրա կյանքում միահեծան կերպով իշխում են չարությունը, նախանձը, գռեհկությունը, որովհետև վերանորոգչական ճիգի, խանդի, ուրախության պակասը նրան դարձրել է զոհ հոգևոր վաղաժամ ծերության (չարությո'ւն), երկչոտության (նենգությո'ւն), սկեպտիկության (ժխտամոլությո'ւն): Անբուժելիորեն հոռետես է օրվա հայը: Չարիք, դժբախտություն, Ղարսի կորուստ- սրանք հավիտենական բաներ են նրա համար: Մի խուլ պատ է չվերանորոգված հայը, որին ուղղվում է հայ խոսքը: Նա ատակ չի զիջելու, հակառակորդին հասկանալու, համերաշխելու, որովհետև շարունակում է մնալ հին, քարացած Ադամը:

Նրան պակասում է նո'ր գիտակցությունը, նո'ր աշխարհըմբռնումը: Ճի'շտ է, հայը հեղափոխություն տեսավ իր երկրում, բայց իր տկարությունները հաղթահարելու վերանորոգչական ճիգեր չարեց: Նա չհասկացավ, որ հեղափոխություն ասել է հնից՝ նորը, նոր մարդ ստեղծել, նոր գիտակցություն, նոր կենսազգացողություն: Միայն ակտիվ վերանորոգչականը կարող է հեղափոխական լինել: Վերանորոգում է ամեն մի ճշմարիտ հեղափոխություն: Հայրենիքին և իր ազգին օգտակար ծառայություն կարող է մատուցել միայն և միայն վերածնված անհատը: Ամեն բանից առաջ հոգեվերանորոգված հայ անհակ - ահա' օրվա հրամայականը:

Վերանորոգչական լուրջ փորձ էր դավադրված Ցեղա-կրոնությունը: Միայն սրտով վատերն ու տգետները չգիտեն, որ մի ժողովրդի վերանորոգումը հնարավոր է միայն ու միայն իր նորահաս սերունդի կամ էլ իր նախնիների միջոցով:

Վերանորոգչական է Տարոնականությունը. դա նմանվելու մի սկզբունք է. դա ասել է՝ նմանվի'ր Մամիկոնյան հային, որ զորավոր էր դեպի հայրենի երկիրն ու ցեղը տածած սրբազանության զգացումով և նրանց համար մեռնելու իր աննահանջ կամքով:

Վերանորոգում ասել է մեր ներքին մարդու կաղապարումը, ըստ մեր նախասիրած պատկերի: Տարոնականությո'ւն - դա հայ մարդու կաղապարումն է՝ ըստ Մամիկոնյան հայի պատկերի:

Վերանորոգումի ընդունակ է իր նախահայրերի ոգու զորութենականության ծանոթ և օրվա իր տկարություններից ամաչող ժողովուրդը:

Որի՞ն, ինչի՞ն դիմենք մեր ամոթանքի և ցավի մեջ այնքան ծանր ու պատասխանատու այս օրերին - թո'ղ Հայաստանը ների մեզ մինչայժմյա մեր տկարություններն ու տգիտությունը, թո'ղ ներեն մեզ Մամիկոնյան նախահայրերը, որ այդ տկարությունները և տգիտությունը հայը դեռ շեղված են պահում իրենց գծից:

Մեր ժողովուրդը, որ կորցրել է հայ և հայրենատեր մնալու իր հավատը, որ աշխարհում այլևս ելք, կյանքում հացից զատ այլ նպատակ չի տեսնում այսօր, փրկվել կարող է միայն ճշմարիտ վերանորոգումի ճամբով: Դա Մամիկոնյաններին նմանվելու ճամբան է, Տարոնականությունը:

«Տարոնի Արծիվ», Սոֆիա, 1939,թիվ 11:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ով իր ցեղի և հայրենիքի պատմությունը չի՛ դարձրել իր սրտի պատմությունը՝ նա այս օրերին պետք չի գա Հայաստանին:

- Երբ իմ շրթունքները մրմնջում են ցեղիս մասին, աջս ցույց է տալիս Հայաստանը:

* * *

Հայաստա՛ն, ով վտանգի ժամանակ քեզ համար մեռնել չիմացավ և վաղը պիտի չուզենա մեռնել՝ հայ չի՛, քո զավակը չի՛:

* * *

Բավական չէ՛ իր ազգի զավակը լինել, պետք է նաև՛ նրա հրաշունչ զինվորը լինել:

- Կենսաբանորեն անբարոյական է այն ժողովուրդը, որի մեջ զինվորը ներքին թշնամիներ ունի:

- Տե՛ր, առաջնորդի՛ր ինձ դեպի հաղթանակ՝ թեկուզ մահվան ճամբաներով - ահա՛ ցեղապսակ զինվորի աղոթքը ճակատամարտից առաջ:

* * *

Հերոսը - դա մահից ավելի զորավոր մարդն է: Դա հավիտենականի կրողն ու սպասավորն է մեր անցավոր կյանքում:

- Հաղթանակում է նա, ով իր մեջ բնությունը Ոգուն ենթարկելու աստիճան զորավոր է:

- Հաշտվելով մահվան գաղափարի հետ՝ մարդս դառնում է եղբայրն ու զինակիցը այն բոլորի, որոնք մարդկային ցեղի պատմության բոլոր դարերում եկել ու անցել են մեր աշխարհով՝ իբրև լույսի, հավատքի և սրի հերոսներ:

* * *

Եթե հայկական նախանձի չափ զորավոր լիներ հայ մարդու թրքատյացությունը՝ տարբեր պիտի լիներ հայության և Հայաստանի ճակատագիրը:

- Երբ նախանձում է հայը՝ նա նախանձելիի մահն է ցանկանում:

- Ժողովո՛ւրդ, քո պատմության բոլոր դարերի անունով երդվեցնում եմ սերունդներիդ - չներե~լ, չներե~լ թուրքին, անգամ եթե մի օր նրան տեսնես անկյալի վիճակում: Այո՛, ներում են թշնամուն, բայց ո՛չ և իր կեսի սպանիչին, ո՛չ և նրան, որը մի օր փորձեց գոյության գրքից քո անունը սրբել:

«Մի զինվորի ճշմարտությունները» աշխատությունից,
«Ռազմիկ», 1940, թիվ 156:

ԶԱՎԱ՛ԿՍ

Աժան ծեռքը չի՛ բերում առյուծի մորթին:

Այդ այսպես լինելով հանդերձ երբ մեծացար դու, զավա՛կս, ձգտի՛ր տիրանալ նրան, բայց միամտություն չունենաս կարծելու, թե երկրագնդի՝ վրա կարելի է փառքի տեր դառնալ, առանց նախանձահեր սինլքորների չարությունը գրգռելու:

Զորավա՞ր ես յոթ վերք - չզարմանաս, եթե մի օր դասալիքը դատավորդ հանդիսանա: Մեր աշխարհի լրբություններից մեկն էլ այդ է, չզարմանաս և չկրկնես զայրույթով. «Թող զինվորն իր ստացած վերքերը և հովիվը՝ իր ոչխարները համրի»:

Չար անասուն է մարդս, երբ նախանձում է: Մեր աշխարհում միշտ էլ վատասիրտը հայհոյել է աներկյուղ ասպետին, երկչոտը՝ մութ անկյունից քար նետել հերոսին:

Նախանձը - մասնավորապես հայկականը - ընտրում է ճամբաներից ամենակարճը և թույլատրելի համարում թշնամանքի բոլոր զենքերը:

Նա, որին դեռ երեկ էր ինչ խլեցիր առյուծի բերնից, փրկեցիր ստույգ մահից՝ վաղը կարող է իժի նման գարշապարդ փնտրել:

Նա, որն այսօր ծիուդ ասպանդակները բռնելը իր համար պատիվ է համարում՝ վաղը կարող է փողոցաշունչ ամբոխը գրգռել անձիդ դեմ:

Նա, որ երեկ խորապես ցավում էր, թե հայոց դաշտերում չի աճում այն ազնիվ դափնեվարդը, որ արժանի լիներ հաղթական ճակատդ զարդարել՝ վաղը կարող է ցեխ նետել քո կատարած պատմական գործին:

Մի՛, մի՛ զարմանա, եթե իրենց կյանքը սրիդ պարտողները այսպես վարվեն քեզ հետ, և մի՛ զայրանա, քանզի անձիդ դեմ ապերախտողը շուն չէ՛, այլ՝ մարդ:

* * *

Սեր, հարգանք, պաշտամունք պարտադրել նշանակում է իշխանություն ունենալ մարդկանց հոգիների վրա:

Պաշտամունք - ասել է՝ ճանաչում ենք մեր պաշտածի իշխանությունը, և բարոյական որոշ տուրք տալիս նրան:

Ուրիշների մեջ մենք, էապես, սիրում ենք այն, ինչ որոշ չափով կա և՛ մեր մեջ:

Արին սիրում է արիությունը անգամ՝ իր հակառակորդների մեջ: Մենք սիրում ենք նրանց, որոնց նմանվում ենք մասամբ, և առնվազը՝ անտարբեր ենք դեպի այն բոլորը, որոնք հոգեբանորեն օտար են մեզ: Հայրենապաշտը քո անձի մեջ տեսնում է մի բան իր ոգուց, և ցնծում քո

հաջողությունների առթիվ: Անհայրենասերն, ընդհակառակը, քո անձի, քո գործերի մեջ տեսնում է այն, ինչ պակասում է իրեն - և հենց այդ է պատճառը, որ նա չի՛ հանդուրժում քո հոգևոր լուծը, քո իշխանությունը: Ահա՛ թե ո՛ւր է շրջապատիդ որոշ տարրերի պաղ անտարբերության, երբեմն էլ՝ թշնամանքի գաղտնիքը:

* * *

Սինլքորներ կան, որոնց եթե ապտակեցիր, իրենց ստացած հարվածը կընդունեն ուղղված իրենց քաղաքական փարախի, եկեղեցու, ծրագրի դեմ: Թքեցի՞ր - թքված կհռչակեն իրենց տերերը, և նրանց կռնատակից կնետեն քեզ:

Ջրի պես շարժուն, ջրի պես ամեն ձեղ ու գույն առնելու ընդունակ՝ սրանք մեկի ստվերն են, մյուսի՝ արձագանգը, երրորդի՝ կապարճակիրը:

Մի աստվածություն ունեն - օրվա իշխանավորը, որի մանկլավիկը, պնակալեզը, շնիկը լինելու մեջ է իրենց երջանկությունը: Եվ միշտ էլ ունեն - մի ձեռքում խունկ, մյուսի մեջ՝ ցեխ: Վա՜յ քեզ, եթե կայսերաբար առատաձեռն չեղար սրանց նկատմամբ: Վա՜յ, եթե չգնահատեցիր սրանց սողունությունը: Եվ հազար վա՜յ, եթե ժպտալու փոխարեն «անհեռատեսություն» ունեցար բերան արյունելու չափ զորավոր կերպով քաշելու սրանց սանձը:

Նման չարարվեստ էակներից շաղախված մի ցածոգի ամբոխ, դարեր առաջ, արդարն Արիստիդեսին - իր ծայրահեղ ազնվության համար - հայրենի հողից ու ջրից օգտվելու իրավունքից զրկեց. դա սպանեց Սոկրատեսին, և, ավազակների հետ՝ խաչ հանեց Նազովրեցուն:

* * *

Հայաստանից դուրս, իմ ճամբին քար ու տաշտասկ ցանողներ շատ եղան: Գիտեմ, զավա՛կս, տարբեր ճամբա պիտի չունենաս նաև դու: Եվ եթե քեզ հաջողվեց ոտքերիդ արյունով հագեցնել տատասկները, և քարերը վերածել վերելքդ հեշտացնող մարմարիոնե սանդուխքների՝ վատերը պիտի կուրանան, որպեսզի չտեսնեն մեծությունը կատարածդ գործի:

* * *

Հեռու հայրենի լեռներից, ես սովորեցի թքել ինձ թշնամանալ նախանձոտ տգիտության ու չարության վրա - թքել ու անցնել: Քեզ, սակայն, պիտի չհանձնարարեմ այդ վարքագիծը: Դու աշխատի՛ր ավելի՛ զորավոր լինել, քան եղավ հայրդ: Դու սովորի՛ր ծիծաղել մարդկային վատությունների վրա ու անցնել անցասում:

Ո՞հ, ուր էր թե գեթ քո սերունդը ազատ մնար անհայրենիք կյանքի անեծքից, և արդար փառքը - առյուծի մորթին - դու փնտրեիր

հայրենի ազատ և անկախ աշխարհում՝ միշտ գիտակցելով, որ հազարիցս լավ է պատմական մի գործ կատարել, թեկուզ հազար թշնամի շահելով, քան մարդկային չարությունից զերծ մնալու գնով՝ դուրս մնալ պատմությունից:

«Ռազմիկ», 1940, թիվ 1:

ՀԱՅՐԵՆԻՔ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեծանուն բարեկամիս՝
ուսուցչապետ Տոտոմյանցին[60]

Երբ իմ շրթունքները մրմնջում են ցեղի մասին, աջս ցույց է տալիս Հայաստանը:

* * *

Հայաստա՛ն, նա, ով վտանգի ժամանակ քեզ համար մեռնել չիմացավ, և վաղը պիտի չուզենա մեռնել՝ քո զավակը չէ, հայ չէ:

* * *

Երբե՛ք այնքան անհայրենիք չենք, քան երբ դադարել ենք մտածել, գործել, զոհաբերել մեր Հայրենիքի համար:

* * *

Կրոնների պես հարենիքներն էլ պահանջում են, որ իրենց սպասարկողի ձեռքերը լինեն տաք և մաքրամաքուր:

* * *

Մի ժողովուրդ, որի որդիները հավասար չեն օրենքի և մահվան առջև՝ հաղթական հայրենիք չի ունենա:

* * *

Անհատ, հավաքականություն - սրանք հավիտենականին կապվում են իրենց հայրենիքի միջոցով:

* * *

Հոգեբանորեն անհայրենիք է նա, ով պատրաստ չէ ամեն վայրկյան մեռնելու իր հայրենիքի համար:

* * *

Իմ հոգին զույգ հենարաններ ունի - Աստված և Հայրենիք:

* * *

Հա՛յ մարդ, կասկածելի է հայրենասիրությունդ, եթե գոյությանդ իմաստն ու դրոշակը հայրենիքդ չէ:

* * *

Հայրենիքս և ես - մենք լծորդված ենք իրար ինչպես հոգի և մարմին, ինչպես նպատակ և միջոց. նա գերագույն նպատակ է, ես՝ միջոց:

* * *

Հայրենիքի համար ապրում և մեռնում է ոգու մարդը, միա՛յն նմանը:

* * *

Սրտի և իմաստության տեր դասական ժողովուրդները մահապատժի փոխարեն տարագրությամբ պատժում էին դժբախտ ենթակային, նրան զրկելով հայրենի հողից և ջրից օգտվելու իրավունքից: Այն ժամանակ էլ, ինչպես այսօր, սրտի աստվածություն էր հայրենիքը:

* * *

Հավիտենականի զգացումն է ծնունդ տվել հայրենիքին, սրբության զգացումը՝ հայրենասերներին:

* * *

Հայրենիք մի՛ սպասեք օտարից և ճակատագրից, եթե դա ձեր արյունով պաշտպանելու չափ հայրենապաշտ չեք:

* * *

Մածձինիի հանդեպ խորագույն հարգանք տածելով հանդերձ՝ չեմ ընդունում որ հայրենիքից ավելի ազատությունն է սիրելի:

* * *

Ժանա դ'Արկի հայրենիքը պարտվեց այն օրը, երբ մերօրյա ֆրանսիացու դեմո-լիբերալիստական մտածողությունը կենդանաբանական մի պարտեզի դռան վրա գրեց՝ «գիտության համար ո՛չ հայրենիք կա, ո՛չ էլ կրոն»:

* * *

Ֆրանսիա՛ - մե՛ծ ժողովուրդ, մե՛ծ հայրենիք, որի ճակատագիրը մեծությունները չէին վարում այլ դեմոկրատիկ միջակությունները - ահա՛ թե ինչո՞ւ այնքան նվաստորեն զինաթափվեց ու պարտվեց դա:

* * *

Նորը արդի պատերազմում - դա աշխարհազգացողությամբ նո՛ր մարդն է, որի համար հայրենիքին ծառայելը պատիվ է և ոչ պարտականություն:

Այո՛, հայրենիքը մեզ պատիվ է անում իր համար մեռնելու առիթ ընձեռնելով մեզ:

* * *

Մի օր, հին միստերիաների մեջ հանդիպեցի հետևյալ արտահայտության - «մեծագործության բաժակ»:

Մեծագործությունն ուխտողն առնում էր մի բաժակ, լցնում նռան հյութով, բարձրացնում և ապա թափում իր չորս կողմը՝ խորհրդանշելով իր անսահման հոժարությունը - ծառայել բարին, ուր էլ որ լինի:

Բարին, գերագույն բարին, ինձ համար եղել է, է՛ ու կմնա Հայաստանը:

* * *

Հայաստա՛ն, քեզ սիրտը ծնեց - դու ապրում ես սրտերի մեջ և ջերմաջերմ սրտերի շնորհիվ միայն: Գուցե եղել են և՛ անսիրտ խելոքներ, որ սիրել են քեզ, բայց նրանք չեն խաչվել, չեն մեռել քեզ համար: Հայրենիքի համար մեռնում է, հերոսանում մեծ սրտի տերը միայն:

* * *

Հայրենիքից զատ, հայրենիքից դուրս ինձ համար խաբուսիկ են բոլոր դրախտները:

* * *

Ինչպես աչքս՝ լույսը, այնպես էլ սիրտս Հայաստանն է փնտրում:

-Ապրում եմ՝ մի օր հայրենի լեռների վրա մեռնելու հույսով: Պիտի ուզեի մեռնել, հենց որ մեռավ այդ հույսը:

* * *

Աբովյանի Աղասին՝ փառքի ու մեծության իր երբեմնի հայրենիքը խորհրդանշող Անիին հրաժեշտ կտար լացելով - «էլի որ մարմինս մեկ քարի տակ լինի քո ծոցում, ինձ դրախտը պետք չի»:

-Այսպե՛ս, ով որ Աղասու պես չի բաժանվել իր հայրենի հողից՝ արժանի չէ հայրենիք վերադառնալու:

Հայաստա՞ն - դու իմ սրտի հավիտենական ճշմարտությունը:

«Ռազմիկ», 1941, թիվ 2:

ԺՈՂՈՎՈՒՐԴ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴ

-«Հետու կառաջանար՝ մտախոհ և գունատ, որովհետև Ամենակալի ընտրյալն էր արդեն» - նաև՝ ժողովրդի առաջնորդը, ավելացնենք մենք:

Ամենաբարձր իրավունքը, որ կարող է ունենալ մի քաղաքացի - դա իր ծնող ժողովուրդին առաջնորդելն է:

Քչերին է տրվում այդ իրավունքը, և շատ քչերն են արդարացնում դա:

Ո՛վ, սակայն իրավունք ունի մի ժողովրդի ճակատագիրը՝ վարել:

-Նա, ճակատագրի ընտրյալը, որ «կառաջանա մտախոհ» - ճակատը լեցուն, վսեմ խոհերով ու իր կոչումի ամենասրբազնության գիտակցությունից «գունատ», ապա օժտված իր առաջնորդած ժողովրդի համար ամեն վայրկյան մեռնելու կամքով:

* * *

Ամեն առաջնորդ ըստ իր պատկերի է դիմակերտում իր ժողովրդին:

* * *

Որի՞ն հետևել - ահա՛ հարցերից ամենաճակատագրականը, որի՞ն՝ - Նազովրեցո՞ւն, թե՞ Բյուխներին, Էմերսոնի՞ն, թե՞ Մարքսին, Մամիկոնյանների՞ն թե հայ մտավորականության քաղաքականապես անկապաշտ մասին:

Առաջինները - ոգու հսկաներ՝ - քո մեջ կապրեցնեն աստվածային, վերջինները՝ մարդկորեն անասնականը. առաջինները քո մեջ կմշակեն իդեալիստը, ասպետը, հերոսը, վերջինները՝ գորտի հոգով առօրյապաշտ պաղ մահկանացուն:

* * *

Ճշմարիտ մտավորականություն, ասել է՝ ազգի հոգևոր ընտրանին, առաջնորդությունը:

Ստամտավորականություն է դա, եթե այդպիսին չէ:

* * *

Ուր ճշմարիտ մտավորականությունը առաջնորդի իր դերի մեջ չէ՝ այնտեղ կույր է ժողովուրդը, նաև՝ պառակտված:

* * *

Մեր կյանքում դեռ զորաշարժի ենթարկված չի ճշմարտությունը, ստամտավորականության շնորհիվ, հայությունը դեռ չի

հասկացել, որ հայկական հարցի սկիզբն ու վախճանը - դա հոգեվերանորոգված հայ անհատն է:

* * *

Ժողովուրդները հաճախ տառապում են, հոգե-զգացական կուրությամբ - մա՛յրը ամեն կարգի ներքին տկարության և բախումների:

Ճշմարիտ մտավորականությանն է ընկնում՝ բուժել այդ կուրությունը իրենց ժողովրդի մեջ մշակելով էթիկական առաքինություններ - ճշմարտասիրություն, արդարամտություն, մեծահոգություն:

* * *

Քաղցրորեն ստել ու կեղծել իր ժողովրդին՝ մանիլովշչինա՛ - ահա՛ հայրենաքանդ այն տկարությունը, որով բռնված է հայ մտավորականության իմաստասիրորեն կույր և անցեղաշունչ մասը:

* * *

Ժողովուրդները հաճախ ունակարար ենթարկվում են նաև իրենց ծախավեր առաջնորդներին, բայց ներում նրանց:

* * *

Ուր զորավոր առաջնորդ չկա՝ այնտեղ ոգու կյանք չկա, իսկ ուր այդ վերջինը չկա այնտեղ խանդավառներ, մարտիկներ, գերզոհաբերողներ չեն ստեղծվում:

* * *

Ազգերը չեն ունեցել, և պիտի չունենան ավելի մեծ թշնամի քան նյութապաշտ առաջնորդը:

* * *

Այն մտավորականությունը, որը գրքի ծնունդ է և ոչ թե իր ցեղի մեծության ու ժողովրդի տառապանքի - կեղծ և անպտուղ մտավորականություն է:

* * *

Չկա՛ ավելի մեծ չարագործ, քան առաջնորդը, որ իր ժողովուրդին պահում է անգիտակ, իր դժբախտության պատճառներից: Նմանը՝ իր անձի հանդեպ մոռացում ապահովելու նպատակով մութ ճամբաներով հաջողվում է տարբեր ուղղություն տալ ժողովրդի ցասումին, մղելով նրան՝ իր դժբախտության պատճառները փնտրելու իրենից դուրս: Ուրիշ ազգերի կյանքում հաճախ մի դժբախտությունը գալիս է խափանելու մի ուրիշը, ուրիշները: Մեզ մոտ ընդհակառակը, ամեն դժբախտություն դառնում է պատճառ նորի, նորե՛րի:

Վկայում է պատմությունը, որ իր դժբախտության պատճառները գիտակցող ժողովուրդը ավելի հեշտ է կրում իրեն վիճակված դառնության բաժակը, և հեշտությամբ հաղթահարում չարիքը:

Ավելի՛ն, նմանի համար ամեն մի ծախորդություն, գալիքի մի նախազգուշացում է: Միայն նմանի է հաջողվում հարվածախույս լինել:

* * *

Երբ ժողովուրդը՝ ծուռ խղճմտանքի տեր իր ղեկավարների շնորհիվ մնում է անգիտակ իր ապրած դժբախտության պատճառներից, իր ամեն մի պարտությունից հետո նա դառնում է նա՛և պարտվողական, որ ասել է՝ ատակ և արժանի նորանոր պարտությունների:

* * *

Առաջնո՞րդ ես, ուրեմն, եղի՛ր ազնիվ, ազնիվ եղի՛ր, է՛լի ազնիվ՝ խղճմտանքիդ հանդեպ,- դա ճակատագրական նշանակություն ունի ժողովրդիդ ճակատագրի համար:

* * *

Մի ժողովուրդ ցեղորեն այնքան արթուն է, որքան դա զգայուն է դեպի իր մարգարեների, իր ընտրանիի կանչերը:

* * *

Կա մտավորականի ամենից վտանգավորը - նա՛, ո՛վ փարիսեցիների և դպիրների նման լավ է ուսուցանում, բայց վատ ու վատն է գործում:

* * *

Զորավոր և օրինաբեր է այն առաջնորդը, որի կամքը օժտված է իր ցեղի ամենագրական հատկություններով:

* * *

Հոգևոր կյանքի անատակ մարդուն տրված չի գերագույն նպատակի համար աշխատելու, զոհաբերելու, մեռնելու քաղցրությունը: Նմանը չի կարող առաջնորդ լինել:

* * *

Ժողովուրդները չունեն ավելի մեծ թշնամի քան կրոնապես պաղ եկեղեցականը, անոգի ուսուցիչը, կաշվապաշտ զորականը: Խորագույն անկումի իրենց օրինակով սրանք են անբարոյացնում մարդուն իբրև անհատ և հավաքականություն:

* * *

Մտքի անշարժություն, քարացում - երբ այդ է մտավորականությունը՝ նշանակում է որ ժողովրդի քայլերն ուղղված են դեպի գերեզմանատուն:

* * *

Միայն մեծ առաջնորդներին է հաջողվում իրենց կամքի ողջ ուժականությունը փոխանցել իրենց ժողովուրդներին, առավելապես նրանց երիտասարդ սերունդներին: Եվ հենց դրանով են վերանորոգվում զանգվածները, վերածվելով մի էթիկական ընդհանրության, միակամ և միուղի ազգի:

* * *

Նախ հասցնել մի մեծ սերունդ - մե՛ծ իր պաշտամունքով և ատելու կարողությամբ - և նրա միջոցով իրագործել իր պատմական առաքելությունը՝ այսպե՞ս է գործում ճշմարիտ առաջնորդը:

* * *

Միջազգային առաջնորդության մասին խոսում են անհուսորեն տգետները միայն: Պատմությանը դեռ անծանոթ է նմանը: Առաջնորդը - իբրև տվյալ ազգի կուլտուր-ընկերային գործառնության կիրարկիչը - միշտ էլ երևան է գալիս ազգային կնիքով:

* * *

Ազգային գաղափարը միշտ էլ նոր է, և հավիտենապես արդիական: Քանի դեռ այդ չի հասկացել հայ մտավորականությունը՝ դա առաջնորդելու բարոյական իրավունք և կարելիություն չի ունենա:

* * *

Փառասե՞ր է առաջնորդը - (փառասեր է ճշմարիտ ամեն առաջնորդը - այդ ոչի՛նչ, բավական է որ նա իր ազնվական ու ստեղծագործ փառասիրությանը միացնում է իր շարժիչ միտքն ու մեծ սիրտը, բավական է որ խաչ կա իր ուսին:

* * *

Նմանի համար չի կոմպրոմիսը, նա վախ չունի հալածանքից և բնավ հաշվի չի առնում թե իր սկսած պայքարում ո՞վ է իր հետ, ո՞վ՝ իրեն դեմ: Նրա առաջին թշնամին է - կազմակերպված միջակությունը՝ հանձին զանգվածների տգիտության և տկարության քվեներով ընտրված իշխանությունը:

* * *

Երբ մի ժողովրդի մեջ ճշմարիտ առաջնորդի երևալը ցնծության, փառաբանության և պաշտամունքի փոխարեն արժանանում է օձաթույն նախանձի, թշնամանքի ու մատնության՝ պետք է ընդունել, որ այդ ժողովուրդը դեռ արժանի է իր հին ճակատագրին:

«Ռազմիկ», 1941, թիվ 3:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԸ

Հայ հասարակագիտակ մտքի աղքատությամբ պիտի բացատրել հին սերունդի գաղջ վերաբերմունքը՝ դեպի նորը:

Նույն բանով բացատրեք նաև՝ նոր սերունդի անփույթ կեցվածքը՝ իր ցեղի և հայրենիքի ապագայի հանդեպ:

Հայ մարդը՝ իմաստասիրական ջանքի պակասի շնորհիվ՝ *նոր սերունդ* հասկացողության մեջ դնում է միայն կենսաբանական բովանդակություն: Նորը - ըստ այդ վերջինի - որդիներն են, հինը՝ հայրերը: Տարիքի պարզ խնդիր է թե նորը, թե հինը: Սերունդները միայն հասակով են տարբերվում իրարից: Ժամանակ կանցնի, և որդիները կայրանան ու կբռնեն իրենց հայրերի տեղը: Այսքան ծիծաղելիորեն պարզ և հեշտ է նոր սերունդի պրոբլեմը օրվա հայ մտածողության համար:

* * *

Սերունդ - դա կենսաբանական հասկացողություն չի, «կանաչ հասկ» չի միայն, այլև՝ հոգեբանական որոշ բովանդակություն: Դա էություն է՝ հնից խորապես տարբեր:

Նոր սերունդը միշտ էլ ենթադրում, Նորը՝ մի նոր աշխարհազգացողություն, նոր մթնոլորտը, մի նոր կամք, որ «պիտի գերազանցի անցյալը, անգամ՝ ինքնիրեն»:

Դա ցեղի հայտնությունն է, ժողովրդի նոր օրը, նրա նոր խոսքը, նոր երգը, նոր առաջադրությունը, նրա նոր ճակատագիրը, նրա պատմության էջը՝ նոր բովանդակությամբ:

Դա ժողովրդի կենդանի ուժականությունն է, նրա պայքարների ավանգարդային ուժը, որով և՝ նրա կյանքի զարգացման կրողը:

* * *

Միևնույն ժողովրդի ծոցի մեջ, միշտ էլ էապես գոյություն ունեն երկու աշխարհներ, երկու հասարակություններ, որոնցից մեկը քայքայվում է - հի՛նը, և մի ուրիշը, որ ծաղկում է հնի ավերակների վրա - նո՛րը: Ճիշտ է ասել Ֆրանս. իմաստասերը՝ «այժմը այլևս այժմ չէ»: Երբե՛ք կանգ չի առնում, դադար չի ճանաչում մարդկային ցեղի զարգացումը: Կենսական մի միություն է սերունդների կենակցությունը: Իրողություն է, սակայն, և այն, որ հնի և նորի միջև գոյություն ունի դիալեկտիկական հակասություն՝ ոգիների դիալեկտիկան: Հին է սերնդամիջյան հակամարտությունը՝ մարդկության չափ, և ունի իր հոգևոր-պատմական հիմքը: Դա, սակայն, չի նշանակում անդունդ՝ սերունդների միջև, ինչպես և թշնամանք, երբե՛ք: Ամեն սերունդ ծնունդն է իր ապրած պատմական ժամանակաշրջանի: Ամեն սերունդ ազդվում է իր ժամանակի ոգուց և փոխադարձաբար ազդում նրան:

Նորը՝ դա նորարար է կյանքի բոլոր մարզերում - դա հնի կրկնությունը չէ, այլ հավելիչն ու կատարելագործողը նրա թողած արժեքների, նրա ժառանգության:

Հայրերի ուղիով - նշանակում է՝ ավելի մեծ թափով ու նվիրումով շարունակել նրանց գործը, և այդ դեպքում, ոչ թե կրկնելով նրանց տկարություններն ու սխալները, այլ սրբագրելո՛վ:

Նորը - դա մի նոր արժեքային պլյուս է գոյություն ունեցող հնի վրա:

Այսպե՛ս է կարելի դառնում հասարակության առաջադիմությունը:

* * *

Ամեն «սերունդ» սերունդ չի: Սերունդ կոչվելու համար բավական չի հասակի «կանաչությունը»: Պատմություն ստեղծող անցքեր են հոգեպես դիմագծում այս կամ այն սերունդը: Պատերազմ, հեղափոխություն, գաղափարային ընդհանուր ձգտումներ, ապրումներ, հույսեր, տեսիլք - ահա՛ թե ինչե՞րն ե՛ն մշակում սերունդին հատուկ հոգեբանությունը: Տարբեր պիտի լիներ մեր նոր սերունդը, եթե նրա խաչի ճամբան չանցներ Տեր Զորով:

Ըստ Մյուսիեի՝ Ֆրանսիայում, մի ժամանակ մարդիկ այլ զբաղմունք չունեին, քան կայսեր շնչած օդով լցնել իրենց թոքերը, քանի որ Ֆրանսիացի երեխաները գիտեին որ իրենց գյուղի ամեն մի ճամբան տանում է դեպի Եվրոպական այս կամ այն մայրաքաղաքը: Իսկ երե՞կ - Փարիզի անկումից առաջ, և այսօր - Ֆրանսիայի անօրինակ աղետից հետո՞...

* * *

Նորը - դա, հասարակության համար երիտասարդանալու, հիշաշրջվելու, վերանորոգվելու. կենսա-հոգևոր մի կարելիություն է: Ամեն ժողովուրդ, իր նորահաս սերնդի միջոցով է հաղթահարում իր ներքին տկարությունները, ցավերը, հոռետեսությունը: Եվ նա, որին հաջողվում է իր սեփական տկարություններից, թերիներից, սխալներից զերծ պահել իր նորահասը, նրանից ստեղծում է մի մեծ և օրհնաբեր ուժ: Պատմությունը չգիտի մի հիշափոխություն, ազատագրական մի պայքար, մի մեծ գաղափար, որ պսակված լիներ հաջողությամբ՝ առանց նոր սերունդի մասնակցության: Միշտ էլ արդար է միշտ էլ հաղթում է նոր սերունդը:

Նախ հոգեբանորեն նվաճել նոր սերունդը՝ մի մեծ առաքելության համար - ահա՛ թե ինչի՞ է ձգտում այսօր պատմաստեղծ ամեն մի ժողովուրդ:

Եվ այդ սերունդին պատկանող երիտասարդությունը միշտ էլ «համախմբվում է այնտեղ, ուր գտնվում է բանալին մեր ժամանակի ամենամեծ պրոբլեմների: Այլևս դա նոր՝ սերունդը, համաշխարհորեն,

գիտակցել է որ իր համար *խորագույն մեղանչումը գոյության իմաստի և իրավունքի դեմ - դա իր ժամանակի և ուժերի ընդունայն վատնումն է:* Եվ հենց այդ գիտակցության մեջ է նորի զորությունը:

* * *

Նա իր զինակիցներն ունի - գիտությունը և ստեղծագործ իդեալիզմը: Առաջինը նրան տալիս է՝ ուղի, լույս, զորություն: Երկրորդը՝ թևեր, խանդավառություն, արիություն:

Մաքսիմալիստ է օրվա նորահասը - «կա՛մ կեսար, կա՛մ ոչինչ»: Մեծ վճիռների ընդունակ՝ դա ձգտում է դառնալ ռիսկի - վտանգի և զոհաբերության սերունդ:

Սոցիալապես դաստիարակված՝ նրա նոր ըմբռնումը կյանքի մա-սին, տրամագծորեն տարբերվում է հայրերի հեթանոս ըմբռնումից – ինձ-նից զատ իմ ուժից և հացից ոչ ոք իրավունք չունի օգտվելու. այս էր և է՝ հինը: Նորը միշտ էլ տրամադիր է կիսելու իր հացն ու կարելիությունները նրանց հետ, որոնք իր օգնության կարիք ունեն: Նորի այլասիրությունը արդյունք է իր ներքին ուժերի առատության, նրա տալու, զոհաբերելու անդիմադրելի ցանկության:

Նա դավանում է՝ Պալմերի հետ՝ «Որևէ անձ կամ իր արժեք ունենալու համար՝ իր բարությունը պիտի բաժանի տիեզերքի հետ»:

Ազգի կազմակերպումը - ահա՛ օրվա ընդհանուր ձգտումը, կանչը:

Ազգի և սրա միջոցով պետության լավագույն կազմակերպումը՝ ներքին, ընկերային համերաշխության ճամբով,- մի բան, որ հնարավոր է դառնում ազգային ոգու զարգացմամբ: Բախտորոշ է նոր սերունդի դերը ազգակառուցման այդ գործում՝ իբրև միակ վերանորոգիչ և համերաշխիչ ուժ: Հանրածանոթ պետական գործիչ Էրիոն է ասել՝ իր հայրենիքի ապրած ողբերգությունից առաջ՝ «Ֆրանսիական ազգը քանակի ազգ է, դա պիտի դառնա որակի ազգ»:

Որա՛կ, որակավորո՛ւմ - ահա՛ թե ի՞նչն է մարդկային զանգվածները վերածում միաշունչ ազգի, և նրա ապադասակարգային կազմակերպմամբ սկեղծում զորավոր պետությունը՝ արթուն պաշտպանը հայրենի հողի, մշակույթի և անկախության:

«Ռազմիկ», 1941, թիվ 4:

ՄԵՐ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԸ

Մեր ցեղի կենսաբանական ժապավենի վրա տեղ գրված սերունդներից ամենաճակատագրականը պիտի համարել մերօրյա նոր սերունդը:

Դա ճակատագրական նշանակություն է ստացել հետևյալ զույգ պատճառներով՝ *երբեք այնքան, վտանգված չի եղել հայ ցեղի այսօրը,*

և միաժամանակ, մարդկության կողմից սկսված դարաշրջանային անկյունադարձի շնորհիվ - երբե՛ք այնքան հուսալի չի եղել մեր ազգային վաղը:

Ահա՛ թե ինչո՞ւ, մեզ պետք է իբրև պատմական մոմենտի պահանջ, ոգով ու նվիրումով մեծ մի սերունդ - մեզ սպառնացող վտանգի մեծության ու մեծ ապագայի գիտակցությամբ զորավոր մի սերունդ, կարողանար նա՛խ խոր ցեղաշարժի ենթարկել հայությունը, ապա նրա վերանորոգմամբ գլուխ հանել ազգի լավագույն կազմակերպումն ու պաշտպանությունը:

Օրվա պայմաններում, երբ հանուն մի նոր և արդար աշխարհի, տեղի է ունենում պատերազմներից ամենահեղափոխականը, երբ ժողովուրդներն արդեն սկսել են նոր կյանքի նախագարունը ապրել՝ մեզ պետք է հզորացման մտածումով մեծ ու հոգևոր արբեցումի ատակ մի սերունդ, որ սիրեր իր ցեղի և հայրենիքի համար աներկյուղ երես երեսի գալ, ճշմարտության ու մահվան հետ:

* * *

Երիտասարդությունը - դա լեռներից իջնող ամեհի մի հեղեղ է, որ կարող է և՛ օրհնաբեր, և՛ ավերիչ լինել:

Ահա՛ թե ինչո՞ւ նրա պրոբլեմը - որ միշտ էլ կապ ունի տվյալ ժողովրդի ապագայի կառուցման խնդրի հետ - պիտի զբաղեցնի պետա-կան և հասարակական գործիչների ողջ մտածումը:

Չե՛մ ուզում հավատալ, որ ամեն ժողովուրդ իրեն արժանի երիտասարդություն ունի:

Մեր հին սերունդը իր ժողովորդին պարտադրած քաղաքական անբնական վիճակի շնորհիվ՝ նորհասի համար եղավ ավելի գանգը ձեռքին շատախոսող Համլետ, քան կորովի առաջնորդ:

Նա չհասկացավ, որ ամեն նոր սերունդ, իր ժողովրդի գոյության պայքարից զատ, ունենում է նաև իր սեփական սերունդի «անկախության» պայքարը, ավելի՛ն - նա ոչինչ չկատարեց նորահասից «իր ջերմությունն ու լույսն իր մեջ կրող» մի սերունդ ստեղծել: Եսասիրաբար նա ուզեց ու աշխատեց, որ որդիները նմանվեն հայրերին - իրե՛ն:

Այսօր, ամոթալին ու ողբերգականը հայոց կյանքում նրանում է, որ հին սերունդը իր զավակներին հասցնում է իրեն, միայն իրեն համար: Եվ, որովհետև նրա մի մասը - անցեղիմաց մասը - իր տկարությունից իսկ զզվելու քաջություն չունեցավ. դրապես ասած՝ որովհետև նա ցանկացավ, որ իր որդիները լինեն իր կենդանի կրկնությունը՝ ռամկավարի զավակը, ավանդաբար դառնում է ռամկավար, ճիշտ այնպես ինչպես լուսավորչականինը՝ լուսավորչական: Ամենաանն՝ան

շեղումը հոր գաղափարախոսական գծից համարվում է ամոթանք, դժբախտություն հոր, մոր, ընտանիքի համար:

Այստեղ որդին հորից տարբերվում է միայն իր տարիքով: Այլապես ամեն ինչ ընդհանուր է - նույն հայհոյանքը և օրհնությունը կլսեք թե մեկի և թե մյուսի շրթունքներից. նույն քաղաքական աննկարագրությունը, հավասարապես օտարամոլ և նվաստախոհ. չկա հոգևոր աճում, մտածողության և խղճմտանքի անկախություն, չկա «կանաչ հասկ»ին հատուկ կենսազգացողություն, սեփական կոչումի գիտակցություն: Այս մթնոլորտից ծնունդ է առել հոգեբանական բնօրինակ տիպը - Standard-այինը՝ պիտի ասեր ամերիկացին:

Մոտեցեք սրան, և անմիջապես պիտի զգաք հին մեռնող աշխարհի շունչը:

* * *

«Սրտիդ և մտքիդ մեջ փնտրիր թշնամիներիդ, և այնտեղ կգտնես նաև փրկությունդ»:

Նրա համար չի ասված իմաստունի ճշմարտություն շնչող, այդ խոսքը:

Նա դեռ չի հասկացել, որ հայ կյանքի բոլոր չարիքները իր քարացած մտածողության արդյունք են:

Խորապես պառակտված՝ նա պառակտեց մեր երիտասարդությունը, սրանց անդրադառնալու, որ պառակտիչ ու հատվածական ամեն մի խմբակցություն դառնում է չարիք ազգի համար: Նմանը սպառում է հանրային կորովը, միջոցները և այսպիսով դառնում է պորտաբույծ ու վտանգ ազգի հոգևոր առողջության և մեծ արգելք նրա կանոնավոր զարգացման համար:

Հինը չհասկացավ, որ չկա ավելի մեծ դավաճանություն ազգի հանդեպ, քան նոր սերունդը հատվածական, հարանվանական և նման դրոշակների ծառայեցնելը: «Նորահասը քաշելով դեպի հին, ցեղորեն անդեմ կազմակերպությունները, լցնելով «նոր գինին հին տիկերի մեջ»՝ նա խաթարեց նորը:

Նա չհասկացավ՝ որ ժողովուրդներն իրենց ապագան - լավ թե վատ - կառուցում են իրենց զավակներին փոխանցած ոգու միջոցով.

-Որ ծնողներից ժառանգած կրավորական չարությունը որդիների մոտ, տարիքի բերումով, դառնում է ակտիվ ուժ.

Որ հաճախ՝ որդին յուրացնում է «հոր իսկական պատկերը և ոչ թե նրա դիմակը, որ կրում է հանրային կյանքում»:

Նա մնաց խուլ գիտության ու ճշմարտության խոսքի առջև ու չզգաց, որ «գերագույն հանցագործությունը, անքավելի հանցագործությունը - դա ցեղի դեմ կատարված հանցագործությունն է» (Մոնտեն):

Ցեղակրոնությունը - այնքա~ն «Տեր Զոր»ներ ներկող, բայց հավետ երիտասարդ հայ արյունի կրոնը - արժանացավ հայության անցեղահաղորդ մասի դավախառն թշնամանքին:

Եվ այդ այն ամոթալի պատճառով, որ նրա գաղափարախոսն ու քարոզիչը ստադեմոկարտ ու կեղծ ընկերվարական չէր: Ժամանակը չի՞ խոստովանել, որ հայոց պատմությունը մեզ մի հատիկ բան է սովորեցնում - այն, որ հայն իր պատմությունից բնավ չի սովորում:

Թուրքը փորձեց մեզ, իբրև ցեղ, սրբել գոյության գրքից, իսկ հայության որոշ տարրերը անգամ մեր եղեռնից հետո. մնացին զզվելիորեն ընկերվարական ու համայնավար - որ ասել է օտարականներ իրենց հարազատ ժողովրդի մեջ:

Հավերժ պիտի մնա արդար ու խարազանող Հայ Մտքի առյուծի խոսքը՝ «Եթե ընկերվարական դրախտը պետք է հիմնվի հայության դիակի վրա, թո՛ղ էշերն ապրեն այդ դրախտում» (Խաժակ):

Ցեղակրոնությունը - ցեղի հավիտենականի գաղափարը տեղ չգտավ որոշ տարրերի՝ ճերմակ և կարմիր մարքսական և նման այլ հոգևոր աղբով լցված հոգիների մեջ, որով՝ մեր նոր սերունդի անցեղակրոն մասը կշարունակի գերի մնալ մարդկային և ազգային մտքի և սրտի ապականարար՝ խորթ և պառակտիչ վարդապետությունների:

* * *

Ինչո՞ւ և մինչև ե՞րբ այդպես: Հինը, թեև աններելի, սակայն, հասկանալի մի «արդարացում» ունի - ստրկությունն է օրորել նրա օրորոցը:

Հայոց թերիները՝ ստրկության թերիներն են՝ ասել է Բայրոնը:

Տեղական անապահովության ու վախի վարչածևի տակ ապրող անգամ ամենաստեղծագործ ժողովուրդները դառնում են նեղմիտ, ներքնապես չա՞ր ու անհամերաշխ: Հապա տարագրությունը - օտար միջավա՞յրը, ուր օտար արժեքների ազդեցությունը կարելի է մասամբ զինաթափել սեփական ցեղի սրբության և արժեքների ուժով: Նման ծանր պայմաններում, ուր հայերը սովորեցին ապրել նաև առանց հայրենիքի, սովորեցին «երջանիկ» լինել և Հայաստանից դուրս - հին սերունդի անցեղակնիք մասը պիտի դառնար այն, ինչ որ է այսօր - ամոթալիորեն անդեմ, պառակտված ու անզոր, որ ասել է՝ մեռյալ հայ կյանքի տեսակետից:

* * *

Ո՞ւր է ելքը:

Պատմությունը չգիտի ավելի մեծ, ավելի վսեմ, ավելի սուրբ գործ, քան ապագայով վտանգված մի ժողովրդի վերանորոգումը:

Եվ իբրև վերանորոգիչ ուժ, միշտ էլ հանդիսացել է իր նոր կոչումի գիտակցությամբ զորավոր նոր սերունդը: Այսպիսին կարող է դառնալ մեր նոր սերունդը, պայմանով, որ նա՝ գիտակցելով և զգալով այն բոլոր կապերը, որոնք նրան դարձնում են անբաժանելի իր ցեղից, իր ցեղային տարրերքից, ճիգ աներ ազատվելու իր բազում թշնամիների ազդեցությունից:

Նորի մահացու թշնամիներն ու թունավորիչները եղան ու կմնան՝

ա) - ապահայրենացած հայը, որի նշանաբանն է՝ ուր հաց ու հանգիստ, ուր լավ՝ այնտեղ էլ հայրենիք.

բ) - անցե՛ղը, որի համար Աստվածություն չի ցեղը.

գ) - նրանք, որոնց օրվա եկեղեցին, թատրոնը, ընթերցարանը՝ ռինգն է, կրոնը՝ սխալ հասկացված սպորտը. զբոսամոլնե՛րը, որոնք թեթևամտորեն ծափում են, շնացնում, հայհոյում գետին զարկվա՛ծին և սրբապղծորեն ուսաննա՝ կանչում այս կամ այն զզվելի ըմբիշին. եթե սպորտն ու սպարտականը հոմանիշ չեն՝ դատարկ ժամանց է միակողմանի սպորտը:

դ) - երիտասարդը, որին բուլղարական լեզուն անվանեց - «տարիկատ»[61], նա՛, ով միայն հաց կհոտի, ով սիրում է կյանքի գինին, և թշնամի է ազգային և մարդկային ճիգի, խորքի, սրբության. ժողովուրդները չունեն մեծ թշնամի, քան վատ գիրքը:

ե) - Ժողովուրդները չունե՛ն ավելի մեծ թշնամի, քան վատ գիրքը՝ դրված իրենց նորահաս սերնդի ձեռքը, և թունավոր գիրք, թերթ գրողը, որոնց համար հետպատերազմյան երկու տասնամյակները դեռ չեն փակել ազգերի կյանքի ու պատմության հին էջը:

զ) - անդրոշակ եկեղեցին, անցեղանորոգ դպրոցը, սեղմ ասած՝ այն ամենը, որ հայ կյանքում գործում են իբրև կազմալուծումի ազդակ:

* * *

Ապագա չունի այն ժողովուրդը որի տառապանքը չի ծառայում իր գոյության իմաստին և իմաստավորումին:

Ջարդվեց, աղետվեց հայությունը, և այդ ոչ այն պատճառով որ թշնամին զորավոր էր, այլ որ մենք տկար էինք:

Օտար այլասերիչ միջավա՞յրը - դրա դեմ էլ կարելի է պաշտպանվել հաջողապես, միայն թե հին սերունդի հոգևոր ցնցոտիների փոխարեն մեր նորահասին հագցնենք ցեղի ոգու զրահը:

Կեղծ և անզոր է ոչ միայն ամեն վարդապետություն, այլև՝ շարժում, ամրություն, որ ծնված չի ոգուց:

Պառավեց Մաժինոն, որովհետև դա տկարության ամրություն էր, որի մեջ հին գայլերի անպարտելի ոգու փոխարեն, դրված էր ռազմագիտական պաղ հաշիվ միայն:

Ահա թե ինչո՞ւ եմ ասում՝ դա՛րձ դեպի ցեղը, որ ենթադրում է *ոգի և արյուն:*

Ձեռքդ դիր նախահայրերի՛դ հզոր աջի մեջ և դու պիտի զգաս թե ինչպես ուժեղ է զարկում սիրտդ, զորեղանում բազուկդ, պողպատանում կամքդ:

Ա՛յդ է ցեղանորոգման ճամբան:

Ցեղը - դա հավիտենական քանդակագործն է նոր սերունդը՝ կենդանի մարմարիոն նրա ձեռքում:

Ցեղը - դա ժողովրդի պոտենցիալ անմահությունն է, հավիտենապես հայկականը:

Դա ժողովրդի բնության անփոփոխ մասն է, սրա կենսաբանական անփոփոխ գոյությունը:

Դա միակ ապահեխիչն է ժողովորդի հոգևոր կյանքի:

Ովիդիոսը մեր ցեղի ուժը խորհրդանշել է վագրով: Իսկ «վագրը երբե՛ք մեռյալ չի»: Հենց այդ չմեռյալ վագրայինն է մեր ցեղը, որի անունը ըստ անգլիական պատմագիր Ֆինլեյնի՝ Բյուզանդիայի մեջ հոմանիշ էր ազնվականության:

Ահա՛ թե ինչո՞ւ եմ ասում՝ ցեղն ու ցեղակրոնությունը անհրաժեշտ են մեր նոր սերունդին ճիշտ այնպես, ինչպես կրակը՝ երկաթը ջրդեղելու համար:

Դա՛րձ դեպի ցեղակրոնությունը:

Կրոնը - դա ծնունդ է աստվածության ծարավի մարդկային հոգու, ցեղակրոնությունը՝ հայրենիքի համար ամեն վայրկյան արյունող հայկական սրտի:

Ցեղակրոնությունից պիտի ծնվի ցեղամարդը - օրվա ազգերի կրթական իդեալը: Դա պիտի դառնա նա՛և մեր նոր սերունդի իդեալը:

Այրող ծարավը համահայ սրտի տեր ամբողջական հայի.- այդ, միայն այդ մեր նոր նորահասը կվերածվի ուժաստեղծ, որով և՝ վերանորոգչական մի փրկարար ազդակի:

Մե՛ծ են մեր ապրած օրերը, մեծ իրենց վտանգներով ու ակնկալություններով:

Մե՛ծ է և պահանջը՝ իր մեծ պարտականության ու վտանգների ժպտալ իմացող մի սերունդի:

Մենք նմանի ստեղծումը՝ ժամանակի ոգու և մեր ցեղային կարելիության սահմաններում՝ համարում ենք և անհրաժեշտ և հնարավոր:

«Ռազմիկ», 1941, թիվ 5, 7:

Գ. ՆԺԴԵՀԻ ՆԱՄԱԿԸ ՏՐԱՅԱՆՈՎԻՆ

Սիրելի՛ բարեկամ
Տեոդոր Տրայանով[62],

Չեմ կարող ասել, թե անծանոթ էի Ձեր ժողովրդի ցեղային կարողություններին, նրա պատմությունը ստեղծող ու շարժող ոգուն, նրա մշակութաստեղծ խանդին:

Սակայն, քաղցրորեն պիտի խոստովանեմ, որ համակրանքի երկտողով ինձ ուղարկած Ձեր գիրքը եկավ նոր շա՜տ բան ասելու ինձ՝ բուլղարական «*Ոգու և Հոգ*»ի մասին:

Հանճար և մարգարեականություն - ահա՛ թե ինչե՛րն են ծնունդ տվել Ձեր բալլադաներին: Ճշմարտորեն մե՜ծ բանաստեղծ, որ դժբախտաբար, ամեն սերունդի օրով աշխարհ չի գալիս:

Փարիզի անկման նախորյակին ֆրանսիական գրական մի ամսօրյա ցավով հարցնում էր՝ ո՞ւր է մեծ բանաստեղծը, որ հանուն Ֆրանսիայի պաշտպանության կարողանար զորահավաքի ենթարկել բոլո՛ր սրտերը:

Բարեկա՛մ, Ձեր գիրքը թերթելուց հետո՝ ես հավատու՜մ եմ, կհավատա՜մ, երիցս կհավատա՜մ, որ եթե վաղը Ձեր հանճարը ծնող ժողովուրդը հարկադրվի մերկացնել իր «*Աստվածայնորեն կատաղի սուրը*», Բուլղարիայում ո՛չ ոք չպիտի կրկնի ֆրանսիացիների խռովքոտ հարցը, քանզի կա՛ մեծ բանաստեղծը, դա՝ բուլղար նախախնամության աստվածաշունչ մունետիկը՝ ապրում է մեր մեջ - Ձեր բալլադաները վկա՛: Ոգու բանաստեղծ, տեմպորալիստ, հստակատես - այսպե՛ս պիտի էագրեր Ձեզ ճշմարիտ գրաքննադատը, եթե նա գոյություն ունենար այսօր: Արդարև, Ձեր ոգու համար անջրպետ չունեն դարաշրջանները: Տեմպորտլիստական Ձեր միտքը, սավառնում է բոլոր դարերի, բոլոր սերունդների վրա, և Sub speccie aeternitatis* եկած ու անցածների անունից պատգամում նորերին: Մարգարեական խոսքի ինչպիսի թափ - իմաստի՝ խորությունն, ապրումների՝ լավա: «Երբ ճապոնացին մի ծաղկող ճյուղ է նկարում - դա ամբողջ գարուն է»,- ասել է Ալտենբերգը՝ Վիեննայի մեծ բանաստեղծը, մեծ բոհեմը:

Դո՜ւք էլ, դո՛ւք էլ, երբ խոսում էք մի գետի, մի պուրակի, մի լեռան մասին, ոգիանում է, լեզու առնում ո՛ղջ բնությունը:

* * *

* Հավիտենականի բարձունքից (ծանոթ. հեղինակի):

Այո՛, ինչի որ դիպչում է Ձեր թովչական խոսքի շունչը՝ դա կենդանանում է, և սրբանում, միաժամանակ:

Երգում են ձեր երգած ծովերը, որովհետև գիտեն, որ «*հերոսի սիրտը հանգիստ է գտնում միայն երգի մեջ*». Հողմերի մեջ՝ «*դարերն են լալիս*»: Անտառը՝ «*հավիտենական ուժեր է արտաշնչում*»:

Պիրի՛նը՝ տիտան՝ լսում է և լռում: Ատրո՛ման - տնքում է գիշերային լռությունը պայթեցնող հառաչանքով՝ «*անարգված պատվի և օջախի*» համար: Եվ հո՛ղը - «*մատակ առյուծ*» - իր կորյուններն է կանչում:

Այսպես, Ձեր շնչով ոգիացած երկրում՝ ամեն ինչ սուրբ է, մարդկային և սիրելի: Ցարեր՝ «*ծնված առյուծի և հրեշտակի հոգով*»: Արևադեմ մարգարեն, որ «*մեղքից զերծ ցեղը*» երազեց, և այսօր, «*եղբորից դաշունված քայլում է արնոտ հետքերով*»: Հերոսներ, որ «*երբեք չեն մեռնում, անգամ եթե արևը մեռնի*»: Մայրեր - «*թշվա՜ռ մայրերը եղբոր և թշնամու - որոնց մազերի վրա լացող Տիրամոր արցունքն է թափվում*»: Քաջամարտիկներ «*մարտում հրեշտակի հավասար*», որոնք իջնում են երկնքից և «*պահակ կանգնում իրենց վաղեմափառ դրոշակներին*»: Մեռելներ անթաղ, կռվում ընկած, «*որոնց աճյունի առջև ինքն Աստվածն է խնկարկում*»: Մշակներ՝ Ֆաուստյան կարոտով, որոնց «*թափորի մեջ նոր ժամանակների քայլերն են արձագանքում*»:

Եվ ժողովուրդը՝ արդար ու արի, գիտի ինքն իր կյանքի օրենքը դարբնել, և «*եղբայրական սեղանին թշնամուն հրավիրել*»: Իր սուրը՝ «*հրեղեն և սառցյա, որ սպանում է միայն պաշտպանության մեջ*»: Խղճմտանքը՝ «*սպանի՛ր առանց սպանիչ-չարագործ դառնալու*»: Աղոթքը՝ «*Դու, Տեր, ների՛ր ռազմի մեր եղբայրներին, ների՛ր և թշնամուն*»: Հավատը՝ խաչակիրի: Տեսիլքները՝ շքեղաշքեղ ու հոգեփոխիչ: Աշխատանքը՝ «*հրաշք, որ Աստծուն է մոտեցնում երկրի ամեն մի որդուն*»: Իմաստությունը՝ «*մարդը անցողական է, ժողովուրդը հավիտենական, այն բանում, որ ստեղծում է*»:

Այդ արևադեմ ժողովուրդը և՛ իր մեծ օրն ունի - ահա՛ «*զարկում են բոլո՛ր թմբուկները, շեփորում և՛ բոլոր փողերը*», քանզի «*Բոսֆորի վրա ճակատագիրն է հառնում*» և... վերստին, հողը - մատակ առյուծ՝ իր կորյուններն է կանչում՝ «*ոտքի՛, մեռելնե՛ր*»...

* * *

Բարեկա՛մ, եթե ես լինեի վարիչը բուլղար բանակի, եկեղեցու, դպրոցի՝ պիտի հրամայեի, որ՝ ամեն զորական ու զինվոր, եկեղեցական ու հավատացյալ, ուսուցիչ ու աշակերտ, որ ամեն բուլղարացի իր ծոցում կրեր Ձեր բալլադաների գիրքը: Այո՛, այդպես պիտի վարվեն Բուլղարիայի օրվա վարիչները, որովհետև միայն հանճարով ու մարգարեությամբ օծուն նման գրքերին է հաջողվում ժողովրդից շանթա-

նման առաջնորդներ ու մահապատրաստ վիտիազներ քամել: Ձեր բալլադաների հզոր շունչը կարող է հոգեվերանորոգել Ձեր ժողովրդին, այն վերածելով մի հոգևոր մոնոլիտի, որպիսին դա պիտի դառնա հրամայողաբար, որովհետև *«գալիս են զորավոր ժամանակներ»:*

Փա՜ռք Ձեզ և Ձեր հանճարը ծնող ժողովրդին: Համբո՛ւյր Ձեր գրչին:

Եղբայրորեն՝ ՋՈՐ. ՆԺԴԵՀ

«Ռազմիկ», 1941, թիվ 6:

ՑԵՂԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Ո՛չ միայն եվրոպացիները, այլև՝ մենք, հայերս էլ մեր ցեղը ճանաչում ենք այն չափով, ինչ չափով, որ մենք և օտարները ճանաչում ենք՝ իր մեծության ու փառքի փլատակների վրա փռված մեր Անին, որ դեռ գրեթե ամբողջապես հողի տակն է:

- «Լավ է,- ասել է մի ցեղաշունչ հայ,- և հարկ ու անհրաժեշտ, որ ամեն մեկ հայ իր կյանքի մեջ ջանա գոնե մի անգամ տեսնել հավերժապանծ Անին:

Ազգային ընդհանուր աշխարհայեցողությունն ավելի ընդլայնող նոր հորիզոններ և անսահման ոլորտներ պիտի բացվեին նրա մտքի և զգացումների առջև»:

Այո՛, դա անհրաժեշտ է մասնավորապես այսօր, և՛ նրանց համար, որոնք տառապում են ցեղային նվաստության զգացումով, որոնց հոռետեսական կեղծ հայրենասիրությունը դեռ շարունակում է վայել, թե դժվար է սփյուռքի մեջ հայը հայ պահել:

Անի՛ն - մեր անցյալը խորապես պեղելով միայն կարելի է ճանաչել մեր ցեղը:

Մի ժողովուրդ, որի հպարտ սերունդները ժամանակին ասել են՝ «Անին շե՞ն, աշխարհն ավեր», իրավունք չունի՛ չհավատալու իր ապագային:

Օրվա մեր վիճա՞կը - այո՛, դա մեզ գրեթե ամեն ժամ հառաչել ու կրկնել է տալիս՝ «Անի՞ն ավեր, աշխարհը շե՞ն», բայց պետք չի մոռանալ, որ հայի մայրաքաղաքը՝ Աթենքի, Հռոմի նման չփլվեց իր վատասերումի և զեղխության մեջ, այլ՝ ավերակ դարձավ բարբարոսության հարվածների տակ:

Անի~ն - մեկը մեր ցեղային հանճարի հսկա գործերից - փլատա՛կ է այսօր, անցյալ փառքերի ու մեծության փլատակ. շե՛ն է, սակայն, մեր ցեղը: Եթե կործանված է ստեղծագործությունը, դեռ կենդանի է ստեղծիչը - ցեղիմաստասիրական այդ ճշմարտությունը միայն կփրկի մեզ, մասնավորապես մեր նորահաս սերունդը:

* * *

Ցեղ, ցեղային ժառանգականություն և պատմություն, իբրև ընդհանուր ճակատագիր, արժեքներ, փառքեր ու դժբախտություններ - ահա՛ այն ուժերը, որոնք դիմակերտում են տվյալ ժողովուրդը և որոշում նրա ճակատագիրը:

«Ցեղ» ազդակը, սակայն, իբրև բովանդակություն, ենթակա է փոփոխության:

Օրինակ, մի ժողովուրդ - ըստ Պրոֆ. Վալթեր Գրոսի - դարերի ընթացքում, բնական ընտրության ճամբով, անկախ իր ցեղային մաքրությունից - կարող է հարստանալ արժեքավոր հատկություններով, կամ էլ՝ կորցնել նմանները: Եթե նրա ամենաքաջ, անձնվեր և արժեքավոր տարրերը մեռնում են առանց ժառանգներ թողնելու, դա, այդ ժողովուրդը աստիճանաբար աղքատանում է իր բնածին առաքինությունների տեսակետից: Կամ եթե ժողովրդի վճռաշունչ, կամային և հոգևորապես հարուստ տարրերը լքում են իրենց երկիրը, գաղթում - ազգն, այդ դեպքում, ենթարկվում է իր տկար տարրերի տիրապետության վտանգին:

Այսպես, *մի ժողովրդի ցեղային վիճակի հետ փոխվում են նրա առաքինությունները:* Իր կոպիտ սխալների և մեղքերի ծանրության տակ մեռնող լիբերալիզմը չհասկացավ այդ ճշմարտությունը: Ժխտելով ցեղի բախտորոշ նշանակությունը՝ դա ազգությունը համարեց *միայն* պատմական ավանդությունների գործ: Ճի՛շտ է, վերջինները ժողովուրդների կյանքում կատարում են հոգևոր կրաշաղախի դեր, ճիշտ է, սակայն և ա՛յն, որ *առանց ցեղային պատկանելիության զորավոր զգացումի՝ ժողովուրդները պիտի շարունակեին մնալ իբրև մարդկային դիմագուրկ զանգվածներ: Մի ժողովուրդ միայն այնքա՛ն է ակտիվ, ստեղծագործ և կենսահոգեբանորեն լավատես, որքան կենդանի և արթուն է նրա ցեղային ծագման գիտակցությունը:*

Այս գիտակցությամբ չի՛ ապրում օրվա հայությունը - ահա՛ պատ-ճառն իր աններելի պառակտումների և տկարության:

Ցեղակրոնությունը այլ նպատակ չունի, քան տարագիր հայության մեջ արթնացնել ցե՛ղը, ցեղայի՛նը, միաժամանակ՝ թարմացնելով իր պատմական հիշողությունը - այն մի՛ և անբաժան ազգի վերածելու համար:

«Ռազմիկ», 1941, թիվ 8:

Գ. ՆԺԴԵՀԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ՃԱՌԸ ԼՅԱՊՈՎԻ ԴԱԳԱՂԻ ԱՌԱՋ

Լյապո՛վ[63],

Դագաղիդ առջև կանգնած է գաղափարի և զենքի ընկերդ:

- Խորտակվա՞ծ եմ մահվանդ իրողությամբ: Խորտակված եմ ու սրտաբեկ, բայց հեռո՛ւ ինձանից հեղափոխականին անվայել տկարությունը՝ ողբա՞լ քեզ, որովհետև հերոսներին չեն ողբում, այլ՝ հպարտանում, սքանչանում նրանցով:

Ուղիղ 33 տարի առաջ մեզ միացրեց մեր ժողովուրդների ընդհանուր ճակատագիրը:

Մեզ հավաքեցին միևնույն գաղափարի շուրջը Հայաստանն ու Մակեդոնիան, և քո ու նմաններիդ շնորհիվ ես ավելի ջերմորեն սիրեցի քո հայրենիքը, նրա դատը:

Տարիներ անցան: Ես վկա եղա քո հոգու վեհության - ստորերկրյա աշխատանքի մեջ, տարագրանքի մեջ, ինչպես և կյանքի խաղաղ պայմաններում:

Իբրև հեղափոխական խոր իմացականության և զորավոր խառնվածքի մարդ՝ դու իմացար ազատագրական շարժման ու գործին վերաբերող բոլոր խնդիրներին մոտենալ մտածումի հերոսականությամբ:

Արիություն ունեիր մտածումդ և խոսքդ հասցնել իրենց տրամա-բանական վախճանին:

Գիտեիր արդարորեն գնահատել մարդկանց, նրանց գործերը, նրանց հանրային նշանակությունը:

Քաջություն ունեիր ճշմարտությունը ասել օրվա «հզորներ»ին:

Իբրև հեղափոխական բարձր բարոյականի մարդ՝ եղար ահեղ ու աներկյուղ, քայլեցիր վտանգների ու մահվան դեմ և հնագույն բիբլիական մարգարեների՝ մնացիր անողոք այն բոլորի հանդեպ, որոնք այս աշխարհում, անձնական շահը սկզբունք դարձրած, «ծախու են հանել իրենց սուրը», թիկունք դարձրել իդեալին և Աստծուն, ու ամեն ինչ կյանքում կապել մեռյալ նյութի, նյութապաշտության:

Ես քեզ տեսա աքսորի մեջ - այդտեղ էլ դու չիմացար, թե ի՞նչ է տկարությունը, անհուսությունը, նահանջ, ընկրկում չունեցար գերագույն պարտականության ճակատի վրա:

Վերջապես, հիացա քո կեցվածքով լեգալ քաղաքացիության պայմաններում, ուր ճշմարիտ ստոիցիզմով կրեցիր անմարդկային զրկանքներ, և, այդ վիճակում, մտածելով միայն, միա՛յն ուրիշների մասին, հաճախ սրբազան զայրույթի պոռթկումով ասացիր. «Չէ՛, այս երկրում նյութական միջոցների չգոյության պատճառով ո՛չ ոք պիտի չմեռնի՛ քաղցից»:

Ո՛չ ոք, բայց այդ «ոչ ոք»ը չվերաբերվեց քեզ, որովհետև ամեն ինչ տված հայրենիքիդ, դո՛ւ, հեղափոխական ճգնավոր, բարոյապես ազատ չհամարեցիր քեզ՝ մտածել նաև՛ քո անձի մասին:

- Մի՛, մի՛ մարեք ոգին,- այսպես, դեռ երեկ, իբրև հեղափոխական դաստիարակիչ այսպես էր ասում երիտասարդ սերնդի ներկայացուցիչներին, նրանց քարոզելով ալելուիականություն դեպի հայրենիքը:

Այսպե՛ս, միշտ պատրաստ պարտականության ու վտանգի դիրքերի վրա՝ իբրև մարդ և մարտիկ:

Այսպիսի՞ն էիր դու - փառապանծ ընկեր, որի կեցվածքի բաղդատմամբ ոչինչ են շատ թագակիրներ, և շատ ու շատ մեծահարուստներ անարժան կոխածդ հողը համբուրելու:

Դու է՞լ, դու էլ կարող էիր հարուստ լինել, բայց ապրեցիր աղքատ և մեռար մենավոր, մեռար անշուք ու պաղ չորս պատերի մեջ, մեռար ինչպես վայել է մեռնել հոգով մեծերին:

* * *

Լյապո՛վ - ecce homo - ահա՛ մարդը, որի բյուրեղ նկարագրով հիանալ կարող էր միայն նա, ով հոգեկան որոշ վեհություն ունի: Նա՝ «առյուծի և հրեշտակի հոգի կրող» Հայ և Մակեդոնական Հեղափոխության փաղանգի այդ զինվորը կարող էր բնության ուղղել գերմանական փիլիսոփայի խոսքերը. «Դու կարող ես ոչնչացնել իմ մարմինը, կարող ես ինձ սրբել երկրի երեսից, բայց իմ ոգու նկատմամբ դու ոչի՛նչ չես կարող անել»:

Ահա՛ Պրոմեթեյան այն գիտակցությունը՝ անսպառ աղբյուրը Լյապովի ներքին ուժի, ուրախության և գաղափարային գինովության: Նմանների՛ն, գերագույն նվիրումի ընդունակների՛ն է միայն տր-ված զգալ իրենց ոգու անմահությունը, և, հենց սրբանում է նրանց բարոյական անկապտելի իշխանությունը այն ամենի վրա, որ ստոր է, անցողական ու եղծանելի մարդկային կյանքում:

Լյապովի կյանքն ու մահը - դա գերագույն հաստատումն է *մարդկային գոյության տրագիզմի օրենքի:*

Գիտեր գաղափարի մեր մեծ ընկերը, գիտեր, որ *հերոսականության տրամաբանությունը հերոսի տառապանքն ու մահը վերածում է նրա ոգու հաղթանակի:*

Նա, զույգ ժողովուրդների վշտակիրը - որ այս աշխարհում մի հատիկ բարոյական մխիթարություն ճանաչեց՝ ի խնդիր ազատության տեղի ունեցող մահերի գեղեցկությունը: Նա ապրեց, տառապեց երկու հայրենիքների համար, ապրեց մարդկային ոգու անպարտելիության այն հրաշագործ զգացումով, որ տրվում է միայն այն ընտրյալներին,

որոնք վճռաբար բաժանում են ճակատագիրը տառապող Պրոմեթեի - Աստծու:

Իսկ Աստված - դա տառապում է մարդկային ամեն մի կաթիլ արցունքի, անազատ ազգերի ամեն մի հառաչանքի մեջ:

Լյապո՛վ, վեհասքա՛նչ ընկեր, մեռար՝ չապրած իրականացումը հիսնամյա երազիդ:

Դեռ խաչերն են ցցված մեր հայրենիքների թիկունքում - սրանում է քո և մեր ողբեգությունը:

Սակայն, դո՛ւ, քա՛ղցր ընկեր, դո՛ւ, որ Հիսուսյան նվիրումն ու տառապանքը կրեցիր իբրև միակ առանձնաշնորհություն - դու աշխատեցիր, դեգերեցիր ու մեռար այն հավատով, որ վաղ թե ուշ հաղթանակում է Մեծ Նպատակը: Սրանում է քո հոգու վերհությունը, որ թողեցիր եկող սերունդներին իբրև անարծաթ կտակ:

Խաղաղությո՞ւն աճյուններիդ:

* * *

Մեկնո՛ւմ ես - հավիտենականի դրան քեզ սպասում է Վիտոշի շանթերի վարպետ Քրիստափորը մեր:

Ասա՛ նրան, որ իր ճամբով ընթացողները լեգիոն են: Ասա՛, որ լսվում է դղրդյունը մոտեցող արդար ու մեծ օրվա քայլերի, որ շուտով ազատ Մասիսն ու Վիտոշը եղբայրորեն կողջունեն իրար: Այդ օրը, Լյապո՛վ, հայ հեղափոխականները իրենց հետ կտանեն մի բուռ հող՝ քո գերեզմանից, և կցրեն հայոց լեռներում, որ անմեռ հոգիդ ժպտա նաև՛ մեր երկնքի տակ:

«Ռազմիկ», 1941, թիվ 9:

ԵՐԲ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՂԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՉԷ

Ա

Չեմ կարծում, որ օրվա կրակ առած մեր երկրագնդի վրա մի այլ ժողովուրդ այնքա՛ն հաճախ խոսեր հայրենիքի և հայերանասիրության մասին, որքան հայը:

Հաճախե՛ք մեր հանդեսները և անմիջապես պիտի համոզվեք, որ ամենից շատ հայ մարդն է «ուխտում» ծառայել հայրենիքին, մեռնել նրա համար:

Այդ երևույթի հոգեբանական գաղտնիքը նրանում է, որ հայ «հայրենասեր»ը քաջ գիտի, թե իր կուրծք ծեծելը, իր ուխտը բնավ չի պարտավորեցնում իրեն ոչ միայն մեռնելը, այլև անշահասիրաբար «օգտակար լիներ իր հայրենիքին»:

* * *

Չեմ ճանաչում, նմանապես, մի այլ ժողովուրդ, որի հայրենասիրությունը բովանդակությամբ այնքա՞ն աղքատ լիներ, որպիսին է դա մեր ժողովրդի մի մասի մոտ:

Հայ մարդու հայրենասիրական բառամթերքը կտրվի մեկին միջակ հռետոր դարձնելու:

Բաց ու խանդ - որքան ուզեք, բայց ծույլ, անպտուղ, անզոհաբերող է այդ հայրենասիրությունը:

Եվ հենց այդ է պատճառը, որ մեզանում «հայրենասեր» համարվածն էլ վտանգի ժամանակ իր հայրենիքը թողել է կրակների մեջ և փախել վատորեն:

* * *

Վերացական է հայկական հայրենասիրությունը: Շատերը հայրենիքը փնտրում են ամպերում, միստիկ մշուշի մեջ, երբ դա այնքա՞ն մոտ է մեզ՝ մեր ուշադրության, նվիրումին, պաշտամունքին կարոտ: Շատերի համար Հայաստանը դեռ մի գաղափար է, մի անմենեզա, մի սիոն, մի զոհասեղան:

Մոռանալով այն, որ է՛, որ ապրում է, որով սիրելի է, սուրբ՝ նմանները Հայաստանի փոխարեն պատկերում են մի ինչ որ կին՝ սևերի մեջ, հերարձակ նստած ճամբաների եզրին կամ ավերակների վրա: Մի շքեղ տեսիլք, մի երազ, մի քարտեզ, բայց ոչ մեր ցեղը և Հայրենիքը:

Այսպես, վերացականորեն խորհելով ու խոսելով Հայաստանի մասին՝ հայը մառախլապատում է ոչ միայն «հայրենիք» հասկացողությունը, այլև՝ իր ազգային պարտականությունն ու պատասխանատվությունը: Հայաստանը կարոտ է կոնկրետ ու կենդանի հայրենասիրության:

* * *

Հայոց հայրենասիրությունը կրում է տոնական, հանդիսային, ազնվապետական բնույթ:

Դա հարմար է հռետորության և տաք սեղանների շուրջը շաչող բաժակաճառերի, բայց ո՛չ և Հայաստանին ու հայության: - Հայաստանը պետք ունի հանապազորյա և զոհահոժար հայրենասիրության:

Գռեհիկ, անհայրենասիրության աստիճան գռեհիկ է ոմանց հայրենասիրությունը: Վերջերս մեկը գրեց՝ «Հայրենիքն է անհատի համար, և ոչ թե անհատը՝ հայրենիքի»: Դա նշանակում է՝ հայրենիքը համրելու միջոց, անհատը՝ նպատակ: Դա ասել է՝ երբ վտանգ կա, թո՛ղ կործանվի հայրենիքը, միայն թե ապրի անասնահոգի անհատը: Նման հայրենասիրության և անհայրենասիրության միջև տարբերությունը բառային միայն:

-Մեր հայրենիքի դժբախտության ներքին պատճառներից գլխավորը դա հայ մարդու օրվա ստահայրենասիրությունն է:

Ինչո՞ւ և մինչև ե՞րբ այդպես:

Ինչո՞ւ հայկական կազմակերպություններից ու հաստատություններից շատերը դարձել են կեղծիքի դպրոց:

Ինչո՞ւ - որովհետև օրվա հայը մնում է կտրված իր էաբանական արմատից, իր խորքից - իր ցեղից: Դա դեռ չի հասկացել, որ ինքը, իբրև մարդկային անհատ, ծնունդն է որոշ ժառանգականության ու միջավայրի - Ցեղի և Հայրենիքի. չի գիտակցել, որ ամեն մարդ իր ցեղից է ժառանգում իր ֆիզիկական և հոգեկան առանձնահատկությունները և որ իր հերթին նա էլ իր տաք արյունը - իր պոտենցիալ անմահությունն է կտակում՝ հավիտենականին, որպեսզի որոշ ոգի և դիմագծություն ստանան հայոց գալիք սերունդները: Սեղմ ասած, որ ինքը, իբրև մարմնահոգեկան կազմվածք՝ մի ցեղային ժառանգություն է: Այդ գիտակցության պակասի պատճառով զզվելիորեն կարճաշունչ է օրվա հայի հայրենասիրությունը - անզոր՝ նրան մեծ շարժուձևերի ու գործերի առաջնորդելու: Պակասավոր է դա - այդ հայրենասիրությունը նաև ցեղասիրություն չի - դա իր մեջ չի պարփակում մեր արյան գաղափարը:

Ցեղն է այս կամ այն երկիրը դարձնում հայրենիք: Հողն առանց ցեղի, ասել է՝ մարմին առանց հոգու:

Ահա՛ թե ինչո՞ւ հայոց հայրենիք ասել է՝ հայոց ցեղաստան:

Մի ժողովուրդ, որ իր մտածումից և հաստատություններից դուրս է թողնում ցեղը՝ հոգեզրկում է իրեն, հարստահարում է իր մետաֆիզիկ էությունը, տկարացնում իր մշակութաստեղծ եռանդը, իր հերոսական թափը - խորապես մեղանչում է իր գոյության դեմ:

Սուտ ու սնանկ է նման հոգեթափի հայրենասիրությունը, մեռյալ՝ իր ազգային պարտականության ու պատասխանատվության զգացումը:

Բ

Այսօր, մասնավորապես, երեք բան զերծ է պահել ստահայրենասիրության պղծանքից - հայ խաչը, մանուկը, գիրը:

Ազգերը չունեն ավելի ճակատագրական պաշտոնյաներ, քան իրենց եկեղեցին, դպրոցը և մամուլը վարողները:

Կղեր, ուսուցիչ, խմբագիր - մեծագույն օրհնություն, և չարիք միաժամանակ: Օրհնությո՛ւն են, երբ ցեղն է վարում սրանց խղճմտանքը, անե՜ծք, երբ ցեղից չեն առնում իրենց ներշնչումները:

Պղծադավան է այն հոգևորականը - որով և՝ ամենավտանգավորը ազգի ներքին թշնամիներից եթե իր վարած եկեղեցին նա չի դարձնում նա՛և ցեղի տունը:

Սփյուռքի հայոց եկեղեցիներից շատերում, ուրախություն թուրքի և բոլշևիկի, դեռ ցեղը տեղ չունի: Նման հաստատությունները կարող են ծառայել ամեն բանի, բայց ոչ Աստծուն և Հայրենիքին:

Պաշտոնապղծություն է կատարում ուսուցիչը, որի մարգարեն ցեղամերժ Մարքսն է, Լենինը:

Նմանը՝ ոչ թե մտածումով, զգացումով ու գործով հայեր, այլ հայորեն ատակներ կհասցնի վաղվա համար:

Հապա անցեղաշունչ թե՞րթը, գի՞րքը, որոնց ամբողջ հայկականությունը կայանում է նրանում, որ հայատառ են:

Հայրենիքի և հայրենասիրության մասին աղմկում են նմաններն էլ, առանց անդրադառնալու, որ պղծություն է կատարում ամեն անհատ, կազմակերպություն, հաստատություն, որի մտածումի, զգացողության ու գործերի մեջ ցեղը տեղ չունի, բայցևայնպես խոսում է ազգի և հայրենիքի անունից: Հոգևոր չարաշահությո՛ւն և անբարոյականություններից ամենազազրելին է դա: Սրանք են խաթարում մեր ազգային ոգին, մտածողությունը, նկարագիրը:

* * *

Հայրենիք սիրել, ասել է՝ խորազգալ, խորհել ու գործել ա՛յն, որ անհրաժեշտ է ցեղի և հայրենիքի հզորացման և հավերժացման համար:

Ցե՛ղն է մեզ օժտում հավիտենականի զգացումով: Անցեղակրոնը միշտ էլ ենթադրում է հավիտենական զգացումից զուրկ արարածը: Իսկ նմանը, ըստ իմաստասէր Ֆիխտեի «սեր չունի ո՛չ իր անձի, ո՛չ էլ իր հայրենիքի հանդեպ»:

Սիրե՞լ - սիրում են և՛ շուկան, ուր կարելի է շահել. սիրում է դրամը, հաճույքը, հարմարությունը - անցողական սակավարժեք հազար ու մեկ բաներ:

Իսկ Հայրենիքը - դա, իբրև գերագույն արժեք - պատկանում է սրբազան այն առարկաների կարգին, որոնք պաշտվում են նա՛և: Սիրում ենք շա՜տ բաներ, բայց արյուն չենք թափում նրանց համար: Հայրենիքը, սակայն, պահանջում է ոչ միայն մեր սիրտը, այլև մեր արյունը, երբ դա անհրաժեշտ է իր գոյության համար: Սերն ավելի իրավունք է ճանաչում, պաշտամունքը՝ պարտականություն: Մարդիկ ավելի հեշտ են համերաշխում, միաբանում պաշտամունքի, քան սիրո մեջ, որի առարկաները բազում են մեծ մասամբ հասարակ: Ընդհանուր պաշտամունքի դեպքում ժողովրդի մտածումն ու գործը ընթանում են ներդաշնակ: Ինչ որ է ժողովուրդի հասկացողությունը իր հոգևոր էության, նույնն է դա իր հայրենիքի մասին:

Նյութապաշտի հայրենիքը՝ մի երկարամաս է լոկ և ուրիշ ոչինչ: Նմանը սիրում է իրեն կերակրող ու պատսպարող երկիրը, և այդ սահ-

մանափակ, գրեթե նախնական սերը անվանում է հայրենասիրություն, որն ունի կենսաբանական, բայց ոչ և հոգևոր հիմքեր:

Գաղութահայության օրվա պառակտյալ վիճակը ապացույց և արդյունք է ընդհանուր պաշտամունքի պակասի: Անցեղակնիք խմբակցություններն ու հաստատությունները շարունակում են ստահայրենասիրությունը գործածել իբրև կեղծիք, շպար, որով՝ էլ ավելի ամբոխացնում են ու ցրում մեր ժողովուրդին, երբ դա այսօր այնքա՞ն կարիք ունի միանալու ցեղը խորհրդանշող մի հատիկ դրոշի տակ:

Հավատա՛նք - Հայաստանից դուրս էլ հայը հա՛յ կմնա, եթե մնաց կապված իր ցեղի ճակատագրին: Իսկ դրա համար՝ օր, ժամ, վայրկյան առաջ հայոց բառարաններից սրբենք հայրենասեր և հայրենասիրություն սնամեջ բառերը: Հայրենիքին, որ ասել է՝ և՝ ցեղին - վայել է խոր պաշտամունք. նրան հայրենապաշտնե՛ր են պետք, որպիսին դառնում են ցե՛ղը, միայն ցեղը դավանողները:

Այո՛, առանց ցեղասիրության չկա՛ ճշմարիտ հայրենասիրություն:

«Ռազմիկ», 1941, թիվ 11, 12:

ՊԱՏԵՐԱԶՄ՝ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ա

Մարդկային ցեղերի պատմության մեջ նախընթաց չունի օրվա պատերազմը:

Հներից դա տարբերվում է ոչ միայն իր չափակետով և իր գործադրած տեխնիկական նորագույն զենքերով, այլև՝ իր բնույթով, առավելապես իր բնույթով:

Դա իրապես համաշխարհային է, և այդ ոչ այն պատճառով, որ սպառնում է, օր ըստ օրե, բռնկեցնել մեր երկրագնդի նաև՛ այն մասերը, որոնք դեռ դուրս են մնում հրդեհից, այլ որ իր հետապնդած նպատակները կրում են համաշխարհային բնույթ: Նախկինները՝ իրենց ռազմադաշտի թե լուծելիք խնդիրների տեսակետով՝ տևական էին:

Օրվա պատերազմը, ըստ որի իդեոլոգիայի, մի հեղափոխություն է, միաժամանակ:

Այսօր, ռազմաճակատներում չափվում են ոչ միայն երկու տեխնիկաներ, այլև՝ երկու գաղափարներ, երկու աշխարհայեցողություններ, երկու աշխարհներ: Անցյալ պատերազմը - որ համաշխարհային էր միայն իր ծավալի, բայց ոչ և՝ իր առաջադրության տեսակետով - զորեց եսականորեն լուծել մասնակի խնդիրներ ու վեճեր միայն, որով և

պատճառ դարձավ պատմության մեջ չտեսնված մի ծանր տագնապի՝ կյանքի բոլոր մարզերում:

Նորից, ընդհակառակը, առաջադրել է՝ իր բոցերի մեջ մոխրացել մի ողջ անցյալ, մի աշխարհ:

* * *

Ո՞վ սկսեց պատերազմը, որի՞ն է պատասխանատուությունը,- անտեղի հարցումներ:

Մեղավորը նա է, ով ձգտում էր տևականացնել գոյություն ունեցող status quo-ն, որում միևնույն երկրագնդի վրա, կողք կողքի ապրում են երկու տարբեր աշխարհներ - մեկը վայելքի, մյուսը՝ աննախընթաց զրկանքների. մեկը՝ տեր իր ճակատագրին, ժպտում է գոյության, մյուսը՝ գերի կամ կիսագերի, անիծում իր օրը. մեկի մականի տակ անսահման գաղթավայրեր՝ իբրև միջոց, ելք իր մարդկային դինամիզմի համար, մյուսը՝ դատապարտված խեղդվելու իր երկրի նեղ սահմաններում, որով և՝ ենթակա հաճախակի դասակարգային ցնցումների:

Զրկանքների կիսաշխարհում տառապող ու ցեղորեն վատասերվող ազգերին իբրև ելից հնար թողնված են՝ արտաքին թշնամիների համար այնքան ցանկալի՝ ներքին իրարակերությունը, ու պատերազմը, որ արդյունք է ազգերի դինամիզմի օրենքների: Ցեղորեն առողջ ամեն ժողովուրդ ելք է փնտրում իր ներսը ծովացած դինամիկ ուժերի համար:

Երջանիկ են ընդարձակ գաղթավայրերի տեր ազգերը, օրինակ՝ անգլոսաքսոնները, որոնք իրենց գաղութների շնորհիվ, մնում են զերծ ներքին հրաբխային լարվածությունից և պոռթկումներից: Կեղծիքի ծնունդից «խաղաղասեր» և «ռազմասեր» բառերը: Ամեն ժողովուրդ, որ գոհ է օրվա գոյավիճակից՝ դեմ է պատերազմին, և, ծպտումի օրենքով, իրեն անվանում է խաղաղասեր, իր թշնամիների՝ խաղաղության խռովիչ:

Սնամեջ հասկացողություն է նա՝ և *դեմոկրատիան*, որի մասին և որի անունից այնքան խոսում է պատերազմող կողմերից մեկը:

Պատերազմի՛ր, որ ճանաչես թերությունները՝ ասում է լատինական մի առած: Դեմոկրատիա էր Ֆրանսիան, որի քաղաքական մեծ որդիներից մեկը դեռ ողբում է՝ «այժմ Ֆրանսիան թաղված է իր դեմոկրատական վարչաձևի փլատակների տակ» (Մարկե):

Ֆրանսիայում՝ իր դժբախտությունից առաջ, սխալ հասկացված դեմոկրատիայի շնորհիվ, ազատասիրությունը վերածված էր անիշխանական ազատամոլության - էլեֆտերոմանիայի:

Ստրկությունից նվազ զզվելի և վտանգավոր չէ նման ազատությունը, որում ամեն քաղաքացի իր երկրի հանրաազգային կյանքին խառնում է իր ընչաքաղց եսականությունը, իր բարոյական թերիները,

տկարությունը: Իբրև *միջակության ու նախանձի վարչաձև դեմոկրատիան* դարձավ այն, ինչ որ են իր պաշտոնյաները: Մասնավորապես հետպատերազմյան տարիներում չմնաց դեմոկրատիկ մի երկիր, որի կյանքում երևան չգար մի Ստավիցկի[64]: Ձեղծարարությունն - ահա դեմոկրատիային հատուկ արատը: Իբրև զանգված դա ավելի շուտ է ամբոխանում, ավելի հեշտորեն ենթարկվում խուժանավարության, դևին մամուլին և խուճապի: դա կազմալուծեց գաղիական ազգը նախապատրաստելով նրա նորագույն աղետը:

Էթիկական դեմոկրատիան մարդկային արարածի անկատարելության պատճառով, կմնա երազ, ինչպես երազ մնաց ճշմարիտ քրիստոնեությունը: Իսկ թվաբանական դեմոկրատիայի ղեկավարները թղթի վրա, տեսականորեն, ենթարկվելով հանրության կամքին գործնականում - պառակտելով և աղավաղելով ազգի ոգին - նրան ծառայեցնում են իրենց անձնական և խմբակցական շահերին: Մարդկային բանականության ու բարոյականի կողմից ժխտված այդ անիշխանացուցիչ ու ապականարար վարչաձևի, ինչպես և իր հոգևոր ծնող լիբերալիզմի գերեզմանը փորել էր եվրոպական պատերազմը, իսկ թաղումը այսօր, երկու տասնամյակ հետո, կատարում է նոր պատերազմը:

Բ

Որոշ ժողովուրդներ տգիտախառն միամտություն կեղծելով շարունակում են անգիտանալ հետևյալ ընկերաբանական ճշմարտությունը՝

-Իշխանության այս կամ այն ձևը արդյունք է ժողովրդի տվյալ վիճակի, նրա կարիքների: Դա նշանակում է, որ հասարակության տարբեր վիճակները պահանջում են տարբեր քաղաքական կառույցներ, որ կյանքը չի կարող հավիտենապես հանդուրժել միևնույն քաղաքական վարչաձևը: *Կյանքի պայմանների փոփոխմամբ - ինչպես և քաղաքական զարգացման աստիճանով - փոփոխության է ենթարկվում նաև պետական սիստեմը:*

Այդ ճշմարտությունը, ինչպես և մեր օրյա ազգամիջյան անցքերի իմաստը ըմբռնելու համար, անհրաժեշտ է ծանոթ լինել ժողովուրդների հոգեբանական առանձնահատկություններին: Վերջինների ցեղային նկարագրերի ուսումնասիրությամբ զբաղվող գիտությունները ժողովուրդներին բաժանում են երեք կատեգորիայի - *իմացական, կամային և ոչտիպիկ*, այսինքն այնպիսիներ, որոնց մոտ իմացականությունն ու կամքը հավասարակոչվում են իրար:

Գոյություն ունեն նաև *հոգեպես դեռ անկերպարան* ժողովուրդներ: Որքան ցեղեր, այնքան տարբեր նկարագրեր, որոնց վրա ժողովուրդները կաղապարում են իրենց հաստատությունները: Օրինակ՝

անգլիացին մնում է հավատարիմ իր ազգային էությանը, երբ ասում է՝ «Անգլիայի համար գոյություն չունեն հավիտենական բարեկամն ու թշնամին. նրա համար հավիտենական է իր շահը միայն»: Գերազանցորեն օգտապաշտական է այդ ժողովրդի հոգին: Դա չի սիրում խաչ, կարեկցանք դնել իր քաղաքականության մեջ: Գիտություն, ճշմարտություն, սկզբունք - սրանք միայն այն չափով արժեք ունեն, ինչ չափով որ ծառայում են իր կյանքի բարելավման (Բեկոն, Միլ և այլն): Այլ նկարագրի տեր է ֆրանսիացին: Իսկ Գերմանացի՞ն - դա անգլիացուց տարբերվում է ճիշտ այնպես, ինչպես անգլիացի Մարլոուի Ֆաուստը տարբերվում է Գյոթեի Ֆաուստից: Երկուսի Ֆաուստներն էլ կախարդ են, որոնցից մեկը, սակայն, ձգտում է գիտության միջոցով իշխանություն ձեռք բերել բնության և մարդկանց վրա՝ անձնական շահի համար, իսկ մյուսը - գերմանականը - հանդիսանում է զուտ գիտության խանդավառ սպասարկուն՝ գիտության համար:*

Այսպես, ժողովուրդները ոչ միայն քաղաքական և տնտեսական մրցորդներ են, այլև՝ հոգեբանական հակոտնյաներ: Սրանով պիտի բացատրել պատերազմող թե չեզոք մնացած ժողովուրդների ներքին կարգն ու սարքը: Տարբեր նկարագրերի արդյունք է նաև նրանց օրվա կեցվածքը: Ահա՛ թե ինչո՞ւ պատերազմող կողմերից մեկի ճիգը՝ իր վարչաձևը - դեմոկրատական - ուրիշներին պարտադրելու փորձը պիտի համարել հավասարապես հակագիտական և հակամարդկային: Ո՞ր, ո՞ր դեմոկրատիան, քսան տարի առաջ, մատը մատին զարկեց փրկելու, Հունաստանը, երբ սրա զորքերը դեմոկրատիայի թշնամի քեմալականների կողմից ծովն էին թափում: Հապա հայկական դեմոկրատիան - ո՞ր դեմոկրատիկ պետությունը գեթ քրիստոնեական կարեկցանքի մի շարժուձև կատարեց, երբ թուրքերը 1920-ին հրով և սրով մեր հայրենիքը մտան:

Դեմոկրատիա՞ է օրվա Թուրքիան, որի փեշերը լիզելու աստիճան նվաստացավ ֆրանսիական դիվանագիտությունը և որի կողքին իբրև զինակից ծառայել է աշխարհակալ Անգլիան: Չէ՛, չէ՛, մարդկության մի մասի համար այլևս դժոխքի վերածված, հին աշխարհի պաշտպանության ի խնդիր իրենց սուրը մերկացրած ազգերը ամենուրեք զինակից են փնտրում և ոչ թե դեմոկրատիա:

Պատերազմը պայթեց ոչ թե վարչաձևերի տարբերության - որ այնքան բնական է ու հասկանալի - այլ այն պարզ պատճառով, որ «դեմոկրատիա»ներից մեկը իր մեծությունը, բարորությունն ու ապահովությունը մարդկության մի մասի թշվառության վրա կառուցած, դեռ

* Պրոֆ. Ա.Ռեյմերս (ծանոթ. հեղինակի):

շարունակում է քաղաքա-տնտեսապես չարաշահել նրա տկարությունը:

Այդ տեսակետով՝ *օրվա պատերազմը պատահական բան չի եվրոպական մարդկության զարգացման պրոցեսում, այլ՝ հենց այդ պրոցեսի տրամաբանական արդյունքը:*

Գերմանական օրվա բանակի հոգևոր առաջնորդները հանդիսանում են Հեգելն ու Ֆիխտեն - Ոգու և հավիտենականի փիլիսոփա-քարոզիչները:

Զորահրամանատար և զինվոր - սրանց վրա փողփողվում են դրոշակները մի *նոր աշխարհի:*

Հերոսական ռազմախանդով լեցուն է սրանք զինվորներն են *մի նոր ճակատագրի, մի մեծ հեղափոխության, որ Նազովրեցուց հետո առաջին անգամ է տեղի ունենում մեր երկրագնդի վրա:*

Այս բանակին է տրված մի ամբողջ Դարաշրջանի հետ կապված խնդիրների լուծումը - մի դարաշրջան, որի մայրամուտին պիտի հետևի արշալույսը մի ավելի մարդկային, ավելի արդար աշխարհի:

Գ

Պատերազմող կողմերի հետապնդած նպատակներն են բնորոշում նրանց հաղթանակի վեհությունն ու արժեքը:

Չհարցնենք, թե ո՞վ կհաղթի այս պատերազմում, այլ՝ թե ո՞վ կշահի ճշմարիտ հաղթանակի դափնին:

Անցյալ պատերազմում «հաղթանակ» կար, բայց ո՛չ ճշմարիտ հաղթանակներ: Քարյուղը - ահա՛ թե ի՞նչը հռչակվեց իբրև մեծագույն հերոս: Այդ հաղթանակն արդյունք էր մեռյալ թվի, թվական գերազանցության, չափվողներից մեկի՝ հացի, մյուսի՝ քաղցի ո՛չ հետապնդվող նպատակների վեհության ու սրբության: Դա - այդ բարոյազուրկ հաղթանակը եկավ փոխելու միայն աշխարհի քարտեզը, նրա գույներն ու գծերը, և ոչ ավելին:

Ճշմարիտ հաղթանակ չէ թշնամուն նյութապես զինաթափելը, նրան՝ որոշ ժամանակի համար, վերստին զենքի դիմելու հնարավորությունից զրկելը: Մեր օրերում, երբ այլևս պատերազմները կրում են համաշխարհային բնույթ, այս կամ այն պատերազմող կողմի հաղթանակը պիտի համարել ճշմարիտ, երբ դա արդար է, երբ ծառայում է երկարատև խաղաղության, երբ զինաթափելով պատերազմող անարդար կողմը՝ նպաստում է դրա մարդկայնացման, երբ նվազեցնում է մարդկային տառապանքի պատճառները, սատարելով միջազգային բռնության, չարության, եսականության բարձումին, և այսպիսով ժողովուրդների համար անկաշկանդ զարգանալու և ստեղծագործելու կարելիություն ստեղծում:

Ի մի բան՝ *ճշմարիտ է հաղթանակը, երբ դա շահեցնում է ոչ միայն հաղթանակի հայրենիքը, այլև անհրավված բոլոր հայրենիքները:* Եթե անցյալ պատերազմում հաղթանակեր գերմանական ազգը՝ նրա զենքի հաջողությունը պիտի չհամարվեր ճշմարիտ հաղթանակ, որովհետև նա, իր հետ, իբրև զինակից ու նպատակակից, ուներ թուրքին:

Պատերազմող կողմերի հետապնդած նպատակներով է բնորոշվում նրանց հաղթանակի բարոյական մեծությունն ու արժեքը: Չի՛ կարելի Նոր Եվրոպայի՝ նոր մարդու և մարդկայնության մասին խոսել, և թուրքի զինակցությունը փնտրել: Ավելին, վաղվա աշխարհի շահը պահանջում է - թրքությանը դնել մի այնպիսի դրության մեջ, որ դա, անկարող լինի նորանոր չարիքներ նյութել իր արիացեղ հարևանների դեմ,- որ դադարի օգտվել եվրոպական պետության ներքին հակամարտություններից՝ իր ձեռքում պահելով, իրեն միջազգային կշիռ ընծայող, նեղուցներն ու Պոլիսը:

Ահա՛, թե ինչո՞ւ, մարդկորեն մոտենալով «*ո՞վ կշահի ճշմարիտ հաղթանակի պսակը*» խնդրին, պատասխանում եմ - նա՛, ով մեռնող հին Եվրոպային կապված գորդյան հանգույցների հետ՝ կլուծի նա՛և Պոլսի պրոբլեմը, ով այս պատերազմում գլուխ կհանի այդ երբեմնի Բյուզանդիայի *ապաթրքացումը:*

* * *

Մեր երկրագնդի վրա չկա աշխարհագրական մի այլ կետ, որի հետ կապված լինեին՝ մարդկային անվան ամոթ բերող այնքա՞ն չարիքներ, չարագործություններ, որքան՝ Պոլսի: Ազգերից ամենախառնարյունը և բռնակալություններից ամենաանասնականը - թուրքը: Եվ հենց *«Պոլիսն ու Պոլսի թրքությունն է եղել այդ դեկավարն ու ճարտարապետը Օսմանյան պետության»* (Պրոֆ. Մ. Մինասյան):

«Թրքություն»ը, ըստ Շըվիլի՝ *Արևելքի մեջ տիրող դերը կատարած ժամանակ այնչափ խառնարյուն մի խումբ էր դարձել որի նմանը հանդես չի եկել աշխարհի մեջ որևէ տեղ»*:

«Բյուզանդիան տեղի տվեց ոչ թե սարակինացների կամ թուրքերի առջև, այլ հույն և սլավոնական արյունի ռազմիկների առջև» (Պրոֆ. Շըվիլ):

«Հույներ, թուրքեր, սերբեր, բուլղարներ, ալբանացիներ, հայեր, վալախներ, հունգարացիներ, գերմանացիներ, իտալացիներ, ռուսներ, թաթարներ, մոնղոլներ, չերքեզներ, վրացիներ, պարսիկներ, սիրիացիներ, արաբներ – սրանք էին նախնիները օսմանցիների» (Գիբբոնս):

Ըստ Լորդ Իվրսլիի՝ օսմանյան աշխարհակալությունը հանդիսանում էր Փոքր-Ասիայի ոչ-թուրք ժողովուրդներից հավաքվող զինվորությունը - *«Հարազատ օսմանցի թուրքը չէր, որ հաղթանակից հաղթանակ տարավ Սուլթանների բանակներն ու նավատորմիղը, ոչ էլ*

ինքն էր, որ վարեց ու պահեց այն դարեր ամբողջ, այլ հպատակ, ոչ-թուրք ժողովրդի զավակները, և երբեմն Բյուզանդական Կայսրության ծառայող հայ ազնվականությունն ու զինվորականությունը»:

«Գրեթե միշտ քրիստոնյա դաշնակիցների ուժով ու հարստությամբ էր որ թուրքը նվաճեց քրիստոնյաներին» (Պրոֆ. Ռամսեյ):

«Նախկին քրիստոնյա տղաներից կգային ոչ միայն զինվորությունը ամբողջ բանակի - ենիչերիներ և Բ. Դրան զինվորներ, այլ այս տղաների չարքերից կգային մարդիկ, որ սուլթանը կարգում էր իր թագավորության բոլոր վարչական կարևոր պաշտոնների մեջ, սկսելով վեզիրից: Բացի սուլթանից հազիվ թե մեկ հատ իսլամածին մարդ գտնվեր այն դասակարգերի մեջ, որոնց վստահվում էին կառավարության գործերը Սուլթան Սյուլեյմանի ժամանակ: Նախկին քրիստոնիաներն էին, որ շարժում էին սուրն ու մականը միանգամայն» (Պրոֆ. Շըվիլ):

Քրիստոնեածին տղաների հարկահավաքության այդ անմարդկային արարքն է մղել Ֆրիմընին գրելու հետևյալը՝

«Սատանայի կամ մարդուս խորամանկությունը երբևէ չի կարողացել հնարել այնպիսի սոսկավիթխար մեքենա բռնակալության»:

Այո՛, այդ սոսկավիթխար չարագործության շնորհիվ միայն Պոլիսին հաջողվեց այնքա՜ն ցեղերի բազամադարյան ստրկություն ու տառապանք պարտադրել: Հարկահավաքության այդ դիվային ձևի միջոցով, նա - իբրև վայրագ, որով և՝ երկչոտ ու ավերիչ - անճիտեց ամբողջ ցեղեր, գլխատեց ժողովուրդներ, մոխրացրեց հազարամյա մշակույթներ, իր չարաշուք մականի տակ ապրող քրիստոնեությունը դարերով զրկեց իր «*հուժկու և ամենից գեղեցիկ զավակներից, ամենից կորովի մարմնակազմ ու ամենից սուր իմացական կարողություն ունեցողներից, այնպիսիներ՝ զորո բնությունը նախասահմանել էր առաջնորդներից և ազատամարտ հերոսները լինելու իրենց ցեղի*»: Վատասերված՝ նա ծնեց ոճրագործներ, մարդատիպ հրեշներ ու ապուշներ, իբրև գահակալներ, իր անասնական կրքերի - անգամ շնության վրա, դրեց ալլահի հաստատության կնիքը: Պղծեց ոչ միայն իր կոխած երկիրների երեսը, այլև երկինքը, ուր փոխադրեց իր պոռնկաշունչ արքայությունը: Եղավ ու մնաց սադիստ, հասցնելով մասնավորապես մեզ, հայերիս «հազար տեսակի զենքի խոց»: Քառորդ դար առաջ, դա հղացավ ծրագրերից ամենադիվայինը - բնաջնջել մի հինավուրց ազգ, որ դարերով ու դարերով բարիք ու լույս էր սփռել իր շուրջը: Հղացավ ու գործադրեց: Եվ արմենների երեք հազարամյա հայրենիք Հայաստանը դարձավ մեռելաստան՝ իր մեկ ու կես միլիոն զավակների համար:

* * *

Եվրոպական երեք մեծ ազգերի ընտրանին վաղուց է դատել թուրքը, դատել բարոյապես:

Գերմանական մեծագույն փիլիսոփան՝ Կանտը այսպես է ներկայացրել թուրքին՝ *«մի ժողովուրդի համար հայտնորոշ մի նկարագիր յուրացնելու տեսակետից՝ Եվրոպական Թուրքիա կոչվածը երբեք չեղավ, և ոչ էլ պիտի լինի:*

Ավելի խիստ է ֆրանս. ծանոթ պատմագետ Ժորժ Մորգանի դատաստանը *«որքան ծանրապես կսխալվեն նրանք որ, հակառակ ամեն բանի, տակավին ասում են, թե թուրք ժողովուրդը ուղղելի է, թե պետք չէ ջնջել իր անունը քարտեզի վրայից»:*

Արդարագույնը, սակայն, կմնա անգլիացի Բրայսի դատաստանը՝ *«Թուրքիան պետք է դադարի առհավետ կառավարել ուրիշ կրոնի պատկանող ժողովուրդներին: Թուրք կառավարությունը դարերից ի վեր մարդկությունը տառապեցնողներից ամենից զարհուրելին է եղել : Թուրքերը միշտ եղել են, ինչ որ նախորդ սերունդին պատկանող նշանավոր մի պատմաբան նրանք անվանել է՝ գողերի մի խմբակ »:*

Ահա՛ թե որոնցի՞ց պիտի ազատել մարդկության տառապող ցեղերից շատերը: Ահա՛ թե ինչո՞վ եվրոպական մի որևէ պետություն կարող է արդար համարել պատերազմի իր նպատակը և հեղափոխիչ՝ իր հաղթանակը: Պոլսի ապաթրքացումը պիտի համարել մեծագույն հեղափոխություն:

Վաղուց է, ինչ մարդկային ցեղի պատմությունը ճշմարիտ հաղթականներ չի ունեցել: Ճշմարիտ հաղթանակի դափնին վայել է նրան, ո՛վ այս պատերազմում գործում է Արդարության ու Մարդկայնության հրամանով:

Արդար է, որ չարաչար պարտվի պատերազմող այն կողմը, որ հաշիվ ունի՝ դեռ ապրեցնել թրքություն կոչված կենդանի չարիքը:

Նույնքան արդար է, որ հաղթանակի նա, ո՛վ ուխտ ունի՝ Եվրոպայից ու Պոլսից, անդարձ կերպով, ճամբու դնելու թուրքին:

Չպատժվե՞ց թուրքն այս պատերազմում - այդ պատերազմն էլ պիտի համարել չարիք:

Չի՛ կարելի նոր, ավելի մարդկային աշխարհի մասին զառանցել մեր երկրագնդի ամենաբախտորոշ մեկ կետի վրա պահելով թուրքին, իբրև եվրոպական պետության փոխհարաբերություններն անբարոյացնող, հաճախակի ազգամիջյան արյունահեղություններ պատճառող, և վերջապես՝ հավետ զինակցություն կեղծող-երեկվա իր թշնամուն այսօր բարեկամություն ցույց տվող, և օրվա իր զինակցին վաղը մահացիորեն թշնամացնող ուժ:

«Ռազմիկ», 1941, թիվ 13-15:

ԵՎ ՁՈՀ, ԵՎ ՁՈՀԱՐԱՐ

Թուրքը, համաշխարհային պատերազմի օրերին, իր տկարության սարսափից խթանված՝ հղացավ ծրագրերից ամենադիվայինը - բնաջնջել մի հինավուրց ցեղ, որը դարերով լույս և քրտինք էր սփռել իր շուրջը:

Հղացավ ու գործադրեց:

Եվ մի օր, թրքահայության ողջակիզումի առաջին օրը, ծագող արևը Հայաստան երկրի փոխարեն տեսավ մի կատարյալ գեհեն:

Տեսավ խաչի նսեմ ստվերն ընկած մեր հազարամյա հայրենիքի վրա: Տեսավ թե ինչպես մի խավարասեր ազգ - վախկոտ, բայց հարձակողական փոքրոգի և ավերիչ – կիսոսեր մի անզեն ու անպաշտպան ժողովրդի դեմ՝ այն իր պատմական հայրենիքից արմատախլելու խելագարությամբ: Տեսավ թե ինչպես կմոխրանային հազարամյա օրհնությամբ լեցուն գյուղերը մեր, կպղծվեին եկեղեցիները, վանքերը, գրադարանները հազա՛ր: Տեսավ խուժդուժ գործը տապարի, յաթաղանի կապարի - ամեն տեսակի և չափի գործիքների, որոնցով սպանել ու ավերել կարելի է: Այլևս Հայաստանով անցնող գետերը արյուն էին կտրել, իսկ կիրճերը դիակնաստանը: Տեսավ թե ինչպես իրենց ամուսինների և ծնողների ներկայությամբ խլվում էին ու բռնաբարվում էին կանայք:

Գործի վրա տեսավ թուրքական սանձարձակ շնությունը, որ անասուններին իսկ կգերազանցի: Տեսավ սարսափից խելագար մեր աղջիկները, որոնք Եփրատի ալիքները կգրկեին: Տեսավ թե ինչպես հայրը հավաքեց ընտանիքն իր հարկի տակ և այրեց ողջ. թե ինչպես սովահար հայ մանուկներն իրենց մորթված մայրերի դիակներին կպած՝ ծիծ կծծեին:

Արևը տեսավ տուն, տանիք, ճամբաներ՝ արյունով ներկված: Տեսավ բարձունքների վրա, գետափներին և ձորերի մեջ մահվան հետ կռվի մտած արնաթաթախ հայորդիներ: Տեսավ թե ինչպես «շներն ու շնագայլերը մեր սիրելիների սրտերը կկրծեին»: Տեսավ իրենց գողգոթայի ճամբին, անասունների պես, վաճառքի հանված հայ կանայք ու մանուկներ, և լուսավորեց խաչի ճամբան ծերերի, կաղերի, կույրերի: Տեսա՛վ, հայոց արևը տեսավ այդ ամենը, և խավարեց այդ օրը:

Մի օր էլ, երբ ամեն ինչ տխրորեն կատարյալ էր, բնությունը նստեց սգալու Հայոց Աշխարհի մոխրակույտերի վրա...

Եվ թուրքը, եղեռնից հետո, սովորական շնականությամբ ասաց եվրոպացուն՝ «ջարդից վերջը աղոթք արեցի և արդարացա»:*

* Մի թուրք հարյուրապետի խոսքերը Ֆոն Գորդոնին (ծանոթ. հեղինակի):

Իսկ դիվանագիտական խարդավանքների վարպետ Մոսկվան, հանձին Ռադեկի, եկավ արդարացնելու Թուրքիայի հայաջինջ քաղաքականությունը՝ «Իթթիհատը իր երկրին անկախությունը պահելու համար արեց ինչ-որ կարող էր: Նա վճռեց ոչնչացնել ամբողջ հայ ժողովրդին: Եվ կասկածից դուրս է, որ Պոլսի մեջ նստած Իթթիհատական ղեկավարները այս հարցի մեջ շարժեցին *պետական անհրաժեշտության* գաղափարով: Թուրքերի համար խնդիրը շատ սուր էր դրված - ապրել կամ մեռնել: Նրանք նախընտրեցին ապրել:* *

Այսպե՛ս խոսեց կարմիր հրեշը՝ սեղմելով Թուրքիայի արնոտ թաթը:

Քրիստոնիա աշխարհն էլ լրբություն ունեցավ, որպես կարեկցանքի արտահայտություն, մեզ նետելու մի երկբառ նախադասություն՝ «մարտիրոս ժողովուրդ»:

Իսկ հա՞յը - նա տեսավ ու զգաց հայաքանդ եղեռնի ահավորությունը միայն:

Մարդկության հետ, սակայն, նա էլ դեռ չի չափել *վեհությունը* այն աստվածային շարժուձևի, *մեծությունը* մարդկային ցեղի պատմության մեջ նախընթաց չունեցող այն գերմարդկային արարքի, որով *մեր ժողովուրդն իր կեսը ողջակիզեց՝ ցեղի հոգին, արյունը փրկելու համար:*

Պատմության ծանոթ որոշ ժողովուրդներին հատուկ տկարությամբ - ցեղուրացությամբ - հայն էլ կարող էր փրկել իր ֆիզիկականը, բայց բյուրիցս փա՜ռք իրեն, նա չունեցավ այդ տկարությունը:

Գիտակցորեն, շատ տեղերում, թեկուզ կրավորական հերոսացումով, նա զոհեց կեսն իր մարմնից՝ *իր ցեղային էության դեմ չմեղանչելու համար:*

Նա դարձավ իր սեփական Ձոհը և Ձոհարարը միաժամանակ:

Եվ փրկվեց ցեղը:

* * *

Սպասելի էր, որ այդ օրից ողջ հայությունը փարվի ցեղին, թիկունք դարձնելով՝ ժողովուրդներին հոգևորապես բոլշևիկացնող ստադեմոկրատիզմին, լիբերալիզմին, սոցիալիզմին և գաղափարախոսական այլ կարգի հնոտի և սնոտի մոլորանքներին:

Հենց այդ օրից հայության որոշ տարրերը ցեղն ընդունեցին իբրև միակ ապավեն և սրբություն - դարձան ցեղակրոն:

Հայության որոշ մասը, սակայն - հակառակ որ թուրքը մեզ հարվածեց իբրև ցեղի, հայությունը իրեն վիճակված անօրինակ

** Բոլշևիկյան «Նոր Աշխարհ» թերթը. թիվ 3, հոկտեմբեր 1922, Թիֆլիս (ծանոթ. հեղինակի):

եղեռնի և տառապանքի մեջ առաքինացավ իբրև ցեղ - մեր ժողովրդի որոշ մասը շարունակում է մնալ անցեղահաղորդ՝ գերին «եվրոպական» կապկության:

Այդ որքան տխուր, այնքան ամոթալի իրողությունը պիտի բացատրել այն բանով, որ այդ տարրը *իբրև հայ* չապրեց իր հայրենիքին և ազգին վիճակված անմարդկային ողբերգությունը, և մնաց իբրև ազգային մեր տկարությունը սնուցող չարիք:

Ապրիլյան եղեռնից հետո *հայորեն խորթ և պակասավոր պիտի համարել անցեղակրոն հայը:*

Օրվա մեր ամոթանքը և թուրքի շահը պիտի համարել հենց այդ հայորեն պակասավոր, այդ անցեղակրոն տարրերի գայությունը:

«Ռազմիկ», 1941, թիվ 17:

ՀԱՅԻ ԳԱՄԲԱՆ
ՄԵԾ ԶՂՋՈՒՄԻ ԳԱՄԲԱՆ

Ա

Կանգնեք, հսկումի՛ կանգնեք քարտեզի առջև, մտովի գծեք Հայաստան անունը կրող երկրի սահմանները, և դուք Հայոց պատմության ամեն մի էջի, տողի, բառի տակ, ինձ հետ պիտի կարդաք հետևյալ ճշմարտությունը - *այդ ազգի կենսունակության գաղտնիքը նրանում է, որ նա շնչել է ցեղի միջոցով, որ իր գոյության բոլոր դարերում - ազատ, թե նվաճված, հաղթական, թե իբրև վսեմ պարտյալ՝ ապրել է, պայքարել, ստեղծագործել ցեղորեն, խորապես ցեղորեն:*

Այո՛, նայեք քարտեզին, և պիտի համոզվեք, որ հայությունը կարողացել է քայլել ժամանակների հետ իբրև ցեղ, և ոչ իբրև ցեղային բովանդակությունից դատարկված ժողովուրդ:

Շատե՛րը, իր հասակակիցներից շատերն այսօր չկան - նրանք վաղուց են չքացել մեր երկրագնդից:

Իսկ Հա՞յը, որ ըստ որոշ պատմաբանների վաղուց անտի մեռած պիտի լիներ, անգիտանալով պատմության երկաթե օրենքները՝ դեռ կա ու կմնա:

Գիտենք, որ *մշտատև վտանգն է օրորել հայության մանկությունը: Իսկ վտանգի ենթակա ամեն ժողովուրդ ապավինում է իր ցեղային արթուն բնազդին, իր ներցեղային բարոյականին:*

Գիտենք և այն, որ ուրիշ և ոչ մի երկիր այնքան արտաքին թշնամանք ու ախորժակներ չի գրգռել, որքան Հայաստանը:

Պատճա՞ռը - Դա համարվել է ոչ միայն բարեբեր ու հարուստ երկիր, այլև՝ իբրև գերազանց կարևորություն ներկայացնող ռազմագիտական մի կետ, իբրև երկու աշխարհամասեր իրար միացնող մի կամուրջ:

* * *

Մարդկային անհատների պես՝ ժողովուրդներն էլ ունեն իրենց բարոյականը: Կենսաբանորեն բարոյական է նա որի կյանքում ցեղի կամքը կատարում է գերագույն ֆակտորի դեր, այն, ով իր ստեղծած հոգևոր և նյութական արժեքները - մասնավորապես առաջինները՝ կրոն, իմաստասիրություն, արվեստներ՝ հարմարաբար ծառայեցնում է իր ցեղի հավերժացման, իր երկրի ինքնապաշտպանության գործին: Ցեղորեն խաթարված է այն ժողովուրդը, որ ասում է՝ *աշխարհն է իմ հայրենիքը:*

Աշխարհ ասելով՝ ցեղորեն առողջ ժողովուրդները հասկանում են նախ իրենց կոսմիկական օրորանը, իրենց հայրենի երկիրը:

Նմաններից է հայը՝ որը ոչ միայն իր ամբողջական երկիրը, այլև իր եկրամասերն անվանել է աշխարհ, օրինակ՝ Այրարատյան Աշխարհ, Տարոն Աշխարհ, Սյունյաց Աշխարհ, և այլն: Այդ ըմբռնումի արդյունքն է իր մշտաթարմ աշխարհազգացողությունը:

Ճշմարիտ է պատմության միայն ցեղային (մարդաբանական) փիլիսոփայությունը: *Ցեղը - կոսմիկական սկզբունք է - դա նշանակում է, որ ժողովուրդների պատմության սաղմերը պիտի փնտրել իրենց արյան և երկրի բնության մեջ:*

Ցեղը արյուն է, որի ձայնը լռեցնել կարելի է, բայց ոչ և մեռցնել:

Ցեղը ճակատագիր է: Նրանցից չի կարելի խուսափել: Կարող ենք Եվրոպայի գիտական փառքը հանդիսացող Անշտայնը լինել, բայց և այնպես էութամբ կմնաս հրեա: Կարող ես Սարոյանի պես ամերիկյան գրող լինել, բայց չես խուսափի հարազատ ցեղիցդ:

Մեր արյան մեջ դրված է մեր ցեղի գաղափարը - հայկակա՛նը, բնազանցությունը, նպատակաբանությունը, ինչպես և այդ վերջինների իրականացման համար անհրաժեշտ զորութենականությունը, կարողական ուժերը:

Ամեն ցեղ մեր երկրագնդի վրա կոչված է իրականացնելու մի որոշ առաքելություն: Հայը պիտի չկարողանար իրականացնել Գաղղիական ազգին տրված պատմական առաջադրությունը, անգամ այն դեպքում, եթե ողջ հայությանը արտոնվեր ապրել Փարիզում:

Ժողովուրդն ընդօրինակող է, ցեղը՝ ստեղծագործ ինքնատիպություն: Իբրև անկրկնելի անհատականությո՛ն՝ դա թույլ չի տալիս ժողովրդին դիմազրկվելու և կորչելու «մարդկության» մեջ: Իբրև բնակենսաբանական գործոն՝ *ցեղը ներգործում է ազգության վրա սնուցելով նրա արմատները: Ժողովուրդը հոգևոր ցրվածություն է, ազգը՝ ոգի, որի ամենակատարյալ արտահայտությունը հանդիսանում է հանճարը. սուրբը, հերոսը - ընտրանին ցեղը՝ կենտրոնացուցիչ ուժ է:*

Առաջինին հատուկ է եսականությունը, երկրորդին՝ այլասիրությունը, երրորդին՝ նաև՝ մերձավորի համար գիտակցորեն մեռնելու ուրախությունը:

* * *

Ազգության գաղափարի թշնամին է ոչ միայն մեծամասնականը, այլև ընկերավարականը, դեմոկրատը, լիբերալը: Ընկերավարությունը ենթադրում է հակամարդ դասակարգեր, որ ասել է՝ պառակտված ժողովուրդ: Ամեն ժողովուրդ, որ վերածվում է դասակարգերի, դեմոկրատիայի, հարանվանության՝ մահացիորեն մեղանչում է իր ազգային ոգու դեմ, քանդում է այդ ոգին: Նա՛ն՝ *ամեն պետություն, որ հանում վերացական միջազգայնության հալածանք է սկսում ազգային գաղափարի դեմ՝ կորցնում է իր հոգևոր ստեղծագործության խանդը:* Օրինակ սովետական երկրներում կա մեռյալ շինարարություն, բայց ոչ և ստեղծագործություն. այնտեղ խոսք լինել կարող է նյութական որոշ բարիքների, բայց երբեք՝ հավիտենական արժեքների մասին: Այսօր այնտեղ գոյություն ունի աղ-քատիկ քաղաքակրթություն, բայց ո՛չ և մշակույթ:

Ահա թե ինչո՞ւ հավասարապես արդար և անհրաժեշտ է որ ժողովուրդը գիտակցորեն և միստիկաբար ենթարկվի ցեղին, եթե չի ուզում դատապարտվել հոգևոր ամլության ու կորչել:

Բ

Հայաստանի ու հայության բոլոր թշնամիները, բոլոր դարերում, իրենց մահացու հարվածը միշտ էլ հասցրել են մեր ցեղը մշտնջենավորող ընտրանիին:

Հազար տարի առաջ և հազար տարի հետո մեր թշնամիները - արաբ, թուրք, բոլշևիզմ - փորձեցին սպանել ցեղը հայության մեջ՝ ոչնչացնելով մեր ազգի ցեղազգաց տարրերը:

Չմոռանա՛նք, չմոռանա՛նք, չմոռանա՛նք այդ իրողությունը, որպեսզի այսուհետև ավելի ջերմ պաշտամունքով փարվենք մեր ցեղին, իբրև մեր միակ ապավենին, իբրև մեր երկրորդ աստվածության:

* * *

Ժողովուրդների համար - որոնք իրենց պատմության մեջ հայտնաբերում են այն, ինչ որ զորութենապես դրված է իրենց արյան մեջ - ժողովուրդների համար խորապես ցեղորեն ապրելը (ներցեղային բարոյականով առաջնորդվելը) դառնում է անհրաժեշտություն հետևյալ պատճառներով:

ա) Երբ իրենց վիճակվում է ապրել աննպաստ աշխարհագրական միջավայրում.

բ) Երբ կորցնելով իրենց պետական անկախությունը՝ նրանք կորցնում են բնականոն գոյության կարելիությունը.

գ) Երբ իրենց վտանգ կսպառնան թվով ու քաղաքականապես ավելի հզոր, ցեղորեն ու կրոնապես օտար հարևանները, և այլն:

Այդ իսկ պատճառներով ահա՛ հայությունը իր պատմության ողջ ընթացքում, հանդես է եկել իբրև *ցեղավար ժողովուրդ:*

Այսպիսի՛ն էինք, թեկուզ մեր անկախությունը կորցրած, բայց ցեղորեն արթուն, ռազմունակ և ստեղծագործ:

Այսպիսին էինք- ցեղավայել կեցվածքով Ավարայրից առաջ, և Ավարայրից հետո՝ մեր վարած բոլոր պատերազմներում:

Ցեղամարդ էր հայը՝ հավիտենականի ու կատարելության, ընկերային արդարության ու հերոսականի, միության և ուղղության զգացումներով զորավար:

Առհավական՝ իր աշխարհիկ գուսաներգության և կրոնական շարականների, իր մատենագրության և արվեստների մեջ:

Մի և անբաժան էինք մտածողությամբ, կամքով, բազուկով, որովհետև *ցեղը կենտրոնացուցիչ ուժ է:*

Ա՛յս էինք մինչև անցյալ դարի 90-ական թվականները, երբ եվրոպական սոցիալիստների և ռուսական սոցիալիստ-հեղափոխականների քանդիչ ազդեցության ենթարկված հայ մտավորականությունը շեղվելով ցեղային գծից, պառակտեց հայությունը, կասեցնելով նրա բնական զարգացումը և վտանգելով նրա ապագան:

Այդ օրերից ահա՛ հայությունը՝ դատարկվելով ցեղային իրականությունից: Կդառնար վայրկյանի արտաքին շահերով ապրող ժողովուրդ՝ ենթարկված իր ապրած աղետներին, և արժանի օրվա իր ճակատագրին:

Օտար, փոխառիկ, կեղծ գաղափարները այլևս պղտորել էին հայկական տոհմիկ վճիտ - և իր խորքում՝ էթիկական -մտածողությունը:

Այլևս հայությունը մի և անբաժանելի չէր՝ մտքով արժեքապրումով, կամքով:

Այլևս սկսված էր *ազգի ապազգայնացումը* - ազգաքանդությունը, մի բան, որ դեռ շարունակվում է մեր պրած օրերի և մեր ցեղի էաբանական խորքի հետ կապ չունեցող խմբակցությունների կողմից:

Պարտվեց Ֆրանսիան, խայտառակորեն, որովհետև իր զինվորները ու զորավարները չգիտեին թե ի՞նչ է նշանակում դեմոկրատիա, որի անունից օդի մեջ խոսում էր իր կառավարությունը: Անբարո և ապականարար դեմոկրատիայից ծնվեց խուժանավարությունը: Ազգը վերածվեց խուժանի, և գաղափարավար ու ցեղավար մի ժողովրդի կողմից զարնվեց գետին, նվաստության փոշիների մեջ, երեսի վրա:

Այսպե՛ս, ցեղից պարպված ժողովուրդներին այսպես է պատժում պատմությունը: Պատմությունը՝ դատավորներից ամենաարդարը ավելի անողոք եղավ մեր հանդեպ ապրեցնելով մեզ Դեր Զորի ողբերգությունն ու նվաստությունը: Ֆրանսիան - զարնված Ֆրանսիան իր պարտության երկրորդ օրն իսկ գտավ իր փրկիչը՝ հանձին իր մի զինվոր զավակի: Ոչ թե դեմոկրատիա, այլ՝ իդեոկրատիա - գաղափարավարություն: Ազգերը խուժանացնող դեմոկրատիայի փոխարեն վերանորոգվող Ֆրանսիացին այսօր դավանում է մի նոր երրորդություն - Հայրենիք, աշխատանք, ընտանիք:

Իսկ Հա՞յը - քառորդ դար է անցել Դեր Զորից, և դեռ նա քարշ է գալիս մոլորանքի ճամբաներին: Շարունակվում է ազգասպանությունը: Եվ հայության որոշ մասը դեռ զգաստության և զղջումի նշաններ ցույց չի տալիս:

Ցեղապրումից զուրկ այդ տարրերը շարունակում են մնալ իբրև *կենդանի դիակներ նոր ժամանակի ճամբին,* որ իր հաղթական վազքի մեջ այնքան անողոք է: Դանդաղ, շա՛տ դանդաղ է հասունանում հայ քաղաքական միտքը:

Կամ վերանորոգվի՛ր կամ մեռի՛ր - գոռում է նոր օրը:

Հասկանա՛նք, քանի ուշ չէ հասկանանք, որ կյանքի պես հավիտենական է նա՛և վերանորոգումը: իսկ *վերանորոգիչ ուժ է միայն ցեղը:*

Հոգեվերանորոգվում է ժողովուրդը՝ դառնում ազգություն, երբ սկսում է շնչել ցեղի միջոցով:

Ցե՛ղն է միացնում, կենտրոնացնում, ներդաշնակում ժողովուրդը կազմող մարդկային անհատներին:

Դեպի՛ ցեղը, չմեռնելու համար. դեպի՛ ցեղը, դեպի *հայի ճամբան մե՛ծ զղջումի ճամբով:*

«Ռազմիկ», 1941, թիվ 24, 25:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԸ

«Պատմության մեծ կործանարարներ»- այսպես է որակել սուտ, մոլոր գաղափարները Ֆրանսիայի օրվա մեծագույն գիտնականներից Լը Բոնը:

Նման կործանարարներից է բոլշևիզմը: Այդ մոլոր վարդապետությունը ծնունդ առավ անցյալ համաշխարհային պատերազմում ռուսների կրած պարտությունից, և այսօր, նոր պատերազմում, գերմանական բանակների կողմից հանձնվում է հողին:

Ամբողջ քսան տարի կրկնեցինք ու կրկնեցինք, թե ով գիտակցաբար կամ անգիտակցորեն *հոկտեմբերյան բունտը* համարում է

հեղափոխություն, դա հայհոյում, անարգում է պատմության ծանոթ բոլոր հեղափոխությունները:

Դա ամեն ինչ էր - պարտվածների բունտ, աստվածամարտություն, հոգևոր վայրենացում, դարձ դեպի հեթանոսություն, պետական բանդիտիզմ, զանգվածային ավազակություն - բայց ոչ և հեղափոխություն՝ քաղաքական ու սոցիալական իմաստով:

Ազգերի առաջադիմության զարկ տվող հեղափոխական ցնցումները միշտ էլ եղել են *լավերի հղացում, լավագույնների գործ:* Ճշմարիտ հեղափոխությունը ծնունդ է առնում սուգից, ոգու մարդկանցից, ընտրանիից: Ռուսականը արդյունք էր վատերի ու վախկոտների - պարտականության ճակատից փախած զինված խուժանների և դիվաբախ ու տգետ խուժանավարների:

Դա պարտության, որով և՝ տկարության ու նվաստության հեղափոխություն էր: Ճիշտ է նկատել ռուս փիլիսոփա Բերդյաևը - բոլշևիկյան հեղափոխությունը՝ իբրև համաշխարհային պատերազմի մի էպիզոդ՝ ռուս ժողովրդի համար ունի, ամեն բանից առաջ, մի դառն ու նվաստացուցիչ իմաստ, ա՛յն է որ նա չկարողացավ տոկալ պատերազմի մեծ փորձության և դուրս եկավ սնանկ: Այո՛, *դա հոգևոր սնանկության հեղափոխություն էր:*

* * *

Այն իրազեկությունը, որ բոլշևիկները հոկտեմբերյան բունտի հենց առաջին օրերին՝ բացելով բանտերի դռները - այդ բանտերը բաստիլիա չէին, իրենց շարքերին միացրին հարյո՛ւր հազարի չափ գռեհիկ հանցագործներ - այդ պատմական իրողությունը լրջագույն հաստատություն է այն մասին, *որ բոլշևիզմը ոչ թե քաղաքական, այլ ախտաբանական երևույթ է:*

Հավանական ամեն հակահարված անկարելի դարձնելու նպատակով կյանքի կոչվեց ամենակուլ չեկան՝ միահեծած տերը աշխարհի մի վեցերորդ մասի վրա ապրող ժողովրդների հացի և ճակատագրի:

Բռնությունը հռչակվեց նորաստեղծ «պետության միստիկ բանականությունը»: Հազար շրթունքներով քարոզվեց բռնության պաշտամունք, մշակվեց բռնության կախարդանքը:

«Թող կորչի ռուս ժողովրդի 9/10-ական մասը, բավական է որ մի տասներորդականն ապրի մինչև համաշխարհային հեղափոխության մոմենտը» (Լենին):

«Անկցի սերը դեպի մերձավորը. մենք պետք է ատենք. մենք պետք է ավելի ատել գիտնանք - միայն այսպիսով կարելի է նվաճել աշխարհը: Մենք ատում ենք քրիստոնեությունը, որովհետև նրանք կարեկցանք են քարոզում»: (Լունաչարսկի):

«Ոչ մի հեղափոխություն հնարավոր չի քանի դեռ գոյություն ունի ընտանիքը. քանդեցե՛ք, քանդեցե՛ք դա» (Կոմինտերն):

Կրոնը հայտարարվեց «գերագույն հիմարություն». և աթեիզմ ասելով բոլշևիկները հասկացան ոչ միայն անաստվածություն, այլև՝ թշնամախառն անհավատություն դեպի ոչ-համայնավար մարդը: «Բարոյական է, պատգամում էր Լենինը - ամեն բան, որ օգտակար է կոմունիստ կուսակցությանը»: Սրա արդյունքը եղավ այն, որ «պրոլետարական դիկտատուրայ»ի դեռ առաջին տասնամյակում Ռուսաստանում կային 25 անգամ ավելի բանտեր, քան գոյություն ունեին Ցարի օրով: Հապա կոնցենտրացիոն լագերնե՞րը, ուր նահատակվեց ռուս մտավորականության ամենահիդեալիստական մասը. արհեստական սովե՞րը, չեկայի կողմից բեմադրված «ապստամբություններ»ը, զանգվածային ջարդե՞րը, կղերականության գողգոթա՞ն, սպայության ոչնչացումը, և այլ մութ չարագործություններն ու կատակոմբնե՞րը, որոնց մասին դեռ ոչինչ գիտի արտաքին աշխարհը:

Դաժանության ու ոճիրների գործում բոլշևիկներն ունեն իրենց հոգևոր պապերը - թուրքերը:

Այսպես, տեղական սարսափով, ջարդերով ու սովերով ստեղծվեց արյան ռեժիմը, որը մի տասնամյակի ընթացքում ավելի տառապեցրեց մարդկությունը (ինչպես և՝ ավելի անբարոյացրեց նրա որոշ տարրերը) քան պատմության ծանոթ որևէ մութ հարյուրամյակ:

* * *

Ի՞նչ է բոլշևիզմը իբրև քաղաքական վարդապետություն: - Հոգու և մտքի ապականարար՝ ամեն բանից առաջ, պատմական նյութապաշտություն. ավելի պարզ՝ մարքսյան աշխարհըմբռնում, ըստ որի ամեն բանի բազան նյութեղեն է, ամեն ինչ՝ նյութ. կրոն, արվեստ, մորալ՝ սրանք միայն «վերնաշենքեր» են, և ուրիշ ոչինչ: Դա վճռական ժխտումն է պատմության իդեալիստական բացատրության:

Բնագիտական այդ գռեհիկ բացատրությամբ բոլշևիկները վճռաբար ժխտեցին բարոյականը, ընտանիքը, հայրենիքը, անգամ ոչ-մարքսյան փիլիսոփայությունը: «Մարդս այն է, ինչ որ ուտում է»- խոզային այդ վարդապետությամբ նրանք փորձեցին խաթարել մարդկային հոգևոր կերպարանքը, թունավորել նրա էությունը, նրա մեջ մարել հավիտենականի կարոտը, սեղմ ասած՝ մարդը վերածել հագուց և ոգուց դատարկված մի մարդատիպ անասունի:

Երբեք այնքան խորապես ընկած չէր մարդը՝ (նաև՝ իբրև հակազդեցություն, երբեք այնքան առաքինացած չէր հակաբոլշևիկ մարդը):

«Թալանիր»- այս էր «ամենահեղափոխական» լոզունգը՝ դրված կարմիր ամբոխներին, իրենց խուժանավար առաջնորդների կողմից: Լենինն այս ձեղով էր լուծում ընկերային խնդիրը: Ստոր

կրքերի այդ մթնոլորտում, հեղափոխական հորձանքի մեջ սկսվեց բոլշևիկների կուսակցա-դավանական զորահավաքը:

Բոլշևիկացավ ամեն սրիկա, ով որ պակասավոր էր իբրև մարդ և հասարակության անդամ, ով իր մութ անցյալը մոռացության քողով ծածկել էր կարոտում, ով սեփական հայրենիքը զոհելու գնով ուզեց ապահովել իր հացը: Դավաճանը, լրտեսը, Ցարի օրով դահիճի պաշտոն ունեցող հրեշը, պսիխոպատը, սադիստը, ամեն կարգի գահընկեց -նման ամեն մարդատիպ աճապարեց զինվորագրվել Լենինյան դրոշին:

Այսպես ստեղծվեց բոլշևիկյան կուսակցությունը: Այսպես, հրեությունը ծնեց Մարքսը, Մարքսը ծնեց Լենինը, Լենինը ծնեց միջազգային գայթակղությունը:

«Աստծու աշխարհը կողոպտելու և նրանում ամեն վեհություն ոչնչացնելու ծարավ»- ահա՛ թե ինչի վերածվեց բոլշևիզմ կոչված չարության ու գայթակղության վարդապետությունը:

* * *

Ի՞նչ է նշանակում «սովետներ»:

Արդյո՞ք, դա հայրենի՞ք է, ազգ, գերագույն իրականություն: -Ո՛չ մեկը և ո՛չ մյուսը: Դա նա՛և հավտիենապես ապրելու և ստեղծագործելու սահմանված ազգերի ու հայրենիքների միություն չի Սովետները - հոգևոր և ազգային տեսակետով ո՛չ Ռուսիա է, ո՛չ Ուկրաինա, ո՛չ էլ Հայաստան: Դա օրգանական ամբողջություն չէ: Դա քանակական զանգված է, զանգվածների մեռյալ միություն, և ոչ մի դեպքում ազգ, հայրենիք: Այդ դիմազուրկ ու անստեղծագործ բաբելոնում ոչ ոք է իր ցեղային և հոգևոր դիմագծության, իր ճակատագրի, իր երկրի տերը: Այնտեղ չկա ազգայինը: Այդ միության մեջ ոչ ոքի իրավունք չի տրված խորհել ու գործել ըստ իր երկրի պայմանների և իր պատմական առաքելության:

Սովետական ժողովուրդները տառապում են նա՛և *կուլտուրական պարտվողականությամբ,* անտարբերությամբ, որովհետև նրանց արգելված է ապրել իրենց անցյալը: Անհեթեթություն է «ձեղով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական» -մշակույթը, որի մասին հաճախ կրկեսային աղմուկ է բարձրացնում սովետական մամուլը: Այդ պայմաններում տեղի է ունենում ժողովուրդների հոգևոր ֆելլահացումը: Այդ միության գլխին - որի անդամները թքով ու սարսափով են կպած իրար- կանգնած է մի հատիկ մարդ - Ստալինը, որից վար ամբոխներ են, վերևը՝ «գոյություն չունեցող աստված»:

Այսպես ստեղծվեց բռնակալություններից ամենաասիականը, որում վաղուց են մոռացվել մարդն ու մարդկայինը:

Բ

Սովետները ավելի «ինտերնացիոնալ» եղան, քան պետություն: Դա պետություն է այն չափով, ինչ չափով պետականության երևույթը անհրաժեշտ էր օտար երկրների հետ դիվանագիտական կապ պահելու՝ հենց այդ վերջինները ականելու համար:

«Որքան վատ (մարդկության համար), այնքան լավ»- այս եղավ ու մնաց իր դիվային նշանախոսքը: Ամբողջ երկու տասնամյակ նա օրօրվեց համաշխարհային բունտի ցնորքով, որի պրոպագանդայի համար ոսկու Նիագարա թափեց:

Դավանելով միայն և միմիայն բացասական իդեալներ՝ նա մնաց նիհիլիստ, քանդիչ թե միության ներսում և թե արտաքին քաղաքականության մեջ:

Արդյո՞ւնքը - իր երկրի կյանքը վերածեց դժոխքի, արտաքին հարաբերությունները՝ դավադրության: Նա չդադարեց օգտագործել ազգերի ներքին վարչածեղային, սոցիալական, տնտեսական դժվարությունները, ազգամիջյան ոխերը, նախանձները, փառասիրությունները: Մասնավորապես շահագործեց ազգային խնդիրը - երկդիմորեն, Ասիան գրգռելով Եվրոպայի գունավոր ցամաքը՝ ճերմակ ցեղի դեմ:

Չմնաց կազմակերպություն, հաստատություն, որի մեջ պղծություն չմտցներ: Չմնաց ուժ, տկարություն, որ կաշառել չփորձեր:

Օգտվեց միջազգային սպորտից, ֆրանմասոնությունից, շարժանկարից, ազատ քրիստոնեությունից - անգամ եկեղեցուց՝ այդ բոլորը լծելով իր պրոպագանդայի արնոտ կառքին: Լինելով կապիտալիստ երկրների մահացու թշնամի, բարեկամություն կեղծեց բոլորի հանդեպ՝ խռովքի ու տագնապի մեջ պահելով ողջ մարդկությունը: Մասնակցեց համաշխարհային շախմատախաղին, սակայն միշտ էլ անպատիվ խաղանենգ: Խաղաղության թշնամի՝ դաշինքներ կնքեց՝ իբրև թե խաղաղության ծառայելու և պատերազմը սահմանափակելու հաշիվներով: Թուրքը նա՛և արտաքին քաղաքականության մեջ հանդիսացավ բոլշևիկների պապը: Մոսկվան՝ մեր օրերի կարմիր «հիվանդ»ը՝ համիդաբար օգտվեց Եվրոպային ներքին անհամաձայնությունից - երկարածգելով իր քաղաքական հոգևարքը: Ոչ թե դեմոկրատիա, այլ դեմոնոկրատիա - *դիվապետություն,* ահա՛ թե ինչի վերածվեց սովետիզմը:

* * *

Այդ դիվապետությունը, միշտ հավատարիմ իր օձային բնության, բարեկամություն կեղծելով ռայխին՝ դավեց վերջինի դեմ և առիթ տվեց պատերազմի իր և երեկվա իր «բարեկամ»ի միջև:

Այժմ «աշխարհի մի վեցերորդ»ի և համաշխարհային հեղափոխության երազի պաշտպանությունը հանձնված է կարմիր բանակին: Ի՞նչ է, սակայն, այդ ուժը իբրև կազմակերպություն, տեխնիկա, մորալ:

Բանա՞կ է դա՝ օրվա հասկացողությամբ, թե մեծազանգված մի բանդա - այդպես սանձված պահելու միության ժողովուրդների դժգոհությունը և ոչ թե արտաքին թշնամին: Բանակ չէ դա, այլ կուսակցական զինյալ ամբոխ՝ ընդունակ միայն շուք և փայլ տալու բոլշևիկյան բազմապիսի հանդեսներին: «Քսերքսեսի բանակում չափից ավելի մարդ և չափազանց քիչ զինվոր կա»- Հերոդոտի՝ այդ խոսքը հարազատորեն պատշաճում է նա՛և սովետական զորքերին:

Հաղթում են նրանք, որոնք իրենց կամքը դնում են ի սպաս մի գերագույն, մի սրբազան կամքի: Բանակ դառնալու համար կ. բանակին պակասում է հենց այդ գերագույն կամքը: Անկրոն էակը հրաշունչ զինվոր չի դառնա: Լենինյան նյութապաշտությունը ռուս բանակը վերածեց անաստված սրիկաների: Մարտական ոգուն թշնամի է ոչ միայն հակակրոնը, այլև կրոնապես անտարբերը: Հաղթական մարդիկ չեն ծնվում նյութապաշտիկ մարքսականությունից, ընկերվարությունից: Զինվորությունը - ամեն բանից առաջ - հոգեվիճակ է: Իբրև արվեստ՝ դա հայրենի հողի համար խիզախել ու մեռնել իմանալու արվեստ է: Կ. բանակը թիվ ունի, տեխնիկ ունի, ամուր դիրքեր, «աշխարհի մի վեցերորդ»ն ունի. բայց զուրկ է ռազմախանդի աղբյուրներից:

Սոցիալիզմի կաթեխիզմում ասված է՝ «բանվորը հայրենիք չունի»: Բոլշևիկները - չարության ու քանդումի ուսուցիչները միայն չհասկացան, որ անհայրենիք թշվառականներից բանակ չի ստեղծվի: Անաստված ու հոգեբանությամբ անցեղ, որով՝ հավիտենականի զգացումից զուրկ է կարմիր բանակայինը. իսկ նմանը զինվոր չեք դարձնի, եթե նրան զինեք անգամ ամենաարդիական զենքերով: դա կմնա մարդկային փոշի, երբ ցեղային տարերքի մեջ մկրտված գերմանական զորքի հարվածները թողնում են երկնքից ընկած շանթաքարի տպավորություն:

Խորհրդային զորքին պակասում է ոչ միայն էթիկան և հավատը, այլև՝ ուղեղը դա շտաբ - սպաներ չունի:

Որքան առաջացել է ռազմարվեստի բարեշրջումը՝ այնքան հետ է մնացել կարմիր բանակը: Մոսկվան չհասկացավ, որ ազգերի պես բանակներն էլ չեն կարող զորավոր լինել առանց հոգևոր հիմքերի, արժեքների, սրբության զգացումի: Դասակարգային անկերպարանք ու անհոգի կոլեկտիվն սպանեց մարդ-անհատը, նրա նախաձեռնության ոգին, պատասխանատվության զգացումը:

Ապագան ու հաղթանակը պատկանում են ոչ թե զանգվածին, այլ ոգուն:

Հաղթանակը ո՛չ զենքերի մեջ է, ո՛չ ոտքերի, ո՛չ էլ մոտորի, այլ այդ վերջինները շարժող ոգու: Գոգոլյան «մեռյալ հոգիներ» - ահա՛ կարմիր զինվորը: Չարաբախտ Տրոցկին, հոկտեմբերյան հեղափոխության առաջին օրերին, կ. բանակին ուղղված իր մի հրամանագրի մեջ

ասել է՝ «ընկերնե՛ր, մի՛ մոռանաք, որ Ղրիմ են փախել Ռուսիայի բոլոր կապիտալիստները: Բոլոր հարստությունները ձե՛զ, առե՛ք այդ հարստությունները: Հառա՜ջ, այնտեղ ձեր քաշած զրկանքների համար ձեզ սպասում է արդար վարձատրություն»:

Կողոպո՛ւտ - ահա՛ խայծը, որով Ռուս. Հեղափոխության գռեհկահոգի առաջնորդները կ. զինվորին մղում էին կռվի: Թաքարականություն է դա, որով, դաստիարակվեց կարմիր բանակը: Փորձեցե՛ք բաղդատել երրորդ ինտերնացիոնալի այդ կողոպտասեր ամբոխը Ֆրանսիական Հեղափոխության զինվորների հետ - որոնք իրենց քաղցը մոռանալու համար՝ պահակրակների շուրջը խանդավառորեն «Մարսելիոզ» էին երգում - և դուք այլևս պիտի չհարցնեք, թե ո՞վ կհաղթի՝ ցեղախառով Բեռլի՞նը, թե՞ տարիներով ֆասոն, ուժ, մեծություն կեղծող Մոսկվան:

* * *

Մարդը - իբրև անհատ, թե հավաքականություն - հոգևորապես աճում է այնքան, որքան ազնիվ են իր հետապնդած նպատակները:

Տարիներով կարմիր մարդը դատարկվեց այն ամենից, ինչ ոչ մարդկորեն ազնիվ է և ազնվացուցիչ:

Միայն տգետները, միամիտներն ու անձնապես շահագրգռվածները չլացեցին Մոսկվայի ցիրքային գովքից՝ իր բանակի մասին:

Մոլորանք ստեղծելու սահմանված պրոպագանդային մեծախոսություն էր իր՝ «Մենք աճում ենք երկաթից» աղմուկը:

Գերմանական բանակի առաջին հարվածները եկան հաստատելու, որ կարմիր բանակը կավ է, և ոչ երկաթ:

Տասներորդ օրն է, ինչ Հիթլերի բանակի խոլական զարկերի տակ սովետիզմի կավե կառույցը խորտակվում է իբրև պետություն, բա-նակ և վարդապետություն:

Եվ բյուրիցս արդար է որ կործանվում է բոլշևիզմը իբրև *միջազգային ապականարար, դավադիր և հրձիգ:*

Տեղի է ունենում պատմության դատաստաններից ամենաարդարն ու անողոքը: Պատմությունն այդ անգամ դատավոր է կարգել գերմանական ցեղը:

Այն առասպելը – թե որևէ պետություն չի հանդգնի չափվել խ. միության հետ չուզելով իր բանակը վարակել բոլշևիկյան (ուրախությամբ վարակել) այլևս ցնդած է, որովհետև բոլշևիկյան բանակը հեղափոխական ու մարդկային ոչինչ չուներ իրեն հարվածող թշնամի բանակները հավատափոխելու համար:

Չէ՛, նրան էլ չեն փրկի ո՛չ ռուսական անծայրածիր տափաստանները, ո՛չ խորհրդային միության ժողովուրդների «աստղագիտական» թիվը, ո՛չ կուտուզովյան ռազմավարությունը, ո՛չ էլ լորդիզմը:

Ճիշտ է, պատմական չարագործությունները դարաշրջան չունեն, բայց և այնպես բոլշևիզմ կոչված միջազգային չարիքը կմնա իբրև specificum մեր ժամանակաշրջանի համար:

Մոտավորապես քառորդ դար՝ դա տառապեցրեց ու վատասերեց մարդկությունը, և այսօր պատմության Նեմեսիսի կողմից հանձնվում է հողին:

Մեռնում է բոլշևիզմը, որովհետև ապրել են ուզում եվրոպական քաղաքակրթությունը, քրիստոնեությունը և մարդկային անունը:

«Ռազմիկ», 1941, թիվ 26, 27:

ՄԻ ԶԻՆՎՈՐԻ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երբ պայքարը սրբի և սինլքորի միջև է՝ միշտ էլ առաջին պահին հաղթում է սինլքորը:

* * *

Նա, ով իր հայրենիքի թշնամիներին, վտանգը, մահը տեսել է իր սրի տարածության վրա՝ չի կարող ասպետ չլինել:

* * *

Սինլքորը չի՛ ձգտում անկարելիին - հաղթանակի՝ սրբի դեմ, այլ վերջինի ժամանակավոր նվաստացումանը: Եվ հենց սրանում է ողբերգությունը և ո՛չ թե առաքինի մարդուն պարտադրված տառապանքի փաստի մեջ:

* * *

Բարձրորեն հոգևոր կյանքի սկզբունքը հակասության սկզբունք է: Պե՛տք էր մի հուդա, մարդկային մի սև չարություն, մի ուրացում, որպեսզի իրենց գերագույն ողբերգության մեջ հաղթանակեին Նազովրեցին ու բարությունը:

* * *

Ամեն մի ողբերգության մեջ թաքուն ուրխություն կա - այն գիտակցությունը, որ մեր ոգին ողբերգությունից դուրս պիտի գա ավելի հզորացած:

* * *

Ավելի հեշտ է արդար լինել, քան ամեն գնով արդարությունը պաշտպանել: Արդար կարող է լինել անգամ ամենախեղճ մարդը: Արդարությունը, սակայն, պաշտպանելու համար պետք է լինել ոչ միայն արդար, այլև տղամարդ, յոթնի՛ցս տղամարդ:

* * *

Ազգերից առաջինն է Հայը, որի մեջ մարդ արարածը այնքա՞ն հեշտորեն դառնում է չարագործ իր եղբոր հանդեպ:

* * *

Երբ առաքինի և արդար է հալածվող հանրային գործիչը՝ հալածանքը հարյուրապատկում է նրա հոգեկան ուժերը, նրա իմաստությունը, ինչպես և՝ նրա բարոյական ազդեցությունը:

* * *

Միշտ էլ, երբ զանգվածներին պակասել է Գաղափարի մարդու կողքին վճռաբար կանգնելու բարոյական արիությունը՝ մեր աշխարհի սրիկայությունը նորանոր Հիսուսներ է խաչել:

* * *

Նախանձ, թշնամանք, չարություն - այդ մութ ուժերը գործի են անցնում հենց որ քուն է մտնում *Աստվածայինը* հասարակության մեջ: Այնտեղ, ուր արթուն է խղճմտանքը՝ հանրային կյանքը թունավորող այդ ուժերը, եթե չեն զինաթափվում, առնվազը դառնում են կրավորական:

* * *

Գեղեցիկ է դափնիով պսակված ճակատը. սրբազնագույնն ու համբուրելին, սակայն, կմնա ճշմարտության համար փշերով պսակվածը:

* * *

Հայության մեջ չարերն ավելի ակտիվ են, քան բարիները, և հենց ա՛յդ է պատճառը, որ դատերից արդարագույնն անգամ դժվար է պաշտպանել մեր կյանքում:

* * *

Երբեմն երկչոտ որսորդին իսկ հաջողվում է առյուծ թակարդել. դրանով, սակայն, չի՛ տկարանում նրա երկյուղախառն ափսոսանքը դեպի իր արքայական որսը, ինչպես և՝ դրանով երկչոտը չի դառնում առյուծասիրտ:

* * *

Աշխատի՛ր առյուծի հետքեր թողնել ցեղիդ պատմության մեջ, և բնավ մի՛ մտածիր այն մասին, թե մի օր աղվեսը կարող է իր ապականությունը փռել թողածդ հետքերի վրա:

* * *

Մի ժողովուրդ, որի կյանքում աղվեսներին հաջողվում է առյուծ խեղդել՝ նվազ, շատ նվազ թվով առյուծասիրտ որդիներ է ծնում:

* * *

Հեռո՞ւ առյուծ խեղդող աղվեսներից:

«Ռազմիկ», 1941, թիվ 33:

ՑԵ՞Ղ, ԹԵ՞ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Չէ կարելի ներքնապես ճանաչել կուսակցությունները և վճռապես չժխտել կուսակցականությունը:

Կես դար առաջ, Թրքահայաստանի պայմաններում գոյության իրավունք և հաջողություն կարող էին ունենալ գերազանցորեն ազգային շարժումներ - նմանները միայն:

Աշխարհածանոթ իրողություն է, որ հայությունը վտանգված էր ազգովին և ակնկալում էր, որ Հայոց հեղափոխությունը ծնունդ առնի մեր վտանգված Ցեղի խռովքից ու գործի ողջ ազգի անունով, ողջ ազգի համար, ազգի բովանդակ ուժերով:

Ցեղորեն անխաթար ժողովուրդների մեջ ինքնապաշտպանության բնազդը ուժեղանում է իրեն սպառնացող վտանգի համեմատությամբ:

Բացարձակ է և՝ հետևյալ ճշմարտությունը.- *Վտանգի ժամանակ զանգվածների մեջ երևան է գալիս ընդհանրականը, ցեղայինը,* որի առջև տեղի են տալիս անհատականն ու հատվածականը:

Ուզում եմ ասել- Ցեղի՛նն է ու Ցեղից է ինքնապաշտպանության բնազդը: Ժողովուրդը Ցեղո՛վ է արթուն, զորավոր, ինքնապաշտպանունակ - ահա՛ թե ինչու ֆիզիկական գոյությունը վտանգված, որով և՝ ինքնապաշտպանության կարոտ հայության մեջ երևան պիտի գային զուտ ցեղաազգային կազմակերպություններ, և ոչ թե քաղաքական կուսակցություններ:

Միայն խորապես ցեղազգային հեղափոխությունը կարող էր գլուխ հանել դարերով օտար լծերի իր տոհմիկ առաքինության մեջ տկարացած մեր ժողովրդի ազգային ինքնագիտակցության վերազարթնումը, միայն դա կարող էր համախմբել ու ակտիվացնել հայության ուժերը - անհրաժեշտ նախապայման ազգային ամեն պայքարի հաջողության:

Վերածնունդ-հեղափոխություն՝ այդպիսին պիտի լիներ մեր հեղափոխական շարժը:

Հայոց շարժումների վարիչները, դժբախտաբար, չեղան ամեն բանից առաջ *համահայկականության, ցեղային ամենամիության, քա-*

ղաքական միակրոնության (ա՛յն, որ այսօր մենք դավանում ենք իբրև ցեղակրոնություն) գաղափարախոսներ: Ազգային կուռ իդեոլոգիայի պակասի պատճառով, օտար փոխառիկ գաղափարները եկան խառնվելու, շարժելու, բայց ոչ և՛ հեղափոխելու մեր ժողովուրդը, նա՛խ նրա մտածողությունը: Այդ իսկ պատճառով ունեցանք շարժում, ավելի ճիշտը՝ շարժումներ, բայց *ոչ ազգային վերանորոգիչ հեղափոխություն:*

* * *

Պետք է ենթադրել որ Հայոց հեղափոխության ձեռնարկողները լավապես ճանաչում էին երեք բան՝ իրենց ժողովրդի հոգևոր ժառանգականությունը, նրա դարավոր թշնամու հոգեբանությունը և արտաքին աշխարհի պայմանները:

Մեր պատմական անցյալը, մեր Ցեղի մշակութային փառքը - այդ պարտադրում էր լինել հոգեպես ավելի անկախ և ծունկ չծռել օտար- հաճախ խաբուսիկ-արժեքների առջև: Արտաքին ազդեցությունները, սակայն- որոնց դեռ այսօր էլ առատ տուրք են տալիս հայ կուսակցությունները- պատճառ դարձան, որ հայ մտավորականությունը խզի հայության զարգացման գիծը, որ հրամայաբար պիտի պահվեր մեր նախահեղափոխական անցյալի և հեղափոխականության շրջանի միջև: Աղետալի եղավ հայ վարիչ մտավորականության ցեղային անլիակշռությունը - իմա՛ նրա նվաստության զգացումը - դա նրան դարձրեց անզգա ընդօրինակող: Կես դար է ինչ գոյություն ունեն հայ կուսակցությունները, բայցևայնպես նրանցից և ոչ մեկը դեռ ձևավորված չէ ծրագրորեն, նրանք դեռ չունեն հիմնավորված աշխարհայեցողություն: Նրանց ծրագրերը – մեկը մյուսից մոզաիկ - մի քիչ ռուսական, մի քիչ եվրոպական - միայն անունով են հայկական: Նմանվելու այդ ախտից - արդյունք ազգային տկար ինքնագիտակցության - դեռ այսօր էլ զերծ չեն հայ կուսակցությունները:

Այս կամ այն ժողովուրդը քաղաքականապես ազատագրվելուց առաջ պետք է- իբրև նախապայման - նախ ազատագրել նրա մտածողությունը օտար կապանքներից: Այդ չհասկացավ հայ մտավորականության մի մասը: Լծվելով լիբերալիզմի, սոցիալիզմի, անկրոնության կառքերին՝ նա չհասկացավ որ Հայոց Հեղափոխության առաջին գործը պիտի լիներ՝ այնպես դաստիարակել հայությունը, որ նրա հասարակական խավերը զորութենապես լրացնեն և օժանդակեն իրար, և ոչ թե կատաղի պայքար բացեն իրար դեմ: Արդյո՛ւնքը,- ժողովուրդը հոգեբանորեն, մտածումով ու ապրումով միատարրելու փոխարեն, պառակտեցին՝ կասեցնելով մինչև այդ սկսված նրա վերածնունդը,- մի բան, առանց որի ոչ միայն ձախողվում են հեղափոխական փորձերը, այլև հաճախ լրջորեն վտանգում են ազգերի ապագան: Հայ կուսակցությունները լավապես չէին ճանաչել նա՛և թուրքին: Այլապես՝ մեր ազատագրական գործունեությունը պիտի ունենար տարբեր տարողություն ու մեթոդ:

Իսկ արտաքին պայմանն՞ը, Եվրոպա՞ն,- որը հայկական հարցը ծառայեցրեց իբրև առիթ՝ Թուրքիայի ներքին գործերին միջամտելու և սակարկելու նրա հետ - ճանաչո՞ւմ էին Եվրոպան, որի խաչին և մարդկայնությանը այնքան սին հույսեր էին կապել: Ի զուր անցան Հայոց վերածնունդի ռահվիրաների կանչերը՝ հույս չդնե՛լ Եվրոպայի վրա. «Հայաստանի մեջ է բո՛ւն հայկական խնդիրը, և մենք Բեռլինի մեջ կորոնենք այն»: Հայ ցեղաշունչ գրողի - Սրվանձտյանցի - համար Հայաստանը՝ դա Հայ ցեղն ու Հողն է, որոնց պաշտամունքից պիտի քաղեն իրենց նվիրումի ուժը հայության ճակատգրով ապրող մեր բոլոր սերունդները: «Հայաստանի մեջ է բո՛ւն հայկական խնդիրը»-դա ասել է՝ դարերով իր գոյության թշնամուն և մահվան հպատակ մեր ժողովուրդը իր մեջ, միայն իր Ցեղի մեջ պիտի փնտրի իր փրկությունը: Դա ասել է՝ հայությունը պիտի առաջնորդվի էաբանական հրամայականովնա՛խ ինքդ օգնիր քեզ:

Հայ մտավորականության մի մասը մեղանչելով այդ հրամայականի դեմ՝ սոցիալիստացավ և իր հույսը դրեց արտաքին ուժերի - երկրորդ, երրորդ Ինտերնացիոնալների, «քսան միլիոննոց միջազգային բանվորական բանակի» և նման այլ հիմարությունների վրա: Մեր մտավորականությունը չհասկացավ, որ ինքն - իբրև ազգի գիտակցության օրորանը - կուսակցականանալով, դադարում է ծառայել ազգին: Այո՛, հատվածականացած մտավորականությունը ճշմարիտ մտավորականություն չէ,- նմանը մեղանչում է իր կոչումի դեմ:

Հայության ու Հայաստանի թշնամիների, ինչպես և օտար, վատասերիչ միջավայրի դեմ հաջողաբար գործել կարող է միայն ցեղային համամիությունը և ոչ թե քաղաքական այս կամ այն փոխառիկ գաղափարի շուրջը հատվածական շահերի նույնությամբ ժամանակավորապես միացած անհատների խմբակցությունը: Մեր մտավորականության անցեղապաշտ մասի թեթևամտության համար դժվար թե մեղմացուցիչ պարագաներ գտնեն օրվա հասարակագերն ու վաղվա պատմաբանը:

«Բուն հայկական խնդիրը»- դա օտար լծերի տակ ուծացած հայկական զանգվածները վերստին ազգի վերածելու մեջ է: Հասկանա՛նք այս: Իսկ դա հնարավոր է միայն քաղաքական միակրոնությամբ, մի բան, որ կընձեռնի մեզ ցեղը, Ցեղակրոնությունը: Հայը՝ դեռ անհայրենատեր, կուսակցականացավ, հատվածականացավ,- մի պարագա, որի շնորհիվ թերի մնաց Նազարեթների օրով սկսված այնքան խոստումնալի իր վերածնունդը: Այդ իսկ պատճառով հայությունը չկարողացավ հաղթահարել իր ներքին տկարությունները - չկարողացավ թարմանալ ցեղորեն, վերանորոգվել, ամբողջանալ իբրև

ազգ: Սրանո՛վ բնավ չանգիտանալով արտաքին պատճառները - նա՛և սրանով պիտի բացատրել մեր ժողովրդի կրած թե՛ աղետները և թե՛ օրվա անզոր ու անկարող վիճակը:

«Ռազմիկ», 1942, թիվ 3:

•

ՁՈՐ. Գ. ՆԺԴԵՀԻ ԽՈՍՔԸ

Հայաստանի Անկախության 25 ամյակի տոնակատարության առթիվ

Հայրենակիցնե՛ր.

Այսօր, Եվրոպայի պատմության ամենախռովքոտ մոմենտին, երբ մահու և կենաց պայքարի մեջ են ազգավեր մարքսիզմն ու ցեղային գաղափարաբանությունը, երբ վերաստեղծվում են աշխարհն ու մարդը, հայ երիտասարդության մի մասը դեռ շարունակում է ողորմելիորեն քարշ գալ բախտորոշ անցքերի ետևից:

Նա շարունակում է սնվել հին, մեռնող աշխարհի հոգևոր փշրանքներով, նրա հնոտիներով և սնոտիներով:

Կտրված մայր հողից և հայրենի ժողովրդի կենցաղից՝ նա դարձել է հոգեպես անհող և անհայրենիք: Գաղափարաբանորեն մոլորված ու պատեհապաշտ՝ նա չի հասկանում, որ սեմիտական ազգաքանդ ու պառակտիչ մտածողությունը վաղուց է ի կնիքը դրել օտարամոլությամբ հիվանդ բոլոր ժողովուրդների հոգու վրա: Սեմիտականությունը - հոգևոր այդ քաղցկեղը- վաղուց է կրծում և թունավորում ազգերի հոգին: Դա կեղծում է ամեն արժեք, կասկածի տակ դնում ամեն ճշմարտություն, տրորում ազգային ամեն հեղինակություն, ծիծաղելի հայտարարում ամեն սրբություն: Անիշխանացուցիչ և ստրկացուցիչ է դա: Նրանով բռնված ժողովուրդները հիմարանում են ազգովին և դադարում անգամ իրենց հայրենիքում մնալ տերը իրենց սեփական ճակատագրի:

Մեր երիտասարդության անցեղակրոն մասը դեռ չի հասկացել, որ Հայաստանից դուրս, օտարության մեջ, միայն Ցեղի գաղափարն ու պաշտամունքը կարող են փոխարինել հայրենի հողն ու ժողովուրդը. որ Ցեղակրոնի մտածողությունն է հարազատորեն հայկական ու արիական, որ կտրվելով ցեղից՝ անհատը խորթանում է իր էությունից և բաց աչքով՝ նավարկում դեպի անդունդ և կորուստ, որ մի ժողովուրդ այնքան համերաշխ է, մարտունակ ու ստեղծագործ, որքան որ ցեղաշունչ է. որ միայն Ցեղակրոնությունն է ընդունակ ստեղծելու անհրաժեշտ հոգեբանական մթնոլորտը ազգային ընդհանուր աշխատանքի ու

հաջողության համար՝ համախմբելով բոլորի՛ն, բոլորի՛ն մի նպատակի շուրջ:

Հայ երիտասարդության մի մասը դեռ չի գիտակցում, որ ժողովուրդների դժբախտությունը պայմանավորվում է նրանով, որ նրանց պակասում է մի մեծ, մի դինամիկական մի առաջնորդող գաղափար: Այդ դեպքում, մանր, պարագիտային գաղափարները ծնունդ են տալիս միջակության բռնակալության, որ եղել է ու կմնա բռնակալություններից ամենից ամոթալին ու կործանարարը: Նա չի գիտակցել դեռ նաև այն, որ մի ժողովրդի վերածնունդն ու փրկությունը սկսվում է այն վայրկյանից, երբ մի մեծ գաղափար գալիս է ենթարկելու իրեն գոյություն ունեցող բոլոր երկրորդական գաղափարները: Դա ասել է այլևս վե՛րջ խոտոր ճամբաներին, անպտուղ ճիգերին, ներքին իրարակերության ու թշնամանքին: Դա ասել է՝ խոր հավատ, լավատեսություն, անսպառ կորով: Դա, մե՛ծ գաղափարը, ստեղծում է ոգու միություն, որով վերակառուցում է կուսակցությունների և հարանվանության կողմից պառակտված ազգը: Այդ դեպքում ազգը ճանաչում է պայքարի մի հատիկ ձեղ - կազմակերպել հավերժորեն հայկականը՝ Ցե՛ղը ամենքի դեմ, որ խորթ են հայ էությանը:

Այդ մեծ, այդ փրկարար գաղափարը հայ կյանքում Ցեղակրոնությունն է, որ գալիս է պառակտված ժողովուրդը վերածելու ազգի՝ փրկելով վերջինը իր բացասական, իր ցեղաշեղ տարրերի չարաշահությունից և խուժանավարությունից:

Հայրենակիցնե՛ր.

Ցեղորեն անխաթար ժողովուրդների մեջ ինքնապաշտպանության բնազդը ուժեղանում է իրեն սպառնացող վտանգի համեմատությամբ:

Բացարձակ է և՛ հետևյալ ճշմարտությունը.- Վտանգի ժամանակ զանգվածների մեջ երևան է գալիս ընդհանրականը, ցեղայինը, որի առջև տեղի են տալիս անհատականը, հատվածականը, կուսակցականը: Ցեղի՛նն են ու ցեղի՛ց են համերաշխությունն ու ինքնապաշտպանության կարողությունը: Ժողովուրդը Ցեղով է արթուն, զորավոր և ինքնապաշտպանունակ:

Ահա թե ինչո՛ւ, այսօր, երբ քննության է դրված նա և յոթնիցս սուրբ մե՛ր Հայրենիքի ճակատագիրը, ես, հայ զորականի խոսքն եմ ուղղում ձեզ, ձեր գուրգուրանքին հանձնելով երկու, միայն երկու բան,- այն է՝ մեր փրկարար Ցեղային Շարժումը և Հայկական Լեգեոնները: Այդ երկուսից դուրս ամեն ինչ երկրորդական է: Այսօր, մխիթարության ու հպարտանքի երկու առարկա ունենք - Ցեղային Շարժումը և մեր մարտական ուժը: Ապրեցրե՛ք երկուսն էլ, որ ապրեք իբրև Ազգ և Հայրենիք:

«Ռազմիկ», 1943, թիվ 114, հունիս 17:

ՄԵԾ ԳԱՂԱՓԱՐ

Դեռ այսօր էլ, երբ մահու և կենաց պայքարի մեջ են ազգա--- քանդ մարքսականությունն ու ազգի գաղափարը, երբ հին աշխարհը կերպարանափոխելու աստիճան վերաքննվում են բոլոր արժեքները, դեռ այսօր էլ հայ երիտասարդության մի մասը շարունակում է սնվել հայ էության և գոյության հետ որևէ կապ չունեցող վարդապետության փշրանքներով:

Գաղափարաբանորեն մոլորված՝ նա դեռ չի հասկանում, որ անհատը կտրվելով իր ցեղից՝ խորթանում է իր էությունից և բաց աչքով նավարկում դեպի վատասերումի անդունդը, դեպի կորուստը:

Նա չի հասկանում, որ մի ժողովրդի համերաշխությունը պայմանավորվում է նրա ցեղաշնչությամբ, որ անցեղահաղորդը միշտ էլ անմիաբան է, որ ցեղի գաղափարն է հոգեբանորեն միատարրում ժողովուրդը՝ մի նպատակի շուրջ համախմբելով բոլորի՛ն, բոլորի՛ն:

Ցեղը - ժողովրդի կենսաբանական անփոփոխելի տարրը- վերջինի համար խաղում է այն դերը, ինչ դեր, որ կատարում է ուղեղը օրգանիզմի համար: Ցեղը, ցեղայինը ներդաշնակում է ազգային օրգանիզմի գործունեության գլխավոր տարրերը, չհամադրում նրա բովանդակ ուժերը: Ցեղը հավաքիչ է, ցեղային ապրումը՝ կենտրոնածիգ:

* * *

«Մեր պապերից մեր ականջն է ընկել, մեզնից մեր որդիները կիմանան»... ահա՛ ցեղային օրգանական մտածողությունը, որ այսօր պայքարի մեջ է ազգալուծիչ և ապականարար սեմիտական ոգու հետ:

Սեմիտականությունն - ահա՛ այն հոգևոր քաղցկեղը, որ թունավորում է ազգերի հոգին, կեղծում ամեն արժեք, կասկածի տակ դնում էթիկական ամեն ճշմարտություն, տրորում ազգային ամեն հեղինակություն և ծիծաղելի հայտարարում մարդկային ամեն սրբություն, կատարյալ դարձնելով մարդկային էակի վերջնական նավաբեկությունը:

Այդ ահավոր ախտով բռնվածները - առաջին հերթին ցեղային անլիարժեքությամբ տառապողները - հիմարանում են ազգովին, խորթանում, ստրկանում, իրենց իսկ հայրենիքում ձեռքից հանելով սեփական ճակատագրի ղեկը:

Հոգևոր միությունը խախտված նման հասարակության մեջ անհատը՝ անհաղորդ ցեղին, իր ազգային ընդհանրության՝ ճանաչում է մի հատիկ իրականություն միայն - նյութակա՛նը, ժխտում ամեն կարգի գերագույն արժեք և բարոյական պատասխանատվություն: Նման հասարակության մեջ բարոյապես հրեշանում է անհատը և դառնում գործակալը իր ազգայինին սպառնացող վատասերումին:

Ուշի ուշով դիտեք նման ազգերի կյանքը և պիտի տեսնեք, որ այդ դժբախտներին ամեն բանից առաջ պակասում է մի մեծ առաջնորդող գաղափար, մի մահացու պակաս, որի դեպքում քաղում երկրորդական պարագիտային գաղափարներ շարունակում են ծծել այդ ազգերի հոգևոր կորովը, նրանց ուժերը: Այդ երկրներում իշխում են միջակությունը, տգիտությունն ու նախանձը - բռնակալություններից ամենակործանարարն ու ամոթալին:

* * *

Նման ժողովուրդների ճշմարիտ փրկությունը սկսվում է այն վայրկյանից, երբ մի մեծ և դինամիկական գաղափար, մի արև-գաղափար գալիս է իրեն ենթարկելու գոյություն ունեցող բոլոր երկրորդական ու երրորդական գաղափարները:

Կա՞ մեծ գաղափարը - դա ասել է՝ այլևս վե՛րջ խոտոր ճամբաներին, անպտուղ ճիգերին, խարխափումներին, ներքին թշնամանքի, իրարակերության:

Նման գաղափարը՝ միշտ էլ վերանորոգչական՝ իր հետ բերում է խոր հավատ, լավատեսություն, անսպառ կորով, ոգու լիություն, միության ծարավ, որով և՝ վերակառուցում է քանդիչ ուժերի կողմից պառակտված ազգը:

Այդ մեծ, փրկարար գաղափարը հայ կյանքում հանդիսանում է ցեղակրոնությունը, որի միջոցով միայն կարելի պիտի լինի պառակտված ժողովուրդը վերածել ազգի, փրկելով վերջինը իր բացասական տարրերի չարաշահությունից:

Ցեղաշեղ խուժանավարը - ծնունդ հոգեբանությամբ սեմիթականացած կուսակցությունների - հասարակության մեջ փնտրում է տգետը, միամիտը, չարարվեստը և նրանց տկարության վրա կառուցում իր հոգևոր իշխանությունը: Ցեղավարն, ընդհակառակը, իր ժողովուրդի ծոցի մեջ փնտրում է հայորեն և մարդկորեն անշահասերն ու առաքինին և նրանց վստահում ազգի գործը, դատը, ճակատագիրը:

Մեր իրականության մեջ ցեղակրոնությունը լույսի տակ գրեց *հայորեն չարն ու բարին,* արժեքավորն ու անարժեքը և հենց այդ է պատճառը, որ չարությամբ ու կեղծիքով գործողները թշնամացրեցին նրան:

Հի՛ն է, աշխարհի չափ հին է այդ երևույթը: Մեր երկրագնդի վրա ամենամեծ գաղափարը ունեցել է իր մանր թշնամիները: Տարբեր ճակատագիր չէր կարող ունենալ նաև ցեղակրոնությունը, որ ասել է՝ ցեղածգտում, ցեղանմանում, հավատարմությունն մեր սեփական էության:

Մեզ թշնամացրեցին՝

Նրա՛նք, որոնց մասին երկու հազրամյակ առաջ ասել է Նազովրեցին՝ «Միայն նա կհասկանա, որին տրված է հասկանալ»:

-Նրանք որոնց համար ազգ պառակտելը համազոր չէ ազգասպանության - կուսակցականացածները:

-Եվ նրանք, որոնք մեզ դեռ չեն հասկանում, որովհետև զուրկ են հասարակագիտական անհրաժեշտ պատրաստությունից:

Մենք հայորեն ցավում ենք Նազովրեցու կողմից աստվածորեն արգահատված դժբախտի համար, որին տրված չէ մեզ հետ համազգալ ցեղը և հարազատել մեր քարոզած այն ճշմարտությունը, թե *առանց ցեղապրումի չկա վերանորոգում, չկա ճշմարիտ մշակույթ, իսկ առանց այդ վերջինին մեզ նման ոգեսպառ ժողովուրդների համար կա ու կմնա ստույգ մահը:*

Մենք միամիտ չենք լավ բան սպասելու հատվածականացածներից, որոնցից ամենահետինը կարող է Հայաստանի կեսի կործանման պատճառ դառնալ և ոչ միայն անպատիժ մնալ, այլև խոսելու ազգի անունից:

Մեր խոսքը ուղղված է միայն նրանց - հայ երիտասարդության կուսակցական ախտից զերծ մնացած այն իննսուն տոկոսին, որ վաղուց է ճշմարտել, թե հայ կյանքի մահաբեր քաոսի հաղթահարումը ու հայ մարդու վերանորոգումը հնարավոր է միայն ցեղակրոնության միջոցով:

«Ռազմիկ», 1943, թիվ 159:

ՀԵՐՈՍԸ ԵՎ ՀԵՐՈՍԱԿԱՆԸ[65]

(Խորհրդածություններ)

Ազգերն իրենց հայրենիքի գոյությունը մարդկության առջև արդարացնում են իրենց հերոսների մահով, հերոսներ, որոնց համար մահը հաղթանակ ու հարություն է միա-ժամանակ:

* * *

Հերոսը - դա հավիտենականի կրողն ու սպասավորն է մեր անցավոր կյանքում:

* * *

Մարդս հերոսանում է աշխարհի հաղթահարումով, այսինքն՝ երբ հաջողվում է աշխարհին հակադրել իր հաղթական ինքնագիտակցությունը՝ դառնալով հող, իբրև մար-մին, պիտի հավերժանա որպես ոգի:

* * *

Հաղթանակում, հերոսանում է նա, ով իր մեջ բնությունը ոգուն ենթարկելու աստիճան զորավոր է:

Վախը դադարում է, վտանգը տեղի է տալիս, մահը մեռնում է հենց որ մարդու որդին իր գիտակցության ամբողջ զորությամբ կրկնում է - ե'ս էլ Աստծու որդին եմ:

* * *

Վերացնելով մահվան ու կյանքի միջև գոյություն ունեցող անջրպետը, Նազովրեցին ժխտեց մահը, որովհետև հանդիսացավ հավիտենական սերմացանը ոգու հսկաների՝ սրբերի, նահատակների, հերոսների:

* * *

Հաշտվելով մահվան գաղափարի հետ՝ մարդս դառ-նում է եղբայրն ու զինակիցը այն բոլորի, որոնք մարդ-կային ցեղի պատմության բոլոր դարերում եկել ու անցել են մեր աշխարհով իբրև լույսի, հավատքի և սրի հերոսներ:

* * *

Ներհայեցողության մարդ է հերոսը: Մտատեսաբար՝ նա մի տեսակ շոշափում է իր հավիտենականը և ի տես նրա խանդավառվում՝ անգիտանալով դժվարությունները, վտանգը, մահը:

* * *

Մի' մտածիր հերոսականի մասին, եթե գերագույն պարտականությունների կատարման ժամանակ քեզ համար աշխարհային ամեն բան չի կորցնում իր կարևորությունը:

* * *

Ձիջո՞ւմ - Հերոսի համար չէ դա: Երբ անհրաժեշտ է, նա պիտի չափվի մահվան հետ և ընկնի բյուրեղաբյուրեղ և օծուն ճակատով:

* * *

Հերոսը, ճշմարիտ հերոսը ճանաչում է մի հատիկ վախ՝ «փոքրիկ մահով» մեռնելու վախը:

* * *

Ես հավիտենականը պիտի շահեմ մի վայրկյանի մեջ: Ահա' հերոսական մտածումը, մայրը գերագույն ուրախու-թյան: Այսպես են հաշվում հերոսները:

* * *

Հերոսական են մարդկային այն գործերը միայն, որոնց վրա ժամանակն ու մահը իշխանություն չունին:

* * *

Ի՞նչ երջանկություն - մեռնել այն հուսավառ հավատ-քով, որ քո աճյունից շանթանման հերոսներ պիտի ծնին:

«Ազատ Հայաստան», Բեռլին, 1943, թիվ 2/3:

ՄԻ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԱՎԱՐ Գ. ՆԺԴԵՀԻ ՀԵՏ

- Պատերազմ է, և մութ ուժերը վերստին դավում են մեր գոյության և ազգային համբավի դեմ, բայցևայնպես՝ գաղութահայը իրերի այդ դրու-թյան մեջ իսկ՝ անհրաժեշտ ցեղային զգաստությունը ցույց չի՛ տալիս: Ինչո՞ւ այդպես:

- «Ձիրար կխածանեին և իրարու կչարաբանեին ու կենեգեին»:

Հայոց պատմությունը այդ բառերով է բնութագրել Ներսես Մեծի ժամանակաշրջանի հոգեվիճակը: Ամոթախառն դառնությամբ պիտի հաստատագրել, որ այդ շրջանի և օրվա գաղութահայության հոգեվիճակների միջև, ըստ էության, տարբերություն գրեթե գոյություն չունի: Հոգեբանությունը նույն է և՛ այսօր. տարբեր են նրա արտահայտության ձևերը միայն:

- Որո՞նք են այդ հոգեվիճակի պատճառները:

- ա) Ստրկության դարերի առաջացրած հոգեկան ախտերը, որ պիտի չկարողանար դարմանել հայոց հեղափոխությունը: Այդ վերջինը, դժբախտաբար, չեղավ ներքին հոգեփոխիչ հեղափոխություն, միաժամանակ, և այդ իսկ պատճառով, մեր ժողովրդի մեծամասնությունը մնաց պաղ և հաճախ՝ թշնամի դեպի մեր կուսակցությունները, մնաց առանց վերածնունդի, չվերանորոգված:

բ) Օտար լծերի ազդեցությունը հայն զգալիորեն խորթացրել է իր էությունից, տկարացրել նրա ցեղային նկարագիրը:

գ) Մեր ստրկությանը միշտ էլ ընկերացած են եղել ջարդն ու հալածանքը: Եվ այդ այդպես - Սասանյան Արտաշիր թագավորից մինչև հայոց նորագույն եղեռնը: Մեր հայրենիքին տիրող բոլոր թշնամիները - թեև իրար օտար ցեղով, կրոնով, ժամանակաշրջանով - հայ ժողովրդի կենսաբանական ապագան վտանգելու և իրենց իշխանությունը տևականացնելու հաշիվներով՝ պարբերաբար ոչնչացրել են նրա ընտրանին, նրա ամենակենսունակ և վարիչ տարրերը: Գիտենք, որ ընտրանիի պակասի պատճառով, ժողովուրդները իրենց կրած ամեն մի պարտությունից հետո, հեշտությամբ դառնում են պարտվողական: Այդպիսին է օրվա հայը, և հենց դրանով պիտի բացատրել նրա օրվա կեցվածքը: Քաղաքական և հոգեբանական հոռետեսությամբ է համակված նա:

դ) Իբրև արդյունք ջարդերի և հալածանքների՝ տեղի են ունեցել պարբերական բռնագաղթեր, որով՝ հայը զրկվելով իր բնահայրենական միջավայրից, հարկադրվել է հարմարվել օտար միջավայրերի: Գիտենք - կենսաբանությունը վաղուց է հաստատել - որ ամեն հարմարում տեղի է ունենում ի վնաս հարմարվողի:

Ցեղորեն՝ գունատված է օրվա հայը:

ե) Չկան անթերի ժողովուրդներ: Անթերի չէ և հայը: Մեր նկարագրի որոշ գծերը մասամբ պետք է վերագրել մեր երկրի տեղագրությանը, որ պատմական անցյալում անկարելի դարձրեց հայ նախարարական տներն հոգեբանորեն միատարրելու - ազգային մի ամբողջության վերածելու գործը: Եվ այդ է պատճառը, որ մեր պատմության ամբողջ ընթացքում մեր արտաքին թշնամիները իրենց դեմ ծառացած չտեսան հայությունը՝ միաճակատ և միաբանակ:

զ) Հնագույն այլ ժողովուրդների, նվազ թե առավել չափով, հայը ևս տուրք պիտի տար արդի քաղաքակրթության վատասերիչ ազդեցությանը: Կենսաբանորեն տկարացել է օրվա հայը - տկարացել է նրա կենսազորությունը:

Ահա՛, մոտավորապես, այն գլխավոր թերությունները - որոնք արդի հոգեբանության և հասարակագիտության օրենքների և սկզբունքների լույսի տակ քննելով միայն կարելի է արմատագիտորեն հասկանալ օրվա հայության հոգեվիճակը:

- Ինչպե՞ս կարող ենք սահմանել մեր ազգային հարցադրությունը - այսինքն՝ մեր ժողովրդի ճակատագիրը շոշափող բոլոր խնդիրները և նրանց լուծումները, որոնք կոչված են ծառայելու իբրև Ազգային Հանգանակ հայության համար:

- Պաշտպանություն՝ ա) մեր ժողովրդի ֆիզիկական գոյության, բ) մեր ցեղային դիմագծության, գ) մեր ազգային պատվի - ահա՛ այն հիմնական խնդիրները, որոնց դրական լուծումով միայն կարող ենք պահել մեր տեղը, դիմագծությունն ու բարոյականը մարդկության ընտանիքում:

- Ի՞նչ միջոցներով կարող են լուծվել մեր գոյության հետ կապված այդ խնդիրները:

- Վերանորոգմա՛մբ, միայն և միմիայն վերանորոգմամբ: Իսկ վերանորոգվել նշանակում է՝ վերստին դառնալ ա՛յն, ինչ որ էինք և ինչ որ չենք այսօր: Դա նշանակում է՝ ինքնանալ, դառնալ ինքնատեր, տե՛ր իր ցեղային էության: Վերանորոգչականն էապես նոր բան չի՛ ավելացնում իր ժողովրդի էությանը, նա վերականգնում է այն, որ խորապես դրված է նրա բնակչության մեջ՝ իբրև ցեղային ժառանգականություն: Էականը՝ վերանորոգչականի համար հայ մարդկանց միջև գոյություն ունեցող ընդհանրականն է, միացուցիչը - իմա՛ ցեղայինը, և ո՛չ մի դեպքում այն, որ զատում, բաժանում է ժողովրդին և այն կազմող անհատներին: Ոգե-

սպառվածին վարում են իր անձնական կրքերն ու հաշիվները: Չվերանորոգված ժողովուրդ - ասել է՝ առօրյական մանրուքների և իր տկարության գերի ժողովուրդ: Վերանորոգչական շնչից զուրկ է օրվա հայ խոսքը, հրապարակախոսությունը, և այդ իսկ պատճառով դա քանդիչ է, պառակտիչ:

Պղծաբանում է նա, ով խոսում է համերաշխության մասին, բայց դեմ է վերանորոգչական շարժմանը: Դե՞մ ես վերանորոգման - դեմ ես կյանքին, դու աշխատում ես մահվան համար: Հայը դեռ չի հասկացել, որ համերաշխության ընդունակ են լայնախոհ և բարեշունչ անհատները միայն, իսկ այդպիսին դառնում ենք վերանորոգվելով: Հայությունը Հայաստանից դուրս, փրկարար վերանորոգիչներ մատակարարեց զանազան երկրների - Ռուսաստանին՝ Լորիս Մելիքով, Եգիպտոսին՝ Նուբար փաշա, Պարսկաստանին՝ Եփրեմ, և սակայն, ինքը մնաց չվերանորոգված: Ժամանակին հայ կուսակցությունները սատար հանդիսացան Երիտասարդ թուրքերի վերանորոգչականին, որը պիտի նախապատրաստեր քեմալական հաղթանակը՝ ստույգ մահից փրկելով թուրքն ու Թուրքիան: Իսկ այսօր, որոշ հոսանքներ ճղճիմ հաշիվներով, թշնամանում են հայոց վերանորոգչականներին - մի սև ընթացք, որով ավելի ևս խորանում է ամոթանքի մեր ողբերգությունը:

Մեզ համար գիտական է հետևյալ ճշմարտությունը. իր մերձավորին, ազգին և հայրենիքին արդյունապես և անշահասիրորեն ծառայել կարող է միայն վերանորոգված անհատը:

- Ինչո՞վ է հնարավոր վերանորոգումը:

- Դա հնարավոր է ցեղով, ցեղային արժեքներով, ցեղային պատկանելիության զգացումի խոր ապրումով, սեղմ ասած՝ ցեղակրոնությամբ: Իսկ ցեղակրոնություն նշանակում է՝ հավատարմություն նախ մեր ցեղային էության, ապա անցած՝ ու եկող սերունդների և նրանց մեզ ժառանգություն թողած արյան և արժեքների հանդեպ: Հայը դեռ չի՝ գիտակցել, որ ցեղի դեմ գործողը մեղանչում է ոչ միայն հարազատ ժողովրդի, այլև՝ ընդհանրապես կյանքի նվիրականության դեմ: Էականը ցեղակրոնի համար դասակարգայնացած, հարանվանացած, առօրյականացած մակերեսը չի՝, այլ՝ խորքը, ուր ապրում է համահայկականը: Եվ հենց այդ համահայկականն է, որ հայը հային դիտել է տալիս իբրև արյունի և ճակատագրի եղբայր ու իբրև հարազատ:

Իմ ցեղը, իմ ժառանգած էությունը, իմ նախահոգին - ահա՝ տիեզերաբնբռնումի միակ բանալին:

Միայն ցեղն է ընդունակ իրեն ենթարկելու օտար արժեքը, վարդապետությունը, կրոնը:

Ժողովուրդն, ընդհակառակը, անկարող մարսելու փոխառիկ օտարը՝ ինքնախորթանում է: Ժողովուրդը գումարն է ապրող անհատների, ազգը՝ անցած ու գոյ սերունդների - դա ճակատագրի ընդհանրություն է. իսկ ցեղը՝ արյան ընդհանրություն, որ մշտնջենապես պայքարի մեջ է օտար ազդեցությունների դեմ: Ցեղն է մեր ոգու և մարմնի քանդակագործը: Ցեղն աստվածային այն բրուտն է, որ Հայաստանի հողից ստեղծեց մեր մարմինը, հայոց պատմությունից՝ մեր ոգին:

Ժողովուրդների կործանումն արագացնող վատասերումն է անցեղակրոնության պատիժը: Դե՞մ ես ցեղին, ասել է՝ կողմնակից ես ժողովրդիդ ապազգայնացմանը, նրա մահվանը: Ցեղն է ժողովրդի օրգանական միության միակ գործոնը:

Ընդունել ցեղի գերագահությունը ժողովրդի վրա, նշանակում է՝ ընդունել հավիտենականի գերագահությունը առօրյայի, ոգուն նյութի վրա: Եվ միայն այսպիսով է հնարավոր հոգեբանորեն միատարրել, ամբողջացնել մի կոտորակված ժողովուրդ, ինչպիսին է հայությունը, և այն վերածել ազգի: Հավիտենականն է իմաստնավորում անցավորը, առօրյան և վերանորոգում այն: Չմոռանա՞նք այդ:

- Ձեր կարծիքով ի՞նչն է, որ դժուարացնում է և ի՞նչը կարող է հեշտացնել հայոց վերանորոգումը:

- Ի զուր սկզբունք, գիտականություն եք փնտրում մեր կյանքում - այնտեղ դուք կլսեք կարծիքներ, միայն կարծիքներ: Ուզում եմ ասել, որ մեր ժողովուրդը շարունակում է ապրել առանց աշխարհայեցողության: Բացահայտ է, որ օրգանապես ամբողջական մի պատկերացում աշխարհի և իր սեփական գոյության իմաստի մասին պիտի հեշտացներ իր պարբերական վերանորոգումները, որով և՝ իր ինքնապաշտպանությունը: Ճշտելով մեր վերաբերմունքը դեպի մեր ներքին մարդը՝ մեր անձը, մենք էապես ճշտում ենք մեր վերաբերմունքը դեպի մեր նմանները, մեր ցեղը, մեր արարիչը: Այդ ակտին ընդունակ է իմաստասիրորեն հիմնավորված աշխարհայեցողության տերը միայն: Ժողովուրդները այն չափով են ստեղծագործ և ինքնապաշտպանունակ, ինչ չափով որ նրանք տեր են մի կուռ և վսեմ աշխարհայեցողության: Դա է իմաստավորում, ներդաշնակում և նպատակահարմարորեն ուղղում ժողովուրդների առած քայլերը:

Իմաստասիրություն ստեղծել և նրա միջոցով աշխարհայեցողություն կառուցել - ահա՝ մարդկային մտքի անդադրում շարժումը: Աշխարհայեցողության - այդ լուսարձակի - պակասի պատճառով հայությունը շարունակում է մնալ ենթակա չար պատահականության, և այդ իսկ պատճառով հաճախ աղետվում է: Աշխարհայեցողությունը նրան վերաքննել ու վերաիմաստավորել պիտի տա մի շարք հասկացողություններ որով և՝ պիտի արագացնի նրա վերանորոգումը:

- Որո՞նք են այդ հասկացողությունները:

<u>Կրոն</u>:

Կրոնականության պակաս, ասել է՝ աստվածության, սրբության զգացումի պակաս, որի պատճառով հոգևոր շփոթի է մատնված օրվա մարդկությունը:

Հակառակ իր ստեղծած մեծ քաղաքակրթության՝ մարդը այսօր էլ դեռ ավելի կավ է, քան՝ ոգի: Այդ իսկ պատճառով, նա հաճախ առհավորեն մղվում է ընդվզելու այն բոլոր զսպիչ արժեքների, ճշմարտության և սրբությունների դեմ, որոնք կոչված են սանձված պահելու անասունն ու անասնականությունը նրա մեջ: Եվ միշտ էլ բարոյապես տկարացած մարդը իր անկումն արդարացնելու հաշվով, փնտրել է մի տեսություն, մի դավանանք, մի իմաստասիրություն: Մեր օրերի հակակրոն հովերը պիտի բացատրել մարդկային տիպի հոգևոր անկատարելությամբ: Առողջ հոգեվիճակ չէ՝ անկրոնությունը: Մարդ միշտ էլ նախ հեռանում է իր նմաններից և ապա հետո՝ իր Աստծուց: Ո՛վ հեռանում է կրոնից՝ անձնասպանորեն կտրում է իր հոգևոր զարկերակը: Իր արարչի դեմ գործողը պիտի չքաշվի գործել և իր նմանների դեմ: Կրոնը - իմաստասիրորեն առնված - միայն արարածի և Արարչի հարաբերություն չէ՝, այլև՝ մարդու և մարդու, անհատի և հավաքականության, անձի և ճշմարտության հարաբերություն: Կույր պատահականության ծնունդ չէ՝ տիեզերքը, և ես միակը չեմ տիեզերական անսահմանության մեջ - այդ սփոփարար հավատքն է տալիս մեզ կրոնը: Կրոնաշունչ է, ընդհանրապես, կյանքի մասին իդեալիստական ըմբռնում ունեցող ամեն մարդ: Նա, ո՛վ ընդունում է Աստծո գոյությունը՝ ընդունում է նաև իր պարտականությունը հանդեպ գերագույն իրականության - ազգ, հայրենիք, պետություն: Ուզո՞ւմ եք խորապես ճանաչել մեկին՝ խոսե՛ք և խոսեցրե՛ք նրան Աստծոյ մասին, և նա իր պաշտամունքի կամ անհավատության միջոցով պիտի մատնի իր հոգևոր հասակը: Անաստվա՞ծ ես, ասել է՝ զուրկ ես սրբության նվիրումից, պարտականության զգացումից. ասել է՝ վաղ թե ուշ դու պիտի դավաճանես նմաններիդ: Կեղծ եվրոպականության գերի՝ հայ կուսակցությունները կրոնական պաղություն մտցրին մեր ժողովրդի մեջ: Մարդկության թշնամի է ամեն «գիտնական», որ թութակում է «գիտությունը ո՛չ կրոն ունի, ո՛չ էլ հայրենիք»: Մեր Երկրագնդի վրա անհայրենիք, անցեղ և անաստված է մարդկային տկարությունը, ստորությունը միայն:

Գիտություն, կրոն՝ սրանք թշնամիներ չեն, այլ՝ զինակիցներ, որոնցից մեկը գործում է մտքի, մյուսը՝ սրտի միջոցով: Չարություն է շնչում ամեն անկրոն: Մարդկային անհատը միայն ա՛յն չափով է ընկերային, ինչ չափով որ դա կրոնաշունչ է: Կրոնապես տկարացա՞վ մարդկությունը - և ահա՛ այլևս երկինք չունի նա. փլվեց նրա հույսերի աշխարհը. այսօր այնտեղ էլ մահն է գործում իր դեմ:

<u>Մշակույթ</u>:

Հայացքը երկնքից չկտրող սուրբը, կռվից վերադարձող հաղթական զինվորը, իր ժողովրդի ցավերն և ուրախությունները երգի վերածող աշուղը, արվեստագետը՝ գեղեցիկի երկրպագու, իմաստասերը, պետական գործիչը, բարերարը, գիտության մարդը - սրանք բոլորը, իրենց միաբան և ստեղծագործ դեգերումներով, նպաստում են իրենց ժողովրդի մշակույթին: Արժեքներ՝ գիտական, գեղարվեստական, բարոյական - ահա՛ մշակույթը: Ավելի ճիշտը՝ դա արժեքների նվիրապետորեն կազմակերպված ամբողջություն է:

Սրբագրե՛նք այն մեծ մոլորությունը, ըստ որի՝ գոյություն ունի մի ընդհանուր, միջազգային, համամարդկային մշակույթ: Միջազգային է քաղաքակրթությունը, նաև՛ ապակրոն, և այդ է պատճառը, որ դա խեղդում է մշակույթը: Կեղծի՛ք է նման մշակույթը, անգո՛յ: Ճշմարիտ մշակույթը միշտ էլ կրում է տվյալ ժողովրդի անհատականության կնիքը: Ամեն ժողովուրդ՝ իբրև անկրկնելի անհատականություն, ունի իր զարգացման - իր ինքնակառուցման և ինքնահայտնաբերման ուրույն ճամբաները: Օտար մշակութային արժեքների յուրացումը - մասնավորապես նրա արտաքին փայլի, նրա բացասական կողմերի յուրացումը - տկարացնում է յուրացնողի ազգային ոգին: Չկա՛ մշակույթ առանց կրոնականության զգացումի: Ցամաքում են նրա ստեղծագործ խանդի աղբյուրները, հենց որ դա դառնում է նյութապաշտիկ: Հայը պիտի դավանի հոգու առաջնությունը նյութի նկատմամբ, և աշխատի որ հայ մշակույթը ո՛չ թե տոնվի տարին մի անգամ, այլ՝ իբրև հոգևոր արժեքների ամբողջություն՝ ապրվի ամե՛ն օր: Ժողովուրդներն իրենց մշակույթի մեջ դնում են իրենց կատարելության ձգտումը:

Մարդը այն է հոգեպես, ինչ որ է իր ստեղծած մշակույթը:

Մի այլ մոլորություն: Արդյո՞ք ամեն ժողովուրդ կուլտուրական է, քանզի լեզու և գրականություն ունի: Ո՛չ, իհարկե: Ճշմարտապես կուլտուրական կոչվելու համար բավական չեն գրողն ու գիրքը, գիտնականն ու գիտությունը: Կասկածելի է այն մշակույթը, որի ստեղծիչի հոգևոր կյանքում ավելի փուշ ու տատասկ են աճում, քան՝ բարության ծաղիկներ: Բնավ կուլտուրական չէ՝ ներքին իրարակերությամբ բռնված ժողովուրդը: Մշակույթը ենթադրում է սրտի ջերմություն, մարդկայնություն, խղճմտանքի արթնություն, մտածումի և հարաբերության ազնվություն, նպատակների վսեմություն - արժեքներ, որոնց պակասի պատճառով օրվա հայ կյանքը վերածվել է դժոխքի:

Մինչև որ մեր զույգ սրբերին՝ Սահակ-Մեսրոպին չմիանա մտածումի, ապրումի և գործի ազնվությունը՝ պիտի չկարողանամ առանց ամոթախառն ցավի մեզ կուլտուրական անվանել:

<u>Դաստիարակություն</u>:

Ազգային նկարագրերի և ճակատագրերի տարբերությունը ենթադրում է վախճանաբանությունների տարբերություն: Գոյություն

չունի՛ և չի՛ կարող ունենալ կրթական ընդհանուր իդեալ: Ամեն ժողովուրդ իր կրթական իդեալն ունի, որ բխում է իր ոգուց և կարիքներից: Մեռյալ միակերպություն չի՛ վերցնում դաստիարակությունը: Ժողովուրդներն իրենց աշակերտող սերունդը պատրաստում են համաձայն իրենց հոգեբանության և կարիքների: Ազգային չէ՛ հումանիտարիստական կոչված դաստիարակությունը: Հայրենատիրության հզոր կամքով օժտված ցեղամա՛րդը պիտի լինի անհայրենիք հայ դպրոցի իդեալը: Լուսավորությունն առանց ազգային մեծ նվիրումի՝ անհատին դարձնում է հոռետես, եսական և ցեղորեն անպետք: Հայ դպրոցը չգիտի՝, չգիտի՝ ամենից էականը, որ հող, թե հոգի մշակելու և նրանց տիրելու համար նախապայման է նրանց խորապես ճանաչելը: Ցեղաճանա՞չ են օրվա մեր ուսուցիչները: Խոսքս բացառությունների մասին չէ:

Մարդկությունն:

Փորձեցե՛ք ազգային ոգին դատարկել այն բովանդակությունից, որ պատմությունը կուտակել է նրանում, և դուք ազգը կվերածեք մի դիմազուրկ զանգվածի:

Մարդ և մարդկություն հասկացողություններն, ընդհանրապես, որոշ իմաստ են ստանում միայն այս կամ այն ազգի ոգու միջոցով: Ազգային հանճարն է որոշ բովանդակություն հաղորդում համամարդ--կայինին: Ազգության փլատակների վրա ճշմարիտ մշակույթ չի՛ կարող ծաղկել: Տվյալ ազգությունից դուրս՝ կեղծ են մարդն ու մարդկությունը: Մարդկայինը ազգայինին ներդաշնակելով՝ շահում է թե՛ մեկը, թե՛ մյուսը: Եվ, ընդհակառակը, ազգայինը «համամարդկայինին» զոհելով՝ կորցնում է թե՛ ազգը, թե՛ մարդկությունը: Ո՛չ թե մարդն, ընդհանրապես, որ անգոյ մի բան է, այլ՝ դիմագծորեն ազգային մարդը, որ խորհում էր ազգության միջոցով. մարդը, որ բովանդակում է իր հայրենի բնությունն ու պատմությունը: Օրվա մարդը, աշխարհաքաղաքացիական խորթացուցիչ վարդապետությունների ազդեցության տակ, կորցնելու վրա է իր իրական հոգևոր կերպարանքը, իր բնացեղային էությունը: Անհրաժեշտ է մի արմատական հեղափոխություն, մի դարձ անարյուն վերացական մարդկայնությունից՝ դեպի օրգանականը, դեպի ցեղամարդը - իրակա՛ն մարդը, որն իր հողին և ցեղին կապված է իր էության բոլո՛ր թելերով:

«Եվրոպական մարդկություն» (ԺԸ. և ԺԹ. դարերի), «Համաշխարհային մարդկություն» (Ի. դարի) - ես չեմ հավատում ո՛չ մեկին, ո՛չ էլ մյուսին: Եթե գոյություն ունեցած լիներ եվրոպական մարդկություն՝ տեղի պիտի չունենային եվրոպականության համար դարերով ասիական խավար ուժերի դեմ ճակատած մեր ժողովրդի աննախընթաց ջարդերը:

Անհատ:

Դասակարգային սոցիալիզմը, քարոզելով սեր դեպի հեռավորը - երբ համազգի մերձավորների մեծագույն մասը վատասերում էր թշվառության մեջ - հակամարտության մեջ դրեց անհատն ու հավաքականությունը, և այսպիսով խախտեց ազգն իբրև հոգևոր ամբողջություն:

Անհա՛տ, դու ազատ ես երջանկությունդ կառուցելու անգա՛մ նմանեներիդ դժբախտության վրա - այս էր երեկ և է՛, մասամբ, և այսօր: Իրերի այդ անբնական՝ ու անբարոյական դրության մեջ, մարդկային բարոյական միտքը որդեգրեց ընդհանրապաշտությունը (ունիվերսալիզմը) իբրև հակոտնյա՝ անհատապաշտական լիբերալիզմի:

Անհա՛տ, ուժերդ միացրո՛ւ արյունակիցներիդ ուժերին՝ հանուն մեծ ամբողջի երջանկության - ա՛յս է օրվա և վաղվա ընկերային հրամայականը: Այլ խոսքով՝ անհատն իր բարիքը պիտի փնտրի հանրության բարորության մեջ: Ո՛վ հակադրում է անհատն ընդհանրության՝ մեղանչում է թե՛ մեկի, թե՛ մյուսի դեմ: Ազգի կյանքից, բովանդակությունից դուրս ոչինչ է անհատը:

Ընդհանրականությունն է կամուրջ ծգում անհատների էության միջև: Եվ ոգեխառնվելով միայն անհատը դառնում է հոգևոր անձնավորություն - արժեքաստեղծ ուժ: Դասակարգային վարդապետությունները, պառակտելով ազգը, այն վերածում են դիմազուրկ զանգվածների: Զանգվածն սպանում է ցեղազգացումը, առանց որի անհատի մեջ մեռնում է նաև ազգականության զգացումը: Ահա՛ թե ինչո՛ւ մենք ժխտում ենք լիբերալիստորեն խորհող և գործող անհատն ու դասա-կարգը և դավանում ազգն իբրև արժեքային ամբողջություն:

Ընկերային խնդիր:

Ո՛չ թե սոցիալիստը, այլ՝ սոցիալական մարդը: Լիբերալիզմը - ֆրանսիական հեղափոխության այդ թունավոր պտուղը պղծեց մարդկային բոլոր հոգևոր հասկացողությունները: Դա օրինականացրեց աղքատությունը, որով և՝ ընկերային քողարկված անբարոյականությունը: Միևնույն ժողովրդի ծոցի մեջ մերձավորին փշրանք նետելը հռչակեց բարեգործություն: Անհատի իմ իրավունքը և՝ քո իրավունքն է, ինչպես քո պարտականությունը նաև ի՛մ պարտականությունն է:

Ապրելու և անկաշկանդ կատարելագործուելու իմ բնական իրավունքը պայմանավորվում է իմ սեփական պարտականությամբ՝ հարգելու նմաններիս նույն իրավունքը: Հավասարապես հակաընկերային են այն անհատներն ու ընկերային խավերը, որոնք ասում են իրենց մասին՝ «ես ամեն ինչ եմ» կամ՝ «ես ոչինչ եմ»: Ազգերի կյանքում միայն մեծ ամբողջն է «ամեն ինչ», և ո՛չ ոք իրավունք ունի լինելու «ոչինչ»: Ո՛չ թե սոցիալիստը, այլ՝ սոցիալական անհատը - ահա՛ նոր բարոյականությունը, որով լուծվում է ընկերային խնդիրը և վերջ տրվում ժողովուրդների ներքին իրարակերությանը:

Մտածողություն:

Մեր երկրի մարդը նա՛խ մտածում է և հետո խոսում - հայկական այդ մի հատիկ առածը կբավարարի հաստատելու արիականությունը մեր ցեղի և մեր մտածողությանը: Ցեղորեն առողջ հայի մեջ խոր է հարգանքը դեպի միտքը: Նրա մտածողությունը օրգանական է, իր խորքում՝ բարոյական: Դա իր սնունդն առնում է գոյության արմատներից, և հենց սրանում է գաղտնիքը իր արտահայտության միջոցների անբավ հարստության:

Դժբախտաբար, ազդեցությունները իրենց կնիքը պիտի դնեին մեր մտածողության վրա՝ մասնավորապես Հայաստանից դուրս: Ուշացավ, շատ ուշացավ մեր ազատագրումն օտար մտածողությունից:

Արդարև, աղքատ չէ՛ հայ ուղեղը, բայց վերջին տասնամյակներում հայությունը մեծ իմաստուններ - Խրիմյաններ չծնեց: Հոգևորապես պաղ է հայ մտածողությունը - պաղ է հայ մարդու մտքի կորովը, դրա համար էլ դա դժվարանում է թափանցել իրերի և էությունների խորքը: Նրա մտածողության պրոցեսը տեղի է ունենում կրքերի ճնշման տակ: Կուսակցական նեղմտությունն է վարում ամեն մի եզրակացությունը: Մեր կյանքում, հրապարակի վրա, հաճախ տեսնում ենք կեղծիքը՝ ճշմարտության քղամիդը հագած: Առավելապես կուսակցությունները զարգացրին մտքի այդ աճպարարությունը:

Հայ մարդն այսօր ավելի երևակայություն ու կիրք է, քան՝ իմացականություն, իսկ նմանը - անընդունակ առարկայական ճշմարտության - հեշտությամբ կտրվում է իրականությունից և ամեն ինչ կառուցում օդի մեջ:

Ազգերն իրենց ճակատագիրը բարվոքելու մի հատիկ միջոց ունեն - պատճառագիտական մտածողությունը: Այդ մտածելակերպն է պակասում օրվա հային: Այդ պակասով է պայմանավորվում մեր դժբախտությունը: Գիտական է այդ մտածողությունը: Անհատներն ու հավաքականությունները սրա միջոցով են ազդում անցքերի ընթացքի վրա և իրենց զերծ պահում դիպվածի հարվածներից:

Ոգեսպառվածի մտածողությունը ժխտական է լինում:

Այդպիսին է օրվա հայկականը: Ազգի հետ և ազգի առջև խոսողի համար ներելի չէ՛ մտածումի ստորությունը:

«Սովորեցե՛ք լավ մտածել - ա՛յդ է բարոյականի հիմքը»:

Սովորեցե՛ք հայորեն մտածել - դա՛ է ազգային բարոյականի հիմքը:

Պատմություն:

Մի ժողովրդի ինքնագիտակցումը հնարավոր է միայն իր պատմության միջոցով:

Ժողովուրդներն այն չափով են ազգ, ինչ չափով որ բյուրեղացած և զորավոր է այդ ինքնագիտակցությունը: Չկա՛ ավելի մեծ

հանցանք, ուրացում, քան՝ իր սեփական պատմության անծանոթ լինելը: Նմանը - զուրկ պատմական զգացումից և հիշողությունից - ազգ չէ: Սեփական պատմությունն է մեր իմաստուն խորհրդականը, մեր ոգու դայակը, մեր ազգային խղճմտանքի վարիչը:

Իր պատմության ծանոթը երկու բան լավապես գիտի - նա գիտի, թե ի՞նչ կարող է անել և ի՞նչ պետք է անել՝ Հայն ու Հայաստանը հավերժացնելու համար:

Ցեղորեն անինքնաճանաչին պակասում են հենց այդ զույգ բաները, որ ասել է՝ սեփական ճակատագրի դասերից օգտվելու և սեփական հայրենիքին օգտակար լինելու կարելիությունը:

Քանի դեռ մեր ժողովրդին տրված չէ՛ իր պատմության իմաստասիրությունը - նա պիտի չկարողանա օգտվել նրանից: Հայությանը ճակատագրական ծառայություն մատուցած կլինի նա, ո՛վ կիմաստասիրի նրա պատմությունը:

Կուսակցականություն:

Մի ամբողջ հիսնամյակ է, ինչ հայությունը միջկուսակցական պայքարներով, ներքին ճակատի վրա, սպառում է իր ուժերը և բաց աչքով ծառայում իր գոյության թշնամիներին: Մեր վերջին կիսադարն եկավ հաստատելու, որ հայ մարդը, ընդհանրապես, ատակ չէ՛ կուսակցականանալու՝ առանց չարիք դառնալու իր ժողովրդի համար: Այդ իրողությունը ունի իր հոգեբանական պատճառները, իր բացատրությունը: Անշուշտ, ճիվաղաբարք չէ՛ ամեն կուսակցականացած հայ, բայց միջկուսակցական պայքարներում նա հեշտությամբ դառնում է այդպիսին: Տուրք տալով կեղծ եվրոպականության՝ հայ կուսակցությունները իրենց թշնամուն և հակառակորդին փնտրեցին իրենց ժողովրդի ծոցի մեջ, և խախտելով ազգի հոգևոր ամբողջականությունը՝ թուլացրեցին ճակատագրի կապը արյունակիցների միջև: Միջկուսակցական պայքարատենչությունը ենթակաների մեջ մշակեց բարոյական անխտրականություն, որով սովորական դարձան պարբերական սևացումները, դավերը, անգամ՝ սպանությունները: Շոյելով կուսակցական պատկանելության զգացումը՝ կուսակցությունները իրենց հետևորդների մեջ տկարացրին ցեղազգային գիտակցությունը: Տկարացավ հայկականը ի հաշիվ խմբակցականի: Նրանք դարձան փակ հասարակություններ՝ հասարակության մեջ, որով՝ մի զատիչ պատ իրենց և ազգի կենդանի ուժերի միջև:

Դարձասեր հայը՝ կուսակցականանալով՝ դառնում է անզեղջ, քանզի կուսակցության մեջ նա կորցնում է մտածողության ու խղճմտանքի անկախությունը և սկսում խորհել, զգալ և գործել կանոնադրորեն:

Համակ ատելություն է օրվա կուսակցականությունը: Ծիծաղ և արգահատանք են շարժում հայ կուսակցության երեմիականները հա-

մերաշխության մասին: Իմաստասիրորեն տգետ՝ նրանք չեն հասկանում, որ ամեն ատելություն անկարելի է դարձնում ճանաչումը, որով և՝ իրար հասկանալը: Բերգսոնյան փիլիսոփայության հայտնաբերած այդ ճշմարտությանը դեռ անծանոթ է հայ կուսակցականը:

Հասկանա՛նք, վերջապես, քանի ուշ չէ, հասկանա՛նք, որ հայը պատճառ չունի՝ կուսակցականանալու: Իսկ մեր ժողովրդի թվական տկարությունը, մեր հայրենիքի աշխարհագրական դիրքը և երեկվա մեր եղեռնը կբավականացնեն գիտակցելու, որ հայը կուսակցականանալու նաև իրավունք չունի:

Հայրենիք:

Հայրենիք - սկիզբն ու վախճանն է մեր մտածումի, ապրումի և գործի: Երբ մեր շրթունքները մրմնջում են ցեղի մասին, մեր աչքը ցույց է տալիս Հայաստանը: Մենք հավատում ենք Հայաստանին - դա նշանակում է, որ կյանքում սրբազնագույնը մեզ համար Հայրենիքն է: Մենք շնչում, ապրում ենք Հայաստանով, միշտ պատրաստ տառապելու, գործելու և մեռնելու նրա համար: Դա՛ է արժեքների արժեքը մեզ համար: Դա է մեր սրբազան ցավը, կարոտը, ուրախությունը, մեր գոյության իմաստն ու իրավունքը, մեր անմահությունը՝ միաժամանակ:

Ազատությո՞ւն - այո՛, երբ հայրենիորեն և ազատորեն գործելու և կատարելագործվելու կարելիություն կա:

Իրավո՞ւնք - միայն սեփակա՛ն հայրենիքում, ուր արդար իրավունք մեզ տալիս է մեր՝ դեպի նմանները ունեցած պարտականության անթերի կատարումը:

Երջանկությո՞ւն - հայրենազուրկներիս համար՝ Հայաստանից դուրս խաբուսիկ են բոլոր տեսակի երջանկությունները: Երջանկությո՛ւն - մեր ժողովրդի ճակատագիրը բարվոքելու համար թափված, մեր աշխատանքով սրբագործված ուրախության գնով:

Չկա՛, կյանքն ազգին և հայրենիքին պատարագելու չափ մեծ երջանկություն չկա՛ աշխարհում:

Հայրենատիրությո՛ւն- ահա՛ վերանորոգչականի մեր դավանանքը, որի իրականացումը պիտի ուշանա այնքան, որքան ուշացավ մեր ժողովրդի վերանորոգումը:

Երիտասարդ սերունդ:

Ճակատագրական է ամեն մի նոր սերունդ: Ավելի քան այդպիսին է օրվա մեր երիտասարդ սերունդը: Իր ձեռքում է գտնվում ցեղի և հայրենիքի ճակատագիրը. Հայաստանը կլինի կամ չի լինի, և դա կախված է իրենից: Նրանից է կախված - թագավոր թե թափառական ժողովրդի վերածել հայությունը: Ա՛յդ, միայն ա՛յդ գիտակցությամբ ապրող սերունդը կարող է ծառայել իր ցեղի հավիտենականին: Կործանարար ու դժբախտ է անհավատ սերունդը - նա՛, որի համար տիեզերքը անհոգի նյութ և շարժում է միայն: Հավասարապես դժբախտ և արգահատելի է այն սերունդը, որ բավարարվում է օտարության հացով: Մեր նորահասը պիտի յուրացնի հայ վերանորոգչականի դավանանքը - Աստված, ցեղ, հայրենիք, որպեսզի իր ժողովրդի անցյալը, ներկան և ապագան կապակցաբար, ստեղծագործորեն ապրել կարողանա: Նա իր ամբողջ հասակով պիտի նետվի հրապարակ՝ սատարելու հայերի վերանորոգմանը, եթե չի ուզում ապրել, տառապել և մեռնել անհայրենիք:

Ընտրանի:

«Երկրի աղը» - արդա՛ր որակում:

Ոգու ծնունդ՝ դա՛ է ապրեցնում մարդկային ոգին: Կրո՛ղը սրբության, հերոսականի և հոգևոր գեղեցկության զգացումների: Նրա շնորհիվ են զարգանում կրոն, արվեստներ, իմաստասիություն: Նա՛ է կապը հավիտենականի և առօրյայի միջև: Ճշմարի՛տ առաջնորդ, առանց որի ոչինչ են իշխանությունն ու իշխանավորը:

Նրանն է կոչումներից ամենասրբազանը, պատասխանատվություններից ամենամեծը: Ազգերը մի հատիկ ճշմարիտ ազնվականություն ունեն - դա էլ ընտրանին է: Նրա միջոցով են բարձրանում և նրա հետ են ընկնում ազգերը: Հասարակության մեջ շատերը կարող են մեղանչել օրենքի, բարոյականի, հավաքական շահերի դեմ, բայց այդ մեղանչումներից չի՛ խախտվի հանրային բարոյականը, չի՛ անբարոյականանա հասարակությունը: Սակայն, բավական է, որ ընտրանիին պատկանող մեկը կոպտորեն մեղանչեց իր կոչման դեմ - այլևս քանդված համարեք ժողովրդի հավատքը, համարումը, բարոյականը: Ընտրանին իր կյանքի կենդանի օրինակներով է վարում ժողովրդին:

Կրոնապես պա՞ղ է եկեղեցականը՝ հակակրոն է ժողովուրդը:

Հոգեպես էսնա՞ֆ է ուսուցիչը, այլևս կարիք չկա՛ ավելի մեծ դժբախտություն բաղձալ նրա ազգին: Հավիտենականի շնչից՝ զո՞ւրկ է գրողը՝ նա անխուսափելիորեն պիտի դառնա ստորության քարոզիչը:

Պարտվողակա՞ն է զինվորը՝ այլևս նա հեռացել է իր սրբազան առարկայից - հայրենիքից, և վաղն իր ուրացումը կարող է դավաճանության հասցնել:

Շահասե՞ր է ազգային գործիչը՝ նվազ ազգասիրություն ու նվիրում փնտրե՛ք ազգի լայն խավերի մեջ:

Այսպե՛ս է ընտրանին - նա գործում է իր կյանքի օրինակներով:

Եկեղեցական, ուսուցիչ, գրող, գիտնական, զորական, գործիչ - ահա՛ ընտրանին: Սրանց կոչումը հրամայողաբար պահանջում է ամբողջական և ներուժ կյանք:

Օրգանապես ապաքաղաքական է ընտրանին, որով՝ բացարձակապես անկուսակցական պիտի լինի դա:

Շեղվե՞ց իր կոչումից - ժողովրդի անկումը դառնում է անխուսափելի:

Ազգային բարոյական:

Դա է անհրաժեշտ հիմքը ազգի հոգևոր կառույցի, և դրանում է կայանում ազգի իրական ուժը: Կա՞ այդ բարոյականը - կա ազգը. պակասո՞ւմ է դա - նվազում է կարևորությունը բնական գործոնների - ցեղի, հայրենի հողի, ինչպես և ազգություն ստեղծող այլ կարգի ստորոգյալների: Մեր վերաբերմունքը դեպի մեր կենսաբանական արարիչ ցե՛ղը՝ սրանում փնտրե՛ք ազգային բարոյականի արմատը: Ցե՛ղն է ազգի գերագույն օրենսգիրը բարոյական բնագավառում: Ազգային բարոյականը ենթադրում է մի օրինակարգ և հանրապարտադիր ընթացք, որից ամեն շեղում համարվում է հոգևոր մահափորձ ազգի դեմ: Իսկ ընթացքը - ըստ վաղեմագույն մի իմաստասերի - դա այն է աշխարհի համար, ինչ որ է գետանցքը՝ գետի համար: Արդյոք, այսօր խախտված չէ՞ գաղութահայի ազգային բարոյականը: Այդ հարցին պատասխանելու համար, պետք է ճշտել, թե իրենից ի՞նչ է ներկայացնում օրվա հայն իբրև միտք, զգացում և կամք: Ավելի պարզ՝ պետք է ճշտել, թե այսօր ինչպիսի՞ զգացումներ են տիրապետում նրա հոգում: Այդ իմաստով բարոյահասարակագիտական մի վերլուծում տրտմությամբ պիտի համակի ձեզ: Ի՞նչ էինք երեկ: Այդ մասին թող խոսի ինքը՝ դարերի հայը. «Մի տնից չեինք, բայց մի ձենով էինք»: Ցեղորեն բարոյական էր հայը. «Մեջք մեջքի տանք՝ սարեր շուռ տանք»: Սոցիալապես առողջ էր նա. «Հացն Աստծուց, ես էլ հետը, ո՛վ հասնի՝ թող ուտի»: Սոցիալապես արդար էր. «Այն մարդը որ Աստված ունի՝ աղքատ չէ»: Իդեալիստ էր նա. «Հող ու մոխիր կե՛ր, տմարդից հաց մի՛ մուրա»... Ցեղորեն հպարտ էր. «Հայը չհոգնի՝ չի՛ նստի». Օուլության հացը չսիրող է. «Ոտքդ քարին զարնվի՝ խղճմտանքդ քննի՛»: Բարոյապես զգայուն էր. «Իր ծառը ծարավ թողած ուրիշինը ջրողը ո՛չ հարություն ունի, ո՛չ էլ թողություն»: Ազգայնորեն զգաստ էր. «Առյուծը կատվին խեղդել չեմ տա»: Տղամարդ էր հայը:

Ա՛յս էինք երեկ - որակի՛ ազգ:

Մեջբերածս՝ հայկական առածների այդ փոքրիկ ծաղկաքաղը - որի մեջ մեր ժողովուրդը դրել է դարերի իր բարոյա-ազգային փիլիսոփայությունը՝ կբաականացնի հաստատելու, որ ստրկության մեջ, օտար լծերի տակ անգամ մենք եղել ենք ազգային բարոյականով զորավոր ժողովուրդ: Եվ հենց դրանում չէ՞ գաղտնիքը, որ մենք կանք ու կմնանք, իսկ մեզ հասակակից շատ ազգերից մնացել է քարե հիշատակ միայն: Ապա ուրեմն՝ եթե մեր սերունդները մտածեին, ապրեին և գործեին օրվա հայի նման՝ այսօր հայությունից արևի տակ մնացած կլիներ մի սեղմ տապանագիր միայն: Տեսանք, թե ի՛նչ էինք երեկ, զգում ենք, թե ինչ չե՛նք այսօր, և գիտենք, թե ի՛նչ պիտի դառնանք վաղը՝ իբրև ազգ չկորչելու համար:

Ազգային բարոյականի տեսակետից՝ մի Գյուլբենկյան ավելի չարժի, քան՝ Հայաստանի մի գեղջուկ, և մի զորավար, մի ուսուցչապետ, քան՝ մի համեստ արհեստավոր, էականը հավիտենական հայկականությունն է, որ ազգությունը նվիրագործում է իր ամեն մի անդամի մեջ:

Ազգային բարոյականը - ամեն բանից առաջ - պայմանավորվում է մի ժողովրդի ստեղծագործ համերաշխությամբ: Դրսեցի թե տեղացի, իմաստասեր թե անգրագետ, չեզոք թե կուսակցական - հայ մարդիկ են սրանք, որոնց հանդեպ տածածդ պաղությունը կայենության է համազոր: Ներազգային կյանքում սպանում է ո՛չ միայն սուրը, թույնը, այլև՝ անտարբերությունը: Ճակատագրի եղբայր է ամեն հայ: Ավելին՝ ամեն հայ՝ դա դո՛ւ ես - ահա՝ ազգային բարոյականի անխախտելի օրենքը: Այդ օրենքի դեմ մեղանչողը քանդում է իր ազգության հիմքերը, դա թշնամին է իր ազգի: Որակի՛ ազգ էինք երեկ: Չաղետվելու և չկորչելու համար՝ վերստին պիտի դառնանք այդպիսին՝ հրամայողաբա՛ր: Անվերջ որակավորվելու, ազգ դառնալու պրոցեսի մեջ են բոլոր ժողովուրդները: Իբրև ոգու ժողովուրդ՝ մեզ համար ավելի հեշտ է որակավորվել: Աշխատենք դառնալ «թանկարժեք քար», որպեսզի «ծանր կշռվենք և շատ արժեանք»: Դա՛ է պահանջում մեզանից ազգային բարոյականը, մասնավորապես մեր բնաշխարհից դուրս:

Պրոպագանդա:

Զգո՞ւշ, մեկ էլ զգո՞ւշ, դարձյալ զգո՞ւշ, քանզի թշնամիներ ունես և դավադրված ես - ահա՛ արդի քաղաքական պահի հրամայականը հայերիս համար: Մեր ժողովուրդն այսօր ավելի՛ մեծ թվով թշնամիներ ունի, քան ուներ կես դար առաջ: Եվ պատճառ չունենք կարծելու, թե վաղը մեր թշնամիները կդադարեն թշնամանել մեզ: Խոսքս մեր կոտորածների հեղինակի մասին չէ, այլ՝ այն օտարազգի պետական, հասարակական, գիտական գործիչների, որոնք վատահամբավելով մեզ իբրև ժողովուրդ՝ սուրն ու տապարը դրին մեզ ջարդողի ձեռքը: Նմանների թիվն այսօր ավելի՛ մեծ է, և թույնը՝ ավելի՛ զորավոր, քան էր անցյալ պատերազմի նախօրյակին: Այսօր էլ չարահամբում է հայությունը: Ինչո՞ւ օտարը մեր մեջ այնպիսի հատկություններ է տեսնում, որոնց բնավ տեր չենք:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում մեզ վերագրեցին հետևյալ մահացու մեղքերը - թափառատենչություն, անմարտունակություն, հրեական ընչաքաղցություն և այլ նման հատկություններ, որոնց կրողը, օրվա եվրոպացու հասկացողությամբ, բարոյապես կորցնում է իր գոյության իրավունքը: Այդ հատկություններից ո՛չ մեկը հայկական չէ, բայց և այնպես՝ վերագրվեցին մեզ: Ինչո՞ւ: - որովհետև՝ տասնամյակներ են, ինչ հայությունն էապես կատարում է միայն իր տկարությունների պրոպագանդան: Միակողմանի կլիներ, եթե փորձեինք

միայն քաղաքական հաշիվներով բացատրել հակահայ պրոպագանդան: Սփռված երկրե երկիր և անմիաշունչ՝ հայությունը միջկուսակցական պայքարներում դրսևորում է իր էության ամենաբացասական գծերը, և, այսպիսով, նյութ մատակարարում հակահայկական քարոզչությանը:

Այն, ինչ որ ցուցահանում է հայը Հայաստանից դուրս, մեզ իրավունք չի տալիս հակահայկական ամեն վատության համար միշտ էլ միայն օտարներին դատապարտել: Այսօր - երբ հայկական ճակատագիրը մեկից ավելի անդունդների վրա պիտի կոխի և անցնի - այսօր իսկ պակաս չեն ինքնավարկաբեկման դեպքեր որոշ տարրերի կողմից:

Պրոպագանդա, ասել է՝ ինքնահայտնաբերում, ինքնաներկայացում: Պրոպագանդան ամեն բանից առաջ մատնում է պրոպագանդիստի ներքին մարդը: Հայը - որի համար այսօր գոյություն չունի հանրապարտադիր և ո՛չ մի ճշմարտություն, արժեք, հեղինակություն - օրվա իր հոգեվիճակով ատակ չէ՝ կառուցողական և հայասիրական պրոպագանդայի: Օտարասեր՝ նվաստ կոչվելու աստիճան և անինքնաճանաչ՝ օրվա հայն ընդունակ չէ՝ արժեքային քարոզչության: Պրոպագանդան, ամեն բանից առաջ, պահանջում է ինքնահարգանքի խոր զգացում՝ ծնունդ սեփական արժեքների և արժանավորության գիտակցության, մի հոգեվիճակ, որ հայ մարդու մեջ ստեղծում է միայն վերանորոգումը: Պետք է գիտակցել և այն. որ ո՛վ հայերիս խորապես չի՝ ճանաչում և հասկանում՝ նա մեզ բնավ չի ճանաչում:

Մեռյալ լեզվաբանությամբ և աղքատիկ պատմագիտական ծանոթություններով կարելի է միայն մոտավորապես ճանաչել հային: Մեր հանդեպ արդար լինելու համար՝ մեզ պետք է ճանաչել սպառիչ կերպով, քանզի հայը ոգո՛ւ ժողովուրդ է, իսկ այդպիսին տեր է ավելի խոր և բարդ էության:

Մի ճշմարտություն ևս - որպեսզի օտարը մեզ ճանաչի՝ նախապայման է, որ նախ մենք մեզ ճանաչենք իբրև ցեղային կարողականություն և էություն:

- Պիտի ուզեի լսել ձեր կարծիքը հայ վերանորոգչական շարժման մասին:

- Պայքարներից ամենածանրը և միաժամանակ ամենասրբազանը - դա ցեղային տեսակի հավերժացման համար մղվող պայքարն է: Այդ պայքարին են լծված հայ վերանորոգչականները: Ցեղորեն ու մարդկորեն առողջ ժողովուրդներն իրենց պայքարը կենտրոնացնում են իրենց գոյությանը և էությանը սպառնացող ամենամեծ չարիքի դեմ: Դա նշանակում է, որ նրանք ընթանում են ամենամեծ ընդդիմության գծով: Հայ կյանքում միայն վերանորոգչականներն են վարվում այսպես, որով՝ նրանց ընթացքն հայորեն և մարդկորեն բարոյական է:

Կյանքի ստիպողականությունն է վերանորոգումը, նրա օրենքը, հրամայակա՛նը - վերանորոգվի՛ր կամ մեռիր: Կուզեի, որ ամեն հայ մարդ զգար վերանորոգչական գործի վեհությունն ու վերանորոգչական գործիչի ողբերգությունը:

Մարդկային ցեղերի պատմությունը չգիտի՝ ավելի մեծ և ավելի սուրբ գործ, քան մի ժողովրդի վերանորոգումը:

Չվերանորոգվածի համար՝ դժվար է հասկանալ վերանորոգվածին - ահա՛ ակն ու աղբյուրը մեր ողբերգության:

Վերանորոգումի ատակ է միայն նա՛, ով սկսել է զգալ, ընդհանրապես, օրվա աշխարհի, և, մասնավորապես, հայ կյանքի հոգևոր դատարկության զարհուրանքը:

- Ձեր վերջին խոսքը:

- Ազգովին խորհենք, ապրենք և գործենք այն, որ բարի է Հայաստանի համար:

«Ռազմիկ», 1943, թիվ 169-174:

ՀԱՅ ՑԵՂԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ա) Ցե՛ղն է գոյարմատականը: Դրանո՛ւմ են օրգանապես ներդաշնակված ոգին և արյունը: Դա՛ է մեր բարոյականի, խղճմտանքի և նպատակի կառավարիչը:

բ) Ցե՛ղն է ազգության հիմքը, իսկ վերջինը՝ ընկերային միակ բնական կազմակերպությունը:

գ) Պետությունը ղեկավարվում է ցեղի կամքով և ազգային ընկերության պաշտպանման և զարգացման ծառայելու սկզբունքով:

դ) Ընկերության կազմակերպությունը և ընկերային արդարությունը հենվում են ներցեղային բարոյականի վրա: Ներցեղային բարոյականով առաջնորդվող ընկերությունը միայն կարող է ապահովել ազգի գոյատևումը, ինչպես և նրա անդամների հոգևոր, բարոյական, տնտեսական շահերի ամբողջականությունը:

ե) Անհատի ազատության, ստեղծագործության, պարտականության և երջանկության աստիճանաչափը՝ դա կախման իր զգացումն է ցեղի ճակատագրից և ուրախ նվիրումը՝ նրա հավիտենականին:

զ) Անհատն ա՛յն դեպքում է միայն ազատ, երբ մեռնելու կամքով է մոտենում բոլոր այն հարցերին, որոնք շոշափում են ցեղի և հայրենիքի ճակատագիրը:

է) Անհատն ստեղծագործ է, երբ նվիրապետական զգացում ունի իր ցեղի հավիտենական արժեքների հանդեպ:

ը) Անհատը պարտաճանաչ է, երբ ունի իր խղճմտանքի վավերացումը, թե անթերի է նվիրումի իր կամքը՝ ցեղին:

թ) Անհատն երջանիկ է, երբ կյանքի բարձրագույն իմաստը տեսնում է այն գիտակցության մեջ, թե հզոր է իր ցեղը:

ժ) Հզորությունն է աղբյուրը դրական ամեն առաքինության և ստեղծագործության: Դա՛ է կյանքի իմաստը:

ժա) Ցե՛ղն է հզորության պարգևատուն:

ժբ) Անցավորից դեպի անանցն երկարող ճամբին ցե՛ղն է միայն հավիտենական: Նրան հաղորդակից դառնալո՛վ միայն հնարավոր է կենսաբանորեն հավատավորել կամքը, իմաստավորել կյանքը:

ժգ) Ցեղը ժխտում է ամեն կարգի հատվածականություն, կուսակցականություն, դասակարգային «ես» և շահ՝ ազգի ներքին կյանքում: Դա պահանջադրում է հայոց լիագումար ազգահավաքումը հայրենի երկնքի տակ և ազգային ներդաշնակ մի համակերպություն, որում հայը՝ հայի մեջ տեսնում է ճակատագրի ճշմարիտ իր եղբայրը:

ժդ) Հայրենատե՛ր է ցեղը - ստեղծագործ, նորոգիչ և հաղթանակիչ ներքին ամեն տկարության:

ժե) Ցեղային շարժման ամեն մի գինվորը պատվի ուխտով հավատում է, թե՝

- Հզորո՛ւթյունն է իմաստը հայ ճակատագրի:
- Հավիտենակա՛ն է Հայաստանը:

ՑԵՂԱԿՐՈՆԻ ԴԱՎԱՆԱՆՔԸ

Հայ եմ:

Ես ավանդապահն եմ Հայոց ազնիվ արյունին:

Ես ժառանգորդն եմ ու տերը Հայաստանի:

Ես պահակն եմ Ցեղիս հոգևոր հարստության ու դրոշակիրը նրա պատմական կոչումի:

* * *

Ես կդավանեմ ու կպաշտեմ ցեղիս ստեղծագործ Աստվածը:

Ցեղս մեծ է ու արժեքավոր:

Ուժի անսպառ աղբյուր է նա, գիտակցության ջահ, առաջնորդ և ապավեն:

Ցեղս արյունի սրբազան միությունն է, որ ճակատը կհարդարի թշնամու դիմաց և ներքին պառակտումները կվերացնի:

Ցեղս ընկերային արդարության անշեղ դատավորն է, որ կմերժի դասակարգային ամեն հասկացողություն:

Հայաստանը հարազատ մայրն է ամեն Հայի՝ պարգևաբաշխ ու լիառատ:

* * *

Ցեղակրոն եմ:

Ես նվիրված եմ Ցեղիս պայքարին ու հաղթանակին:

Իմ կյանքս, կարողություններս ու նվաճումներս - դիրք, փառք և հարստություն - պատկանում են ու ծառայում են ո՛չ թե ինձ, այլ՝ Ցեղիս:

Իմ գոյությունս մեկ նպատակ ունի միայն - անաղարտ պահել երակներիս արյունը և Ցեղս տևականացնել:

Իմ կյանքը մեկ արդարացում ունի միայն - տիրանալ հայրենի սուրբ հողին եւ կառչել նրան:

Իմ մեծագործ նախահայրերիս պատմությունը, մշակույթը և լեզուն ինձանով չեն վերջանում, այլ՝ կշարունակվեն ու կծաղկեն ինձանով:

* * *

Ես լսում եմ կանչը իմ վտանգված Ցեղիս:

Արյունիս մեջ զգում եմ պայքարի կրակը և հոգուս մեջ՝ արևը հավատքի:

Ցեղի՛ս ու Հայրենիքիս համար պատրաստ եմ գործելու և մեռնելու:

Որոշումս անդարձ է, կամքս՝ անընկճելի:

Ահա կուխտեմ ես Մամիկոնյան զորավարների մեռնելու ուխտով. *«Քաջութեամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր եւ ի վերայ ազգիս մեր եւ մի՛ տեսցեն աչք մեր կոխան ոտից պղծալից լեալ զսրբարանս մեր»:*

Ուխտեցի՛:

Հետևեցե՛ք ինձ:

«Ռազմիկ», 1943, թիվ 131:

ԱՆՁՆԱՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ[66]

Կրելով կնիքը Հայաստանի բնության ու պատմության՝ հա՛յ եմ ես:

Մտածումով և ապրումներով, սակայն, ես մարդ եմ, համամա՛րդ:

Ես ընկերն եմ անհիրավվածի, եղբայրը՝ հալածվողի, և զինակիցը՝ բևեռ բևեռ ավելի արդար աշխարհի համար մարտնչողների:

Դավանանքս է - մարդկայնությո՛ւն, ավելի՛ մարդկայնություն:

* * *

Ոգու մարդ եմ, և իբրև այդպիսին, միանգամայն ան-հարմար այն բոլոր պաշտոնների համար, որոնք ենթակայից որոշ աստիճանավորություն են պահանջում:

Ինձ տրված չէ քայլել մարդու հետևից, եթե նա թա-գավոր իսկ լինի:

Ոգու մարդուն վայել է՝ նվաստանալ անգամ իր աստծու առջև:

* * *

Խղճմտանքից զատ ես ճանաչում եմ երկու գերագույն դատավորներ ևս - Աստված և Ժողովուրդ:

Առաջինի դեմ գուցե և մեղանչել եմ, իսկ երկրորդի դեմ՝ երբե՛ք:

* * *

Հերոսական գործերից ոչ նվազ ներշնչող է մահը հերոսական: Ապա ուրեմն, մեռիր այնպես, որ մահդ էլ ծառայի հայրենիքիդ:

Ահա՛ իմ դավանած հայրենասիրությունը:

* * *

Ների՛ր, Տե՛ր, ների՛ր ինձ, եթե մի օր հայրենիքիս օգտակար լինելու մտքով մեղանչեմ կամքիդ դեմ:

Արդա՛ր է հայրենիքին ծառայել ամեն ինչով, բացի ստորությունից:

* * *

Կյանքիս գարնան՝ պատանու իմ միտքն ու սիրտը իրենց սնուցիչներն ունեին.

- Արարա՛տը, որ թեև քանիցս խլվեց մեզնից, բայց երբեք չեղավ օտարին, և չի՛ լինելու.

- Հայ լեզուն, որ օտար լուծ ու նվաստություն չճանաչեց, ու մնաց ստեղծագործ անգամ պատմության ամենամթին դարերում, երբ օտարը կիշխեր Հայաստանում.

- Եվ շինարարական խանդը հայի, որը դեպի իրեն հարգանք ու հիացմունք պարտադրեց իր գոյության և՛ բարեկամին, և՛ թշնամուն:

Սրբազա՜ն երրորդություն...

Այժմ, երբ մահաշունչ զնդաններում կյանքիս աշունն եմ բոլորում, դարձյալ նույն իդեալական արժեքներն [են] սնուցանում հայ մարդու իմ սերն ու հպարտանքն արդար:

* * *

Ըստ իս՝ ամեն մարդ-անինքնաճանաչ մի Պրոմեթեիդ է, որով՝ մարդկային ամեն մի էություն-մի շղթայված զորություն:

Իր կարողական ուժերից առավելագույն չափով օգտվում է նա միայն, ով, ինձ պես, հաջողում է ոգու լարվածությամբ շղթայազերծել իր էությունը:

* * *

Ինձ հատուկ է ազգային մտքի կրքոտությունը, իբրև արգասիք խոր հավատի ու համոզվածության, թե հայը, իբրև ուրույն

ստեղծագործ ազդակ, նույնչափ պետք է մարդկության, որքան և՛ թվապես, և՛ քաղաքականապես հզորագույնն ազգերից:

* * *

- Ինչպե՞ս կուզեիք, որ վարվենք ձեզ հետ՝ հարցրին ինձ:

- Որպես ռազմիկի, որը տմարդներին, թեև հաղթա-կան լինեն, իրեն արժանի թշնամի չի համարում:

* * *

Մեկն սպառնաց ինձ:

- Մահվամբ չեն վախեցնում նրան, որից - ինչպես գիտեք - հաճախ վախեցել է մահը՝ ասացի ես:

Եվ... լռությունը կնքեց մեր կարճ փոխասացությունը:

* * *

Չեմ սիրում միջակությունը նպատակի, զոհաբերության, տառապանքի:

Միջակությամբ չես աճի, չես հսկայանա հոգեպես:

Հերոսանում է նա, ու ընթանում է գերպարտականության ճամբով:

* * *

Անիծեցի ես աշխարհավար մեծերին.

- Չկա՛ն մեծեր, կա մեծություն, հոգո՛ւ մեծություն: Կա՞յսր ես՝ եղիր Ավրելիոս. իմաստասե՞ր ես՝ Սոկրատ եղիր. զորավա՞ր ես՝ Ավարայրի Վարդա՛ն:

Մեծ անունները առանց հոգու մեծության նման են կավե անդրիի՝ դրված ոսկե պատվանդանի վրա՝ Մասիսն ինձ ասաց:

* * *

Սո՞ւրը, թե՞ գրիչը: Թե՛ մեկը, թե՛ մյուսը - ես սիրեցի ու գործածեցի երկուսն էլ:

Սակայն, դրված երկընտրանքի առջև՝ ես պիտի նախ-ընտրեի առաջինը, քանզի լինում են ժամանակներ, երբ գրիչը, խոսքը, ճշմարտությունը իրենց ճամբան հարթելու համար կարիք են զգում սրի:

Սիրո՜ւմ եմ գրիչը, որը, միաժամանակ, և՛ սուր է, որ գիտի ի պաշտպանություն արդար դատերի հազար սրազեն բազուկներ բարձրացնել:

Սիրո՜ւմ եմ սուրը Հայոց արքայի, որը «գետին չնկավ», այլ իբրև հրեղեն կանթեղ, մնաց կախված Սեպուհ լեռների վրա, և պատմության անաստղ գիշերներին հայի դարավոր ճամբան լուսավորեց:

Սուր և գրիչ - աստվածայի՜ն զենքեր, տրված մարդուն՝ պաշտպանելու իրավունքն ու սրբությունն աշխարհում - իմ ձեռքում էլ հաճախ փոխարինեցին իրար:

Եվ... չպարտվեց, «գետին չընկավ» և՛ իմ սուրը...

* * *

Մի հաղթանակի օր Սյունյաց իմ արծիվ զինակիցները ասացին ինձ.

- Երբ մեռնես՝ գլխիդ տակ կդնենք սուրդ, և կքանդակենք գերեզմանաժայռիդ վրա՝ այստեղ հանգչում է նա, որ գործեց իբրև կենդանի սուր...

* * *

Հոգիս վերստին արդար հզորանքի է ծարավի և ահա՛ անճառելի հպարտանքով կրկնում եմ մի տողը ստոիկյան իմաստասերի*. «Արքա՛ն Հայաստանի անտառների - կատաղի առյուծը ոսկեբաշ»...

Ի՞նչ, Թրովադան երբեմն էր ստվեր մեծ անցյալի, թե՞ գրական մի հուշ միայն:

Ո՛չ, ո՛չ, դեռ այսօր էլ՝ մեր պատմության բարձունքից դիտելով՝ Հայաստանում ես տեսնում եմ ավելին, քան այն, ինչ որ դա ներկայացնում է իբրև հողային տարածություն, և իբրև թիվ բնակչության:

Թեև մեզնից խլված են առյուծաբնակ մեր երկրամասերը, հայ էության ներհատուկ առյուծությունը, սակայն, մնում է, և պիտի մնա:

Սպանվում է և՛ առյուծը, առյուծությունը՝ երբե՛ք:

ՌԱԶՄԻԿԸ ՉԻ՝ ՄԵՌՆՈՒՄ

Մարդը գիտեր իրերի կարգը, գիտեր, որ երբ կա կյանքը՝ չկա մահը, նա գիտեր այդ, և անխռով վայելում էր իրեն տրված օրն ու արևը:

Ի՛նձ, սակայն, ինձ էր ճակատագրված կյանքն ու մահը ապրել միաժամանակ:

Վաղուց է, ինչ աշխարհն ինձ մեռած է կարծում, թեև ես դեռ կոխում եմ երկրի երեսին, թող որ երկրագնդից, անծայր ու անծիր, ինձ թողնված է մի տարածություն - կալանավորի մի կույր խցիկ, որը դժվար թե կարողանար երկու մեռելների գերեզման տալ:

Ես մեռա՝ դեռ չմեռած: Ավելի ստվեր, քան ապրող էակ, ես և՛ կամ, և՛ չկամ: Թեև կա կյանքի անոթը՝ կեցության ձևը, բայց չկա կյանքը, կյանքի զգացումը չկա:

Ես ապրում եմ՝ կյանքն ու մահն իրար խառնած: Ա՜հ, կարող է, մարդ կարող է փոխել բնության կարգը: Կյանքն առանց կյանքի՜... Ո՞վ էր ապրել այդ:

Ես կամ և չկամ... Եվ, բաբե՜, այդ իսկ վիճակում կու-զեի մեռնել մարտական մահով, և կանգնել հավերժության սեմին՝ դեռ չսպիացած

* Սենեկա (ծանոթ. հեղինակի)::

վերքերով... Չէ՛, ռազմիկը չի՛ մեռնում: Մեռնե՞լ... Բայց մի՞թե դեռ կամ, դեռ ապրում եմ ես...

* * *

Ես ասում եմ՝

- Ժամանա՛կն է ամենածանր բեռն աշխարհում, և՝ ամենաթեթևը, միաժամանակ: Եթերի պես անզգալի նրանց համար, որոնք երանորեն ժպտում են երկնքի վճիտ օվկիանին, կամ դաշտերում բացված ծաղկին, մի այլ հոգեվիճակում՝ դա տիեզերաշենքի ծանրությամբ է ճնշում մեր էության ամեն մի հյուլեի վրա:

Կալանավոր եմ, և ահա՛ լսում եմ սրտիս զարկը մե՛կ, ե՛րկու... Ո՛չ, ո՛չ, դա սիրտս չէ, այլ ժամանակի ծանր ձեռքը, որն իր երկաթե մուրճն է իջեցնում գանգիս վրա՝ մե՛կ, ե՛րկու...

Ես կամ,- ասում է ժամանակը,- նրանց համար, որոնք պատճառ ունեն զգալու իմ առկայությունը, համրելու իմ օրերը, ժամերը, վայրկյանները՝ ես կամ...

* * *

Կա Պրոմեթեյը տառապող-կան նաև նրա ցավերն ամոքող օվկիանիդները: Տրվում է ցավը մարդուն, նրա հետ՝ նաև այն մեղմելու կարելիությունը:

Հաղթահարել նյութը - զրկել ժամանակն իր կապարից, ցավն՝ իր սրությունից, լարդ պատառատող անգղին՝ իր ճիրաններից- ահա՛ գերագույնն արվեստներից՝ մայրը բոլոր արվեստների, որոնց ծնունդ է տվել մարդը: Ատարաքսիա՝ պիտի ասեր դասական դարերի հույնը. ստեղծա-գործ խանդ՝ ասում է մերօրյա արվեստագետը. ներքին երկուացում, որի դեպքում զատվում ես քեզ մտրակող ցավից և մտահայեցողաբար այն դիտում իբրև իմաստասիրական նյութ՝ ասում եմ ես:

Հաղթահարել ժամանակը՝ այն անզգալի դարձնելու աստիճան - աստվածային այդ արվեստին հավատարիմ՝ ա-մեն օր մտովի ես անցնում եմ այն ճամբաներով, որ կոխել են աստվածները հին, այցելում եմ Հելլադան՝ ճեմում ու վիճում Աթենքի իմաստասերների հետ, հայտնվում պատմության ծանոթ ռազմադաշտերում, թևս երկարում զինաթափվելու պատրաստ մարտիկին, վիրավորին և, վերջապես, սրիս և Մասսին կոթնած - արթուն հսկում եմ Հայաստանի սահմանների վրա...

P.S.

Չհասկանալ նրան, ով խոսում է Հայաստանի համար ստացած վերքերի լեզվով, նշանակում է ո՛չ հայ, ո՛չ էլ հայրենասեր լինել:

* * *

Ամենասրբազանը խաչերից, միաժամանակ և ամենա-ծանրը - դա ճակատագիրն է հարազատ ժողովրդի:

Այն կրողին և՛ վա՜յ, և՛ պատի՜վ յոթնիցս:

* * *

Հերո՞ս ես, ապա ուրեմն, տուր ապացույցը, որ աշ-խարհից - կյանքից ու մահից էլ զորավոր ես դու:

1955, մայիս:

ԱՆԱՎԱՐՏ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵՏԱՊՈԼԻՏԻԿԱ[67]
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Մարդս չի ծնվում կատարյալ, դա դառնում է ինքնամշակմամբ, ինքնահաղթահարումով, որով՝ կյանքը առաքելություն է:

Կուլտուրական մարդը դա ներքին կյանքի մարդն է (ամբոխներին պակասում է այդ ներքին կյանքը, նրանք ապրում են առանց ինքնաճանաչումի և աշխարհաճանաչումի, առանց ղեկավարող սկզբունքների՝ քաշված կյանքի եւ պատմության օրենքներից):

Պրոգրեսը կարելի է արագացնել, անշուշտ, բայց ոչ այն չափով, ինչ չափով կարծում են թե կարելի է արագացնել կաբինետային երազատեսները: (Բնությունը սոտեռններ չի սիրում), պրոգրեսը ենթարկվում է բնության այդ օրենքին:

Կյանքի դարաշրջանները այլ բան չեն, քան հոգեկան հասունության ֆազաներ: Ոչ մի հասունացում հնարավոր չէ արհեստական ձևով, առանց խեղելու դա (այդպես է բնության մեջ, նույնը՝ մարդկության):

Մի ժողովուրդ զարգանում է բնականորեն և կանոնավոր կերպով, երբ աստիճանաբար անցնում է իր հասունության բոլոր ֆազաները (որոնցից ամեն մեկը հնարավոր է դարձնում մյուսը):

Պրոգրեսի նորմալ ընթացքը (ժողովրդի կյանքի կառուցման, պետական սարք ու կարգի հաստատման) - նախ՝ օրենքները հաստատվում են ոգիների մեջ, վերջը՝ ընդունում սահմանադրության ձև:

Այսինք՝ հոգեւոր պրոգրեսի ճամփով դեպի արտաքին պրոգրեսը: Հասարակական խղճմտանքը արդյունք չէ պետական օրենքների, ընդհակառակը, պատմությունը հաստատում է, որ օրենքներն են հայելին հասարակական հոգու, որ պետական ռեժիմը արտացոլում է ժողովրդական խղճմտանքը:

Օրենքը չէ ստեղծում մարդը, այլ մարդը՝ օրենքները:

«Օրենքները փոխելուց առաջ, անհրաժեշտ է փոխել մարդկանց» (Aug. Conte, Philisophie positive):

Օրենքը դա ընկերային մի մեծ ուժ է, ժողովրդական մի հզոր պաշտպանություն, երբ ծնունդ է առնում մարդկանց ներքին կյանքում և ապա նվաճում նրանց արտաքին կյանքը:

Կատարյալ ներդաշնակություն հաստատության եւ մարդկանց միջև, հանրային իրավակարգի եւ ժողովրդի ոգեկառույցի միջև:

Երբ ժողովրդի հոգին ավելի կուլտուրական է, քան իրավակարգը, պետական ռեժիմը փոխվում է բռնությամբ, հեղափոխությամբ:

Երբ հակառակն է՝ պետության ղեկավարությունը անցնում է բախտախնդիրների ձեռքը, բռնակալների, որոնք օգտվելով զանգվածների հոգեկան կուրությունից, երկիրը դարձնում են իրենց կրքերի և անձն[ական] շահերի շահաստան (այդպես են Եվրոպայի հարավ-արևելյան երկիրները՝ Հունաստանը, Սերբիան, Ռումանիան, Բուլղարիան, Թուրքիան):

Քաղաք[ական] ազատությունը ծնունդն է բարոյական ազատության:

Ազատ կյանք կա միայն այնտեղ, ուր անխաթար խղճմտանքներ կան (Ռենան):

Մարդս տալիս է իր մերձավորներին միայն այն, ինչ որ ունի:

Ազատության նախապայմանը - ինքնատիրապետումն է, ինքնահաղթահարումը, իր տկարությանց հաղթահարումը:

Ազատագրությունը զենքի գործ է, հաջողության, հաղթանակի:

Ճշմարիտ ազատությունը դա սկսվում է բարոյական վերանորոգմամբ, վերածնունդով:

Ամենահմաստուն և ամենազորավոր հեղափոխականը ժամանակն է:

Դիպվածական և լրիվ ազատագրություն, առանց հոգևոր վերադաստիարակության և առանց քաղաքաց[իական] տղամարդացումի, գիտական անհեթեթություն է:

Սեկտանտն ասում է՝ գաղափարն ամեն ինչ է, մարդը՝ ոչինչ (հաստատությունները ամեն ինչ, անհատը՝ ոչինչ): (Հաստատությունը դա կոնկրետացյալ գաղափար է): Դա ասել է՝ հաստատությունները չեն ստեղծված մարդու համար, այլ մարդը՝ հաստատության: Նմանները մոռանում են, որ ամենապայծառ գաղափարը մնում է իբրեւ չոր աբստրակցիա, երբ կապը կտրված է նրա [և] հասարակական ոգեկառույցի միջև:

Ռեժիմը չի ուղղում մարդկանց, ընդհակառակը՝ մարդիկ են սրբագրում, փոխում ռեժիմը:

Հաստատությունները պիտի արտահայտեն կենցաղը, ավանդությունները, հավատալիքները, ծգտումը ցեղային առանձնահատկությունների այն ժողովրդի, որի համար կյանքի են կոչված (քրդերին տալ շվեյցարական սահմանադրություն ! ?):

Ինձ կարելի է պարտադրել մի օտարոտի ռեժիմ, բայց ինձ չի կարելի դա դարձնել հասկանալի եւ ընդունելի: (Իսկ մարդս չի կապվում այն բանին, որ չի հասկանում):

Հաստատությունները հոգի ունեն: Հոգի ունեն նաև ժողովրդ[ական] զանգվածները: Անհրաժեշտ է սերտ կապ սրանց միջև: Միայն այդ դեպքում [է] բարերարը:

Օրենքը՝ նախ մտայնություն ոգու մեջ և ապա հետո՝ իբրև սահմանադրություն: (La loi ecrite suppose la loi non ecrite. Renan).

Պետություն, որ նման է ձեզ (Սոլոն):

Ոչ թե նորը, այլ նորոգում (Ցիցերոն) (Non nova, sed noviter!):

Օրենսդիրը ոչինչ պիտի ստեղծի, որ կկրեր աբսոլյուտ նորության բնույթ (չտեսնված, չլսված, չսպասված): Նա նախ պիտի ուսումնասիրե հասարակական պսիխիկան և յուր օրենքը պիտի հարմարացնե նրան:

Չի կարելի արագորեն հասունացնել: Գոյություն չունի արագ պրոգրես: Արհեստականորեն արագացված պրոգրեսը արհեստականորեն արագացված անկում է:

Պատմությունը մի բան գիտի - աստիճանական տրանսֆորմացիա: Կատարելությունը չի կարելի իմպրովիզեա՛ անել: Գազան անասունը մարդու մեջ ավելի է ուժեղանում, երբ ուզում ենք մեկեն, առանց աստիճանական բարելավումի դարձնել կատարյալ էակ:

Բոլոր վերանորոգումները պետք է հաշտեցնենք ավանդությունների հետ: (Հյուս[իսային] բևեռում վարդեր չեն բացվում):

Ժողովրդիս սոցիալիզմ տվի, կարծելով, որ դա էլեքսիր է երջանկության, բայց դուրս եկավ, որ սոցիալիզմը նրա համար մահաբեր թույն է: Եվ այժմ մեռնում եմ այն սպանիչ գիտակցությամբ, որ սպանել եմ ժողովուրդս:

Ամեն քաղաքա-սոցիալական բռնացում՝ խեղում է ժողովրդի հոգին:

Պրոգրեսը փիլիսոփայության խնդիր չէ, այլ ժամանակի: Քաղաքականության և պատմության մեջ պետք է թիկունք դարձնենք տեսություններին և հենվենք փաստերին:

Իր աճումի մեջ բռնացումի ենթարկվող ժողովուրդը մեռնում է հոգեպես: (Բարին բնության մեջ աստիճանական բարին է պտուղը, երեխան, աշակերտը դպրոցում...)

Ընդհանուր բարիքը դառնում է չարիք, երբ չի արտացոլում մասնավոր բարիքը:

Երբ ես լավ եմ՝ ասել է լավ է հասարակությունը: (! ? Չէ, երբ լավ է ժողովուրդը՝ լավ եմ և ես):

Նորվեգիացին - ամեն բանից առաջ հայրենիքս:

Շվեդացին - ես ազատ եմ (երգում է), բայց իմ ազատությունից պիտի օգտվեմ օրենքին ենթարկվելու համար:

Իտալացին և իսպանացին[68], երբ դժգոհ է, իրեն համարում է օտարական յուր սեփական երկրում (քաջությունը սրանց մոտ ճշմարիտ արիություն չէ, հերոսություն չէ: Դա մոտենում է այն համարձակության, որ արևելցիները անվանում են փեհլեվանություն):

Նա, ով ասում է ես ամեն բանից առաջ, ամեն բանից վեր՝ չի կարող ծառայել ո՛չ գաղափարի, ո՛չ դրոշակի, ո՛չ ցեղի: Դա ծառայեցնում է իրեն և՛ գաղափարը, և՛ դրոշակը, և՛ ցեղը:

Տկար կուլտուրայի տեր ժողովուրդների մոտ գոյություն չունի իդեական կուսակցական պայքար, այլ՝ կա պարտիզանականություն, իսկ պարտիզանականությունը ժխտումն է իդեականությանն:

Բուլղարիան՝ քաղաքական սպանությունների դասական երկիրը:

Պարտիզանշչինան ենթադրում է խղճմտանքի և բարոյականի անկում:

Գիտությունը հաստատում է, որ քաղաքականության մեջ բացարձակը բացարձակորեն հարաբերական է:

Փաստերը իրավանց բարձրության վրա են, ուր ռեժիմը և օրենսդրությունը զարգանում են համաձայն ժողովրդի հոգեւոր մշակույթի:

Չկան մշտական կոնսերվատորներ և հեղափոխականներ: Իմաստուն գործիչը պիտի լինի միաժամանակ թե՛ մեկը, թե՛ մյուսը: Ես պահպանողական եմ, երբ վտանգ կա փողոցային անարխիայից, հեղափոխական՝ երբ հանրային մտածողության ու կյանքի քարացում կա: (Ես հանրապետական եմ, երբ գտնվում եմ Շվեյցարիայում, Ռուսաստանում՝ մոնարխիստ): Ժամանակի, տվյալ մոմենտի համար արժեք չունի այն բանը, որ արվում է առանց հաշվի առնելու ժամանակը:

Հոգով թաթարացած ռուսը ազատությունը հասկացավ այնպես, ինչպես որ հոգեհիվանդ Նիցշեն հասկանում է հզորությունը՝ «Իմ մեծության արձանը պիտի ցցվի փլատակներից եւ դիակներից կազմված մի լեռան վրա»:

De la doctrine Ո la pratique il y Ո du chemin. Դոքտ[րինայից] մինչև պրակտիկան մեծ ճամփա կա (Գամեքարու):

Իմ նպատակն է մասնավոր փաստերից և երևույթներից բարձրանալ մարդկության ընդհանուր օրենքներին: Դա guestion de fait է, փաստի հարց է:

Ընդհանուր վտանգի ժամանակ միջկուսակցական կռիվները ազգասպանության են հավասար:

Իշխանությունը դառնում է օրինականացյալ անիշխանություն, երբ ընդհանուր խղճմտանքի կոնտրոլ չկա:

Փնտրիր պատճառը անցքերի և իմաստը փաստերի հասարակագիտական մեծ սկզբունքների լույսի տակ:

Քաղ[աքական] ազատությունը ծնունդ է առնում բարոյականից:

Սոցիալական խնդիրը բարոյական խնդիր է: Օրենքը փոխելե առաջ, փոխիր մարդը:

Ergo,* քաղաք[ական] ռեժիմը պիտի ներդաշնակ լինի մշակույթին:

Ամբողջական էմանսիպացիան մեկեն գիտական ересь** է:

Ազատ օրենքները դառնում են տևական, երբ զարգանում են հասարակ[ական] ոգուն զուգահեռ:

Օրենքները լինում են երկարատև միայն այն ժամանակ, երբ համապատասխանում են բարքերին:

Գրված օրենքի աղբյուրը չգրված օրենքն է (որ գրված է սրտում):

Բարքերը զարգանում են եւ ուշ թե <շուտ> պարտադրվում որոշումներով:

Ամեն բարեփոխում պետք է սկսվի խղճմտանքից:

Ահա այն սկզբունքները, որոնց վրա հանգչում է պատմության փիլիսոփայությունը:

Իմաստաբար դեն ենք նետում միայն այն, որը կարող ենք հաջողաբար փոխարինել:

Որքան արժեն մարդիկ, այնքան էլ արժեն նրանց տրված ֆունկցիաները:

Ազատությունը չի առնվում, այն սովորում են:

Ամեն մի աղետի, դժբախտության արմատում գտնում ենք մի սխալ կամ մի մոլորանք:

Միայն իրերի սիրտը թափանցելով կարելի է նրանք վերստեղծել:

Ինչ որ ընտրողներն են, այն էլ ընտրյալները:

Իրավունքն առանց ուժի պարզ աբստրակցիա է:

Իդեոլոգները սխալվում են, կարծելով, թե ազատությունը կարող է իմաստություն ծնել, ընդհ[անուր] իմաստությունն է ծնում ազատությունը:

Կոպիտ բռնությունը միշտ էլ առաջացնում է ընդդիմություն: Հանրապետություն սահմանադրելը հեշտ է, դժվար է սահմանադրականներ ստեղծելը:

Քաղաքականությունը հավասարակշռության գիտություն է:

Քաղ[աքական] իմաստությունը գտնվում է չափավորության մեջ:

Սրանք են պատմության պոզիտիվ դասերը, պրոգրեսի օրենքները: (Գիզո, Շատոբրիան, Տիերի, Մինե, Տիետ, Միշել, Տոկվիլ, Կինե, Դյուրյուր, Ռենան, Տեն, Բարանտ, Կուլանժ, Օգ. Կոնտ):

---

* Ergo –հետևաբար (լատ.) (ծանոթ. խմբ.):

** Ересь – հերձված (ռուս.) (ծանոթ. խմբ.):

ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԱՅԻՆ ԱՐԴԱՐԱՑՈՒՄՆԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐԴԸ

Ռենեսանսը վերանորոգեց նախաքրիստոնեական դասական մարդու իդեալը: Հակառակ միջնադարին, որ գտնվում էր եկեղեցու հեղինակության իշխանության տակ, Ռենեսանսը ձգտում էր մարդու լրիվ ազատագրության[69]: Ազատություն եւ անհատապաշտություն - այդ երկու հիմնական գծերն էին բնութագրում վերածնն[դի] շարժումը: Ոչ մի մորալ, սահմանափակում թողնված ինքն իրեն - մարդս ինքը պիտի գտնի իր երջանկության ճամփան: Այստեղից է բնորոշ գիծը, Ռենեսանսի օպտիմիզմը: Այսպիսով ազատագրվեց էգոիզմը:

Մարդու «ազատագրության» 2-րդ քայլը կատարեց ռացիոնալիզմը, որը հեռացրեց <Աստծուն> աշխարհից եւ մարդուց: Ըստ նրա աշխարհում գոյություն ունի միայն մեքենական պատճառականություն: Տիեզերքի կատարյալ մեխանիզմում տեղ չկա արտաքին միջամտությանն: Դեիզմը* Աստծու տեղը որոշեց տիեզերքեն դուրս (Տրանսցենդենտ Աստված):

Երրորդ քայլը կատարեց պոզիտիվիզմը, աստվածաբանությունը և մետաֆիզիկան համարելով մարդկության կողմից ապրված անցած զարգացման երկու ստադիաներ: Մարդս պիտի հետաքրքրվի միայն փորձառական իրականությամբ:

Այդ աշխարհայացքային ըմբռնումները գործադրություն գտան նաև էկոնոմիկական գիտության մեջ և ազդեցություն՝ տնտեսական կյանքի և արտադրության վրա: Ազատատենչությունը՝ այնքան հատուկ Ռենեսանսի էպոխային՝ թափանցեց տնտեսագիտական մտածողության մեջ: Ազատություն մտքի, սրտի և աշխատանքի, այսինքն՝ անձնավորության և նրա հանրային հարաբերությանց՝ սա պիտի անդրադառնար կյանքի ամենալայն ասպարեզի տնտեսության վրա:

Ադամ Սմիտը (1723-1790), որից սկսվում է տնտեսագիտությունը՝ ստեղծեց էկոնոմիկական լիբերալիզմը: Ըստ նրա, ինչպես տիեզերքը մի մեխանիզմ է, որ հետևում է իր օրենքներին, կատարյալ ներդաշնակության մեջ, առանց կարիքն զգալու Աստծո միջամտության,այնպես էլ հասարակությունը մի մեխանիզմ է, որ ինքն է ղեկավարում իր ուժերը և օրենքները, և այսպիսով ձեռք բերում անհրաժեշտ ներդաշնակությունը:

---

* Դեիզմ - ֆր. deism (լատ. deus - աստված բառից)- 17-18դդ. կրոնա-փիլիսոփայական ուսմունք (ծանոթ. խմբ.):

Տնտեսական գործունեությունը դա մի փակ մեքենական սիստեմ է, որ կարող է ամենալրիվ ներդաշնակությունը ստեղծել, երբ պետությունը և բարոյական օրենքը չեն միջամտում:

Երեք ֆակտորներ են շարժում տնտեսական կյանքը՝ ազատություն, շահ, մրցում, որոնք փոխադարձաբար կանոնավորում են իրար: Շարժիչը տնտեսական էգոիզմն է:

Ergo, գոյության պայքարը հասարակության կյանքում չպետք է սահմանափակել, այլ պիտի թողնել ազատ, քանզի դա է օրենքը առաջադիմության:

Դարվինը այդ օրենքը վերագրեց ողջ օրգանական բնության: Ամեն կենդանի արարած գտնվում է մշտատև գոյության պայքարի մեջ: Հաղթում է ավելի զորավորը և ավելի հարմարը: Այս ճամփով է տեղի ունենում բնական ընտրողությունը. արժեքավորը և զորավորը կյանքում: Նույնը տնտեսության մեջ:

Տնտեսապես տկարները և սակավարժեքները կկորչեն, իսկ զորավորները և արժեքավորները կշարժեն տնտեսական կյանքը: Ընկածները կծառայեն իբրև mopr առաջադիմության:

Այսպես տնտեսագիտությունը արտացոլեց էպոխայի գաղափարները՝ ազատություն, անհատապաշտություն, ռացիոնալիստական լավատեսություն և էգոիզմ, իբրև օրենք գոյության պայքարի: Պոզիտիվիզմը ետ մղելով հավատը և մետաֆիզիկան՝ կտրեց մարդկային միտքը գերբնական իրականությունից: Այսպիսով ծնունդ առավ մատերիալիզմը, որը ավելի ևս ազդեց տնտեսագիտության վրա:

* * *

Քաղաքականությունը նպատակ ունի կարգավորելու մարդկային շահերը, անալիզ անելու նրանց փոփոխականությունը:

Քաղաքականությունը փոփոխական է, ինչպես ինքը՝ կյանքը: Դա կրոնական դոգմա չէ: Դա ապրիոր բաների վրա չի հանգչում: Դա ընթանում է կյանքի հետևից և ստանում նրանից լոզունգներ:

Պետական գործիչը պիտի 3 գիտությանց տվյալներով՝ պատմա-փիլիսոփայության, հասարակագիտության և զանգվածների հոգեբանության, <տա> ճշմարիտ դիագնոզն այն չարիքի, որ մի ընկերաբան պիտի անվաներ հայկական ազգային չարիք:

ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ

ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԱՌԱՊԱՆՔ: ԿԱՐԾԻՔ ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ամենայն ուղխք ի ծով վազեն, եւ ծով ոչ լնու:

Ամենից անհաստատ դաշինքն այն է, որ կնքում ենք բախտի հետ:

Մշտականությունը օտար է իմ բնության: Ես դարձնում եմ իմ անիվը՝ ահա՛ իմ խաղը: Ուժգնորեն դարձնում եմ անիվս. բարձրացի՛ր նրա վրա, եթե չես վախենում՝ վաղը գլխիվայր դուրս գալ:

Ճշմարիտն ասելով՝ ինքդ քեզ պատկանող բարիքներից զրկվեցիր: Իրավունք չունես տրտնջալու իմ դեմ՝ զրկվելով քեզ չպատկանող բաներեն: Հարստություն, դիրք, աստիճան և այլն ինձ են պատկանում: Բախտը նախազգուշացնում է մեզ՝ դավաճանելով:

Պատահական երջանկությունը և՛ անարժեք է, և՛ անարդար:

Ո՞վ է անմատչելի մարդկային չարության և զրպարտության համար:

Ապերջանկությունը անհրաժեշտ է առաջադիմության համար:

Բախտն այնքան էլ անսիրտ չէ՝ նա ամեն ինչ չի խլում մեզնից:

Լավագույն ճակատագիրը աշխարհում՝ կյանքի քաղցրություններին մի քիչ դառնություն խառնել:

Երջանկության ծոցում հանգչող սիրտը դեպ ձախորդությունները ավելի զգայուն է լինում:

Մահկանացո՛ւ, ինչո՞ւ քեզնից դուրս կփնտրես երջանկությունը, որը քո մեջ կկրես: Մոլորանքի և տգիտության մռայլ ամպը խանգարում է ձեզ՝ տեսնելու զայն:

Պատահական երջանկությունը լինում է վաղանցիկ: Նրա վարդերը շուտ են թառամում և մնում է միայն փշալի ոստը:

Եթե երջանկությունը մեզ չի ազատում վախեն՝ անարժեք է դա:

Եթե իմ հարստությունը դառնում է պատճառ ուրիշների չքավորության՝ անեծք է դա: Ինչո՞ւ ես մուրացկանորեն ուրիշի բախտից բարիքներ սպասում, երբ կարող ես սեփականդ ունենալ:

Հարստությունը, ճիշտ է, կխոստանա, բայց չի տար մեզ երջանկություն (հարցրո՛ւ հարուստին, թե իր հոգին մի վայրկյան ազա՞տ է հոգսերից եւ ծանձրույթից: Չկորցնել, ավելին շահել...):

Գերագույն երջանկությունը դա է, որ պատճառ կդառնա և այլոց երջանկության:

Աստիճանն արգելո՞ւմ է տկարությանց մուտք գործելու մեր սիրտը: (Թերությունը, մեղքը, հանցանքը աստիճանավորի մոտ ավելի մատնիչ են և ավելի զզվելի):

Արդյո՞ք նվազ են խծբծում նրան, որի ճակատը լուսավորված է փառքի ճառագայթներով:

Երջանկությունը զորությո՞ւն է, հապա ինչո՞ւ նրա առջև կդողա երջանիկը (դա կորցնելու մտածումեն կդողա):

Կան հաճույքներ, որոնք սիրինային ցանցեր են:

Հաճախ ասելով այդ, մենք ավելի մոտեցած կլինենք ճշմարտության սրբարանին, հաճախ մեզ այցելում է երջանկության ուրվականը, նրա կրկներևույթը և մենք՝ երջանկածարավ մարդը միամտորեն այն երջանկության տեղ է ընդունում:

Ճշմարիտ երջանկությունն այն է, որը միաժամանակ բարի է դարձնում մարդս:

Իմ թախծության գլխավոր պատճառը այն է, որ Չարը գոյություն ունի և ընթանում է առանց պատժի այն աշխարհում, որի թե՛ ստեղծիչը և թե՛ վարիչը անսահման բարի էակ է:

Առաքինությունը ոչ թե չի վարձատրվում, այլ հալածվում է անողոքաբար: Դա ոտնակոխ ընկած է մեղքի ոտքերի առջև և խմում է դառն բաժակը՝ որը չարագործները պիտի դատարկեին:

Սխալ է, միայն ազնիվն է զորավոր:

Մեղքը չի մնում անպատիժ, առաքինությունը՝ չվարձատրված:

Արատավորությունը տկարություն է:

Առաքինությունը՝ հզորություն:

Անզորությունը հավիտենական ճամփորդակիցն է չարաբարոյության:

Չարություն գործելը անզորության նշան է:

Կարելիություն ունենալ չարիք գործելու՝ հզորություն չէ:

Ուրախացուցիչ խղճմտանքը հետևանք է բարեսիրության:

Երջանկությունն- դա մեղանչելու ազատությունն չէ, ինչպես և անպատժելիություն չէ:

Չարերի հզորությունը ցնորք է:

Իմաստունը չի լքվում, երբ բախտը զինվեց նրա դեմ, ինչպես քաջ զորականը չի զայրանում, երբ նրա ականջին զենքերի շաչյունն է հասնում:

Մաքուր մարմինը՝ դա անսահման ուժերի ամբար է:

Երջանկության փոխարեն մենք նրա ստվերն ենք հալածում:

Քաղաքականապես ազատ ենք, բայց և այնպես ստրկականության շղթաների հետքեր ենք թողնում:

Ամեն մի ձախորդությանդ դեմ տուր առաքինությանդ և հույսիդ վահանը:

Ամեն ինչ կատարիր արթուն խղճմտանքիդ աչքի առջև:

ԿՈՐՇԱՆԻՉ, ԿՈՐՍՏԱԲԵՐ ԵՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՐՀԵՍՏԱԿԱՆ, ԽԱԲՈՒՍԻԿ ԴՐԱԽՏԸ

Որոնք են նախապատճառները՝ հաշիշի, մորֆինի և կոկայինի միջոցով արբենալու պահանջի. երեք են պատճառները՝ անձնական, հասարակական, միջազգային:

Բարձր կյանքի կարիքը, ֆիզիկական և հոգեւոր ուժերի ազատ արտահայտության կյանքի կարիքը, հարստանալու ծարավը, քանզի առօրյան հաճախ ծանր և անուրախ է: Այնքան պարտականություններ կծանրանան ու կճնշեն անհատի հոգու վրա, դա վարում է մի անհավասար գոյության պայքար, ենթակա այնքան զրկանքների և ստորացումների: Ոչինչ խորապես չի շոշափում մեր հոգին: Չկան տոներ, չկա շեփոր, չկա խենթացուցիչ ուրախություն: Այդ պայմաններում մարդուս թե՛ ֆիզիկական և թե՛ հոգևոր ուժերը նվազում են և աշխարհը սկսվում է թվալ միօրինակ և անհրապույր:

Կյանքի տնտեսական և ընկերային պայմանները, ուր իշխում են անհրավությունն ու անարդարությունը, ուր հաղթական են ճարպիկ, անգրոշ միջակությունները, անձնակենտրոնները, սակավարժեքները, ուր ավելորդ մարդ են սևատեսները, մելանքոլիայի ենթակաները, տկարակամները և ազնիվները:

Արդար է Բոդլերը՝ մարդկային սիրտը իր մեջ կրում է սաղմը ավելի բարձրիբարձր կյանքի, որի մեջ նա իրեն տեր և ոչ ստրուկ պիտի զգա, որի մեջ գեղեցկություն, ուրախություն, թեթևություն պիտի զգա՝ տոն կուզի: Նա, եղել է մի վայրկյան, երբ ճաշակել է երջանկությունը և գիտի նրա քաղցրությունը, գիտի, թե որքան գեղեցիկ է և մեծ աշխարհը, երբ երջանիկ ես, և վերստին կփնտրե հինը...

Նա գիտե, որ հնարավոր է երջանկությունը, բայց կդժվարանա իրեն երջանիկ զգալ՝ ահա նրա ողբերգության ակն ու աղբյուրը:

Սոցիալիզմի դար է՝ քրիստոնեության երկինքեն զատ կա երկիրը, որի վրա Դրախտ կփնտրի, կկարոտի, կերազի:

Ջղերի դար է, հիվանդ, անասելիորեն զգայուն՝ երջանկությունը, որը հաշիշի դեր կատարեր իր ցավերի դեմ:

Բայց խուսափում է մեր կարելիությունեն, այդ Դրախտը, մենք նկրտում ենք մտքով խաբել կյանքը, մենք նետվում ենք դեպ արհեստական ու խաբուսիկ դրախտը՝ էվֆորիստիկ թույների, նարկոտիկների խաբուսիկ Դրախտը, մենք խորտակում ենք նրա դռները և ներս խուժում... Մենք հիվանդոտ երանություն ենք փնտրում, որը մեզ առերևույթ ազատում է կյանքի վշտերեն և պարտականություններեն, և

մթագնելով մեր գիտակցությունը և էքզալտե անելով մեր զգացումները՝ մեզ տալիս է խոր ապրումների իլլյուզիան:

«Մի ժամ առանց օպյումի, ահա՛ սարսափը, անզերծանելին (неотвратимое) ցավը, որից չկա փրկություն, քանզի այդ ծարավը և նրա հագեցումը չի կարող դա մարել: Ես անիծյալն եմ, որը тльещава жертва են ազատվելու համար ընկնում է հալած արծիծի մեջ» (Կլոդ Ֆաբետ) «մի բան միայն, մի բայ տառապում էր»:

«Ո՛չ երջանկությունը, ո՛չ էլ դժբախտությունը ստեղծած են մի մեծ բան կյանքում»:

Եթե կյանքի նպատակը հաճույքը համարեցիր՝ վախճանդ կորուստն է:

Այլ է կյանքի նպատակը՝ ուրախ զոհաբերության ճամփով դեպ կատարելություն: (Եթե հաճույքը լիներ կյանքի նպատակը սողողները և պարալիտիկը երջանիկ պիտի համարվեն, քանզի ապրում են մի անհեթեթ հաճույքի փղոսկրյա ապարանքներում...):

Մոռացում կա՛մ էկզալտացիա՝ ահա թե ինչ է փնտրում նարկոտիկը - կա՛մ մարել ցավը, կամ սաստկացնել գրգիռը ոգու:

Արևելքը հաշիշիստ է և օպիումիստ:

Արևմուտքը ալկոհոլ և կոկային:

Հաշիշը ոչինչ չի տալիս, նա միայն ամպլիֆե է անում, մեծացնում այն, ինչ որ կա ենթակայի մեջ և նրանից դուրս:

Խորացված անալիզը հաշիշարբեցումի ֆիզիկական և հոգևոր բավականության սուտ զգացողություն, անճառելի ուրախություն:

Կա գաղափարների հիպերտրոֆիայի ֆազան: Գաղափարները ծնում և զարգանում են հրեշային արագությամբ: Կարծեք ասոցիացիայի օրենքներեն դուրս լինեն:

«Ամենապարզ բաները Շարլ Ռիշե թվում են թատրոնականորեն էֆեկտավոր»:

Անձնական գերազանցության գաղափարը չափազանց զորավոր է հարբած հաշիշիստի մոտ:

Փախուստ ներկայեն: Ուշադրության և տրամաբանության վրա, որոնք մթագնում են և կորչում, իշխում են հիշողությունը և երևակայությունը, որի շնորհիվ իրերը և անցքերը մեր շուրջը դառնում են օտար և անհատը, ամբողջապես անցյալի և ապագայի իշխանության տակ է՝ մեկը տրված հիշատակների և ապրումների, մյուսը՝ երևակայության մեջ:

Հիշողությունը և զգայարանքները սրվում են, և որպես հետևանք՝ հիշատակներն ու պարագաները ընդունում են տարօրինակ չափեր: Ոգին անսահմանության, անմահության դռներն է բախում, մերությունը նեկտարը խմում:

Գույները սկսում են երգել, հնչյունները ստանում են երանգներ, պարֆյումների մեղեդիներ:

Անձնավորությունը սկսում է կորչել և միաձուլվում է իրերի հետ: Գաղափարը՝ ժամանակի և տարածության, չքանում է: Ակնթարթերը թվում են որպես հավիտենականություն, և հավիտենականությունը խտանում է մի ակնթարթի մեջ: Ահա ձեզ ռելատիվ տեսությունը՝ տրված հիվանդոտ ապրումների մեջ:

Պասիվ հայեցումն աշխարհի ահա արեւելքցու փնտրածը: Իսկ հաշիշիստը չի կարող մի բարդ և զորավոր շարժում կատարել դեպի տվյալ նպատակը: Դժվար կկենտրոնացնի իր ուշադրությունը (պսիխոլոգ և ֆիզիոլոգ Լանգե):

Գերզգայականությունը հաշիշային արբեցումի դեպքում (պսիխիատոր Բենե) լսողական և տեսողական հալյուցինացիաներ: Հակում դեպի մակրոսկոպիա ամեն ինչ մեծացված վիճակի մեջ տեսնել: Պատկերների և դատողությանց քառատրոփում (գալ օպերուկիստ):

«Խենթության ալիք» զգացողական դեֆորմացիաներ, գաղափարային դեֆորմացիա, որի դեպքում մի տեսակ «շոգի» է բարձրանում երկրից և պատում նրանց մարմինը: Այդ աուրան: Հեռավոր և քաղցր մի կարոտ և անհանգստություն է լեցնում մեզ:

Երբեմն դա հասցնում է կոսմիկական չեզոքացումի, առանձնացումի զգացողության: Անհատը մենակ նետված է տիեզերական լռության մեջ: Ճշմարիտ է ասում Բոդլերը՝ «Ով որ չէ ծնել ընդունելու կյանքի պայմանները, ծախում է իր հոգին»:

Հիպերակուզիա լսողության կենտրոնը թունավորված է անհեթեթ ֆանտաստիկա:

Իդեֆիքսեր սեռային անամոթություններ, էքսհիբիցիոնիզմ, բռնություն:

Միջակության օրենքը, որը ղեկավարում է ամբողջ բիոլոգիան: Ամեն մի օրգանիզմ ունի իր չափը, ամեն մի խելք՝ իր սահմանները, և որոնք հաղթահարելը կամ անցնելը մեզ չէ թույլատրված: Պետք է միջակ լինել մեծ անձի հանդեպ, թող որ դա տառապանք է ընտրյալ ոգիների համար:

Մեր բնազանցական կարոտը բացարձակեն՝ չենք առներ ոչ հեշտասիրական ցնցումների, ոչ մեր խելագար ամբիցիաների, ոչ միստիկ արբեցումների, ոչ էլ արտահիրական հայեցողությունների մեջ:

Պետք է կյանքն ընդունել այնպես, ինչպես որ է դա և ազնիվ ճիգերով ծառայենք նրան՝ զայն ավելի և ավելի գեղեցկացնելու և իմաստավորելու համար:

Ապրեցա՜, կարող է բացականչել միայն նա, որը գիտե վարել իր հստակ, կամային և զորաց միտքը, որի զգացումը արթուն է, որը ջրդեղել է իր կամքը ժայռեր խորտակող, հատուկ է մեծ զոհաբերության և մեծագործությունների համար: Նա, որն ընդունում է, թե տառապանքը կարևոր և անհրաժեշտ բաժինն է մեր գոյության:

Հաշիշը տկարացնում է և հաճախ իսպառ ոչնչացնում մեր քննադատական վերաբերումը դեպ աշխարհն ու իրերը, ինչպես և մեր ինքնակոնտրոլը, տալով մեզ վայրկյանորեն երջանկություն:

Իլյուզիան՝ դա մեզ, ապուշացրած, դարձնում է ճշմարտորեն ապերջանիկ:

ՎՃԱՐԵԼ «ԿԱՆԱՑԻ ԴՐԱՄՈՎ» («ЖЕНСКОЙ МОНЕТОЙ»)

D.-r էրնեստ Շամբարը իր «Մորֆինոմոզներ» գեղեցիկ գրքի մեջ, իմիջիայլոց ասում է՝ «Կենդանիների թագավորը թանկ է գնում իր գերազանցությունը և իր հզորությունը՝ նա ճանաչում է վիշտը, հետաքրքրությունը և ծանծրույթը: Եվ սրա համար նա չի <խնայում> ամեն տեղ և ամեն ժամ միջոցներ՝ փախչելու իր չքավորության գիտակցությունից: Եվ սրա համար նա գտել է 3 ճամփաներ՝ մահը, գործունեությունը և ցնորքը: Առաջինը պահանջում է համարձակություն, 2-րդը՝ կորով, իսկ ցնորքը բոլորի կարելիությանց սահմաններում է գտնվում: Եվ «մտքի թույները» ընձեռում են մարդուն, ով որոշում է մոռանալ կյանքը, գրեթե անսպասելի միջոցներ»:

Տառապանքը անհրաժեշտ մաս է մարդկային մեծության, և նա, որ ճգնում է հեռացնելու դա՝ սպանում է մարդկային բնության ամենաազնիվ կողմը:

ԿՈԿԱԻՆՅԱՆ ԱՐԲԵՑՈՒՄ

Սկսվում է մի քանի վայրկյանեն եւ շարունակվում 2-3 ժամ: Տարածվում է ցրտությունը դեմքի վրա: Հետո գալիս է էֆորիան՝ ներքին խոր բավականությունը ոգու՝ արթնացած, թևառած, թռած բարձրորեն կյանքի վշտերի, նվաստությունների և միզերիաների վրա: Պարտականությունները, հրամանները օրենքի և մորալի թվում են մանր և հիմար պայմանականություններ, որոնց մասին չպետք է մտածել: Ծնունդ է առնում զորության և ուժի զգացումը: Միտքն իշխում է և կարող է ամեն ինչ անել: Մի գործոն, հաղթական ուրախություն է հեղեղել մեր հոգին: Մորֆինիզմը ձգտում է իրականացնելու առօրյայի իդեալը նիրվանա, քաղցր ինքնախորացում և անդորր: Իսկ կոկայինիզմը ձգտում է Նիցշեի իդեալին՝ հզորության կամքը՝ անձնավորության գործուն՝ հաղթական արտահայտությունը աշխարհի վրա:

Ազատ է, համարձակ, ունի անդուլ գերազանց զգացում: Երջանիկ է, որ ապրում է:

Պակասում է դիսցիպլինե եղած կամքը:

Սեռական Նագունը էկզալտե է եղած և համարձակ է:

Անցավ արբեցումը՝ գալիս է դեպրեսիան:

Դա դառնում է մռայլ, գերագրեսիվ, միզանտրոպ և հարձակողական:

* * *

Հավիտենական ու կատաղի պայքար ճակատագրի հետ ահա անհատ, թե հավաք մարդու կյանքը:

Հաղթանակը (ազատ տերն զգալու համար):

Չկա Հայաստանը՝ ինձ համար չկա երջանկություն: Հարստություն, փառք, դրախտ անզոր են ինձ երջանկացնելու:

Այսօր կա մեղքի և տկարության գիտակցությունը՝ սպանիչ:

Երկինքը նվազ կնայենք...

Գիտության լույսի հետ կաճի հիվանդությունների թիվը:

Փիլիսոփայական համակարգերը դեռ երեկ փրկարար՝ այսօր կցնդեն...

Ըստ ամենայնի անբարոյական է իրեն երջանիկ զգացող անհայրենիքը, լինի դա անհատ, թե ժողովուրդ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. "Դաշնակցության պանթեոնը»: Առաջին տպագրությունը տես՝ «Ժայռ» թերթ, Ալեքսանդրապոլ, 1917, թթ. 1-9, 19: - 10
2. Խեչոյին - Խաչատուր Ամիրյան (1872-1915): Ազգային-ազատագրական պայքարի հայտնի գործիչ: Մասնակցել է Խանասորի արշավանքին և Ռազիի կռվին: 1905-1906թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ գլխավորել է հայկական ինքնապաշտպանական ուժերը Երևանի նահանգի մի քանի շրջաններում: 1915թ. եղել է Արարատյան զորագնդի հեծյալ ջոկատի հրամանատար: - 10
3. Քեռուն - Արշակ Գաֆաֆյան (1863-1916): Ազգային-ազատագրական պայքարի նշանավոր գործիչ: Մասնակցել է Ս.Կուկունյանի արշավանքին, 1904թ. Սասունի ինքնապաշտպանական կռիվներին: 1905-1906թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ գլխավորել է Սիսիանի, Ագուլիսի շրջանների ինքնապաշտպանական ուժերը: Հայկական կամավորական 4-րդ զորախմբի հրամանատար: - 11
4 Սիմոն Զավարյան (1866-1913): Ազգային-ազատագրական պայքարի ականավոր գործիչ: 1890թ. Քրիստափոր Միքայելյանի և Ռոստոմ Զորյանի հետ Թիֆլիսում հիմնադրել է ՀՅԴ կուսակցությունը: - 13
5. «Էջեր իմ օրագրեն»: Առաջին տպագրու-թյունը տես՝ Գ.Նժդեհ, «Էջեր իմ օրագրէն», Գահիրէ, Մատենաշար «Յուսաբեր», թիւ 7, տպարան «Յուսաբեր», 1924, 66 էջ: - 18
6. «Որդիների պայքարը հայրերի դեմ»: Առաջին տպագրությունը տես՝ Գ.Նժդեհ, «Որդիների պայքարը հայրերի դեմ», Սոֆիա, 1927թ. հունվար, Հրատարակութիւն եւ տպագրութիւն «Գողթան» գրատան, Սելանիկ: - 47
7. Bon quart - բառացիորեն բարի քառորդ կամ փոխաբերաբար՝ լավ ժամանակներ (ֆրանսերեն): - 47
8. moto - նշանաբան - (իտալերեն motto բառից): -79
9. non-agir - non agir - անգործություն կամ անգործունեություն (անգլերեն): - 97
10. Ergo - հետևաբար (լատիներեն): - 111
11. Հաուպտման (Hauptmann) Գերհարդ Կարլ -(1862-1946) - գերմանացի գրող: Համարվել է գերմանական նատու-ռալիզմի առաջնորդը: Արժանացել է նոբելյան մրցանակի (1912թ.): Երկերը հայերեն են թարգմանվել դեռ կենդանության օրոք: - 112
12. «Բաց նա-մակներ հայ մտավորականության»: Առաջին տպագրությունը տես՝ Գ.Նժդեհ, «Բաց նամակներ հայ մտավորականութեան», Մատենաշար «Ջահակիր», թիւ 8, «Հրազդան», Պէյրութ, 1929, 32 էջ: - 114

13. «Ցեղի ոգու շարժը»: Առաջին տպագրությունը տես՝ Գարեգին Նժդեհ, «Ցեղի ոգու շարժը», Սոֆիա, Տպագր. Պ.Պալըգճեան, 1932, 60 էջ: - 133
14. Մացցինի - Մածինի (Mazzini) Ջուզեպե - (1805-1872) - իտալական հեղափոխական, ազգային-ազատագրական պայքարի առաջնորդներից: Հիմնադրել է «Երիտասարդ Իտալիա» ընկերությունը, որի նպատակն էր անկախ միասնական իտալական պետության ստեղծումը: Կապեր է ունեցել Մ.Նալբանդյանի հետ: - 138
15. Միցկևիչ (Mickjewicz) Ադամ - (1798-1855) - լեհ անվանի բանաստեղծ, ազգային-ազատագրական շարժման գործիչ, գաղափարախոս: Երկերը թարգմանվել են հայերեն: - 146
16. Շիրինի - Արշակ Կարապետի Շիրինյան (1882-1920): Ծնվել է Գորիսի Շինուհայր գյուղում: ՀՀ Խորհրդարանի անդամ, 1920թ. օգոստոսին բոլշիկները կացնահարել են Գորիսում: - 144
17. Խորենու - Վահան Խորենի - Տեր-Գրորգյան (1884-1920): Ծնվել է Սիսիանի Բռա-կոթ գյուղում, Հ.Հ.Դ. հայտնի տեսաբաններից, ՀՀ Խորհրդարանի ան-դամ, 1920թ. օգոստոսին բոլշիկները կացնահարել են Գորիսում: - 144
18. Սաքոյի - Յապոն - Համբարձում Սարգսյան: Ազգային-ազատագրական պայքարի հայտնի գործիչ, գնդակահարվել է բոլշևիկների կողմից 1924թ.: - 144
19. Աշոտ Մելիք-Մուսյան: Զանգեզուրի ինքնապաշտպա-նության կազմակերպիչներից, 1918-1920թթ. եղել է Գենվազ-Գողթան գավառի գավառապետ: - 144
20. Արևելյան համայնավարների անդրանիկ համագումարից՝ 1920թ. սեպտեմբերի 1-7-ին Բաքվում Կոմինտերնի նախաձեռնությամբ գումարված Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը, ուր ամրապնդվեց քեմալա-բոլշևիկյան համագործակցությունը՝ ընդգծված հակահայկական ուղղվածությամբ: Դրան ներկա էր Էնվեր փաշան: - 147
21. Լոզանում - միջազգային կոնֆերանս, որ հրավիրվել էր մերձավորարևելյան հիմնախնդիրները կարգավորելու համար: Տեղի է ունեցել 1922թ. նոյեմբերի 20-ից մինչև 1923թ. հուլիսի 24-ը, Լոզանում (Շվեյցարիա): Հիմնական խնդիրը Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի կնքումն և սևծովյան նեղուցների կարգավիճակի սահմանումն էր: Լոզանի պայմանագրում Հայաստանի և հայերի մասին ոչ մի հիշատակություն չկար, իսկ հայ ազգային օջախի ստեղծման ծրագիրը չիրականացվեց: Թուրքիան Լոզանի պայմանագրով բռնազավթեց արևմտահայկական հողերը: - 162
22. «Ամերիկահայությունը - ցեղը և իր տականքը»: Առաջին տպագրությունը տես՝ Գ.Նժդեհ, «Ամերիկահայությունը - ցեղը և իր տականքը», Սոֆիա, 1935, 116: - 170

23. Չեկայաչարչար - ՀՍԽՀ Հեղկոմը ներքին հակահեղափոխությանև սպեկուլյացիայի դեմ պայքարելու համար 1920թ. դեկտեմբերի 6-ին ստեղծեց Արտակարգ Հանձնաժողով (Чека), որն իշխանության ձեռքին դարձավ բռնություններ իրականացնող գործիք: - 170
24. Unicum - եզակի, իր տեսակի մեջ միակը (լատիներեն): - 191
25. Չիչիկովը - Ն.Գոգոլի «Մեռած հոգիներ» պատմվածքի կերպարներից, որի ներքին դատարկությունն ու ոչնչությունը քողարկված էին բարետես արտաքինի տակ (խորամանկ, ճարպիկ, տմարդի մարդու հասարակ անուն է դարձել): - 177
26. Դուրյան Ղևոնդ (Զըմպայան) - (1879-1933) - հայ եկեղե-ցական գործիչ, արքեպիսկոպոս: 1931թ. ընտրվել է ամերիկահայերի հոգևոր առաջնորդ, ունեցել է ընդգծված խորհրդայնամետ դիրքորո-շում: 1933թ. հուլիսի 1-ին Չիկագոյի համաշխարհային ցուցահանդեսի բացմանը, Հայկական օրի ժամանակ, կտրուկ դեմ է եղել Եռագույն դրոշի բարձրացմանը: Դաշունահարվել է 1933թ. դեկտեմբերի 24-ին, Նյու Յորքի Ս.Խաչ Եկեղեցում: - 188
27. Կարսի հայասպան դաշնագիր - Անդրկովկասյան երեք հանրապետությունների և Թուրքիայի միջև 1921թ. հոկտեմբերի 13-ին կնքված պայմանագիր, որը բխում էր 1921թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքված ռուս-թուրքական պայմանագրից, և որոնց արդյունքում Հայաստանը տարածքային կորուստներ ունեցավ: - 189
28. Կոշուտ (Kossuth) Լայոշ - (1802-1894) - հունգարացի քաղաքական և պետական գործիչ, 1848-1849թթ. հունգարական հեղա-փոխության առաջնորդ: Նախաձեռնել է հունգարական ազգային բա-նակի ստեղծումը և պայքարել Հաբսբուրգների ավստրիական տիրապետության դեմ: - 190
29. Հայաստանից Ամերիկա վերադարձած ոմն Մարտիրոսյան - հավանաբար հնչակյան գործիչ Լևոն Մարտիրոսյանն է: - 191
30. "J'accuse" - Ես մեղադրում եմ (ֆրանսերեն), ֆրանսիացի հայտնի գրող Էմիլ Զոլայի արտահայտությունը: - 194
31. Լիտվինով Մ.Մ. (1876-1951): Խորհրդային հայտնի դիվանագետ, 1921թ.-ից արտգործժողկոմի տեղակալ, 1930-1939թթ. ԽՍՀՄ արտգործժողկոմ: - 201
32 Աղաբեկով Գ.Ս.- 1928-1929թթ. ԽՍՀՄ Միացյալ Պետքաղվարչության արտասահմանյան բաժնի արևելյան բաժանման-քի պետ, 1929-1930թթ. ՄՊՔՎ ռեզիդենտ Մերձավոր Արևելքում: 1930թ. փախել է արտասահման, սպանվել է ՄՊՎՔ գործակալների կողմից: - 202
33. Հույն միտրոպոլիտ Խրիսոստոմոս - Տրապիզոնի միտրոպոլիտ: - 204

34. Հայր Գապոն - (1870-1906)- հոգևորական, գլխավորել է 1905թ. հունվարի 9-ի բանվորների երթը Պետերբուրգում, որի գնդակոծումից հետո սկսվեց ռուսական առաջին հեղափոխու-թյունը: - 204
35. Մելիք-Թանգյան Ներսես (Նիկողայոս) - (1866-1948) - հայ եկեղեցական գործիչ, բանասեր: 1907թ. հակացարա-կան գործունեության համար աքսորվել է Ղրիմ: 1912-1948թթ. եղել է Ատրպատականի թեմի առաջնորդ: 1919-1921թթ. աջակցել է Գ.Նժդեհի առաջնորդած Լեռնահայաստանի հերոսամարտին: - 205
36. Նախկին լեգիոնական - Արևելյան կամ հայկական լեգեոնը կազմավորվել է ֆրանսիական բանակի կազմում 1916թ.: Մասնակցել է Արարայի հայտնի ճակատամարտին(1918թ.): Հայ զինվորների թիվը հասնում էր 5000-ի: Լուծարվել է 1920թ.: - 207
37. Վահան Մ.Քյուրքճյան (1863-1961) ամերիկահայ պատմաբան, խմբագիր: Եղել է ՀԲԸՄ Ընդհանուր քարտուղար: - 207
38. weesky - պետք է լինի whisky – ոգելից խմիչք: - 207
39. «Բանվոր» - հասարակական-քաղաքական և գրա-կան շաբաթաթերթ, ապա՝ օրաթերթ: Լույս է տեսել 1930-1938թթ., Նյու Յորքում: Եղել է Ամերիկայի բանվորական կուսակցության հայկական հատվածի, այնուհետև՝ ԱՄՆ-ի կոմկուսի օրգանը: Խմբագրել են Ս.Սնարյանը, Պ.Սելյանը: Անվերապահորեն ունեցել է խորհրդային դիրքորոշում: - 207
40. Cartago delenda est! - Կարթագենը պետք է կործանվի (լատիներեն): Հռոմեացի պետական գործիչ Կատոն Ավագի (234-149թթ.մ.թ.ա.) «Բացի սրանից ես գտնում եմ, որ Կարթագենը պետք է կործանվի» արտահայտության հապավումը: - 209
41. Ծանոթ դատավարություն - Ամերիկահայերի հոգևոր առաջ-նորդ Ղ.Դուրյանին սպանողների դատավարությունը, որը կայացել էր 1934թ. հունվարի 24-ին Օլբանիում (Նյու Յորք), որի որոշմամբ նույն թվականի ապրիլի 11-ին Մատթևոս Լեյլեկյանին և Նշան Սարգիսյանին ենթարկեցին մահապատժի: - 218
42. America's future lies an its youths - Ամերիկայի ապագան իր երիտասարդության ձեռքում է (անգլերեն): - 233
43. Եռագույնի նոր վկաները - Մատթևոսն ու Նշանը - Ամերիկահայերի հոգևոր առաջնորդ Ղ.Դուրյանին սպանողները՝ Մատթևոս Լեյլեկյանը և Նշան Սարգիսյանը: - 244
44. Միքայել Վարանդյան (Հովհաննիսյան) - (1874-1934): Ազգային-ազատագրական պայքարի նշանավոր գործիչ: Հրա-պարակախոս, պատմաբան: Հեղինակ է մի շարք աշխատությունների: Եղել է ՀՀ դեսպանը Հռոմում: - 244
45. Բանտային գրառումներ - Առաջին տպագրությունը տես՝ Գ.Նժդեհ, «Բանտային գրառումներ: Խորհրդածություններ», Երևան, 1993: - 246

46. «Բանկ Օտոման» - Օսմանյան կայսրության գլխավոր բանկը: 1896թ. ՀՅԴ Կ.Պոլսի Կենտրոնական Կոմիտեի որոշմամբ Բաբկեն Սյու-նու գլխավորած խունբը գրավելով բանկը փորձում է պայթեցնելու սպառնալիքի տակ սուլթան Աբդուլ Համիդին հարկադրել կենսագործել 1878թ. Բեռլինի պայմանագրով նախատեսված բարենորոգումները: - 260
47. խորհրդագետ - օկուլտիստ, խորհրդավոր գիտություններով զբաղվող: - 273
48. Force idee - առանցքային գաղափար (ֆրանսերեն): - 285
49. in gradu heroico - բառացի՝ հերոսականի աստիճանում (լատիներեն): - 299
50. ՄԵՐ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԻՉԸ -Նժդեհի ճառը՝ արտա-սանված 1924 թվականին, Սոֆիայի գերեզմանատան մեջ Քրիստափոր Միքայելյանի հուշարձանի բացման առթիվ: - 309
51. de profundis - բառացի՝ խորությամբ (լատիներեն): - 332
52. stulte, stude! - իմացեք, սովորեք (լատիներեն): - 333
53. Le jour de gloire est arrive! - Փառքի օրը հասել է (ֆրանս.): - 337
54. «Ցեղային արթնություն» հոդվածաշարի մի շարք հատվածներ, թեև ոչ լրիվ նույնությամբ, առկա են Նժդեհի այլ գրություններում ևս: Մասնավորապես, Խոսք վեցերորդը, յոթներորդը, ութերորդը և իններորդը Նժդեհի «Ցեղակրոնությունն իբրև հաղթանակի զորույթ» («Խռուք», Սոֆիա, 1932, թիվ 1) բանախոսություն-հոդվածն են ներկայացնում, իսկ Խոսք տասներորդը («Ցեղակրո-նության հավատամքը») հետագայում տեղ է գտել «Ամերիկահայությունը-Ցեղը և իր տականքը» գրքում (Սոֆիա, 1935): Երկու դեպքում էլ, սակայն, դրանք նույնական չեն: - 353
55. Նեմեսիս - հունական դիցաբանության մեջ վրեժի աստվածուհին: - 357
56. Պեյո Յավորով - Պ.Կրաչոլով (1878-1914) բուլղար հայտնի բանաստեղծ: 1894-1896թթ. հայկական կոտորածների անմիջական տպավորությամբ գրել է «Հայեր» բանաստեղծությունը: - 381
57. Հոդվածը Նժդեհի պատասխանն է «Հերկ» ամսագրի հարցումնե-րին՝ ուղղված հայ կյանքի տարբեր հոսանքների ու դասերի պատկա-նող անձանց: Ամսաթերթը խմբագրում էր Կարապետ Պալճյանը ապա-գա Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը: - 384
58. Մաժինոյան գծեր - Ֆրանսիական ամրությունների համակարգ Գերմանիայի հետ սահմանի վրա՝ 380 կմ երկարությամբ: Կառուցվել է ռազմական նախարար Մաժինոյի առաջարկով. 1929-1934թթ.: - 405
59. Deo et Patria! - Աստված և Հայրենիք (լատիներեն): - 419
60. Տոտոմյանց Վահան Թովմասի (1875-1952)- հայ անվանի տնտեսագետ, կոոպերատիվ շարժման տեսաբան: -429

61. Տարիկատ -խաբեբա, սրիկա, ածպարար (բուլղարերեն): - 442
62. Տեոդոր Տրայանով - Բուլղարացի հայտնի բանաստեղծ: 444
63. Լյապո՛վ - Մակեդոնական հեղափոխական-ազատագրական շարժման նշանավոր գործիչ: 448
64. Ստավիցկի -Բուլղար քաղաքական գործիչ: - 456
65. Հրատարակությունն անստորագիր է, Նժդեհի հեղինակությունը որոշվում է ըստ նյութի բնույթի և նրանով, որ այդ ժամանակ Նժդեհը եղել է տվյալ թերթի փոխխմբագիրը: - 484
66. «ԱՆՉՆԱՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ» և «ՌԱՁՄԻԿԸ ՉԻ՝ ՄԵՌՆՈՒՄ» - Սույն ձեռագրերը, որ գրվել են բանտում, Նժդեհը նվիրել է իր երիտասարդ զարմիկին (եղբոր տղային)՝ «Հրանտիս ալբոմում» մակագրությամբ, և տեսակցության ժամանակ հանձնել հարազատներին: - 503
67. Մետապոլիտիկա - հունարեն meta (հետո) և politika (քաղաքականություն) բառերի կապակցությունը, meta նշանակում է որևէ բանի հաջորդել, անցում որևէ այլ բանի: Մետապոլիտիկան համապատասխանում է արդի քաղաքագիտությանը՝ պոլիտոլոգիային: - 509
68. Լուսանցքում ավելացված է «ուլտրաինդիվիդուալիստի համար»: - 511
69. Լուսանցքում նախադասության դիմաց գրված է «Եվրոպական»: - 514

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան....3

Աշխատություններ

Դաշնակցության Պանթեոնը....10
Էջեր իմ օրագրեն....18
Որդիների պայքարը հայրերի դեմ....47
Բաց նամակներ հայ մտավորականության....114
Ցեղի ոգու շարժը....133
Ամերիկահայությունը - ցեղը և իր տականքը....170
Բանտային գրառումներ....246

Հոդվածներ, նամակներ, ելույթներ

Բանտարկյալները....308
Մեր հեղափոխության արարիչը....309
Անարիությունը - Մայր չարյաց....312
Օրերի օրը....316
Տարածվող Անին....319
Կյանքի օրենքը....322
Հայ Դասական արիությունը....328
Բաց նամակ Մայքլ Արլենին....332
Ցեղակրոնությունն իբր հաղթանակի զորույթ....344
Ցեղային Արթնություն....353
Ահա Մարդը....381
«Հերկ»-ի հարգո խմբագրության....384
Ցեղի հավիտենական զենքը....386

Ինչո՞ւ Տարոնականություն....398
Զորավար Գարեգին Նժդեհը
Տարոնականության մասին....412
Մատնություն թե՞ պրովոկացիա....415
Մեռնելու կամքը....418
Ուժի պրոբլեմը....424
Խորհրդածություններ....426
Զավակս....427
Հայրենիք. Խորհրդածություններ....429
Ժողովուրդ և Առաջնորդ....432
Նոր սերունդը....436
Մեր նոր սերունդը....438
Գ.Նժդեհի նամակը Տրայանովին....444
Ցեղիմաստություն....446
Գ.Նժդեհի դամբանական ճառը
Լյապովի դագաղի առաջ....448
Երբ հայրենասիրությունը ցեղասիրություն չէ....450
Պատերազմ՝ Հեղափոխություն....454
Եվ զոհ և զոհարար....462
Հայի ճամբան. Մեծ զղջումի ճամբան....464
Պատմության դատաստանը....468
Մի զինվորի ճշմարտությունները....475
Ցե՞ղ թե՞ կուսակցություն....477
Զոր. Գ.Նժդեհի խոսքը Հայաստանի Անկախության
25 ամյակի տոնակատարության առթիվ....480
Մեծ Գաղափար....482
Հերոսը և Հերոսականը....484
Մի խոսակցություն զորավար Գ.Նժդեհի հետ....486

Հայ ցեղային շարժման ակունքները....501
Ցեղակրոնության Դավանանքը....502
Անձնավկայություն....503
Ռազմիկը չի մեռնում....506

Անավարտ աշխատություններ

Մետապոլիտիկա....509
Երջանկության պրոբլեմը....516

Ծանոթագրություններ....523

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

ԵՐԿԵՐ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ГАРЕГИН НЖДЕ

СОЧИНЕНИЯ

ТОМ ПЕРВЫЙ

(на армянском языке)

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84/16: Թուղթը՝ օֆսեթ
Ծավալը՝ 33,25 մամուլ: Տպաքանակը՝ 500:
«Լույսաս» ՍՊԸ տպարան: Երևան, Վ. Վաղարշյան 12ա